ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍԻ ՈՒՐՈՒՀԱՅՑԵՑԻՈՅ

9(47.925)
Մ-33

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԷՈՍԻ ՈՒՌՀԱՅԵՑՒՈՅ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐՔ

Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱՆՑԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ՅԱԿՈԲԱՅԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

—1869—

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՇՆՈՐՀԱՊԱՐՏ ՈԳԻՈՅ

ՆՈՒԻՐԷ

ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՐԲՈՅ ՔԱՂԱՔԻՍ

ԶԱՅՍ ՄԱՏԵԱՆ

ԱՐՁԱՆ ՅԱՒԷԺԱԿԱՆ

ՓՈԽԱՐԷՆ ԵՐԱԽՏԵՑՅՆ ԶՈՐ ՅՈՒՅԻՆ

ՅՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ

ՅԵՐՈՊՕՊԷ

ՅԱՄՒ ՓՐԿՉԻՆ 1863

ԶՄԻՒՌՆԱՅԻ ՄԵԾԱՀԱՄԲԱՒ ԵՒ

ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲԱՐՔ

ՍՊԱՐԴԱԼԵԱՆ

ԵՒ ԱՅԼ ԲԱՐԵՊԱՇՏ ԵՒ ՄԵԾԱՐՈՅ

ՎԱՃԱՌԱԿԱՆՔ ԲՆԱԿԵԱԼՔ

Ի ՄԱՆՉԷՍՏԷՌ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Զրաթեթի Ղուռ հայեցուոյ ջարուցն եւ. ջկենաց չուելմբ ինչ ասուս.գագոյնս ջրուս.ցարանեչ ասասն, բանջի եւ. ոչ մի յիշատակութիւնս գէի Թափառացիս աւանդեցին մեզ նորին ժամանակակիցք եւ. որ ջկին նորա երեւեցան ի դատմական ասդարեսի աշգային գրդութիւնս, եւ. ոչ ի մնացորդս տարեգրութեանց գէրդ եղեւ. հանեչ ածեչ մեզ ի հոյս ջնորա կենաց ինչ հանգամանս, ջծնունդեան, ջանունդեան եւ. ջշարժանեին, այլոզբն հանգերձ։ Դա ինրն Թաթեթոս անմամբ ջանձնն Խօսի յիւրական դատմութիւնն անուանեչոջ ջինրն Ղուռհայեցի եւ. ջանական (յերես 134), յորմէ համարիմբ ջնա աներկբայ ի ամին բացարի ծնեաջ, եւ. անդ ջշարժս ուսմանց իւրոց աւարտեաջ, եւ. ջսոյն ջայս դատմական երկասիրութիւնսն ի գրի կարեաջ. բանջի ասէ յերես 342. «Ջամս բաջուս քաշաջան քնութիւնամբ կացի, եւ արիարար մեօր ի բացաբս Մինջագեսաց յՅՂուռհայ ժոցոջեաջ գրեցաբ»։

Սկիբրն առնէ դատմութեան իւրոյ յամէ 952, եւ. հասուցանէ մինչեւ. ցամն 1136։ Ջկնի մահուան իւրոյ Գրիգոր Էրէց, որ համարի ջինեչ աշակերտ նորին, շարունակէ ջդատմութիւնն գրելիէ նոջին ոճոջ ջեջուին եւ. նոջին ոգւոջ, եւ. հասուցանէ մինչեւ. ցամ Տեառն 1162։ Թոցեաջ ջամանբամասն քնութիւն գրոցս եւ. շուրջ ջկենաց հեջինակիս ընթեռնուլ ի յառաջաբանի Թարգմանութեան (1) նոյն գրոց, ջոր հանձարաւոր քնութեամբ արար Եղուարդ Դիւջորիի գաջջիացի՝ յիւրումն ջեջուի, յորմէ առեաջ փոխարերէ եւ. Հ. Գարեգին ի Պատմութեան հայերէն դրդութեանց (2), մեր տացուբ համառօտ ինչ տեղեկութիւն ջգրջագիր օրինակաց մերոց, որոց հետեւեցաբ յառաջիկայ տպագրութեանս։

---

(1) Տղեաջ ի Բարիջ. 1858։

(2) Տղեաջ ի Վենետիկ. 1865։

Կրկին օրինակը էին առ ձեռնդատարաւոր ի սկսանելն ջնրատարակութիւն գրոցս. առաջինն 1107 համարաւ, որ-ջորագիր ցին հասարակ թղթեայ եւ առանց թուականի, երկրորդն 1051 համարաւ, նոտրագիր, սեպհականական եւ նոյնատեսակ թղթոյ, որոց գրչութիւն ոչ անցանէ ՁԺԼ դարն։ Երկոքին եւս ունին ի սկիզբն ջղատմութիւն Սրբոյն Ղերասէի Պարեւի արարեալ ի Մեսրոպդայ Երիցուէ. եւ ըստ-թիւ գրչակարգութեանցն խառնեալ կամ ցերկրորդին ընդ առաջնոյն կցեալ։ Դամբանական ճառն Բարսեղ ջարդաղեւոի ի միումն եւեթ նոտրագիր օրինակին գտանէր, որ չէր սգատ ի բազմադատիկ ջրիդակաց իմաստից եւ բառից, որդէս էին եւ ամբոցջ օրինակքն երկոքին, ջասն որոյ ի տեցիս տեցիս ցմիագոյն եւ ջդիւարիմաց բառս եւ ջիմաստս ուղ-ջեցաք ի ջերայ գաղջիկական թարգմանութեանն, ոչ ջանց առ-նելոջ եւ առանձին ի կարգի ծանոթութեանցն նշանակեալ ըստ-նոսին, եւ ուրեք ի փակագծի ամփոփեցաք ջրառանս որ իրքն-ին դահանջէին ի ջուսաւորութիւն մեսացն։ Երրորդ օրի-նակ մի եւս նոտրագիր եւ հասարակ թղթեայ եւ անջգաստ գրչութեամբ գաղափարեալ, եկաս ի ձեռս մեր ի ՅԱՄԻայ ի սկիզբն տղագրութեան երրորդ մասին գրոցս, յորում յու-սայար գտանեալ ջճառսն Բարսեղ ջարդաղեւոի առ ի հա-մեմատեալ ընդ մերուս, եւ ոչ միայն դակասէր այն ճառ։ այլ եւ ջկէս մասն գրոցս ջանց արարեալ էին ընդօրինակոցդ ի ՃԺԲ գէլոյ եւ այսր։ Ղոյնդեա յերեսին օրինակսն եւս կամ խղառ. եւ կամ մեծագոյն մասամբ դակասէին ջերնագիրք գէլոցն, ջասն որոյ եւ մեք խղառ. ջանց արարաք գնեալ, շատ համարեալոջ ջնուլ ջիերուիթ նոցին անուանցն ջանելիս։

Այսչափ ինչ համառօտ տեսութիւն արարեալ ջանձնէ եւ ջգրոց հեղինակիս, բաւական համարիմք առ այժմ տալ ուսումնասէր եւ դատմասէր աշգայնոցս ջառաջին դրատա-բակութիւն դատմագրութեանս, թողջով հեղագոյն գրչա-գրոց ջնուլ առյաղայս ջիերութիւն այսր եւ ջայլոց գրոց տոհմային դատմչաց։

ՄԱՏԹԷՈՍԻ

ՈՒՌՀԱՑԵՑԻՈՑ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՄՆ ԱՌԱՋԻՆ

Ա. Իսկ ընդ աւուրսն ընդ այնոսիկ և ի յամին ՆԱ (952—953)[1] եղեւ սով սաստիկ ի բաղուստ տեղիս. բայց յաշխարհն Հարաւոյ ի յերկիրն Տաճկաց եղեւ նեղութիւն մեծ, և առաւել քան զամենայն ի Միջագետս։ Իսկ ի խստութենէ սովոյն՝ տագնապ և տատանումն լինէր ի բաղուստ տեղիս և ի հռչակաւոր մայրաքաղաքն Ուռհայ, զոր կանգնեաց Տիգրան արքայ Հայոց։ Իսկ կացեալ սովն այն յաշխարհին զամս երեքն, և անթիւ լինէր կոտորածն յերեսաց սովոյն այն. և յաշխարհին Տաճկաց անցումն լինէր մեծ, և քրիստոնեայք անթիւք մեռան յերեսաց բարկութեան սովոյն։ Իսկ զկնի հինգ ամին եկեալ

մարեխ յայնմ գառաառէ որպէս զաւազ ծո-
վու, և ապականեաց զերկիր։ Եւ սատակա-
նայր սովն առաւել քան զառաւելն. և զայ-
րացեալ բազմաց, և գազանաբար անողորմ
յարձակեալ զմիմեանս ուտէին, և իշխանքն
և մեծամեծքն ընդօք և մրդօք կերակրէին.
և եղեւ անցու�մն անասնոցն. և այլ ոչ շինե-
ցան մինչեւ ցայսօր ժամանակի։

Բ. Դարձեալ ի Թուականութեանս Հա-
յոց ի ԾԷ (958-959) ամին զօրաժողով լինէր
ազգն Արաբակաց Ամուռհա և յամենայն Հդե-
սացւոց աշխարհն, առնոյին բազմութեամբ
անցեալ ընդ մեծ գետն Եփրատ, և եկեալ
ի վերայ ամուր քաղաքին որ կոչի Սամո-
սատ։ Եւ երանէր ի պատերազմ զօրապետն
Հռոմոց (2), որում ասէին Պառակա-
մանոս (3), այր զօրաւոր և քաջ. և ի դուռն
քաղաքին բախէին զմիմեանս, և յաւուրն
յայնմիկ հարին Տաճկուանք զօրսն Հռոմոց,
և արարին կոտորած մեծ առ դրան քաղաքին.
և յետ աւուրց ինչ առաւ քաղաքն Սամո-
սատ, ուր մերձ ի քաղաքն Ամուռհայ։

Գ. Իսկ ի Թուականութեանս ազգիս Հա-
յոց ի ԾԸ (959 960) ամին, զօրաժողով արա-
բեալ Թագաւորն Հռոմոց Ռոմանոսն (4), և
գայ ի վերայ Տաճկաց. և անցեալ ընդ հա-

մատաբած ծովն Ալեքսանդրայ, և նաւովք անցանէր ի մեծ կղզին որ ասի Կիպրոս. և սաստիկ պատերազմաւ առեալ զնա ի զօրացն Եգիպտոսի. վասն զի զամենայն կղզիքն եւ զամենայն ծովեզերքայ աշխարհն Արաբկայ ազգն ունէին զամս չորս հարիւր։ Յայսմ ամի կոտորեցին զօրքն Հայոց զՀամատուն՝ զօրապետն Տաճկաց։

Դ. Յամի և ի թուականութեանս Հայոց ՆԺ. (961—962) զԱնավարզա և զՀալպ էառ Արապին (5) ի թագաւորէն Անբայ, և անթիւ արար զկոտորածն ի քրիստոնէիցն քան իւրեանց ազգին։

Ե. Յայսմ ամի զօրաժողով արար զօրապետն (6) Հայոց զմարզպետական գունդն քառասուն և հինգ հազար արանց քաջանց զարդ(7) ի յարքունական գնդէն. և ժողովեցան ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց առ սուրբ հայրապետն Անանիա, վասն զի տացեն զօծումն թագաւորութեանս Աշոտ Գագկայ (8) բան առաջին օծմանն հարց իւրոց. վասն զի չէր եւս էր նստեալ յաթոռ թագաւորութեան տանն Հայոց, և ոչ էր եղեալ թագ ի վերայ գլխոյ իւրոյ։

Զ. Հարկաւորեալ կոչեցին զամենագովելին զտէր Յովհաննէս կաթուղիկոսն Ա-

զուանից աշխարհին, և քառասուն եպիսկոպոսունք ընդ նմա. և մեծաշուք իշխանութեամբ կոչեցին զՓիլիպպոս Թագաւորն Աղուանից՝ զայր աստուածային և զսուրբ, զարդին Գոշագրակայ որդւոյ Վաչագանայ, որ էին Թագաւորք Աղուանից աշխարհաց։ Իւ յայնմ աւուր եղեւ ժողով ահագին մեծ ի քաղաքն Անի, որ եղեւ յայժմու ժամանակիս Թագաւորանիստ քաղաք Հայոց։ Իւ յայսմ ամի օծաւ արքայ Աշոտ ի յօծուն մեր հարց իւրոց, և նստաւ ի գահոյս առաջին Թագաւորացն Հայոց ազգին. և լինէր սուրախութիւն մեծ ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ Թագաւորութեան աշխարհին Հայոց ըստ առաջին հարցն։ Իւս առաւել ուրախ լինէին յաղագս քաջութեանն Գագկայ, վասն զի էր կորովի և այր պատերազմող։ Իւ յայնմ աւուր լինէր հանդէս զօրացն նորա հարիւր հազարաց վառելոց ընտիր ընտիր արանց ի մնրա պատերազմի անուանեալ և քաջ կորովեաց. վասն զի որպէս զկիսրիւնս առիւծոյ, կամ որպէս զձագս արծուեաց յուզէին զօր պատերազմին։ Իւ լուեալ զայս ամենայն շուրջակայք ամենայն Թագաւորք ազգաց, Աբիսազաց և Յունաց, Խաբեշաց և Պարս-

սից, տուբս և սէրս հանդերձ պատուական ընծայիւք յուղարկէին ի փառաւորութիւն Հայոց Թագաւորութեանն։ Յետ յայնժամ զԼիթագաւորն Աղուանից զՓիլիպպէ և զկաթուղիկոսն զտէր Յովհաննէս, զեպիսկոպոսունս և զզօրսն որ եկին զհետ Թագաւորին և հայրապետին, յուղարկեցին մեծամեծ արօք և սիրով ի յաշխարհն Աղուանից, որ էր ամենառ սուրբ առաքելոյն Թադէոսի, որք են նահապետք առաջինք Հայոց մեծաց։

Իսկ զինի անցանելոյ երկու ամին՝ մեռաւ Թագաւորն Հոռոմոց Ռոմանոս, և մնացեալ լինէր իւր երկու որդի, Վասիլ և Կոստանդին, որդիքն Ռոմանոսի ծերոյն։ Յետ եղեւ յամի ՆԺԲ (963—964) Թագաւորեաց Նիկեփոր ի վերայ տանն Յունաց. և էր այր բարի սուրբ և ստուգածասէր, լցեալ ամենայն առաքինութեամբ և արդարութեամբ, յաղթող և քաջ ի վերայ ամենայն պատերազմաց, ողորմած ի վերայ ամենայն հաւատացելոցն Քրիստոսի, այցելու այրեաց և գերեաց. դարմանիչ որբոց և տնանկաց։ Օրբաժողով արարեալ ահագին բազմութեամբ, և անցեալ ընդ համատարած ծովն Ովկիանոս և գայր ի վերայ Տաճկաց, մեմոնեալ որպէս առիւծ սաստիկ պատերազմաւ. և խա-

զայր յաշխարհն Կիլիկեցւոց, և մեծաւ յաղթութեամբ առնու զհռչակաւորն ըզ Տարսիաս (Տարսօն) քաղաք։ Եւ անցեալ էառ զԱտանա և զԱիբսիս և զսկանաւորն զՆաւարզա. և տհագին և սաստիկ կոտորած էած ի վերայ ազգին Տաճկաց մինչեւ ի դուռն Նիտիոքայ քաղաքին։ Եւ Թագաւորն դարձաւ Ալիկեփոր մեծաւ յաղթութեամբ, անթիւ գերութեամբ և բազում աւարաւ. և գնայ մուտանէ ի Թագաւորաբնակ քաղաքն ի Կոստանդինուպօլիս, և զորդիսն Ռոմանոսին զԱսիլն և զԿոստանդին առ իւր պահէ ի պաղատ տանն մեծաւ պատուով և փառաւորութեամբ։

Է. Դարձեալ ի թուականութեանս՝ ոմն մահապարտ և արգելական ի կղզւոջն կայր, որում անունն կոչէին Ամիկիկ. գաղտ յուզարկեալ առ նա անօրէն և պիղծ Թագուհին, և հրամանաւ Թագաւորին եհան զնա ի կղզւոյն և եբեր ի Կոստանդինուպօլիս առանց գիտելոյ Թագաւորին. և ի ծածուկ տարար ընդ նմա դաշինս ապանանել զԱլիկեփոր Թագաւորն, և խոստացաւ լինել նըմա կին, և նոտուցանել զնա յաթոռ Թագաւորութեանն։ Եւ հաւանեցաւ առնել զհրամանս անօրէն Թագուհւոյն։ Եւ Ալիկե-

փոր սուրբ Թագաւորն նստեալ կայր ի
գահոյսն իւր ի ժամ երեկոյին, և վառեալ
մոմեղինօք, և ընթեռնոյր զաստուածային
կտակագիրսն։ Եւ եկեալ Թագուհին շա-
զապատեր զԹագաւորաւն, և զԹուրն որ
կայր մօտ առ իւր, միակապս արարեալ
ընդ գաւազանս, և երեալ գնաց առ չարա-
խորհուրդն իւր. և ձեռօք իւրովք տայր
զԹուրն մահաբերն ի նա՝ հեղլով զարիւն
արդարոյն։ Եւ եկեալ Ամնիին և ծածկա-
բար ի ներքս վազեաց ի սենեակ Թագաւո-
րին։ Եւ տեսեալ զնա Թագաւորն ասէր
ընդ նմա. «Հանն կոտաղեալ, զի՞նչ յուզեա
ասա դ։» Եւ քաջալերէս յարուցեալ Թագա-
ւորն յուզէր զԹուրն, և տեսեալ ասատկա-
պէս ընդեալ. և յայն Ամնիին յարձակե-
ցաւ ի վերայ Թագաւորին, և անխնայ գա-
զանաբար խողխողէր զամենաբարի արքայն.
և հերձեալ զնա յերիս մասունս, և ծածկեալ
լինէր ի մէջ արեան իւր. աւանդէր
զհոգին ի Բրիատոս չարաչար և դառն մա-
հուամբ։ Եւ տեսանէին զի այդէս զգեցեալ
էր Թագաւորն մերկուց ի վերայ մարմնոյն
ծածկեալ ծիրանեօքն. և արիւնն սփռեալ
յայլեր զերեսօք ապանողացն զառն Ստու-
ծոյ. և զմարմին նորա Թաղեցին մօտ առ

սուրբ թագաւորաց յարժանաւոր գերեզմանի (9)։ Իշ նոտաւ յանթոռն թագաւորութեան Յունաց անօրէն Զիմկիսկն. տիրեալ էառ զկոստանդինուպօլիս, և զամենայն սահմանս աշխարհին Հոռոմոց արար ընդ իշխանութեամբն իւրով. և զորդիսն Կոստանդինոսի թագաւորին փախոյց ի յանօրէն թագուհւոյն, ի Վասակաւան ի Հանձիթ գաւառին տարան զՎասիլն և զԿոստանդին առ Սպրամիին մեծ Մխիթարայ մայրն, վասն զի մի դեղ մահու տացեն նոցա և սպանանիցեն զնոսա։ Իշ յաղագս անիրաւ մահուանն այս կայր ի մեծի տրտմութեան թագաւորն Զիմկիսկ անհանգիստ վիրաւորեալ։

Ը. Իսկ ի վերանալ թուականութեանս Հայոց ի ամ ԵՒ (971—972) մեռանէր Հայոց աղքային Գագիկ խաղաղութեամբ մահուամբ։ Իշ եղեւ հակառակութիւն և աղմուկ մեծ ի մէջ երկու որդւոց թագաւորին Գագկայ՝ ընդ Յովհաննէս և ընդ Աշոտ։ Յովհաննէս առագ էր քան զԱշոտ, և իմաստուն և հանճարեղ էր յոյժ, բայց մարմնովն թանգ էր. իսկ Աշոտ կրսեր երեւէր՝ այր քաջ և զօրաւոր, անպարտելի և յաղթող ի պատերազմունս։ Բայց բռնակալեաց Յովհաննէս զաթոռ թագաւորութեանն Հայոց. և Աշոտ շրջէր

զօրքն և աւար հարկանէր զքաղաքն։ Եւ գնացեալ առ Սենեքերիմ Թագաւորն Ասսուրականաց, առ որդին Աղօստանլի որդւոյ Աշտոց, որդւոյ Դերեկանն, որդւոյ Դագկայ՝ արծրունի ազգաւ, որդիք Ընդրամելեքայ արքային Ասորեստանեայց։

Թ. Իւ առեալ Աշտա զօրս ի նմանէ և անցանէր առ Գուրգէն Թագաւոր Անձեւացեացն. խաղայր զօրքն, գայր հասանէր ի լեռան Ասրադ, և մտանէր ի վանք սուրբ Նշանին Քրիստոսի. և երկրպագեալ առաջի աստուածընկալ խաչին Աստուծոյ և պատկերի սրբոյ Աստուածածնին, և տուեալ յոսկւոյն Աբգարացւոյ սրբոյ Նշանին երեսուն հազար դահեկան՝ զոր եհան ի Պաղատատ քաղաքէն, զոր էր պարգեւեալ նմա Խալիֆայն, և արար զայն պահարան Աշտա՝ սրբոյ Նշանին. և զարդարեաց զնա ակամբք և մարգարտովք. և ինքն զօրքն բազմօք հասանէր ի Թագաւորանիստ քաղաքն Անի։ Իւ իբրեւ լուաւ Յովհաննէս զգալն Աշտոյ եղբօր իւրոյ, հրամայեաց փող պատերազմի հարկանել. և ինքն ի գահոյս անշարժ նստեալ կայր, վասն զի անհմուտ էր պատերազմի. և դղրդեալ քաղաքն Անի՝ ելեալ

ի պատերազմ ընդ Աշտոց քառասուն հազար հետեւակաց և քսան հազար ձիաւորաց։ Եւ յայնժամ մի ոմն իշխան ի զօրաց Թագաւորին Վրաց՝ ի գերապանութիւն եկեալ էր առ Յովհաննէս. վասն զի մայրն Յովհաննիսի և Աշտոց գուստր էր Վրաց Թագաւորին Գուրգէ՝ կատարամիտոք Թագուհին. և ասէր իշխանն Վրաց ընդ Թագաւորն Յովհաննէս. «Ով արքայ Յովհաննէս, հրամայեա՝ զի ցուցանիցեն ինձ միայն զԱշտա. և ես ձերբակալ արարից զնա, և կապանաք բերիցս զնա առաջի քո»։ Վասն զի այրն այն էր քաջ և անպարտելի ի պատերազմ. և ասէր Յովհաննէս Թագաւորն ցայրն այն. «Ահա այր հզօր է Աշտա. դու զի՞նչդ կարես ածել առաջի իմ»։ Եւ ասէր իշխանն Վրացի. «Զեռին առից զնա կենդանի»։ Եւ ասէ ցնա Յովհաննէս եթէ՝ «Օ կուրիւն առիւծու մի արհամարհեսցես՝ մինչեւ սատանիցես»։ Եւ յարժամ Ճակատեցան ընդ միմեանս. և իշխանն որ Ամիսապայ՝ որպէս զարծուի ընթացեալ ի ձայն բարձր և յուզէր զԱշտա. և ասէր. «Ով Աշտա, յառաջ եկեսցես»։ Եւ բաւեալ Աշտա և եղեւ զպարանցեալ իբրեւ զինձ և յուզել զմիմեանս ընթանային առ իրեարս. և իշխանն Վրաց

բաց վնիզակն եդեալ (10) Աշոտոյ. իսկ Աշոտ
իբրեւ զկայծակն ի ներքս անցանէր և հար-
կանէր զնա պղտմտամբն ի վերայ սաղար-
թին (11). և զերիսթապատ մարմինն պատա-
ռեաց մինչ ցսան, և հանդերձ միջոքն յերկիր
ընկենոյր։ Իւ եղեւ յաւուր յայնմիկ սատակ
պատերազմ. և դարձուցին զքաղաքն ի փա-
խուստ, մինչեւ փախուցեալքն ոչ ժամա-
նէին մոռանել ի քաղաքն, ի Ախուրան գե-
տին անկանէին. և դարձաւ Աշոտ մեծաւ
յաղթութեամբ։ Իւ յետ աւուրց ինչ
խորհեցան Բագրատունիքն և Պահլաւունի-
քին և այլ ամենայն ազատագունդ զօրացն
հայկազանց՝ առնել խաղաղութիւն ի մէջ
Յովհաննէսի և Աշոտոյ։ Իւ յայնժամ սուրբ
հայրապետն Պետրոս և իշխանքն եկին առ
Աշոտ, և մեծաւ երդմամբ նստուցին զԱ-
շոտ գրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն
տանն Հայոց (12), եւ Յովհաննէս նստցի
թագաւոր ի քաղաքն Անի. և եթէ մեռանի
Յովհաննէս, Աշոտ լինի թագաւոր ամենայն
տանն Հայոց։ Իւ յայնժամ եղեւ խաղաղու-
թիւն ամենայն աշխարհին Հայոց.

Ժ. Յայնմ ժամանակի նստաւ Աբաս ի
Կարս թագաւորական իշխանութեամբ՝ հրա-
մանաւ ազգապետին իւրոյ Գագիկայ Հայոց

արքային, և Գուրգէն Մաղուանից աշխարհն
վասն զի յաղթէ Հայոց Թագաւորացն էին,
և կային հնազանդութեամբ սանն Հայոց
Շիրակայ։ Իսկ Աշոտ Թագաւորն ոչ ժա-
մանեաց մնանել ի քաղաքն Անի մինչեւ ցօր
մահուանն իւրոյ։

Իսկ յայսմ աւուրս Ալպիրատ սմն, որ էր
մեծ իշխան Հայոց՝ որդի Հասանայ, սա վա-
սին Աշոտոյ միաբանութեանն զոր ունէր
յառաջագոյն, երկուցեալ ի Թագաւորէն
Յովհաննէսէ, ապստամբեալ փախեաւ ի
Նմանէ և գնաց ի Գուգին քաղաք առ Ալպու-
սուար Պարսից զօրավարն, և երկոտասան հա-
զար ձիաւոր ընդ նմա. եւ Ալպուսուար մե-
ծարեալ զնա բազում աւուրս։ Յայնժամ
մատեան առ Ալպուսուար չարօք խօսիւք և
ասեն, եթէ «Ալպիսի այր յաղթող և զօրա-
ւոր և զօրօք բազմօք եկեալ է առ քեզ,
կորուստ գործէ քեզ և ամենայն տանս Տաճ-
կաց»։ Յայնժամ սիս առեալ ամիրային ի սիր-
տին իւր, և գաղտ ի յայլ զօրացն ի զրոյց
սիրոյ կոչեաց զԱլպիրատն, և ի ծածուկ կո-
չոյս զայնպիսի այրն քաջ և հզօր և անուա-
նի ի մէջ ամենայն աշխարհին Հայոց։

Իսկ իշխան սմն Սարի անուն, որ էր զօ-
րավար մեծ իշխանին Ալպիրատին, առեալ

զկինն և զորդիս նորա և զհեծելագունդ զոր-
սին, և գնաց ի քաղաքն Նի. և թագա-
ւորն Յովհաննէս կարի յոյժ ապաշաւէր զա-
նիրաւ մահն Սպիրատին Հայոց իշխանին։ Յե-
տոյ գուցոյն նորա Սպիջահապայ և Վասակայ,
Սարէ, և ամենայն զօրացն տայր թագաւորն
Հայոց գաւառն և պիշխանութիւնն (15)։

ԺԱ. Յայսմ ժամանակի զօրաժողով ա-
տարաբեալ թագաւորն Պերսաստանայ. և ան-
կարծս գայր հասանէր ի Նիգս գաւառին
Հայոց՝ մերձ ի յամուրն Բջնի։ Յե-Վասակ
ասպարապետն Հայոց սիրեցեալ սրդուոյն
իւրով Գրիգորիս և այլ փառաւոր ազատաս-
քին նստեալ կայր ի մեծ ուրախութեան.
և հայեցաւ Վասակ ի յառաստաբս ճանա-
պարհին, և ահա գայր մի ի շտապս ընդ հե-
տեւեալ գնացս ճանապարհին. և տեսեալ
Վասակայ ասէր. «Գու ժաբեր է այրն այն»։
Յե հասանէր այրն ի դուռն բերդին Բջնոյ,
ձայն աղաղակի բարձեալ՝ ասէր. «Գերեցաւ
ամենայն գաւառն Նիգայ»։ Յայնժամ սր-
պէս զառիւծ գոչեաց քաջ զօրավարն Վա-
սակ, և յարուցեալ զգենոյր զգեստս երկա-
թապատս. և զկնի նորա եւթն ազատ, և
ըստ սրատահելոյ ժամուն այլ հեծելաղօրս
զկնի նոցա։ Յե կազմեցան ազատքն զկնի

Վասակայ. և սրանայր քաջ և աղէկ անուն Փիլիպպէ և Գորգ Զորասուանէլն և այլք ս-մանք. և այս ամբ քաջք և յաղթողք ի պա-տերազմունս, և ոչ կարայ Վասակ հանել-ել սրտին, մինչեւ զօրքն ժողովեսցէ. վա-ղն զի կային ընդ ձեռամբ նորա արս իբրեւ հինգ հազարս. և առ հպարտութեան զօ-րութեան իւր, և հինգ հարիւր արամբ յա-ռաջեալ որպէս զառիւծ ի Նգաց գաւառին, և յանձն արարեալ զասուն և զամուրն Ինչնի որդւոյ իւրում Գրիգորի. Իսկ հասանէր Վասակ ի վանք մի. հաղորդեցաւ ինքն և ա-մենայն զօրքն և խոստովանեցան զմեղս իւր-եանց քարի խոստմանութեամբ որ ի Բրիս-տոս Յիսուս. Իսկ ի ճանապարհին հանդի-պեալ ի գիւղ մի. և տեսին զի այլազգիքն առ հասարակ կոտորեալ էին զամենայն գիւղն, և զօրք այլազգեացն պատեալ էին շուրջ զեկեղեցեաւն. և զհաւատացեալսն որ ի ներսն էր, կային և կոտորեցին անխնայ սրով. Իսկ տեսեալ զայն քաջին Վասակայ, ձայնիւ գոչեաց որպէս զառիւծ, և յարձակեցաւ ի վերայ զօրաց այլազգեացն. և կոտորեցին զնոսա արս երեք հարիւր, և մնա-ցեալքն փախստականք լեալ անկանէին ի զօրսն այլազգեացն. Իսկ շարժեալ զայնն

բազմութիւնք բանակին ի վերոյ զօրաց քրիս-
տոնէից. և իբրեւ անչափ անթիւ տեսանէ-
ին բազմութիւն զօրացն այլազգեացն, և
յայնժամ միաբան զմահ առաջի եդին և
սկսան առաքինանալ ի պատերազմին,
և որպէս զգայլս ի մէջ այծեաց, և կամ
որպէս զարծուխս ի յերսան ձագուց, այն-
պէս արիաբար ընթանային ի մէջ պատե-
րազմին, և զարազումն խոցեալ դիմեթառալ
յերկիր ձգէին։ Յայնժամ ահագեան մի և-
լեալ ի զօրացն այլազգեաց, սեաւ՝ խաւիշիկ
և այր քաջ, որ և Յ-ին գայլ կոչէին զնա.
վասն զի զինչ է եւթն գայլն ի ջոկս ոչխա-
բացն, գործէր նա եւս առաւել ի մէջ
պատերազմին։ ՅԵ ահա գայր խաւիշիկն իբ-
բեւ զսեաւ ամպ որոտալով, որ քոց հատա-
նէին ի զրեհաց նորա. և ձայն առեալ և
յանուանէ յուսէր զՎասակ. Հայեցաւ
քաջն Յմրան, և ետես զնա զի գայր որպէս
լեառն մրրկեալ. դարձաւ առ Վասակ և
ասէր. «Ահա այր անսպառելի և քաջ, որ
այլ չէր ծնեալ ի մերայ երկրի»։ Յև ասաց
Վասակ. «Վա՛յ սաւիւծ և քաջ Յմրան, վասն
էր զարհուրեցար ընդ տեսիլ նորա. ահա ես
ելից ընդ դէմ նորա, և ասց նորա զպարդ-
դեւքն զոր ետ Թագաւորն Յոզեսթոս հայոց

չին Աստուծոյ։ Յայնժամ հատանէր գա-
զանաբար այրն այն, ուստի եդեալ քաջին
Վասակայ, որպէս զի առցէ զնա ի ծայր գե-
զարդեանն իւրոյ. և ի շտապս լեալ Վասա-
կին՝ երագս (14) դիմեաց, և պողովատ Թրոնին
ի վերայ սաղաւարտին գահեաց, և երկուս
հերձեաց զնստուշիկին քաջ, որ և մասուանք
մարմնոյն յերկիր անկանէր. և հատատեցան
ի պատերազմին և անհնարին գործոյն։ Լու ի
ատատկանալ մարտին և ի բազմանալ խոց-
ուած սուսերացն՝ պակասեաց քաջն Աշմին,
վասն զի անհնարիւն պատերազմին ի մի-
մեանց մնջրեալ եղեն դասք ազատացն, որ
և զերերաց մահ ոչ կարացին տեսանել։

ԺԲ. Յայնժամ քաջն Վասակ գարձաւ-
միացեալ, և գնայր իբրեւ զառիւծ զայրա-
ցեալ՝ ընդ մէջ զօրացն այլազգեաց անցա-
նէր և էր ձանձրացեալ ի մեծի պատե-
րազմին, և դիմեաց ելանէր ի լեառն որ կո-
չէր Սերկեւելոյ, և ի բազում հալածանաց
պատերազմին նստեալ ընդ հովանեաւ քա-
րանց, և տեսեալ զնա չինականացն որք
վախեալ էին։ Յայնժամ մի ոմն նմանեալ
Կայենի սպանողին, եկեալ գտանէր զնա զի
ննջէր ի վշտացն ուժգին. բախեաց զնա,
և ընկէց զնա ընդ բարձրաւ քարին. և այս-

պէս կատարեցաւ քաջն Վասակ սպանեալ։

ԺԳ. Դարձեալ այս ինչ գործեցաւ ի Հայոց թուականութեանն յամի ՆԻԱ (972—973). վասն զի զօրապետն Հռոմայեցւոց Դեմետրիոսն (15), որում անուն Աշեհ ասէին, եղեալ բազում զօրօք գայր ի վերայ Տաճկաց, և ի տեղիս յաղթեաց նոցա (16) օգնականութեամբն Քրիստոսի. և գայր հասանէր ի վերայ քաղաքին Մելտենու. և բազում չարչարանօք նեղեալ զքաղաքն արդելեալ ի հացէ և ի ջրոյ, և այնու հաւանեցուցանէր զքաղաքն Մելտենի, և յարուցեալ գնայր մեծաւ ուրախութեամբ ի նոյնէր ի վերայ Տիգրանակերտ քաղաքին, որ անուանեալ կոչի Ամիթ. ի վերայ Դիզմանն գեայ։ Եւ զօրք Տաճկաց եղեալ ի պատերազմ ընդ զօրսն Հռոմոց, և արարին սաստիկ պատերազմ մերձ առ դուրս քաղաքին Ամթայ, և զօրքն Տաճկաց դարձաւ ի փախուստ առաջի զօրացն Հռոմոց. և բազում կատարածս եղեալ ի նոցանէ մահն ի քաղաքն. և զօրքն Հռոմոց բանակեցան առ ափն գետոյն Ճ ի տեղին որ կոչի Աւսակ, մերձ ի քաղաքն երկու նեռտնկէց։ Եւ յետ սակաւ աւուրց [illegible] քարկու-

թիւնն շարժեցաւ յերկնից, և ահա եղանեալ հողմն ուժգնակի, մինչեւ ի սասակու թիւնէ գոչմանն շարժէր երկիրն, և ի բռնաւ թիւնէ հողմոյն հող երկրին ի վեր հոսեալ սարա ծէր ի վերայ զօրաց քրիստոնէիցն. և թանձ րացեալ զփոշին ծածկէր զմարդ և զանա սուն, և զամենայն կարասի նոցա ի գետ ան դրոյ ընդոր, և ի փոշւոյն խաւարեալ կուրա նային մարդ և անասուն, և յաստուածա սասա բարկութիւնէ փոշւոյն և փակեալ մը թացան ամենայն աչք ի լուսոյ. և եղեն պա շարեալ ամենայն զօրքն Հռոմոց, և զերբ իրացն ոչ կարէին գտանել։ Եւ յայնժամ զօրքն այլազգեաց տեսին զբարկութեան կա տարած ի վերայ քրիստոնէից, և գիտացեալ զի Աստուած պատերազմի ընդ նոսա, և առ հասարակ բախեցան այլազգեաց զօրք ի վե րայ քրիստոնէից զօրացն, և յանխնայ սրա խողխողս կոտորեցին զնոսա անողորմ, որ էին աբգ երբեւ յիսուն հազար, և սակաւք էին որ կարացին փախչել յերեսաց սրոյն. մեծ մասն զօրացն կոտորեցան։ Զ զօրավարն զՄե մեաղեկոսն և զայլ մեծամեծ իշխանսն Հռ ռոմոց ձերբակալ արարին և ածին ի քաղա քքն Աթիթ, քառասուն իշխանք մեծամեծք և անուանիք ընդ նմա։ Եւ յորժամ տեսին

իշխանքն այլազգեացն զկորուստս զօրացն Հռոմոց, զարհուրեալ երկեան յոյժ. և ասացին՝ եթէ «Այս ամենայն արիւնս զոր հեղաք ի տանէն Հռոմոց, մեզ ոչ մնայ. գան Հռոմայեցիքն և անցուցանեն զտունս Ցաճկայ։ Եկայք արասցուք սերս և միաբանութիւնս ընդ զօրապետսն և ընդ իշխանսն Հռոմոց, և առցուք երդմունս ի նոցանէ և արձակեսցուք զնոսա խաղաղութեամբ յաշխարհն իւրեանց»։ Եւ ի խորհելն նոցա զայս՝ եհաս համբաւ սպանմանն Անիկեփորայ Թագաւորին Հռոմոց։ Եւ յայնժամ իշխանքն այլազգեացն յուզարկեցին զեշխանս քրիստոնէից զքառասուն առ Խալիֆայն ի Պաղտատ քաղաք, և ամենեքեան անդ մեռան։ Եւ գրեաց Դեմետրիկոսն ի Կոստանդնուպոլիս Թուղթ, և գրեաց ի նոա անէծս ցաւագին, և ասէր այպէս, եթէ «Այնք ոչ էաք արժանի ըստ օրինի քրիստոնէից մոռնել ի յօրհնեալ հող գերեզմանի, այլ եղաք ժառանգորդս անիծեալ հողոյ և չարագործաց գերեզմանի. և ահա մեք զձեզ ոչ գիտեմք, որ նստաւ յաթոռ սուրբ Թագաւորութեանդ Հռոմոց. և զմահս մեր և զարիւն զոր հեղաւ ի դուռն Ամիթ քաղաքին, և զօտար մահս մեր ի գլխոյ քո խնդ-

դրեսցէ Քրիստոս Աստուած մեր ի յաւուր դատաստանին, եթէ ոչ արասցես վրէժխնդրութիւնս ի քաղաքէն Սմիռնայ։ Եւ իբրև հասանէր Թուղթս այս առ Թագաւոր Հռոմկլին ի Կրսանդինուպոլիս. և եղեւ յորժամ լուաւ զայս Թագաւորն, շարժեալ լինէր մեծաւ բարկութեամբ, և լի խիստ եղեալ ամենայն սրտմտութեամբ. և ի նոյն ամին զօրաժողով արար առ հասարակ զամենայն աշխարհն, յարեւմտից գոյր հասանէր զայրացեալ և որպէս հուր բորբոքեալ լինէր, և յարձակեցաւ ի վերայ Ցաձկաց, և կամեցաւ զմնուան յաշխարհն Հայոց առնել։

ԺԴ. Յայնժամ ամենայն Թագաւորաց ազգքն Հայոց, աղաւաքն և իշխանք մեծամեծք աշխարհաց տանն արեւելից ժողով արարին առ Թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի. Թագաւորն Կապանին Փիլիպպէ, և Թագաւորն Աղուանից Գուրգէն, Աբաւ Կարուց տէրն, և Սենեքերիմ Վասպուրականայ տէրն, և Գուրգէն Ծձեւացեաց տէրն, և բոլանդակ ամենայն տուն Սասանու. և բանակ հարեալ ի Հաբբայ գաւառին աքք իբրեւ ութսուն հազար։ Եւ եկեալ հրեշտակ Թագաւորին Հոռոմոց առ նոսա, և տեսին պատրաստական զամենայն տուն Հայոց

ժողովեալ ի մի վայր, և երթեալ պատմեցին Թագաւորին Զմշկիանն. գնացին և յիշխանացն Հայոց զկնի հրեշտակացն Հռոմոց՝ խնամատարին Լեւոն (17) և Սմբատ իշխանին Թոռնեցի, և այլ եպիսկոպոսք և վարդապետք, և արարին սէր և խաղաղութիւն ընդ Թագաւորին Հռոմոց և ընդ Աշոտ արքային Հայոց։ Եւ գայր խաղայր Թագաւորն Զմշկիկն ահագին բազմութեամբ, և հասանէր ի Տարօն գաւառ Հայոց. և իջեալ ի Մուշ առաջի Աստեղոյ բերդին, և յառաջին գիշերին բազում նեղութիւն կրեաց զօրքն Հռոմոց, և մատուցանէին առաջի նորա զԹուղթն Վահանայ Հայոց կաթուղիկոսին։ Եւ Թագաւորն առեալ ընկալաւ սիրով, և յոյժ մեծարեաց զԹուղթն և զբերողն. և հաստատեաց ուխտ սիրոյ ընդ Հայք, և խնդրեաց զօրս Աշոտոյ գալ նմա յօգնականութիւն. և տուեալ Աշոտ զօրս ի տանէ Հայոց վառելոց, և այր պատերազմողս իբրեւ տասն հազար. խնդրեաց ապուրս եւ ռոմիկս, և զամենայն տուեալ նմա Աշոտ։ Եւ զվարդապետն Հայոց զՍեւոնդ, զեպիսկոպոսն և զիշխանն մեծ պարգեւօք յուզարկեաց առ Աշոտ Թագաւորն Հայոց։

ԺԵ. Յայնժամ Թագաւորն Զմշկիկ որ

ասէին Կիւռժան, դարձաւ ի պատերազմ
ի վերայ Տաճկաց, և մեծաւ յաղթութեամբ
և սրտմտութեամբ, կոտորածով և արեամբ
եղեալ զամենայն երկիրն. և զբազում քաղաքս
և զամուր բերդս ի հիմանց քարատակս ա-
րար՝ երեք հարիւր, մինչեւ ի սահմանս Պաղ-
տատ քաղաքին։ Բայց զԱռհա ոչ արար
աւեր յաղագս կրօնաւորացն որ բնակեալ
էին ի լերինն և յամենայն սահմանս նորա՝
իբրեւ երկոտասան հազար. և գայր հասա-
նէր ի վերայ Ամիթայ քաղաքին բազում սրտ-
մտութեամբ։ Իսկ տէրն Ամիթայ քաղաքին
կին էր, որ էր քոյր Համանոյ ամիրային Տաճ-
կաց։ Եւ յառաջ ժամանակաց Թագաւորն
խառնակեալ էր ընդ նմա մեղաք, և վասն այ-
նորիկ չարար հնարս առնելոյ զքաղաքն Ամիթ։
Եւ եղեալ կնոջն ի վերայ պարսպի քաղաքին,
ասէ ցԹագաւորն. «Ի վերայ կնոջն դաս ի
պատերազմ, և չհամարին զայդ քեզ նախա-
տինք»։ Եւ ասէր Թագաւորն. «Երդումն ու-
նիմ առ իս քակել զպարիսպս քաղաքիդ,
և ազատեսցին մարդիկդ»։ Ասէր տիկինն քա-
ղաքին. «Եթէ քակեա զկանդարայն՝ (18) որ կայ
ի վերայ Աղգաղադ գետոյ, և այնիւ կատա-
բեսցես զերդումն քո»։ Եւ արար Թագա-
ւորն այնպէս. և սուր բազում դանձս ոսկւոյ

և արծաթոյ, և թողեալ զՄիթ վասն կնոջն իւր. և վասն զի Զմկիկին ի գաւառէն Խոզնայ էր, ի տեղւոյն որ այժմ կոչի Զմկիածագք, և կինն ի նմին սահմանացն էր. զի յայնմ ժամանակին Տաճկունքն էին տիրեալ բազում տեղեաց։ Իսկ ահա Թագաւորն Յունաց խաղայր գնայր ընդ աշխարհն Տաճկաց արեանհեղութեամբ մինչեւ ի սահմանս Պաղտատ քաղաքի. և շրջան առեալ զնեբբին կողմն աշխարհին՝ գնայր Յերուսաղէմ քաղաք. և գրեաց Թագաւորն Զմկիկի Թուղթ առ Աշոտ Թագաւորն Հայոց այսպէս։

ԺԶ. «Աշոտ շահինշահ Հայոց մեծաց, և իմ հոգեկան զաւակ։ Լուր և իմացիր թէ որչափ ինչ սքանչելիս արար Աստուած առ մեզ և զարմանալի յաղթութիւնս. որ և իմանալն անկարելի է զԱստուծոյ քաղցրութիւնն, և զահաւոր մարդասիրութիւնն զոր արար տէր ընդ ժառանգութիւնս իւր։ Յայսմ տարւոջս ի ձեռն Թագաւորութեանս մերում կամեցաք և քո փառաւորութեանդ ծանուցանելով, Աշոտ Բագրատունի և զաւակ իմ. իմացուցանեմ քեզ. որ և դու, որպէս և քրիստոնեայդ ես և հաւատալիս սիրելի Թագաւորութեանն մերում, ուրախանաս և փառաւորես զահաւոր զմե-

ծուԹիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և գիտացեալ Թէ որչափ օգնեսցէ Աստուած քրիստոնէից յամենայն ժամանակի. քան յետ հարկատու առնելոյ Թագաւորութեանս մերոյ զամենայն արեւելք Պարսից։ Այլ կամ Թէ որպէս հանաք զնշխարս սրբոյ հայրապետին Յակոբայ ի Մծբնայ քաղաքէն Տաճկաց. և առաք ի Տաճկաց զՏարին մեր, և զգերութիւնն հանաք ի նոցանէն, և ելեալ գնացաք։ Այլ վասն ամբարտաւանութեանն և հպարտութեանն Միր-էլ-մումնոյ իշխանին Մերիկեցւոց, զոր Մախբը Աբասլին (19) կոչեն, որ և բազում զօրք եկեալ ի վերայ մեր, և առ ժամ մի ի վտանգի արկին զօրսն մեր, և ապա յաղԹեցաք նոցա մեծաւ զօրութեամբ և օգնականութեամբն Աստուծոյ, և ամօԹալեցս դարձան որպէս զայլ Թշնամիսն։ Այլ յայնժամ ի բուռն (20) առաք զնեբքին կողմն աշխարհին նոցա, և ի սաբ սուսերի մաշեցաք զգաւառս բազումս, և փութապէս դարձաք ի դուռս, և արարաք ձմերոց, և զամենայն հեծելազօրսն մեր հրամայեցաք ապրիլն ամենեանն ի մուտն. գիմեալ խաղացաք ի յաշխարհն Փիւնիկեցւոց և Պաղեստինացւոց և Բանանացւոց, զառնէաք զպիղծ Միրիկեցիքն սրք եկեալ էին ի գաւառն Շա

մայ։ Յետ եղեալ ամենայն զօրքն մերոյք դիմեալ խաղալով գնացաք ի Յունուիքայ, և անցաք ընդ ամենայն գաւառն մերոյ թագաւորութեանն, և հնազանդ արարաք մեծաւ հարկաւորութեամբ և անհամար գերութեամբ և հասանէաք մինչեւ ի Հիմ (21) քաղաք. և եղեալ ընդունեցան զմեզ բարեաւք որք մեր հարկատուքն էին գաւառականքն, և հասանէաք մինչեւ ի Վատրվէքն, որ անուանեալ կոչի Իրաստոլիս, որ է Աբեդ քաղաք, երեւելի և ահաւոր պատրաստեալ մեծ յոյժ և հարուստ։ Յետ եղին պատերազմաւ ընդ առաջ մեր, և բազմութիւն զօրացս մերոյց հարածական արարին զնոսա, և ի բերան սրոյ կոտորեցին։ Յետ յետ սակաւ աւուրց պաշարեցաք զԱբեդ քաղաք. և բազում գերութիւնս, մանկունս և աղջկունս առին զօրքն մեր, և դանձս սակաւ և արծաթոյ և բազում անասունս առին. և ահա անտի յառաջացաք ի մեծ քաղաքն Խամանկոս, կամեցաք և զայն պաշարել։ Իսկ ի քաղաքն կայր ոմն Ճարտար և այր իմաստուն, առաքեաց առ թագաւորութիւնն մեր, և բազում ընծայիւք ազաչեաց զմեզ չանկանել ի գերութիւն և ոչ գնալ ի ծառայութիւն, որպէս Վատրվէքայ (22) զընակիչսն, և

ոչ զգաւառն աւերել որպէս զնոցայն։ Եւ բերին բազում տուրս պատուական և յոլով ձիս և ջորիս երեւելիս, և գեղեցկասարք ոսկւոյ և արծաթոյ. և հարկս Աբգարացեացս ոսկւոյն քառասուն հազար դահեկանս. ա ռին ի մէնջ զօրականս և տուին մեզ գիրս, վասն զի յաւիտեան ծառայք կայցեն Թագաւորութեանս մերում, ազգք զհետ ազգի և ցեղս զհետ ցեղի։ Եւ կարգեցաք անդ զօրավար զայր ոմն որ կոչէր Թուրք, այր փառաւոր Պաղտատեցի, որ եկն առ մեզ ի ծառայութիւն հինգ հարիւր ձիաւորով, և հաւատաց ի Քրիստոս, որ և յառաջն ծառայեալ էր Թագաւորութեանս մերում։ Եւ Դամասկացիքն արարին դաշինս երդման, զի տացեն զհարկն անխափան. և ասացին գով Թագաւորութեանս մերում, և ընդ մեր Թըշնամիսն մարանչել. և յաղագս այսորիկ անպաշարելի Թողաք զնոսա։ Եւ անտի յարուցեալ գնացաք ի Տիբերական ծովն, ուր Տէրն մեր Յիսուս Քրիստոս երիս (23) ձըկամբն զսքանչելիսն արար. կամեցաք եւ զայն քաղաքն պաշարել, իսկ նոքա եկին ի հնազանդութիւն մերոյ Թագաւորութեանս, և բերին մեզ ընծայս բազումս որպէս Դամասկացիքն, և հարկս երեսուն հա-

զար դահեկանս առանց (25) այլոց, և ինդրեցին զօրավարս 'ի մէնջ գիր ծառայութեան ոչ-ւեալ մեզ հաստատուն որպէս զ'Թամաս կացիքն՝ հնազանդ լինել մեզ յաւիտեան, և տալ անխոտիան զՀարկն մեր։ Յայնժամ թող-զաք զնոսա 'ի գերութենէ, և ոչ աւերեցաք զքաղաքն և ոչ զգաւառն՝ և ոչ արարաք զնոսա աւարս, վասն զի հայրենի տուն էր սրբոց առաքելոցն։ Այս աւանիկ և զԱղաղարէթ ուր զաւետիսն իսկ 'ի հրեշտակէն լուաւ Աստուածածնին սուրբ կոյսն Մարիամ. նոյնպէս գնացաք և 'ի Թափօրական լեառն, և ելաք այն տեղւոջն ուր այլակերպեցաւ Փրկիչն Աստուած մեր։ Եւ մինչդեռ յայն տեղւոջն կայաք, եկին առ մեզ 'ի Թամիէ և Յերուսաղէմ աղաչել զԹագաւորութիւնս մեր, ողորմութիւն գտանել 'ի մէնջ. ինդրեցին զօրավար, և եղեն հարկատուք, և լինել մեզ 'ի ծառայութիւն, զոր արարաք։ Իսկ կամեցաք զսուրբ գերեզմանն Փրկիչն մերոյ Աստուծոյ մերոյ ազատել 'ի պատուհասից Տաճկացն Աբրահամ։ Կարգեցաք զօրավարս յամենայն Թեմս, որք հնազանդեցան և եղեն հարկատուք Թագաւորութեանս մերում, որ է Պենիադա, որ կոչի Դեկապօլիս, և Դենեսարէթ և Յիսարկեա (26) որ կոչի Պաղ-

ամիա. և գրով յանձին կալան ամ յամէ անխափան տալ զՀարին. և լինել ընդ ծառայութեամբ մեր։ Գնացաք 'ի Կեսարիա, որ է յերկրն մեծի Ծովուն Ովկիանոսի, հնազանդեցան և եկին ընդ մերով իշխանութեամբ։ Եւ եթէ ոչ էին փախուցեալ 'ի ծովեղերայ բերդերն, որք էին բնակեալ պիղծ Աֆրիկեցիքն զարհուրեալք 'ի մէջ, օգնականութեամբն Աստուծոյ 'ի սուրբ քաղաքն Յերուսաղէմ էաք գնացեալ և 'ի սուրբ տեղիսն Աստուծոյ էաք յաղօթս կացեալ։ Եւ իբրև եթէ (27) փախեան ծովեղերայ բնակիչքն, յայնժամ զվերին կողմն աշխարհին հնազանդեցուցաք, և ընդ Հռոմոց իշխանութեամբ արարաք. և կարգեցաք անդ զօրավար և 'ի մեզ կոյս արարաք, և զոչ հնազանդեալս պատերազմաւ պաշարեցաք, և առեալ գնացաք ընդ ծովեղերին պողոսայն, որ դէմ յանդիման երթայր 'ի Ալեքսանդրիայ քաղաքն յերեւելին և անուանին պարսպեալ յոյժ, որ այժմ ասի Պէրութ, պատերազմեալ և սաստիկ կռուով առեալ զնա և հաղար Աֆրիկեցի ձերբակալ արարաք. նոյնպէս և զԱսեբի(28) զԱմիր-էլ-մումնոյ և զայլ լուսոյն իշխանսն, և յայն քաղաքն զօրավար եդաք. և անտի կամեցաք 'ի Միդոն անցանել։ Իսկ յայժմ լուան Միդոնացիքն,

առաքեցին առ մեզ զծերան քաղաքին Իւ-
բեանց. եկին և աղաչեցին զԹագաւորու-
թիւնս մեր, և խնդրեցին զնս հարկատուք լի-
նիցին մեզ մեծաւ ահիւ, և կալ մնալ մեզ
'ի ծառայութիւն. զորս լուաք իսկ ազատա-
նաց նոցա և կատարեցաք զկամս նոցա, և
առաք 'ի նոցանէ զհարկն, և տուաք նոցա
զօրավարս։ Եւ անտի յարուցեալ գնացաք
'ի Մբիսոն (29) հին և յամուր բերդն, և զայն
եւս պատերազմեալ առաք, և զընակիչս նո-
րա 'ի գերութիւն մատնեցաք. և մեծաւ ա-
ւարաւ և գերութեամբ անցաք ընդ ամենայն
ծովեզերաց քաղաքին ընդ դժուարս և ընդ
նեղ ճանապարհին՝ ընդ որ այլ զօրք հեծելոց ոչ
երբէք էր անցեալ, նեղ և նուրբ և չար ճա-
նապարհն. և անդ գտանէաք շէն և վայե-
լուչ քաղաքաներ և ամուր բերդեր, յորում
կային Ցաճիկ պահապանք, զամենայն պա-
շարեցաք, և քարէյատակս (30) կործանեցաք, և
զընակիչսն 'ի գերութիւն վարեցաք։ Եւ յա-
ւաջ քան զհասանելն մեր 'ի Տրապօլիս հե-
ծեալ զօրս առաքեցաք զՊիմացիսն և զՏաշ-
խամատացիսն (31) 'ի կապանն որ կոչի Քարե-
բես, վասն զի լուեալ էր մեր եթէ պիղծ Ակրի-
կեցիքն անդ նստէին 'ի կապանին. և հրա-
մայեցաք քմինս դնել, և դարմանս մահու-

գարձեցաք նոցա. և որպէս պատուիրեցաք՝ նոյնպէս և արարին. և երկու հազարք ի նոցանէ յայանի երևալ ի վերայ զօրաց մերոց՝ զբազումս ի նոցանէ սպանին, և յորմէ ի նոցանէ արարին կարգական, և ածին առաջի մերոյ Թագաւորութեանս. նոյնպէս և ուր հանդիպէին՝ փախստականս առնէին զնոսա։ Եւ խաղաղ ընկալեցաք զամենայն աշխարհն Տրապոլիս, զայգիսն և զձիթենիսն և զբուրաստանս նոցա առհասարակ կոտորեցաք, և աւերք գարձուցաք և արմատախիլ արարաք զամենայն գաւառն. և ափրիկեցիքն որ էին անդ՝ համարձակեցան և ելին ի պատերազմ ընդդէմ մեր։ Յայնժամ արձակեցաք ի վերայ նոցա և կոտորեցաք առ հասարակ զամենեսեան. և ապա առաք զմեծ քաղաքն զՈՒԷՆ, որ Դաբաւոն (32) կոչէին, և զԱ-զանեաւն և զՄիհուն (33), և զենքն իսկ զհրաչակաւորն Օուրզաւ, և ոչ մնաց մինչեւ զբ-Ամէ և Կեսարիա՝ ոչ ծով և ոչ ցամաք որք ոչ հնազանդեցան Թագաւորութեանս մերում, և արարաք ծառայս զնոսա մեր։ Ա-պրն զի յամիս եւթն շրջեցաւ Թագաւորութիւնս մեր յայնմ աշխարհին հանդերձ զօրքաք բազմաք. և սպառեցաք զքաղաքս և զգաւառս և ոչ իշխեաց ելանել Ամիր-ել-մամ

նի ի Բաբելոնէ ընդդէմ մեր. և կամ հե-
ծեալը արձակել յօգնութիւն իւր զօրացն։
Այլ եթէ չէր լեալ խոտագոյն խորշակ և ան-
ջրդի ճանապարհ ի յայն տեղիսն որ մերձ է
ի Բաբելոն, որպէս և քո Փառաւորութիւ-
նըդ իսկ գիտես, Թագաւորութիւնս մեր
մինչեւ ի Բաբելոն երթեալ, որ և զինքն
իսկ ի յերկիրն Եգիպտացւոց հալածեցաք.
և խոպան յաղթահարեցաք հնարքն Աստու-
ծոյ որ Թագաւորեցոյցն զիս։

"Զաստեցան այժմ ամենայն Փիւնիկէ և
Պաղեստին և Սորբք ի ծառայութենէ Տաճ-
կաց. և հաւանեցան ընդ Հռոմայոց իշխա-
նութեամբ։ Այլ և Իբանանու մեծ լեառն
հնազանդեցան ընդ մերով իշխանութեամբս.
և զամենայն Տաճկուանք որ անդ կային ահա-
գին բազմութեամբ, գերութեամբ ա-
ռաք և բաշխեցաք հեծելոց մերոյ. և զՍո-
բեստան քաղքրապէս և մարդասիրապէս բա-
բովեցաք. հոգիք իբրեւ քսան հազար հա-
նաք, և ի Գաբաւօն բնակեցուցաք։ Հա-
գիտասցես Ցմ, զի այսպիսի յաղթութիւնս
եւս Աստուած քրիստոնէից, որ ոչ եղեւ եր-
բեք։ Այլ գտաք յայնմ քաղաքին ի Գաբաւօն
զսուրբ Հոգեմատի Քրիստոսի Աստուծոյ, ո-
րով և շրջեցաւ իսկ ի վերայ աշխարհի. նոյն-

պէս և զպատակերն Փրկչին զոր Հրեայքն յետ ժամանակի խոցեալ էին, ուստի վաղ-վաղակի ելն արիւն և ջուր. և զնոսա տիգին ոչ գտաք յոյժմ քաղաքին. զպատուական հեր-ոյ գլխոյ Կարապետին և զԱկռոտին Յովհան-նու, և առեալ տանիմք ի պահպանութիւն աստուածապահ քաղաքին մերոյ։ Իսկ արդ ի սեպտեմբերի ամսոյն հաճութեամբն Աստուծոյ զմեր աստուածակերպոյդ զորքս ի յԱն-տիոք հանեալ, և վասն այնորիկ քո Փառա-սորութեանդ գիտացուցաք. վասն զի ի ձե-ռին մեր հրամանացս զարմանաս, և դու ինքն խակ փառաւորես զԱստուծոյ մեծ մար-դասիրութիւնն. և գիտասցես թէ սրչափ բարի գործեցան այժմիկ, և կամ քանի՞ աւե-լան, և լայն և ընդարձակ եղեւ իշխանութիւն սրբոյ խաչին Քրիստոսի. մինչեւ յայս տե-ղիք Աստուծոյ անունն գովի և փառաւորի, և ճոխանայ թագաւորութիւնս մեր ան-ուամբ մեծութեամբ, և զօրութիւնն Աս-տուծոյ բարեբանեալ գովի ի բերանէ մերմէ. զարս ընդ ձեռամբ մերով հնազանդե-ցոյց Աստուած, ընդ որում հանապազօր օրհնեալ տեր Աստուած Իսրայէլի։

«Յանապատն պատաւսպանթրին Դեր-ջնայ, Լեւոնի և Տարօնոյ զօրավարին ողջոյն և

ի տէր խնդալ։

«Ընդ գիտացաք որ զԱյծեաց բերդն որ-պէս յանձին կտրար՝ չէս տուեալ. և այժմ գրեցաք առ զօրավարդ մեր, որ ոչ զբերդն առնու և ոչ զքարեանն՝ զոր պայմանեցեր, զի այժմ չեղեալ առ մեզ պէտք. բայց գքա-ռասուն հազար (35) ոսկեալն զոր յուղարկեցաք, տուր տանել առ զօրավարն մեր, որ առաքէ առ Թագաւորութիւնս մեր. և զվաստակոցդ քոց և զարմտեացդ ագանեա (տանաս) զիսխարէնն ըստ սերմանեացն զամենայն բարի մի ըստ միոջէ »։

Դարձեալ գրեաց առ (36) վարդապետն Հայոց ի Ալեւանդն այսպէս. «Մեր հառնելի և Թագաւորութեանս սիրեցեալ մեծ իմաստասէրն Պանդալեւն, ողջոյն։ Ահա հրամայեցաք ձեզ որ ի դարձին մեր ի Տառկաց՝ գտանեմք զձեզ ի սուրբ քաղաքս և կամ ի Ալեսիոն (37), յորժամ եկիր առ մեզ ի Ա-ստոյ շահնշահէ և հոգեկան զաւակէ մերմէ, և դարձուցեր զամենայն սրտմտութիւնս ի նմանէ, և տարար զԱգրատունի Պապն անձեւացին, դայնպէս և զՄբատ Թոռնեցին (38) պատաւասպահարն։ Եւ արդ ջանայիր որ գբ-տանեմք զքեզ յաստուածապահ քաղաքին մեր. և անդ արասցուք տօնս մեծ հոգեթափա-

ցըն Բրիստոսի Աստուծոյ մերոյ, և սուրբ հե-
բրայն Պիրտչին Յովհաննու։ Լու արդ ահա
հաճ ունիմ և զայս ինչ ի քէն, վասն զի խո-
սեցիս ընդ մեր իմաստասէրսն և ընդ փիլի-
սոփայիցն մերոց, և ուրախասցուք մեք ի
ձեզ, և Աստուած ի մեզ և ի ձեզ. և տեր
Յիսուս եղիցի ընդ իւրում ծառայիցդ»։
Իսկ յորժամ լուաւ զայս վարդապետն Հա-
յոց Ղեւոնդ, յարուցեալ գնաց ի Կոստան-
դինուպօլիս, և արարին տօնս հրաշափառս
հոգեթափացն Աստուծոյ և հերայ սրբոյն
Կարապետին։ Լու եղեւ յայնմ աւուր մեծ
ուրախութիւն ի Կոստանդինուպօլիս, և խո-
սեցաւ վարդապետն Հայոց առաջի թագա-
ւորին ընդ ամենայն իմաստասիրացն Հոռո-
մոց, և անպարտելի երեւեցաւ ի մէջ վար-
դապետացն տանն Յունաց. վասն զի յա-
մենայն հարցմունսն հաճելի երեւեցաւ։
Լու բազում գովութեամբ բարեբանեցին
զնա և զուսուցիչն նորա, և մեծաւ պարգե-
ւօք ի թագաւորէն երեւելիս և պատուա-
կանս շնորհեցաւ նմա. և գնաց մեծաւ ու-
րախութեամբ յաշխարհն Հայոց ի մեծ
տունն Շիրակայ։

ԺԵ. Արդ յետ բազում պատերազմացն
և յաղթութեանցն զոր վանեաց կայսրն

Զմշկիկն, անկանէր ի վերայ նորա մահու
երկիւղն և ահն սոսկալի դատաստանին Աս-
տուծոյ. և զմտաւ ածեալ յիշեաց զանիրաւ
մահն արդարոյն Դիկեփորայ և զանպարտ ա-
բիւնն նորա, կոծ առեալ լայր և ոգւոց հա-
նէր։ Իւ յայնժամ խորհեցաւ վարս առաքի-
նութեան ստանալ, զի դեռ եւս կարասցէ
ապաշխարութեամբ մաքրել զարիւնն զոր ե-
հեղ ի տարապարտուց. և հինգ ամ միայն
կալեալ զաթոռ թագաւորութեան Յունաց։
Իւ մինչդեռ զայս ամենայն զմտաւ ածէր,
խորհեցաւ բարիւք խորհուրդս որ ըստ կա-
մացն Աստուծոյ էր. և յուղարկեալ ի Վա-
սակաւանն ի գաւառն Հանձթայ, և բե-
բեալ տայր զ Վասիլն և զԿոստանդին որդիսն
Ռոմանոսի թագաւորին. զորս փախոյց առ
Սպրամիին ի յահէ անօրէն թագուհւոյն,
վասն զի չարաբարոյ էր յոյժ։ Իսկ յորժամ
եբեր զ Վասիլն ի Կոստանդինուպօլիս, ժողով
արարեալ զամենայն իշխանս մեծամեծս տու-
նին Յունաց. և եղեւ ահաւոր հանդէս ի
պալատ թագաւորին։ Իւ յայնժամ թագա-
ւորն Զմշկիկ առեալ թագն ձեռօք իւրովք
ի գլխոյ իւրմէ և եդեալ ի գլուխն Վասիլն.
և նստուցանէր զնա յաթոռ թագաւորութե-
իւրոյ, և երկիրպագանէր ի վերայ երեսաց

իւրոց Վասիլն. և զամենայն Թագաւորութիւն տանն Յունաց նմա յանձն արարեալ։ Եւ տուեալ ի Վասիլն զիւր հայրենական աթոռն, և ինքն դիմեալ յանապատ, և յանձն իւր առեալ զկարգս կրօնաւորութեան՝ ի վանս ընթացեալ բնակէր։ Ահա որ երեկեան աւուրն Թագաւոր, և այսօր ընդ աղքատս նստեալ դադարէր կամաւոր աղքատութեամբ, վասն զի ժառանգեսցէ զերանութիւն սուրբ Աւետարանին, և վճարեսցէ զմեղն անպարտ անձինն Միխեփորայ։

ԺԸ. Դարձեալ ի բարձրանալ թուականութեանս Հայոց ազգիս ամի ՆԻԳ (975—976), Թագաւորեաց Վասիլ հայրն ամենեցուն՝ որդի Ռոմանոսի ծերոյ, որդւոյ Կոստանդեայ կայսերն Հոռոմոց բարի աղգաւ ի մէջ Յունաց։ Եւ կարի յոյժ երեւելի երեւեալ այրս այս Վասիլն եղբայրն Կոստանդէ (Կոստանդեայ)։ Այս սիրեաց թագաւորական աթոռոյն Յունաց, և բազում ապստամբս արար հնազանդս, և առնուն բարի ստացաւ ի վերայ արարածոցս, ոգորման ի վերայ այրեաց և գերեաց, և իւրաւարար զրկելոց։

ԺԹ. Յայսմ աւուրքս եղեւ կոտորած զօրացն Հայոց Ամնձեւացեաց գաւառին,

'ի բանակն կոչեցեալ անուն (39) նենգաւ-
թեամբ առն քաջին Այլղարիպայ։ Վասն զի
թագաւորն Անձեւայեայ, որում անուն
Դերեւնիին ասէին, եհան զԱյլղարիպն 'ի
յասպարապետութենէ զորայ իւրոց, զայր
հզօր եւ զքաջ, եւ եդեալ 'ի տեղի իւր զՅաբ-
գիս զսմն ազատ, եւ կարի յոյժ վերաւորեալ
լինէր հզօրն Այլղարիպ։ Եւ յայնժամ բա-
նեսուս լինէր առ զօրսն այլազգեայս, և զա-
մենայն պատճառս ծանուցանէր նոցա և ա-
սէր, թէ՝ «Այս ոչ ելից 'ի պատերազմ ընդ
ձեզ. եւ արդ՝ 'ի գիշերի յարուցեալ եկայք
'ի վերայ բանակիս մեր. եւ ահա այս նշան
ձեզ իմոյ վրանին, յորդան կարմիր է, եւ 'ի
վերայ բլբին հարեալ կայ, եւ զօրք իմ ընդ իս»։
Իսկ զօրքն այլազգեայս եկին 'ի վերայ նոցա
յանկարծակի ժամու. եւ էր Թագաւորն եւ զօր-
քին իւր 'ի մեծ ուրախութեան, եւ 'ի գի-
շերի անկան 'ի վերայ զօրացն Հայոց զօրք
այլազգեացն, եւ արարին կոտորած մեծ. եւ մե-
ռան բազում պատերազմողք երեւելիք եւ
քաջք։ Հայոց ապաշաւելի այս իսկ էր, վա-
սն զի չէր պատերազմ 'ի պատեհ ժամու,
եւ արարին ձերբակալ զԴերեւնիին զԹագա-
ւորն. եւ ընդ Այլղարիպայ վրանովն ոչ իշ-
խեաց անցանել աք, վասն զի կայր 'ի վրանին

զօրօք իւրով.ք պատրաստական։ Եւ յայնժամ տարան զԹագաւորն Դերենիկ ի Հեր քաղաքի։

Ի. Յայնմ աւուր Վարագ և ամենայն վանորայքն անէծս ցաւագինս և սաստիկս կարդացին Սպղարիպայ. միայնակեացք և միաբանակեացք դղրդեալ ի վերայ նորա լուծին զնա ի հաւատոց և հանին արտաքս ի յեկեղեցւոջ Աստուծոյ։ Իսկ Սպղարիպայ եկեալ ի միտս իւր՝ լայր, վասն զի էր այր հաւատարիմ և երկիւղած Աստուծոյ, և կաքի յոյժ ապաշաւէր զհեղումն արեան քաջարանց զօրացն Հայոց։ Եւ յայնժամ հարցուկ լինէր վասն Թագաւորին, եթէ յո՞ր ուրեմ բերդի կայ արգելեալ ի Հեր քաղաքի. և ծանուցին նմա եթէ ամիրայն Սպղրահաձա(40)ի կապանաց արձակեաց զԴերենիկն, և յամենայն ժամ հանէ զնա խաղ ի գրնդին ի Մեյոտանն արտաքոյ քաղաքին Հերայ։ Եւ լուեալ զայս Սպղարիպայ ուրախ լինէր յոյժ. և յուղարկեալ գաղտագաղտ առ Թագաւորն Դերենիկ, և ասէր ցնա այսպէս. «Ահա ես յայս անուն ժամու յայնմ առեալ լինիմ. ամենայն կարողութեամբ պատրաստ արա զքեզ, յընտիր և ի սուր ձիոջ հեծիր, և հանց ջանա որ ի յիս անկանիս»։ Եւ

յաւուր միում Աղլղհաճա ելեալ խաղայր
ի գունդն բազում աղատօք իւրովք, և արա-
հաղարս և զինուք շուրջ զնաքաք, և Աղլղա-
րիպ կայր ի քմին յիսուն արամբք, և Դե-
ղենիկն ի բուենպանաց աւագէն խնդրեալ
իւր սուր ձի և տուեալ ինչս իւր. և յայն-
ժամ Դերենիկն եհար զգունդն և վարեր ի
գիհն սուր Աղլղարիպ Թագուցեալ կայր ի
մէջ անտառախիտ ծառոց դրախտեացն Հե-
ղրայ, և գահեալ զերիվարն ուժգին ի բաց
Թողեալ զգունդն և եկ արարեալ։ Իւ տե-
սեալ սմիրայն Աղլղհաճէի և զօրացն, ըն-
հետ յարձակեցան մեծաւ ցասմամբ. և Թա-
գաւորն Ասորուոց յուսացեալ գնայր քա-
ջապէս և անկանէր առ Աղլղարիպ։ Իսկ ի
զօրացն այլազգեաց ոմն խափշիկ, այր հզօր և
քաջ, ընԹացեալ զհետ և հասանէր ի վե-
րայ Աղլղարիպայ. և Աղլղարիպ գոչեաց որ-
պէս զառիւծ, և հասեալ ի վերայ նորա, և
գաղանաբար հարկանէր զնա, և յերկուս բա-
ժանեաց զնա, և պատառեաց զնա ի վերուստ
մինչեւ ցերանս։ Իւ տեսեալ զայն այլազ-
գեացն ի փախուստ դարձան. և Աղլղա-
րիպ ձայն տուեալ քաջ արանց իւրոց, ըն-
հետ յարձակեալ և հասանէր սմիրային Աղ-
ղլհաճէի, և կամեցաւ զնա ի ձիոյ առնուլ,

և մինչեւ ի դուռն քաղաքին վարեաց զնա. և ամիրայն, որպէս զիայլակն մտանէր ընդ դուռն քաղաքին Հերայ։ Յայնժամ Այլ-զարիսն պողոպատ ՃԿռոմն (41) հարիանէր զերկամիի դուռն քաղաքի, և պատառեալ զերկամիճն և յայն դեհն անցուցանէր, որ և անեղանելի մնաց մինչեւ ցայսօր ժամանակի, ի տեղն պնդեցին որպէս զբեւեռ։ Իւ այս պիսի օրինակաւ ի ծառայութենէ եհան ըզ-թագաւորն զԻերեմիկ քաջն Այլզարիսի։ Այս ինչ եղեւ ի Ռուաշ գաւառին Հայոց աշ-խարհին, ի գեղն որ կոչի Իակ, սահմանաւ կից Վասպուրականայ։

Իակ ի շարժել յաւելմամբ թուականս Հայոց ազգիս ի յամս ՆԻԵ (976—977) ե-ղեւ կոչումն Յստուծոյ՝ սրբոյ հայրապետին Հայոց Անանիայի. և ձեռնադրեցին հան-դերձ բազմութեամբ յամենայն կամենոցն սուրբեան Հայոց զաւն ի քնաւիցս զերա-նելին զՎահան (42). որ էր գլուխ ժողովրդեան կամենոցն Աղուանից տէր Յովհաննէս։ Ընդ՝ ի յայսմ ամի նստաւ յամենայն հայրա-պետութեան տանն Հայոց տէր Վահան ի մեծն Արգինեա (43) հրամանաւ Անանիայի, Յովհաննիսի և Աշոտոյ Հայոց թագաւո-բացն։

ԻԱ. Յայսմ ժամանակի ապստամբեցաւ ամն իշխան անօրէն ի վերայ Վասպն Հոռոմոց թագաւորին, որում առէին Ակեղառոս (44), զօրաժողով արարեալ բազմութեամբ անիրաւաց և անօրինաց, և սրով անցուցանէր զաշխարհն Հոռոմոց. և բազում զօրօք գայր հասանէր և մտանէր յաշխարհն Հայոց, և արար անթիւ կոտորած օտարազգեան յԱ՝ստուծոյ։ Չ՝ յայնժամ զօրքն Հայոց հասանէին ի վերայ նորա, և յաղթեցին զանօրէն իշխանին այն մեծաւ յաղթութեամբ, և կոտորելով վախճանական արարին զնա։ Իսկ նա ոչ համարձակեցաւ դառնալ յերկիր Հոռոմոց, արար դէպս իւր ի յապգն Տաճկաց, և գնաց անօրէնն և մտաւ ի Պոլսոյ քաղաք. և զկնի երեք ամի եղեալ անտի և գայր մեռանէր յաշխարհն Հոռոմոց ի յապգն իւր։

Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՆԼԲ (983–984) ամի, մեռանէր սուրբ հոգբարեկեն Հայոց Վահան, կացեալ զաթոռ հինգ ի յամիս սրբոյն Գրիգորի. և ձեռնադրեցին յամիս կամիս զիկոսութեանն Հայոց զտէր Ստեփանոս՝ զոր ասասուծագլեաց, զարդարեալ ամենայն բարի առաքինութեամբ որ ի Քրիստոս Յիսուս. նքա

ուսցանեն զնա հայրապետ Հայոց հրամա-
նաւ և օրհնութեամբ տեառն Վահանայ.
որ էր իսկ գլուխ ժողովոյն կաթուղիկոսն
Աղուանից տէր Յովհաննէս, ընդ ժամանա-
կըս Վասղն Յունաց Թագաւորին, և Յով-
հաննիսի և Աշոտոյ Հայոց արքայից, և Մե-
նեքերիմայ որդւոյ Ապուսահլի. որդւոյ Աշ-
ոտոյ Գրիգորեկեանն (45), որդւոյ Գագկայ Աբծ-
ուսնեաց ազգաւ. յազգէն Սարասարայ։

ԻԲ. Աբդ Ի ստոյա աւուրս զօրաժողով
ապարեալ անօրէն և սիրդ բռնակալն Պարս-
կից Սամլան, ամիրասպեան . . . . . .
և ժանդաբարու գաղանութեամբն իւրով
իբրեւ զարիւնարբու վիշապ յարձակեալ
գայր Ի վերայ հաւատացելոց Քրիստոսի, և
իսարհեցաւ կոտորած մեծ ածել Ի վերայ աշ-
խարհին։ Եւ գայր խաղայր ահագին և անա-
համար բազմութեամբ. ելից զերինս և ըզ-
գաշտս զօրօք իւրովք. և յահէ անօրինին
ոստանեալ գողայ ամենայն երկիր. սրով և
հրով գերեաց զաղաւմ տեղիս. և զեկեղե-
ցիս հրակէզ արարեալ խափանեաց յօրհնու-
թեանցն Աստուծոյ. և բաղում բանս հայ-
հոյութեանց Ի վեր Ի բարձունս խօսեցաւ
առ Խարձրեանն։ Եւ անդ էր տեսանել ըզ-
մեծ և զահեղ կոտորածն քրիստոնէից Ի

յահէ չար գաղանին այն. զի բարկութիւն չար թիւնիցն իւր որպէս զմաղձ դառնաշունչ եհեղ ի վերայ հաւատացելոց. և դայր հասանէր բազմութեամբ այսքան ի Յ՚Ա-պահուներաց գաւառին, ի յերկիրն Դաւիթ յուրապաղտին՝ Վրաց իշխանին։ Եւ գըրեաց թուղթ առ աստուածասէր և սուրբ այրն Աստուծոյ Դաւիթ կուրապաղտին եթէ չարաչար բանիւք սպառնացեալ նմա, և խօսէր զայս ինչ. "Մի խաբեսցէ սք գքեզ, ով այր դու Դաւիթ, ամենագարշ և ժանդ և նեխեալ ալեօքդ. զի ահա՝ թէ ոչ վաղվաղակի առաքեսցես ինձ զհարկս տասն տարւոյ և պատանդ զորդիս ազատաց քոց, մեծաւ զօրութեամբ իմով գամ ի վերայ քոյ, եթէ գիր ծառայութեան ինձ ոչ հատանէ. և տեսանեմ՝ եթէ ով իցէ այն որ փրկեսցէ զքեզ ի ձեռաց իմոց. զի ահա չարաչար և դառն նեղութիւն ածից ի վերայ քո, պիղծ և դառն ալեւոր"։ Եւ այսպիսի բազում սպառնալեօք որոտայր ի վերայ նորա։ Իսկ յորժամ ընթերցաւ Դաւիթ զթուղթն անօրէն իշխանին Ամալանայ (46), ի դառնութենէ թըղթոյն՝ ձգեաց արտաքս զթուղթն. և ինքն լալով առ Աստուած աղաչանս արձակէր և ասէր. "Օ՚արթս տէր զզօրութիւնս քո, և

յիշեա տէր իմ զոր ապարեր ընդ Ոսփասակ և
ընդ Վենեքերիմայ անօրէն թագաւորին Ա-
սորեստանեայց. զի ահա զայս բանք անօրէ-
նութեան է նա խօսեցաւ, տէր իմ Յիսուս
Քրիստոս. մի անտես առներ զհաւատա-
գեալս յանուն քո։

ԻԳ. Յայնժամ հրամայեաց ժողով լինել
զօրայ, զազատս և զամենայն հեծելազօր-
իւր. զՎաչէ (47) և զՑեւդատ և Ոփերան,
և զայլ զօրսն Հայոց աշխարհին. հեռուեա-
կրս ազգենաւորս երիք հազար, և ձիաւոր-
երիւք հազար և հինգ հարիւր։ Եւ անօրէնն
Սամիրան կայր բանակեալ Ամպահունս ի
գետն որ խոսօնս կոչէին, երիւք հարիւր
հազարով։ Եւ Դաւիթ յարուցեալ գնայր
ընդդէմ չար գազանին Սամիրանայ, և զամե-
նայն աշխարհն յաղօթս և ի պաղատանս և
յաղաչանս մեծաւ հառաչանօք ի խնդրուա-
ծոս կացուցանէր առաջի Աստուծոյ։ Եւ
գնաց ինքն Դաւիթ ի սահմանս Ամպահու-
նեայց. և զԿարմրակէնն զայր քաջ եօթն հա-
րիւր ձիաւորով պահապան գիշերայն կացու-
ցանէր. և ինքն Դաւիթ զամենայն գիշերն
յաղօթսն Աստուծոյ անցուցանէր։ Եւ յառա-
ւօտուն պահուն գայր սին ի զօրայ այլազ-
գեացն հազար ձիաւորով, որ էր և նա պա-

հարան զօրաց նորա։

Եւ ի գիշերին ընդ միմեանս հարան. և էր լցան լուսնին սաստիկ, և յայնժամ էր սաւկաւ ինչ անձրեւ ի վերայ լերանցն, և ամենայն լերինքն փայլատակէին իբրեւ զլոյս հրոյ. և տեսին զայն զօրք այլազգեացն, կարծեցին եթէ այն ամենայն բազմութիւն զօրաց քրիստոնէից են, և յայնժամ առ հասարակ ի փախուստ դարձան։ Եւ Կարմրակէրն տեսեալ զփախուստ նոցա՝ և սրով ի վերայ նոցա յարձակեցան, իբրեւ զանտառ մայրի կոտորէր զնոսա անխնայ. և կալաւ զկին Ամմանայ և զիւր պատերազմաւ ձին, և վաղվաղակի յուզարկեաց առ Դաւիթ, և ձայն աւետեաց մատուցանէին նմա՝ եթէ հարաք զնա՝ զԱմման։ Եւ նա դեռ յաղօթս կայր առ Աստուած. և լուեալ զայս Դաւիթ հիանայր։ Եւ յայնժամ զհետ մտեալ ամենայն զօրքն՝ արարին զզօրս անօրինացն փախստական սաստիկ կոտորածով. առին անթիւ և անհամար գերութիւն և աւարս ոսկւոյ և արծաթոյ։ Եւ անօրէնն Ամման իջաւ (48) ամենայն յաշխարհն իւր, և ամբարտաւանեալ յոյժ ընդ Աստուած՝ և յերկինս ոչ հայեցաւ բնաւ, և զիւր անարժան աղօթսն ոչ մատուցանէր Աստուծոյ։

ԻԴ. Իսկ յետ ամաց ինչ խորհեցան չար խորհուրդս վասն սուրբ և արդար իշխանին Դաւթայ սպանանել զնա. և չար իշխանացն իւրոց՝ նմանեալ լինէր Կայենի և այլոց ըսպանողացն։ Եւ յարուցին ի չար խորհուրդս իւրեանց զարհի եպիսկոպոսն Վրաց աշխարհին զԻլարիոն. և այս Իլարիոնս զՆոսուած կրկնակի ի իսաչ եհան, վասն զի ի կենդանի նարար մարմին և արիւնն Քրիստոսի դեղ մահու խառնեաց, և արար զապրեցուցիչն՝ մահացուցիչ. և զինի սպանող պատարագին իւրոյ դնէր ի բերան սուրբ իշխանին զմասն խորհրդոյն խառնեցեալ մահադեղոք յանդիմման Նոսուծոյ ի մէջ եկեղեցւոյն։ Եւ գիտացեալ աստուածասէր իշխանն Դաւիթ, սչ ինչ խօսեցաւ բնաւ, այլ առեալ դեղ բըժշկութեան շինուցանել զցաւն մարմնոյ իւրոյ։ Իսկ անօրէն եպիսկոպոսն Իլարիոն դարձեալ բորբոքեցաւ ի չար խորհուրդսն իւր, և մտեալ ի սենեակն՝ մինչ ննջէր բարեպաշտն Դաւիթ և խաղաղիկ ի քուն կայր, և առեալ նորա զբարձն ի սնարիցն և եդիր (եդ) ի վերայ բերանոյն Դաւթին, և անկեալ սատակապէս ուժգին ի վերայ նորա, և չարչարանօք խեղդէր զաստուածասէրն զիւրապաղման զԴաւիթս. զոր յետ սակաւ ամաց թա-

գաւառն Վասիլ բռնեալ զանօրէն եպիսկոպոսն Իլարիոն, և քար մի մեծ կապեաց ի պարանոցն նորա և ընկէց զնա յամկիանոս, և զայլ միաբանեալսն ազատաց. և անդ սատակեցան անիծիցն վաստակօք (49). վասն զի հայր անուանէր (50) Դաւիթ կուրապաղատն Թագաւորին Վասլին, և վասն այնորիկ կորոյս զնոսա։

ԻԵ. Յե՛ի լինել Թուականութեանս Հայոց ՆԼԴ (985—986) ամին, մեռանէր Հայոց հայրապետն տէր Սահականոս, և ձեռնադրեաց յաթոռ իւր զերանելին զտէր Խաչիկ, վասն զի էր այր փառաւոր և տեղեակ աստուածային կտակարանացն։ Արդ ի սա եկեալ Թուղթ ի Հռոմոյ պատրիարքէն ի Թէոդորոսէն որ նստէր ի մայրաքաղաքքն Վենետենի, վասն զի էր այր կորովի և հմուտ գրոց պատուիրանաց. և վարդապետն Հայոց Սամուէլ գրեաց ընդդէմ նորա պատասխանի վայելուչ և ցանկալի քանիւք. որ եղեւ իսկ հաճելի Թուղթն այն ամենայն լուսոյցն, եւս առաւել մեծարեալ եղեւ առաջի Թէոդորոսի պատրիարքին. և եղեւ մեծ բարեկամութիւն ընդ Թէոդորոսի պատրիարքին Հռոմոյ և ընդ տէր Խաչիկ կաթողիկոսին Հայոց։

ԻԶ. Իսկ յաւուրս ժամանակաց տօմարիս Հայոց ի յամի ՆԼԷ (986—987), ապստամբեաց ոմն ի վերայ Թագաւորին Վասղին. իշխանն Հռոմոց Աբրոյ Վարդ (51), և աբար աւերակս զմեծ մասն Հռոմոց աշխարհին. և զքաղաքն ընդ երկիր սրով և գերութեամբ։ Յետ ժողովեալ զոքն Հռոմոց ի վերայ նորա, հալածական արարին զնա յաշխարհն Տաճկաց. զոր յետ ամի միոյ եկեալ մեռանէր ի Թագաւորէն Վասղէ։

ԻԷ. Դարձեալ ի Թուականութեանս Հայոց ՆԼԷ (986—987) ամի, եղեւ սաստիկ շարժ ընդ ամենայն արարածս, և փլաւ սուրբ Սոփիա ի Կոստանդինուպօլիս։ Յետ յայսմ ամի կամեցաւ Թագաւորն Վասիլ զաշխարհն Պուլղարաց ածել ի հաւանութիւն իւրոյ Թագաւորութեանն. և առաքեաց առ Յիւսիանոս (52) Թագաւորին Պուլղարաց և առ ամենայն աշխարհաց իշխանացն՝ գալ յերկրպագութիւն իւրոյ Թագաւորութեանն. իսկ նոքա ոչ եկին զհետ հրամանաց Վասղի Թագաւորին։

ԻԸ. Յայնժամ Թագաւորն Վասիլ ժողովէ զարար զամենայն աշխարհն իւրոյ Թագաւորութեանն, և մեծաւ սրտմտութեամբ յարձակեցաւ ի վերայ աշխարհին Պուլղարաց,

և սրով և գերութեամբ ապականէր զերկիր։ Իսկ Թագաւորն Պուլղարաց Աշիւսխանոս ժողով արարեալ, և գայր բաղում զօրքն ի վերայ Վասլին, և արարին սաստիկ պատերազմ ընդ միմեանս։ Իսկ Թագաւորն Պուլղարաց յաղթեաց Վասլին, և դարձոյց զամենայն քաջութիւն զօրացն ի փախուստ մինչեւ ի Կոստանդինուպօլիս. և առին բազում աւար և գերութիւն ի զօրաց Վասլին. և Վասիլն լի ամօթով մնայր ի Կոստանդինուպօլիս։ Իսկ յետ եկու ամի դարձեալ ժողովք արար Թագաւորն Վասիլ, և գնաց ի վերայ Թագաւորին Պուլղարաց առ ի խնդրել զվրէժս իւր. և հանդիպեալ զօրացն Պուլղարաց, դարձոյց ի փախուստ զնոսա և վարէր առաջի իւր։ Իսկ նեղեաց Վասիլն զաշխարհս Պուլղարաց սովով և սրով և գերութեամբ, և դարձաւ եմուտ ի Կոստանդինուպօլիս ուրախութեամբ։

Արդ յորժամ բարձրացաւ Թուականութիւն Հայոց ամի ՆԽ (991—992), մեռանէր Հայոց կաթողիկոսն տէր Խաչիկ, կացեալ յաթոռ Հայրապետութեանս Հայոց ամս վեց. և ձեռնադրեաց յաթոռ իւր զտէր Սարգիս, որ էր այր կորովի գիտութեամբ պատուիրանացն Աստուծոյ. և էր սա հաճոյ

Աստուծոյ և մարդկան, և էր կիրթ վարուց առաքինութեան, և լուսաւոր վարդապետութեամբ իւրով զարդարեաց զեկեղեցի Աստուծոյ։

ԼԹ. Յայսմ ամի զոր Էդիսատոսի որ Մարտ Արտակիկ (ՃՏ) կոչին, մտին յաշխարհն Ասորեստանի քաղաքին, և բազում աւերմամբ լցին զամենայն դաւառն. և ժողովեցան ամենայն զօրք Հռոմոյ ընդդէմ նոցա ի պատերազմ. և ի հանդիպիլ միմեանց աբարին փախստականն զզօրսն Հռոմոյ, և ըստ մեծամեծ իշխանսն գերի առին և տարան Էդիսատոս։ Իսկ յետ երկու ամի եղանէր մեծ տուին Հռոմոյ և գայր բազում զօրք ի վերայ աշխարհին Հայոց. զոր և դեռաբեթեամբ անողորմ յարձակեցաւ ի վերայ հաւատացելոց Քրիստոսի. և գազանաբար սպանումամբ ընթանայր իբրեւ զօձ թիւնաւոր. որ երկայ զտեղն անհաւատ ազգաց։ Այլ եղեւ ի մտանելն նորա յաշխարհն Հայոց. ժողովեցան ընդ առաջ նորա զօրք Հայոց ազատացն, և ի դիպելն ընդ միմեանս բախեցին գազանաբար. և քաջք ընդ քաջք եղանէին, և անպարտելն հանդիսանային (զօրք) երկոցունց կողմանցն։ Այլ անդ էր տեսանել զկատաղածն երկոցունց կողմանցն, և յայն-

ժամ 'ի սատականալն մեծի պատերազմին, եղեն պարտեալ զոյնքն Հոռոմոց առաջի զօրացն Հայոց, և դարձան 'ի փախուստ դիմաք յաշխարհն իւրեանց յամօթ երեսաց մաղապուրծ փախմամբ։

Լ. Յայսմ ամի եղեալ գայր ամիրայն Տաճկաց, որոյ անուն Իրիսյնաձեռն կոչէին, և զօրաք բազմաք 'ի յաւեր և 'ի գերութիւն մատնեաց զԻդեսացւոց աշխարհն, և վիշտս մեծամեծս 'ի վերայ Լեռնայոց. և անցանէր ընդ մեծ գետն Իփրատ, և գերեաց զայն կոյս զահմանս աշխարհիս Հայոց, և դարձեալ մեծաւ յաղթութեամբ յաշխարհն Սելևկեցւոց։

ԼԱ. Իւ եղեւ 'ի փոխել թուականութեանս Հայոց ամի ՆԽԶ (997—998), եղանէր յերկինս ստող մի գիսաւոր, և երեւեալ սոսկալի և տհաւոր տեսլեամբ լուսաւոր և զարմանալի։

ԼԲ. Իսկ յամի ՆԽԹ (1000—1001) թուականութեանս Հայոց, եղեւ սէր և միաբանութիւն մեծ ընդ թագաւորն Վասլին և ընդ Սեբեքերիմ արքայ Հայոց։ Իւ յայսմ ամի եղեւ փախման Սահակայ մարզպանին Վարաժնունեաց տեառն։

ԼԳ. Յօրժամ լինէր թուականն Հայոց

ՆԾԵ (1006–1007) ամ, զբաժանել զ-
բար Թագաւորն Վասիլ զամենայն աշխարհս տերութեան իւրոյ (54), և խաղայր գԸ-
նայր ի վերայ աշխարհին Պուլղարաց. և բա-
զում ժամանակս արարեալ յաշխարհն այն մեծաւ պատերազմաւ։ Եւ յայսմ աւուրքս մեծ խռովութիւն եղեւ ի քաղաքն ի Կոս-
տանդինուպօլիս և յամենայն աշխարհն Յու-
նաց. վասն զի յաւուր մեծ Ոստիին մոլ-
բեալ եղեն ի կատարելոյ զսուրբ Յարու-
թեան օրն Ոստիին. և ամենայն վարդա-
պետք տանն Յունաց ընդ ստութեամբ փա-
կեցին զուղղղդ պատուիրանս Աստուածա-
շունչ գրոց, և զսուտ և զնաբերայ գրոց
տումսին հակառակամարտին Ռիծնի (55) ընկալան, և զՃշմարտագիր տօմարն մեծին Ընդրեասի ոչ ընկալան. այլ ածին նոքա զլուսին Ոստիին ի կիրակիէն ի շաբաթն. և զկնի աւուր մի Ոստիկ արարին, զոր պարտ էր զկնի սԹ աւուրն կատարել։ և ամենայն տանն Յունաց մոլորեալք ի սուրբ Ոստիէն, և եղեւ սուգ մեծ ի վերայ եկեղեցւոյն Կոստանդինուպօլսի, եւ առաւել ի սուրբ և յաստուածակերտ քաղաքն Յերուսաղէմ, զի հպարտութեամբ բարձրավզեալ ածին զՈստիին ի յաւուր

Օրազկաղարդին, և եղեն հակառակողք ա-
մենայն աղգեաց տանն Յունաց, եւ սառա-
եալ Քրիստոսի, վասն զի պատերազմեցան
ընդ Հոգւոյն սրբոյ տուընն փիլիսոփայից։
Եւ յայնմ մի Օ՚ատակի ոչ վաւերացաւ լոյս կան-
թեղայն ի սուրբ գերեզմանն աստուածընկալ ի քաղաքն Երուսաղէմ. վասն զի սուտ
էին, անօրէնութեամբ արարին Օ՚ատիին խո-
րեանց։ Իսկ յայնմ աւուր ազգն . . . . . .
որ կայր ի քաղաքն Երուսաղէմ, խրբեւ
տեսին զՕ՚ատիին քրիստոնէից ի մէջ սուրբ
Յարութեանն, կոստրեցին սրով զամենայն
քրիստոնեայսն՝ հոգիք խրբեւ տասն հազար,
և. լցաւ սուրբ Գերեզմանն Քրիստոսի արեամբ աղօթաւորացն. և դեռ մինչեւ ցայսօր կան սակեբք նոցա լցեալ ի յայրին անդ
յարեւմտից Կուսէ քաղաքին Երուսաղէմի,
զոր այժմ Մանկանց Նշխարք (56)կոչեն զնոսա։ Արդ
զայս այսպէս արարին հանճարեղ և խմաստունքն Յունաց։

ԼԴ. Իսկ Թագաւորն Վ՚ասիլ խրբեւ յաղթեաց և էառ զԹագաւորութիւնն Պուլղարաց, դարձաւ ի Կոստանդինուպօլիս մեծաւ ուրախութեամբ։ Եւ յորժամ լուաւ
զայս ամենայն կոստրածս որ եղեւ վասն
սուրբ Օ՚ատիին, կոչեաց զամենայն խմաս-

տուն՝քս Յունաց, և հարցանէր զպատճառն. և նոքա ըստ կամաց իւրեանց սկսան բաղմադիմի մոլորեցուցանել զԹագաւորն օտարոտի պատասխանատուութեամբ։ Եւ ծանեաւ Թագաւորն զայլակերպ պատասխանիսն նոցա, իմացաւ՝ որ սուտ էին և մոլորեալք։ Իսկ յառաջագոյն լուեալ էր Թագաւորն վասն Հայոց վարդապետացն՝ եթէ յաղթողք և կսրովիք են ի գրոց պատուիրանաց, և յանուանէ գիտէր վասն Յուսեփայ Ինճայուց (57) հօրն և յաղագս Յովհաննէսի որ համանուն ասէին Կոզեռն. և յայնժամ գրեաց առ Յովհաննէս աբքայն Հայոց, զի առաքեսցէ զնոսա առ ինքն ի Կոստանդինուպօլիս, զի ի նոցանէ գիտասցէ զճշմարիտ պատճառն և զուղղութիւն։ Իսկ նոքա ոչ առին յանձն գնալ, այլ Թղթեցին գեղեցկազարդ (58) բանիւք հասկացուցին զԹագաւորն ամենայն խորին քննութեամբ։ Եւ յայնժամ հակառակեալ կղերիկոսք, և ոչ հաւանեցան Թղթոյն, մինչեւ դարձեալ Թագաւորն Վասիլ յուզարկեալ ի Հայք առ Յովհաննէս շահնշահ և առ տէր Սարգիս կաթուղիկոսն Հայոց, և մեծաւ խնդրուածովք ետ բերել առ ինքն զՀայոց վարդապետն զՍամուէլ, զայր կա-

բոլի և յաղթող. և կացուցանէր զնա յատե-
նի խօսել ընդ վարդապետացն Յունաց։
Իսկ իմաստունքն Յունաց շարժեցին ի վե-
բայ Սամուէլի զամենայն գրեանս ասանն
Յունաց, և ոչ կարացին շարժել զնա ի
ճշմարտութենէն։ Եւ սիրոյն սրբոյ
Սամուէլ յառաջին աւուրն յարարչութե-
նէն, և գայր հաստատէր մինչեւ ցվերջին
պատկեր օրն. եւ զամենայն պատճառս
պատճենից ըստ (69) առաջին իմաստնոցն
հաստատուն կացուցանէր։ Եւ հաճոյ լիւ
նէր Թագաւորին ամենայն բանքն նորա.
և իմաստունքն Յունաց ասէին առ Թագա-
ւորն. "Վա՜տ է արքայ, հրամայեա և ած
այսր զմեծ վարդապետն Հռոմայեցւոց որ
բնակեալ կայ ի կղզւոջն Կիպրացւոց, այր
կորովի և հմուտ ոտմարի և ամենայն տր-
ուեստից ի մանկութենէ իւրմէ։ Եւ յու-
զարկեալ Թագաւորն ի Կիպրոս, և ածէր
զՍ՝ուսի զվարդապետ Հռոմայեցւոյն։ Եւ
նա կացեալ յատենի առաջի Թագաւորին
Վասլի, այր ճարտարարան և հզօր, և սկսա-
նէր խօսել զարուեստս ոտմարին, և յամօթ
և սուտ արար զամենայն իմաստունք տանն
Յունաց. և գովէր զբանքն Սամուէլի Հայ-
ոց վարդապետին։ Իսկ Թագաւորն յոյժ

սրամեալ ի վերայ վարդապետացն Յունաց, և զաւազումն եհան ի պատուոյ եկեղեցւոյն, և ընկէց ի փառացն. և զվարդապետն Հայոց յուշարկեալ մեծաւ պարգեւօք յաշխարհն Հայոց։

ԼԵ. Դարձեալ ի յաւուրս Վասիլի Յունաց թագաւորին և ի Հայոց թուականութեանն ՆԾԲ (60), (1003—1004) ամի եղանէր աստղ մի ի տեսիլ հրոյ երեւեալ ի յերկինս, նշան բարկութեան սրարածոց և կատարածի աշխարհի։ Այլ եղեւ շարժ սաստիկ ընդ ամենայն երկիր, մինչեւ կարծել բազմայ՝ եթէ եհաս օրն վերջին և կատարած աշխարհի, և որպէս առ ջրհեղեղաւ՝ երերեալ գոլոյ ամենայն սարսած. յահէ և բարբառոյ բարկութենէն ոչ ժամանէին խոստովանութեան և հաղորդութեան։ Սարդ և անասուն պակասեցան յերկրէ, և մնացեալ ջրբռնանիք՝ անմարդ մնացեալ՝ շրջէին ի վերայ երկրի։

Լ.Զ. Իսկ ի թվականն Հայոց ՆԿ (1011—1012) ամին զօրաժողով արար թագաւորն Վասիլ, և գնայր ի վերայ աշխարհին Պուլղարաց, և յաղթեաց թագաւորութեան նոցա, և ի սուր սուսերի մնաց զաւազումն դաւառաս մեծաւ բարկութեամբ. և յաւեր

և 'ի գերութիւն մատնեաց զամենայն արեւ-
մուտք, և բնաջինջ եբարձ զամենայն թա-
գաւորութիւն Պուլղարաց, և դեղ մահու
արբուցանէր Աղեքսիանոսին առն քաջի Պուլ-
ղարաց թագաւորին. և այսպիսի օրինակու
(հան) զնա 'ի կենաց, առեալ զկինն նորա և
զորդիսն անիրաւեր 'ի Կոստանդինուպոլիս։

Լէ. Յորժամ թուականութիւնն Հայոց
հասանէր 'ի յամս ՆԿԷ (1018–1019), զար-
թեաւ ասասուածասաստ բարկութիւն 'ի վե-
րայ ամենայն քրիստոնէից ժողովրդեանն և
երկրպագողաց սուրբ խաչին. զարթեաւ վի-
շապն մեհաշունչ հանդերձ մեհաբեր հրով
և հար զհաւատացեալս սրբոյ Հրիպսիմեա-
նեանն։ Յայսմ թուականութեանս սատա-
նեցան հիմունք առաքելականացն և մարգա-
րէականացն. վասն զի սնգ թեւաւորք հա-
սին, և կամին ցոլանալ ընդ ամենայն տշ-
խարհք հաւատացելոց Քրիստոսի. այս է
առաջին եղն տրիւնարբու գազանացն։ Ընդ
աւուրսն ընդ այնոսիկ զօրաժողով լինէին
խուժադուժ ազգքն անօրինաց, որք անուա-
նեալ կոչին Թուրք. և հասեալ մատնէին
յաշխարհն Հայոց 'ի Ալ տասպուրական գաւառ
(61) և անողորմ 'ի սրոյ բերան կոտորէին
զհաւատացեալս Քրիստոսի։

ԼԲ. Յայնժամ հաստատէր հոմբաւ կուսոյ բաժին այս առ թագաւորն Մենեքերիմ. և յայնժամ աւագ սրդին նորա Դաւիթ ժողովեալ զզօրսն ազգատոհ, հաստատէր ի վերայ թշուրքն բանակին. և հարան սատակեցին ընդ միմեանս սահմանս պատերազմաւ։ Իսկ յայնմ ժամանակին չէին ընաւ տեսեալ թշուրքն զօրքն հեծելոց. և ի հանդիպելն նոցա՝ տեսին այլակերպ զնոսա, ազգնուրս և հերարձակս իբրեւ զկանայս. և յայնժամ զօրքն Հայոց չէին սովոր պատրաստ լինել ընդդէմ նեռին. և քաջաբար ի վերայ այլազգեացն յարձակեցան, և առ հասարակ մերկացուցին զաւարն իւրեանց ի պատանեացն. և արիաբար ի պատերազմ ընթանային արիական գունդն Հայոց. և զբազումս այլազգեացն սատակէին։ Իսկ այլազգիքն նեռասգուշեամբն զբազումս ի զօրացն Հայոց վիրաւորէին խոցելով։ Իսկ տեսեալ զայն ամենայն Շապուհ (62) սաէր յԴաւիթ. «Դարձիր, թագաւոր, յերեսաց թշնամեացս, փոսն զի ինեսցես վիրաւորեալ եղեն մեծ մասն զօրացս. գնասցուք և ընդդէմ այսմ զինուցս զոր տեսանեմք առ այլազգիսդ, այլ զգեստ պատրաստեսցուք ընդդէմ նեռին»։ Իսկ Դաւիթ առ մեծութիւնն իւր հայելով, հպարտացեալ

մեծաւ ամբարտաւանութեամբ, ոչ լսելով Տապէոյ, և դառնայր ի պատերազմ։ Յայնժամ Տապուհ բարկութեամբ դիմեաց ի վերայ Դաւթի, և բռնցն հարեալ զթիկունսն ուժգնակի մղէր զնա դառնալ. վասն զի Տապուհ էր այր քաջ և պատերազմող հզօր, և էր մանկակալ և սնուցիչ Դաւթի. վասն այնորիկ անահ էր ի նմանէ. և այսպիսի օրինակաւ դարձուցանէր զԴաւիթ հանդերձ զօրօքն։ Եւ զնացին Մասան քաղաք, և պատմեցին Թագաւորին Ամենքերիմայ. և ասացին զարպիսութիւն կերպարանաց այրագեացն։ Եւ ըստեալ Ամենքերիմայ յոյժ վիրաւորեալ լինէր. ոչ եկեր և ոչ արբ, այլ կայր մտախորհ լի տրտմութեամբ. և զգիշերն ամենայն անքուն անցուցանէր, և նստեալ քնէր զժամանակագրութիւնս և զասացուածս աստուածախօս տեսանողացն, զորոց վարդապետացն, և գտանէր գրեալ ի գիրսն զի ժամանակն ելանելոյ Թուրք զօրականացն. և ծանեաւ զկորուստ և զկատարած ամենայն երկրի. և գտանէր ի գիրսն գրեալ այսպէս, եթէ «Ի ժամանակին յայնմիկ փախիցեն յարեւելից յարեւմուտս, ի հիւսիսոյ ի հարաւ, և հանդիսաւ ոչ գտանեն ի վերայ երկրի, վասն զի արեամբք ծածկին

գաշտք և լերինք. և այս էր զոր ասաց Յոան յետ. եթէ «Ամբակք երիսարաց նոցա հաստատուն. միշտ և հանապազ 'ի գինարբուս գեղեցիին վասն սիրոյ և յանկուճեան չար և պիղծ սխտին»։ Հայրապետք և եպիսկոպոսունք և քահանայք և կրօնաւորք արծաթասէրք առաւել քան ասատուածասէրք։ Որ գեսակք իմ, ահա յայսմ հետէ սատանայի կամքն առաւել կատարեսցի յորդիս մարդկան՝ քան Աստուծոյն. և 'ի ձեռն անարժան պատարագողացն որ յայսմ հետէ լինելոց է, բարկանայ Աստուած 'ի վերոյ արարածոցս, եւս առաւել 'ի վերայ մատուցանողին զնա. զի յանարժանելին պատարագելոց է Քրիստոս և յանարժանսն բաշխեսցի, և առաւել վերաւորելոց է սէր մեր Յիսուս Քրիստոս 'ի յանարժան քահանայիցն՝ քան զաղաչելն և զնաչելն 'ի Հրէիցն. զի արձակեցաւ ասատանայ 'ի հաղարամէ կապանաց իւրոց զոր կապեաց Քրիստոս։ Եւ զայս պատուիրեմ ձեզ, որդեակք. հառաջանաք սրտիւ լալով և ողբալով. վասն զի քակին բազումք 'ի հաւատոց, և պարծանաք ուրանան զՔրիստոս, և վասն այնորիկ (խաւար) կալաւ զամենայն արարածս»։ Զայս այսպէս ասաց սուրբ հայրապետն Հայոց[65] վասն կատարածի բարկութեան

նշանին և այլ բազում ինչ հաւատաց որ կա-
տարելոց է ի վերայ հաւատացելոցս։ Զոր
ահա ամենայն ինչ կատարեցաւ մի առ մի ի
ձեռն ելելոց . . . . . ազգին Թուրքաց
անօրէն և պիղծ որդիքն Պատմայ։

Յայսմ ամի Թուականութեանս և ահա-
ւոր նշանիս մեռանէր սուրբ Թագաւորն Վա-
սիլ. և Թագաւորեաց Թագաւորութեանն
Հոռոմոց սամ յիսուն և ութ, և կոչեալ զեղ-
բայր իւր զԿոստանդին, և մինչդեռ կենդանի
էր դնէր զԹագն ի գլուխ եղբօրն իւրում. և
նստուցանէր զնա յաթոռ Թագաւորութեան-
նն իւրոյ, և երկրպագանէր ի վերայ երեսաց
իւրոց, և զամենայն Թագաւորութիւ-
նն իւր նմա յանձն արար, և անդարձ արար
նմա վասն աշխարհին Հայոց, զի հայրաբար
սիրով խնամեսցէ զազգն այն։ Դարձեալ զոր-
դիսն Սենեքերիմայ նմա յանձն արար զԻսա-
ւիթ և զՀոմ և զԱղուսահլ և զկոստանդին
և զամենայն իշխանս տանն Հայոց. և
պատուիրեաց նմա բարի մտաք կալ հանա-
պազ ի վերայ հաւատացելոց Քրիստոսի։
Վասիլն զսամ յիսուն և ութ Թագաւո-
րեաց ի վերայ Հոռոմոցս, սրբութեամբ և
կուսութեամբ վարեաց զայս կեանս, և բա-
րի խոստովանութեամբ ննջեաց ի Քրիստոս

Յիսուս, և Թագէցին զնա ընդ սուրբ Թագաւորս բարի յիշատակս։

ԼԹ. Յայսմ ամի մեռաւ և Մենեքերիմ Թագաւորն Հայոց, և տարան զնա ի գերեզմանատունն հարց իւրոց, ուր առաջին Թագաւորքն Հայոց Թաղեալ կան։ Ի Պարագ՝ ի վանքն որոց Նշանին. և անդ Թաղեցին զՄենեքերիմ ընդ հարսն իւր, և հատուցեալ իներ Թագաւորական իշխանութիւն տանն Հայոց յաւագ որդին իւր ի Դաւիթ, վասն զի էր այր փառաւոր և պատուական և ահարկու ի վերայ երկրի։

Խ. Յայսմ ամի մեռաւ և Գուրգի Թագաւորն Պրոց, և նստուցին յաթոռ նորա զորդին նորա զԴաղբատ, Թագաւորեալ ի վերայ ամենայն աշխարհին Պրոց։

ԽԱ. Արդ ի յայսմ ամի Թագաւորեաց Կոստանդին եղբայր Պասլին ի վերայ ամենայն աշխարհին Հոռոմոց։ Իսկ եղեւ Կոստանդ այր բարի և ստուգամտաբար, ողորմած այրեաց և գերեալաց, անչիշաչար ի վերայ յանցաւորաց, վասն զի արձակեաց զամենայն բանտարկեալսն ի կապանաց. և զիորատական տունն զոր արարեալ էր Պասիլն, հրամայեաց հրով այրել, զոր Պասիլ լի իսկ արարեալ էր իշխանաբար Յունաց, վասն ահի Թագաւորու-

թեանն գաղտ ի ծածուկ խեղդատուսհ արաբեալ զիսուաւորսն Յունաց, և կախեալ կան զգեստաքն ընդ փողիցն ի ճանիս երկաթիս. զոր տեսեալ Կոստանդ՝ ինքոյց զնոսա, և հրամայեաց զնոսա թաղել, և զաւանն հրով ասաց այրել. և մեղադիր լինէր եղբօրն իւրոյ և ասէր, եթէ «Զոր մահն առաջի կայ, այս էր է ջարաչար մահս վասն մարմնաւոր և անցաւոր կենացս»։ Եւ ինքն Կոստանդին խաղաղութեամբ կացեալ յաթոռ թագաւորութեան Հռոմոց, և հովուեաց քաղցրութեամբ զամենայն հաւատացեալս Աստուծոյ. և կացեալ յաթոռս թագաւորութեանն զամս չորս, և մեռանէր բարի խոստովանութեամբ ի Քրիստոս Յիսուս. և բարի յիշատակաւ գնաց առ հարս իւր, և սուգ մեծ լինէր աշխարհին՝ զկեալ յայնպիսի թագաւորէն։ Եւ մինչդեռ կենդանի էր Կոստանդին, սա զդուստր իւր զԿուրազոյի (64) կին եառ Ռոմանոսի մեծ իշխանին, վասն զի որդի ոչ գոյր նոցա։ Եւ Ռոմանոսն նստեալ յաթոռս թագաւորութեանն Հռոմոց, և ամենայն երկիր եկին նմա ի հնազանդութիւն։

ԽԲ. Իսկ ի թուականութեանս Հայոց յամի ՆՀԹ (1030—1031), զօրաժողով արար

թագաւորն Հռոմոց Պոմանոս զամենայն զօրս Յունաց աշխարհին. և խաղայր հասաներ բազմութեամբ յաշխարհն Տաճկաց, և եկեալ բանակեալ ի վերայ ամուր բերդին որ կոչի Հալապայ մերձ Ակաղ քաղաք. և ժողովեցան զօրքն Տաճկաց անթիւ բազմութեամբ. և եկին ի վերայ թագաւորին Պոմանոսի։ Իւ թագաւորն զարհուրեալ լինէր և ոչ համարձակէր ելանել ի պատերազմ ընդ զօրսն Տաճկաց, զի թուլամտութիւն էր և ակար և յոյժ չարաբարոյ, և կարի հոյհոյիչ ուղղափառ հաւատոյ. և յաղագս այսորիկ զօրքն ոչ էին միաբան ընդ նմա, և խորհէին զի ի ժամ պատերազմին թողցեն զնա ի մէջ զօրացն Տաճկաց, և ինքեանք ղերեսն դարձուցանեն ի պատերազմէն զի սատակեսցի անօրէն թագաւորն։ Յայնժամ մի ոմն իշխան ի զօրաց իւրոց, որ կոչէր Ակուքատպայ, որ յառաջն վրանապահ էր լեալ Դաւթի կիւրապաղատին Վրոց, սորա ազգ արարեալ թագաւորին զնենգութիւն զօրացքն. և զայս լուեալ թագաւորն և երկեաւ յոյժ, և յարուցեալ լինէր փախստական ի գիշերի հանդերձ մեծամեծօք իւրովք։ Իւ լուեալ զայս զօրքն Տաճկաց յարձակեցան զօրքքն հետ զօրացն Հռոմոց և արարին սաստիկ

կոտորածս իբրեւ քսան հազարայ, և ցրուեցան զօրքն Հռոմոց մի առ մի ընդ երեսս երկրի։ Այլ զկնի չարեքտասան աւուր շինական ումն ի քաղաքէն Կուրիայ (65), գտանէր ըզթագաւորն Ոսմանոս անկեալ ի մէջ ծառոյն, և կայր ընդարմացեալ (66) իբրեւ ըզմեռեալ ի ցրտոյն. թողեալ զդրծս իւր և տարաւ զնա ի տուն իւր, և դարմանեալ էած զնա ի կենդանութիւն, և ոչ գիտէր թէ ով ոք իցէ. և յետ աւուրց եհան արձակեաց զնա զհետ արանց։ Այլ հասեալ ի Սնարաշ քաղաք, ժողովեցան առ նա մնացեալ զօրքն և տարան զնա ի Կոստանդինուպօլիս։ Իսկ զկնի աւուրց ինչ անցանելոյ կոչեաց Ոսմանոս ի կոչ զայրն զայն, և արար զնա տէր ամենայն գաւառին Կուրիայ. մեծաւ պարգեւաւք յուզարկեաց զնա ի տուն իւր՝ մեծաւ գոհութեամբ։

ԽԳ. Դարձեալ ի վերանալ Հայոց թուականութեանս յամս ՆՁ (1031—1032), մեռաւ Նէր ամիրայն Ուռհայոյ քաղաքին, որում անուն ասէին Շէպլ։ Յայնմ ժամանակին նստէր յՈւռհայ երկու ամիրայ, Շէպլն և Ուռտայր (67), և կայր ի քաղաքն Ուռհայոյ երեք կլայ, երկու կլայն և երկու բաժին քաղաքին՝ Շէպլայ էր, և մէկ կլայն և մէկ

բաժին քաղաքին՝ Աստուծոյ։ Եւ երկոքեանն ունէին խորհուրդ զմիմեանս կորուսանել։ Եւ յաւուր միում Աստուած զՇէպն ի ձաշ հրաւիրեաց. և հանեալ զնա արտաքոյ քաղաքին որ կոչի Արծիծի վանք, ուր քարէ սիւեն կայ հանդէպ կլսին, գազան ի միմեանց։ Եւ յորժամ Շէպն աղդ արար զօրացն իւրոց սպանանել զԱստուած, հասին վազվազակի զօրքն Աստուծոյ և սպանին զՇէպն։ Եւ արար Աստուած ժողով ի վերայ աւագ կլսին Շէպոյ, և կամեցաւ պատերազմաւ առնուլ զնա։ Եւ էր Սալման ոմն բերդապահ ի վերին կլսին, և նեղեաց Աստուած զՍալման սաստիկ պատերազմաւ. եւ անձարակեալ Սալման եւ առաքեաց առ Ներսոյ, որ էր մեծ ամիրայ Տաճկաց որ նստէր ի Մուսարկին (68), և տայր զկլսին Ռուհայոյ ի նա. և Ներսոյ առաքեաց ի կլսին Ռուհայոյ զՊալէլ-ռային (69) հազար ձիաւորով, և տարաւ զՍալման առ ինքն կնաւ և որդւովք, և արար խաբ մեծ պարգեւք։ Իսկ Աստուած այլ ինչ ոչ կարաց առնել, այլ նեղգուշեամբ միաբանեցաւ ընդ Պալէլ-ռայինսն գազան և խորհէր սպանանել զնա. զոր իմացեալ Պալէլ, և մինչ էին ի գինարբուսն արտաքոյ քաղաքին, սպանանէր Պալէլն

զամիրայն Ուտայր, և տիրեաց ամենայն քա-
ղաքին Ուռհայոյ։ Յայնժամ կին Ուտայրայ
յորժամ տեսաւ թէ սպանաւ Ուտայր, քա-
ջապէս յարեաւ ՝ի վերայ Պալէլին, և կա-
պեաց սեւանշանակ և մոռաւ ճիշկան յա-
մենայն ազգն Աբրակայց և ասէր, եթէ
«Թուրթ ազգն եկին և առին զՀայրենի
քաղաքն Աբրակայց, և սպանին զայրն իմ
զամիրայն Ուտայր»։ Այս այսու արար ժո-
ղովս բազում, և յարուցեալ գայր ՝ի վե-
րայ Պալէլին. զոր իմացեալ Նպրոսլ գայ
բազում զօրաք ընդդէմ Աբրակայց. և գը-
նայ կինն Ուտայրի ընդդէմ Նպրոսլայ եւ
սատակ պատերազմաւ դարձուցանէր զնա
՝ի փախուստ. և ինքն գայր ի՝ջանէր ՝ի վե-
րայ Պալէլ—ուայիսին, և արար ՝ի վերայ կը-
ղային ահագին պատերազմ։ Այս անձարա-
կեալ Պալէլն, եւ ոչ իրացն ոչ գտանէր, յու-
զարկեալ առ Նպրոսլ և ծանուցանէր զվը-
տանգն և ասէր, թէ ՝ի նեղութեան կամ
ես և ամենայն Բրդուստան։ Այսպս անձա-
բակեալ Նպրոսլ առաքեաց զՍալման ՝ի կը-
ղային Ուռհայոյ, եւ տարաւ զՊալէլն ՝ի քա-
ղաքն իւր ՝ի Սուփարկին. և կինն Ուտայրի
ոչ դադարէր զամենայն աւուրսն պատերազ-
մել ընդ Սալման։ Յայնժամ ձանձրացեալ

ի Նմանէ Սալման, և առաքեաց ի Սամուստատ առ Մանիակ իշխանն Հոռոմոց, որ անուանեալ կոչէին Գորգ. գրեաց առ նա Սալման և ասէր. «Եթէ առցես ի Հոռոմոց թագաւորէն ինձ իշխանութիւն և գաւառըս, ես տայ զՀռոհայ ի ձեռս քո»։ Որ լուեալ Մանիակայ յոյժ ուրախ լինէր, և խոստացաւ նմա մեծաւ երդմամբ զի ի թագաւորէն Հոռոմոց կատարեսցէ զամենայն զոր ինչ խնդրեաց։ Եւ տայ նմա հայրենիս եւ իշխանութիւնս իւր և որդւոց իւրոց։ Եւ յայնժամ կոչեաց Սալման զՄանիակ և երեսս (ետ) զկլայն Ռոհայոյ ի նա։ Եւ գայ Մանիակ չորս հարիւր արամբք և ի գիշերի գաղտ գայր ի դուռն կլայնն. և ապդ արարին Սալմանայ զգալն Մանիակայ. և Սալման առեալ ի ձեռս իւր զբանալին կլայնն, և ելանէր առ Մանիակ՝ երկիրպագանէր նմա և տայր զկլայն ի Մանիակ, և ինքն ի նոյն գիշերին առեալ զկինն և զորդիսն իւրեանց և տանէր ի Սամուստատ։ Եւ իբրեւ լուան զգալն Մանիակայ ազգն Տաճկաց, բաղում և ահագին պատերազմ յարուցին ի վերայ Մանիակայ, և ժողովեցան ի վերայ Ռոհայոյ անթիւ ժողովս, բախեցին ազգն Տաճկաց և ելան ի քաղաքէն։

Իսկ Աստուածք ամբացան ի մեծ եկեղեցին ի սուրբ Սոֆիա. և զի վասն կանանցն իւրեանց և բազումք ոսկւոյ և արծաթոյ, ոչ համարձակեցան մտանել ի կլայն, զի մի յափշտակեսցին ի նոցանէն. զի յետ սակաւ մի աւուրց հրով այրեցան բազումք ի նոցանէ, և ամենայն ստացուածք իւրեանց. և մնացեալքն փախստական անկան ի կլայն առ Մանիակ և ապրեցան։ Վասն զի պատերազմ մեծ յարուցին ի վերայ Ցաճիկուհեանն եկեղեցւոյն սրբոյն Սոֆիէ. վասն զի ի հիւսիսական կողմանէն մքնայ (մեքենայ) եդին և ուժգին հարկանէին զեկեղեցին, մինչեւ ի հիմանց խաղրեալ եղեւ. և ապա հուր ձգէին ի ներս, այրեցին զաղամն և անթիւ ստացուածք և մթերք ամենայն բազմութեան քաղաքին այրեալ լինէր։ Իւ զինի այսորիկ դղրդեալ և ամենայն ուռնն Ցաճկայ գային ի վերայ Մանիակայ. և Մանիակ չարս հարիւր արամբք կայր ի հանդէս մեծ նահատակութեան ի կլայն Լուսհայոյ. եւ ամենայն մեծամեծ ամիրայքն յիւրաքանչիւր գաւառաց հասանէին ի քաղաքն Լուսհայ, Եգիպտոս և ամենայն աշխարհն Խաբեայուոց։ Իւ ահա գայր Շ.ըպլն ի խառնայ, այն որ զևոցն էառ ի ծառայէն Մանիակայ

Ի ՅԵՐուզ առնէն որ Թղթաւոր պատճառանօք յանկասկածս գնաց. եւ իբրեւ մօտեցաւ, հարաւ Ի վերայ ամիրային և ճրկռումն հարկանէր զուսումն, և ինքն որպէս զարծուի Ի քաղաքէն խանդակն հասեալ անկաւ. իսկ ձին Ի սաստիկ խոցուածոյն սաստակեալ լինէր։ Գայր և Սալէհ ամիրայն Ի Հլպայ, Մեմանն (Մահմուտ) Ի Դըմբշկայ (Դամասկոս), Մահմէտ Ի Հըմսայ, Ազիզն Ի Մոսրայ, Ալի Ի Մընպիճայ, Ալպալ (Ալպասլան) Ի Պաղտատայ, Խուրեշ Ի Մաւսլայ, Նարտոզ Ի Մուփարկնայ, Ալի Ի Մէմթայ, Պուշարայ Ի Ճէզերայու, Ասմատ Ի Խլաթայ, Օ՝ալրա Ի Բաղեշու, Հուսէնն՝ Ի Հերայ, Կուտանն՝ Ի Սըղըմատայ (Սալմաստ), Ահի Ի Ըրզունէն (70), Ահլար Ի Տիզբոնէ (71), Ահլու Ի Բասարայու, Վրէտանն Ի Կերկեսերայն, Շահվար Ի Նսեպուն (Մծբին). և այլ եւս քառասուն ամիրայք որ ժողովեցան Ի վերայ կլային Ուռհայայ. և զամենայն ժամանակն ամառնային նեղէին զկլայն մեծաւ պատերազմաւ։

Եւ յետ բազում աւուրցս կամեցան Տաճկունքն հրով այրել զամենայն քաղաքն և գնալ. զոր բնակիչք քաղաքին մեծաւ զգաչանօք և կաշառօք Թափեցին յայրելոյ ըզ-

քաղաքն, և ասացին՝ եթէ Հռոմք ի մէջ Տաճկաց ոչ կարեն պահել իւրեանց քաղաք, առ սակաւ մի ժամանակ թողուն և փախչին, եւ գառնայ ամենայն մարդ ի տուն իւր։ Իւ հաճոյ թուեցաւ բանքս այս ի լսելիս ամենայն մեծամեծացն Տաճկաց։ Իւ յետ քաղաքս՝ նեղութեանց և պատերազմաց գնաց ամենայն զօրքն Տաճկաց ի գաւառս իւրեանց. և Անիսակ կայր անդադար ի պատերազմի ի կլայն Ռոհայոյ. և գաւառացիքն ոչ դադարէին զտիւ և զգիշեր պատերազմել ընդ Անիսակ։ Իւ ամենայն արքն ընդ Անիսակսն՝ կային ի մեծ նեղութեան, վասն զի հատաւ կերակուր ի կլայէն՝ անմուտ լեալ ի քաղաքն գտանել (72) իւրեանց կերակուրս։ Իւ լուեալ զայս ամենայն թագաւորն Ամանոս զոր ինչ արար Անիսակ, յոյժ ցնծալով ուրախ լիներ. և լցան բերկրանօք ամենայն ազգ հաւատացելոց Քրիստոսի։ Յայնժամ առաքեաց թագաւորն և տարաւ զՄայսման և զորդիս իւր և արար զնոսա փառաւոր իշխանս, և տայր նոցա գաւառս, և եղեն քրիստոնեայք. և ամ յամէ թագաւորն զօրս առաքէ Ռոհայ, և չինեաց յիւր անուն բերդ, եւ անուանեաց զնա Ամանոսօլիս։ Իսկ գաւառաց Էրա-

պիկքն յայժ ի Նեղութիւն արկանէին զզօրս Հոռոմոց ի Սամուսատայ Ճանապարհին մինչեւ ի Մեռհայ. և ամ յամէ անթիւ կոտորած լինէր քրիստոնէիցն, որ ոչ բաւէ բերան պատմել, զի որպէս քարակոյտս երեւէին ոսկերքք անկելոցն. և Մանեակ կայր ի մեծ վտանգի։ Եւ գինի այսորիկ Թագաւորն Ռամանոս խորհեցաւ շարկով հայ արկանել ի քաղաքն, և գային ի գիշերի վաղամսուն հաղար Հոռոմ կոնդուռածք, անցան ընդ Եփրատս գետն և գային Մեռհայ. իսկ այլ չէն ոչ գայր ի գաւառն Ուռհայոյ, բայց միայն Լատրն։ Յորժամ հասան մինչեւ ի Պարսուր, անկաւ Շիպիոն ի վերայ նոցա, և մինչեւ ի Դեսնաձորն կոտորեաց զվաղամսուն հաղար կոնդուռածն. և այսպիսի նեղութեամբ կայր Ուռհայ, մինչեւ զօրացաւ քաղաքն, և յաղթահարեաց զիշնամին. և արար Թագաւորն ընդ նոսա սէր, և եղեւ խաղաղութիւն ի վերայ Ուռհայոյ, եւ դադարեալ եղեւ հալածանք քրիստոնէից։ Այս ամենայն եղեւ ի Թագաւորութեանն Աշոտոյ Բագրատունւոյ, և ի հայրապետութեանն տէր Պետրոսի Հայոց կաթողիկոսի։ Եւ յաւուրսն Տուխարիկ Սուլտանայ Պարսից տէրութեան առաւ ի Տաճ-

կաց քաղաքն Ուռհայ։ Իսկ յետ այս ամենայն անցիցս և նեղութեանցս և չարչարանացս զոր կրեաց քաջն Մանիակ, փոխեաց զնա Ռամանոսն և տայ զՈւռհայ Աշուքաստպայ վրանպահուն Դաւթի Կիւրապաղատին։

ԽԴ. Իսկ ի փոխել Թուականութեանս Հայոց տասմարի ամն ՂՁԱ (1032—1033), եղեւ սով սատակիչ ընդ ամենայն երկիր, և բազումք ի մարդկանէ մեռանէին յերեսաց սովոյն, և բազումք վաճառէին զկանայս և զորդիս իւրեանց յաղագս կարօտութեանց հացի. ի բարկութենէ նեղութեանցս ընդ իսօսերն ելանէր հոգին ի մարդկանէ։ Յայսպիսի օրինակաւ մաշէցաւ երկիր ի սովոյն։

ԽԵ. Դարձեալ ի Թվականութեանս մերում յամն ՂԶԴ (1035—1036), մեռաւ Ռամանոս Թագաւորն դաւով նենգութեամբ ի Թագուհւոյն իւրմէ։ Քանզի դեղ մահու աբրուցանէր անօրէն Թագաւորին և լուծանէր ի կենաց. և նստեալ լինէր յաթոռ Թագաւորութեան Յունաց Միխայէլն հրամանաւ Թագուհւոյն իւրոյ՝ դստերն Կոստանդիայ։

ԽԶ. Յայսմ ժամանակի մեռանէր աջ

քան Թաւիթ որդի Անեքերիմայ արքային Հայոց, և տայ զիշխանութիւն հայրենեաց իւրոց ի յեղբայր իւր Աշոտ, որ էր լցեալ Աշոտ առաքինութեամբ և արդարութեամբ և սուրբ վարուք ի Քրիստոս Յիսուս, լցեալ հեզութեամբ եւ քաղցրութեամբ, ողորմած ի վերայ տառապելոց, գարմանիչ աղքատաց և յոյժ սիրելի կրօնաւորական դասուն, և շինող եկեղեցւոյ և բազմացուցիչ վանորայց։

ԽԷ. Եղբ ի յամս և ի թվականութեան Հայոց ՆՁԴ (1035—1036), խաղացեալ բազում զօրօք Տաճկաց, և գային ի վերայ Ուռհայոց. և անցան յայնկոյս գետոյն Եփրատայ, սրով և գերութեամբ աւար հարկանէին զամենայն երկիրն. և բազում քրիստոնեայք վարեցան ի գերութիւն յաշխարհն Տաճկաց, կոտորեցին զՄարն եւ զՍեւաւերակքն (75), և զամենայն տաղերակունքն և զՋրագնացան նորա ըստ ամենայնի. և այնքան սաստիկ կոտորած էին, որ հոտեալ լինէր երկիրն յարենէ քրիստոնէիցն։ Յայնժամ ժողովեցան զօրքն Հոռոմոց և գային ի վերայ Տաճկաց. և էր զօրավար եղբայր Միխայլին՝ Թագաւորին Յունաց. և հեծելոց բազմութեամբն հասանէր մինչեւ ի

քաղաքն Մելտենի. և զարհուրեալ եղեւ
և ոչ եղանէր ընդ զօրսն Տաճկաց ի պատե-
րազմ։ Եւ լուեալ զայս զօրսայն Տաճկաց և
դարձան յաշխարհն իւրեանց։ Այսպէս ա-
բարին և զօրքն Հոռոմոց. ոչ իշխեաց մի-
տանել յաշխարհ Տաճկաց, և դարձան խա-
զաղութեամբ յաշխարհն իւրեանց, և ի
դառնալն առաւել խաւար արկանէին քրիս-
տոնէից քան զզօրսն Տաճկաց։

ԽԸ. Յայսմ ոստարիս և ի թվականու-
թեանս Հայոց ՆՁԵ (1036—1037), խաւա-
րեցաւ արեգակն ահաւոր և սոսկալի տես-
լեամբ։ Վասն զի՝ զոր օրինակ եղեւ խաւա-
րեալ ի խաչելութեանն Քրիստոսի, նոյն օ-
րինակ ծածկեաց զլոյսն իւր և խաւար ըզ-
գեցաւ. և լուսաւորք աշխարհիս ի մութն
և սեաւ դարձան, և ամենայն երկինք իր-
րեւ զկամար կապեցաւ խաւարաւն. և ե-
զեւ սեւացեալ արեգակն ի միջօրէի, և ա-
մենայն ատեղքն առ հասարակ երեւէին
որպէս ի մէջ գիշերի։ Եւ ոստոստկացաւ
խաւարն և մութն, և գոչեաց առ հասա-
րակ ամենայն արարածք, և հնչեցին ամե-
նայն լերինք և բլուրք, և դոզաց ոստոստե-
լով լերինք և ամենայն ապառաժք, և երե-
լեալ ծփայր համատարած մեծ ծովն Ովկի-

անոս, և սուրբ առեալ լայր զամենայն որ-
դիս մարդկան։ Լու եղեալ ի տեսանել զայս
ամենայն որդւոց մարդկան, ահաբեկեալ
լինէին յերկիւղէն որպէս մեռեալ։ Յայն-
ժամ լայր որդի առ հայր իւր, և լայր
հայր ի վերայ որդւոց իւրոց. տղայքն զար-
հուրեալ ի յահէն անկանէին ի գիրկս ծը-
նօղացն. մայրքն տղեռեալ սատակիկ այր-
մամբ իբրեւ հրամ լային զաղայս իւրեանց։
Լու այսպէս ահաբեկեալ կայր ամենայն ա-
բարածք, և յերկիւղէն պաշարեալ կային և
ելս իրացն ոչ գտանէին, ընդ սոսկալի նշանն
զարհուրեալ հիանային, և ահաբեկեալ կա-
յին առ հասարակ։ Յայնժամ տէր Պետրոս
հայրապետն Հայոց և Թադաւորն Յովհան-
նէս յուզարկեալ արք փառաւորք առ սուրբ
հայրապետն Հայոց Յոհաննէս զոր կոչէին
Կոզեռն, վասն զի ի նմանէ գիտացին զմեկ-
նութիւն մեծ նշանին, զի էր այր սուրբ
և աբանչելի ճգնութեամբ զարդարեալ, եւ
մեկնիչ հին և նոր Կտակարանացն Աստու-
ծոյ, լցեալ վարդապետական շնորհօք։ Իսկ
որք առաքեցան առ Հայոց վարդապետն,
Գրիգոր Լուսաւորչն որդին Վատակայ, և
հայկազն մեծն Սարգիս, և այլք ոմանք յա-
զատոց տանն Հայոց և այլք ի քահանայիցն,

զի զերկրորդեալն ահաւոր նշանին գիտաց-
ցեն։ Իւ եղեւ իբրեւ գնացին առ վարդ-
ապետն Հայոց, գտանէին զնա՝ զի դար-
ձեալ կայր ի գետինն երեսք ի վայր ի խոր
տրտմութեան, եւ թացեալ լինէր արտա-
սուօք զգետինն. և ի սաստկութենէ լալոյն
և ի գառն հառաչանաց որ ելանէր ի բե-
րանոյ նորա, ոչ էր իշխէր ինչ հարցանել ցը-
նա. վասն զի տեսանէին զնա ի խորին սու-
գըս և յահագին տրտմութեան, և անդա-
դար հեղոյր զարտասուսն և կոծէր զկուրծս
իւր։ Իւ յայնժամ նստան իշխանքն Հայոց
մերձ առ վարդապետին Յովհաննէսի մեծի,
և զվեց ժամ աւուրն ոչինչ համարձակեցան
խօսել և հարցանել վասն ահաւոր նշանին,
և լային առհասարակ ամենայն եկեալքն առ
նա։ Յայնժամ իբրեւ ետես վարդապետն
Հայոց զողբուսն ամենայն եկելոցն, բա-
ցեալ զբերան իւր՝ սկսաւ խօսել հառա-
չանօք և բաղում արտասուօք և սկսաւ լալ
զամենայն ազգս հաւատացելոց. լայր և ըզ-
կարգ քահանայական, և զեղծումն սրբու-
թեան սրբոց խորհրդոցն, լայր և զեկեղեցի
Աստուծոյ և զքակտումն պատուիրանաց որ
ի նմա ծածկեալ կան աստուածեղէնքն։
Իւ սկսաւ այսպէս ասել ցիշխանսն Հայոց.

«Ով փառաւոր սրդիք իմ, լուարուք զաս-
նելս զոյս ի վերաւոր և ի վերադնեալ Յո-
հաննիսէ. զի ահա այսօր լցան հազար ամ
չարչարանաց խաչելութեանն Քրիստոսի, և
արձակմանն անօրէն Ներոնայ, զոր կա-
պեալ էր զնա Փրկիչն ի Յորդանան գետ,
զոր յառաջ նշանէն ցուցաւ մեզ յառաջ
քան չարչարասան ամն զոր ասացաք, և այ-
ժըմ դարձեալ երկրորդեաց, զի նախ երե-
կիներ պատառեցաւ և երկիրս մթեցաւ։ Բ-
ահա յայսմ ամի լուսաւորիչ խաւարեցան
և արարածս, վասն զի յայսմ հետէ ամե-
նայն ազգք հաւատացելոց Քրիստոսի ի խա-
ւարի շրջելոց են. զի այսուհետեւ խաւա-
րին կարգք սուրբ եկեղեցւոյ Քրիստոսի ա-
մենայն ազգաց հաւատացելոց, թուլանան
ի պահոց և յաղօթից, պահասին յոյս հան-
գերձելոցն, երկիւղ դատաստանին Աստու-
ծոյ արհամարհի, բառնայ ճշմարիտ հաւատք
յամենայն ազգաց, տկարանայ ասասուած-
պաշտութիւն, ատեն զպատուիրանն Աս-
տուծոյ, դիմադարձ լինին բանից սուրբ Ա-
ւետարանին Քրիստոսի. ամենայն զք հակա-
ռակ գտանին սրբոց պատուիրանաց Աս-
տուծոյ, արհամարհեն զբանս սուրբ վար-
դապետաց, անդամանեն և զհրամանս կանո-

նաց սրբոց հայրապետացն, և այնու բա-
զումք անկանին ի բարձրութենէ հաւատոց,
և առեն զդրաւնս սուրբ եկեղեցւոյ, և ի ծու-
լութենէ պահոց և աղօթիցն կու բանան յաս-
տուածպաշտութեանցն. բազումք մոռանեն
ընդ լծոյն անիծիլ, վասն զի ոչ հաւանին խը-
բատաւ աստուածեղէն բանիցն սուրբ առաջ-
նորդացն։ Որոյ՝ անիծանին ի ծնողաց իւ-
րեանց առ ի ոչ հնազանդութենէ զաւակաց,
ծնողքն չարչարին ի ծնողաց իւրեանց. ցա-
մաքեսցի գուլթ սիրոյ բարեկամաց ի հարց
և ի զաւակաց։ Լու ահա յայսմ հեռէ բա-
զում հերձուածք մոռանեն յեկեղեցի Աս-
տուծոյ ի ծուլութենէ հայրապետաց. վա-
սն զի թուլամտութիւն և սիրաբանան և հա-
ւատոյ քննութիւն ոչ առնեն, և կան յի-
մարեալք։ Յաղագս արծաթոյն թողուն ի
բաց զհաւատն, և պակասին օրհնեալգու-
թիւնք ի տանէն Աստուծոյ. երկիւղ և ահ
սոսկալի գտառատանին Աստուծոյ յաւուրն
ահաւորի որ լինելոց է՝ փարատեալ խափա-
նին յամենայն մտաց. մոռանան զհատու-
ցումն արդարոց և մեղաւորացն, վասն զի
մեղսասէրք և ցանկացողք լինելոց են շար
ճանապարհին. փոփոխանօք երթան ի մե-
ղաց ժողովարանն, զի ահա ի թագաւորաց

և յիշխանաց և յառաջնորդաց ապականեալ
ոց է երկիր։ Առաջնորդք և իշխանք լինե-
լոց են կաշառասէրք և սուտաթօք և սուտ-
երդմունք. և ի ձեռս կաշառոցն Թիւրեն
զդատաստանս իրաւանց ազգատին, և յա-
ղագս այսորիկ առաւել բարկանայ Աստ-
ուած ի վերայ նոցա, զի զառաջնորդու-
թիւնն և զիշխանութիւնն ընդ երեսաց
վարեն և ոչ ըստ Աստուծոյ. և սիրեալ ի-
խանաբար ի վերայ վիճակին, և ոչ ահիւն
Աստուծոյ հոգալ և ուսուցանել, որպէս
պատուիրեաց սուրբ առաքեալն Պօղոս։
Իշխանք և դատաւորք պոռնկասէրք առա-
ւել քան աստուածասէրք, և ատելագոյք լի-
նին սուրբ ամուսնութեան, և փակին ընդ
պոռնկութեամբ ախտին, և սիրեն զկո-
ւսաս նմանեաց իւրեանց. մեծարեն ըզ-
մատնիչն և զգողս, յափշտակեն անիրաւա-
բար զաշխատողայ ինչսն, անողորմ ի վերայ
ուղիղ դատաստանաց։ Արդեսակք իմ, ա-
հա յայսմ հետէ ի հակառակութենէ ա-
ռաջնորդաց փակելոց են դրունք սուրբ
եկեղեցւոյ. և վերանան սրբութեան կարգն
յամենայն ազգէ. և յաղագս արծաթասիրու-
թեան տան ձեռնադրութիւն բազմամա-
արժանեաց, և զամենայն պղծեալք ածեն ի

կարգ քահանայութեան. և յայնժամ պա-
տարագի Քրիստոս ի ձեռն անարժան քա-
հանայիցն, և բաղումք անարժանութեամբ
հաղորդին ի նմանէ, ոչ եթէ ի փրկու-
թիւն այլ ի դատապարտութիւն և ի կո-
րուստ հոգւոյն։ Յե ուրեք (74) կայ ճշմարիտ
պատարագող Քրիստոսի սուրբք Խորհրդոյն
յաղագս ազգս, որ ի ձեռաց նոցա ողորմի
Աստուած աշխարհի։ Որդեակք, զուրբան
և զառաքինիսն վիրաւորեն, և զանարատն
դարձուցանեն ի քահանայութենէ առ ի
չունեցոյ արժանի, ոչ տան զձեռնադրու-
թիւնն։ Յե որպէս ասացաք՝ յառաջ քան
զչորեքտասան ամն լինելոյ միւսումն նշանին,
եթէ պահասին բաղումք ի հաւատոյ ատ-
ուածպաշտութեանց. վասն զի բաղումք ի
քահանայից և ի կրօնաւորաց թուլամորթին
ի կրօնից իւրեանց. լինելոց են ցանկասէրք,
ախտից փափագողք, որոնք ալով որոնեն զեր-
գըս դիւական. կրօնաւորք փախչին յանա-
պատէն, և առեն զսուրբ երսան ճգնաւո-
րացն, և զվարս առաջին կրօնաւորացն ա-
տեալ անարգեն. լինիցին խանգարիչք կար-
գաց և կրօնից, փախչին ի ձայնէ տաղտուկ-
գութեանցն Աստուծոյ։ Այս ամենայն լինե-
լոց է, որդեակք իմ. յաղագս այս յոլիա-

նան առաջնորդք աշխարհի արծաթասիրու-
թեամբ, եւ զամենայն անկեալս և զորս-
ղեալս ի հնորհաց Որդւոյն Աստուծոյ յա-
ռաջ կոչեն, եւ ածեն զնոսա ի կարգ
քահանայական, եւ զամենայն մերժեալ-
սըն գլուխս եւ առաջնորդ կացուցանեն ի
վերայ ժողովրդեանն Աստուծոյ, և ոչ գի-
տեն զինչ գործեն, վասն զի կուրանան ի
սատակութենէ արծաթասիրութեանն։ Եւ ա-
ռաւել ունիմ զայս ասել. զի տհա յայտմեն-
տէ մեծաւ խոցմամբ վիրաւորեալց է Քրիս-
տոս յանարժան քահանայից՝ քան զնաչին
և զարշալրին ի Հրէից, զի պակասն ի նոս
ցանէ վճարեալց է, և ըստ է՝ եթէ «Ինչ
կեր, վասն որոյ մտեր յայս հարսանիս»։
Յայնժամ կապեալ ոտիւք և կապեալ ձե-
ռօք հանեն զնա ի խաւարն արտաքին, եւ
զոր ժողովեացն՝ կուտի կորստեամբ ի վերայ
նորա։ Որդեակք իմ, տհա այս ամենայն լի-
նելոց է ի յետին ժամանակն. զի արձակե-
ցաւ սատանայ ի հազար ամէ կապանացն
զոր կապեաց Քրիստոս խաչիւն իւրով. և ե-
րեւեսցին ճշմարիտ հաւատացեալքն Քրիս-
տոսի՝ կալով ընդդէմ նորա ի պատերազմն,
զի ունի ի պատերազմել ընդ սուրբսն որք
պատուիրանաւն Աստուծոյ պահպանեալ կան

ի կարգս Ճշմարիտ խոստովանութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որք կան յազգս ազգս։ Այսուհետեւ լինին յարձակմունք այլ ազգեաց . . . . որդւոցն Քամայ . . . . զօրքքն Թուրքաց ի վերայ ազգաց քրիստոնէից, և ի սուր սուսերի մաշեսցեն զամենայն երկիր, սովով և գերութեամբ անցանէ ամենայն ազգ հաւատացելոց Քրիստոսի. յանմարդ գառնան բազում գաւառք, բառնալոց է զօրութիւնք սրբոց յերկրէ, քակտին բազում եկեղեցիք ի հիմանց, խափանեսցին խորհուրդ խաչին Քրիստոսի. ի բազմանալ անօրէնութեան խափանին ուսմանութիւնք սրբոցն։ Գրգռին սրդիք ընդ հարս, ատեցողք լինին հարք առ որդիս. յարիցեն եղբարք ի վերայ միմեանց, սպանութեամբ և արեան հեղութեամբ ջնջեսցեն կորուսանել զկիրեարս, ուրանան զգութ և զսէր եղբայրսիրութեանն, ցամաքեսցի արիւն եղբայրութեան նոցա, և այսպիսի գործովք հաւատարակից լինին անօրինացն. և յազգաց անօրինացն ծիր երկիր, և ցօղ արեան զգենուն բոյսք անդաստանաց, և զամն վախճուն սրբով և գերութեամբ աւերեալց է երկիր։ Եւ յայնժամ եղջեն ազգն արիականք որ են Ֆրանկք, և բազմութեամբ զօրօք առցեն

զսուրբ քաղաքն Երուսաղէմ, և ազատի ի ծառայութենէ սուրբ Գերեզման Աստուածընկալ։ Եւ զկնի այսորիկ զամս յիսուն տագնապի երկիր սրով և գերութեամբ ի զբռայն Պարսից, և եւթնատասիկ առաւել քան զսրս յառաջն կրեցին հաւատացեալք, և ահաբեկին ամենայն ազգք հաւատացելոց Քրիստոսի. և ի բազմութենէ նեղութեանցն յուսահատին զօրք Հռոմայեցւոց. բազում անցումն և կոտրած կրեն յազգէն Պարսից, և ընտիր ընտիրս ի քաջ զօրականացն խողխողեն սրով և գերութեամբ, մինչեւ ի փրկութենէ յուսահատին զօրքն Հռոմայեցւոց։ Եւ զկնի յիսուն ամացն սկիզբն առնուն ի զօրանալ առ սակաւ սակաւ, և ուր ուրեք լինի մնացեալ յառաջին գնդէն. և ամ յամէ յառաջ գան և հաստատին իբրեւ տեղապահ գոլով աշխարհաց և գաւառաց։ Եւ յայնժամ որպէս ի քնոյ զարթուցեալ լինի թագաւորն Հռոմոց, և հասանէ որպէս զարծուի ի վերայ զօրացն Պարսից ահագին բազմութեամբ որպէս զաւազ առեալ ծովու. ելցէ որպէս զհուր բորբոքեալ, և յահէ նորա դողան ամենայն արարածք. և Պարսիկք և ամենայն զօրք այլազգեացն ապրասցեն փախուստ իւրեանց յայնկոյս մեծ

գետոյն Ղ.ահուանից։ Լոյս յայնժամ թագաւորն Հռոմայեցւոց տիրելով տիրէ ամենայն աշխարհի զամն բազում. և նորոգումն առնու ամենայն երկիր, և շինութեան հիմն արկանի, և այնպէս նորանոյ սրպէս զկնի ջրհեղեղն, և բազմանան ծնունդք մարդկան և անասնոց, բղխեսցեն աղբերք զգնացս ջրոց։ Պոզաբերին անդաստանք առաւել քան զառաւել. և այնուհետեւ անկանի սոմն 'ի յաշխարհն Պարսից զբազում ամս, մինչեւ յարձակեալ զմիմեանս ուսիցեն. և յահէ զօրութեան թագաւորին Հռոմայեցւոց բազում իշխանք Պարսից ելցեն 'ի քաղաքաց և 'ի գաւառաց իւրեանց, և առանց պատերազմի զվախուստ արասցեն յայնկոյս Ղ.ահուն գետոյ, և զամենայն ժողովս մթերից իւրեանց զամոց բազմաց՝ զոսկւոյ և արծաթոյ, և ամենայն բազմութիւն գանձուցն սրպէս զհող կամ զքարակոյտս այնչափ համարէն առցեն յաշխարհէն Պարսից, և բարձեալ տարցեն յաշխարհն Հռոմայեցւոց. և զամենայն մանկունս և զաղջկունս և զկանայս տարցեն 'ի գերութիւն յաշխարհն Հռոմայեցւոց. աւերակս և անմարդս լինելոց է տունն Պարսից 'ի զօրացն Հռոմայեցւոց, և հաստատի ամենայն իշ-

խանութիւն երկրի 'ի ներքոյ ձեռին Թագաւորին Հռոմայեցւոց։ Այս այսպէս աստաց սուրբ վարդապետն Յովհաննէս, և արձակեալ յուղարկեաց զվշխանս Հայոց խաղաղութիւն, և գնացին յաշխարհն իւրեանց։

Խթ. Յայսմ ժամանակի զօրաժողով արար իշխանն Հայոց Գանձի, և գնացեալ էառ զքաղաքն Երկրի յարեւելս 'ի Պարսից, և կոտորեաց սառհասարակ զամենայն քաղաքն և 'ի սուր սուսերի մաշեաց զօրն Տաճկաց, և բազում աւուրս պատերազմեցաւ 'ի վերայ կըլային, և 'ի մեծ վտանգ արկ զնոսա, և բազումք սատակեալ լինէին 'ի ջրոյ։ Զոր յայսպիսի պատերազմ անհոգացեալ կային զօրքն Հայոց և էին 'ի մեծ գինարբուութեան. և խորիկն որ էր ամիրայ քաղաքին Երկրոյ, և սորա տեսեալ զանպատրաստութիւն զօրացն Հայոց, գրեաց 'ի քաղաքակիցսն իւր գալ 'ի յօգնութիւն իւր։ Զոր արարին ժողով այլազգիքն, և եկեալ գտին զնոսա անպատրաստ. եւ ընդ առաւօտն յարձակեցան 'ի վերայ քրիստոնէիցն զօրացն, և արարին սատակիչ կոտորածս զնոսա. և սպանաւ յաւուրն յայնմիկ մեծ իշխանն Հայոց Գանձի, եւ մնաց Տաճատ 'ի տան Հայրենեաց իւրոց, որդի նորա և Գանձի (75), և ամենայն զօրքն

իւրեանց անկան ի քաղաքին Խերկրի։

Իսկ ի փոխել Թուականութեանս Հայոց ի յամն ՆՁԶ (1037—1038)։ յարուցեալ տէր Պետրոս կաթուղիկոսն Հայոց յաթոռոյ իւրմէ ծակկաքար, և գնաց ի Վասպուրական՝ խուսափութեան աղագաւ, զի Թագաւորն և ամենայն նախարարք և աղատադուեղ զօրք Հայոց ոչ լինէին ուղղիղ ատատուածային պատուիրանացն։ Յե եղեւ տէր Պետրոս ի Վասպուրական զամս չորս, և կացեալ էր ի Ձորոյ վանքն, զոր շինեալ էր սուրբ Հայրապետն Գրիգոր։ և անչափելի տրտմութիւն եղեւ աշխարհին Հայոց ի Թողուլն նորա զաթոռ Հայրապետութեանն։ Յե յայնժամ Թագաւորն Յովհաննէս և ամենայն նախարարք Հայոց գրեցին նենգութեամբ Թուղթ առ տէր Պետրոս՝ զի նեղ ուղղիղ ամենայն հրամանաց նորա, և ակամէաբուբ լինել ամենայն լուսաւոր վարդապետութեան նորա։ գրեցին զայս հանդերձ մեծամեծ երդմամբ, և զիշխանս Հայոոմոց որք եկեալ էին կոստանդնուպաւ՝ կացուցանէին զնոսա միջնորդք։ Յե լուեալ տէր Պետրոս ստութեան երդմանն նոցա, դառնայր յաթոռ իւր։ Յե եղեւ յորժամ մնատանէր ի քաղաքն Անի, հրամանաւ Թա-

գաւառին Յովհաննէսի արգելական արարին զտէր Պետրոս զտարի մի և զամիսս հինգ. և առաքեաց Թագաւորն ի վանքն ի Սանա հին և ետ քերել զմեծն Դէոսկորոս զհայրն վանիցն։ Իւ եկեալ նոա և կացեալ հակառակ տէր Պետրոսի. և նստուցին զնա կաթողիկոս յաթոռ հայրապետութեանն Հայոց ըստ տարի մի և զամիսս երկու, և ոչ ըստ Աստուծոյ հրամանացն. և ահա կարի յոյժ խաբեալ եղեալ մեծ հռետորն Դէոսկորոս, և կրոցս զանչափ պատիւն զոր ունէր, եւ ոչ ոք ընդունէր զձեռնադրութիւն նորա որ պէս օրէն է ասելոյ Աթոռոյն. և ոչ քարոզեցաւ անուն նորա ի մէջ եկեղեցւոյ ընդ այլ հայրապետսն. փոսն զի անարժան հաստատեցան զնա այնպէս պատուոյ. և եղեւ աւուր մեծ ի վերայ տանն Հայաստանեայց. և ի ձեռնադրութեանն նորա ոչ (76) ժողովեցան եպիսկոպոսք և քահանայք և հայրապետք, այլ նա յանդգնեալ ըստ սրտին խորհրդոյն և զբազմամն անարժանիցն ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն. այլ և որք փոսն յայտնի յանցանաց իւրեանց մերժեալ էին յաթոռոյ յառաջին հայրապետացն, զամենեսեան զնոսա յառաջ կոչեաց։ Իսկ եպիսկոպոսքն և վարդապետքն Հայոց աշ

խարհին նղովիւք փակեցին զԹագաւորն և զամենայն նախարարքն Հայոց վասն հակառակութեանն որ եղեւ ի մէջ եկեղեցւոյն։ Եւ յայնժամ Թագաւորն և իշխանքն Հայոց սարսեալք ի յահէն անիծիցն, կամեցան դարձուցանել զսէր Պետրոս յաթոռ իւր. և նա զաւուրս բազումս ոչ առնոյր յանձն, և ամենեքեան խնդրէին Թողութիւն ի նը. մանէ, և նա պնդեալ կայր. յայնժամ գԸ. ղեաց Թագաւորն Թուղթ և ամենայն իշխանքն Հայոց ի Աղուանք, և կոչեցին ըզ. զկաթողիկոսն Աղուանից աշխարհին զսէր Յուսէփ, զի գայցէ ի բարեխօսութիւն և ի հաստատութիւն տէր Պետրոսի։ Օր ըստեալ տէր Յուսէփ, առնու զեպիսկոպոսունսն Աղուանից աշխարհին եւ գայ ի հաստատութիւն տէր Պետրոսի ի քաղաքն Անի։

Ծ. Եւ եղեւ ի Թուականութեանն Հայոց ՆԶԷ (1038–1039) ամին լինէր ժողովն մեծ ի քաղաքն Անի, եպիսկոպոսաց, հայրապետաց, կրօնաւորաց, վարդապետաց, ազատաց և իշխանաց իբրեւ ՃԾԳ հազարաց. որ էր գլուխ ժողովոյն ծերունին Յուսէփ կաթողիկոսն Աղուանից, և սուրբ մեծ հաստատեցին Դէսակոքոսի, և յայժ

պարտաւորեցին զնա, և մերժեցին ի պա-
տուոյ և ընկեցին յամբոցս հայրապետու-
թեանն, և զամենայն ձեռնադրեալս ի նմանէ
ընդ բանադրութեամբ փակեցին, և զի մի
ոք զնոսա ի կարգ քահանայութեան կոչես-
ցէ, և հաստատեցին զտէր Պետրոսն յա-
թոռ հայրապետութեան իւրոյ, և եղեւ
խաղաղութիւն ապրիլ եկեղեցւոյն Հայաս-
տան աշխարհին. և Թէոսիկոսս գնաց ի Սա-
նահին ի վանքն իւր, և կարի յոյժ ամաչել-
լով ընդ գործս իւր։

ԺԱ. Պարձեալ ի թվականութեանս Հա-
յոց յամի ՆՁԹ (1040–1041), եկաներ
ատաղ մի գիսաւոր՝ քահաւոր կերպարանօք,
և երեւեալ նորա յարեւմուտս կոյս յերե-
կոյրէն և յետա՝ ազալով գնայր. և եհար
զքաղմատաղն եւ զլուսինն, և ինքն անե-
րեւոյթ եղեւ և յարեւմուտս դարձաւ։

ԺԲ. Ի նմին ամին յարեան Պուլղարք ի
վերայ Հոռոմոց. և զօրաժողով արար թա-
գաւորն Հոռոմոց Միխայէլն զամենայն աշ-
խարհն Յունաց, և անհամար բազմութեամբ
գնաց ի վերայ Պուլղարաց. և մեծատաստ բար-
կութեամբ արար աւար և գերութիւն զբա-
զում գաւառս, և արով հասանէր մինչեւ ի
գերութիւն Պուլղարաց. և զօրք Պուլղարաց

ժողով տարին ընդդէմ Թագաւորին Յունաց։ Իւ եղեւ յաւուրն յայնմիկ պատերազմ սաստիկ, և լինէր օգ մեծ ի վերայ երկոցունց կողմանցն, և եղեւ սաստիկ կոտորած յաւուրն յայնմիկ. և յաղթեցին զօրքն Պուլղարաց զօրացն Հոռոմոց, և փախստական արարին զնոսա առաջի իւրեանց, և սրով յարձակեցան զհետ նոցա, և յաւուր յայնմիկ արեամբ ծածկեցաւ ամենայն երեսք դաշտացն. և Թագաւորն Միխայէլ փախստական անկանէր ի Կոստանդինուպօլիս. և զօրացան Պուլղարք ի վերայ Յունաց, և առին զամենայն աշխարհն իւրեանց, և դերձան ի ծառայութենէ Հոռոմոց, և եղեւ խաղաղութիւն մեծ ի վերայ ազգին Պուլղարաց։

ԺԳ. Յայսմ ամի մեռաւ Թագաւորն Հայոց Աշոտ Բագրատունի որդի Վասակայ և եղբայր Յովհաննէսի, և մնայ իւր տղայ որդի մի Վասակ անուն ամայ երկոտասանից. և բերաւ Աշոտ ի քաղաքն Անի. եւ Թաղեցին զնա ի տապանատունն առաջին Թագաւորացն Հայոց. և վասն զի ի կենդանութեանն իւրում Աշոտ ոչ եմուտ ի քաղաքն Անի մինչեւ ի յօր մահուան իւրոյ, զի յայժ երկնչէր Յովհաննէս ի Աշոտայ, զի էր այր քաջ և հզօր։ Իւ եղեւ ըստ

կնի մահուանն Աշոտոյ թագաւորութեան զոբքն Հայոց, և առեցին զարքունեստս պատերազմի, մնան ընդ լծովն ի ծառայութիւն ազգին Հոռոմոց. նաստան ի գինարբուս, սիրեցին զբարբառս և զերգս գուսանաց. հեռացան ի միաբանութենէ միմեանց, և յոգնութիւն իրերաց ոչ հասանէին, և երկիր՝ որ արով անցանէր, նոքա լաւականութիւն առնէին և զմիմեանց զկատարածն լային, և զմիմեանս մատնելով (77) ի սուր տանն Յունաց. և եղեն աւերիչք ազգականաց իւրեանց, և ի կոլմն հակառակաց իւրեանց դարձան:

ԺԴ. Յայսմ ժամանակիս զբարժոզով աբար մեծ ամիրայն Պարսից Աշուսուար իրրեւ հարիւր յիսուն հազար՝ զազգն յանօրինաց, և մեծաւ սրտմտութեամբ յարձակեալ գայր ի վերայ քրիստոնէից, և դառնաշունչ բարկութեամբ մնաւ յաշխարհն Աղուանից ի Դաւթի Ներսիսեանի գաւառն, և բազում վնաս էած հաւատացելոց. և Դաւիթ երկուցեալ ի բազմութենէ զօրացն այլազգեաց՝ ոչ ելանէր ի պատերազմ: Իսկ անօրէն Աշուսուար էառ զբազում գաւառս և թիմնաբերդս ջրոք հարիւր. և տարի մի կացեալ՝ արար յիւր հնազանդութիւն զմեծ մասն աշխարհին. և կամեցաւ

գալ ի վերայ Դաւթի. յայնժամ անճարա-
կեալ Դաւիթ և յուզարկեր առ Թագաւո-
բին Յովհաննէս որ Նատէր Անի, և ասէր՝
թէ «Լուր Աստուար զամենայն գաւառս
Հայոց աշխարհիս և գայ ի վերայ իմ, եւ
եթէ ինչ ոչ օգնես ինձ, և ես երթամ իւր
ի հնազանդութիւն, և լինիմ իւր առաջ-
նորդ, և խաւար ածեմ գաւառիդ Շիրա-
կայ»։ Եւ լուեալ զայս Յովհաննէս, յու-
զարկեր Դաւթի արս երեք հազար. նոյնպէս
եւ յուզարկեալ ի Կապանին Թագաւորն,
զի և նա տայր նմա արս երիս հազար։ Եւ
այսպիսի օրինակաւ սպառնացեալ Աշխատաց
Թագաւորին, և նա յուզարկեր յօգնու-
թիւն Դաւթին արս չորս հազար. և ինքն
Դաւիթ ժողովեալ զիւր զօրսն իբրեւ տասն
հազար, և յուզարկեաց առ կաթուղիկոսն
Աղուանից և ասէր, եթէ «Այս ազգս ա-
նօրինաց վասն քրիստոսական հաւատոցն
գան ի վերայ մեր, և կամին զօրէնս խաչա-
պաշտացն խափանել եւ զհաւատս հաւա-
տացեալ Քրիստոսի ջնջել. և ահա արժան է
և իրաւունս ամենայն հաւատացելոց ընդ-
դէմ սրոյ երթալ և մեռանել ի վերայ քրիս-
տոսական հաւատոցն։ Եւ արդ ժողովեա
զամենայն եպիսկոպոսունդ Հայոց աշխար-

հիդ որ յԱղուանան են, և ի բանակ այսր հասին. զի ընդ մեզ մեռանիջիք»։ Օր և արար իսկ. երիերիւր եպիսկոպոսաք գնայր տէր Յովսէփ ի բանակն քրիստոնէից։ Դէր ըեաց և ի Վանդայսն առ Հայրն գալ միաբան ամենայն կրօնաւորաքն ի զօրսն հաւատացեալսն. և ժողովեաց զամենայն քահանայս Աղուանից աշխարհին և զարդարաւորեան, և քարոզ կարդաց ընդ ամենայն գաւառսն և ասէր. «Լիթէ այր իցէ և եղիթէ կին, որ ցանկացող է մարտիրոսական մահուն, ահա հասեալ եղեւ յայսմ ամի ի վերայ մերում. պիտոյ է Քրիստոս վաղվաղակի առ մեզ հացէ (78)»։ Լու ըաեալ զայս հայր արդուսիքն եւ մայր դատերաքն ի բանակն հաւատացելոց հասանէին. և ըստ դաշնն առ հասարակ անթիւ բազմութեամբ իբրև զհօտս հանդերձ գառամբք։ Լու ըաեալ զայս Աղուսուար ծիծաղեցաւ ի վերայ եղելոցս այս, և խաղայր գայր ի վերայ զօրացն քրիստոնէից։ Լու յայնժամ հրամայեաց Դաւիթ քարոզ կարդալ եպիսկոպոսացն և կրօնաւորացն և քահանայիցն, զի ամենայն ոք իւր զէնքն պատերազմի խաչ ասցէ ի ձեռս իւր, և միայն զաւետարանն Քրիստոսի, եւ այնիւ ընդդէմ թշնամեաց

սրոյն ընթացուք։ Իւ յայնժամ ամենայն բանակն խաչ և աւետարան դարձաւ. և ահա մերձեցան զօրք անօրինացն և բաղմութիւն քահանայիցն կային ընդդէմ նոցա։ Իսկ Դաւիթ քսան հազարով հասանէր ՝ի վերայ այլազգեացն արանց քաջաց. իբրեւ ճակատ զճակատ հարան, ձայն բարձին քահանայական դասքն միաբան առ Աստուած լալով, որ և հնչեաց երկիրն ՝ի ձայնէն, և առէին. «Էլի տէր օգնեա մեզ և փրկեա զմեզ վասն անուանդ քում սրբոյ»։ Իսկ զօրքն հաւատացեալքն իբրեւ զնոսա մխեցան ՝ի մէջ բանակին անօրինացն, որ և ծածկեցան խակ։ Յայնժամ քահանայական դասքն շարժեցան միաբան քրիստոսական սուրբ նշանիւքն, և ՝ի վերայ թշնամեացն գիմեալ յարձակեցան, և հուր սատակագործ ցոլացեալ ՝ի նոցանէ, և եհար զզօրսն այլազգեացն և սատակեալ ՝ի փախուստս դարձան, և զօրքն Հայոց՝ սրով զհետս նոցա. և զաւուրս հինգ անդադրիւ կոտորածով վարեցին զզօրս այլազգեացն, որ և արեամբք ծածկեցան դաշտք և լերինք. առին անթիւ գանձս ոսկւոյ և արծաթոյ և տարս բազուսն, և մնացեալ զօրքն Պարսից մնալոցուրդ մերկ և բոկ անկան յաշխարհն իւրեանց։ Իւ յաւուրս ե-

բիա սիրանայր Դաւիթ ամենայն դաւառաց
ցին զոր էառ այլազգին, և մեծաւ պարգևաւ
գեւօք յուզակեաց զամենայն զօրսն որք ի
կեալ էին ի յօգնութիւն իւր. և բաշխէր
բազում ինչս յաւարէն եպիսկոպոսացն եւ
քահանայիցն և ամենայն եկեղեցին առ նա,
և արձակեաց զնոսա և եղև խաղաղութիւն։

Եւ յայսմ ամի ոմն անօրէն և չար իշխան
ի յազատացն Սենեքերիմայ, գնաց առ Թա-
գաւորն Յուդայ եւ չարաչար մատնեաց
զՄոսամ և զՄուսահլ զՍենեքերիմայ զորդիս
սին և ասէր, եթէ կամին ապստամբել ի
վերայ քո, և յարուցանել քեզ վիշտս և հա-
լածանս։ Եւ լուեալ զայս Թագաւորն Մի-
հայլն, հաւատաց ստոփսօս բանիցն, և ա-
ռաքեաց ի Սեբաստիա զակողութիւն (79) իւր
հնգետասան հազարաւք՝ բերել զնոսա առ
իւր, զի մի փախփախիցեն (80). և հասանէր
ակողութիւն զօրաքն ի Սեբաստիա քաղաքն։
Եւ լուեալ զայս որդւոցն Սենեքերիմայ,
հիացեալ զարհուրեցան. և տեսեալ ակո-
ղութիւն զիմաստութիւնն (նոցա սրուամ) ոչ էր
նման նոցա, բայց նոքա երկնչէին գնալ։

ԾԵ. Յայնժամ Հապուհ իշխանն ասէր
ցՄոսամ և ցՄուսահլ. «Կամիք զի զզօրսդ
Հոռոմոց ցիր և ցան ածեմ ընդ երեսս դաշ-

տայ »։ Եւ արար զլեռն Եօթն կրկնակի, և զարկանէր թրով ի վերայ և ի վայր հեզոյր մանր զերկսեթն։ Եւ ասեն որդիք Թագաւորացն Հայոց. « Մի եղիցի այդպէս, այլ երթամք զհետ կոչնականացն »։ Եւ տըեւեալ տուրս բազում զօրագլխին, և գէր նացին զհետ նորա ի Կոստանդինուպօլիս. և ի մտանել ի քաղաքն դիմեցին լալով ի գերեզման Թագաւորին Վասքն, և զերդման Թուղթն իւրեանց ի վերայ գերեզմանին ընկենային և ասէին՝ եթէ « Դու բերեր զմեզ յաշխարհս Հոռոմոց, և ահա մեռաւ սպառնան մեզ։ Դատ արա մեզ յոստիէն մերմէ, ով հայր մեր »։ Եւ լուեալ զայսպիսի իմաստութիւնս Թագաւորն Միխայլ՝ հիանայր յոյժ, և հրամայեաց զմատնիչն կորուսանել։

ԺԶ. Ի Հայոց տօմարիս և ի Թվականութեանս ամի ՆԴ (1041—1042), մեռաւ Թագաւորն Հայոց Յովհաննէս եղբայրն Աշոտոյ, որդի Դագկայ՝ Իագրատունի ազգաւ, և Թաղեցին զնա ի քաղաքն Անի ի գերեզմանս առաջին Թագաւորացն Հայոց։ Եւ եղեւ իբրեւ լուան զայս ազգն Հոռոմոց, Ժողով սարարեալ Թագաւորն Հոռոմոց Միխայլն, և հասանէր յաշխարհն Հայոց,

և աւաք հարկանէր զտուընն Հայոց սրով և գերութեամբ։ Վասն զի Յովհաննէս ի կենդանութեան իւրում գիր էր տուեալ Հռոմոց՝ եթէ զկնի մահուան իմոյ Ընի Հռոմոց լինի, և այնու առնայր տուրս և իշխանութիւնս ի Հռոմոց զամս հնգետասան։ Եւ զկնի մահուանն Յովհաննիսի այր սմն յիշխանաց տանն Հայոց, որ էր այր նենգաւոր, անուն Աղասա Սարգիս հայկազն (81), ազգ առնէր Հռոմոց և ի տուր տայր զաշխարհն Հայոց, և զբանձատունն առաջին Թագաւորացն Հայոց յափշտակեաց և տարաւ Ալիքազք, բերդամուտ եղեալ. և աւանս բազում էառ ընդ ձեռամբ իւրով, եւ կամեցաւ Թագաւորել ի վերայ Հայոց, զոր ոչ ընդունեցան զնա ազգքն Բագրատունեաց, վասն զի հայկազն էր։

Դ. Յայսմ ամի բազում անցաւմն եղեւ տանս Հայոց ի ձեռն Դաւթի Ընհոդնի՝ ազգատոհմին Յովհաննիսի Հայոց արքային։ Սա յարուցեալ ի վերայ Թագաւորութեանն Հայոց և մատնեաց ի տուր և ի գերութիւն զգաւառս բազումս, և գայր անցանէր զօրօք յաշխարհն Հայոց։ Թողեալ զաշխարհն Աղուանից, և գայր ի վերայ աշխարհին Հայոց. բազմամբ նեղութեամբ և

անթիւք կրակով այրեցան ի զօրացն Նորա. և դարձաւ ի յաշխարհն Աղուանից ի տուն իւր։

ԺԸ. Յայմ ամի յարեան Հոռոմք կրկնակի ի վերայ աշխարհին Հայոց՝ և առ ի չքնաղ գոյն գլուխ զօրացն Հայոց, բազում տեղիք հաւանեցան Հոռոմոց, և վասն զի էր կատարած մեծ ի վերայ աշխարհին Հայոց։ Եւ յայնժամ ժողովեցան զօրք Հոռոմոց ի վերայ Թագաւորաբնակ քաղաքին Անւոյ հարիւր հազարաց, և բանակ հարկանէին ի գուռն քաղաքին Անւոյ։ Յայնժամ ժողովեցան մնացեալք զօրքն Հայոց առ մեծ սպարապետն Վահրամ Պալհաւունին, և խնդրէին եղանել ի պատերազմ ի վերայ զօրացն Հոռոմոց, վասն զի զօրքն Հոռոմոց սաստիկ հայհոյութեամբ և բազում նախատանօք գային ի վերայ պատերազմել։ Յայնժամ մեծաւ սրտմտութեամբ լցեալ լինէին զօրք Հայոց, և բարկութեամբ որպէս ըզգազանս զայրացեալք, և առ հասարակ եղեալ ի պատերազմ արք եղեսուն հազար հեծեւակք եւ ձիաւորք՝ ընդ գուռն որ Օղակոցի ասեն, և որպէս զկայծակն հեղան ի վերայ զօրացն Հոռոմոց, և զայնքան հպարտացեալ եւ զամբարտաւանեալ զզօրսն ընդ կրունկն դարձուցեալ ի փա-

խուստ և անողորմ 'ի բերան սրոյ կոտորէին գնստա, և սխուրեան գետն որ կայր՝ 'ի յա-բիւն դարձաւ. և 'ի ձայնէ գազանացեալ զօրացն Հայոց փախստականքն ոչ կարէին փախչել, այլ կային յիմարեալք և մատ-նեալք 'ի ձեռս սրոյ։ Լու անդ էր տեսա-նել զահեղ և զմեծ օրն 'ի վերայ զօրացն Հոռոմոց, 'ի քսան հազարէն հարիւր լինէր մնացեալն։ Յայնժամ ընդ մէջ անցեալ սրբ-բասնեալ եւ մեծ սպարապետն Վահրամ Պալհաւունն, և բազում ողբանօք աղաչէր պատգամաւորութեամբն առ զօրսն Հայ-ոց, և հազիւ կարաց հաւանեցուցանել՝ որ զօրքն Հոռոմոց սաստիկ յետ ելանէին, և այնու զերծեալք լինէին զօրքն Հոռոմոց որ մնացին. և այլ ոչ եւս խնդրեցին զօրքն Հոռոմոց զքաղաքն Ամիդ, և դարձան ամա-թով և գնացին 'ի Կոստանդինուպօլիս առ Մ'ելիսայն։

ԺԹ. Յայնժամ զարթուցեալ մանուկ մի ուրթ և տան ամաց՝ Գագիկ անուն, 'ի նոյն շառաւիղէն Բագրատունեաց, որդի Աշոտ արքային, որդւոյ Գագկայ՝ որդւոյ Աշոտոյ՝ որդւոյ Աբասայ՝ որդւոյ Սմբատայ՝ որդւոյ Աշրկաթայ (82)։ Լու մանուկս այս Գագիկ էր յոյժ իմաստուն և երկիւղած և աստուա-

ծասէր. և ժողովեցան ամենայն նախարարքն Հայոց առ հայրապետն տէր Պետրոս, և օծին զԴաւիթ Թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց շնորհօք Հոգւոյն սրբոյ եւ հրամանաւ մեծ իշխանին, որով և օծեաց զնա սրբակեացն մեծն Մարցեն (85) որ էր ազգաւ հայկազնեան եւ հայրենեաւք Պալ-հաւունի, որոյ անուն ըստ նախնոյն իւրոյ Գրիգոր Ճանաչի. և էր յազգէն սրբոյն Գրիգորի։ Սա երկրորդ Սամուէլ երեւեալ որ օծ զԴաւիթ արքայ ի վերայ տանն Իսրայէլի. սա Թագաւորեցոյց զԴաւիթ ի վերայ տանս Հայաստանեայց. յոյժ բարեպաշտ և աստուածասէր և անպարտելի յիմաստասիրական ջոկան. սա ջանայր իմաստութեամբն իւրով հաստատել զաթոռ Թագաւորութեան Հայաստան ազգին, և Հայքեր Մոտուծոյ օժանդակ լինել նմա և ազգին Պալ-հաւունեաց։

Կ. Յայնժամ Դաւիթ ի ձեռն զօրաց իւրոց ըմբռնեալ զՍարգիս, և ի խոշտանգանս ազգի ազգի արկանէր զնա ի նեղ, մինչեւ յոչ կամացն նորա տիրանայր բերդից և գաւառաց և քաղաքաց և ամենայն գանձատանն Հայրենի իւրոյ, զոր յափշտակեաց (Սարգիս)։ Յայնժամ կամօք բարեբարին Ա-

տուեծոյ խաղաղանայր զօրքն Հռոմոց, եւ այլ ոչ յաւելան ի խնդրել զքաղաքն Նինի, և ոչ այլ պատերազմ յարուցանել ընդ Հայս։ Եւ եղեւ յաջողեալ երկու ամ թագաւորութիւնն Պագկայ շնորհօք Հոգւոյն սրբոյ։ Իսկ յաւուրս յայսոսիկ ժողովս արար թագաւորն Պագիկ, և գնայր խաղայր ընդ աշխարհս հայրենեաց իւրոց, եւ զամենայն անհաւանսն ի հնազանդութիւն ածէր, և զթշնամին մեծաւ բարկութեամբ դարձուցանէր, և երթայր բազմութեամբ զօրօք, բանակ հարկանէր Ամրարատեան գաւառն առնուլ զվրէժխնդրութիւն յազգէն հարաւայնոց։ Յայնժամ սպառազինեալ մեծ իշխանին Գրիգորոյ որդի Վասակայ Պաղհաւունւոյ, և երթեալ զօրքն բանակս հարկանէր ի վերայ գետոյն Հուրաստանի մերձ ի Նջնի մեծի ամրոցին։ Յայնժամ զօրք այլազգեացն գան ի վերայ զօրացն Հայոց. եւ եղեւ պատերազմ սաստիկ, և զօրքն Հայոց յաղթեցին զզօրսն Պարսից, և արարին կոտորածս մեծս ի վերայ գետոյն Հուրաստանայ, և զնշխանս թուրք զօրացն արարին ձերբակալս, եւ մնացեալքն փախստական գնացին ի Պարսիկս։

ԿԲ. Յայնժամ յաղդմանէ չարին կրկին

շարժն լինէր Յունաց գառաճանուութեամբ եւ կեղծաւորութեամբ սուտ քրիստոնէից Դաւթի Ընհոգնին, զոր հարկ եղեւ մեզ զանուն նորա փոխել և ասել թէ Դաւիդ, վասն զի ի վերն տառապանաց էած զազգս քրիստոնէից, և ինքն հոգւոյն տանջեաղ եղեւ ի բանսարկուէն, և ի վերն կորըսուեան յաւիտենից տանջանացն մատնեաղ լինէր։

ԿԲ. Յայսմ ամի զորաժողով արար թագաւորն Հոռոմոց Միխայէլ զամենայն աշխարհն Յունաց, և այլ ի Հայոց զորացն որք ընդ Հոռոմոց իշխանութեամբն էին՝ Սեբաստիա և Տարօն և ամենայն Վասպուրական. և անթիւ բազմութեամբ հասաւ նէր թագաւորն Միխայէլ յարեւմուտս, և գերի առեալ զամենայն աշխարհն Պնդաց, և զապստամբան ածէր ի հնազանդութիւն, և արար իւր հնազանդ զամենայն աշխարհն և դարձաւ ի Կոստանդինուպոլիս. և մերձ ընդ մեռանել (84) թագաւորն Միխայէլ։

ԿԳ. Իւր թագաւորեաց ի վերայ Հոռոմոց փոխանակ նորա քուր (քեռ) որդի իւր որ Կեսառան էր, և զամիսս չորս կալեալ զթագաւորութիւնն՝ և այլ ոչ եւս։ Վասն զի խորհեցաւ խորհուրդս չարս, և անձամբ

անձին իւրոյ սրոգայթս պատրաստեաց, ըստ այնմ թէ՝ «Որ փորէ խոբխորատ ընկերի իւրոյ, անձամբ իւրով լցցէ զնա»։ Իսկ սա բա այնչափ հպարտացեալ՝ որ զգործն իւր ոչ խմացաւ. վասն զի զՎիւռազոյն դուստրն զՎոստանդէ կայսերն իբրեւ զբոզ խուզել համարձակեցաւ, եւ կապանօք աքսորեաց զնա ի կղզւոջ. և պատրիարքն զՎոստանդինուպօլսի բռնեաց, և եդ զնա կապանօք ի բանդ, վասն զի կամեցաւ ազգաւն իւրով ժառանգել զաթոռ թագաւորութեանն, վասն զի էին ազգք սիրոյք և անօրէնք և ապականիչք աշխարհի։ Եւ յետ աւուրց ինչ օգնութիւն հասանէր յԱստուծոյ պատրիարքին, և այլափոխեալ զինքն զերծեալ ի կապանաց բանդին և փախստական լեալ անկանէր ի սուրբ Սոփի, և շարժեալ զամենայն քաղաքն Կոստանդինուպօլսի ի վերայ Կեսառոսին, և եղեւ ահագին պատերազմ ի մէջ քաղաքին Կոստանդինուպօլսի։ Եւ լինէր յայնմ աւուր սաստիկ պատերազմ և կոտորած ի յերկուց կողմանցն և աբեան ճապաղի լինէր յամենայն քաղաքն, և յաւուրն յայնմիկ կայր սուրբ Սոփի ի մէջ բազում արեանց. և յաղթեաց պատրիարքն Կեսառոսին, կալան զնա և զաչս նորա խա-

հաստեցուցին, և զազգին իւրոյ զամենեցուն տուին հիմն ի վերայ արարին, և զԹագուհին Կիւռազայի մեծաւ փառաւորութեամբ գարձուցին ի Կոստանդինուպոլիս։

Յայսմ ամի սպանաւ մեծ իշխանն Հայոց Խաչիկ, և տղայ որդի Նորա Իշխան անուն՝ ի Վասպուրական գաւառին։ (Վասն զի) ժաղովեցան Հեր և Պաղամնատ և առպատակ արարին զԹոռևան գաւառն, եւ համբաւ հասանէր առ Խաչիկ, եթէ զոքն պլաղգեաց մնին ի գաւառն քո։ Իւ նա էր այր քաջ և յաղթող պատերազմող, յաղ գէ ի վերայն (85) առիւծ ջոկէ. բայց ծերացեալ և թաղեալ էր զգործ պատերազմին, և հաւաչելով ապաշաւէր. քանզի աւագ որդին Նորա քաջն Հասան և Ղ՝ՆՃՂՒԿՆ հանդերձ զօրօքն ի յարեւմուտսն էին զհետ Թագաւորին Պիհայլին։ Իւ յայնժամ իշխանն Հայոց Խաչիկ ոչ կարաց համբերել սրտին, յարուցեալ եօթանասուն արամբք հասանէր (ի վերայ) պլաղգեացն, և զորդին իւր ի տանն արգելական արար զիշխան անուն, զի տղայ էր հնգետասանամեայ։ Իւ իբրեւ հասաւ Խաչիկ պլաղգեացն, տեսաւ բազում զօրս իւր (նոցա)։ Զայն տուեալ ապանց իւրոց և ի պատերազմմտանէր, և բախէր

սասակապէս զպալազգիսն և յերկիր թաւալ
ելցուցանէր։ Եւ ահա տեսանէր զի տղայ
որդի նորա զերծեալ լինէր յարգելանոցէն
և գայր ի պատերազմ. իբրեւ ետես Խաչիկ
բեկաւ, քանզի տղայ էր և գեղեցիկ. եւ
գայր Իշխան անուն՝ իբրեւ զկորիւն առիւ-
ծոյ, և ուժգին բախէր զպատերազմն եւ
առ տխմարութեանն քաջապէս մնանէր։ Եւ
խնայեալ զնա թէ որդի առն քաջին է, փոխ-
կեցին զնա ի մէջ և կալան սպանին։ Եւ
տեսեալ Խաչիկ՝ բեկաւ ոչն նորա, և անկաւ
սուսերն ի ձեռաց նորա. և տեսեալ զայն
զօրսդ այլազգեացն՝ դիմեցին ի վերայ նո-
րա, կալան զնա և սպանին, և մեացեալքն
փախստական գնացին ի տունս իւրեանց։
Եւ զկնի աւուրց ինչ գային որդիքն Խաչիկ
կայ յարեւմտից, զի լուեալ էին զմահ հօրն
իւրեանց և զտղայ եղբօրն, և գային սեաւ
զգեստեօք, և լային բազում լալիւնս։ Եւ
յայնժամ Հասան կալաւ ռայիս մի Քուրթ,
որ էր իւր սահմանակից, և տայ նմա հա-
զար դահեկան, և ասէր. «Գնա՛ ի Հեր
և ի Աղամանտ, և ասա՝ թէ Թորնեւեան
և ամենայն աշխարհն անմարդ է, զի կայք
պարապ, բազում հօտս ոչխարաց և ծառայս
ընդ վայր շրջին»։ Եւ արար ռայիսն այնպէս։

ՅԻ Ժողովեցան այլազգիքն արս հնգետասան հազար, եկին մտին ի նոյն տեղին. և գայր ոայիսն և պատմեաց Հասանայ և Ն՛ենձրզ կուն. և Ժողովեալ Հասանայ զօրս իւր արս հինգ հազար, և մեծաւ զայրացմամբ իբրեւ զխոցուած գազանն հասանէր ի վերայ բանակի անօրինացն։ ՅԻ ձայն տուեալ Հասան արտասուալից գոչմամբ ի ճակատ այլազգեացն և ասէր. «Ո՞ր է այրն այն որ եսպան զՀայրն իմ զվասիկ. յառաջ եկեսցէ»։ ՅԻ ահա գայր մի ոմն յայլազգեացն սեաւ մի և հզօր, և ձայնեալ ասէր՝ թէ «Յս եմ որ սպանի զառիւծն զվասիկ, և ահա պատերազմաւ ձիւն և զգեստսն և իւր նշանակն և թուրն զոր ունիմ ես»։ ՅԻ տեսեալ Հասան օրդի Նորա ելայ, և հանեալ զթուրն ի պատենիցն եւ որպէս զառիւծ հասանէր ի մէջ այլազգեացն, և հարեալ զնա՝ ընդ երկուս պատառեաց, յերկիր ընկենայր, և առեալ զձին և զնշանակն անվնաս ելանէր։ Այսպիսի օրինակաւ ձայն տուեալ բարձր՝ եղբայրն Հասանայ Ն՛ենձրզուկն և ասէ. «Ո՞վ է որ եսպան զեղբայրն իմ զվշման անուն. ելցէ յատենի զի տեսիցէ զնա»։ ՅԻ գայր Պարսիկ մի քաջ, և ձայն տուեալ և ասէր. «Յս եմ որ սպանի զՎշ

խան անուն, և ահա իբր սպիտակ ձին և իբր վառ նշանակն և իբր Թուրն։ Եւ որպէս կայծակն հասաւ Ղնձղուկն ի վերայ նորա և սատակեաց զնա, և առեալ զձին և զնշանակն և գայր առ Հասան. և ձայն տուեալ Հասան զօրացն և քաջապէս բախեալ ի պատերազմ՝ դարձուցին ի փախուստ, և կոտորեցին ի նոցանէ արս չորս հազար. և դարձան խաղաղութեամբ և մեծաւ ուրախութեամբ, և փախեցին զսեաւ զգեստս իւրեանց։

ԿԴ. Իսկ ի բարձրանալ Թուականութեանս Հայոց ամի ՆԴԲ (1043–1044), Թագաւորեաց ի վերայ Հոռոմոց Մոնոմաքն, որ ասէին յանուն Կոստանդին։ Յայսմ ամի եղեւ պատերազմ սաստիկ ի վերայ Հոռոմոց, զի իշխանն Մանիակ, այն որ յառաջն էառ զՄեռհա քաղաք, զօրաց ժողով արարեալ ի վերայ Մոնոմախին եւ կապեաց Թագ ի գլուխն, և արար ժողով զամենայն արեւմուտս, և օգնական կալեալ իւր զաշխարհն Հոռոմայեցոց. և յահէ և յերկիւղէ նորա ժողովեցան առ նա ամենայն արեւմուտք. վասն զի էր յաղթան դամ և քաջ ի պատերազմի։ Յայնժամ Թագաւորն Մոնոմախ արար ժողով զամե-

նայն տղէն Յունաց և այլ 'ի զօրայ Հայոց աշ-
խարհին, և յարուցեալ գնացեալ 'ի յաշխարհ-
հրն արեւմտից ընդդէմ Մանիակայ՝ որ 'ի
ձեռն քաջութեան իւրոյ խնդրէր զաթոռ
թագաւորութեան. և էր երկիւղ մեծ 'ի
վերայ զօրացն Հոռոմոց։ Իսկ յառաջ քան
զխմբել պատերազմին՝ բարկութիւն Աստու-
ծոյ հասանէր 'ի վերայ արեւմտից զօրաց,
և յաղթողն Մանիակ յանկարծամահ լինէր,
և բարձաւ շարն 'ի միջոյ և եղեւ խաղա-
ղութիւն մեծ. և ամենայն ապստամբք
փախեան, և զոմանս հնազանդեցոյց, եւ
թագաւորն դարձաւ 'ի Կոստանդինուպօլիս։

Կ. Յայսմ ժամանակիս սկսաւ անօրէնն
Սարգիս յառաջ բերել զչար նենգութիւ-
նն իւր. և ազդ արարեալ Մոնոմախին և
ասէր, եթէ «Կոչեա առ քեզ զԳագիկ 'ի
Կոստանդինուպօլիս սիրոյ պատճառանօք,
և յայնժամ խաբէութեամբ առցես 'ի նը-
մանէ զքաղաքն Անի»։ Եւ լուեալ զայս
Մոնոմախ թագաւորն, և ուրախ լինէր
յոյժ, և բուսաւ 'ի սիրտ նորա բոյս չարու-
թեան առ 'ի բառնալ զթագաւորութիւնն
Հայոց։ Եւ գրեաց թուղթ առ Գագիկ աբ-
քայ Հայոց հանդերձ մեծամեծ երդմամբ,
և այնչափ մոլեգնեալ՝ մինչեւ զքրիստոսական

աւետարանն և զնշանն սուրբ խաչին Քրիս-
տոսի միջնորդս և երաշխաւորս յուղար-
կեալ ի Հայք, և այսպիսի օրինակաւ կո-
չէր զթագաւորն Հայոց վասն սիրոյ և տե-
սութեան։ Այլ լուեալ զայս Գագիկ և ոչ
էառ յանձն գնալ զհետ ստութեան, վասն
զի գիտէր զՀոռոմոց նենգութիւնն։ Յայն-
ժամ նենգաւորն Սարգիս և այլք յաղատա-
ցին յառաջ մատեան որք բանատուքն էին
առ Մանոմախին, և քաջալերէին զնա գնալ,
և ասէին. Պէտ թագաւոր, վասն էր երկն-
չիս և ոչ գնաս վասն այսպիսի երդմանցս
և միջնորդութեամբ սրբոյ Աւետարանին և
սրբոյ նշանին Քրիստոսի. և յաղագս մեր
մի երկնչիր, վասն զի ահա անձինք մեր մե-
ռանին ի վերայ քո։ Այլ կացուցին միջ-
նորդս զտէր Պետրոս, և տարին երդմունս
սատիկս յաւուր յայնմիկ. և բերին ըղ-
սուրբ խորհուրդն մարմնոյ և արեան Որդ-
ւոյն Աստուծոյ և Թանգին զգրիչն յարիւնն
Կենարարին, և տարին երդման գիր հայ-
բասպեան և ամենայն իշխանքն Հայոց. եւ
յայնժամ գնաց Գագիկ ոչքայ Հայոց ի
Կոստանդինուպօլիս առ թագաւորն Մանո-
մախ։ Այլ ամենայն քաղաքն բախեալ եղանէին
ընդառաջ Գագկայ Հայոց ոչքային, մեծ

փառաւորութեամբ տարան զնա առ Թագաւորն՝ որպէս վայել է Թագաւորին, եւ աւուրս ինչ մեծարեաց զնա Անոմախն։ Յետ յայնժամ ստուգաւոր բայ նենդաւորքն որք արեամբն Աստուծոյ կապեցին զերդումն սոսկալի, առաքեն զքառասուն բանալի քաղաքին Ինեայ առ Թագաւորն Անոմախ, և ի հետ Թուղթ՝ Թէ Ինի քաղաքն և ամենայն արեւելք քեզ եղեւ։ Յետ կոչեաց Թագաւորն զՎրգիկ և զբանալիս տանն և զքաղաքին և զՄուղթն առաջի նորա եդեալ՝ և ասէր ցՎրգիկ, եթէ զԻնի և զամենայն աթեւելք ետուն ի ձեռս իմ։ Յետ ծանեաւ Վրգիկ զնենգութեան գործքն, յոգւոց եհան աղաղակս և ասէր. «Վա՜յ աղասցէ Աստուած ընդ իս և ընդ նենգաւորսն իմ»։ Յետ ասէր Վրգիկ ցԱնոմախն, եթէ «Տէր և Թագաւորն ես եմ տանն Հայոց. և ահա ես ոչ տայց զՀայք ի ձեռս, վասն զի գուցեն խաբէութեամբ ածեր ի Կոստանդինուպօլիս»։ Յետ զաւուրս երեսուն այնդեալ ոչ հաւանեցաւ Վրգիկ. և յորժամ ելն իրացն ոչ գտանէր, յայնժամ տայր զԻնի ի ձեռս Հոռոմոց. և տայր Անոմախն Վրգկայ ըստ կալնի—պեղատն և զՎիզաս, և ոչ յուշարկեաց զՎրգիկ ի քաղաքն Ինի, և զտուն

հայրենի իւրոյ տայր բերել ի Հռոմն. և կայր դեգերեալ Թագաւորն պանդխտեալ ի մէջ անողորմ եւ չար ազգին Յունաց։ Բայց ուր հասանէր Դագիկ, նեղութիւն մեծ արկանէր ի վերայ ազգին Յունաց պէս պէս խայտառակութեամբ, վասն զի որպէս Թագաւոր ահարկութեամբ կայր ի մէջ Նոցա և Հռոմոց. բայց ասատիկ սուգ ունէր ի սրտի իւրում վասն հայրենի աթոռոյն իւրոյ, զոր նենգութեամբ յափշտակեցին աստուածուրաց և նենգաւոր ազգն հեռեոտիկոսաց։

ԿԶ. Ընդ յորժամ փոխեցաւ Թուականութիւնն Հայոց ի յամն ՆՂԳ (1044—1045) զօրաժողով արար Թագաւորն Մոնոմախ զամենայն աշխարհն Յունաց, և ահագին բազմութեամբ յուղարկեաց զնոսա յարևելս ի խնդրել զքաղաքն Անի, և կացուցան ներ զօրագլուխ զՊառակամանոսն (86) զայր նեղբինի կուրդ գոլով, և գայր զօրք բազմաք հասանէր ի դուռն Անւոյ։ Եւ զայրկին կամէր դնել (կայսրն) պահապան աշխարհին Հայոց փոխանակ հզօր քաջին Դագկայ. և Դագիկ այլ ոչ թողաւ ելանել յաբեւելս։ Իսկ Հայոց ազգն որք էին ի քաղաքն Անի, ոչ հաւանեցան տալ զքաղաքն,

այլ ուղելով ուղէին զԹագաւորն Իւրեանց. և հայհոյեալ նախատէին զամենայն ազգն Հոռոմոց։ Յեւ յայնժամ եկանէին միաբան ամենայն քաղաքն ի պատերազմ ընդ զօրսն Հոռոմոց, և լինէր սաստիկ պատերազմ ի դուռն քաղաքին Նիւս, և դարձուցին ի փախուստ զզօրսն Հոռոմոց և կոտորելով արարին հալածականս, և սպանեցին առ հասարակ զամենայն բանակն նոցա. և դարձան զօրքն Հայոց ի քաղաքն Նիւ մեծաւ յաղթութեամբ, և գնացին զօրքն Հոռոմոց ամօթով յաշխարհն Իւրեանց, և Պառակամանոս ձմերեաց Յ Նիւ։ Յեւ իմացան զօրքն Հայոց թէ թագաւորն Հայոց այլ ոչ եկանելոց է յարեւելս, և ծանեան զնենգութիւն նախարարացն Հայոց, լային առ հասարակ ամենայն տունն Հայոց. և աբարին ամենայն քաղաքն ժողով ուր էին գեբեզմանք Հայոց ամենայն թագաւորացն առաջնոց, և անդ լացին զանտիրանալն ազգն Հայոց, լային և զամենայն թագաւորութեանն Իւրեանց, և կոծ եդեալ առ հասարակ լային զԹագաւորն Իւրեանց զՎագիկ. լային եւ զամենայն ազգն Բագրատունեաց, և անէծս ցաւագինս կարդային նենգաւորացն Վագկայ։ Յեւ յայնժամ անճարակեալ հա-

ւանեցաւ քաղաքն և ամենայն զօրքն, և գը-
բեցին առ զօրապետն Հռոմոց ի Պառակա-
մանոն, և երդմամբ կոչեցին զնա ի քաղաքն
Ինի, և ետուն զքաղաքն Ինի ի ձեռս Հռ-
ոմոց. եւ խախտեալ փլաւ տէրութիւն
ազգին Խագրատունեաց։

Կէ. Դարձեալ ի Թուականութեանն
Հայոց յամի ՆԴԴ (1045—1046), եղեւ մե-
ծասաստ բարկութիւն Աստուծոյ ի վերայ
արարածոցս։ Դանդղն հայեցաւ տէր Աստ-
ուած բարկութեամբ յարարածս իւր, և ե-
ղեւ շարժ ահաւոր և սոսկալի, և դողացաւ
հաստատակ ամենայն տիեզերքս ըստ բանի մար-
գարէին որ ասէ. «Ո՞ հայի յերկիր, և ասայ
դողալ սմա»։ Այսպիսի նմանութեամբ շարժ-
եցաւ ամենայն արարածք, և բազում ե-
կեղեցիք խախտեալ փլաւ ի հիմանց ի Ա-
կեղեաց գաւառին. և քաղաքն որ Ինկան
կոչի փլաւ առ հատատակ. և պատառեցաւ
երկիրն և արք և կանայք ընկղմեցան ի
խորս անդնդոց, և զաւառս բազումս գայր
ձայն աղաղակի նոցա ի խորոց անդնդոց. և
էր յամառնային ժամանակին և աւուր աւուր
շարժէր երկիրն յամին յայնմիկ, որ ոչ քաւեմք
պատմել վասն բարկութեանն և խռովու-
թեանն զոր էած Աստուած ի վերայ արա-

բածոցս վասն մեղայ մերոց. և յամառնային ժամանակին խաւար եւ մութն լինէր 'ի վերայ երկրի, մինչեւ արեգակն և լուսինն 'ի կերպս արեան երեւէին, և յորժամ ելանէր 'ի կամարն՝ յիստակ էր։

ԿԸ. Յայսմ ամի և յաւուրսն աշնանային խաղաց զօրքն Հռոմոց և գնացին 'ի վերայ քաղաքին Դվինայ. և 'ի խմբել պատերազմին՝ բարկութիւն հասանէր Աստուծոյ 'ի վերայ զօրացն Հռոմոց, և լինէին պարտեալք յերեսաց այլազգեացն, և դարձան 'ի փախուստ. և եղեւ կոտորած մեծ 'ի վերայ քրիստոնէից, եւ բազումք 'ի զօրացն Հռոմոց անկան 'ի սուր և 'ի գերութիւն, ընդ որ և մեծ սպարապետն Հայոց Վահրամ հանդերձ որդւովն իւրով Գրիգորիւ սպանաւ 'ի մեծ պատերազմին 'ի Դուին քաղաքին։

ԿԹ. Յայսմ ամի շարժեալ եղեւ բարկութիւն մեծ 'ի տանէն Պարսից, և ելեալ գային արք երեք 'ի տիւանէն՝ 'ի Տուղրէլ սուլտանէն, Պաղդ, Պուկի, Ինանդուղլի՝ եւ հասանէին բազում զօրօք յաշխարհն Տաճկաց, և անհամար գերութեամբ գայր բանակ հարկանէր 'ի վերայ Արեան գետոյ 'ի սահմանս Մաւսայ։ Եւ յայնժամ զօրաբ

պետն Մաւսլայ որ ասէին Խուրէշ, տէրն Մաւսլայ, զօրաժողով արարեալ գայր ի վերայ Նոցա արապիկ զօրքն. և արարին պատերազմ սաստիկ յերկոցունց կողմանցն. և յայնմ Թուրքն յաղթեաց արապիկ զօրացն և արար փախստական զնոսա, և զկանայս և զորդիս Նոցա էառ ի գերութիւն։ Եւ յայնժամ ամիրայն Տաճկաց Խուրէշ կապեաց սեւ Նշանակ և մտաւ Ճիչկան յարապիկք, և արար ժողով մեծ և գայր ի վերայ Թուրքին, և սաստիկ պատերազմաւ յաղթեաց Նոցա, և առեալ զգերութիւնն իւր և զնոցայն. և գնաց Թուրքն փախստական մինչեւ ի Պաղին՝ արարեալ բազում կոտորածս ի բազում տեղիս, և ի գաւառս Թէլմոյ եղեւ բազում (արեան) հեղութիւնս քրիստոնէից։ Եւ այսպիսի գերութեամբ զօրքն Թուրքաց դիմեալ երթային յաշխարհն Պարսից, եւ հասանէր մինչեւ Ա՛ՐՃԷՇ քաղաք Հայոց։ Եւ էր անդ զօրավար մի Հոռոմոց՝ որում անուն ասէին Ստեփան կատապան (86), և ամիրայքն Պարսից յուղարկեցին բազում տուրս Հոռոմոց զօրավարին՝ զի տացէ Նոցա անց զի գնասցեն յաշխարհն իւրեանց։ Իսկ Նորա հպարտացեալ ելանէր ի պատերազմ ի վերայ զօրա-

ցին Թուրքաց. և յայնժամ յաղթեցին զՔրացն Հռոմոց Թուրքն և արարին սատիկ կոտորածս, և կալան զՍտեփան կաթողիկոսն և տարան 'ի Հեր քաղաք, և զկնի բազում չարչարանացն մեռանէր 'ի ձեռաց .... ացն, և քերթեցին զմարթ մարմնոյ նորա և լցեալ զնա խոտով և կախեցին զպարսպէն. զոր լուեալ ազգի նորա, եկեալ գնեցին ըղմարմինն և զմարթն 'ի տան հազար դահեկան։

Հ. Դարձեալ 'ի Թուականութեանս Հայոց ՆԴԷ (1046—1047) ամին, զորաժողով արարեալ Մոնոմախ Թագաւորն Յունաց, և կացուցեալ զգլուխ մեծ զորացն իշխան Հռոմոց՝ որում անուն ասէին Տելիարի (87) կուրտ և ներքինի գոլով, և գայր ահագին բազմութեամբ և անթիւ զորօք 'ի վերայ քաղաքին Դվինայ, և բանակ հարկանէր 'ի դուռն քաղաքին. և էր ձմեռային ժամանակ, և 'ի սաստկութենէ սառնամանեացն և 'ի բախմանէ յորդաբուխ անձրեւացն ոչ ինչ կարայ առնել, այլ դառնայր անյաղթելի, այլ խաղայր գնայր 'ի Հռոմոց աշխարհն։

ՀԱ. Իսկ յորժամ փոխեցաւ Թուականն Հայոց ՆԴԶ (1047—1048) ամին, դարձեալ գայ Տելիարին զորօք բազմաք, և իջա-

նէր ի վերայ քաղաքին Դվինայ. և բազում չարչարանս և տագնապս գործեաց այնմ գաւառին, սրով և գերութեամբ ապականեաց զամենայն ազգն Տաճկաց, և դարձաւ յաշխարհն Յունաց խաղաղութեամբ։

ԺԲ. Յայսմ թուականութեանս Հայոց ոմն պատրիկ անուն Թոռնիկ ապստամբեաց ի վերայ Մոնոմախին, որ է ի քաղաքէն Անդռնապօլսէ, այր քաջ և հզօր և պատերազմող. և սորա ժողով արաբեալ զամենայն աշխարհն արեւմտից և զԻնդից, և ահագին բազմութեամբ գայր ի Կոստանդինուպոլիս և ի մեծ տագնապ և ի նեղութիւնս արկանէր զքաղաքն. և թագաւորն ոչ իշխեաց ելանել ի պատերազմ, և այնչափ ձանձրացան քաղաքն Կոստանդինուպոլիս ի պատերազմէն, մինչեւ քարուկրուվ կալան զդուռն քաղաքին. եւ այնչափ ահագին արաբեալ Թոռնիկ զպատերազմն, մինչեւ զսուրբ Անարծանթքն (եկեղեցին) որ կայ արտաքոյ քաղաքին՝ քարիւատակ արարեալ, և զամենայն բարին առ հասարակ ի Յովհիանոսն ընկէց՝ զմեծ եկեղեցին զսուրբ վկային։ Իսկ թագաւորն Մոնոմախ և ամենայն իշխանքն քաղաքին Կոստանդինուպոլսի յահէ կալեալ, և ելս իւրացն ոչ կարէին գտանել,

և ընդդէմ քաջութեամբ Թոռնկայ ոչ կա-
րէին կալ։ Իսկ պատրիարքն և ամ իշխանքն և
թագաւորն խորհեցան չար խորհուրդ վասն
Թոռնկայ, և գրեցին երդմունս ահաւորս
և սուտ, և խաբանօք երդուան Թոռնկայ
դնել զնա Կեսարա. և զկնի մահուան Սոնո-
մախին Թոռնիկ լիցի թագաւոր. և այսպէս
սի գրեցին և երդմամբ հաստատեցուցին
վերեանց նենգութիւնն. և ասէին թէ՝
գտաք ի գիրս զի զկնի մահուան Սոնոմա-
խին դու նստցիս յաթոռ թագաւորութեան։
Յե երեալ պատրիարքն առ Թոռնիկ և քա-
հանայքն և իշխանքն, և երկրորդեալ զեր-
դումն առաջի Թոռնկայ, և եղեւ սէր և
խաղաղութիւն, և միաբան ածին զնա ի
Կոստանդինուպօլիս. և յետ սակաւ աւուրց
ուրացան զերդումն իւրեանց, և ուրացան
զմիջնորդն Աստուած՝ որպէս և սովոր են
ազգն Հոռոմոց երդմամբ կորուսանել զամե-
նայն մեծամեծս աշխարհի. և յայնժամ խա-
ւարեցուցին զաչսն Թոռնկայ զառն քաջի։

ԺԳ. Յայսմ թուականութեանս Հայոց
ՆՂԸ (1049—1050) ամին, յաւուրս Սոնոմա-
խի կայսերն որ նենգութեամբ և երդմամբ
եբարձ զթագաւորութիւնն Հայոց ի յաշ-
գէ Իագրատուհեաց, յայսմ թագաւորու-

թեանն և 'ի հայրապետութեան տէր Պետրոսի Հայոց կաթուղիկոսի, զարթեաւ աստուածասաստ բարկութիւնն 'ի տանէն Պարսից հրամանաւ Տուղրէլ սուլտանին. և եղեալ երկու զօրապետք բազում զօրք 'ի տիւանէ անտի որք անուանեալ ասէին Աբրեէմ և Պիթմուշ, և անթիւ բազմութեամբ գան 'ի յաշխարհն Հայոց, վասն զի 'ի ձեռացն Հոռոմոց գիտացին անաէր եւ անպահապան զամենայն աշխարհն Հայոց. զի զարս քաջս և զհզօրս քակեալ հանին յարեւելից Հոռոմք, և կուրտ զօրապետօք ջանային պահել զաշխարհն Հայոց և զամենայն տուն արեւելից։ Եւ ահա յայսմ ամի զօրք . . . . ացն հասանէին 'ի հուչակաւորն և 'ի բազմամբոխ քաղաքն Հայոց որ կոչի Արծն. և գտեալ անպարիսպ զքաղաքն և անթիւ բազմութեամբ լցեալ արանց եւ կանանց, և անհամար չափս ոսկւոյ և արծաթոյ։ Եւ քաղաքացիքն տեսեալ զզօրսն այլազգեաց՝ միաբան 'ի պատերազմ ելեալ, և խմբեցաւ շուրջ զեզերօք քաղաքին սաստիկ և ահաւոր պատերազմ. և եղեւ զմեծ ցաւ անդաստանքն (88), վասն զի ոչ գոյր տեղի փախստեան և ոչ օգնական, միայն ըզմահն ունէին յոյս. և 'ի բազմութենէ . . .

...ացն ձանձրացան զօրքն քաղաքին և ի փա-
խուստ դարձան. և այլազգիքն սրով յարձա-
կեցան ի վերայ քաղաքին, սաստիկ կոտորա-
ծով առ հասարակ ի ներքոյ սրոյ անցուցին
զամենայն քաղաքն իբրև բիւրս հնգետասան։
Աղ զոսկւոյ և զարծաթոյ և զդիպակաց ա-
ւելորդ է ասել, վասն զի ոչ արկանի ընդ
գրով. բայց զայս բազում անգամ լուեալ է
մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին՝
որ ասէին Դաւթուկ, եթէ զդանձատանն
նմա, տուն նորա (89) ուրթ հարիւր և վեց
կի եզանց ելանէին ի տանէ նորա։ Դ։ կայր
յայնժամ ուրթ հարիւր եկեղեցի ընդ պա-
տարագով։ Դ։ այսպիսի գառն կոտորա-
ծիւս և չարաչար մահուամբս որով անցաւ
վայելուչ և փառաւոր քաղաքն Աղձն, և կամ
որպէս լալով ասացից՝ զանցու�իշխանացն
և զքահանայիցն որք անթաղք կերակուր գա-
զանաց լեալ, և փառաւոր կանայք հանդերձ
տղայոքն վարեցան ի գերութիւն յաշխարհն
Պարսից յանգին ծառայութիւն։ Դ։ ահա այս
սկիզբն եղեւ Հայոց կորստեանս. լուր՝ միտ
դիր կոտորածիս և անցմանս արեւելից մի
առ մի ամ յամէ. վասն զի այս է առաջին
քաղաք որ առաւ սրով և գերութեամբ ի
Հայոց։ Իսկ յորժամ լուաւ զչար համբաւ

զայս Թագաւորն Ամնոմախ, առաքեաց զօրս յարեւելս և կարգեաց զօրագլուխս զօրացն զԱրամենն (90), զՄրիգոր Վասակայ որդին և զԼիպարիտն զեղջայրն Լատին առն քաջին, և բազում զօրօք հասանէին յաշխարհն Հայ յոց առ ի պատերազմել ընդ զօրսն Պարսից։

ԺԴ. Յայսմ ամի գրեաց Ամնոմախ Թագաւորն Յունաց առ Հայոց հայրապետն տէր Պետրոս, զի եկեսցէ առ նա ի Կոստանդինուպոլիս։ Իսկ տէր Պետրոս կամաւ իւրով յօժարեաց գնալ. խարհեցաւ ի միտս իւր և ասէ. «Գուցէ այլ ոչ Թողուն զիս Հոռոմք ելանել յարեւելք». անուանեաց յոմԹոռ հայրապետուԹեան իւրոյ զամենաւգովելին զտէր Խաչիկ։ Այն օրինակաւս խորհեցաւ և յաղագս միւռոնին օրհնեալ ձիԹոյն՝ օծմանն հաւատոյ Հայաստանեայցն. պահեաց ի Հուրան գեան երկաԹի ամանոք իբրեւ լիսր չորս հարիւր, վասն զի մի գուցէ անկանիցի ի ձեռս Հոռոմոց. կայ պահեալ մինչեւ ցայսօր ժամանակի. ի գիշերի պարեալ զայն՝ մերձ ի գուռն քաղաքին Անւոյ։ Իսկ ինքն տանեցի ազատօքն փառաւոր արամբք երեք հարիւր՝ վառեալ զենուք, և վարդապետս և եպիսկոպոսունս և երաժիշտս և կրօնաւոր քահանայս Հայ

բիւր և քսան՝ հեծեալս ի ջորոց, հետեւակ պաշտօնեայս երկերիւրս։ Յետ եր զհետ տէր Պետրոսի նախնականն եւ լաւն ի բնաւից Բուլսար վարդապետն, եւ ամենագովելին խաչատուր դպրապետն, և Թադէոս՝ որ էր այր անպարտելի գրչութեամբ, Դէորգ Բարնեղեցին և Յովհաննէս Բարնեղեցին, Մատթէոս Հաղբատացին, Մխիթար Գըշնայրեցին և Տիրանուն խմաստասէրն Կաւպանեցին, Մխիթարիկն, Վարդան Սանահեցին, Բարսեղն Բաշխատացին, և Համամայեցուչն և շքեղն տէր Յովսէ և Բարսեղ Նորին եղբայրն, Դէորգ՝ Ջուլահակ ձաղգին, և տէր Յիրեմ և տէր Ինանէ և տէր Խաչիկ։ Արդ այս ամենայն վարդապետք և խմաստասէրք և հմուտք հին և նոր Կոստանդնուպաւլիս։ Յետ ինքն ամենագովելին տէր Պետրոս սոքօք հետեւեալ ճանապարհորդութեամբ հասանէր ի Կոստանդինուպոլիս։ Յետ յորժամ լուան զգալն նորա, դղրդեցաւ ամենայն քաղաքն Կոստանդինուպոլիս ընդառաջ տէր Պետրոսի, հանդերձ մեծամեծօք և ահաւոր փառօք տարան զնա ի սուրբ Սոֆիա, և անդ հանդիպեալ թագաւորին և պատրիարքին, և իջուցին զնա ի փառաւոր տանն։ Յետ հրամայեաց թագ-

գաւառն տալ ծախս տէր Պետրոսի, և յա-
ռաջին աւուրն եռուն կենդինար մի. իսկ
յերկրորդ աւուրն գնաց տէր Պետրոս առ
Թագաւորն 'ի պարսատն. և լուեալ Թագա-
ւորն զգաալն՝ ելանէր ընդ առաջ նորա, և հր-
բամայեաց նստուցանել զտէր Պետրոս յոսկի
սելին, զոր 'ի ժամ գնալոյն՝ յինքն առեալ
տէր Իշխան. իսկ սպասաւորք Թագաւորին
ջանային առնուլ, և նա ուժգին ոչ տայր.
և տեսեալ Թագաւորն հարցանէր զպատճա-
ռս չտալոյն։ Իսկ յայնժամ պատասխանի
ետ տէր Իշխան և ասէր. «Մի Թագաւոր,
հայրապետական աթոռ է, և ոչ ոք է արժանի
'ի սմա նստել, բայց միայն տէր Պետ-
րոսի»։ Իսկ լուեալ զայս Թագաւորն՝ և ի-
բաւունս համարեցաւ զբանն զայս զոր ա-
սաց տէր Իշխան. եւ ասաց Թագաւորն.
«Թոյլ տուք զառաքելական աթոռդ 'ի դրբ-
մա»։ Յայնժամ ասէ Թագաւորն, տէր Ի-
շխան հազար (91) դահեկան է աթոռդ,
պահեսցես զդա տեառն քում, զի մի այլ ոք
նստցի 'ի դմա»։ Իսկ այսպիսի փառաւորու-
թեամբ կացեալ տէր Պետրոս 'ի Կոստանդի-
նուպօլիս 'ի մէջ Հոռոմոց զամս չորս, և ա-
ւուր աւուր յաւելայր փառաք և պատուոյք
'ի մէջ Յունաց. և յորժամ երթայր 'ի Պա-

զատ Թագաւորին, նախ զՀայրապետական գաւազանն յառաջ տանէին. յորժամ տեսանէր Թագաւորն՝ երկիր պագանէր և հրաման տայր մեծամեծաց իւրոց ելանել ընդ-դէմ տէր Պետրոսի։ Եւ զկնի չորս ամաց հնորհէր Թագաւորն և պատրիարքն տէր Պետրոսի բազում ընծայս՝ դանձս և դիպակըս ոսկւոյ և արծաթոյ, և ազգի ազգի զարդարանս, և իշխանութիւնս տայր ազատաց նորա, և զքուրորդին իւր զտէր Անանէ արար Անդեղոս (92). և զամենայն պատուական զգեստս տուեալ Հայրապետին Հայոց, և յուշարկեցին զնա խաղաղութեամբ հանդերձ մեծամեծ տրօք. և ի քաղաքն Անի ոչ ժամանեաց, այլ երթեալ բնակէր ի Սեբաստիա քաղաք առ ազգն Սենեքերիմայ մեծաւ փառաւորութեամբ։

Արդ յորժամ հասանէր զօրք Յունաց ի յարեւելս, Կամենն և Անօնն (93) և Գրիգոր Վասակայ որդին կոչեցին զհետս իւրեանց զԻպարիտն զԱրաց իշխանն, և հասեալ նոցա ի բերդն որ կոչի Կապուտառու, ի տեղին որ Արջուվիտ ասի. և լուեալ Թուրքք զՀոյսն զտեղի առին, և բնակեցան Հոռոմոց զօրքն ի Արջուվիտ։ Եւ յայնժամ եկին զօրք այլազգեացն ի վերայ Իպարտին առն քա-

ջին. և նորա հանեալ զպահապան գիշերին զքուրորդին իւր զՀորտուանէլն զայր հզօր և պատերազմող, և յայնժամ սկսան զօրք այլազգեացն ի գիշերին պատերազմել, եւ հասանէր ձայն պատերազմին առ | խպարիսն՝ թէ «Հասիր, զի զօրք այլազգեացն պատեաց զմեզ»։ Եւ ասէր | խպարիսն՝ եթէ «Հաբաթ է, և ոչ է | ըացեայս ելանել յաւուր շաբաթու ի պատերազմ»։ Յայնժամ Հորտուանէլն որպէս զառիւծ ի գիշերին բախէր զճակատ այլազգեացն. եւ մինչդեռ վարէր զնոսա, դիպեալ եղեւ նեռ մի ի բերան նորա և ընդ ծոծրակն ելանէր, և այնպէս մեռանէր Հորտուանէլն այր քաջ և հզօր։ Եւ յորժամ լուաւ | խ-պարիսն զմահ Հորտուանէլին, որպէս զգաւ-զան զայրացեալ եւանէր ընդ պատերազմ, և վարեաց զամենայն այլազգիսն ընդ երեսս դաշտացն, և արեան ճախճախիս արարեալ զնոսա։ Եւ յորժամ տեսանէր զօրքն Հոռոմոց զքաջութիւն | խպարսին, ի սուր եւ-տուն զնա և թողին զ| խպարիսն ի մէջ նոցա և փախեան, վասն զի մի առցէ ա-նուն քաջութեան։ Եւ տեսեալ զայն զօրաց . . . . այն, դարձան միաբան ի պատե-րազմ ընդ | ըաց զօրացն. և յորժամ սատ-

կացաւ պատերազմն և գոչէր | խպարիսն
որպէս զառիւծ ի մէջ . . . . ացն , և յայն-
ժամ մի ոմն ի զօրացն Վ|ռացՊ՝ յեռաց կա-
ցեալ և թրով հարեալ հատանէր զերկուս
ջիլս ձիոյն , և | խպարիսն իջեալ նստի ի
վերայ գետնոյն յասպարին վերայ , և ձայն
տուեալ ասէր՝ թէ « |ես եմ | խպարիսն » ։
|Եւ յայնժամ զբազումս ի զօրաց Վ|ռացեաց
կոտորեցին և զայլն արարին փախստական .
և զ| խպարիսն առեալ գերի և տարան ըզ-
նա ի Խոբասան առ Ցուղբէլ սուլտանին ,
վասն զի յառաջագոյն լուեալ էր զնորա ա-
նունն , և զամենայն քաջութիւն նորա գի-
տէր ։ |Եւ կացեալ առ սուլտանն զամս եր-
կուս , և աբար ի տեղիս տեղիս քաջութիւ-
նըս . և կայր խոփշիկ այլազգ՝ այր հզօր եւ
քաջ , հանին զերկուսն առաջի սուլտանին
ի պատերազմել ընդ միմեանս , և | խպարի-
սին յաղթեալ սատակեաց զխոփշիկն , եւ
յայնժամ սուլտանն ազատեաց զնա . և մե-
ծաւ պարգեւօք յուզարկեաց զնա ի Հ|ռ-
ոմք ։ |Եւ յայնժամ եկեալ | խպարիսն ի
Կոստանդինուպօլիս , և տեսեալ զնա Ա|նոն-
մանն ուրախ լինէր յոյժ . և մեծ պարգեւօք
յուզարկեաց զնա ի տուն առ կինն իւր և
առ որդիքն . և | խպարիսն այս եղբայր էր

Պատին և Օղատին՝ վրացի ազգիս ի հզօր ջոկէ։

ԺԵ. Դարձեալ ի Թուականութեանն Հայոց ամի ՆՂԹ (1050—1051), եղեւ սաստիկ խռովութիւն ի տունն Հոռոմոց, և բազում գաւառք մաշեցան ի սուր սուսերի։ Յետ եղեւ կոտորածք մեծամեծք և աւուրքդ գառնաշունչք ի ձեռն գիշակեր և անօրէն պիղծ ազգին Պաժենկաց՝ չար և արեանարբու գաղանացն. վասն զի ազգ օձիցն ելին և հարին զխարտեշքն, և խարտեշքն ելին և հարին զԼեզն և զՊաժիննակն, և միաբան բորբոքեցան ի վերայ տանն Հոռոմոց, և բազում նեղութիւնս անցուցին ընդ Կոստանդինուպօլիս, և փառաւոր իշխանք մատնեցան ի գերութիւն, զորս ոչ կարեմ պատմել զաղէտս Թախանձանացն զոր կրեաց տունն Հոռոմոց յամին յայնմիկ. վասն զի գաղանապէս և անողորմ գերեցին զազգն Յունաց. եւ Թագաւորն զարհուրեալ ոչ իշխեաց ելանել ի պատերազմ, զի անթիւ և անհամար էին զօրք Թշնամեացն, և բազում աւուրս կացեալ՝ գնացին յաշխարհն իւրեանց, և ապա այնուհետեւ եղեւ խաղաղութիւն աշխարհին Հոռոմոց։

ԺԶ. Իսկ յորժամ բարձրացեալ աւար

տեցաւ Թուականս Հայոց ազգիս 'ի յամս Շ. (1051—1052), մնասեան առ Թագաւորն Յունական չարաՀոյնք և լեզուք նեղեցաւք, և մատուցանէին չարախօսութիւնս վասն փառաւոր իշխանացն Հայոց որք 'ի գաւառն Պաղնայ բնակեալ կային, և ասացին թէ անՀնազանդ կան Հրամանաց քոց, և կամին ապստամբ լինել 'ի քէն։ Յետ առաքեաց զօրապետս Հանդերձ զօրօք 'ի Պաղին, և անիրաւաբար Հեղոյր զչարութեան թոյնս իւր 'ի վերայ անմեղաց. և բարկութեամբ սկսաւ ապականել զամենայն գաւառն, եւ զամենայն իշխանսն սկսաւ 'ի փառաց ընկենուլ, վասն զի էր այր սիրդ և չար, որ էր զօրագլուխ սատանայի, որոյ անուն Նորա Պեռոս ճանաչի. և կամեցաւ որ զմեծ իշխանսն զորդիսն Հաբէլի ձերբակալ առնել, զՀարպիկ զայր քաջ և Հզօր և զԻսուրիթ և զԼեւոն և զՀաստանդին զչորս եղբարսն, այսմ օրինակաւ և զայլ իշխանսն։ Յայնժամ ամենայն իշխանքն ծածկաբար խորհուրդ արարին զի ամենայն որ զիւր ամրոցն բռնեսցէ՝ մինչեւ ծանուցանեն Թագաւորին զաւերումն գաւառին յանօրէն Պեռոսէ, և միաբան արարին զերդումն միաբանութեան՝ զի յայդ չաբաՀռ առցէ ամենայն որ զիւր

ամրոցն։ Իբ յայնժամ մի ոմն ի միաբանելոցն Թորոսակ անուն՝ տէրն Թլլաղաղաց. ուրաց զերդումն եւ ազդ արարեալ անօրէն Պեռոսին, եթէ ամենայն իշխանքն միաբանեցան չգալ ի կոչումդ քո. և զայս ամենայն ոչ գիտացեալ Հաբելի որդեացն, և որպէս յառաջն ասացեալ էին յառուբ շաբաթուն առին զմեծ ամրոցն որ կոչի Արկինի, որ էր մերձ ի գաւառն Թլմոնց. և այլ ամենայն միաբանքն գնացին ի կոչն Պեռոսին։ Իբ լուաւ զայն զոր արարին որդիքն Հաբելի, արար ժողով ի վերայ բերդին Արկինոյ զօրս բազումս. և տեսանէր զամրութիւն բերդին և հիւսեալոյր յոյժ, և ոչ կարէր պատերազմել, վասն զի բարձր էր յոյժ և անառ էր ի թշնամեաց, և ոչ կարաց մերձենալ ի նա։ Իբ յայնժամ խորհեցաւ զայս ինչ՝ և ասաց. «Եթէ ոք բերցէ զդրեանն Հարպկան առ իս, առցէ գանձ ոսկւոյ և արծաթոյ բազում, և իշխանութիւնս և մեծութիւնս ի թագաւորէն»։ Իբ լուեալ զայս անեղգակիցք և նախատանօթք իւր որք առ ինքն էին ի բերդն, և խորհեցան խորհուրդ անօրէնութեան զՅուդայի և զԼեւեայ եղբայրասպանին։ Իբ էր մնա ի բերդին տեղն հակառակ, և Հարպկին առեալ

տրս և եղեալ պահէր զտեղին, և զաւուրս
երեք ոչ իշխեաց ննջել ամենեւին, և ասէն
նենգաւորքն. «Վասն էր ոչ ննջես, տէր
մեր, զի ահա այսօր անձինք մեր մեռանին
ի վերայ քո անձինդ»։ Յե հաւատացեալ
նոցա՝ ննջեաց, զի ձանձրացեալ էր յոյժ. և
իբրեւ քաղցրացաւ ի քունն իւր, յարու-
ցեալ ազգականն իւր հատանէր զգլուխն
Հարպկանն զառն հզօրի և քաջի, և զնոյն
գիշերին հասուցանէին զգլուխն առ Պեռոս
կատաղանն. և սպանողքն ոչ ինչ օգտե-
ցան՝ բայց միայն անէծս։ Յե հրամայեաց
Պեռոս ի ձաղ ցցեալ զգլուխ Հարպկանն
և ասեալ ընդդէմ դրան բերդին. և ի լու-
սանալն տեսեալ եղբարցն նորա և ծանեան,
և վաղվաղակի բացեալ զդուռն և արկեալ
հող ի վերայ գլխոց իւրեանց, և լալով գա-
յին երեք եղբարքն և անկանէին առաջի
հատեալ գլխոյ Հարպկանն. և այնչափ կոծ
առեալ նոցա, մինչեւ ողջս առեալ լային
ամենայն զօրք բանակին։ Յե այսպիսի օրի
նակաւս տիրանայր Պեռոսն ամենք բերդին
Արինոյ եւ զեղբարսն Հարպկանն զորդիս
Հաբելի տարաւ ի Կոստանդինուպօլիս առ
Թագաւորն Մանուսխ։ Յե տեսեալ զնոսա
Թագաւորն եւ ամենայն տուն Յունաց,

հիանային ընդ սոսկալի տեսիլ կերպարանաց նոցա, վասն զի ահաւոր էին տեսլեամբ, և թիկամբք հանդերձ բարձր էին քան զամենայն տունն Յունաց. և յաղագս գեղեցիկ տեսլեանն ոչ ինչ սարարին խրատ նոցա, այլ հրամայեաց անցուցանել զնոսա ի կղզի ըգ Դաւիթ և զ Եւսն և զՅոստանդին, արք քաջք և հզօրք և իշխանք երեւելիք Հայոց։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Արդ մինչեւ ցայս վայրս բազմաջան և աշխատաւոր քննութեամբ գտեալ զբ-ութեցաք զշարադրական գրեալս զՏարիւրիցն ամաց, զոր ի բազում ժամանակաց հետա-քննեալ հասու եղաք։ Ընդ այնքանեաց տեսողացն և լսողացն որք էին ի հին ամաց ծնեալք, և ընդ ընթերցողն յառաջին սատ-մագրացն՝ որք ակամատեաք էին լեալք ա-մենայն եղելոցս և նեղութեանցս այսոցիկ զոր վասն մեղաց կրեաց տուն Հայոց եւ աշխարհս։ Այս բազում անգամ զմտաւ ածեալ եմ, վասն այս յետին ժամանակիս գրել զդառնաշունչ կատաստածն, զայս սոս-կալի բարկութիւնս զոր կրեաց ազգս Հայոց ի գլխաւոր և ի պիղծ ազգէն Իշմայելացւոց, Թուրքաց, յեղբարց իւրեանց Հոռոմոց։ Ու-

վան այսորիկ հարկ եղեւ և 'ի մոայ խոր-
հրդոյս անդադար յուզմամբ իբրեւ զմեծ
ինն համարելով՝ գտանել զայս գործս կատա-
բածի. և վասն այսորիկ զօրաժողով արարի
և գրեցի մինչեւ ցայս վայր զերեք աղգայս
և զհայրապետացս և զայլ պէսպէս քնեւ-
թեանց զաղգայ և զթագաւորաց՝ զոր յա-
ռաջ ասացաք, և զկնի թերեւս ասասցուք
սկիզբն կատարածիս զոր ինչ եղեւ յաւուրս
հարցն մերոց, որք էին բազում անգամ տե-
սեալ աչօք իւրեանց։ Զոր և իմ իսկ խորհեալ
խորհուրդս այս, և զուարթ ամ անհանգիստ
քնեւթեամբ կացի. և զայս ամենայն յօժա-
րեցի 'ի տեսութիւն և 'ի մատենագրու-
թիւն ածել գրով, վասն զի մի 'ի ջարա-
շուինչ դառնութեան ժամանակն կորիցէ այս
ամենայն և մոռացի։ Եւ վասն այսորիկ
Մատթէոս Ուռհայեցի և վանական՝ զաշ-
խատութեան զգործս իմ ոչինչ համարեցայ,
այլ թողի զայս 'ի յիշատակ սիրելոց ժամա-
նակագրութեանց. զի յորժամ 'ի հանդէս
քնեւթեան ելցեն յաղագս ժամանակաց ան-
ցելոցն, դիւրս օգտակարեսցեն գտանել զժամ
և զժամանակս, և զկատարած բարկութեանն
'ի վերայ ժամանակացն գտանիցեն, և այնու
զմտաւ ածեալ յիշեսցեն զաստուածասաստ

բարկութիւնն՝ զոր վասն մեղացն ընկալաք զհատուցումն յարդար դատաւորէն Աստուծոյ. եւ վասն այսոցիկ կողմանց զկորուստս հաւատացելոց, և զկրատս զոր անօրէնն աղգաւ խրատեաց զմեզ ասէր Աստուած մեր, և ահա որ ոչ կամեցաք զսպառնալիսն եւ զկրատն Աստուծոյ մոռացուցանել ի մերոյ մեր։ Արդ արժան է միշտ և հանապազ լսել զկրատն Աստուծոյ մերոյ. և դարձեալ ի նոյն պատուհաս մեղացն դեգերեալ շրջիմք, զոր ընկալաք ըստ արժանեաց մերոց զհատուցումն։ Լա և այլ եւս ունիմք ասել ձեզ ամոյ ուխտիկց գաշխատութենէ Սատիէոսի Լուսհայեցւոյ և վանաց երիցու։

Հէ. Իսկ ի լինելն թուականութեանս Հայոց ի յամն ՇԲ (1053—1054), եղեւ ահաւոր նշան և սոսկալի, և կատարած մեծ ի բարկութենէ երեւեալ ի մեծ քաղաքն Նինուիք, որ ի ներքոյ արեգականն գործեցաւ այս սքանչելիս, որ էր տեսողացն ահաւոր և հրաշալի։ Այլ եղեւ այս նշանս ահ և գողումն ամենայն հաւատացելոց Քրիստոսի, զոր այժմ մեծատատ սպառնալեօք յայտնեաց Աստուած զդատաստան իւր զահաւոր։ Այլ եղեւ պատճառ բարկութեանն այսպէս։

Եւ արդ վասն զի ազգն Աղորոց բազում էին ի քաղաքն Աղտիք ոսկւով և արծաթով, լցեալ հարստութեամբ և ամենայն փառաւորութեամբ, և մանկունք նոցա յորժամ երթային յեկեղեցին թւբեանց, աղայք հինգ հարիւր ի ջորւոյ նստեալ գային, և ազգն Հռոմոց զարմացեալ էին յոյժ մեծաւ չարութեամբ։ Եւ մի ոմն իշխան Աղորւոց ազգէն ունէր կապեալ բազում, և յաղագս այսր պատճառանացս լինէր մեծ դատաստան առաջի պատրիարգին Հռոմոց, և սիրաբար վասն դատաստանին դարձուցին զնա ի հաւատոյ իւրոյ, և կնքեցին զնա Հռոմ իւր կամաւորութեամբ, և իշխանն զհաւատն ետոյ և եղեւ հակառակ մեծ՝ ազգին Աղորւոց։ Եւ յայնժամ մատնեցան Աղորիքն ի մեծ նեղութիւն, վասն զի սկսան հաւատոյ քննութիւն առնել հանապազօր. և յայնժամ ըմբեալ եղեն ազգն Հռոմոց, որ և զգործելն ոչ գիտէր, վասն զի զքրիստոսական աւետարանն հրամայեալ հրամանեաց պատրիարգն։ Եւ եղեւ յորժամ ի հուրն դրին զաւետարանն Աղտուծոյ, ձայն ելանէր յաւետարանէն անտի՝ և ի կրակէն ի դուրս ելանէր. և նոքա երկրորդ անգամ ի կրակն դնէին զաւետարանն, և նա դարձ

ձեալ ելանէր ի կրակէն։ Իսկ նոքա կատա-
ղեալ լրբութեամբ երրորդ անգամ ի կրակն
արկին զսուրբ աւետարանն, և նա եղեալ
եղեւ անվնաս։ Իւ իբրեւ կրկնեցին (95)
չորրորդ անգամ, յայնժամ քնկալաւ սուրբ
աւետարանն զայրեցողութիւն կրակին ի
մէջ հրոյն, և այրեցաւ սուրբ աւետարանն
Բրիատոսի Աստուծոյ մերոյ ի քաղաքն Աղ-
տիոք ի յաղդէն Հռոմոց։ Իւ եղեւ յորժամ
դարձաւ պատրիարգն յեկեղեցին և
ամենայն ժողովուրդն ի յայրմանէ տեղւոյն,
լցեալ էին ուրախութեամբ՝ որպէս թէ
յաղթեցին չար թշնամեաց։ Իւ իբրեւ մնան
յեկեղեցին սուրբ Պետրոսի, գոչեաց առ
հասարակ ամենայն եկեղեցին ահաւոր գոչ-
մամբ, և եղեւ շարժ սաստիկ և դողացեալ
զամենայն քաղաքն Անտիոքացւոց։ Իւ եղև.
ի միւսում՝ այլ աւուրն անկաւ հուր յեր-
կնից ի վերայ եկեղեցւոյն սուրբ Պետրոսի,
և որպէս զզմբար ի հիմանցն ի վերայ եկե-
ղեցւոյն առ հասարակ բորբոքեալ լինէր հուր-
բով, և որպէս զփայտակոյտ այրեցաւ քարն,
և բոցն բարձրացեալ ելանէր յերկինս. և
պատառեցաւ խրատն և զսեղանն խորհր-
դոյն տարաւ յանդուռնդս, և զսուրբ աւ-
կին՝ զոր մեծն Կոստանդիանոս եղեալ էր

Ի սուրբ Պետրոս ընդ քսան բիւր սակուց, որ կայր հանապազ Ի վերայ սրբոյ սեղանոյն Ի ըստաւորութիւն գիշերոյն, կրսա երկիր և այլ ոչ կարացին գտանել։ Իսկ այլ քառասուն եկեղեցի Ի Հռոմոյն այրեցան հրով երկնային ընդ սուրբ Պետրոսիւ, և Հայոց կամ Նորուց ոչ ինչ եղեւ վնաս։ Իսկ յորժամ այս այսպէս գործեցաւ, ահաբեկեալ եղեւ ամենայն քաղաքն Նոմիքացւոց, և կային ահիւ և դողութեամբ. յայնժամ սկսան առհասարակ ամենայն քաղաքն աղօթս առնել առ Նոտուած ըստ և բազում հառաչանօք ազաչել զՆոտուած. և երանէր պատրիարգն հանդերձ ամենայն քահանայիւք և սարկաւագք և կղերիկոսք և այլ բազում ժողովրդովք արանց և կանանց՝ ծերոց և տղայոց, և ժամքք շրջէին Ի քաղաքին զարգարանօք և ամենայն փառաւորութեամբ եկեղեցականօք։ Իսկ եղեւ յորժամ հասանէին Ի Հռոմ Ցիպանն, Ի տեղին ուր փոքր կարմունջ կայ ընդ հեղեղագնացս լերին, յանկարծակի գոչեաց ամենայն գետին, և եղեւ շարժ Ի միջօրէին Ի վերջերոյ ժամուն. և Ի նոյն ժամայն պատառեցաւ երկիրն, և բացեալ զբերան իւր և զպատրիարգն և զամենայն բազմութիւն քա-

հանապից և ժողովրդոյն տարաւ յանդուն-
դրս աւելի քան զբիւր մի. և զաւուրս հրն-
գետասան գայր ձայն աղաղակի նոցա ի խո-
րոց անդնդոց, և ապա անշնչացան՝ զի կրն-
քեցաւ երկիրն ի վերայ նոցա, որ կան մին-
չեւ ցայսօր, զորս ի ձեռն բազմադիմի յան-
ցանացն կրեցին բնակիչք քաղաքին Ինտիո-
քացւոց ի յարգար դատաւորէն Աստուծոյ։
Այսն զի չէ իսկ արժանի յիշել զգործս ա-
նօրէնութեանն նոցա՝ զոր գործէին եկեղե-
ցականքն և ամենայն դասք հաւատացելոցն
Յունաց ի քաղաքն Ինտիոք. զի առաւել
բարձրացաւ ծուխ անօրէն գործոցն նոցա
քան զՍոդոմայ և զԳոմորայ, վասն որոյ և
պատուհասն ցուցանէր զփոխարէն հատու-
ցումն նոցա ըստ գործոցն. զի ահա անդ
հուրն հասանէր ի սատակումն չարագործ-
ղացն, և ասա զնոցն չարագործսն հրով եւ
պատառմամբ անդնդոց բնաջինջ սատա-
կեաց ի մեղսասէր քաղաքն Ինտիոք, որ և
դեռ իսկ բորբոքեալ կան անպատկառելի
հաւատոք. զի ահա ասուածպաշտութեամբ
զանհաւատիցն և զանօրինացն գործէին ըղ-
գործսն, վասն զի բորբոքեցան ի գործս աղ-
տեղիս, զոր և լսողացն ծանր է առ ի լսել
և ասողացս կարի զաղջալի։ Այլ զգործողացն

զի՞նչ ասացից, զի մինչ զկին Հայէն մեզ ծանր գրեաց Փրկիչն. զարուամոլութիւնն զի՞նչ ասացից, զոր և ինքն տէր հատուցանէր զհատուցումն Ինչոխք քաղաքին։

ԺԸ. Յամի և ի թուականութեանն Հայոց ՍԴ (1054—1055) զարթեալ և զեւ օգ դառնաշունչ և մահաբեր ի վերայ աշխարհին Հայոց, վասն զի շարժեալ եղեւ յանթառայն իւրմէ սուլտանն Պարսից Տուղրիլ և գայր ահագին բազմութեամբ սրպէս զաւազ ծովու. և խաղացեալ անթիւ զօրօք հասանէր ի Հայաստան աշխարհն, իջեալ ի քաղաքն որ կոչի Վերկրի, և պատերազմաւ առեալ զքաղաքն, և երկաթի կապանօք զիշխանսն վարէր ի գերութիւն առաջի իւր, և զայլ քաղաքս որով մաշեալ դառն մահուամբ։ Իւ յաբաւցեալ սրպէս զսեաւ ամպս հրայայթս և զայր հասանէր հանդերձ մահաբեր կարկտիւն, և պատեալ զքաղաքն որ կոչի Արձէշ և ասասիկ պատերազմ յարուցանէր ի վերայ քաղաքին զաւուրս ութ. և ի բազմութենէ զօրացն ձանձրացեալ քաղաքացիքն ի դառն պատերազմէն, և այնուհետեւ մեծաւ աղաչանօք գային ի հնազանդութիւն ի ձեռն բազում ընծայիւք ոսկոյ և արծաթոյ՝ ձիոց և ջորոց. և սիրոյ սկիզբն արարին մեծաւ պաղատա-

նոք և ասացին. ՊՎ աշխարհակալ սուլտան, երթ և առ զ քաղաքն Մանծկերտ, և յայնժամ մեք և ամենայն աշխարհն Հայոց քեզ լիցուք ի ծառայութիւն։ Եւ լուեալ զայս Տուղրիլ սուլտանայ, և հաճոյ թուեցաւ նմա ամենայն բանքս այս. և յարուցեալ բազմութեամբ զօրաք իւրով. հասանէր ի քաղաքն Մանծկերտ, և էր որպէս զօձ ելեալ ամենայն չարութեամբ։ Յայնժամ բանակ հարկանէր և պատէր շուրջ զքաղաքաւն, և ի ջանէր ի տեղին որ Ռարագլուխն կոչէին, և անդ օթեւանս արարեալ։ Իսկ յորժամ բաժանէր առաւօտն, հրամայէր հարկանել պատերազմողական գլխոցն. և ահա անդ էր տեսանել զահաւոր օրն և զդառն ի վերայ քրիստոնէից, յորժամ պատեաց զքաղաքն Մանծկերտ. զի յորժամ ձայնք և հնչիւնք պատերազմողականացն փողոց հարկանէր և առ հասարակ ձայնք գոչմանց զօրաց պատերազմողականացն զղաբիսոն առ հասարակ դողացուցանէր։ Իսկ այժմ և վասն քրիստոնէից քաղաքին զինչ ասացից, որք աբիսաբար նահատակեալք միաբան ամենայն բազմութեան քաղաքին, որք կային ընդդէմ անվճարելի պատերազմացն։ Եւ էր զօրապետ քաղաքին Իշխանն Հոռոմոց Վասիլն

որդի Նաբուքոդոնոսորայ (96), որ բարի և տատուա-
ծապաշտ։ Այս զօրացուցանէր զամենայն քա-
ղաքն մեծաւ զօրութեամբ, և առ հասա-
րակ ի հոգս տրկանէր զամենայն քաղաքն՝
զարս և զկանայս զքաջասիրտս, և խոստանայր
ի թագաւորէն ամենեցուն փառս և իշխա-
նութիւնս, և զտիւ և զգիշեր ոչ դադարէր
ի քաջալերել և յորդորել զամենայն քաղաքն։
Իսկ զորք այլազգեացն ոչ դադարէին ի պատե-
րազմելոյ զբաղաքս մաւուրս, և արարին գետ-
նատոր ի ներքոյ գետնոյ, վասն զի այնիւ
առցեն զքաղաքն, և խնայեալ զորք քաղա-
քին փոքրեցին հանդէպ նոցա և կալան զա-
մենայն փոքրոգքն, կալան և զանեերն սուրատա-
նին որոյ անուն Նակոյծամ (Նակէծամ) ասէին,
և հանեալ ի վերայ պարսպին և սպանին
զնոսա. և տեսեալ սուրատանն յոյժ վիրաւո-
րեալ լինէր, և յայնժամ առաքեաց ի Նա-
զէշ և ետ բերել զբաբանն զոր Վասիլ թա-
գաւորն արարեալ էր յազգս Հերայ հնգե-
տասան օղիս (97), ահաւոր և զարմանալի։
Եւ յոյժամ կանգնեցաւ անօրէն բաբանն,
սակաւ ամենայն քաղաքն, և զառաջինն որ ե-
հար՝ երեք այր պահ, և գկրծապահն ի քաղաքն
ձգեաց. և յայնժամ երեց մի յայանեալ ի քա-
ղաքին և ի շտապոյ դրեալ մեքենայ մի ընդդէմ

նորա և յառաջին քարէն հարկանէր զա-
բանն և բեկանէր խոզակն. և զօրացաւ քա-
զաքն, վասն զի ահիւ սրաշարժեցան։ Եւ
յետ աւուրց ամրացուցին այլազգիքն զա-
բանն, և կազմեցին անմերձենալի յամե-
նայն կողմանց, սկսան հարկանել զպարիսպ
քաղաքին մեծամեծ քարամբք, և յայնժամ
ահաբեկեալ դողայր երերալով ամենայն քա-
ղաքն։ Յայնժամ Վասիլն ձայն առեալ առ
ամենայն քաղաքն և ասէր. «Ով որ կարասցէ
ելանել և հրով այրեսցէ զբաբանն, այն առ-
ցէ յինէն տուրս բազում ոսկւոյ և արծա-
թոյ, ձիս և ջորիս, և ի թագաւորէն փառս
և իշխանութիւնս. և եթէ մեռցի յանօրի-
նաց և իցեն նորա ազգական կամ որդի, նո-
րա եղիցի այն ամենայն»։ Եւ յայնժամ յա-
ռաջ եկեալ Յուանգ մի և ասէր. «Ես ելից
և այրեցից զբաբանն զայն, և ահա այսօր
հեղից զարիւն իմ ի վերայ ամենայն քրիս-
տոնէից, վասն զի ես միայն եմ և չունիմ կին
կամ որդիք որ լան զիս»։ Եւ խնդրեաց զբ-
բաւոր և քաջ ձի, և զգեցեալ զրահս և ե-
դեալ սաղաւարտ ի գլուխն, և առեալ
թուղթ կապեաց ի ծայր բռնմբին և երեք
շիշ նաւթ դրեալ ի ծոցս իւր, և թղթաւոր-
ին պատճառանօք յառաջ ելեալ, և առեալ

ազօթս յամենայն հաւատացելոցն, և զԱստուած օգնական կալեալ գնայր զիմաք ի զօրըս այլազգեացն. և զօրք անօրինացն տեսանէին զՀուզիմն և հատանէին զնա թշնամիս, և ոչ ինչ խոսեցան։ Այլ էր ժամ օր հասարակ և ութ կարի յոյժ, և այր իւրաքանչիւր ՆՆՋԷր ի վրանս իւր, և եկեալ Յովանգն առաջի բաբանին՝ զտեղն առեալ ոչ գնայր, և կարծէին ընդ մեծութիւն բաբանին կայ և հիանայ. և ի նոյն ժամայն հանեալ զմեկ շիշն և հարկանէր զբաբանն. և որպէս զարծիւ շուռ առեալ զբաբանն, և նա հարկանէր զմիւս այլ շիշն. և դարձեալ շուրջ եկեալ և նա զերեքումն շիշն հարկանէր ընդ բաբանն, և ահաւոր բորբոքեցաւ հրով, և Յովանգն դարձաւ ի փախուստ։ Այլ զոր ինչ արար՝ տեսին ամենայն բազմութիւն բանակին այլազգեացն և յարձակեցան ընդ հետ Յովանգին, և նա անվնաս հասանէր ի քաղաքն. և բաբանն սատակապէս այրեցեալ եղեւ, և էր ուրախութիւն մեծ ամենայն հաւատացելոցն, և Յովանգն փառաւորեցաւ տրօք ամենայն քաղաքացեացն։ Այլ լուաւ Թագաւորն Մանոմախ, տարաւ զնա առ իւր, և տայր նմա իշխանութիւնդ։ Իսկ սուլտանն հիացաւ յոյժ ընդ գործ

Յովանկին, և թենդրեաց ի Վասլէն զի տեսանիցէ զնա որ արար զայնպիսի քաջութիւնն, զի տացէ նմա պարգեւս, զորս ոչ էստուր յանձն գնալ Յովանկին։ Եւ սուլտանն զայրացաւ յոյժ և դարձեալ փոխելոյ սկիզբն արար, վասն զի ի վայր կործանեսցէ զպարիսպն. և քաղաքացիքն քաջացան ընդդէմ՝ առ ոչինչ համարէին զամենայն մեքենայս նորա, արարեալ երկաթի ճանկ և զամենայն փորոցն արտաքս հանեալ սատակէին։ Եւ տեսեալ սուլտանն՝ լռեալ դադարեաց, և կայր մեծաւ ամօթով։ Յայնժամ առեալ քաղաքացիքն խող մի և եդին ի բաբանն և ձգեցին զնա ի բանակն սուլտանին. և ձայնեալ ամենայն քաղաքն զՀետ և ասէին՝ թէ «Վ՞ա սուլտան, զայդ քեզ կիսն արա, եւ մենք տանք զՍանծկերտ քեզ զգաստ»։ Եւ լուեալ սուլտանն՝ ի բարկութիւն շարժեալ և զբերդոցն գլխատեաց, որ զինքն ի Սանծկերտ բերին. և ինքն մեծաւ ամօթով դառնայր յաշխարհն Պարսից, և ողբմութեամբն Աստուծոյ փրկեցաւ քաղաքն Սանծկերտ յեբեսաց ազգին Թուրքաց։

Հթ. Դարձեալ ի թուականութեանս Հայոց ամի ՇԴ (1055—1056) մեռանէր թագաւորն Հռոմոց Սոնոմախ։ Սա կացեալ

յաթոռ թագաւորութեանն Հռոմոց զամս չորեքտասան, և թագաւորեաց փոխանակ Նորա քենի Նորա Կիւրա-Թոտոն, այն որ անուանեցաւ Եղեխտոռ (98), և էր քոյր Կիւրա-Օջի, որքասէր և կոյս և յոյժ առաքինի. և հրամայեաց ամենայն արարածոց խաղաղութիւն առնել և այրեաց և գերեաց. և արար դարձ ամենայն զրկելոց եւ իրաւունս, և զամենայն բանդարգեալսն հրամայեաց ազատել. և սա եհան ի բանդէն զիշխանսն Հայոց զորդիսն Հաբելի՝ զՀարզական եղբարսն, եհան ի կզուջոյն և մեծաւ փառաւորութեամբ արձակեաց զնոսա ի հայրենի աշխարհն իւրեանց ի բերդն Արկնի. և պատուիրեաց այլ մի մեղանչել։ Եւ յայնմ ամի փոխեն զՊեռոս կաթողիկոսն, և գայր փոխանակ Նորա Մեղեսանոսն՝ այր բարի և անուանի, և էր ողորմած այրեաց եւ գերեաց, շինող աշխարհի և ամենայն փառաւորութեամբ զարդարեալ։ Եւ կացեալ յաթոռ թագաւորութեանն Կիւրա-Թոտոնն զամս երկու և ամիսս երեք, և փոխեցաւ առ Քրիստոս բարի խոստովանութեամբ. և նստաւ յաթոռ թագաւորութեանն Միհրայալ ալեւորն զամիսս եւթն։

Եւ յաւուրս յայսոսիկ եղանէր իշխան ոմն ի

ատանէն Հռոմոց և անուն նորա Կոմանոս. սա յարուցեալ ահագին բազմութեամբ և գայր ի վերայ Կոստանդինուպօլսի, և բանակ հարկանէր յերզ ծովուն Ովկիանոսի յայսկոյս, և մեծաւ բռնութեամբ խնդրէր զաթոռ թագաւորութեանն Հռոմոց։ Այս եղև ի թուականութեանս Հոյոց ՇԷ (1056—1057) ամին։ Յայնժամ թագաւորն Միխայել արար ժողով զամենայն աշխարհն արեւմտից, և զամենայն բազմութիւնն զօրաց իւրոց անցուցանէր ընդ Ովկիանոս ի Խաւսպօլիս (99), և գային ի վերայ Կոմանոսին. և յայնմ աւուր խմբեցաւ պատերազմ մեծ և ահաւոր ի վերայ քրիստոնէիցն. վասն զի բախէին զմիմեանս ուժգին կոտորածով և հեղոյր արիւն բազում հաւատացելոց ի վերայ երկրի։ Իսկ յայնժամ Կոմանոս որպէս զառիւծ գոչեաց մեծաւ զայրացմամբ, և հասեալ բեկանէր զզօրսն թագաւորին Հռոմոց. և առ հասարակ սրով ի փախուստ դարձուցանէր զնոսա. և անողորմ ի սուր սուսերի կոտորեաց զամենայն զօրս Հռոմոց, և փակեցին զնոսա առհասարակ յերզ Ովկիանոսի մեծի ծովուն. և որպէս զմարախ ի հողմոյ թմբեալ, այնպէս թմբեալ լինէին զօրքն Հռոմոց ի սասարիկ պատերազմէն, և ի Ովկիանոս լցեալ

մեռանէին. և բազումք այն էին որ դառն
սրով ընկալան զմահ։ Եւ յաւուրս յայնմիկ մե-
ռան 'ի զօրացն Հռոմոց արք պատերազ-
մողք հարիւր և հնգետասան հազար. եւ
զամենայն իշխանան առհասարակ կալաւ 'ի
գերութիւն (100)։ Յայնժամ իշխանքն որ
'ի պաղատան էին, իբրեւ տեսին զամենայն
կառաբածն բարկութեանս եւ այնչափ ա-
ղեանց հեղմանս, խորհեցան տալ զաթոռ-
թագաւորութեանն Կոմանոսի, և վասն զի
մեծ սուգ էած առ հասարակ ազգին Յու-
նաց. և յայնժամ եկեալ պատրիարգն և ա-
մենայն իշխանքն Կոստանդինուպօլսի առ
Կոմանոսն, և արարին ընդ նմա բազում եր-
դումն, և տարան նոտուցին զնա յաթոռ
թագաւորութեանն Հռոմոց, և ապա եղեւ
խաղաղութիւն աշխարհին Յունաց։ Բայց
աւերումն և յափշտակութիւն բազում ե-
ղև յերկիր յայնմ ամին, զի Կոմանոսին դեհն
և Միխայլն զմիմեանս աւերէին, և այսպէս
բազմացաւ ներգործեցաւ մինչեւ հաստա-
տեցաւ յաթոռ թագաւորութեանն Կոմա-
նոսն. և յայնժամ հանեալ հրովարտակ ընդ
ամենայն երկիր, և արար խաղաղութիւն
աշխարհի։ Իսկ Կոմանոսն առաւել մեծա-
բեաց զայնոսիկ որք միամիտ կացին 'ի վերայ

Սիխայլին, քան զայն որ յիւր վերայ նահատակեցան։ Եւ եղեւ յառաջ քան զայս գայլին իշխանքն Հռոմոց յօգնութիւն Միխայլին, Պիշօնիան և Խպարիան. և յորժամ հասան ի Ռերի (101), լուան եթէ Կոմանոսն թագաւորեաց, և ի գիշերի փախեան առ հասարակ և ասէին ցմիմեանս, եթէ Պասլատ ի Ռերձերոյ դառնայ։ Եւ յետ աւուրց ինչ գնային առ թագաւորն, և առաւել մեծարեաց զնոսա։ Եւ հրամայեաց թագաւորն Կոմանոս գեկան զարկանել յիւր անուն, և զթուրն հանել ի վերայ ուսոց իւրոց, եթէ՝ «Թրով իմով առի զանթոռ թագաւորութիւնս»։ ընդ որս մ Ասուած ոչ հաճեցաւ ընդ բանս այս, նաեւ այլ եւս պէս պէս գործ նենգութեան գործեաց Կոմանոսն ընդ քրիստոնեայս։ Եւ յետ աւուրց զօրաժողով արարեալ ահագին բազմութիւք և կամեցաւ յարուցանել պատերազմ ընդ ազգն Պանծինկայն. և երթեալ անցանէր ընդ մեծ գետն Ցօնաւիս, և գնայր խաղայր առ ապականել զամենայն արեւմուտքն, և ուր հասանէր՝ որպէս զչար գազան մռմռայր ի չարութենէ իւրոյ, և ընդ որ անցանէր՝ բազում արիւն տայր հեղուլ. և եղեւ կոծ մեծ յամենայն արեւմուտս, եւս առաւել ի

յաշխարհն Իռուլզաբաց։ Իւ էր յաւուրսն ամառնային և հասանէր աստուածասաստ բարկութիւնն ի վերայ զօրացն Կոմանոսին, զոր ոչ բաւէ բերան զմեծ կատարածն արկանել ընդ գրով, զոր ըստ արժանեացն ընկալաւ։ Իւ զի ահա ելանէր ամպ յարեւմըտից և գայր ի վերայ բանակի Կոմանոսին. և էր ամպն սեաւ և ահաւոր տեսլեամբ, որ ոչ ոք համարձակէր հայել ի նա. և եղեւ ճայթմունս և որոտմունս, և հրացայթ փայլատակմունս յարուցանէր, և յայնժամ սկըսաւ ի կարկուտս մեծամեծս, և բախեալ հարկանէր զբանակն և աստկապէս դիպէր ամենայն զօրացն. յայնժամ նոքա մի առ մի փախեան և ելս իրացն ոչ գտանէին։ Իւ տեսեալ Թագաւորն՝ լցաւ բարկութեամբ և յոչ կամաց դարձաւ որպէս փախստական, և ամենայն զօրքն առ հասարակ ցրուեալք լինէին ընդ լերինս և ընդ դաշտս. և անդ էր տեսանել զմեծ կոտորածն զոր կրեցին ի բաղում հարուածոցն, և անթիւք կորեան, հայր յորդւոյ եւ որդի ի հօրէ, եղբայր յեղբօրէ, և Թագաւորն երեք արամբք կուրուսեալ եղեւ մինչեւ ի Տօնաւիս գեան, ապա եղեւ դառեալ։ Իւ յորժամ հանդէս արար զօրաց իւրոց, մեծ մասն զօրաց կս-

բեալ էին յերկնից բարկութենէն։ Իսկ յա-
զագս ձիոց և ջորւոց, ուկւոյ և արծաթոյ
և այլ կարասեաց աւելորդ է ասել, և կամ
զամենայն արք պատերազմի։ Իսկ այնուհե-
տեւ գիտացեալ Կոմանոսն, եթէ այս ամե-
նայն աստուածաստ բարկութիւն վասն ի-
մոյ յանցանացն եհաս 'ի վերայ քրիստոնէից,
զի մեղաք խմովք բարկացուցի զԱստուած. և
եկեալ 'ի Կոստանդինուպոլիս եւ անկեալ
առաջի Աստուծոյ խնդրէր զթողութիւն
մեղաց իւրոց զոր արար. և այնուհետեւ
խնդրէր ելանել յաթոռոյ թագաւորութենն
և մնանել 'ի կարգ ապաշխարութեան պա-
հօք և արտասուօք։

2. Իսկ եղեւ 'ի թուականութեանս ՇԽ-
յոց ՇԷ (1058—1059) [102] ամին թագաւո-
րեցոյց Կոմանոսն զՏուկիծն, զի յաղագս այ-
նքր գործոյն զոր յառաջն Ճառեցաք, գիտա-
ցեալ թէ ոչ հաճեցաւ Աստուած ընդ թա-
գաւորութիւնն նորա վասն անմիզ արեանցն
զորս եհեղ յազգէ հաւատացելոցն. և ե-
ղեւ զի մէկ կողմն անձինն թուլացաւ, և յոր-
ժամ ետես զաստուածատոստ բարկութիւնն
'ի վերայ անձին իւրոյ, կամեցաւ զչենուլ
զգեստս կրօնաւորութեան և միաւորել 'ի
վանք կրօնաւորաց։ Իսկ յայնժամ առաքեաց

'ի կողմն Տաճկաց 'ի քաղաքն Ուռհայոյ, և բերեալ զսուկ քաղաքին Ուռհայոյ որում անուն էր Տուկիծ, վասն զի 'ի մեծամեծաց ազգէ էր, և առեալ զԹագն դնէր 'ի գլուխ Տուկիծին և երկիրպագանէր նմա, և նստոյց զնա յաթոռ Թագաւորութեանն, և ինքն դնայեալ յանապատս և եղեւ վանական։ Իսկ Տուկիծն բռնակալեալ 'ի վերայ Թագաւորութեանն Յունաց և զամենայն անհաւատսն ածէր 'ի հաւանութիւն. եւ եղեւ ուրախութիւն 'ի վերայ ամենայն տանն Յունաց վասն Տուկիծին։

ՁԱ. Յայսմ ամի մեռաւ ամենագովելին տէր Պետրոս կաթուղիկոսն Հայոց, որ գլուխ էր մարմնոյ Հայաստանեայց և պարիսպ սրբոյ եկեղեցւոյ։ Սա կացեալ յաթոռ հայրապետութեան զամս քառասուն և երկու և յաւելաւ առ հարս իւր. և ձեռնադրեաց յաթոռ հայրապետութեանն զերանելին ըղտէր Խաչիկ, որ էր քուրդի իւր և լցեալ ամենայն սրբասնութեամբ առաքինութեամբ և բարեհամբաւ անուամբ, զարդարեալ շնորհօք առաքելական և մարգարէական։ Իսկ Թադէոսին զոտէր Պետրոսն 'ի քաղաքն որ կոչի Սեբաստիա, 'ի վանքն սրբոյ Նշանին, հանդերձ բազմութեամբ։

Լ։ Ինոյն Թվականութեանն Հայոց եր-
կրորդեալ յարձակեցան ազգ անօրինաց ի
վերայ հաւատացելոց Քրիստոսի. և ահա
եղեալ գայր ի Պարսից նահանգէն ամիրա ոմն
մեծ և հզօր՝ Դինար անուն, և զօրօք բազմ
մեր գայր անկասկած դառնաշունչ բռնու-
թեամբ և նենգաւոր սրտիւ ծածկեալ զչա-
բութիւն իւր։ Լ։ անցանէր անվնաս ի բա-
զում տեղեաց, և խաղայր գնայր և հասա-
նէր ի հռչակաւոր քաղաքն որ անուանեալ
կոչի Անլոտինի, վասն զի ի բազում ժամա-
նակաց մատնեալ էր քաղաքն Պարսից՝ թէ ան-
չափ է հարստութիւն ոսկւոյ և արծաթոյ՝
ականց և մարգարտաց և դիպակաց։ Լ։ էր
քաղաքն անպարիսպ, և յորժամ գայր յա-
ռաջ զհարաւ (103) էառ և կոտորեաց առ
հասարակ զնոսա սրով։ Լ։ գայր անցանէր
ի Անլոտինի. և եղեւ առաջնորդ զօրացն ա-
նօրինաց սրգին Խարտին միաբանեալ ընդ
նոսա. և էր յաւուրսն ձմերայնոյ, ի մուտն
յիսնակին յորժամ պատեաց զքաղաքն Անլ-
տինի (104)։ Լ։ վասն հռչակաւոր անուանն
որ ընդ ամենայն աշխարհն Պարսից տարա-
ծեցաւ անուն գեղեցկութեան նորա. յայն-
ժամ սրպէս սեաւ ամպ շրջանակաւ պա-
տեաց զամենայն քաղաքն առ հասարակ. և

տեսեալ քաղաքացեացն զահաւոր բարկու-
թիւն, և միաբան 'ի փախուստ դարձան ոբք
և կանայք, և ոչ գոյր տեղի փախուստեան։
Յայնժամ հատաւ սէր բարեկամաց և յոյս
կենաց յամենայն մտաց, և 'ի դառնաշունչ
բարկութեանցն մուռանայր հայր զորդի՝ և
որդին զհայր. մայր զդուստր՝ և դուստր ըզ-
մայր իւր լայր, եղբայր առ եղբայր՝ և սիրելիք
առ սիրելիքս։ Յե յայնժամ լայնատարած
դաշտք քաղաքին առ հասարակ 'ի փախուստ
երեալ, և բազմութիւնքն գնային ընդ մէջ
թշնամեացն. և տեսեալ զթշնամին՝ տակաւ
մի զտեղի առին և հիանային ընդ բազմամ-
բոխութիւն քաղաքին, զի էին որպէս զաւաղ
ծովու անթիւ բազմութեամբ. և ոչ հա-
մարձակէին այլազգիքն մինչեւ փախեան քա-
ղաքացիքն։ Յայնժամ յարձակեցան սրով 'ի
վերայ քաղաքին, և ամենայն սուրբ նոցա առ
հասարակ 'ի գործ արեան սկսեալ մսեցան. և
առ տակաւ ժամ մի ըստ արեամբ քաղաքն
ամենայն. և ծփայր ծայրէ 'ի ծայր արեամբ քա-
ղաքն Մելտենի, և ոչ օք էր որ ողորմէր ծե-
բոց կամ տղայոց։ Յե անդ էր տեսանել մարդ-
մինք փառաւորք և պատուականք որք ան-
կեալք և թաւալեալք կային 'ի մէջ արեան-
ցն, և տղայքն 'ի գիրկս մարցն մասն առ

ման հարեալ լինէին, և արիւն և կաթն ընդ միմեանս միաւորեալ խառնէցան։ Եւ ամ կարէ ի գիր արկանել զաստուածատաստ բարկութիւնն զոր յաւուր յայնմիկ կրեաց քաղաքն Մելտինի. վասն զի փոխանակ քաղցրոյ ցօղոյն՝ արիւն ծածկեալ ուներ զամենայն բոյս գաղարոյ անդաստանաց։ Եւ յետ այսչափ կատարածի արեանցն եւ գերութեանց զոր վարէր առաջի իւր ի գերութիւն կանայս պատուական և գեղեցիկս, և մանկունս և աղջկունս վայելուչս, և անհամար գանձս ոսկւոյ և արծաթոյ անթիւս. և յարուցեալ խաղալոյ ուրախութեամբ եւ գայր յաշխարհն Պարսից, և անցեալ ընդ Եփրատ գետն արար ձմերոց ի Հանձիթ։ Եւ յայնժամ զօրքն Հոռոմոց յարձակեցան զհետ Թուրքին, և ի հասանել նոցա ոչ համարձակեցան պատերազմիլ ընդ նոսա, այլ դարձան խաղաղութեամբ ի Հռոմս։

Իսկ ի ժամանակս գարնանային հասեալ՝ գնաց զօրքն այլազգեաց ի գաւառն Տարօն, որ եւ բռնակալեալ առ ստորոտս լերինն Տաւրոսի մերձ ի Սասուն։ Եւ լուեալ զայս իշխանին Հայոց՝ զօրաւոր և քաջ որդին Մուշեղայ Թոռնիին, և ժողով արարեալ զամենայն Սասուն և հասանէր ի վերայ զՕ

բայն այլազգեաց։ Յայնժամ զօրք այլազգեաց-
ցին հնդեցուցին զփողս պատերազմին և մի-
աբան եղեն ի պատերազմ։ Իսկ եղեւ օրն այն
մեծ և սքանչելի, վասն զի որպէս զլոկս ա-
ռաւեալս զմիմեանս բախէին յերկոցունց կող-
մանցն. և յայնժամ գոչեաց քաջն Թոռնիկ,
և ձայն տուեալ աջոյ թեւին իւրոյ՝ և հա-
սանէր ի վերայ ձախոյ թեւին այլազգեացն
և պատառէր զնոսա մեծաւ յաղթութեամբ,
և դարձաւ հայեցաւ ի վանքն սրբոյ Կարա-
պետին և ուժգինս ձայն արձակեալ ասէր.
«Զլակոյ Վանք, սուրբ Կարապետ, հասիր
մեզ յօգնութիւն, և արա զօրս զայս երե-
ւելի ի վերայ հաւատացելոցս». և միաբան
ձայն տուեալ միմեանց և յարձակեցան ի վե-
րայ այլազգեացն, և առին զառն և զամե-
նայն աւարն, և դարձուցին զամենայն գե-
րութիւնն. և մնացեալքն այլազգեաց մազա-
պուրծ զերծեալք ամօթով գնացին յաշխար-
հին Պարսից։ Իսկ քաջն Թոռնիկ մեծաւ
ուրախութեամբ դարձաւ ի Սասունք՝ գո-
հանալով զՍտուծոյ որ ազատեաց զանթիւ
բազմութիւնն զՍելջինոց քաղաքին ի ծա-
ռայութենէ անօրէն ազգին Պարսից։ Այս
նշանակս վասն Հայոց աշխարհաց էր։

ԶԲ. Դարձեալ ի յայսմ ամի և ի նոյն

ձմերային եղեւ նշան ահաւոր և հրաշալի, սոսկալի և մեծ բարկութիւն ի վերայ քրիստոնէից. վասն զի յառաջագոյն երեւեալ գուշակ անցման հաւատացելոց Քրիստոսի, զի որպէս ի պիղծ գիշէն յառաջագոյն հոտ զազրութեան գայ, այսպիսի օրինակաւ յառաջ քան զկատարածն նշանքն չարաչար երեւէին ի վերայ աշխարհին՝ դառնաշունչ հողմն հարաւոյ։ Եւ արդ ահա յաւուր միում յորժամ լուսանայր առաւօտն, և ելանէր ամենայն մարդ ի տանէ իւրմէ, տեսանէին ի պարզոյ ի վերայ ցամաք գետնոյն կարմիր ձիւն եկեալ, և էր լցեալ զչորս կողմն աշխարհիս ի յարեւելս և յարեւմուտս, ի հիւսիս և ի հարաւ. և սկիզբն արար գալոյ ի յաւուր երկու շաբաթին, և զաւուրս վաթսուն անգադար եկեալ, ի գիշերն գայր և՝ ի ցերեկն հոսէր ընդ երեսս երկրի, բայց կարմիր ձիւն մէկ օր եկեալ։ Եւ յայն ամին եղեւ անցումն ամենայն չորքոտանեաց՝ անասնոց եւ գազանաց և թռչնոց, և ի սաստիկ բարկութենէն ոչ գտանէին կերակուր իւրեանց, ի չէն առ հասարակ դէմ արարեալ նոցա, և յիւրեանց թշնամին ապաւինէին։ Եւ յայնժամ անխնայ ամենայն ոք կոտորէր զնոսա անողորմաբար. զի անա-

սուն՝ ջրեր ջրեր լինէին, և թռչունքն եբրամ եբրամ 'ի փողոցս և 'ի տուն մտանէին, և անդ էր տեսանել զահաւոր կատարածն 'ի վերայ անասնոց և թռչնոց վասն մեղայ արդեւոց մարդկան։ Իսկ որ ողորմածքն էին՝ 'ի տուն իւրեանց կերակրէին զնոսա զամենայն աւուրս ձմերանն և արձակէին ըստ նոսա խաղաղութեամբ. և առ հասարակ ամենայն որ 'ի դութ ողորմութեան դառնային 'ի վերայ անասնոցն։ Այլ մեծ ամիրայն Ալբոսաղ որ նստէր 'ի քաղաքն Մուֆարկին, քառասուն քուռ ցորենոյ և դարեւոյ, կորեկոյ և զայլ ամենայն ընդոց ցանել հրամայեաց ընդ դաշտս և ընդ լերինս վասն թռչնոցն, և խոտ և յարդ անչափ յաղագս անասնոցն, և այսպիսի օրինակաւ բազում անասունք և թռչունք ապրեցան 'ի բարկութենէ անտի։

Զ. Յայսմ ամի եղեւ սով սաստիկ ընդ ամենայն երկիր, և բազումք մեռան չարաչար և դառն մահուամբ յերեսաց սովոյն, վասն զի 'ի սաստկութենէ ձեռանն անձրեւ ոչ եկն յերկիր, և վաստակ ոչ եղեւ, եւ բազում պտղաբերք չորացան. և եղեւ 'ի փոխել միւս այլ տարւոյն՝ եղեւ լիութիւն և առատութիւն ամենայն կերակրոց, վասն

զի մէկ մոթն հարիւր վաստակեաց։

ԶԴ. Իսկ ի վերանալ Թուականութեան Հայոց ի յամի ՇԸ (1059—1060), ժամանեալ հասանէր արհաւիրք և կատարածք մահաբերք ի վերայ հաւատացելոց Քրիստոսի, զորս ոչ կարեմք պատմել զոր ինչ գործ գործեցաւ յամիսս այսմիկ ազէտ ահաւոր դառնութեան. վասն զի շարժեցաւառ հատարակ ամենայն տունն Պարսից, և յարուցեալ գայթն ահագին բազմութեամբ առանց համարոյ որպէս զաւազ ծովու, եւ խաղայր գայր հասանէր ի վերայ հաւատացելոց տանն Հայոց, և բազում գաւառք մաշեալք լինէին սրով և գերութիւն յերից ամբարիշտ գազանացս այսոցիկ, որք եկան ի տիւանէն Ցուզբիլ սուլտանէն ամիրայք երեք՝ Սամուխն և Չմուրքաքին և Գիճաճիճի, որք չարք և արեանարբուք առաւել քան զգազանս և սեւագունդ զօրք և մահաբեր նշանօք հասանէին ի բազմամբոխ և նշանաւոր քաղաքն Սեբաստիոյ, և մի ընչալով որոտային, կամեցան զմեծատաստ բարկութիւն իւրեանց ածել ի վերայ հաւատացելոց Քրիստոսի, և մանաւանդ խորհեցան ի միտս իւրեանց ձերբակալ առնել զարդիսն Սենեքերիմայ զարդիք Թագաւորին

Հայոց՝ զԱյտոմ և զԱպուսահլ, զորս յառաջագոյն նոցա լուեալ զգալ զօրացն պլաղգեցայ՝ փոխեան ի Խաւատանէքն, և այլ բազում իշխանքն գնացին զհետս. և յօր բաբելեկենդանի Վարդավառին պատեալ զքաղաքն բազմութիւն զօրացն . . . նաց եւ պաշարեաց առ հասարակ շուրջանակի զաւեանն քաղաքն, և սուր ի գործ մոռեալ աւեանն զօրացն, և անհամար մարմինք չաբաշար խոցմամբ ի յերկիր թաւալէին, եւ հասեալ արեանցն ընդար զերկիր, որ և տեսողացն սոսկալի երեւէին. վասն զի որպէս փայտ անտառի կուտեալ լինէին մարմինք պատուական ի վերայ երկրի, և արեամբ ծածկեալ եղեւ հող երկրին ի բազմութենէ դիականցն, և զի անպարիսպ էր քաղաքն Աբեատարա։ Իսկ այլազգիքն զառաջինն ոչ համարձակեցան մնանել ի քաղաքն, զի տեսանէին զբազմութիւն եկեղեցեացն սպիտակս և գունդ մոլեթաձեւս, գիտացին եթէ վրանք զօրացն իցեն, և իբրեւ գիտացին՝ յայնժամ զաստուածատատ բարկութիւնն ածին ի վերայ քրիստոնէիցն, անողորմ եւ անխնայ կոտորեցին զայնքան բազմութիւն քաղաքին, և անթիւ և անհամար աւարաւ և գերութեամբ արանց և կանանց, մանկու-

նոս և աղջկունս վաբէին 'ի գերութիւն, և այնչափ գանձս ոսկւոյ և արծաթոյ՝ ականց և մարգարտաց և դիպակաց յափշտակեալ հանին 'ի Աեբաստիայ, և վասն զի տուն եղեւ նա Հայոց թագաւորացն։ Եւ էր օրն այն գառնաշունչ և չար 'ի վերայ բնակչացն քաղաքին, վասն զի առ սակաւ մի ժամ աւեր եղեւ քաղաքն, և դաշտն արեամբ լցեալ. և գետն որ անցանէր ընդ մէջ քաղաքին՝ փոխանակ յստակ ջրոյն 'ի յարիւն դարձուցանէր զգոյնն։ Եւ բազումք այն էին որ հրով այրեցան. և ահա անկեալ կային բազում իշխանք և մեծք և փառաւորք՝ մահաբեր բոցմամբ 'ի մէջ մաքուր և պատուական դիպակացն արեամբ ծածկեալք լինէին, և 'ի ապիտակութենէ մարմնոցն որպէս զաստեղս փայլէին։ Օ՛ն և վասն քահանայիցն և սարկաւագացն ասացից, և յաղագս վեց հարիւր եկեղեցեացն որ 'ի նմա կային, ամենայն հրով վճարեցան։ Բազում կոյսք և հարսունք և փառաւոր տիկնայք վարեցան 'ի գերութիւն յաշխարհն Պարսից, և սակաւ ժամ մի եղեւ Աեբաստիա իբրեւ զխուզ մի այրեցեալ հրով։ Եւ կացեալ զօրք այլազգեացն 'ի Աեբաստիա աւուրս ութ, և խաղաց գնաց յաշխարհն Պարսից անթիւ և

անհամար գերութեամբ։

Որ կարացէ մի ըստ միոջէ պատմել զկո-
րուստ բարկութեանն եւ զլոց ապաշաւա-
նաց տանս Հայոց, զորս յան . . . . . .
. . . . . զորացն թուրքաց կրեաց,
յանտիրութենէն, ի սուտ պահապանացն,
ի տկար եւ ի թուլամորթ վատ ազգին
Յունաց. վասն զի մի առ մի քակեալ հանին
զզօրականսն ի տանէն Հայոց զորս հանին
յարկաց և ի գաւառաց, և բարձեալ խա-
փանեցին զամբոխ թագաւորութեանն Հա-
յոց. քակեցին զգանձ պահպանութեան զօ-
րացն և զօրավարաց. և ազգն Հոռոմոց իւ-
րեանց անուն քաջութեան զանդարձ փախ-
չելն արարին պարծանք. նմանեցան վատ
հովուացն, զի յորժամ զգայլն տեսանէ՝
փախչի։ Սակայն Հոռոմք այն ջանս ջանա-
ցան (105), որ լուր զպարթևսպ ամբութեան տա-
նըս Հայոց քակեալ կործանեցին, և զՊարսիկ
կրքք ի վերայ դարձեալ յարձակեցին սրով, և
զամենայն յաղթութիւնն իւրեանց համա-
րեցին. և ինքեանք անպատկառելի երեսօք
կուրտ զօրավարօք և ներքինի զօրաք զՀայք
պահել ջանային, մինչ և Պարսիկք անտէր
տեսին զամենայն արեւելք, և յայնժամ
մեծաւ զօրութեամբ զօրացան այլազգիքն,

որ ի մէկ տարւոյ հասին մինչեւ ի դուռն Կոստանդինուպօլսի, և առին զամենայն աշխարհն Հռոմոց, զքաղաքս ծովեզերայց և զկղզիս նոցա, և արարին զազգն Յունաց որպէս զանտարկելաւք ի ներս ի Կոստանդինուպօլիս։ Եւ յորժամ առաւ Հայք ի Յունաց, արդեարաւ ամենայն չարութիւնն Հռոմոց յազգէն Հայոց։ Եւ զկնի այսորիկ հնարեցան այլ կերպիւ պատերազմ յարուցանել ընդ ազգն Հայոց. եւ նստան ի քընութիւն Հայոց, և այսու ատեալ անարգեցին զՀանդէս պատերազմի և զօր մարտի, և զկռիւս և զաղմուկս յեկեղեցի Աստուծոյ կարգեալ հաստատեցին։ Ի Պարսից պատերազմէն յօժարութեամբ փոխչին, և զամենայն ճշմարիտ հաւատացեալքս Քրիստոսի ի հաւատոյն Ջանան խափանել և խախտել։ Վասն զի յորժամ այր քաջ և զօրաւոր գտանէին, զաչսն խաւարեցուցանէին և կամ ի ծով ձգեալ խեղդամահ ատտակէին. և այն էր փոյթ յօժարութեանց նոցա, որպէս զամենայն իշխանսն Հայոց և զքաջ զօրականսն հանին յարեւելից և բերին բնակեցուցին ի Յոյնք. և յայնժամ ինքեանք ըզմանկութիւնս արութեանն ի կուրտս փոխարկեցին. և փոխանակ լեկուր զրեհայն

զոր քաջք զգենուին, Նոքա զծոց հանդերձիցն լայն և երկայն արարին. և փոխանակ պողվատ սաղաւարտին պէլեւտառ (106) եդին. և փոխանակ երկաթապատ թիկանցն՝ զիոզպատն ի վերայ ուսոցն լայն արարին. և որ պէս զկանայս հեզ և ծածուկ խօսին՝. քաջ և մանուկ (107) հանապազ կորուստ խորհին, որ և ի ձեռաց սոցա ամենայն հաւատացեալք մատնեցան ի գերութիւն յաշխարհն Պարսից։

Զե. Յայսմ ժամանակիս Թագաւորն Տուկիճ խորհեցաւ խորհուրդ չար, և կամեցաւ բառնալ և խափանել զաթոռ հայրապետութեան սրբոյն Գրիգորի ի տանէն Հայոց. և որպէս ասացաքս, յարուցանէր հալածանս, և առնէր քննութիւն պէսպէս յաղագս հաւատոյ Հայաստանեայց ազգիս. մանաւանդ յորժամ մեռաւ տէր Պետրոս, յայնժամ յարեան Հոռոմք ի վերայ սուրբ Աթոռոյն, և կամեցան եղծանել զնա, և կամեցան առ հասարակ դարձուցանել ըզՀայս ի հաւատն անօրէն Քաղկեդոնի։ Եւ յայսմ ժամու արարին Հոռոմք խնդիր բազմութեան գանձուցն ոսկւոյ և արծաթոյ տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսի, և զքաղաքն ի խուշտանգանս մատնեցին ի Սեբաստիա, և զօձեալն ի յաթոռս հայրապետ-

տուԹեանն զտէր Խաչիկ հանդերձ եպիսկոպոսաք տարան ի Կոստանդինուպոլիս և զամենագովելին զտէր Լշղնսէ, և պահեցին ըզնոսա յաքսորս զամս երիս, և յաւուրսն յայնոսիկ բազում վտանգք գործեցան ի հաւատս Հայոց։ Լչ. յայնժամ Թագաւորք և իշխանք Հայոց, Գագիկ անեցի և Ա-տոմ և Աղուսահլ որդիք Մենեքերիմայ մեծաւ աշխատուԹեամբ ջան յանձինս կրեցին և հաղիւ կարացին հանել զնոսա. և զկնի այսմ ամենայն եղելոց նստուցանեն զաԹոռ հայրապետուԹեանն ի Թաւրիզ. և կացեալ անդ զամս երիս, և ընդ ամենայն վեցամ կալեալ զաԹոռ հայրապետուԹեանն տէր Խաչիկ։

ՁԶ. Իսկ ի գալ հասանել մերոյ ԹուականուԹեանս ի յամս ՇԺԱ (1062—1063), հարուածք չար եւ դժնդակ դառն օգով սիւռեաց տարածեցաւ հաւատացելոց Քրիստոսի։ Օ. ի եղեւ յաւուրսն աշնանային և յամսեանն արեգ՝ բարկուԹիւն շարժեցաւ ի դրանէն Պարսից, և գային աքք երեք մեծք և երևելիք ի տիւանէն անտի Տուղրիլ սուլ-տանէն, որք են այսոքիկ, Սլար—Խորասան (108) և Ամմ և Խուզիլ. և սոքա քաղում ա-ռեամբ հեղմամբ գային ի վերայ ազգին

քրիստոնէից. և հասեալ նոցա բազում զբ-
ոքք ի գաւառն որ կոչի Պաղին, և սրով
սրտմտութեամբ հեղաւ բազում արիւն ի
հաւատացելոցն, և գերեցաւ ամենայն գա-
ւառն Պաղնայ։ Յե անտի յարուցեալ գա-
յին որպէս զոճ թիւնաւոր, և հասանէր ի
վերայ գաւառին Թէվլմոյ Աբկնայ, և առանց
պատրաստութեան գտանէր զամենայն գա-
ւառն։ Յե եղեւ յորժամ տեսին զամենայն
երկիրն յամրութիւն, եւ կային ամենայն
գաւառն ի մեծ ուրախութիւն։ Իսկ
նոքա որպէս գազանարբու գայլք, կամ
իբրեւ կատաղի շունք սրով անողորմ յար-
ձակեցան ի կոտորել զամենայն գաւառն
առ հասարակ։ Յե էր երկիրն ամենայն
բոլոր շէն՝ լցած մարդով և անասնով, և էր
բազում ամբոխ յամենայն գաւառն, և յա-
ղեգի ջրս յաւուր շաբաթու յութերորդ
ժամու լցաւ ըմբնաւարած դաշն արեամբ
և գերութեամբ և անողորմ կոտորածով՝
զոր ոչ կարեմք պատմել. բազում և անթիւ
այն էին որ կրակով այրեցան, և յամենայն
գաւառն ոչ ոք էր որ կարաց ղերծանել
յերեսաց սրոյն. և յաւուրն յայնմիկ բա-
զումք հասին ի մարտիրոսութիւն։ Յե ըզ-
կնի անհամար գերութեանն և անհամար

կատարածոյն, տասցից և զՀնչմարիտ քահանայիցն Աստուծոյ՝ զԲրիստափոր և զորդիս նորա զԹոմաս և զՅոհաննես, և նոքա հանդերձ ամենայն ժողովրդեամբն մարտիրոսացան։ Այսպէս զի յորժամ տեսաւ զաղմուԹիւն զօրացն այրագործաց, ժողովեաց զամենայն գիւղն յեկեղեցին՝ զարս և զկանայս հանդերձ տղայօքն. և ինքն սկիզբն արար պատարագին Աստուծոյ, եւ հաղորդեցոյց առ հասարակ զամենայն ժողովուրդն։ Եւ զորք անօրինացն պատեալ շուրջ զեկեղեցւովքն, և գաւազ հաւատացելոցն որք հաղորդէին՝ ելանէին մի առ մի առ արեւանարբուս գազանսն, և նոքա սրախոցեալէին զհաւատացեալսն Բրիստոսի. և յորժամ մնացեալ լինէր ինքն և որդիքն իւր, ծանր կրկնեցին Աստուծոյ և գոհանալով համբուրեցին ըզմիմեանս, և ելեալ նոցա ընկալան զմարտիրոսական մահն բարի խոստովանութեամբ ի Յիսուս Քրիստոս։ Եւ յորժամ լուաւ զարտութիւն կատարածիս ամիրայն որ նրստէր ի քաղաքն Ամիթ, որդին Նորբոտայ, գրեաց առ Ալար—Խորասանն և հաստատեաց ընդ նա սէր, և զամենայն գերութիւնն հրամայեաց ի գաւառն իւր ծախել, վասն զի էր բարի և ողորմած ի վերայ քրիստոնէից աղ-

գին, և եհան հրամարտակ ընդ ամ երկիրն զի գնեսցեն զամենայն գերութիւնն. և ա-
բարին այնպէս։ Լու յորժամ Ամիթ ի ծախ բերէին, բազու�զի դուռն քաղաքին մար-
տիրոսացան, և տեսանէին լոյս ֆիլեալ յեր-
կնից ի վերայ նոցա հրակերպ տեսլեամբ։

Արդ ով կարասցէ պատմել զկատարածս
և զանցումն կատարածիս ասեն Հայոց, զի ա-
րեամբ ծածկեցաւ առ հատարակ ամենայն
սարարածք, ամբակք երիսարաց նոցա մաշե-
ցին զերիսս և զքուրս, որ և ի բազմու-
թենէն դիականցն ցաւ ամենայն տուն
Պարսից, և արեամբ արբեալ եղեն ամենայն
ազգք գազանաց, և ի լաց և ի սուգ տրտմ-
ութեան մտեալ նոտան ամենայն սրդիք
մարդկան հաւատացելոց Քրիստոսի, վասն
զի սարարիչն Աստուած գարձոյց ի մէնջ զե-
բեսս բարերարութեան իւրոյ. այս եղեւ
վասն մեղաց և չար գնացից մերոց, և մատ-
նեաց զմեզ . . . . . ազգին Թուրք
քաց, ըստ բանի մարգարէին որ ասաց ընդ
Աստուած՝ թէ «Մերժեցեր զմեզ և աւե-
րեցեր, և ոչ երեր Աստուած ընդ զօրս մեր։
Դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս
մեր, և առեալք մեր յափշտակեցին զմեզ.
ետուր զմեզ սրպէս օշխար ի սպանումն,

և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ »։ Իսկ յետ այսչափ բարկութեանս և կատարածիս որ եղեւ, խաղաղացուցին զբազմութիւն դերութեանն յաշխարհն Պարսից, և տանէին զնոսա երամ երամ որպէս զբազմութիւն թռչնոց։ Յետ տեսեալ զնոսա ազգն այլազգեաց՝ հիանային, և հարցուկ լինէին ընդ գերեալսն և ասէին, եթէ « Ո՞ խնդրդ գերեցայք այդչափ անպատրաստութեամբ, և վասն էր յառաջագէտ ոչ կարացիք լինել, և եղեալ էիք փախստական կամ լսելով եւ կամ նշանաւք »։ Յետ նոքա ասացին՝ եթէ « Ընդ նաւ ամենեւին ոչ կարացաք խմանալ »։ Յետ ասացին կանայք այլազգեացն, եթէ « Հապա այս էր նշանն կատարածին ձերոյ. յորժամ յերեկորէն ձեր հաւն խօսէր, և ձեր ցախրէն և կամ ոչխարն ինքնուրուկ ազբէր, այն էր նշան բարկութեան »։ Յետ ասացին ազգ գերեալացն, եթէ « Այդ բաղում անգամ լինէր յաշխարհն մեր, և ոչ կարացաք գիտել եթէ նշան բարկութեան է մեզ »։

Յետ այսր ամենայնի զոր ասացաք զկատարած բարկութեանս, հասաւ չար համբաւս այս առ Թագաւորն Տուկիծ. և յայնժամ զորաժողով արարեալ և կացուցանէր զորավար զմեծ իշխանն որ կոչէր Ֆուանդաշ

պոլ (109), և առաքեաց զնա բազում զօրօք
ի գաւառն Թիլմոնց. եւ գային հասանէին ի
Թիլմոնս մեծաւ զօրութեամբ։ Եւ արար
զօրաժողով Ուռհայոյ տուկն, որոյ անուն
ասէին Դաւատանոս, այր քաջ և հզօր ի պա-
տերազմի և անուանի ի վերայ երկրի, որոյ
զօրաժողով արարեալ զՈՒռհայ և զԱրբ-
կառ և զՀատանմնուբ (110), և խաղայր զօրօք
ի վերայ Տաճկաց. և վրէժխնդիր լինէր ար-
հան քրիստոնէիցն զոր հեղին. և երթեալ
բազում զօրօք բանակ հարիանէր ի դաշտն
Թիլմոնց. և տեսանէր ի տեղիս զայնքան
բազմութիւն կոտորածին՝ լային առ հասա-
բակ ամենայն զօրքն։ Իսկ զօրքն Թուրքայ
լուեալ զգալ զօրացն Հռոմոց, փախեան
յաշխարհն Պարսից. և յայնժամ Դաւատա-
նոսն գաշեաց որպէս զառիւծ ի վերայ Տաճ-
կաց և յարձակեցաւ ի պատերազմ ի վերայ
քաղաքին Ամթայ։ Մանաւանդ զի յայն
աւուրսն զմեծ ամիրայն զամիր Սայխտ զոր-
դին Նարբրաթայ դեղեալ էին քաղաքացիքն և
սպանեալ։ Իսկ յորժամ լուան քաղաքացիքն
զգալ զօրացն Հռոմոց, յուզարկեցին գաղտ
առ Յունգապոլն տան հաղար դահեկան,
և արար Յունգապոլն գաղտուկ սէր ընդ
Տաճկուհս. և գիտացեալ զայն Դաւատա-

նոսին՝ նախատեաց զՖռանգապօղն. և յորժամ հասան ի գուռն քաղաքին Լիմթայ, ի տեղին ուր Հռոմ Դաւռն կոչեն, ելին ամենայն զօրքն այլազգեաց ի պատերազմ։ Իսկ Ֆռանգապօղն զպատերազմն նենգաւորութեամբ՝ Դաւատանոսին տայ, և ինքն ամենայն զօրօքն ի յետ կայր պարապ ի պատերազմէն, և հեծեալս վաթսուն հազար ընդ նմա. և յորժամ խմբեցաւ պատերազմն, մի ոմն ի զօրաց այլազգեացն այր քաջ, որում անուն ասէին Հեծն-Պշարայ, մեծ ոչ ճիրս դորձէր զօրացն Հռոմոնց, որպէս զաւրիւծ պատառէր զճակատ Դաւատանոսին զօրացն, և ի ներս դառնայր կրկնէր։ Իւ տեսեալ զայն Դաւատանոսն, ձայն առեալ ձիոյ և ասէր՝ թէ «զկամանն (111) մատուցէք ինձ»։ Իւ իբրեւ ելեալ դայր Պշարայ, Դաւատանոսն որպէս զառիւծ ի վերայ յարձակեցաւ, և նիզակաւն հարեալ զսիրսն՝ պատառեաց զերկաթն, եւ յայնկոյս հանեալ զգեղարդն, և երկսքեանն ի ձիոյ անկեալ լինէին։ Իւ քաջեալ երկոցունց կողմանց ի վերայ՝ սպանաւ ի նոյն տեղին Դաւատանոսն, և Պշարայ սատակեալ կայր ի մէջ նիզակին։ Իւ լուեալ քաղաքացիքն եթէ մեռաւ Դաւատանոսն, և Պշարայ սա-

տակեալ կայր ի մէջ նիզակին, միաբան առ հասարակ ի դուրս բախեալ ելանէին. Եւ յայնժամ մի ոմն ի զօրաց Դաւատանոսին գնացեալ առ Յովանգապօլն, և դատախաղ վարէր ընդ նմա վասն մեհուանն Դաւատանոսի, որում անուն Տաւառ (112) ասէին. և իմացեալ զայս Յովանգապօլն յարձակեցաւ ի վերայ այլազգեացն և արար սաստիկ կոտորած ի դուռն քաղաքին՝ հնգետասան հազար, և դարձաւ ի Հոռոմ աշխարհ.

Զ. Յայսմ ամի ժողով արարեալ ոմն Յեհնուկ անուն, հինգ հազար արամբք գնացեալ ի վերայ Բրատատանայ ի գաւառն Ամթայ, ի տեղի ուր Ներսու—Շահար կոչի. և առեալ բազում և անթիւ աւար՝ ոչխարս և պախրէս և ծառայս և այլ բազում աւարս, և գայր ի բերդն որ կոչի Սեւերակ. և հասանէր ի հետ որ աւագ էր Բրդացն՝ որում անուն Խոպդ (Հալէտ) ասէին, ինքն և իւր երեք որդիքն. և տեսեալ Յեհնուկն և իւր զօրքն ի փախուստ դարձան։ Եւ յայնժամ աստուածատատ բարկութիւնն հեղաւ ի վերայ նոցա, վասն զի հասին Ամթայ զօրքն և արարին բազում կոտորածս, և թափեցին զամենայն առն և զգերութիւնն։

Յայսմ ամի գնաց Յովանգապօլն ի Կարս

նոյ քաղաք, և անդ հանդիպեալ թուրքն զՕ-
րացն՝ որ կոտորեալ էր զգաւառն Թղլմոյ,
և հարան ընդ միմեանս ի պատերազմ և յաղ-
թեաց նոցա Յովանգաղօլն, և զամենայն
զօրս թուրքաց կոտորեաց, և սատակեաց
զամիրայն այլազգեացն՝ որում անուն Ա-
սուփ ասէին, և արար անթիւ աւար և թա-
փեաց անթիւ գերութիւն ի նոցանէ։ Իսկ
յորժամ լուաւ թագաւորն Տուկիծ զմահ
Դաւատանոսին, որ նենգութեամբ Յովան-
գաղօլին եղեւ, կոչեաց զնա ի Կոստանդի-
նուպօլիս, և ծովահեղձ արար զնա, վէմ
կապեաց ի պարանոցն և ընկէց յԱվկիանոս։

ՁԸ. Դարձեալ ի թուականութեանս
Հայոց յամի ԵՃԳ (1064–1065) զօրաժողով
արար թագաւորն Պարսից Ալբասլան սուլ-
տանն, եղբայր Տուղրիլ սուլտանայ, որ ըզ-
կնի մահուան եղբօրն նստաւ յաթոռ թա-
գաւորութեանն, զօրաժողով արարեալ ըզ-
Պարսիկս և զազգս թուրքաց և զամենայն
խուժաստան աշխարհն մինչեւ ի Սագաս-
տան. և շարժեալ մեծաւ ցասմամբ և ահա-
գին բազմութեամբ՝ ծփայր չարեօք ալեօք,
և խաղայր որպէս զգետս յարուցեալս մրբը-
կաբեր բարկութեամբ, և որպէս զգազան
արիւնարբութեամբ զայրացեալ և գայր հա-

սանէր ՝ի Հայաստան աշխարհս, և անհամար բազմութեամբ զօրք մնանէր յաշխարհին Աղուանից, և մատնեաց զնոսա ՝ի սուր և ՝ի գերութիւն։ Իսկ անթիւ և անհամար արար զանցումն քրիստոնէից, որ ոչ ոք կարէ պատմել զկատարած գառնաշունչ աղէտից հաւատացելոց Քրիստոսի. վասն զի գառն ճաշակմամբ ընկալան զմահն ՝ի կատարելոյ չարաթոյն ազգէն Թուրքաց. և ՝ի բազմութենէ զօրացն ծածկեալ եղեւ ամենայն երեսք գաշտացն, և փակեաց զամենայն տեղի փոխատեան։ Իսկ ահա առատ կատարեցան բանք Փրկչին որ ասաց, թէ «Այ ինչ յղեաց և ասնատուաց յաւուրսն յայնոսիկ». վասն զի բազում քահանայք և կրօնաւորք և հայրապետք և վարդապետք իշխանք ընկալան զմահ գառնաշունչ, և եղէն կերակուր գազանաց և թռչնոց։ Իսկ զկնի այսչափ բարկութեանս առաքեաց սուրսանն առ թագաւորն Աղուանից ՝ի Կիւրիկէ, և խնդրեաց զդուստրն իւր ՝ի կնութիւն, որ յաղագս ահին տուեալ եղեւ. և արար սուրսանն ընդ նոքա սէր և խաղաղութիւն յաւիտեան. եւ զթագաւորն Աղուանից զկորիկէ զորդի Դաւթի Ենհոզլնի յուզարկեաց մեծաւ պատուով ՝ի քաղաքն իւր։ Յոմի բազում ընծայ

իւք։ Յե անտի յարուցեալ սուլտանն ա-
հագին բազմութեամբ իւրով մտաւ յաշ-
խարհն Վրաց, և մեծաւ սրտմտութեամբ
մտանեաց զնոսա ի սուր և ի գերութիւն. և
ինքեալ բանակեցաւ ի գաւառն որ կոչի Ղա-
ւալաս (113), և պատերազմաւ մեծաւ պատեաց
զքաղաքն որ կոչի Ախալ, և ուժգին զօրու-
թեամբն առաւ Ախալ քաղաքն, և առհասա-
րակ զամ քաղաքն սրով կոտորեաց՝ զայր և
զկին անողորմ, և զամենայն քահանայսն և
զկրօնաւորսն և զիշխանսն սրախողխող ա-
րարեալ, և լցաւ ամենայն քաղաքն արեամբ.
և անհամար մանկունս և աղջկունս տարան
ի Պարսիկս ի գերութիւն, և գանձս ա-
կուց և արծաթոյ՝ ականց և մարգարտացն
որ ոչ գոյ թիւ։

Յայսմ ամի յարուցեալ սուլտանն մե-
ծաւ յաղթութեամբ և խաղաց չար վիշապն
Պարսից, և գայր մտանէր յաշխարհն Հայոց,
և զատուածատաստ բարկութիւնն հեղայր
ի վերայ տանն արեւելից, և արբուցանէր
զմաղձ դառնութեան իւրոյ ամենայն աղգին
Հայոց, և սփռեցաւ բոց բորբոքեալ մահու-
առ հասարակ հաւատացելոց Քրիստոսի, և
լցաւ ամենայն տունն Հայոց արեամբ սրով
և գերութեամբ։ Յե յարուցեալ գայր որ-

պէս զամսս սեւացեալս և իջեալ ի վերայ թագաւորաբնակ քաղաքին Նինուայ, և պատուեաց առ հասարակ շուրջանակուս նմանն չար վիշապի։ Յետ սեսեալ բազմութիւն քաղաքին՝ զողոց առ հասարակ, և պատրաստեցան ընդդէմ Պարսից ուժգին զօրութեամբ։ Իսկ զօրք անօրինացն յարձակեցան գաղանաբար ի պատերազմ մեծաւ սրտմտութեամբ, և ի քաղաքն Նինի արկանէին զզօրսն Հայոց, և գուժարեցին զնոսա առ հասարակ ի քաղաքն. և ահաւոր պատերազմաւ արկանէին զքաղաքն ի մեծ վրատանգս։ Յետ յայնժամ յահէ չար գաղանին զողոց սասանելով ամենայն ազգք հաւատացելոց, սկսան լալ հայր ի վերայ որդւոյ իւրոյ, և որդին ի վերայ հօր իւրոյ. մայր ի վերայ որդւոյ իւրոյ և դստերն, և դուստր ի վերայ մօր իւրոյ, եղբայր՝ զեղբայր, սիրելին՝ առ սիրելին իւր։ Յետ ահա ամենայն բազմութիւն քաղաքին Նինուայ կային ի մեծ փոսանգի, և պատերազմն եւս առաւել սաստկանայր յոյժ, որ և սասանէր ամենայն քաղաքն։ Յետ ի յերկարել պատերազմացն՝ աղօթիւ և պահոց սկիզբն արար ամենայն քաղաքն, լալով և հառաչանօք միաբան ձայն առ Աստուած արձակէին, զի փրկեսՀ

ցէ զնոսա ՝ի չար գազանէն ։ Վասն զի էր Ա՛նի բազմամբոխ , լցեալ քաղաքն բիւրք բիւրոց ազանց և կանանց , ծերոց և տղայոց , որ և հիացումն արկանէր տեսողացն , զոր կարծեալ զօրացն բազմաց՝ եթէ մեծ մասն աշխարհիս Հայոց է , և յայնմ աւուր հաղար և մէկ եկեղեցի ՝ի պատարագի կայր ՝ի Ա՛նի ։ Իւ էր քաղաքն շուրջանակի քարակոփուր , և էր գետն Ա՛խուրեան շրջապատ, բայց միայն ՝ի մի կողմն կայր տեղի ինչ դայր՝ որպէս թէ նեռընկեց մի , զոր բաբնով փլուցին այլազգիքն , և զբաղաքն մեծ աւուրս պատերազմեալ ոչ կարացին մտանել ՝ի քաղաքն , յայնժամ թուլացան ՝ի պատերազմէն ։ Իսկ անօրէն իշխանքն Հոռոմոց՝ զորս կացուցեալ էր թագաւորն պահապանս տանն Հայոց , Իսգրատ հայրն Ամբատայ , եւ Գրիգոր Իսկուրանին որդին՝ Վրացի աղգաւ , սկսան սոքա ամրանալ ՝ի վերին և ՝ի ներքին բերդն ։ Իւ յայնմ աւուր սուլտանն և ամենայն զօրքն Պարսից բանակաւն խլեցան և կամեցան գնալ ՝ի Պարսիկս . և յորժամ տեսին քաղաքացիքն զաստուածուրաց պահապանացն ամրանալն , բեկան և այր իւրաքանչիւր ՝ի փախուստ լինէր առանց պատճառի . և ամենայն քաղաքն առ հաստակ ՝ի

վաշի դարձաւ. և մեծամեծքն քաղաքին երթեալ լալով և անկանէին ի վերայ գերեզմանացն առաջին Թադաւորացն Հայոց. և անդ կոծ առեալ սաստկապէս լալով և ասէին՝ եթէ «Արիք տեսէք զաւուն հայրենեաց ձերոց»։ Եւ իբրեւ զայս տեսին զերիք այլազգեացն՝ հասեալ պատմեցին սուլտանին, և նա ոչ հաւատայր։ Իսկ զերիք այլազգեացն յորժամ տեսին զպարիսպն անպահպան, առհասարակ ի քաղաքն մտին, առին տղայ մի ի մերէն իւրմէ, հատուցին սուլտանին և ասեն. «Այս քեզ նշան ի քաղաքէն՝ զի ահա առաք զքաղաքս Անի»։ Եւ լուեալ զայս սուլտանն՝ հիացաւ յոյժ և այսպէս ասաց, եթէ «Անտուածն նոցա մատնեաց զնոսա այսօր զանառ քաղաքն ի ձեռս իմ»։ Եւ դարձաւ բազմութեամբ զօրօք և մտաւ ի քաղաքն Անի, և առհասարակ ամենայն զերիքն անօրինաց ունէին դանակ քաջասուր, զերկուսն ունելով յերկոսեան ձեռսն եւ զմէին ունելով յատամունսն. և այսպիսի օրինակաւ սկսան զամենայն քաղաքն առհասարակ կոտորել անողորմաբար, և զայնքան բազմութիւն քաղաքին նման դալար խոտոյ հունձ ածին, եւ կամ որպէս զքարակոյտս ի միմեանց վերայ կոյտ արարին. և առ վայր

մի ծովայաւ ամենայն քաղաքն արեամբ. և ամենայն մեծամեծ իշխանքն տանն Հայոց և դասք աղատացն երկաթի կապանօք կային առաջի սուրանին. եւ կանայք գերեցիկք և ահարկուք՝ ի փառաւոր տանէն, վարեցան ի Պարսիկս ի գերութիւն. և անհամար մանկունք լուտուտիսկս, վայելուչս աղջկունս տարան գՀեռս մարցն. և բազում՝ սրբասնունդ քահանայք այրեցան հրով, նա և զոմանս յատից մինչեւ ցգլուխս քերթեալ շարաշար խոցուածով, որ և տեսողացն սոսկալի էր։ Եւ այլ ոմն ի չարագործ ազգէն՝ եղեալ ի վերայ բարձրութեան եկեղեցւոյն սուրբ կաթուղիկէ և զծանրագին խաչն որ կայր ի գումպեթն եկեղեցւոյն՝ ընկէց յերկիր, և մոեալ ի դրանն որ կայր ի գումպեթն եկեղեցւոյն, և պրլոր (բիւրեղեայ) կանթեղն ընկէց ի մէջ եկեղեցւոյն և մանրեաց, զոր Ամբատ տիեզերակալն էր բերել տուեալ ի Հնդկաց ընդ բիւր մի գանձուց, երկոտասան լիտր էր կշիռ նորա, և նոյն չափովն երկոտասան լիտր տանէր. և յորժամ ընկէց զնաչն ի գումպեթէն, նոյնժամայն եղեւ սաստիկ որոտմունք եւ անձրեւ բազում, և զամենայն զգէշն կոտորածայն ելից Ամխուրեան գետն, և լուաց յարեւնէ զա-

մենայն քաղաքն։ Իսկ յորժամ մանրեցաւ պրէօր կանթեղն, որ այլ չէր լեալ ի վերայ արարածոց, լուեալ սուլտանն յոյժ վնրաւորեցաւ. և զնաչն զարծանթին զոր ընկեցին, որ էր մարդաչափ մի, տարան եդին զնա ի կոխ դրան՝ ի դուռն մաքթին Նախչուան քաղաքին, որ կայ մինչեւ յայսօր։

Յայնմ ժամանակի էր Գագիկ ի Խարս որդին Աբասայ Շահնշահին, և յղեաց սուլտանն առ նա դեսպանս զի գայցէ նմա յերկրպագութիւն։ Իւ էր Գագիկ այր հանճարեղ և իմաստասէր, և խորհեցաւ հնարս զերծանել խաղաղութեամբ ի սուլտանէն. յայնժամ զգեցաւ սեաւ զգեստ սգաւորի և նստաւ ի վերայ սեաւ բարձի. և յորժամ տեսաւ զնա դեսպանն սուլտանին, հարցուկ լինէր և կամեցաւ զպատճառն ուսանել, եթէ վասն էր ես սեւօք, զի ահա այր դու թագաւոր ես։ Իւ նա ասէր՝ թէ «Յորժամ մեռաւ իմ բարեկամն Տուղրիլ սուլտանն՝ եղբայր Աբասլանայ, ես յայնմ աւուր զգեցայ զայս սեաւ զգեստս»։ Իւ հիանայր այրն այն և երթեալ պատմեաց սուլտանին, եւ նա զարմանայր յոյժ, և յարուցեալ ամենայն բանակովն եկն առ Գագիկ ի Խարս, և աբար ընդ նմա սէր և ուրախութիւն մեծ.

և զգեցոյց նմա զգեստ թագաւորական. և արար Գագիկ ճաշ սուլտանին։ Իսկ զայս այսպէս լսեցաք, եթէ մէկ գառին վերայ զոր խորտուեաց՝ ծախք եհան հաղար դահեկան, և հարիւր հաղար դահեկան սեղան տուեալ սուլտանին և ամ զօրացն Նորա, և այսու զերծաւ խաղաղութեամբ։ Իսկ եղեւ զկնի աւուրցս այսոցիկ թողեալ Գագիկ զխարս և գնաց 'ի Հռոմս, եւ թագաւորն Յունկիծ տայր նմա զՕամընդաւ (114), և անդ եդեալ Գագիկ աղաւաղք իւրովք և թողեալ զտունն հայրենեաց իւրոց։ Արդ՝ այսպիսի նմանութեամբս գերեցաւ տունն Հայոց, և արեամբ լցաւ առ հասարակ աշխարհն ամենայն, որ և իբրեւ զծով ծփայր ծայրէ 'ի ծայր, և քակեալ ապականեցաւ հայրենական տունն մեր լեալ, խափանեցաւ հիմն բնակութեան Հայաստանի ազգացս, զի ոչ մնաց տեղի յուսոյ ապաւինի, և եղաք մասնեալ 'ի ծառայութիւն ազգաց անօրինաց և օտար գաղանաց. ահա եկեալ կատարեցաւ 'ի վերայ մեր բան Դաւթի մարգարէին՝ որ ասէր. «Վաճառեցեր զժողովուրդս քո առանց գնոյ, և ոչ գոյ թիւ աղաղակի մերոյ։ Արարեր զմեզ յառակս հեթանոսաց. ծաղր և այպն կատականաց որ շրջէին զմեզ։ Իսկ վասն այսորիկ

աղաղակեմք և ասեմք. դարձ առ մեզ Աստուած փրկիչ մեր, և դարձո զբարկութիւնս քո ի մէնջ »։ Այս էր կատարած տանս Հայոց։

ՁԹ. Իսկ ի հասանելն Թուականութեանս Հայոց յամն ՇԺԴ (1065—1066), ի յաւուրս Տուկծին արքային Հոռոմոց շարժեցաւ պատերազմ մեծ ի յաշխարհս արեւմտից յազգէն Ալազաց։ Այս զօրաժողով ապար Թագաւորն Տուկիծ զամենայն ազգն Յունաց և զզօրս Հայոց աշխարհի, և կացոյց զօրապետս զմեծ իշխանն Հոռոմոց զԱսիլ զորդին Աղուբասայ, և խաղացեալ բազում զօրքք և գնաց ի վերայ մեծ գետոյն զոր Տօնաւիս կոչեն։ Այս եղեւ սաստիկ պատերազմ յերկոցունց կողմանց խառնելով ընդ իրեարս առատն գետոյն, և եղեւ կոտորածքս բազում յերկոցունց կողմանցն։ Այս անդ էր տեսանել զմեծ բարկութիւնն կատարածին, որ զմեծ ժամ աւուրն զմիմեանս կոտրէին, և որպէս զՀօտս ոչխարաց զմիմեանս բախէին յերկոցունց կողմանցն. և ի սաստկանալ պատերազմին եղեւ պարտեալ զօրքն Հոռոմոց և եղեն փախստական, եւ զօրքք Ալազացն որով դիմեա յարձակեցան մեծաւ կոտորածով, և կալան զԱսիլ զօրա-

պետն Հռոմոյ, և տարան զնա 'ի գերութիւն յաշխարհն իւրեանց, և առին առ հաստատակ զամենայն բանակն Հռոմոյ, զբազմութիւն ոսկւոյ և արծաթոյ և այլ հանդերձ բազում աւարաւ, և զամենայն զմեծամեծ իշխանսն Յունաց տարան 'ի գերութիւն. և զբազում աւուրս կացեալ գերի յաշխարհն Ասղոց, և գանձիւ ոչ կարացին գնել զնա, վասն զի անհատար ուղէին զգանձն։ Յետոյ մի ոմն 'ի զօրաց այլազգեայց խորհուրդ արար ընդ Վասիլն զի գողացէ զնա, և նա խոստացաւ բազում ինչս և 'ի Թագաւորէն տալ նմա իշխանութիւնս, եւ յետ սակաւ աւուրց այլովք ընկերօք գողացաւ զնա և փաղփաղակի հասուցանէր առ Թագաւորն Տուկիծ. և եղեւ ուրախութիւն մեծ ամենայն տանն Յունաց, եւ բերողացն բազում պարգեւս տուեալ Թագաւորն։ Իւ եկեալ Վասիլ առ Աղուբասդ հայր իւր 'ի Մեռհայ, և հայր իւր և ամենայն ազգն իւր լցան ցնծութեամբ։

Յայնմ ամի մեռաւ ամենագովելին տէր Խաչիկ կաթուղիկոսն Հայոց։ Որ կացեալ յաթոռ հայրապետութեան զամս վեց յօտար աշխարհի, պանդխտեալ յիշխանութիւնէն Յունաց և վիրաւոր քաղաքավարու-

թեամբ լցեալ զժամանակս կենաց իւրոց, և բազում վիշտս կրեաց ի յանիրաւ և ի մոլի աղգէն Հռոմոց ի մէջ Կոստանդինեւսպօլսի, որ և պէսպէս փորձուութեանց ածէին զնա վասն հաւատոց. զի այսպէս լսելով մեր՝ եթէ հրով փորձեցին զնա, և նա անվնաս անցանէր ընդ մէջ հրոյն, զոր նոցա զայրացեալ՝ և հառաչանօք ասէին զայն։ Եւ այսպիսի օրի նակաւ սուգ ունէր ի սրտի իւրում տէր Խաչիկ. և յիշեալ զաւերումն հայրապետական աթոռոյն տանն Հայոց, նա և զկատարեալ աթոռոյ Թադաւորութեանն յաղգէն Բագրատունեաց, և գալ ծառայել Հարամիս աղգայ Յունաց, և ապքատութեամբ տիրապետել աթոռոյ սրբոյն Դրիգորի Հայոց լուսաւորչին. վասն զի յորժամ էր տէր Պետրոս յաթոռ հայրապետութեանն և ի Հայոց տան աշխարհին, ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի Թագաւորացն Հայոց հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիք և շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս և եպիսկոպոսք հինգ հարիւր փառաւորք, և գաւառատեսուչս ի վերայ հինգ հարիւր Թեմի հանապազ. երկոտասան եպիսկոպոսք և չորս վարդապետք ի տան հայրապետին անպակաս լինէր, և վաթսուն երեց ի կրօնաւոր

բաց՝ և յաշխարհականաց հինգ հարիւր. և
չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան
զթագաւորութեանն Հայոց։ Այս և զարդա-
բանք եկեղեցեացն և տան հայրապետու-
թեանն բազում և անհամար և հրաշալի մե-
ծութեամբ լցեալ, զոր յառաջին թագաւո-
բացն տուեալ հաստատութեամբ առաջին
հայրապետացն, որ գայր հասանէր մինչեւ
'ի տէր Պետրոսն, և առ նովաւ խոստանեալ
լուծաւ։ Այդ՝ զայն ամենայն ածէր զմտաւ տէր
Խաչիկ և տեսանէր 'ի տառապանս զհայրա-
պետական աթոռն Հայոց, և կայր յոյժ վի-
բաւորեալ։ Իսկ յոյժամ հրաժարեաց 'ի յաշ-
խարհէս սուրբ հայրապետն տէր Խաչիկ, որք
մնացեալ էին 'ի թագաւորացն և յիշխանաց
ցին Հայոց, յայնժամ խնդիր արարին գտա-
նել զմի ոք արժանաւոր՝ զի նստցի յաթոռ
հայրապետութեան սուրբ ըւսաւորչին Գը-
րիգորի. և գտին մանուկ մի յազգէ Պահլաւ-
ունեաց Վահրամ անուն, զորդին Գրիգո-
րի Մագիստրոսի մեծի իշխանին Հայոց։ Սա
լցեալ ամենայն առաքինութեամբ, որ և ըստ
օրինի աշխարհիս կին արարեալ էր և սրբու-
թեամբ և անարատութեամբ պահեալ էր
զինքն, և յայսմ ժամանակիս հրաժարեալ էր
'ի կնոջէն իւրմէ, և մտեալ 'ի կարգ կրօնաւ-

հարկան ուսման և աստուածային շնորհաց պարապելոյ, և հասեալ եղեւ ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ յօժարամիտ և մեծաւ փափագանօք։

Դ. Յայսմ թուականութեանս նստաւ յաթոռս կաթուղիկոսութեան Հայաստանեայ ազգին ամենագովելին տէր Գրիգորիս, որ հոմանուն Վահրամ, որդի Գրիգորի Մագիստրոսի, որդւոյ Վատակայ Ինջեցին և ազգաւ Պահլաւունիք։ Յեր Գրիգորիս նորընտաւ յաթոռս հայրապետութեանն հրամանաւ Գագկայ շահի որդւոյ Աբասայ կարասցուոյ, վասնզի զկնի մահուան տեառն Խաչիկայ զսա տեսին արժանաւոր սուրբ Աթոռոյն, զի էր յոյժ առաւելեալ հոչակաւոր անուամբ, լցեալ սրբութեամբ եւ արդարութեամբ, և տիրեալ էր ամենայն պայծառ առաքինութեամբ, և հասեալ էր ի վերայ հռետորական իմաստութեանց, տեղեկացեալ ամենայն հին և նոր կտակարանացն Աստուծոյ, և յամենայն գիտնոց կարող էր օգնել հօտին Քրիստոսի։ Զսա յայսմանէ սուրբ Հոգին նստուցանել յաթոռս սուրբ Լուսաւորչին Գրիգորի նախնւոյն իւրոյ, վասն որոյ զսա տեսանէին հեզութեամբ և ամենայն արդարութեամբ զարդարեալ՝ երկրորդս Գրիգոր

անուանի երեւեալ։ Որպա թողեալ զսէր աշխարհիս և բուռն հարեալ զյաւիտենական կենացն. սա լուսաւորեաց զՀայաստան աշխարհս բազում և ազգի ազգի մեկնութեամբ, որ և յամենայն ազգաց թարգմանութիւնս արարեալ, և լցեալ առհասարակ զեկեղեցի Աստուծոյ ամենայն առաւածային կտակարանացն. և սա պայծառացոյց զկարգ կրօնաւորութեանն յազգս Հայոց, և սովաւ նորոգեցաւ ամենա սուրբ Լուսաւորչին Գրիգորի ի Հայաստան աշխարհս, վասն զի փայլեաց սրբութեամբ և ամենայն պարկեշտութեամբ և պարապեալ կայր պահօք և աղօթիւք։

ԴԼԱ. Յայսմ ամի դարձեալ երկրորդ ժողով արարեալ Իշխանն Պարսից անօրէն Սբ-լար-Խորասան, և գայր ի վերայ բերդին Թէլմայ, և մեծաւ պատերազմաւ ի նեղ արկեալ զբաղաքն՝ և ոչ կարաց առնուլ։ Իւ յարուցեալ բազում զօրօք գայր յերկիրն Լեռնայայ, և հասաստէր ի բերդն որ կոչէր Մեւերակ. և կայր անդ Ֆռանգ զօրք կողմնապահք երկերիւր ձիաւոր. գԼենայ ի պատերազմ ընդդէմ թուրքին և զառաջին երեսն դարձուցին կոտորելով՝ ի փախուստ. և յորժամ բազմացան զօրք այլազ-

գեացն արտաքին փախստական զՊռանդն, և սպանին ի նոցանէ արս հնգետասան։ Իսկ յայնժամ անօրէն զօրքն (115) յարձակեցան ի գաւառն Սեւաւերակայ և ի Լիսեանայ. և էր ամենայն գաւառն բազմամբոխ լցեալ արանց և կանանց, և հօտք ոչխարացն ի բազմութենէն՝ որպէս ծով ծփայր առհասարակ ամենայն գաւառն. և սրով ի վերայ յարձակեցան գազանաբար, և անողորմ ի բերան սրոյ կոտորեցին և արեամբ լցին զերկիրն, և զկանայս նոցա և զորդիսն վարեցին ի գերութիւն անհամար աւարաւ։ Իսկ յետ սակաւ աւուրց հասանէր ի գաւառն Աղուանից և բանակ հարկանէր ի վերայ հուշկաւորք բերդին Թոռնիճայ. և արար աւար զամենայն գաւառն, և էջս զօրացն ինքաւ ի վերայ չափաւորք բերդին՝ որ կոչէր Նշենիկ, և սաստիկ պատերազմաւ ի յառ ածին զբերդն։ Իսկ մի ոմն ի Հայոց քաջ զօրականացն յայնժամ ի Սեւահայ հանդիպեցաւ՝ Պեխտանուն (116), և էր տուկ Ընտիրքայ քաջաքին. և սորա ձայն տուեալ զօրաց իւրոց՝ յարձակեալ գնայ ի վերայ Թուրքին. և քաջաքին տուկն որ կոչէր Պիզաւնիտ տայր զզօրս քաջաքին ի Պռաքսիմոն իւր, և պատուէր տայր զկնի՝ վասն կորստեան Պեխտին, վասն զի մի

արատցէ քաջութիւն և ելցէ անուն զօրութեան նորա։ Իսկ Պեխոն հասանէր ի Լեհենիին ի մեծն ժամուն, և թուրքն անհոգացեալ և առ հասարակ կրակ էին վառեալ, սկսան ապուր զուգել. և չարախորհուրդ այրն Պաքսիմոն զերդ որ ունէր ի սրտին զնենգութիւն վասն կորստեանն Պեխոնին, ի հեռաստանէ զփող պատերազմին հարկանէր, և ազդ արարեալ թուրքին՝ և ինքն յայլ կողմն գնաց զօրքն։ Իսկ յայնժամ իշխանն Հայոց գիտացեալ զնենգութիւն ազգին Հոռոմոց, ձայն տուեալ ազատաց իւրոց և յարձակեցաւ ի վերայ թուրքին, և ի հասանելն արար բաղում կոտորածս, եւ զայն արար փախստական, և զբերդն եհան այլ ամրութիւն (117). և ի բազմանալն անօրինաց ի վերայ՝ մոռանէր անվնաս ի բերդն որ մերձ կայր ի Օուլման. և հարցաւ թէ՝ ուր է Յովանէ զօրքն քաղաքին. և ասեն՝ եթէ ի տէր Կուզման գնաց Պաքսիմոն ամենայն զօրքն։ Իսկ ասէ Պեխոն. «Ով աստուածուրաց Հոռոմք, և ամստ արարիք զձեր նենգութիւնդ»։ Դարձաւ ի Լեռնհայ, և յետ աւուրց գնաց ի քաղաքն Նիսիբոր. և զայս ամենայն գրեալ ծանուցանէր թագաւորին՝ Տուկծին։ Իսկ տարեալ թագաւ-

ուրն զՊռաբոսիմոն, և բերեալ զմարմին նոր-
սա և եղից մարթին խառսով և առաքեաց
յՈւռհայ, և զՊեխոն ընկէց ի փառաց։

ԶԲ. Յայսմ ամի դարձեալ գայր անօրէն
և արեանարբու գազանն Ալար-Խորասան ի
գաւառն Ուռհայոյ և ի Ջալապն, և արար
անդ սաստիկ կոտորածս ի բերան սրոյ ի
քաղաքս տեղիս և անցոյց զամենայն բնակիչ-
սն. և բազում գերութեամբ ելեալ ի վե-
րայ բերդին որ կոչի Ցէպ, և առ հասարակ
կոտորեաց զամենեսեան, և յարուցեալ գայր
բանակեր ի տեղի որ կոչի Քաաւս։ Իսկ զօր-
քքն Հոռոմոց որ էին ի քաղաքն Ուռհայ,
հեռեւակ և ձիաւոր գնային ի վերայ Թուրբ-
քին արք չորս հազար, և հասանէին ի Թը-
ղանին մերձ ի Քաաւս. և տեսեալ Ալար-Խո-
րասան՝ ձայն տուեալ զօրացս իւրոց յարձա-
կեցան ի պատերազմ. և յառաջ քան զպա-
տերազմն փախեան Հոռոմոց զօրքն, և ի
Հայոց հեռեւակաց երկու եղբայր կալան
զկարմուշնն, և զամենայն Թուրքն արգելա-
կան արարին առ վայր մի՝ մինչեւ ընկալան
զնահ սաստիկ պատերազմաւ։ Իսկ գնայր Հո-
ռոմոց զօրքն ի փախուստ, և Թուրքն սրով
ի հետ. և յայնժամ Յռանգ մի գոչեաց որ-
պէս զառիւծ և դարձաւ ի վերայ Թուրքին

և զբաղումն խոցեալ սատակեցաց, և արգել զնոսա մինչեւ փախստականքն հեռացան. յայնժամ բաղում խոց առեալ ձին, որ և զինքն ի տեղին կատարեցին քաջապէս մա-հուամբ. և մինչեւ ի խանդակ քաղաքին վա-բեցին սատակ կոտորածով, և լցաւ դաշտն արեամբ, և իշխանս բաղումս պակասեցաց։

Յայսմ ամի դարձեալ գայր Սկար-Խորա-սանն ի գաւառն Ալուհայոց, ի տեղին որ կոչի Կուպին, և արար անդ սահաւոր կոտո-րած. և բնակեցաւ ի նմա զաւուրս բազումս և արար աւար և գերութիւն զամենայն գաւառն, և գնաց յաշխարհն Պարսից ան-հատնար աւարաւ և բազում գերութեամբ, և անդ սատակեցաւ։

ԺԳ. Յայսմ ժամանակս Տուկիծ Թա-գաւորն Հոռոմոց և պատրիարգն և ամե-նայն կղերիկոսքն և ամենայն դասք ներքի-նեացն լծակից լեալ ջարաշուն և պիսդ խոր-հրդոյ անօրէն Թագաւորին, եւ ամենայն մեծամեծ իշխանքն Հոռոմոց ձեռն տուեալ խաւարային խորհրդոցն. վասն զի կամէր Թագաւորն ջար միաբանելովք իւրովք բան-նալ զՀայոց հաւատոյ դաւանութիւն, և խոր-հեր եղծանել ապականութեամբ զհաւատս սուրբ Լուսաւորչին Գրիգորի. և կամեցաւ

զիւր դիւաքլուկ և զխառնամենդոր և զԼիթ-
բակատար զհաւատս հաստատել ի Հայք.
և (ընդել) զհաւատն որ ի վաղ ժամա-
նակաց հետէ ամրացեալ էր ի Հայաստան
աշխարհս, վասն զի հիմնարկեալ էր անդա-
մանդ վիմաք՝ աշխատանաք և մահուամբ սրբ-
բոց առաքելոցն Թադէոսի և Խարդուղի-
մէոսի, և բաղմադիմի և ազգի ազգի չար-
չարանաք Լուսաւորչին սրբոյն Գրիգորի, որ
և կայ և մնայ անսասանելի մինչեւ յաւի-
տեան։ Իւ արդ՝ սա հրապուրեալ եղեւ ի
դիւաց, կամեցաւ նեմանել այր Թշնամւոյն՝
որ ցանեաց զսրսմն ի վերայ մաքուր ցորե-
նոյն. և որպէս ասէ իսկ ի սուրբ Աւետա-
բանին, այսպէս և սա կամեցաւ զլուսաւոր
հաւատս խաւարեցուցանել և զՀշմարտու-
թիւնն ընդ ստութիւնն (118) փոխել, որպէս
և սովորք են Յոյնքն. և զայսքան բարձրա-
ցեալ զաշտարակ հաւատոյս յօժարու-
թեամբ կամեցաւ ի փուլ ածել, զորս
ոչ կարաց կատարել զչար խորհուրդն իւր։
Իւ արդ ահա առաքեաց Թագաւորն Տու-
կիծ ի Աբեաստիա քաղաքն, և կոչեաց զոր-
դիսն Թագաւորաց Հայոց զԱտոմ և զԱ-
զատ և զԱ-
զատ դալ ի Կոստանդինուպօլիս։ Իւ
նոքա ծանեան առ սակաւ մի զչար խոր-

հուրդն, և առեալ ընդ ինքեանս զՅակոբոս վարդապետն ըստ աւելի անուանն Պարսիկեցի, այր գիտնական գրոց բանից, և գնացին ի Կոստանդինուպոլիս։ Եւ Թագաւորն զառաջինն բարով ընկալաւ զորդիս Թագաւորացն Հայոց. և զկնիկ սակաւ աւուրց սկսաւ յայտնել զչար խորհուրդ մըտաց իւրոց և ասէր, եԹէ «Հրամանք է ի Թագաւորութեանս մերում՝ զի դուք և ամենայն իշխանք Հայոց աշխարհին առնոյք յանձինս ձեր զկնուռնք հաւատոյ ազգիս Հոռոմոց»։ Եւ յայնժամ նոքա ի մէջ Հոռոմոց անկան ի մեծ տարակուսանս, և ասացին ցԹագաւորն Աստոմ և Աղուսահլ. «Մեք առանց Գրագկայ Աշտոյ որդւոյն ոչ ինչ կարեմք առնել, զի նա այր քաջ է և Թագաւոր և մեր փեսայ. առաքեա և կոչեա զնա այսր. զի եԹէ մեք առանց նորա իրք առնեմք, նա զմեզ հրով այրէ ի գաւառն մեր»։ Եւ լուեալ Թագաւորն և ոչ կամեցաւ գալն Գրագկայ, վասն զի այր հրաշք էր յիմաստասիրական ջոկան և անյաղԹ ի պատերազմի, զի սա ի սուրբ Սոփի ի յամբիոնն նստէր ընդ ամենայն վարդապետսն Հոռոմոց։ Եւ յայնժամ Աստոմ և Աղուսահլ գաղտ խնդիր հանին Գրագկայ ի կա-

ընդունեցան։ Իսկ Թագաւորն Տուկիծ արար քենութիւն հաւատոյ իւր առաջի, և Յակոբոս վարդապետն որ ասի Սանահնեցի, աբար դիմադրութիւն բազում յամենայն հարցմունսն ընդդէմ Հոռոմոց. բայց սակաւ մի յաղագս երկու թեանն Քրիստոսի ի կողմն Հոռոմոց դարձաւ։ Իւ յամենայն պատճառսն հաւատոյ հաճեալ Թագաւորն, եւ հրամայեաց այնր վերայ գիր միաբանութեան գրել ընդ Հայք և ընդ Հոռոմք. և վարդապետն Հայոց Յակոբոս գրեաց գիր միաբանութեան Հայոց եւ Հոռոմոց։ Իւ հաճեալ Թագաւորին ի գիր հաւատոյն, և հրամայեաց գնել զդիրսն ի սուրբ Սոփի, զի ահա յայսմ հետէ եղիցին ի միասին միաբանեալ Հայք և Հոռոմք։ Իւ ի նոյն ժամայն իբրեւ զաբծիւ թռուցեալ հասանէր Դաւիթ ի Կոստանդնուպոլիս, եւ լուեալ Թագաւորն ուրախ եղեւ յոյժ. և իբրեւ մնաս առ Թագաւորն՝ հրամայեաց բերել զդիր միաբանութեանն, և առեալ ընթերցաւ Դաւիթ. և իբրեւ ծանեաւ զգրեալսն Յակոբոսի, պատասխանեաց զնա առաջի Թագաւորին յերկուս ծունչս, և ընկենոյց զնա յերկիր, և Թագաւորն տեսեալ՝ ամաչեաց յոյժ։ Իւ ասէր Դաւիթ Թագաւորն վասն

վարդապետին, եթէ «Ահա սա այր կրօնաւոր է, և այսպիսի բաղուածք կան յաշխարհն Հայոց որք ոչ ընդունին և ոչ ոք հնազանդի գրոյս այս, և մեք ընդ կատարեալ վարդապետսն Հայոց ոչ ունիմք զսա»։ Իսկ յայնժամ առաջի Թագաւորին յանդիմանեաց զՅակոբոս և ասէր՝ թէ «Ո՞չ իսկզդ հասմարձակեցար զայդ գործել, մոռանել քեզ յաւելաբանութիւն, զի այր կրօնաւոր ես»։ Իսկ ասաց Դաւիթ ցԹագաւորն Տուկիծ. «Ահա ես այր Թագաւոր եմ, և որդի Թագաւորացն Հայոց, և ամենայն Հայք հնազանդին հրամանաց իմոց, և ամենայն Կոտակաբանացն Աստուծոյ հնայն և նորայն հմուտ եմ, և ամենայն Հայք վիպասանք բանից իմոց, զի հաւատար վարդապետացն ընդունին զիս. և ահա ես խոստացայց այսօր ընդ Հոռոմոց փոխան հաւատոյ ազգիս Հայոց»։ Իսկ գրեաց Դաւիթ գիր հաւատոյ ձեռամբ իւրով այսպէս, և տայր զնա ի Թագաւորն և ի պատրիարգն. և ունէր գիրն պատճէն այսպէս։

«Հարկ եղև մեզ և ի խնդիր որ յաղագս գրոյս հաւատոյ Հայաստանեայցս՝ որ եղեալ ի քէն խնդրելով, Տէր Աբրոյ. և այժմ զոր ասեմ՝ միտ դիր ուղիղ հաւատով, և ի միտ առ, եւ ծանիր զ Հայոց ազգիս զճշմարիտ

խոստովանութիւնս՝ որ է ի մի Աստուածութիւնն ի Հայր և Որդի և ի Հոգին սուրբ։ Լու ահա նախ այս խմանալն է՝ զէութիւնն մարդոյն և զպատճառ լինելութեանն. եւ այս է չափ գիտելոյն զԱստուած, որ ստեղծ զմարդ էութիւն, և այսպէս խոստովանելն է. առաւելն կամ՝ նուազն քան զայս՝ ի չարէն է։ Նախ և առաջին գիտեմք զԱստուած անսկզբմամբ և անկատարածիւ, առեալ ի վեց թեւիցն, և թեւիցն բացանեն զոչ սկզբմամբն, և զոչ կատարած ցուցանեն չարիւք ծածկութեանն, և յայս եմք հաստատեալ և բաւականացեալ։

«Յարձեալ ստասցուք և վասն արարչութեան մարդոյն։ Իսկ եթէ ընդէր արարածս առնէ և տուն կազմէ և կամ մարդ արարչագործէ վերջին իմն. զի ամենայն (119) վարկաւ իւրոյ հարատութեան միայն վայելումն, վասն որոյ առատ պատուոյ հեղուլ զարին, և ճանապարհորդէ ի հրեշտակաց և այլոց արարածոց լինելութեան ըստ մարգարէին ձայնի՝ որ ասէ. «Զզորմութեամբ Տեառն լի երեւ երկիր, և բանիւ Տեառն երկինք հաստատեցան. Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա»։ Զվ բարեյաղթ թագաւորս, ահա ծանուցանեմ քեզ զխոս-

տովանութիւն մերոյ հաւատոյս քոյոյ Թա-
գաւորութեանդ, և դարձեալ զայս զոր վե-
րըստին ճառեցաք։ Իսկ սա մեզ պաշտելի է
և երկրպագելի, և այսպէս այսքան ըստ օ-
բինի 'ի Հոգւոյն Հոգեկիրն։ Ստուած ա-
սեմք զՀայր, Ստուած ասեմք զՈրդի, Աստ-
ուած ասեմք զՀոգին սուրբ. երիս անձնա-
ւորութիւն և կամք մի, կամ հաճութիւն,
կամ տէրութիւն. մի աստուած 'ի նոսա երև-
ցութիւնք կամ կրսերութիւնք մի իմաստի,
և մի ումն քան զումն պատուելի կամ խոնարհ-
հեցուցանելի, որպէս զի մինն հաճեսցի
և միւսն գործակից է, իսկ միւսն փչեսցէ.
և մանաւանդ եթէ մինն 'ի միոջէ Ստուա-
ծութեանցն լինի պայծառութիւն միաւոր-
ութեամբ բաժանեալ՝ և միաւորեալ բա-
ժանմամբ, որ և հրաշափառագոյնն։

«Յայսմ վայրի կամեցայ կարգել և զՀո-
գւոյն սրբոյ, վասն զի և այսքան յաղագս Հո-
գւոյն սրբոյ իմանալոյ աւանդեացուք,
որպէս երկնային Հնորհացն տեսողն ասէր
սուրբ Աւետարանիչն Յովհաննէս. եթէ
«Լոյր լոյսն ճշմարիտ՝ որ լուսաւոր առնէ զա-
մենայն մարդ որ գալոց է»։ Այլ միսիթա-
ռիչն էր և է և եղիցի. այլ մի է, լոյսն է,
լոյս և լոյս, այլ մի լոյս, մի Ստուած, այն զոր

Դաւիթ եւոես յառաջագոյն։ Իսկ ըստ Աստուածաբանին Յովհաննու (120) որ ասէր. «Հոգին է Աստուած, զոր կրսեր համարելոյ զրդ Ի մարդկանէ կարծեն, և ոչ Աստուած ասելով որպէս զՀայր և զՈրդի»։ Լաւ զայս խոստովանեալ զՀրրսրդութիւնն և զՀոգին սուրբ։ Աստուած եկեալ Ի ծնունդն, ամ բարի շառաւիղ, կամիմք յայտնել քո Աստուծութեանդ յաղագս զառ Ի Հօրէ ծնեալնն, թէ որպէս հաւասարեալ հաւասարացաք։ Արդ՝ այսպէս իմանամք զէականին զոյգ ընդ հայրութիւնն (121) և ծնելութիւնն։ Իսկ զերկրորդն վասն փրկութեան մերոյ ըստուգապէս և ոչ խաբանօք և կամ արուեստաբար, որպէս և ոչ հիւրութեան ճաշակելով զորմէն Ի խորանին առ կոչեցեալ հօրն արդարութեանն։ Խոստովանիմք և անսկզբամբ արարչութեան զոր Ի Աստուծոյ դրեցան մինչեւ ցմարգարէսն, իսկ Ի մարգարէից մինչեւ ցկատարումն խոստմանցն որ գալոցն էր, և եկն անդուստ կատարել զանօրինականսն՝ զոր վկայեաց Յիսուս սրբոյ Առաքելոյն. և գրով առաք զԱւետարանն։ Իսկ Ի յԱւետարանէս մինչեւ ցերկրորդ (122) Աստուածտեսութիւնն և դատողութիւն հատուցմանն՝ բարւոյն ասեմ և

ջարին, իսկ զկանանեղան Հռաքելոյն՝ ընդ նմին և սուրբ Հարցն։

«Արդ՝ լուր և զայս, սիրելի Քրիստոս, թէ որպէս զհերձուածողն և զհակառակողն նոքա զսիրեմք իսկ, որ զհերձուածութեան ախտս ախտացան ի միասին, և գտեալ ի գիրս։ Այսպէս նզովեմք զՍաղեանիանոս, որ երկուս որդիս ասէ, զմիսն բնութեամբ եւ զմիւսն հնարիւք. և զՄին Կոտակարանոն ոչ ասաց բարի, իսկ զնորս ասաց բարի, վասն որոյ նզովեմք, և եղեցի նզովեալ։ Սարկիան զոսարերքս բնութեամբ ասէ գոլ, և ի թրուոց գոյացեալ զաշխարհն, և զՏեառն մարմինն առ աչօք՝ և ոչ ճշմարիտ, զորս նզովեմք։ Սոնտանոս՝ որ ի չար մտերացն, ասաց զանձն իւր՝ թէ ես եմ Հոգին սուրբ, և ինքն կանամբք վարէր պղծութեամբ, զորս Հոգին սուրբ նզովէ, և եղեցի նզովեալ։ Մանի երկու բնութիւն ասաց զոգի նիւթ, լոյս և խաւար, որպէս թէ բարի կամ չար, նզովեմք։ Կաւատոիոս զապաշխարութիւնն ոչ ընդունի, իբրև թէ մի անգամ սղալեալն ոչ բժշկի, զոր ընդ նոսին նզովեմք, և եղեցի նզովեալ։ Սաբելիոս չարն զերիս դէմս մի ասաց գոլ, և անուամբ միայն զանազանեալ, զոր և ընդ նոսին նզովեմք, և

եղեցի Նզովեալ։ Աբիսա երիս դէմս ասաց և մի
ըստ միոջէ խոնարհագոյն, զոր և ընդ մեզ
Նզովէ կաթողիկէ սուրբ Եկեղեցի։ Վասն
նոս ի Սարիսամոյ ասէ առեալ սկիզբն Յե-
սուս, և ոչ յառաջ քան զյաւիտեանս ի
Հօրէ, վասն որոյ Նզովեմք, և զՆեստորիոս և
զԵւտիքոս Նզովեմք, և զՀայ անուն Սարգիս
հանդերձ շանն և իշովն, իւրով, և բաժա-
նակից նոցա եղեցի յաւուրն յեւանումն,
շանց և իշոց գրեմք, զոր նզովեսցէ կա-
թուղիկէ առաքելական սուրբ Եկեղեցի,
և եղեցին Նզովեալ։ Նզովեմք և զՊաւղոս
Սամոսատացին, դարձեալ և զՊետրոս կնա-
փեցին (123), այնպէս և զԼէոսորդան՝ եթէ
խորհեցաւ ինչ այսպէս հերձուածս, և եղե-
ցի Նզովեալ ըստ ձեր աւետարանութեան
խօսիցդ։

«Դարձեալ գրեմք և վասն խաչեալ խա-
չեցելոյն, կոչեմք և երկրպագեմք. և որք
կարծեն՝ կամ կոչեն զՀրրորդութիւնն ի
խաչն խաչեալ կիրս ինչ Աստուածութեանն
կրեալ, Նզովեսցի Հրրորդութենէն, այն-
պէս և ի մերմէս. նոյնպէս և յեկեղեցւոյ Աս-
տուծոյ։ Ինկաղ, ամենամեծ Տէր Աբրա, և
յաղագս միաւորութեանն Աստուծոյն եւ
մարդոյն կալ առ միմեանս բնութեանցն, և

կամ՝ պատուեալ ի մէնջ։ Իսկ զմիութիւն Աստուածութեանն և զմարդոյն կալ առ մի-մեանս որք անգիտելիք են սրբոյ (124), այդ-քան հոմարեալ հաւանեցաք և հաստատե-ցաք։ Զանազի ասէ իսկ Աքանչելագործն Դիոնիսիոս. «Օ՛ի թէպէտ ի զանազանիցն » եկեալ առ միմեանս բնութիւնքն, այսու-» հետեւ մի տէր, մի Յիսուս Քրիստոս, մի » բնութիւն խոստովանելի է յետ միաւորու-» թեան՝ կարողակից արարեալ զմարմինն հա-» զեղէն Աստուածութեանն, և ի մի զօրու-» թիւնն միացոյց, ի մի Աստուածութիւնն » բաւանդակեաց»։ Այլ թէ զիարդ և կամ ոպէս ունին առ միմեանս բնութիւնքն, այլ ոչ յաւելի քննեցին՝ քան զոր Հոգին սուրբ ետ բարբառել. զիարդ սքանչելա-գործքն թոյլ ետուն գիտել Աստուածային իւրագործութեանն, ծնունդ իրբեւ տիրա-պէս Աստուծոյ Թողին։ Դարձեալ և երա-նելին Դիոնիսիոս Նիւսացին ասէ, եղբայր սրբոյ Հայրապետին Խարսղի, ի գիրս իւր որ յաղագս բնութեան մարդոյն, ի վերջ-բորդ ճառին՝ որ վասն միաւորութեան հոգ-ւոյ և մարմնոյ (125). «Լու քանզի պատշաճիւք » արդեաք ի մարուր բանին այսպէս. և մանա-» ւանդ առ մարդկութիւն միաւորութիւն

» Աստուածն բնակի, ընդ որում միտուորեալ
» մնայ անշփոթ և անպարագրելի, և ոչ քան
» անձին յեղանակի. քան զի նա ի բազմա-
» ցեալացն գոլով՝ թուի և ախտակից լինել վա-
» սին իւրութեան մարմնոյն, երբեք զի եմ
» բռնեալ Իսկ Աստուածն Հան ոչինչ ի կցոր-
» դութիւն որ առ մարմնին, և անձն այլայլելի,
» և ոչ ընդունակ եղեալ նոցա տկարութեն,
» այլ հաղորդեցուցեալ զնոսա իւրոյ Աստուա-
» ծութեանն. և լինի նաքօք մի միացեալ, մի
» որ ինչ էրն և նախ քան զմիաւորին։ Այլ
» ամն է յեղանակ այս խոստմանս և միա-
» ւորութեանս, և խառնել և մնայ յամենայնի
» ամենեւին անխառն և անշփոթ և անապա-
» կան և անփոփոխելի. ոչ ախտակից եղեալ՝
» այլ գործակից միոյն, ոչ ապականակից և
» այլայլակից՝ այլ ի միասին աճեալ նոցա. նա
» ոչ նուազեալ ի նոցանէ առ ի մնալ անփո-
» փոխելի, անշփոթելի. վասն զի և մարքարակա-
» ամենայն այլայլութեան անընդունակ է։ Ա-
» կայէ այսոցիկ մեծ խմբատասէրն Պօղոսիւ-
» ռաս յերկրորդ բանին շաղախառնիցն գրէ
» այսպէս. «Ոչ է ասել, եթէ անհնարին է ե-
» ութե իբրք առեալ լինել լուսն այլ էու-
» թեան և լինել մնան էութեան, մնալով
» քան իւրոյ բնութեանն մի լինելոյն, զմիաւ

„ էութեանն ընդ այլում լինելոյն, և զիւրն
„ ամբողջպահելոյ զմեծագոյութիւնն իւրաքան-
„ փոփոխեալ այլ փոփոխեալ զնոցա յորս լինի-
„ ցին իւր ներգործութեանն մերձաւորու-
„ թեան։ Իւր ասել զայս յաղագս մերձաւո-
„ բութեան անձին և մարմնոյն։ Իսկ եթէ՝ ի
„ վերայ անձին ճշմարիտ է բանս յաղագս ան-
„ մարմնութեան, որչափ ևս առաւել՝ ի վե-
„ րայ Յանին Աստուծոյ յաւէտ անբաղդատա-
„ բար և ըստ ճշմարտութեան մարմնոյն. որ
„ հակառակ խոցէ զբերանն հերձուածողաց,
„ բամբասել զԱստուծոյ Յանին միաւորու-
„ թիւնն որ առ մարդկութիս, քանզի այս հե-
„ թանոսացն է՝ որ զբաղմնաժիտաղելիս առնեն։

“Իւր դարձեալ քրիստոնեայք և հաւատա-
ցեալք՝ (որք) յայլ միտս լինչ (կամին) իմանալ և
խոստովանիլ, և կալմամբ առ միմեանս՝ կամ
միաւորութեամբ, եղիցին նզովեալ։ Իւր եթէ
որ զԱրիամ Աստուածամենն՝ զաւրբ Կայսն
հեռի կարծեսցէ յաստուածութենէն, և
զնոցի նզովեալ։ Իւր եթէ որ ասասցէ՝ թէ
երբեւ ընդ խաղալիկ ընդ Կայսն անցեալ,
այլ (և) ի նմա ստեղծեալ ասելով՝ աստուա-
ծաբար միանգամ և մարդաբար, աստուա-
ծաբար՝ զի առանց առն, և մարդկօրէն՝ զի
օրինօք ծննդեանն, նմանապէս անասաւած

է։ Լ;թէ որ ասասցէ յառաջ ստեղծեալ ըզ-մարդն, և ապա ասէ մոռեալ բնակիլ զԱ-ստուած, դատապարտի (126), որ ոչ ծնուն Ա-ստուծոյ ասէ, այլ փախչի ի ծնանելոյն։ Լ;թէ որ ի ներքս ածիցէ երկուս որդիս, ըզ-մին յԱստուծոյ ի հօրէ եւ զերկրորդն ի մօրէ, այլ ոչ՝ զմին և զնոյն, յորդեգրու-թեանէն արտաքոյ անկանի, զոր խոստացաւ ուղիղ հաւատացելոցն։ Հնուն թիւնք երկուք, քանզի Աստուած և մարդ, հոգի և մարմին. բայց որդիք ոչ երկուք և Աստուած ոչ եր-կուք, այլ՝ մի. զի և ոչ ասաւ երկու մարդ, թէպէտ և Պօղոս այսպէս ասաց, զերկուս՝ զներքին մարդոյն և զարտաքինն անուանեաց։ Լ;թէ պարտ է հատառօտագոյն ասել, այլ և այլ յորոց Փրկիչն, եթէ ոչ նոյն աներեւոյթն և երեւելին, անժամանակն և ժամանակաւորն, ոչ այլ որ, և այլ մի լիցի, վասն զի երկուք ի տանն ի մի խառնելով՝ Աստուծոյ մարդանալ և մարդն աստուածանալ. կամ արպէս արդեօք անուանիցէ։ Սեմբ՝ այլ և այլ գէմ՝ նմին Լրրորդութեանն ունի, քանզի և առ այլ ումն, այլ՝ զի մի զդէմն խառնակիցեմք, ոչ այլ և այլ. վասն զի մի (է) երկոքեանն, և նոյն՝ աստուածութեամբն։ Լ;թէ որ որպէս զմարգարէ՝ ասէ շնորհիւ (127)

ցնեալ, այլ ոչ ըստ բնութեան միաւորեալ և ստեղծեալ, ընդ նոսին եղեցի ի լաւագոյն զօրութենէն նզովեալ։ Մանաւանդ եթէ լինի հակառակ՝ եթէ ոչ ոք երկրպագանիցէ խաչեցեալն, նզովեալ լեցի, և դասեսցի ընդ աստուածասպանսն։ Զի՞ թէ ոք յետ մկրտութեանն՝ կամ յետ մեռելոց յարութեանն որդեգրութեան արժանաւոր լեալ ասիցէ (զԲրիստոս), նզովեալ եղիցի. քանզի սկսեալ, կամ յառաջադէմ, կամ կատարեալ՝ ոչ է Աստուած, թէպէտ և յաղագս առ փոքր փոփոխմանն այսպէս ասիցի։ Զի՞ թէ ոք ի բաց եդեալ այժմ ըզմարմինն ասիցէ, եւ մերկ զԱստուածութիւնն ի մարմնոյն, այլ ոչ հանդերձ՝ զոր էառ, և այժմ և յորժամ եկեսցէ՝ մի տեսցէ նա զփառս դալստեանն նորա. քանզի ուրէ մարմին նորա այժմ, եթէ ոչ ընդ առաղնն. եթէ ոչ ըստ Անանիքեցոցն աղճատանաց որ ասեն ի յարեգակն եդեալ, զի պատուեսցի անպատուութիւնն (128). կամ յօդս ցնդեցաւ, և լուծաւ որպէս ի բնութեան, և հոգւոյ հեղումն եւ փայլատականց ընթացք, ոչ կացեալ ուր և զջաջափեալն կամ զօրութեանն և տեսանելին երբեմն խոցողացն, զի Աստուածութիւնն ըստ ինքեանն անե-

բեւ ոյթ (Հ)։ Այլ եկեսցէ հանդերձ մարմնով որպէս ի միաբան, որպէս երեւեցաւ աշակերտացն ի լերինն Թափոր. ըստ որում եւ երեւեցաւ գերայաղթելով զմարմինն Աստուածութեանն, որպէս զայս ասեմ քեզ ծանուցանելով զիրս։ Եթէ աք ասասցէ զմարմինն յերկնից իջեալ, նզովեալ եղիցի, վասն զի երկնաւոր մարդն յերկնէ, նոյնպէս և երկրաւորքս (յերկրէ). և ոչ աք եւ յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից Որդին մարդոյ։ Իւ եթէ այլ ինչ նոյնպիսի՝ խմանալի է ասել յաղագս երկնաւոր միաւորութեան, որպէս և Քրիստոսի լեալ ամենայն, և բնակեալ Քրիստոս ի սիրտս մեր առ ի լուսաւորել զմեզ։

«Կամեցաք այսու ծանուցանել քո Խարեյաղթութեանդ յաղագս խաչելոյն և խաչելութեն, զոր և ասեմք՝ «Որ խաչեցար վասն մեր»։ դարձեալ ի ժամ աղօթիցն յորժամ երիցս ձայնեմք զերախտիսն Աստուծոյ յաղագս խաչելոյն, և սուրբ զնա կոչելով Աստուած՝ հզօր՝ անմահ, որ վասն մեր խաչեցար։ Իւ եթէ աք Հօր և կամ Հոգւոյն սրբոյ համարեսցի, և կամ ասասցէ զոգ երիցն կրեալ զանօրինականն և երիցն խաչեալ, դատապարտ գայցի երից Աստուածութեանն. ապա եթէ զՈրդւոյ միայն հրապարակեմք

զբաղեբարութիւնն փոխանելով ի բանէն որ ասէ սուրբ Աւետարանն. «Լցեմ զք ամենի համարեսցի զիս և զբանս իմ, զնա և Որդի մարդոյ ամենի արասցէ յորժամ եկեսցէ»։ Եւ այս ի գեմն խոստովանողաց, սակայն ծածկելոցն զերանութեան Աստուծոյ զնաչելութիւնն իբրեւ թէ զք յամենի համարեսցէ, ամաչեսցի յաւուրն յետնումն։ Քանզի որպիսի արդեօք Գրիգորիոս հայրն Աստուածաբանութեանցն ասէ՝ «Աստուած խոյանելարեգակն խաւարեալ»։ և համարձակի զք թագուցանել զնաչելութիւնն. բայց եթէ զք զՀայր և զՀոգին սուրբ մերձ դնիցէ, նզովեալ է։

«Իսկ ի վերայ այսր բանիցս և զման կատարման սուրբ Խորհրդոյն հացին և գինւոյն գրեմք։ Իսկ զնոյնդ անասնական առեալ զբաժակն հանդերձ անխմոր հացիւն, յաղագս աւանդելոյն մեզ՝ յայնպիսի գիշերոյն յորում մատնեաւ մարմին և արիւն իւր, կոչեաց ի յիւր շառակ իւր (և) կատարել ասաց։ Իսկ վկայեաց Յովհան Երանելին Ոսկեբերան ի յաւետարանին մեկնութեանն Ինֆարխեցւոյ գիրքն ասելով, եթէ «Օ՛միւս շար հերձ»ուածն արտաքս խլեսցէ, զման այսորիկ և»յետ յարութեան բաժակ միայն էառ և անչ

„խմոր հաց։ Բանզի և են ոմանք, ասէ, որ 'ի „սուրբ խորհուրդն ջուր 'ի կիր արկանեն, զի „և արիւն գինի միայն ծնանի և ոչ ջուր „(129)։ վասն որոյ և մեք պահեմք զաւանդս զայս։ Հայց վասն 'ի կողէն հեղլոյն երկուց վտակաց՝ խառնեցին ջուր, զի ընդ արեանն ջուր եղանէր, եւ զմարմնոն՝ զի Աստուածութիւնն ընդ մարմնին խառնիւր, ոչ ուղղապէս մեկնեցին զայս. զի յաղագս ջրոյն և արեանն երանելին Յովհան ասէ, իբրեւ թէ ջուրն զկատարեալ մեռելութիւնն ցուցանէ, իսկ արիւնն զկենդանութիւնն, որպէս էր իսկ կենդանի, կատարեալ և մեռեալ. զի ոչ մարդն բաժանեալ Աստուածութենէն, այլ զմի և զնոյն աւանդեմք՝ (որպէս) յառաջագոյնն. ոչ մարդ, այլ Աստուած և մարդ միայն, և յառաջ քան զյաւիտեանս անխառն մարմնոյն է, իսկ 'ի վախճանի զմարդն էառ յաղագս մերոյ փրկութեան. չարչարեալ մարմնոյն անչարչարելի Աստուածութիւնն, բաւանդակելի մարմնոյն, անբաւանդակելի Աստուածութեամբն, զնոյն ինքն երկնաւոր և երկրաւոր, տեսանելի և անտեսանելի, տարեալ և անտարելի. զի բաւանդակելի անբաւանդակելին՝ մարդ իցէ և Աստուած։ Իսկ մեք Աստուծոյ միայն երկիրպագանեմք

և խոստովանիմք. և անբաժանելի խառնումն զաստուածութեանն և զմարմնոյն հաւանիմք, զի մի և մարմնոյն երկրպագելով՝ և չարչարագութիւն ի ներքս ածցուք փոխանակ Նրբորդութեանն, և կամ մարդոյն միայն փրկակեալ արեամբն՝ և ոչ աստուածայնովն։

"Նա արդ՝ լուարուք վասն ծնելի ծննդեան Տեառն և պահոցն։ Իսկ յաղագս ծնելոյն զարս բաժինս առնէք ի մէնջ զայս առնելով պատճառս։ Նախ և առաջին զծնունդն Քրիստոսի. վասն զի ասէ Ղուկաս աւետարանիչն՝ առաքեալն՝ այսպէս. "Նա էր Յիսուս իբրեւ ամաց երեսնից". և սկսեալ յայտնապէս ցուցանել զի ի նոյն աւուր ծննդեանն միրտեալ, և առնուլ սկիզբն երեսնամեայ կատարեալ հասակի վարդապետութեանն. զի թէպէտ և պապանձմանն Զաքարիայի թուէն աւուրս հարիւր և ութսուն, որ դիպեցուցանէ զաւետաւորութիւնն ի քսան և հինգ մարտի, անտի թքուէն երկերիւր եօթանասուն և վեց զաւուրս յղութեան սրբոյ Կուսին ըստ տասնամսեան աւուրցն անդրանկածնութեանն, որ դիպեցուցանէ զծնունդն ի դեկտեմբերի քսան և հինգ։ Արդ՝ քննեսցուք նախ զԱեւտաւկանն և ապա զԱեւաւրանն. քանզի Ղեւ-

տակաւն այսպէս ասէ (130). «Տօնն իմ նը-
» ւիրեալ՝ սուրբ կոչեսցի ձեզ. երիս ժա-
» մանակս տարւոջս տօնեսջիք, և ամենայն
» արու ձեր յանդիման Լինիցին ինձ. և մա-
» տուսջիք պատարագս Տեառն»։ Եւ յառաջ
մատուցեալ ասէ. «Յամենեանն եօթներորդի
» որ օր մի է, սուրբ կոչեսցի ձեզ. և որ օր
» տասն և հինգ նորին ամսոյ՝ է տօն տաղա-
» ւարահարացոյն կոչեցեալ, սուրբ լիցի ձեզ.
» զամենայն գործ սպասաւորութեան մի գործ
» ծէք ի նմա։ Եւ օրն եօթներորդ սուրբ կո-
» չեսցի ձեզ՝ շաբաթ հանգիստ, զամենայն
» գործ սպասաւորութեան մի գործէք ի նմա».
զայս բանս գիրն ասէ։ Արդ՝ պարտանաւ մեր
Օ՛աքարիայ ի Թշրին ամսոյ էր, վասն զի նա
է ամիս եօթներորդ, այն է օր քաւու-
թեանն յորում մտանէր քահանայապետն
ի սրբութիւն սրբոցն, և այն՝ մի անգամ
ի տարւոջն ըստ բանին Պաւղոսի. բայց ի
նմին աւուր մերձենալ Օ՛աքարիայի առ
կինն անպատշաճ էր, վասն զի նա էր քա-
հանայապետ տարւոյն, և մեծ տօնն տա-
ղաւարահարաց առաջի կայր, եւ ամենայն
Խորայէլ անդ էր ժողովեալ. և զի եւթն
օր տօնելոյ էին զտաղաւարահարացն, և զի
անմարթ էր քահանայապետին թողուլ ըն-

ժողովուրդն և երթալ 'ի տուն իւր, նա աւանիկ զի 'ի քաջեայ էր քնակութիւնն նորա և ոչ Յերուսաղէմ, վկայէ այսմիկ սուրբ աւետարանիչն Ղուկաս և ասէ. եթէ «Յոր ժողովուրդն ակն ունէր Զաքարիայի, և զարմանային ընդ յամելն նորա 'ի տաճարին։ Եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշտամանն նորա, գնաց 'ի տուն իւր»։ Եւ դարձեալ ասէ. «Եւ տա աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ կինն նորա»։ Եւ ով ոչ գիտէն զայս՝ որ միտս ունին, թէ մինչ ժողովրդեանն հրամայէր սրբել և պաշտել ոչ միայն զտօնին՝ այլ և յաղագս տօնին զամամուտն և զառաջիկայ աւուրն զերրորդ, ապա զինքն 'ի մէջ գլխաւոր տօնիցն քահանայապետն թողայր զժողովուրդն և երթայր 'ի տուն եւ մերձենայր 'ի կին, նա աւանիկ յայտնապէս իսկ ասէ աւետարանիչն՝ թէ «Յարուցեալ «Մարիամ գնաց 'ի լեռնակողմն 'ի քաղաքն «Յուդայ, և եմուտ 'ի տուն Զաքարիայ». և արդ 'ի նոյն աւուր տօնին մերձենայր։ Ա.յլ իմաստնոյք, զի յայտ իսկ եղէւ 'ի տասն (151) թշրին ամսոյ պապանձումն Զաքարիայի, որ է քսան և հինգ սեպտեմբերի, և քսան և երկու թշրին ամսոյ մերձաւորութիւն և յղութիւնն Եղիսաբեթի։ Եւ արդ՝

թուական զաւուրս վեց ամսոյն՝ հարիւր եւ ութսուն, և ցուցանէ զվեշտասան ամսոյն, որ լինի 'ի վեց ապրիլի ըստ Հռոմայեցւոցն, որ եղեն աւետիք սրբոյ կուսին Մարիամու։ Այլ թողեալ տասնամսեայ աւուրս որ անդրանկածնացն կատարի, երկերիւր ութսուն և վեց օր, քսան և մէկ սեպտեմբերի (132), որ է 'ի վեց յունվարի ըստ Հռոմայեցւոցն։ Արդ՝ մեք 'ի յայս եմք հաստատեալք և անխախտելի կամք մինչեւ յաւիտեան աներկմիտ հաւատովք։

«Դարձեալ տասացուք ձեզ և յաղագս պահոցն յառաջաւորացն, վասն զի բազում հակառակութիւնք և հերձուածք և մաքառումն ունին Հռոմք ընդ ազգս մեր։ Արդ՝ յաղագս պահոցն յառաջաւորաց ոչ ինչ միջոց իցէ. քանզի ըստ տկարութեան ազգի բնութեան առաջնորդքն զատեցին 'ի քառասնորդացն, վասն զի սրբութեամբ հրամայեցին պահել, և 'ի բերոյ որթոյ մինչև ցկընջիթն (133) որոշեցին, թող թէ 'ի գինի կամ 'ի ձէթ. վասն զի ոչ զօրէին պահել՝ հրամայեցին հանգիստ տալ 'ի միջոցն։ Այլ պատճառ պահոցն այսքան բաւական է, թէպէտ և ունի այլ միտս բազում՝ զոր 'ի հնումն. զի յաղագս հինգ ղգայութեանցն յանցանել

առաջին մարդոյն որ 'ի դրախտին՝ հինգ օրեայ սահմանեցաւ սկսեալ պահք, իբրեւ թէ դա է (134) սկիզբն պահոց քրիստոնէութեան մերում և աստիճան եղանել 'ի բարձրագոյնն՝ որ 'ի քառասներորդն. այսպէս և Մովսէս յանապատին բարեկենդանացուցանէր զժողովուրդն առեալ հրաման 'ի Տեառնէ. նոյնպէս և քաղաք Նինուէացւոցն հինգ օրեայ պահօքն եղեն բժշկեալ, և լինէր դադարումն կործանմանն։ Այնպէս և Պետրոս որ եկաց հայրապետ յԱշրուսաղէմ, հրամայեաց հինգ օրեայ պահօքն զգաստանալ նախքան զմկրտելն։ Ա՛յլ բազում պատճառս կայ զորս աւելորդ համարեցայ աստ գրով բանագործել (135) և տաղտկալիս առնել մտաց։ Պահքն ոչինչ թիւրութիւն ունի առ հաւատն, այլ մանաւանդ առ 'ի լնուն է հաւատոցն. և ոչ նա մեզադրելի վասն հինգ օրեայ պահոցն պանդրուտուին, պարտ էր թէ և զայն քնաւ ոչ ուտէիք. բայց 'ի տօնի յորում (136) զտարատեսան զտուրբ Սարգիս յիշատակեմք, և ճշմարիտ մարտիրոսն որ վկայեցաւ յորդւոցն Հագարու՝ յաշխարհն Նագրեւանդի, յորդւոյն Մահմետի յաւուրս Թէոդոսի Թագաւորի. եւ ոչ ասի սա իշատանն Սարգիս աստուած

ուրացն, այն որ շանն տայր երկիրպագա-
նել։ Իսկ մեք Քրիստոնեայքս զուարքն Սար-
գիս զՀշմարիտ մարտիրոսն յիշատակեմք.
այլ յայդ մասին մի լինի ինչ հերձուած կամ
գայթակղութիւն։ Այլ արդ՝ Հշմարիտ խոս-
տովանութեամբ և համառօտաբար այսքան
խնացի և զորս վասն առաջնորդաց պահոցն՝
զորս ի վերոյ գրով աւանդեցաք, որ ունիմք
և եմք և կամք հաստատուն մինչեւ ցայսօր
և մինչեւ ց յաւիտեան, որ է ի ներկայումն
և յապառնիսն. և տէր՝ տէր իմ Յիսուս
եղլցի ընդ իւրում ծառայիդդ, և նմա փառք
և երկրպագութիւն եկեղեցւոյ սրբոյ, որ է
օրհնեալ յաւիտեան և յաւիտեանս յաւի-
տենից. ամէն »։

Այլ այսպէս խօսեցաւ Դաւիթ սրբոյ
Հայոց դէմ յանդիման Թագաւորին Տուկ
ծին, և ի մէջ ամենայն հռետոր վարդապե-
տաց տանն Յունաց ի քաղաքն Կոստանդի-
նուպօլիս։ Այլ յայժ հաճեալ Թագաւորն Տու-
կին, և ամենայն իմաստասէրքն որ նստէին
ի ձեմարանին, և հիանային ընդ կորովու-
թիւն բանիցն և ընդ հաստատութիւն շնո-
ղհացն. և յայնժամ արարին սէր և խա-
զաղութիւն ընդ սրդուոյ Թագաւորացն
Հայոց, և Թողեալ զաւելխիսութիւն բա-

նիցն՝ և եղեն ամօթով ամենայն չարայոյզքն Հայոց։ Իսկ վասն զի ամենայն դասք վարդապետացն Հռոմոյ ոչ կարացին արատ և կամ բիծ երկբայութեան գտանել հերձուածոյ ի հաւատոյ խոստովանութիւնն, զորս գրով Հռոմոյ խօսեցաւ Գագիկ արքայ Հայոց։ Նա և այլ բազում բանք են նորա անպարտելի բանիւք զորս արար դիմադրութիւն առ ի յանդիմանութիւն տանն Յունաց. զոր տեսեալ Թագաւորին և յոյժ հաճոյացեալ, վասն զի լի խակ էր բանիւք ամենայն ուղղափառութեամբ եւ ճշմարիտ խոստովանութեամբ որ ի Քրիստոս Յիսուս։ Իսկ արար Թագաւորն Տուկիծ մեծ սէր և ընդունելութիւն նոցա, և հնարհեաց բազում պարգեւս Գագկայ և Աստոմայ եւ Աղուսահլի, և այլոց իշխանացն։ Իսկ փառաւորեցաւ անուն Գագկայ ընդ ամենայն վարդապետաց տանն Հայոց, որք երեւեցան յայնմ ժամանակին քաւսաւորք, և այս են անուանք վարդապետացն. Տիրանն Կարապետեցին, և Սարգիսն կամ Լատիսիրցին, և Աստոմ Աղձաւեցին, Սնանէ և Գրիգոր Նարեկացին, Սարգիս Սեւանեցին, Յովսէփ Ինձայեցին, Գէորգ Ռէձեցին, Դէոսկորոս Սանահնեցին։ Սնանէ Հաղբատացին, Յա-

կոբա Բարահատայ որդին, Ենոքն և Տիմոթէոս, Յովհաննէս՝ որ անուանեցաւ Կոզեռն, Պաւղոս և Յովսէփ, Յովհաննէս, Դէորգ դպրապետն Թոմանեցին, եւ Պարկճակ, և այլք այսպիսիք անյաղթք որք կային լսեալք աստուածային շնորհօքն, որք երեւեցան յաշխարհս Հայոց յայսմ ժամանակիս։ Իսկ Թադաւորն Դրագիկ նմանեալ էր շնորհաց նոցա։

ԺԴ. Եւ յայնժամ եղեալ Դրագիկ յերեսաց Թագաւորին, և մեծաւ փառաւորութեամբ գնային յաշխարհն իւրեանց։ Եւ գայր խաղայր Դրագիկ շահն և գայր հասանէր մինչեւ ի Կեսարիա քաղաք Դամրայ. և որպէս էր յառաջագոյն զայրացեալ ընդ Յունաց՝ և յարձակեցաւ ի վերայ մետրապոլտին Կեսարու մեծաւ սրտմտութեամբ, որում անուն ասէին Սարկաս, վասն զի էր յոյժ հերձուածող և հայհոյիչ քար և պիղծ՝ հերետիկոսն Սարկոս. և այնչափ լքեալ ելեալ անօրէնն Սարկոս, մինչեւ իւր շանն ա նուն Երմէն կոչէր։ Եւ յառաջ ժամանակաց զայս ամենայն լուեալ էր Դրագիկ արքայ Հայոց, և էր յոյժ զայրացեալ ցասմամբ, բայց ի մէջ Հռոմոց էր, ոչ ինչ կարէր առնել. և էր մետրապոլիտն անուանի և մեծ,

և ահարկու ամենայն տանն Յունաց, բայց հայհոյիչ էր յոյժ ապգիս Հայոց, և ամենայն շան Աբմէն կոչէր։ Եւ և անպատմելի սուգ եղեալ Հայոց յորժամ լուան եթէ կամի թագաւորն զարգիս Թագաւորացն Հռոմ կրնքել։ Եւ ընդ որ գայր Գագիկ յամենայն իշխանութեանն, հրամայեաց ամենայն զօրացն Հայոց խայտառակել զփառաւոր կանայսն Հռոմոց, և այնիւ նախատեաց զնոսա, վասն զի խորհեցան այլ ոչ մտանել բնաւ ի Կոստանդինուպօլիս, այլ խորհեցան գնալ առ Աբասեան սուլտանն Պարսից, և տիրանալ աթոռոյ թագաւորութեանն տանն Հայոց. զի բաղում անգամ կոչէր զԳագիկ սուլտանն, և նա յաղագս քրիստոնեական հաւատոյ արգելեալ լինէր։ Իսկ Գագիկ յորժամ մերձ եղև առ մետրապօլիտն, կամեցաւ զնչեւանս առ նա առնել. և գնացին նուիրապետն և ասեն ընդ հերետիկոսն Մարկոս, եթէ Գագիկ ազգայ Հայոց առ քեզ կամի իջեւանել այսօր։ Եւ լուալ կիւռ Մարկոս և եղեւ ուրախ, և հրամայեաց զարդարել զամենայն տունն իւր, և ակամայ և ոչ կամայ ելանէր ընդդէմ Գագկայ հանդերձ քահանայիւք, և մեծաւ փառաւորութեամբ բերեալ իջեւանէր զնա ի տունն իւր. և արար

Մարկոս ուրախութիւն մեծ։ Իսայ Գագիկ կայր յոյժ զայրացեալ ամենայն զօրօքն. եւ իբրեւ սկսաւ ուրախանալ ընդ գինեաւն, յայնժամ սկսաւ ասել Գագիկ ցկիւռ Մարկոսն, եթէ «Լուեալ եմ եթէ քո շուն զօրաւոր կայ. և կամիմք տեսանել զնա»։ Իւ գիտացեալ Մարկոսն թէ կամի ուզել զնա իւր, և զանց արար զբանիւն. և յորժամ կրկնեաց զբանն Գագիկ, կոչեցին զշուն և նա ոչ գայր. քանզի զանուն ոչ համարձաւ կեցան ձայնել զԸրմէն, և ասէ Գագիկ. «Օ իւր անուն ձայնեցէք որ գայ»։ Իւ յայնժամ Մարկոս յաղթահարեալ ի գինւոյն և ձայն տուեալ շանն ասէր «արմէն արմէն». եւ եկեալ շուն նմանեալ առիւծու, եւ տեսեալ Գագիկ ասէ. «Ընդմէ՞ն կոչի շուն այս». եւ ամաչեալ յոյժ Մարկոս ասէ. «Մանուկ է. վասն այնր ասեմք իւր Ընդմէն»։ Իւ ասէր Գագիկ. «Ընդմ տեսանեմք թէ ոչ է մանուկն. Ընդմէն՝ թէ Հոռոմն»։ Իւ մեծ քուրձ մի պատրաստաւ կան ունէին, և ակնարկեաց Գագիկ և յայնժամ հետեւակքն պատեցին, և մեծաւ աշխատութեամբ աբկանէին զնա ի քուրձն։ Իւ տեսեալ կիւռ Մարկոս և գիտացեալ եթէ զշունն կամին զհետ իւրեանց տանել,

սկսաւ բարկանալ և մեծամտել ի վերայ պաշտօնէիցն. եւ ժպտեալ Դագիկ և ձեռամբն արարեալ սպասաւորացն, և յայնժամ ընդ չորից կողմանցն պատեցին զանօրէնն Մարկոս, և պաշարեալ զնա մեծ բռնութեամբ և չարչարանօք արկանէին զնա ի քուրձն առ Աբրահէն կոչեցեալ շուն, և առեր Դագիկ յայնժամ. «Ցեսանեմք թէ ո՞վ է զօրաւոր, մանուկն՝ թէ Հոռոմ մեծարպօլիսն»։ Եւ հրամայեաց Դագիկ սատակապէս ուժգին հարկանել զշունն. և նորա զայրացեալ արձակէր ի վերայ Մարկոսի, և լափէր զնա ատամնցի. և զմեծ մնոն աւուրբն այնպէս հարկանէին զշունն, և բարկութեամբ հեզոյր զարիւնն պիղծ հերետիկոսին Մարկոսի, և ձայն ուժգին և աղաղակ բազում ելանէր ի Մարկոսէն. և այսպիսի օրինակաւ պատերազմ ահաւոր կայր յատակ քրձին և կրճատումն ատամանց, և հառաչումն սրտին ելանէր ի խորոց քրձէն. և այսպէս չարեաւ ատամակեցաւ չար և պիղծ հայհոյիչն և եղեւ կերակուր շանց։ Եւ յայնժամ հրամայեաց Դագիկ աւար հարկանել զամենայն տուն նորա, վասն զի էր մեծատուն և անուանի յոյժ. և անհամար գանձ ոսկւոյ և արծաթոյ առեալ, և հօտս ոչխա-

բաց էին նորա հաղար, և լուծք գոմշի քա-
ռասուն, և եզանց լուծք քսան. և զայս ա-
մենայն հանով արարեալ գնաց 'ի տուն իւր
բազմութեամբ ձիոց և ջորւոց։ Բրդ՝ զայս
այսպէս գործեաց Դաւիթ 'ի մէջ Հռոմոց,
զոր ոչ այլ ոք համարձակեցաւ գործել ոչ
յառաջ և ոչ զկնի. և այլ ոչ էս մնաւ 'ի Կոս-
տանդինուպօլիս, և ոչ գնաց 'ի կոչն Հռոմոց։

Եւ էր յայսմ աւուրքս Դաւիթ արբ-
քայ որդի Աբասայ Կարցոյ՝ այր իմաստասէր
և լցեալ ամենայն շնորհօք 'ի փիլիսոփայա-
կանայն և հռետորական ուրուեստիցն, եւ
ընդ վարդապետսն Հռոմոց ճեմէր. և յոր-
ժամ մնասէր 'ի Կոստանդինուպօլիս, 'ի յամ-
սինն նստէր 'ի մէջ սրբոյն Սոփիէի, և բա-
ւանդակ գիտէր զհին և զնոր կտակարանսն
Աստուծոյ, և էր յոյժ ճարտարաբան։ Նա
և Գրիգոր Պալհաւունին որդին Վասակայ
անպարտելի շնորհօք լցեալ, և զարմանալի
էր սա յամենայն պատասխանիսն ընդդէմ
Հռոմոց, այր քաջակիրթ և ամենայն հրամ-
տուութեանց հետեւեալ. և բովանդակ հա-
սեալ սորա 'ի վերայ հին և նոր կտակարա-
նացն Աստուծոյ. և սա ընդ իմաստասէրսն
նստէր 'ի յամսինն 'ի մէջ սրբոյն Սոփիէի, և
խօսէր ընդ վարդապետացն Հռոմոց, և 'ի

կարգի վարդապետացն էր սա յաղագս Հայոց։

ԶԵ. Եւ տէր Ներսէս ի Բագրեւանդ գաւառէ իշխան Հայոց, և սա էր այր կորովի և յոյժ հանճարեղ, բանիբուն և իմաստասէր, ուսեալ ի մեծն Արգինա, հասեալ ամենայն շնորհաց աստուածեղէն կտակարանացն, և կարող էր կալ ի դիմի ամենայն իմաստնոցն Հռոմոց հզօր գիտութեամբ և զարմանալի առենախօսութեամբ, նմանեալ Գագկայ և այլոց իմաստասիրացն Հայոց զոր գրեցաք։

Արդ՝ յաւուրս Գագկայ Շահնշահի որդւոյ Աշոտոյ Թագաւորին Հայոց եղև ահաւոր և զարմանալի նշան Աստուծոյ վասն սուրբ Խորհրդոյն ի վանքն որ կոչի Պիզու, զոր շինեաց Գագիկ ոսքայ։ Արդ յաւուր Պենտեկոստէին մինչ սուրբ սպասաւորքն մատուցանէին ի սուրբ եկեղեցին Աստուծոյ, մասն ի միջի սուրբ խորհրդոյն ընկէց Ժամանարն առաջի սրբոյ սեղանոյն. և յաւուրն երրորդի տեսանէին տեսիլ երկու արժանաւորք ի ճգնաւորացն, և եկեալ ի տեղն աղօթիցն յառաջ քան զհարցն, և ասէր առաջինն՝ թէ «Տեսանէի ի տեսլեան գիշերոյ, զի կանթեղն որ կայր ի գումպէթ տաճարին՝ անկանէր առաջի սրբոյ սեղանոյն Աստուծոյ,

և լոյսն անշիջանելի մնաց ի նմա»։ Եւ դարձեալ միւսն այսպէս ասէր. «Եւ ես իսկ տեսանէի, և ահա ասաղ մի մեծ և զարմանալի ի բարձրութենէ երկնից անկեալ եղեւ առաջի սրբոյ սեղանոյն Աստուծոյ, և լոյսն առաւել եւս բորբոքէր ի նմա»։ Եւ հիացեալ ամենեցուն ընդ տեսիլն. և յայնժամ հայր վանացն գիտացեալ հոգւոյն՝ և ասէր. «Տեսէք՝ զի ահա անկեալ կայ մասն ի սուրբ խորհրդոյն». և նոյն ժամայն լուցեալ մոմեղէնս, և հանդերձ խնկաք հասանէին ի տեղին, և ոչ (137) էին աւել ածեալ Եկեղեցւոյն զայնքան աւուրսն. իսկ յորժամ եկանէին ի բեմն՝ գտանէին զմասն սուրբ խորհրդոյն առնարատ առաջի սրբոյ սեղանոյն Աստուծոյ, և առեալ գոհացան զԱստուծոյ մերոյ ընդ Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. և բազումք հաստատեցան ի հաւատս ուղղափառութեան, և յայնմ օրէ ծանեան եթէ խորհուրդս այս երկնային է և աստուածային, և ճշմարիտ սա է մարմին որդւոյն Աստուծոյ։

ԴԶ. Իսկ ի փոխել Թուականութեանս Հայոց յամս ՇԺԵ (1066—1067), երեւեցաւ աստղ մի գիսաւոր յարեւելից կողմանէ՝ և յարեւմուտս ընթացեալ, և կացեալ նորա ամիս մի և եղեւ աներեւոյթ։ Եւ յետ ա-

ուրց երեւեցաւ յարեւմուտս կոյս ի յե-
բեկորէն, զոր բազմաց տեսեալ ասէին եթէ
այս այն գիսաւոր աստղն էր որ երեւեցաւ
յարեւելս։

Յայսմ ժամանակիս զօրաժողով արար ա-
միրայն Պարսից որ ասի Ուշէն, և յոստակա-
նութիւն գարձոյց զաւազուն գաւառս, եւ
արեան ջախջախիս արարեալ զդասս հաւա-
տացելոց Քրիստոսի, և բազում սուգ եւ
խաւար տարածեցաւ ի վերայ երկրի ի ձե-
ռաց անօրինիս այսմիկ։ Ու գայր խաղաղ
բազմութեամբ զօրաք, և արար ձմերոց ի
Սեաւ լեառն, և ահագին արեան հեղու-
թիւն և կոտորած լինէր յամենայն գաւա-
ռին, և բազում անձինք ի սրբոց կրօնաւո-
բացն մատնեցան ի բերան սրոյ և յայրու-
մբն հրոյ, և եղէն կերակուր գազանաց և
թռչնոց, և ոչ ժամանեցին ծածկել հողով,
վասն զի մնացին անթաղք մինչեւ յաւի-
տեանս։ և անթիւ վանորայք եւ գեղք
այրեցան հրով, որք երեւին մինչեւ ցայս
օր։ և Սեաւ լեառն և ամենայն գաւառն
ի ծայրէ ի ծայր լցուաւ արեամբ կրօնաւո-
բացն և քահանայից և արանց և կանանց, և
ծերոց և տղայոց՝ ըստ բանի մարգարէին որ
ասէ, եթէ «Երիտասարդս նոցա եկեր հուր,

և վասն կուսանացն ոչ ոք սպասաւ. և քա-
հանայքն նոցա անկան 'ի սուր, և զայրիս նոցա
ոչ ոք էր որ լայր». և թէ՝ «հեղին զարիւնս
նոցա շուրջ զՅրուսաղէմաւ, և ոչ ոք էր
որ թաղէր զնոսա»։ Արդ՝ այսպիսի կատա-
բած բարկութեան էած 'ի վերայ հաւա-
տացելոց անօրէնն և չար գազան Աչէնն,
որ և անպատմելի (է) ասացողացս գործ նորան

Յայսմ ժամանակիս ելանէր ամիրայ մի
մեծ և հզօր 'ի դրանէն Աբասեան սուլտա-
նայ, որ էր հեռակ նորա և անուն նորա Գօ-
մէշ Տիկին (138), և յարուցեալ գայր մեծաւ
ահարկութեամբ և ախոյեան զօրօք հասա-
նէր 'ի վերայ քրիստոնէիցն, և վտակս արեան
յարուցանէր 'ի յաղգէ հաւատացելոց. եւ
բազում խոցուածով զայրացեալ 'ի վերայ
գաւառին Թէլմոյ որպէս գազան, և արար
սաստիկ կոտորածս զմնացեալսն յառաջին
բարկութենէն, և մեծաւ պատերազմաւ
էառ զբերդն որ կոչի Թէլէթուխ, և անողորմ
զամենեսեան սրով կոտորեցին։ Եւ անհամար
գերութիւն հասանէր 'ի գաւառն Ռուհայոյ,
և իջեալ 'ի վերայ բերդին որ կոչի Այսեպի,
և աւուրս ինչ պատերազմեալ 'ի վերայ նո-
րա և ոչ կարաց առնել ինչ. յայնժամ ան-
ցանէր ընդ հուն Եփրատ գետոյն, և սրով

յարձակեցաւ 'ի վերայ Հասան-մարդ գա-
ւառին, և աստուածատատ բարկութեամբ
'ի բերան սրոյ մաշեաց զայն քաջ վայելուչ
գաւառն, և զմարգ գառնութեան իւրոյ
չարութեանն եհեղ 'ի վերայ ամենայն գա-
ւառին, վասն զի որպէս զկարկուտ հրացայթ
փայլատակմամբ հասանէր 'ի վերայ ամենայն
բնակչաց երկրին սոսկալի կոտորածով, և հր-
բով այրէին, և զամենայն իշխանսն գաւառին
Հասան-մարդոյ սրով և մահու խոցմամբ սա-
տակէին, և զփառաւոր կանայսն և զվայե-
լուչ որդիսն նոցա հանդերձ դստերօքն 'ի
գերութիւն վարէին։ Այլ ահա անդ էր տե-
սանել զաստուածատատ բարկութիւնն 'ի
վերայ հաւատացելոց Քրիստոսի, վասն զի
առ հասարակ մեծամեծք և ազգատոհմ
ճաշակ գառնութեան ճաշակէին յանողորմ
գազանէն և 'ի . . . . . ազգէն Թուրքաց, և
առ հասարակ 'ի սուր սուսերի մաշեալ լինէր
վայելուչ գաւառն այն, և զաւուրս երիս ան-
դադար լինէր կոտորումն քրիստոնէից։ Այլ 'ի
վերայ այսքան բարկութեանն և գառն կատա-
ղածին՝ իշխան ոմն որ էր 'ի բերդն Կաբպնայ,
որ ասի Սիփար քաղաք, փութայսէս առա-
քեաց 'ի քաղաքն Եդեսիոյ և ազգ արա-
բեալ տուկին՝ որ կոչէր Աբուանդանոս, եւ

ասաց թէ՝ «Ամիրայն զօրայն Պարսից հոս կայ յերկրս գետոյս Եփրատայ հարիւր ա-բամբք. եկ հասիր ի վերայ սորա, և սրա զինքն ձերբակալ»։ Իսկ նորա յապաղմամբ և անշտապողական արուեստիւ գայր ի վերայ ամիրային Գոմէշ-Տիկնայ զօրօք բազ-մաք, զորս ըստեալ ամիրային և առաքեաց ի Հասան-մնուր բերել զզօրս իւր։ Իսկ Աբ-ուանդանոսն հասանէր զօրօքն իւրովք յան-ուանի բերդն որ ասի Օշին, հազար եւ հինգ հարիւր ձիաւորով և քսան հազար հետեւակով, և հանդիպեալ միմեանց ի պատերազմ, և որպէս զառիւծ յարձակե-ցաւ Աբուանդանոսն՝ հասանէր ի վերայ զօ-բացն Թուրքաց, վասն զի էր այր քաջ եւ պատերազմող, և էր տեղին դժար և կսուր։ Եւ սկսաւ Թուրքն բազմանալ, և յայնժամ ասէր Աբուանդանոսն ընդ զօրսն իւր թէ՝ «Սակաւ մի յետս դարձիք, որ Թուրքն ըղ-հետս մեր յարձակին. զի յորժամ ի վերայ յարձակիցեն՝ չկարեն փախչել»։ Եւ եղեւ յորժամ սակաւ մի դարձան, ետես զի ամե-նայն զօրքն Հոռոմոց ի փախուստ դարձան, և Թողին զԱբուանդանոսն ի մէջ զօրացն այլազգեաց։ Եւ եղեւ օրն այն մեծ և սոս-կալի, և ահաւոր կորուստ քրիստոնէիցն, որ

և լուսաւ ամենայն դաշտն արեամբք և գե-
ղութեամբ, և Աղուանդանոսն և ամենայն
իշխանքն քրիստոնեից մատնեցան ի գերու-
թիւն, և մնացեալքն փախստական լեալք
մտանէին ի բերդն որ ասի Օշին՝ և փրկե-
ցան։ Իսկ յաւուրս յայնմիկ կոտորեցան աբք
իբրեւ մեռասան հաղարք։ Իսկ եղեալ ամի-
սայն ի պարանոցն Աղուանդանոսին (լոյծ)
եղանեց, և այնու վարէր զնա ի գերութիւն.
և եթեր ի դուռն քաղաքին Ուռհայոյ և ծա-
խեաց զնա քան հազար դահեկան, և քա-
ռասուն հազար դահեկան եղեալ զորդին
գրաւական, որ մնաց ի Պարսիկս մինչեւ
ցայսօր. և զայլ մի ըստ միոջէ գնեցին ի ձե-
ռըն ոսկւոյ և արծաթոյ։ Իսկ Թոմշ-Տիկին
մեծաւ յաղթութեամբ և բաղում գերու-
թեամբ և անհամար աւարաւ խաղաց և գը-
նաց յաշխարհն Պարսից, և մատուցեալ ա-
ռաջի սուլտանին ծառայս գեղեցիկս ման-
կունս և աղջիկունս իբրեւ երկու հազար։

ԴԷ. Դարձեալ ի թուականութեանս
Հայոց ՇԺԶ (1067—1068) մեռաւ թա-
գաւորն Տուկիծ և մնաց իւր տղայ որդի մի
Միխայել անուն. և կացեալ ամիս (159)
թագաւորութեանն անիծագաւոր զամ մի,
թագաւորին ունելով զամիս թագաւորու-

թեանն, որում անուանն ասէին Լեւոնակի (Լեւոքսիա)։

ԴԸ. Լեւ եղեւ յորժամ փոխեցաւ ի Թուականութեանս Հայոց ՇԺԸ (1069–1070) բերեալ Լեւոնակի գաղտաբար զկիսան ոմն՝ որում անուանն էր Ռամանոս, որ ասի Տիւ-ժէն, և ածեալ զնա ի սենեակ իւր ամուսնացաւ ընդ նմա, և պահեաց զնա ի սենեկին, և մինչեւ կոչեաց զԿեսարն զեղբայրն Տուկծին, եւ փոքձելով ասէր ցնա՝ եթէ «Օ՞ինչ արասցուք, զի ահա ահեռս թագաւորութեանն անտէր կայ, եւ Միխայլն տղայ է»։ և պատրուակաւ բանիւք կամէր կորուսանել զնա։ Լեւ ասէր ցԹագուհին Կեսարն. «Լեւ ինձ զի՞նչ փոյթ է այդ, վասն զի ահա ես և որդիքն իմ ծառայ եմք քո. ուստ դու կամիս՝ տուր զսեռս թագաւորութեանդ»։ Լեւ հիացեալ Թագուհին և հաճեալ ի բանս նորա, և տպրեցաւ ի չարեաց։ Յայնժամ ասէ ցնա Թագուհին. «Ելի մնա ի սենեակդ, և երկիր պագ թագաւորին»։ Լեւ զարմացեալ Կեսարն և կայր հիացեալ, և գոհանայր զԱստուծոյ որ ոչ խաբեցաւ ինչ չար. և յայնժամ մտեալ երկիր եպագ Թագաւորին ի վերայ երեսաց իւրոց, և վաղիւն տարան զՏիւժէնն ի սուրբ Սոփի,

և միաբան ամենայն քաղաքն Կոստանդինու-
պօլիս ձայնեցին նմա գով, և եդին զԹագն
'ի վերայ գլխոյ նորա։

Ղ.Թ. Յայսմ ժամանակիս սուրբ հայրա-
պետն Հայոց Տէր Վահրամ, որ կոչեցաւ
տէր Գրիգորէս, որդի Գրիգորայ՝ որդւոյ
Վասակայ Պահլաւունւոյ, անկեալ 'ի սիրտ
նորա սէր միայնակեցութեան եւ լինել ա-
ռանձնական յաղօթսն Աստուծոյ. և սա նը-
մանեալ լինէր Եղիայի և Յովհաննու Մը-
կրտչին, և առ ինքն բերեալ զգործ վա-
րուցն սրբոյն Անտոնի եւ ցանկայր մեծաւ
փափագանօք 'ի գլուխ լերանց բնակել։ Խոր-
հեցաւ թողուլ զգահընկալ և զմեծ պատիւ
աթոռոյ հայրապետութեանն, ընդ որում
միաբանեալ եղեւ նմա Գէորգ վարդա-
պետ՝ որ էր դպրապետն, և երդմամբ կա-
պեալ զանն գնալ զհետ իրերաց 'ի միայ-
նակեցութեան ճանապարհն։ Եւ ելեալ եղև
բանս այս յականեսի, և խնդացեալ զխորհուրդ
գրոց նոցա թագաւորն և իշխանք Հայոց և
արգելուին զնա մեծաւ իշխանութեամբ.
և նա եւս առաւել պնդէր 'ի գործս իւր,
և այսպէս ասէր ցնոսա՝ եթէ զայս ունիմ
'ի միտս իմ գնալ 'ի Հռոմ, և շրջել ընդ
ամենայն անապատսն Եգիպտացւոց. և նո-

քա ոչ կամէին թողուլ զնա։ Իսկ նա 'ի յօժա-
րութենէ կամացն ասէր ցԹադաւսին Հայ-
ոց. "Դիք ձեզ կաթողիկոս զոր կամիք, և զնս
մի արգելուք յարդարութեան ճանապարհ
հէն"։ Եւ յորժամ (ըստ) յօժարութի կամաց
նոցա ընտրեցին զԳէորգ վարդապետն՝ որ էր
դպրապետ նորա, և 'ի ծածուկ 'ի նմանէ
հաւանեցուցին զԳէորգ զի առցէ զաթոռ
հայրապետութեանն Հայոց։ Եւ տէր Գրի-
գորէս զայս ամենայն ոչ գիտացեալ. և յայն-
ժամ ածին զԳէորգ զի ձեռնադրեսցեն ըստ
նա կաթուղիկոս, և տեսեալ տէր Գրիգո-
րէս հիանայր յոյժ, և 'ի կամաց և յոչ կա-
մաց ձեռնադրեաց զնա կաթուղիկոս յաթոռ
հայրապետութեանն Հայաստանեայց, բայց
'ի սիրտն ոխայր, և ընդ հակառակս համա-
րեցաւ զնա, վասն զի մոռացաւ զուխտն մի-
աբանութեան հոգեւոր ճանապարհին. եւ
յօրէ յայսմանէ եմուտ հակառակութիւն 'ի
մէջ երկուց հայրապետացն Գրիգորիսի եւ
Գէորգայ։ Եւ գնաց տէր Գրիգորէս 'ի խոր-
հուրդ հոգեւոր ճանապարհաց իւրոց առ
'ի բնակել 'ի Լերինս ընդ միանձունսն ճըգ-
նաւորացն Քրիստոսի, եւ ստացաւ վարս
խստակրօն (140) և ամենայնի չորաճաշակ։

Ճ. Յայսմ ամի ժողով մեծ արար Թա-

գաւառն Տիրոջէն զամենայն աշխարհն Յունաց մինչեւ ի սահմանս Հռոմոց և զամենայն կողմ արեւելից աշխարհին, և ահագին բազմութեամբ խաղացեալ գայր հասանէր ի վերայ աշխարհին Տաճկաց. և ինքեալ բանակ հարկանէր ի վերայ անուանի քաղաքին որ կոչի Անկեռ, մերձ ի Հալպակ քաղաք, որ էր հռչակաւոր քաղաք Տաճկաց. և սաստիկ պատերազմ եղեւ և ի վտանգ էարկ զքաղաքն Անկեռ ի ձեռն խուժադուժ ազգացն և անթիւ զօրացն։ Եւ զինեալ այսպան հեղուլթեանց հրամայեաց Թագաւորն կանգնել քաղաս և փիլիսպանս ընդդէմ քաղաքին։ Վասն զի էր քաղաքն պարսպեալ ամենայն ամրութեամբ։ Եւ եղև ի հարկանել զպարիսպն մեծամեծ քարամբք և խախտեալ մասն ինչ եղեալ ի քաղաքն. և յայնժամ սարսափեցան (141) բազմութիւն ամենայն քաղաքին, և առհասարակ արարին խաչաձեւս ի ձեռս իւրեանց և դիմեցին ի դուրս առ Թագաւորն. և ամենայն մեծամեծքն անկանէին առաստս Թագաւորին մեծամեծ ընծայիւք, և եղէն հարկատուք և զերծ ի մահուանէ։ Եւ արար Թագաւորն ողորմութիւն ի վերայ քաղաքին, և ընդ հարկաւ արարեալ զնոսա։ Եւ յայնժամ հասանէր Թուղթ ի Թագաւ-

հայն առ Թագաւորն Տիոժէն դառնալ փութացէս ի Կոստանդինուպոլիս. և լուեալ զայս Թագաւորն գնաց փութանակի։

ՃԱ. Յայսմ ամի եղեալ Կորիճ ամիրայն որ էր յազգէ սուլտանին Աբասանայ, կամեցաւ գաղտ ապստամբել ի Պարսից և մտանել ի Կոստանդինուպոլիս, և անթիւ զօրքն հասանէր ի յաշխարհն Հոռոմոց. վասն զի այսպիսի նշան ոչ երբէք տեսաք և ոչ լուաք, և այս էր զոր ասաց Փրկիչն, եթէ եղիցի նշան ի վերջին ժամանակին յարեգակին ի լուսինն և յաստեղս, շարժմունք և արհաւիրք, որպէս ասէ իսկ սուրբ Աւետարանն։ Իսկ արդ այս եղեւ սկիզբն կատարածի և կրկին աւերման յամենայն աշխարհի յա . . . զաբրայն թուքքայ։

ՃԲ. Յայսմ ամի շարժեալ և որպէս զգետ յարուցեալ Աբասան սուլտանն եղբայր Տուղրիլ սուլտանայ, և անթիւ բազմութեամբ խաղայր և գայր հասանէր ի յաշխարհն Հայոց բազում կոտորածիւ և արեան հեղմամբ. և իջեալ ի վերայ Մանծկերտու, և առ ի չգոյէ պահապան քաղաքին յաւուր միում առաւ զքաղաքն Մանծկերտ, վասն զի փախեան Հոռոմոց պահապանքն. և աբրաբ զքաղաքն կոտորած վասն առաջին հայ

հայութեան եղբօր Նորա Տուղրիլ սուլտան-
նին, վասն զի զայս անդարձ արարեալ էր
Նորա ի ժամ մահուանն։ Եւ յարուցեալ
Աբասան սուլտանն և խուժադուժ և անթիւ
ազգաւ հասանէր ի քաղաքն որ կոչի Յա-
միթ, և սիրով բանակ հարկանէր ի դուռն
քաղաքին. և ի նմին բանակին ծնանէր կինն Նո-
րա որդի, և կոչեաց զանուն Նորա Դուշ։
Եւ անտի յարուցեալ գայր ի գաւառն Թղիսը-
մոյ և պատեալ զնա մեծաւ նեղութեամբ և
ամենայն հնարիւք պատերազմեալ ի վերայ
Նորա, և զաւուրս բազումս ոչ ինչ կարայ
առնել բերդքաղաքին Թղիսմոյ։ Սկիզբն սի-
բոյ արարին, և հարկս ուղեալ և բնակչա-
ցին Թուլացեալ և անհոգս լինէին, և Թո-
ղին զզարիսսն անպահապան։ Եւ տեսեալ
զօրք պլուզգեացն զանպատրաստութիւն Նո-
ցա, և յոչ կամայ սուլտանին դիմեաց ամե-
նայն բանակն ի վերայ Նորա. և պատեալ
սաստիկ պատերազմաւ՝ և առին զքաղաքն և
կոտորածս բազումս արարին և անթիւ գե-
րութիւնս։ Եւ լուեալ սուլտանն և զարմա-
նայր և ապաշաւէր զկոտորած Նոցա, վասն
զի ունէր երդումն ընդ Նոսա։ Եւ անտի յա-
րուցեալ սուլտանն գայր խաղայր ահագին
բազմութեամբն իւրով և հասանէր ի գաւա-

ոքն Ուռհայոյ. և արար ասպատակ զամե-
նայն աշխարհն մինչեւ ի դուռն քաղաքին.
եւ բանակ հարկանէր ի վերայ անուանի
բերդին որ կոչի Թէլթուխաւ, մերձ ի Սեւ-
աւերակքն, (առ) և զԱրիւծամթիկն և արար
սասակ կոտորածս և ելից զամենայն սահ-
մանս նոցա արեամբ. և առեալ զբերդն ըզ-
Թէլթուխաւ, և բազում աւարաւ և գերու-
թեամբ գնայր խաղայր ի վերայ քաղաքին
Ուռհայոյ. և պատեալ շրջանակաւ զամե-
նայն քաղաքն, և ելից բանակաւ ծայրէ ի
ծայր։ Այս էր յաւուրս ձմերայնի ի մարերի
ամսոյ տասն, և էր տուկ ի քաղաքն Ուռհայ
Վասիլն Եղիսիանին որդին Պուլղարաց թա-
գաւորին. եւ տեսեալ քաղաքացեացն զան-
թիւ բազմութիւն զօրացն այրազգեաց, ահա-
բեկեալ սասանեցան ամենայն բազմութիւն
հաւատացելոցն որք էին ի քաղաքն Ուռհայ,
վասն զի բազմութիւն սուլտանին զօրացն ելից
զդաշտս և զգագաթունս լերանցն. և դո-
ղաց երեսալով քաղաքն ի շարաշունչ վիշա-
պէն և յայն դառն գազանէն, վասն զի էր
այր արիւնարբու. և կացեալ զաւուրս ու-
թին և ոչ ետ պատերազմ, և քաղաքն կայր
յիմարեալ և անպատրաստական։ Այս ապա
մի սմն ի զօրաց սուլտանին տեսեալ զանմ-

տուԹիւն քաղաքաքեացն, և ձայն տուեալ գաղտաբար եԹէ՝ «Օ՛ի կայք յիմարեալք. ամրացուցէք զպարիսպդ, եւ Թամբեցէք զձեր ձիդ»։ Իւ ապա իմացեալ սկան շուրջանակաւ զպարիսպն ասպարտակ առնել, և կազմեցին զամենայն ամրուԹիւն. եւ քաջացան այր իւրաքանչիւր 'ի պատերազմ։ Իւ Վասիլն որ էր տուկ քաղաքին և այր քաջ եւ պատերազմող, սկսաւ զօրացուցանել զամենայն քաղաքն. և տեսեալ զայս սուլտանին զայրացաւ յոյժ, և հրամայեաց հարկանել փող պատերազմին և գազանաբար դիմեաց 'ի պատերազմ. և դղրդեալ ամենայն զօրք այլազգեացն և շուրջանակաւ պատեալ զամենայն քաղաքն Հռոհայ. և եղեւ օրն այն օր մեծ և ահաւոր պատերազմ սաստիկ, և լցաւ ամենայն քաղաքն նեռաձգուԹեամբ, և առ հասարակ գասք հաւատացելոցն կային լալով և սղալով յաղօԹս առ Աստուած՝ զերծանել 'ի չար գազանէն։ Իւ զմեծ մասն աւուր պատերազմեալ ամենայն զօրքն տանն Պարսից 'ի վերայ Հռոհայու՝ և ոչինչ կարացին առնել, վասն զի Տէր յաղԹահարեաց զնոսա և յամօԹ արար։ Իւ զկնի այսորիկ կանգնեաց բաբանս և փիլիպանս ընդդէմ պարսպին, և կա-

տորեաց զամենայն դրախտս և զայգիս, եւ այնու ելից զխանդակս քաղաքին. և կանգնեաց փայտե բերդս 'ի վերայ տանն սայլից՝ զի առցէ զքաղաքն Ուռհայ. և եղեւ յորժամ շարժեցին զսայլն զի բերցեն մօտ 'ի պարիսպն, յանկարծակի փլեալ կործանեցաւ փայտե բերդն. և 'ի քաղաքէն պատառեցին 'ի ներքոյ գետնոյն և ելան 'ի խանդակն յարևելից կողմանէն, և զամենայն փայտն արկ (ին 'ի) քաղաքն, և զմնացեալսն հրով այրեցին։ Յեւ յայնժամ սկսան այլազգիքն և փորեցին եօթնն ծակ 'ի խորու խանդակն վասն զի զպարիսպն կործանեսցեն. և յայնժամ քաղաքացիքն արարին ընդդէմ նոցա փորուածս, և կալան յայլազգեացն և սատակեցին զնոսա։ Յեւ զաւուրս յիսուն կացեալ սուլտանն 'ի վերայ Ուռհայոյ սասակ պատերազմու և ոչ ինչ կարաց առնել. և խոստանայր սուլտանն տալ գանձս և իշխանութիւնս՝ եթէ որ հանցէ քար 'ի պարսպէն վասն զի տարցէ 'ի Պարսիկս 'ի յիշատակ իւր. և ասէ ցնա Նչուսուվար ամիրայն Դիվնայ, եթէ ահա մօտ կայ 'ի միջի մերում խորանդ եկեղեցւոյ, և 'ի վերայ ոչ որ է որ պատերազմի։ Յեւ ջանացին և ոչ կարացին հանել քար 'ի խորանէն սրբոյն Սարգսի 'ի յարևելից դիտէն. և տե-

սեալ սուլտանն ամենեցայ յոյժ։ Յայնժամ խուրեշն աւագ ամիրայն Աբասկայ առեալ զԱբասլան սուլտանն և զամենայն զօրացն բազմութիւն Պարսից, գնաց ի վերայ քաղաքին Հալպայ. և յայնմ աւուր եղեւ ուրախութիւն մեծ ի վերայ քաղաքին Ուռհայու, զի զերծան ի չար գազանէն։

ՃԳ. Իւ լուեալ Թագաւորն Յունաց Տիօժէն զհամբաւ բարկութեանս այսորիկ, և մի մեռեալ որպէս զառիւծ և հրամայեաց ժողով լինել ամենայն քաղաքաց բազմութի զօրաց իւրոց. և ելեալ հրովարտակս և քարոզիչս ընդ ամենայն աշխարհն արեւմտից, և արար ժողով մեծ և անհագին բազմութիւն զամենայն աշխարհն Գնդաց և զհամարէն ազգն Պուլղարաց, և զամենայն կղզիս հեռաւորս, զՎամիրք և զամենայն Իւիւթանիա, զԿիւլեկիա և զՆտիոք, զՏրապիզօն և զամենայն տունն Հայոց՝ որք մնացեալ էին ի քաջ զօրականացն, և բերեալ զօրս յայլազգեացն խուժաստանաց. և արար Տիօժէնն ժողով անհագին բազմութիւն որպէս զաւազ ծովու։ Իւ էր ի թուականութեանս Հայոց ՇԻ (1071—1072). և գայր խաղայր ուրոտալով իբրեւ զամպս կարկտաբերս և հասանէր ի Սեբաստիա քաղաք. և ելեալ

ընդ առաջ նորա որդիք Թագաւորացն Հայոց Աղամ և Աղուսահլ մեծաւ հանդիսիւ։ Եւ յայնժամ մատեան ազգն Հոռոմոց և չարախօսեցին զընակչացն Մեբաստիոյ և զամենայն ազգն Հայոց, և ասեն՝ «Լեթէ յորժամ եհար զմեզ Կարիճ ամիրայդ, ազգն Հայոց առաւել կոտորեցին զմեզ քան զԹուրքքն»։ Եւ հաւատաց Թագաւորն Տիրոջէնն սուտ խօսիցն Հոռոմոց և սպառնացեալ սաստիկ երդմամբ եթէ ի դառնալ ի պատերազմէն Պարսից՝ բառնամ զհաւատն Հայոց։ Եւ նոյն ժամայն հրամայեաց ալամ տալ զՄեբաստիա քաղաքն ամենայն զօրայն Հոռոմոց, և յաղագս սրտին սպանումն բազմոց վասն անիրաւ և սուտ դատաստանացն զոր արար անօրէն Թագաւորն Տիրոջէն, և ընկէց յերեսաց զորդիս Թագաւորացն Հայոց զԱղամ և զԱղուսահլ, և արկ սուգ մեծ ի վերայ Մեբաստիոյ քաղաքին։ Եւ յայնժամ մեծամեծ իշխանքն Հոռոմոց և Դաղիկ շահն՝ որդին Աշոտոյ, և Կարիճ ամիրայն որ կալաւ զկուրապաղատն, ասեն ցԹագաւորն Թէ՝ «Մի լքաներ սուտ խօսից ազգիդ-քո, վասն զի սուտ են յամենայն ի բանս իւրեանց, զի որք ի պատերազմին Թուրքին մնացին, սոքա եղեն օգնական։ Եւ լուեալ զայս Թագաւորն արար

խաղաղութիւն։ Բայց ի դառնալն սպառնայր բառնալ զՀաւատն Հայոց. զոր լուեալ վանորայքն և անէծս ցաւագին կարդային ճանապարհին նորա՝ չդառնալ ի ճանապարհէն յոր երթայր էր, այլ զի կործանեսցէ զնա Տէր որպէս զանօրէնն Յուլիանոս որ անիծեցաւ ի սրբոյն Բարսղէ։ Լուս յարուցեալ Տիօժէնն ամենայն բազմութեամբ գնաց յարևելս յաշխարհն Հայոց, եւ ի ջեալ ի վերայ քաղաքին Մանծկերտաւ և էառ զնա. և զօրք սուլտանին որ կայր ի քաղաքն՝ փախեան, և զոսս ըմբռնեաց՝ կոտորեաց. և յայնժամ հաստատ հաստատեաց այս առ սուլտանն Հալապ քաղաքի, և դարձաւ յետս յարևելս, վասն զի ասացին եթէ թագաւորն Հռոմոց ահագին բազմութեամբ դիմեալ երթայ յաշխարհն Պարսից։ Իսկ ի յայս ձմերանիս արար սուլտանն պատերազմ ի վերայ Հալպայ, և ոչ կարաց առնուլ զնա ի բազմութենէ զօրաց քաղաքին. և պատաւռեաց ծակոտէն զամենայն պարիսպն և ոչ ինչ կարաց առնել քաղաքին։ Լուս յաւուրսն գարնանային լուաւ սուլտանն զելանելն թագաւորին Տիօժէնին, թողեալ զՀալապ եւ փութապէս հասանէր յԱռհայ։ Իսկ տուին որ էր ի քաղաքն՝ հանեալ նմա ձիս և Ջորիս

և ապուր. և առեալ սուլտանն և անվնաս անցանէր 'ի սահմանացն, և գնաց յարեւելս 'ի լեառն որ կոչի Լեսուն. և անթիւ ձիք և ջորիք և ուղտք սատակեցան 'ի փութանակի գնալոյն, զի որպէս զփախստական վարէր զզօրս իւր։ Եւ կամէր գնալ 'ի Պարսիկս, և նոյն ժամայն հասանէին թուղթք նենգաւորացն Հոռոմոց առ սուլտանն 'ի բանակէն Տիւժէնին, և ասային ցսուլտանն՝ թէ մի փախչիր, զի մեծ մասն զօրացն ընդ քեզ ենք. և լուեալ զայս սուլտանն զսեղի առնոյր։ Եւ յայնժամ գրեաց սուլտանն թուղթ հաւանութեան առ Թագաւորն Տիւժէնն վասն սիրոյ և միաբանութեան և խաղաղութեամբ մնալ առ միմեանս, յաւիտեանս ոչ մեզանչել միմեանց, այլ սիրով կալ ընդ ազգս քրիստոնէից և յաւիտեան սէր միաբանութիւն (առնել) ընդ Պարսիկք և ընդ Հոռոմք։ Եւ յայնժամ Տիւժէնն հպարտացեալ և ոչ առեալ յանձն զքան սուլտանին, այլ եւս առաւել բորբոքեալ 'ի պատերազմ. և յայտուցեալ չար նենգաւորքն առ Տիւժէնն և ասեն. "Ո՛վ Թագաւոր, ոչ ոք է որ կարասցէ ընդդէմ կալ բազմութեան զօրաց քոց. և ահա ելին 'ի յապրոյ, արդ արձակեա զնոսա բանակս, զի մի սովեսցին մինչև ցօր պատերազ-

մին։ Իսկ յայնժամ զԻորիմ ամիրայն դարձոյց
'ի Կոստանդինուպոլիս, և զՏարխանեխան (142)
երեսուն հազարով դարձոյց 'ի վերայ Խլաթայ,
և երկոտասան հազար առաքեաց Ամկիսազք,
և այսպիսի օրինակաւ զամենայն զօրսն ցրը-
ուեալ հանին յերեսաց Թագաւորին. և այս
ամենայն գործք նենգութեան ազդ լինէր
սուլտանին։ Յորժամ եռեսս սուլտանն ան-
խոնարհելի զմիտս Տիոժէնին, յարձակեցաւ
'ի պատերազմ 'ի վերայ զօրացն Հռոմոց,
և որպէս կորիւն առիւծուց այնպէս վարեաց
զամենայն զօրսն Խորասանայ։ Իսկ լուեալ
Տիոժէն զգալ զօրացն Պարսից 'ի վերայ Նորա,
և հրամայեաց հնչեցուցանել զփող պատե-
րազմին, և կարգեաց դասս զամենայն զօրսն
Հռոմոց, և կացոյց զօրագլուխս զօրաց իւ-
րոց զԽատաղ և զԱսիլակ իշխանք Հայե-
ցիք՝ արք քաջք և պատերազմողք, և զմեծ
մասն աւուրն լինէր պատերազմ սաստիկ. և
եղեւ պարտեալ զօրքն Հռոմոց, և սպանաւ
Խատաղ և Ասիլակ, և արարին փախուս-
տական զամենայն զօրսն Հռոմոց մինչեւ 'ի
բանակ Թագաւորին։ Իսկ տեսեալ Տիոժէնն
հրամայեաց ժողով լինել ամենայն զօրացն
իւրոց, և ասէ՝ որ գայր 'ի գոչ նորա,
վասն զի Տարխանեխան և այլ իշխանք Հռ-

ռոմոց գնացին զօրքն ի Կոստանդինուպօ-
լիս։ Իւ լուեալ զայս Թագաւորն՝ ծանեաւ
զնենգաւորութիւն ազգին Իւրոց Հոռոմոց,
և ահա առ վաղիւ եղեւ պատերազմ. և ընդ
առաւօտն հնչեցուցեալ զփող պատերազ-
մին, և եղեալ քարոզիչքն քարոզէին զհրա-
ման Թագաւորին Տիօժէնին, և խոստանայր
փառս և իշխանութիւնս՝ քաջաքս եւ դա-
ւառս, վասն զի քաջապէս պատերազմեսցեն
ընդդէմ զօրացն Պարսից։ Իւ ահա գայր
սուլտանն ահագին պատրաստութեամբ ի
պատերազմ ի վերայ Հոռոմոց զօրացն,
յայնժամ Թագաւորն Տիօժէնն եկեալ հա-
սանէր ի տեղի պատերազմին՝ մերձ ի
Մանդկերտ, ի տեղին որ կոչի Տողոյսափ,
և զԱւէն և զՊածուեանն կացուցանէր ընդ
աջմէ Իւրմէ և ընդ ձախմէ, և զայլ զօրսն
յառաջոյ և ի Թիկանց (143). և ի սաստկանալ
պատերազմին՝ Աւէն և Պածինեանն ի սուլ-
տանին կողմն անցեալ, և յայնժամ եղեն պար-
տեալ ամենայն զօրքն Հոռոմոց, և առհա-
սարակ ի փախուստ դարձան։ Իւ եղեւ
կոտորումն զօրաց Հոռոմոց անթիւ, և ան-
համար գերութիւնք, և արարին ձերբա-
կալ զԹագաւորն Տիօժէնն և տարան զնա
առաջի սուլտանին, և զայլ բազում իշխանս

Հռոմոց կապանօք կացուցանէին առաջի սուլտանին, և անթիւ և անհամար դերուն-թիւն։ Իսկ յետ աւուրց ինչ արար սուլ-տանն սէր և միաբանութիւն ընդ թագա-ւորին Հռոմոց. և արար զՏիօժէնն սուլ-տանն իւր եղբայր արեամբ, վասն զի զայն ուխտ եդեալ էր ընդ Աստուծոյ, և հաստա-տեաց ահագին ուխտ սիրոյ և միաբանու-թեան ընդ Պարսիկք և ընդ Հռոմք յա-ւիտեան։ Իսկ յայնժամ մեծաւ փառաւորու-թեամբ յուղարկեաց զթագաւորն յաթոռ իւր ի Կոստանդինուպօլիս. և հասանէր մինչև ի Աեբաստիա։ Յայնժամ համբաւ հասանէր առ Տիօժէնն՝ եթէ թագաւորեաց Անիսայլ որդին Տուկծին, և թողեալ զնա ամենայն զօրքն իւր փախեան. և Տիօժէնն գնաց փախստական ի քաղաքն որ կոչի Աստանա, և ժողովեցան ի վերայ նորա զօրք թագա-ւորին Անիսայլին. իսկ Տիօժէնն առ վտան-գի իւր զգեցաւ զգեստ աբեղայի և եղեալ առ զօրապլուխն Հռոմոց որ էր եղբայր Տուկծին, և ասացեալ. «Ահա ջուանք յինէն այսուհետեւ հոգս, վասն զի ես յայսմ հե-տէ ի վանք կրօնաւորաց կամիմ բնակել. ձեզ թագաւոր եղիցի Անիսայլն, և Աստ-ուած եղիցի ընդ նմա»։ Իսկ յայնմ աւուր

ամենայն ազգն Հռոմոց կրկին զՆստուած ի խաչ հանին որպէս զհրէական ազգն, վասն զի հանեալ խաւարեցուցին զարևն Տիժէնին՝ զառն Թագաւորին, որ և ի սաստկութենէ ցաւոյն մեռաւ. իսկ և լուեալ զայս սուլտանն լայր և ապաշաւէր ըզկորուստ Տիժէնին. և ասացեալ սուլտանն եթէ՝ «Զուն ի Նստուած ազգն Հռոմոց, և ահա այսօր պատառեցաւ սէր և երդումն միաբանութեան որ ընդ Պարսիկք և ընդ Հռոմք եդան. և յայսմ հետէ ի սուբ սուսերայ մաշեսցին ամենայն ազգք խաչապաշտից, և գերեսցին ամենայն աշխարհքն քրիստոնէից»։ Եւ յիշեալ զՏիժէնն և սաստկապէս յոգւոց հանեալ ապաշաւէր սուլտանն, նոյնպէս և ամենայն ազգն Պարսից. և ասէ սուլտանն ընդ ամենայն ազգն Խորասանայ, եթէ «Ահա յայսմ հետէ եղերուք ամենեքեան կորիւնք առիւծոյ, և եղերուք որպէս ձագս արծուոյ արագագնացս ընդ ամենայն երկիր. զտիւ և զգիշեր սրախողխող արարէք զազգն քրիստոնէից, անողորմ լերուք ի վերայ ազգին Հռոմոց»։ Եւ ինքն սուլտանն դարձաւ մեծաւ յաղթութեամբ ի յաշխարհն Պարսից։

ՃԴ. Յայսմ ժամանակիս ժողով արարեալ

Աբասլան սուլտանն զամենայն զօրքն Պարսից և անցանէր ընդ մեծ գետն Ջահունից որ կոչի Գեհոն, և բազմութեամբ զօրաց մնաւ յաշխարհն Ամբինդոյ, կազմեցաւ տիրանալ այնմ աշխարհին, և մեծաւ զօրութեամբ իջեալ բանակաւ ի վերայ ամուրն և անուանի բերդին Համայ. և էր բերդատէրն այր քաջ և գաղան և յոյժ չարասիրտ, և զբաղումս աւուրս նեղեալ սուլտանն զբերդն մեծաւ պատերազմաւ, կոչէր զբերդատէրն գալ իւր ի հնազանդութիւն և տիրանալ հայրենեաց իւրոց յաւիտեան։ Եւ զկնի բազում նեղութեանցն խորհեցաւ բերդատէրն ելանել առ սուլտանն յերկրպագութիւն. և խորհեցաւ խորհուրդ սոսկալի և ահաւոր չարութիւնս, և արար զօրն ամենայն սէր և ուրախութիւն կնոջ իւրում և որդեաց, և գուսանօք և թմբկօք և երգօք արուեստիւք կերաւ ընդ նոսա, և էարբ մեծաւ ուրախութեամբ. և ի մէջ գիշերին զկինն իւր և զերեք որդին ձեռօք իւրովք զենեաց գազանաբար, վասն զի մի անկանիցին ի ձեռս սուլտանին և լիցին նոցա ծառայք։ Եւ ինքն վազիւն ելեալ գնայր առ սուլտանն, և ի ծածուկ ունելով ընդ իւր երկուս դանակս քաջասուրս, որով զսրդիսն իւր զե-

նեաց. և յորժամ գնայր, տեսեալ սուլտա-
նին՝ հրամայեաց բերել առաջի իւր։ Եւ նա
գնաց և երկրպագեաց. իսկ յորժամ մօտե-
ցաւ՝ յարձակեցաւ ի վերայ սուլտանին և
հանեալ զերկու դանակն ի կօշկացն, և որ
տանէին զնա՝ վախեան. և նա գաղանաբար
հասեալ ի վերայ սուլտանին հարկանէր ըզ-
նա երկու դանակով, և նոյնժամայն սատա-
կեցին զնա պաշտօնեայք նորա. և տեսին
խոցեալ զսուլտանն՝ հարեալ երեք տեղի։ Եւ
կայր սուլտանն ի մեծ վտանգի, և կսկիծ
խոցերուն նեղէին զնա. և հրամայեաց զ-
բայն գնալ ի սահմանացն, վասն զի մի գի-
տասցեն յաշխարհն. և զկնի հինգ աւուրցն
նեղեցաւ ի ցաւոցն և հրամայեաց կոչել
զամենայն մեծամեծ իշխանսն Պարսից և ըզ-
խոնջալ (144) զօրն իւր. և կայսուցեալ զողջոյ
որդին իւր զՄելիք շահն առաջի նոցա՝ ասէ.
«Ահա ես մեռանիմ ի խոցոյ սատի, և եղիզ
ցի ձեզ թագաւոր որդիս իմ. և սա նստցի
յաթոռ թագաւորութեանս իմոյ». և հա-
նեալ զթագաւորական հանդերձն իւր ա-
գուցանէր որդւոյ իւրոյ Մելիք շահին, եւ
խոնարհեալ երկիր եպագ նմա, եւ ըստ-
յանձն արարեալ զնա Աստուծոյ և ամենայն
ամիրացն Պարսից։ Եւ յայնմ աւուր մեռաւ

Ալբասլան սուլտանն 'ի ձեռաց առն անփառաւորի և քրդու։ Եւ Թագաւորեաց Մելեք շահն 'ի վերայ տանն Պարսից, և եղեւ այր բարի և ողորմած եւ յոյժ քաղցր 'ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի. և հասեալ գնաց յաթոռ հայրենեաց իւրոց, եւ տարաւ զՀայր իւր զԱլբասլանն և Թաղեաց զնա 'ի գերեզման հարց իւրոց 'ի Անարանդ քաղաքի. և աջողեցաւ Թագաւորութիւն նորա Ամուծոյ, և սա տիրելով տիրեաց ամենայն երկրի, և արար խաղաղութիւն ամենայն աշխարհին Հայոց։

ՃԵ. Իսկ 'ի թուականութեանն Հայոց ՇԻԱ (1072—1073). եղեւ հակառակութիւն 'ի մէջ տէր Գրիգորիսի և տէր Գէորգայ. և առաքեաց տէր Գրիգորէս և ընկէց զտէր Գէորգ յաթոռոյ հայրապետութեանն և առեալ (145) զքօղն 'ի գլխոյ նորա. և Գէորգ գնաց վերաւորեալ 'ի Տարօնն քաղաք և անդ մեռաւ. և տէր Գրիգորէս եկեալ բնակեցաւ 'ի Մուտառատուն առ Դաւիկ որդի Դուրգենեայ։

ՃԶ. Յայսմ ժամանակիս բռնակալեցաւ անօրէն և ամենաչար իշխանն որ ասի Փիլատոս, որ էր խակ անդրանիկ որդի սատանայի. 'ի յանկանել Տիոժէնին բռնակալե-

ցաւ ի վերայ երկրի. այր չարաշուէշ, որ էր իսկ սա կարապետ պղծոյն, նեռն գիւաբնակ և այլանդակ չարաչար վարուք։ Սա սկսեալ տալ պատերազմ ընդ հաւատացեալսն Քրիստոսի, վասն զի էր սա անհաւատ քրիստոնեայ, ոչ ՀԱՅ գիտելով զնա և ոչ ՀՈՌՄ, վասն զի կրօնք ՀՈՌՄՆՅ (ՈՒՆ)էր, և հայրենեաւք և մայրենեաւք ՀԱՅ էր, և ի տղայութենէն կացեալ առ հօրեղբայր իւր ի վանք որ կոչի Օրվրի—Կրզեռն ի Հարսն—Մ՝որոյ գաւառին։ Սա եղեալ յանապատի՝ և եղեւ պիղծ յանապատի. սա տիրեալ բազում աշխարհաց և քաղաքաց, և բազում մեծամեծ իշխանս կորոյս անապրմաբար. և եկեալ բնակեցաւ ի ՄՀարն, և յուզարկեաց և կոչեաց զքաջն Թոռնիկ զտէրն Յաճոյ, գալ նմա ի հնազանդութիւն։ Իւր լուեալ զայս Թոռնիկ Մաւշեղայ որդին, ծիծաղեալ զանմտութիւն նորա, և ասացեալ թէ՝ "Ահա որ բնաւ ես ոչ տեսանեմ զերեսս նորա։" Իւր ասեն ցԹոռնիկ կուշականքն Փիլառատոսին թէ՝ "Ահա գայ բազում զօրօք ի վերայ քո. եւ տապալեալ աւերեսցէ զամենայն գաւառս քոյ։" Ասէ Թոռնիկ. "Իւր քանի՞ են զօրք Փիլառատոսին." ասեն ազգն՝ "Իբրեւ քսան հազարաց։" Ասէ Թոռնիկ. "Այն իմ հազար ձիաւոր, որ

հանապազ հաղորդին ի մարմնոյ և յարենէ Աստուծոյ. բայց զայս այսպէս գիտեմ՝ զի Փիլառատոսն և ամենայն զօրքն իւր Թատիւբ և ունայն են ի հաւատոցն, և կան լցեալ աստենայն չարաչար յանցանօքն։ Եւ գնացին զայս ամենայն պատմեցին Փիլառատոսին. և յայնժամ կոչեաց Փիլառատոս զտէր Գրիգորէս, և ասէ ցնա՝ եթէ «Փեսայ է Թոռնիկ, գնա և կոչէ զնա ինձ ի հնազանդութիւն»։ Իսկ տէր Վահրամ վասն չար բարուցն Փիլառատոսին յոչ կամեաց գնալ առ Թոռնիկ, և այլ ոչ տեսաւ զերեսն Փիլառատոսին։ Եւ պատմեաց զպատճառն գնալոյն Թոռնկայ. և հիացեալ Թոռնիկն և ասէր՝ եթէ զնարդ ոչ պատառեցաւ երեսք անօրինին ի սաստիկ լքութեանցն իւրոց, յուզարկել զքեզ առ իս իբրեւ զդեսպան հանդերձ սուտ երդմամբ։ Եւ գիտացեալ Փիլառատոսին եթէ ոչ կամի գալ Թոռնիկ ի կոչ նորա, զօրաժողով արարեալ գնայ ի վերայ Թոռնկայ. և Թոռնիկ ոչ գիտացեալ զգալ նորա ի վերայ նորա, և իբրեւ լուաւ զգալն Փիլառատոսին, ձայն տուեալ զօրայ իւրոյ, և արար ժողով զամենայն Սատուն յիսուն հազար հետեւակայ և վեց հազար ձիաւորայ, և գայր ի Ճապղ-ջուր. և ոչ հաւատայր գալոյ Փիլառ-

տասին, դարձոյց զամենայն հետեւակազօրսն, և ինքն հազար ձիաւորով 'ի Մ'ՀՇմուշատ քա-
զաքն Հայոց (Ջոգաւ), և Մ'ՀԵրուա դաշտին հանդիպեցան զօրքն Փիլառատոսին ուրթ հա-
բիւր արամբք։ Եւ արամեցաւ Թոռնիկ որ դարձոյց զհետեւակ զօրսն իւր, և յայնժամ
կարգեաց Թոռնիկ զձախակատ պատերազմին իւրոց դասս առ դասս յայսկոյս և յայնկոյս և յա-
ռաջոյ, և Թիկնապահ իւր եդեալ զԿապոն՝ զայր քաջ՝ երեք հարիւր արամբք, բայց ակն
ածէր 'ի Ֆռանկէնքան յայլ զօրացն, և ասէր. «Ցեսէք զի գուռնդս երթիցէ ընդ դէմ Ֆռանկին»։ Եւ ահա գայր Ամրմբաղա(146) և զօրքն իւր,
և 'ի դիմի հարաւ Թոռնիկայ գնդին և պատա-
ռեաց զզօրսն և էանց ընդ մէջն։ Եւ յայն-
ժամ ձայն տուեալ Թոռնիկ զօրաց իւրոց,
և միաբան 'ի մէջ իւրեանց փակեցին զնո-
սա, և զամենայն իշխանս ձերբակալս արա-
բին, կալան և զկոմսն Նոցա, և զՓիլառատոսն
և զամենայն զօրս իւր փախստական արարին,
և զիշխանս Նորա արարին ձերբակալ՝ արս
հազար և հինգ հարիւր։ Եւ յաւուր յայնմիկ
եղեւ բաղում կոտորածս Ֆռանգաց և այ-
լոց քրիստոնէից։ Եւ դարձաւ Թոռնիկ և զա-
մենայն զօրք Հայոց գնացին 'ի Սասուն բա-
զում աւարաւ. և Փիլառատոսն գնաց փա-

խստական, և լի ամօթով մնանէր 'ի խաբ-
բերդ։ Այս եղեւ 'ի Հանձիթ գաւառին 'ի
Ալելուա գաշտին։

ԾԷ. Յայսմ աւուրս գայ Թոռնիկ սա-
կաւ արամբք և մտանէր 'ի բերդն իւր Ա-
մուշատ քաղաք (որ) 'ի Ա՛րծնոյ վերայ. և յան-
կարծակի գայր ամիրայ ոմն բազում զօրօք,
որում անուն էր Ա՛մր-Բ՛ասիր։ Եւ լսեալ ե-
թէ Թոռնիկ առանց զօրայ է, յայնժամ հրա-
մանաւ Փիլառատոսին գայր 'ի վերայ Թոռ-
նկայ, և խստանօք և սուտ երդմամբ ըս-
կսաւ սէր միաբանութիւն կարգել ընդ նմա,
մինչեւ 'ի ձեռն բազում տրոց և ընծայից հա-
ւանեցուցանէր զծառայն Թոռնկայ. և այսու
պատրեալ զնա հանէր (147) 'ի սուտ սէր՝ միա-
բանութիւն իւրեանց երեք արամբ։ Եւ մինչ
դեռ կային 'ի գինարբուն, վազեաց ամիրայն
գազանաբար 'ի վերայ Թոռնկայ. և կամէր
սպանանել զնա, և ոչ ուներով Թոռնիկ առ
իւր, բայց փոքրիկ դանակով հարեալ զամի-
բայն՝ 'ի վայր հեղոյր զփոր նորա, և զայլոց
ամիրայսն բռնեաց զգլուխն՝ ընդ իրար ծե-
ծեալ սատակեաց. և ինքն երեալ անվնաս գը-
նայր 'ի բերդն, վասն զի մօտ էր բերդն, և
ամենայն Թուրքն փախստական լինէին առաջի
նորա։ Եւ յորժամ գնայր մօտ 'ի բերդն, մի ոմն

'ի յայլազգեաց 'ի Թագաւորեան կայր, հարեալ զԹոռնիկ ռմբոյն 'ի սիրան գազանաբար, և անդէն մեռանէր քաջն Թոռնիկ, և տարան զգլուխ նորա առ Փիլառատոսն։ Եւ անօրէն Փիլառատոսն հանեալ զսկաւառակ գլխոյն և արար գաւաթ, և նուաւ ըմպէր գինի, եւ զմնացեալսն գլխոյն առաքէր ամիրային Մուֆարկնայ, և զամենայն մարմինն այրեցին հրով, զորս յետոյ ժողովեցին զայրեցած զոսկերս նորա զառն քաջի և աստուածապաշտի, և տարան Թաղեցին 'ի դուռն սրբոյ Կաբապետին։ Եւ մնաց իւր երկու որդի, Հորառանէն և Վասակ 'ի տղայական հասակի։

Յայսմ ժամանակիս անօրէն Փիլառատոսն յուզարկեաց և կոչեաց զտէր Գրիգորիս 'ի յաԹոռ հայրապետութենէն իւրոյ, և նա ոչ եկն 'ի կոչ նորա, վասն զի զարհուրեալ էր 'ի չարաշունչ գազանէն։ 'Դարձեալ գրեաց Փիլառատոսն առ սուրբ հայրապետն, և ասէր. "Հէ օրէն ամԹոռոյս հայրապետութեան առանց հայրապետի կեալ". և նա ոչ համարձակեցաւ գնալ, այլ գրեաց տէր Գրիգորիս առ Փիլառատոսն և ասէր, եԹէ "Դիր իմ հրամանաւն յաԹոռ հայրապետութեանդ զտէր Սարգիս դքուրորդին տէր Պետրոսի"։ Եւ յայնժամ տէր

Գրիգորէս յուզարկեաց զքօղն և զդաւազանն և զսուրբ նշանն տէր Պետրոսի առ տէր Սարգիս։ Եւ տեսեալ Փիլառատոսն զայս ամենայն ծանեաւ եթէ տէր Գրիգորէս այլ ոչ է դառնալոց յաթոռ հայրապետութեանն իւրոյ, եւ յայնժամ հրամայեաց Փիլառատոսն լինել ժողով եպիսկոպոսաց և հարանց վանականաց և կրօնաւորաց, և ձեռնադրեցին զտէր Սարգիս յաթոռ կաթուղիկոսութեանն Հայոց Ի քաղաքն որ կոչի Հռոմ, Ի Ս. Հան գաւառի։ վասն զի էր այր սուրբ և հրաշափառ տեսլեամբ և հռչակաւոր առաքինի և յամենայն կողմանց զարդարեալ ամենայն աստուածպաշտութեամբ և ճշմարիտ խոստովանութեամբ որ Ի Քրիստոս Յիսուս, և էր կատարեալ օգնական հօտին Քրիստոսի։ Եւ յայնժամ տէր Գրիգորէս գնացեալ Ի մայրաքաղաքն Հայոց որ կոչի Անի, և անդ ձեռնադրեաց եպիսկոպոս զՀարսեղն զքեռորդին իւր՝ զորդի Սահակայ որդւոյ Սպիրատին՝ որդւոյ Հասանայ, որ յետ ժամանակաց էառ զաթոռ հայրապետական տանն Հայոց։

ՃԸ. Եւ էր Ի թուականութեանս Հայոց ՇԻԳ (1074—1075), և ապա գնին այսորիկ գնայ Գրիգորէս Ի Կոստանդինուպոլիս, և անդուստ Ի Հռոմ. և եկեալ Յոգիպատոս՝

շրջեալ ընդ ամենայն անապատսն առաջին սրբոց հարցն, և կատարեաց զամենայն փա-
փագումն սրտին իւրոյ. և հաստատեաց անդէն զաթոռ իւր հայրապետութեանն, եւ
կանգնեալ նորոգեաց անդէն զամենայն կարգ սուրբ եկեղեցւոյ. և բազում փառք և մե-
ծութիւն ընկալաւ տէր Գրիգորէս ի Թագաւորէն Եգիպտացւոց առաւել քան ի Թագաւորէն Հռոմոց։ Զի բազումք ժողովե-
ցան առցոց Եգիպտոս իբրեւ երեսուն հազարաց. և տէր Գրիգորէս զկնի ժամանակաց ձեռնադրեաց կաթուղիկոս զտէր Գրիգոր զքուրորդին իւր, և ինքն եղեալ դպիր յաշ-
խարհն Հռոմոց, վասն զի դեռ եւս կենդանի կայր մայրն նորա։

ՃԹ. Զի եղեւ յորժամ Թագաւորեաց Հռոմոց որդի Տուկծին Միհրայն, և կա-
ցեալ նորա յաթոռ Թագաւորութեանն զամբս չորս. և էր այր բարի և աստուածասէր, զարդարեալ ամենայն առաքինութեամբ և ըստաւոր սրբութեամբ, և յամենայն կողմանց նմանեալ էր առաջին սրբոց Թագաւորացն, և փայլեալ ուղղափառ հաւատով որ ի Քրիստոս Յիսուս, և եղեւ հայր որբոց և դաստաւոր այրեաց։ Զի հրամանաւ սորա զարկաւ գահեկան անչափ և անհամար իբրեւ զհող

և կամ զաւազ ծովու, որ եղեւ մեռացեալն և յագուրդ աշխարհի, վասն զի Աստուծով զարկաւ, և Աստուծոյ շնորհք եղ ի վերայ նորա մինչեւ յաւիտեան, և լցաւ ամենայն աշխարհն գանձով նորա։ Իսկ սորա սկիզբն արարեալ պահոց և աղօթից և ամենայն պաշտաւ սրբութեամբ վարեաց զկեանս իւր։ Զի սխացեալ ընդ նմա թագաւորին իւր վասն վարուց սրբութեան, զի ոչ խառնակեր ընդ նմա ամուսնութեամբ. և տուփացաւ թագաւորին յամն իշխան Հռոմոց, եւ ի ձեռն պիղծ գործոյ իւրոյ յարուցանէր զնա ի վերայ Միխայելին, որոյ անուն Վոռոնիւատ (148) ասէին։ Զի շարժեաց զամենայն Կոստանդինուպօլիս ի վերայ Միխայելին, և բազնութեամբ խնդրէր զաթոռ թագաւորութեանն ի նմանէ։ Զի տեսեալ զայս ամենայն թագաւորին Միխայելին, ոչինչ հակառակեցաւ ընդդէմ նոցա. այլ յայտնապէս անիծեաց զամենապիղծ թագուհին, և թողեալ զաթոռ թագաւորութեանն գնաց ի վանք կրօնաւորաց և եղեւ կրօնաւոր, և ըստ գեցաւ այծէս և արար սկիզբն վարուց կրօնաւորութեան, վասն զի զայն ուներ ցանկութիւն ի վաղուց ժամանակաց հետէ, և թողեալ զաթոռ և զթագ թագաւորութեան իւրոյ։

ՃԺ. Իսկ ի Թուականութեանս Հայոց ՇԻԵ (1076—1077), Թագաւորեաց ի վերայ Հոռոմոց Վռոմանիատն, և առեալ իւր կին զկինն Մելխալին, զդուստր Գուրգէն Վրացոց Թագաւորին (149), որ յաղագս ազատելոյ սրոռնկութեան առին զմիմեանս։

ՃԺԱ. Յայսմ ժամանակիս սպանաւ Վասակ իշխանն Հայոց որդի Գրիգորի մագիստրոսին և եղբայր տէր Գրիգորիսի։ Սա էր տուկ Ընտիրքայ քաջաբի. սա սպանաւ ի շուկայ փողոցին Ընտիրքայ ի ձեռն նենգաւոր ազգին Հոռոմոց. զի յորժամ անցանէր ընդ փողոցն, գային երկու Հաստատք (150) յերկրպագութիւն Վասակայ, և Թուղթ ինչ տուութեանց ի վեր կալեալ առաջի Վասակայ, և նա խոնարհեալ զի առցէ զԹուղթն ի նոցանէ, և ի նոյն ժամայն հարեալ զնա ուրագոլն ի յաջամէջն, և մեռաւ մեծն Վասակ յանարժան և ի պիղծ արանցն։ Լու ամենայն զօրք նորա ժողովեցան ի կլայն Ընտիրքայ. և յայնժամ աղաղակունդն Վասակայ կուչեցին զՓիլարտոսն և տան զԸնտիրք ի ձեռս նորա։ Իսկ Փիլարտոսն զհետ աւուրց ինչ ժողով արարեալ զամենայն ազգն Հոռոմոց զնենգաւոր, և զՀաստատքն՝ արս եւթն հարիւր, և պատճառէր ուրեք երբ

թալ ՝ի պատերազմ. և տարեալ զնոսա ՝ի գեղ մի որ կոչի Ակիշուն, և յայնմ տեղւոջ եդեալ սուր ՝ի վերայ՝ կոտորեաց զամենայն Հաստատուն առհասարակ. և յայնժամ բրբ-նակալեցաւ Փիլառատոն ՝ի վերայ Անտիոքայ, և առեալ վրէժ արեանն մեծին Վասակայ Պաղհաւունւոյ։

ԾԺԲ. Յայսմ ժամանակիս Լպիխա (151), իշխանն Հայոց, այր քաջ և հզօր պատերազմող, ՝ի տանէն Շիրակայ, զոր վասն քաջութեանն իւրոյ Թագաւորն Յունաց բռնադատեաց զնա, և հարիւրեալ կնքեաց զնա ՝ի Հռոմ հաւատն, բայց նա ՝ի ծածուկ հայրենի հաւատն պաշտէր զսրբոյն Գրիգորի։ Սորա հիւանդացեալ ՝ի բերդն իւր որ կոչէր Անդրիուն, և էր նորա տուեալ ՝ի Թագաւորէն Հռոմ աբեղայմի առաջնորդ մնոտի հաւատոյն նորա, և էր կարգեալ զնա հայր խոստովանութեան։ Իսկ անօրէն և պիղծ առաջնորդն յաւուր միում մտեալ առ Պիխտրն և տեսեալ զնա զի ննջեալ կայ քաղցրիկ ՝ի մահիճս իւր, յարձակեցաւ գազանաբար ՝ի վերայ նորա, և առեալ զբարձն դնէր ՝ի բերան նորա, և ուժգին անկեալ ՝ի վերայ նորա, և չարաչար սպանանէր զայր հզօր և քաջ չարագործն և պիղծ կրօնաւորն Հռոմոց։ Յե-

գիտացեալ յայնժամ զօրացն նորա զնենգաւորս մահն քաջին և մեծաւ բարկութեամբ չարչարեալ զանօրէն հերետիկոսն, եւ զկնի չարչարանացն ձգեցին զպիղծ աբեղայն ընդ բարձր քարծայր բերդին, և անդէն սատակեցաւ չարն չար մահուամբ։

ՃԺԳ. Իսկ Թագաւորն Վոստանիատն զմի ամ կալեալ զաթոռ Թագաւորութեանն և այլ ոչ կամեցաւ ունել զաթոռն այն, վասն զի հակառակութեամբ և պռունկութեամբ համարեցաւ զնա և ոչ հրամանաւն Աստուծոյ, զի շնութեամբ էառ զկինն Միխայլին և ոչ հրամանաւն Աստուծոյ. և Թագաւորեաց անիրաւաբար, և յայժ նեղէր զնա խիղճ մտաց իւրոց, և ընդ միտս իւր ասացեալ է թէ՝ «Այն որ Թագաւոր էր և տէր աթոռոյս, եթող և եղեւ աբեղայ, ես զիա՞դ ընդդիմանամ չարութեամբս խնով, և ահա զկնի դայ և հասանէ մահն»։ Եւ յայնժամ՝ի բաց Թողեալ զաթոռ Թագաւորութեանն, վասն զի մեծաւ յանցանօք նենգաւորեաց սուրբ Թագաւորին Միխայլին. եւ զկնի այսորիկ եղեւ Վոստանիատն աբեղայ։

ՃԺԴ. Յայսմ ժամանակիս նստուցանեն յաթոռ Թագաւորութեանն Հոռոմոց զՍելեսիանոսն (152) և էր՝ի Թուականութեանս

Հայոց ՇԻԶ (1077–1078)։

ՃԺԵ. Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՇԻԶ (1077–1078), մեռանէր ամենագովելին տէր Սարգիս հայրապետն Հայոց, որ էր քուրորդի տեառն Պետրոսի Հայոց կաթուղիկոսի. և հրամանաւ նորա նստուցանեն յաթոռ կաթուղիկոսութեան Հայոց զտէր Թէոդորոս՝ զդրան եպիսկոպոսն տեառն Սարգսի Հայոց կաթուղիկոսի, զմեծ եբրաժիշտն ձայնաւորաց՝ որ մականուն ասի Ալախօսիկ, նստուցանեն զնա յաթոռն կաթուղիկոսութեան Հայոց ի քաղաքն որ կոչի Հոնի, ի Ջահան գաւառի։

ՃԺԶ. Յայսմ ժամանակիս Վասին Հայուքապայ որդին, այն որ յառաջն վրանապահ էր լեալ Դաւիթ կուրապաղատին Վրաց ի Հնխանին. սորա հրամանաւ Փիլառտոսն արաբեալ ժողովս հեծելոց և դայր ի վերայ քաղաքին Լոռեայոց, բաղում պատերազմաւ նեղէր զքաղաքն զամիսս վեց։ Եւ յայսմ ամի շինեաց Վասին զպարիսպն բերդաքաղաքին որ կոչի Ինապօլիս, (Հռոմանոպոլիս) զի շինեաց Իսմանոս թագաւորն Հռոմոց. և յետ այսորիկ նեղեաց Վասին զքաղաքն Լոռեայ. յայնժամ քաղաքացիքն արարին խուսխայ ի վերայ տուկին Իւրեանց որ ասէ-

ին | Լեւոն՝ եղբայր Դաւաստանոսին, և եղև փախստական | Լեւոն, և անկանէր 'ի վերին կրայն, և Պռաքսիմոն նորա 'ի մէջ եկեղեցւոյն անկանէր, որ ասի սուրբ Աստուածածին, եւ մոռեալ բուռն հարեալ զեղջերայ (153) սրբոյ սեղանոյն, և մոռեալ քաղաքացիքն յեկեղեցին, և գաղանաբար սպանանէին զնա առաջի սրբոյ սեղանոյն Աստուծոյ։ Եւ յայնմ աւուր եռուն զՎռուհայ 'ի ձեռս Վասլին՝ Պուքապայ որդւոյն, այր բարի և աստուածասէր, ողորմած 'ի վերայ որբոց և այրեաց, եւ խաղաղարար և շինող աշխարհի, որ և յառաջն հայր նորա Պուքապա կացեալ էր 'ի քաղաքն Ռուհայ, եւ նորա շինեալ էր և սին առեալ զամենայն գաւառն. այս եղեւ 'ի Թուականութեանս Հայոց ՇԻԶ (1077—1078)։

ՃԺԵ. Յայսմ ժամանակիս կացեալ Թագաւորն Մելեսիանոսն 'ի Կոստանդինուպոլիս զամիսս չորս. և յայնժամ ամենայն բազմութիւն քաղաքին միահամուռ յարեան 'ի վերայ Մելեսիանոսին, և շարժեցին պատերազմ 'ի վերայ նորա և յափշտակեցին 'ի նմանէ զթագն և զաթոռ թագաւորութեանն, եւ դնեն զթագն 'ի գլուխ իշխանի մի՝ որում անուն ասէին Ալէքս, որ էր եղբօրորդ

դի Կոմանոս Թագաւորին, այր բարի եւ աստուածասէր և քաջ ընդդէմ պատերազմաց. եւ յայնժամ լինէր խաղաղութիւն տանն Յունաց։

ՃԺԸ. Իսկ յորժամ բարձրացաւ Թուրքանութիւնս Հայոց 'ի յամն ՇԻԸ (1079—1080), եղեւ սով սաստիկ ընդ ամենայն աշխարհս խաչապաշտից յայնկոյս Ծովուն Ովկիանոսի. վասն զի . . . . . աղգն Թուրքաց տարածեցաւ ընդ ամենայն երկիր, որ ոչ մնաց գաւառ 'ի խաղաղութեան, այլ կայր մատնեալ ամենայն տուէն քրիստոնէից 'ի սուր և 'ի գերութիւն. և արգելաւ վաստակ հողագործութեան յերկրէ, և հատաւ կերակուր հացի, և սրով և գերութեամբ հատան մշակք և վաստակաւորք, և տարածեցաւ սով առ հասարակ ընդ ամենայն աշխարհ։ Եւ անմարդ եղեն բաղում գաւառք, և քակեցաւ տուէն արեւելեայց, և եղեւ աւերակ աշխարհն Յունաց, և ոչ ուրեք գտանէին կերակուր հացի, և կամ դադար հանգստեան մարդոյ, բայց 'ի Լեռն Հայ և յամենայն սահմանս նոցա։ Եւ Անտիոք և ամենայն աշխարհն Կիլիկեայ և մինչեւ 'ի Տարսոն և ամենայն աշխարհն Սարաշայ, 'ի Տլուք և յամենայն սահմանս

աշխարհաց այսոցիկ ոչ գտանէին հանգիստ դադարման մարդոյ, և փախեալ ելանէին միտհամուռ ամենայն արարածք և գային յաշխարհս այսորիկ անթիւ բազմութեամբ, հազարս առ հազարս և բիւրս առ բիւրս, ծըփայր մարդ 'ի վերայ երկրի. և ծածկեցաւ աշխարհս այս, և որպէս զմարախ 'ի բազմութենէ նոցա ծածկէր երկիր, առաւել ունիմ ասել քան զեւթնապատիկ զմոզովուրդն զոր Մովսէս ընդ ծովն անցուցանէր. նա և քան զլորամարդն յանապատին Վինայ։ Եւ այսպիսի ահագին բազմութեամբ լցաւ երկիր, և արք մեծամեծք և փառաւորք, ազատք և իշխանք և կանայք մեծաշուք շրջեալ մուրանային. և զայս ամենայն ոչք մեր տեսանէին, և յերեսաց սոցին և 'ի պանդխտութենէ կենացն մահ անկանէր 'ի նոսա ընդ ամենայն երկիր, և յագեցան առ 'ի թաղել զնոսա. լցաւ երկիր 'ի դիականց նոցա, գազանք և թռչունք յուտելոյն ձանձրացան. անթիւք անթաղք մնացեալ յանհամար բազմութեանց՝ հոտեցաւ երկիր 'ի մեռելոտի մարմնոյ նոցա. փառաւոր քահանայք և կրօնաւորք եղեն օտարամահք և պանդուխտք, և կեբակուր լինէին գազանաց և թռչնոց։ Այս եղեւ սկիզբն աւերման եւ

քակտելոյ տանն արեւելեայց և Յունաց, զոր յաղագս մեղայ մերոց ընկալաք զհաստուցումն յարդար դատաւորէն Աստուծոյ, ըստ այնմ զոր ասաց Փրկիչն եթէ, «Ամենայն ծառ որ ոչ բերէ պտուղ բարի, հատանի և ի հուր արկանի»։

ՃԺԹ. Յայսմ Թուականութեան ապանաւ (154) Գագիկ շահն որդի Աշոտոյ՝ որդւոյ Գագկայ՝ որդւոյ Ամբասայ՝ որդւոյ Աշրկաթայ, Խաղբատունեաց ազգաւ։ (Պանդիր) յայսմ ժամանակիս (այս) Գագիկ արքայ Հայոց վատեալ զգունդն զօրաց իւրոց և գնաց էջ ի Տարսան քաղաք առ Աղլխարիպ իշխանն Հայոց՝ որդւոյ Հասանայ՝ որդւոյ Խաչկայ Խլին՝ առն քաջի, ի Վասպուրական գաւառէ։ Այս գընացեալ առ Աղլխարիպն սիրոյ ազգաւ, զոր վասն խնամութեան կոչեալ էր զԳագիկ Աղլխարիպայ, և յաղագս պատճառի ինչ ոչ եղև գործ խնամութեանն. դարձաւ Գագիկ մանչելով սրպէս զառիւծ, վասն զի էր մեծ և հզօր և այր քաջ, և կալեալ զամենայն իշխանս գաւառին՝ վարէր զնոսա երկաթի կապանօք առաջի իւր. և եկեալ հազոր արամբ ի դաշտն Արժիասոյ ի բերդն որ ասի Պիղիստռայ. և էին բերդատէրք երեք եղբարք իշխանք Հռոմոյ՝ որդիք Ամանտա-

լէի. և Դադկայ Թողեալ զօրսն իւր ի յայլ կողմն Ճանապարհին, և ինքն երեք արամբ երթայր դիմաք առ նոսա։ Իսկ նոքա յառաջ պատրաստ լեալ և արս յիսուն (ի) քմին եդին Դադկայ. և յորժամ մերձ եղեւ ի բերդն Դադիկ գային երեք եղբարքն յերկրպագուԹիւն և ի վերայ երեսաց իւրեանց երկրը պագանէին նմա։ Իւ յորժամ տեսաւ զնոսա Դադիկ, կոչեաց զնոսա ի համբոյր. և յորժամ մօտ եկին, միաբան գրկեալ երեք եղբարքն զգաբանոցն Դադկայ՝ եւ ընկեցին ի ձիոյն, և արքն որ զկնի էին՝ փախեան. և ելեալ (որ ի) քմին՝ կալան զնա, և լուեալ զօրացն ցրուեցան, և ածին զԴադիկ ի բերդն։ Իւ յաւուրն ուԹերորդի ժողովեցան ի վերայ բերդին ամենայն տուն Հայոց, Դադիկ Աբասայ որդին և ամենայն ցեղն Մենեբերիմայ՝ Ատոմ և Ապուսահլ և այլ ամենայն իշխանքն Հայոց, և զաւուրս հինգ պատերազմեալ ի վերայ բերդին՝ ոչինչ կարացին առնել, վասն զի ամուր էր յոյժ, և որք բռնեալ էին զԴադիկ ոչ համարձակեին Թողուլ ի յահէ Դադկայ. և յայնժամ յուզարկեալ առ նոսա անօրէն Փիլատոսն և ասէր, եԹէ «Ո՞ւր համարձակեցայք զայդ գործել ընդ առն Թագաւորի.

եթէ թողայք՝ և եթէ ոչ, ձեզ կորուստ գործեցէք զայդ»։ Եւ յայնժամ աստուա-ծասպան ազգն Հռոմոյ լարով խեղդեցին զԹագաւորն Հայոց և կախեցին զնա ի պա-րիսպն զօր մի. և յայնժամ հանեալ Թաղե-ցին զնա արտաքոյ բերդին, զոր յետ վեց ամսոյ եկեալ այր մի ի քաղաքէ Նորա՝ Խա-նիկ անուն և գողացաւ զմարմին Նորա, և հանեալ ի գերեզմանէն ի գիշերին զԹա-գաւորն Դագիկ, և տարաւ զնա ի քաղա-քքն իւր. և ազգն իւր արարին կոծ մեծ ի վերայ Նորա և ամենայն ազգն Հայոց, եւ Թաղեցին զնա ի վանքն իւր Գիգու, և մը-նաց իւր աւագ որդին Յովհաննէս։ Եւ աս-տանօր գադարեալ եղև Թագաւորութիւնն ի տանէն Հայոց և յազգէն Խագբատու-նեաց։ Յայսմ վայրի լցեալ կատաբեցաւ մարգարէութիւնն սրբոյն Յերսէսի Հայոց կաթուղիկոսի՝ որ ասաց. «Ջ ՆԷՔԼԱԼ ՋՆՋԵԱՅՆ Թագաւորութիւնն ի տանէն Հայոց»։

ՃԻ. Դարձեալ եղև ի Թուականու-Թեանն Հայոց ի յամի ՇԼ (1081—1082), արքեպիսկոպոսն Շ իրակայ որ էր ի քաղա-քքն Անի, որոյ անուն ասէին տէր Խարսեղ, յարուցեալ գնաց յաշխարհն Հայոց ի Մ'Ղ-ուան գաւառի՝ ի Լօռէ քաղաքի առ Թա-

գաւառն Հայոց Կորիկէ՝ որդի Ընհոդլենին Դաւթի, որդւոյ Գագկայ (155). և խնդրէր Բարսեղ առնել ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Հայոց։ Որ ժողովեաց Թագաւորն Կորիկէ զեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին, և բերեալ զտէր Յոհեփանոս կաթուղիկոս Աղուանից ի վանքն որ կոչի Հաղբատ, ձեռնադրեցին զտէր Բարսեղ կաթուղիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին Հայոց. հրամանաւ Կորիկէ Թագաւորին և տեառն Յոհեփանոսի՝ որ ունէր զաթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի։ Յայսմ ժամանակիս Նորոգեալ եղեւ (156) աթոռ սրբոյն Գրիգորի. ի քաղաքն Անի, որ ի վաղուց հետէ ժամանակաց խափանեալ էր մոխանօք և նենգութեամբ չար և դառնացեալ ազգին Հայոց։ Այլ եղեալ գայր Բարսեղ կաթողիկոսն Հայոց ի թագաւորաբնակ քաղաքն Անի, և եղեալ ամենայն տուն Շիրակայ գնալ քնդ առաջ Նորա, և ահա գայր Վասակ հայր տէր Բարսղի և եղբարքն Նորա Հասան և Գրիգոր և ԱյլՋահապ, արք քաջք և հզօրք՝ հանդերձ եպիսկոպոսիւք, և նրա տուցին զտէր Բարսեղ յաթոռ տեառն Պետրոսի։ Այլ եղեւ օրն այն օր մեծ և ուրա-

խուԹիւն ամենայն տանն Հայոց, վասն զի տեսին Նորոգեալ զԱԹոռ Հայրապետութեանն ի քաղաքն Նի։

ՃԻԱ. Յայսմ ժամանակիս ամիրայ ոմն խոսրով գայր բազում զօրօք ի Պարսից աշխարհէն, և հասանէր ի գաւառն Ուռհայոյ, և արարեալ աւերս ի տեղիս տեղիս։ Եւ յայսմ աւուրքս եղեւ պատերազմ ի վերայ Եփրատ գետոյ ի տեղին որ ասի Մըկնիկ մերձ ի բերդն որ կոչի Լ՚տար, վասն զի ժողովեցան բերդացիք գաւառին ընդ առաջ Նորա ի պատերազմ, և յայնմ աւուր յաղԹեաց Թուրքն և արար բազում կոտորածս քրիստոնէից։ Եւ յետ աւուրց ինչ յաբուցեալ ամիրայն խոսրով, և արար ասպատակ զերկիրն Տաճկաց ի Խառնայ մինչեւ ի Մուտկերն, և զաւուրս երկու կացին ի վերայ ձիոյ, և բազում աւարաւ գայր ի գուռն քաղաքին Խառնայ։ Եւ էր ի քաղաքին ամիրայ Աքսակայ որ ասի Շուրեհ-Հէձմ՝ Կուրիչայ որդին, որ կոչի Շէրէփն-Տօլ (157)։ Եւ յայսմ աւուրս էր ամիրայն Շուրեհ ի Խառայն զօրօք Աքսակայ, եւ երկու հազար ձիաւորով ելեալ ի պատերազմ ի վերայ Պարսից զօրայն։ և էր Թուրքն արս տասն հազար, և ի հանդիպել միմեանց

արարին զԹուրքն փախստական, և սաստիկ կոտորածով վարեցան զհետ զօրացն Պարսից, եւ Թափեցին զամենայն առն և զգերու-Թիւնն, և զլաւ ամենայն գաւառն Ուռ-հայոց ծառայք ի Թուրքէն, եւ յամենայն Թուփ և ի քարատակ գտանէին անկեալ զօրք Թուրքաց, և ուր ուրեք զերծան։

ՃԻԲ. Իսկ ի Թուականութեանս Հայոց ՇԼԲ (1083—1084) մեռաւ Վասին Ալպ-քարայ որդին՝ տէրն Ուռհայոց, և Թաղե-ցին զնա ի Պօտեւոր սուրբ Գէորգ։ Սա էր այր բարի և աստուածասէր. քաղցր ի վե-րայ ամենայն աշխարհի, ողորմած որբոց և այրեաց, շինող և խաղաղարար աշխարհի, և եղև սուգ մեծ ի վերայ աշխարհին Ուռհայոց, և (մնաւ անդ) այսմ գաւառի նորա, զի եղեն զրկեալք յայն քաղցր և բարի աւագէն, վա-սին զի որպէս զհայր և ծնող էր ի վերայ մեծի և փոքրու. և եղեալ բարի յիշատակաւ-յաշխարհէս գնաց առ Քրիստոս։ Իւր արա-բին Ժողով ամենայն քաղաքն ի սուրբ Սոփի, և տան զքաղաքն Ուռհայ ի ձեռն Սմբա-տայ առն քաջի և արիական ի պատերազմն ընդդէմ Պարսից։ Իւր կայեալ Սմբատայ ի յաթոռ տուկու Թեանն Ուռհայոց վեց ա-միս. և ամն ի մեծամեծայ քաղաքին Ջանայր

առնուլ տուկութեանն զաթոռ ի յաղգէ Հայոց, որոյ անուանն ասէին Իշխան, ի ցե ղէն որ ասէին Ընջքթանք։ Այս ապստամբեցաւ և գնաց առ Փիլառատոսն, վասն զի ունէր բազում ցեղս և ազգս մեծամեծս ի քաղաքն Լեռնայ. և շարժեալ Իշխանին ըղ Փիլառատոսն՝ և բերէր ի Լեռնայ, և եառուն զքաղաքն ի ձեռն Փիլառատոսին։ Եւ զկնի սակաւ աւուրց Փիլառատոսն ձերբակալ արարեալ զԻշխանն և զամենայն ազգն նորա և զՍմբատ, և տարար հիմն ի վերայ զամենայն քնակութիւնս նոցա, և հատոյց զամենայն իշխանութիւնս Հայոց որք էին ի քաղաքն Լեռնայ, և զԸնջուկ իշխանն եսպան չարչարանօք, և զայլսն տարաւ ի Մարաշ քաղաք. և եհան զաչսն Սմբատայ զառն քաջի, և զաչս Իշխանին և զեղբօրն իւրոյ զԹորոսոռակայ, եւ զայլ իշխանսն պահէր ի շղթայս ի Մարաշ քաղաքին վասն չար բարուց իւրոց։

ՃԻԳ. Դարձեալ ի թուականութեանս Հայոց ՇԼԳ (1084—1085), առաւ Անտիոք քաղաք ի քրիստոնէից. վասն զի Սուլիման սին ամիրայ որդի Գիթբուխայ, որ բնակեալ էր ի քաղաքն Նիկիա՝ յաշխարհն Իւթանայուց, որ էր սահմանակից Ովկիանոս ծովուն։

Սորա յարուցեալ գայր գաղտաբար ընդ հե-
ռաձիգ ճանապարհ, և հասանէր ծածկաբար
մինչեւ ի քաղաքն Անտիոք. և գտեալ զքա-
զաքն անպատրաստս և անպահպանս, և ի
Հալպայ դիհեն ի գիշերի գողացաւ զքա-
զաքն Անտիոք. և Փիլոտոսն էր ի քաղաքն
Ուռհայ, և յայնմ ժամու զոլոր հեծելոց ոչ
գայր ի քաղաքն։ Իսկ Սուլիման երեք հա-
րիւր արամբ մնաւ ի քաղաքն Անտիոք. և
ի վերուն տեսեալ քաղաքացեացն՝ ահաբե-
կեալ եղեն, վասն զի ոչ ուներին զոլոր պա-
տերազմողք, այլ էին որպէս կանայք տկարք
և վատ ի պատերազմ. և առ հասարակ ժո-
ղովեցաւ քաղաքն ի կլայն, և օր քան զօր
բազմանայր զոլոր Թուրքացն, և էառ զքա-
զաքն եւ մարդոյ չարար վնաս, և նեղեաց
զկլայն զբազում աւուրս սովով և ծարաւով։
Իսկ յետ այսր ամենայնի խնդրեցին երդումն
ի յամիրայէն, և տարար Սուլիման զամենայն
և եղեւ խաղաղութիւն, և դարձաւ ամե-
նայն մարդ անվնաս ի տուն իւր։ Իսկ ըն-
ակեալ զայս ամենայն Փիլատոսն՝ ոչ ինչ կա-
ցաց առնել, լուռ ի հոգւոյ հանեալ եւ
դառնապէս ապաշաւէր։ Իսկ Սուլիման տի-
րեաց Անտիոքայ և ամենայն աշխարհին Կիւ-
զիկեցւոց։ Արդ այսպիսի օրինակաւ առաւ

բազմամբոխ քաղաքն Անտիոք ի վատ և ի թուլամորթ և ի պիղծ ազգէն որ կոչին Պելեթիկք (158), որ հաւատովն Հռոմայ սեն իւրեանց, այլ գործովք և լեզուով սոսկ Յաճիկք, եւ հայհոյիչք ուղղափառ հաւատոց, եւ ատելագողք վարուց սրբութեանց, թշնամիք պահոց և կատարիչք չարեաց, հալածիչք հաւատոյ Հայաստանեայց, և ինքեանք նմանեալ հիւանդ և տկար կանանց որք նստին ի փողոցի և բաղձանչեն լեզուաւ իւրեանց։

Եւ այլ իմն զարմանալի ասացից ձեզ՝ զոր ինչ եղեւ Անտիոքայ յառաջ քան զքսան ամ, զոր և մեք իսկ լուաք զայս ի քաղաքացեացն, եթէ այնչափ չար և ատելագոգք էին Հայոց ազգին Անտիոքացիքն, զի յորժամ ի քաղաքն օտարական բռնէին, զմօրուքն կտրէին եւ հանէին ընդ դուռն քաղաքին։ Եւ յաւուր միում բռնեցին զոմն Անեցի՝ այր փառաւոր և կտրեցին զմօրուքն նորա, և առին զամենայն ինչս նորա, և հանին զնա ի քաղաքէն. և նա վիրաւորեալ գնաց, և առեալ զորս Թուբքաց հինգ հարիւր այր, և եկեալ գերեցաց զամենայն գաւառն Անտիոքայ, և ըզտուկին երկոտասան գեղն այրեաց հրով. և բերեալ ի դուռն քաղաքին բազում գերու-

թիւն, կոտորեաց և ելից զնոսա ի գետն, և ձայն տուեալ ի քաղաքն և ասէր. «Այս եմ Պորգ Շ իրակացին, որ զմօրուքն կտրեցիք. թ՝ապա ուժէ այս մօրուք՝ թէ ոչ». և գնաց անհամա, աւարառն։ Այնպէս յաւուրսն բարեկենդանին ի նոյն ամին եկեալ կարաւան ի յարեւելից ի քաղաքն Անտիոքայ, բարձեալ բերէին տարեխ ձուկն, և կային ի մէջ շուկային ի գինարբուքեան. և ի լսել քաղաքացեացն զձայն պարուցն նոցա, ամենայն աղք քաղաքին հասանէին ի վերայ նոցա և ծեծելով գանալից արարին զնոսա, սկսան հանել զնոսա ի քաղաքէն։ Այլն աղքն խրբեւ ութսուն՝ բրեզածք և ընտրեալք քաջութեամբ։ Այլ յայնժամ ձայն տուեալ ժանկատաւաղքն նոցա, և նոցա միաբան գիւնեխմեալ էին՝ յարձակեցան ի վերայ քաղաքացեացն, և ի Աեւոտոյն դրանէն մինչեւ ի տէր Պետրոս զամենայն աղք քաղաքին փախստական արարին, և կառափնաբեկ ոտնակոտորս արարին արս բազումս. և ապա խաչով և աւետարանով երդուեալ նոցա բնաւայլ ոչ մեզանչել նոցա։ Այլ յայնժամ արարին խաղաղութիւն, և դարձան ի տեղիս իւրեանց։

ՃԻԴ. Դարձեալ ի թուականութեանս Հայոց յամի ՇԼԴ (1085—1086), մեռաւ

Հայոց վարդապետն Յակոբոս Բարամնեցին, որ յորջորջեալ կոչէր Անանահնեցի (159), այր հոլոր կորովի։ Որոյ հասեալ ի վերայ հին և նոր կտակարանացն Աստուծոյ, ուսեալ եւ հասեալ սորա ի վերայ հռետորական իմաստութեանց, և տեղեկացեալ ամենայն փիլիսոփայական խորին գիտութեանց. սա էր յաշակերտաց մեծին Դիոսկորոսի հօրն Անանահնին. և այս Յակոբոս էր որ խօսեցաւ ի Կոստանդինուպօլիս ընդ իմաստասէրսն Հունոմոց յաւուրս Թագաւորին Տուկին, յորժամ գնաց զՀետ Սենեքերիմայ որդւոյն. սորա խօսեալ վասն հաւատոցն Հայաստանեայց, և հաճեալ ի բանս նորա ամենայն տուն Յունաց։ Եւ յայսմ ժամանակիս էր ի քաղաքն Ուռհայ, և ծերութեամբ քաղաքավարեալ զկենսն իւր. և դաւալ նենգութեամբ լուծեալ եղեւ ի կենաց, վասն զի գտանէին զնա մեռեալ ի մահիճս իւր առանց հեծութեան և ցաւոց։ Այլ զնա ամենայն սիրելի մերձաւորք իւր, և արարին ժողով զամենայն քաղաքն Ուռհայ ի վերայ նորա, և մեծաւ հանդիսիւ թաղեցին զնա ի դուռն սուրբ Լուսաւորչեանցն իւրոյ՝ ի հիւսիսեան կողմն քաղաքին, իբրեւ նեռընկէց մի հեռի ի պարսպէն։

ՃԻԵ. Յայսմ ամի Թագաւորն Աբրահամ Կուրիշայ որդին, որ ասի Շէրէֆին-սալ, այր բարի և քաջայր հաւատացելոյ Քրիստոսի, որ ոչ ընդ գրով փակի գործ բարութեան նորա ի վերայ խաչապաշտ ազգաց. և կամ քանի խրատս և ջարշարանս, և կամ քանի սպանումն անդուցանէր ընդ ազգն իւր վասն հաւատացելոյ Քրիստոսի։ Սորա արարեալ ժողովս Աբրահամ զօրաց իբրեւ տասն բիւրս, և գնայ էառ զՀալապ քաղաք, և արար կին զդուստրն տեսուն քաղաքին (160). և արձակեցաւ պատերազմ ի վերայ Անտիոքայ քաղաքին մեծաւ սրտմտութեամբ. և յայնժամ Սուլիման ամիրայն Անտիոքայ գայր ընդդէմ նորա բազում զօրօք ի տեղին որ կոչի Պզահ, եւ յայնմ տեղւոջէ արարին սաստիկ պատերազմ յերկոցունց կողմանցն։ Իսկ Աբրահամ զօրքն սկսան նեղեալ սրել Թագաւորին իւրեանց, և առ հասարակ ի փախուստ դարձան. եւ յորժամ երթային՝ սպանեալ Թագաւորն Աբրահամ ի յիւր զօրացն. և այսպէս մեռաւ նէր բարի Թագաւորն Կուրիշայ որդի Շէրէֆին-սալ. և զկնի երից աւուրց գտանէին զնա սպանեալ, և ի վերայ ճանապարհին թաղեցին զնա։ Իւ Սուլիման մեծաւ յաղթութեամբ դարձաւ ի Անտիոք։ և յայսմ ժամու

ծնաւ իւր որդի. և կոչեաց զանուն որդւոյ իւրոյ Իսրաէլ։

Յայսմ ամի ամիրայ ումն Պղատաձի անուն Նասրա առեալ զՊ՚ահան գաւառս՝ ի Փիլատոսէն, և կամաւորիկսն տէր Թէոդորոս եղև ընդ իշխանութեամբ նորա. յայնժամ կոչեաց Փիլատոսն զնա առ ինքն ի Սարաշ քաղաք, և նա ոչ կարաց գնալ. վասն զի Թուրքի էր իշխանութիւնն։ Իսկ եղև օրացեալ Փիլատոսն ընդ տէր Թէոդորոսի. և խորհեաց այլ կամաւորիկս գնել յաղագս անիրաւ և չար բարուց իւրոց. և յայնժամ մեծարեալ կոչեաց զտէր Յովհաննէս արքեպիսկոպոսն որդւոյ Նշաուաձաձնին պատուերին. և նա ոչ էառ յանձն, վասն զի էր ահարկու և փառաւոր և ընտիր առաքինի։ Դարձեալ Փիլատոսն կոչեաց զտէր Պօղոս զՀոյր որդւոյ Եղանին Վարդայ, և արար ժողով եպիսկոպոսաց և Հարանց, և եռաւն ձեռնադրութիւն կամաւորիկսութեան Պօղոսի ի Սարաշ քաղաքի, հրամանաւ և կամաւք Փիլատոսի և ոչ Նշաուաձայ։ Իսկ այս ամենայն ոչ լինէր ընդունելի Նշաուաձայ, և ոչ առ հաւատացեալսն Քրիստոսի. զարս տեսեալ Պօղոսի՝ զկնի առկաւ ինչ ջուրց ի բաց թողեալ զանձաւն, վասն զի էր այր սուրբ և առաքինի, և գիտաց

գեալ զի ընդ հակառակս էր և ոչ ուղղակիս

ՃԻԶ. Յայսմ ժամանակիս էր աղմուկ և խռովութիւն մեծ ի վերայ աթոռոյն սուրբ Լուսաւորչին Գրիգորի. վասն զի յաւուրս այսոսիկ ոչ հրամանաւն Աստուծոյ և կամ արժանաւորութեամբ, կամ ընտրութեամբ էր կարգադրութիւն սրբոյ Աթոռոյն, այլ զօրութեամբ և կարողութեամբ և բարձրագահ իշխանութեամբ. և այս ոչ լինէր յայտնութեամբ Հոգւոյն սրբոյ, այլ լինէր ի ձեռն պատահմանց և յաջողութեանց և տրօք ոսկւոյ և արծաթոյ։ Եւ ահա յայսմ աւուրքս ամաչելով յետս դարձան գաղթ սրբոցն և առաքինեացն, և յառաջ մատեան գաղթ անկելոցն յերեսաց տեառն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի՝ որգւոյն Աստուծոյ։ Աստանօր սկիզբն եղեւ կատարելոյ տեսլեանն սրբոյն Սահակայ Պարթեւի, յորս ասաց՝ Ջնջեալ ոսկեգիր կարգացն, և գծագրեալ սեւագեղ թանաքովն. վասն զի ահա ի ժամանակիս յայսմիկ ի չորս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի. զի ահա տէր Սահրամ Եգիպտոս, և տէր Թէոդորոս ի Հոնին, եւ տէր Բարսեղ ի Թագաւորաքնակ քաղաքն Հայոց Անի. և տէր Պօղոս ի Սարաշ քաղաքն. եւ սոքա իւրաքանչիւր ոք առնէին

ձեռնադրութիւնս, և օծանէին եպիսկոպոսունս եւ տային օրհնութիւնս սուրբ ձիթոյն, և ի նոցանէ օրհնէին քահանայք, և լինէր պատարագս և մկրտութիւնս և պսակն կուսանաց։ Յետ էր այս ամենայն սուգ մեծ ի վերայ եկեղեցւոյն Աստուծոյ. վասն զի փաքսան ոչխարաց ընդ չորս հայրապետութիւնս բաժանեցաւ, և գայլք եղեն պահապանք հօտին Քրիստոսի։ Յետ ահա այսմ ժամանակիս բանաւոր ոչխարքն զգեցան զքնութիւն շանց, և առին զսիրտ գազանաց, և համարձակեցան հաջել յերեսս հովուացն և հայրապետացն. հարք առեցին զձեռունդս իւրեանց, որդիք հայհոյիչք և չարաբարոյք ծրնողաց իւրեանց։ Յետ արդ ահա այս ամենայն կարապետքն են Լեւոն, և սկիզբն կատարածի աշխարհի, և առ ի բառնալոյ հաւատոց և առաքելական պաշտաւութեանց և ի կատարելոյ գրելեացն ի գիրս սուրբս, զոր ասաց սուրբն Երեմիա և նոքին սրդին սուրբն Սահակ, և զոր խօսեցաւ ի մեր ժամանակիս սուրբ վարդապետն Հայոց Յովհաննէս՝ որ ասի Կոզեռն։ Սա (161) խօսեցաւ բազում բանս որպէս զմնարգարէութիւնս ի վերայ այսմ ժամանակիս և խափանելոյ առաքելական պաշտաւութեանս յամենայն մնոց. և

թուականաց (162) հաւատոց. և զայս ասացեալ ի նոյն դիրքս յառաջ ժամանակաց։ Արդ այս ամենայն խառնութեանցս եւ անդէս բարիութեանս ոչ կարացեալ մնանել յաշխարհն Աղուանից, որ ասի՝ խորին աշխարհն Հայոց, որ է ահեռս սրբոց առաքելոյն Թադէոսի։ Արդ այս ամենայն յայնմ աշխարհի ոչ եղեւ բաժանումն սրբոց ահեռոյն, այլ մնաց անշարժ հաստատութեամբ, հայրապետութեամբ և թագաւորութեամբ մինչեւ ցայսօր ժամանակի, որք նստէին առաքելական ահեռոյն ի քաղաքն Հայոց ի Վարսաւ, որ ասի Փայտակարան, սահմանակից Համամասրած ծովուն։ Եւ եղեւ ի զօրանալն Պարսից փախեցան ահեռս հայրապետութեանն ի Գանձակ, որք հանդիպեցան այսմ ժամանակաց թագաւորքս մերոյս՝ կաթուղիկոսք Աղուանից՝ տէր Յովհաննէս և տէր Դէսպոյ, տէր Յովսէփ, տէր Սարկիս, տէր Սահմանոս. եւ թագաւորք Աղուանից՝ Դաւիթ և Դաւիթ և Կորիկէ, որք նստէին այժմս ի | օրէ քաղաքն Հայոց։ Իսկ և այլ թագաւորք Հայոց ի Վարբանդ աշխարհին, որ ասի (165) Կապանք, սահմանակից Աղուանից և Աղուանից, որք էին թագաւորք անսասանք և սրբակրօնք որ յիշատակին ի սուրբ պատարագն ընդ այլ

աստուածասէր սուրբ Թագաւորայն, որոց էին անուանք այսպիսի, Վաչական, և Գուշակտակ (164), Նորին որդի. Փիլիպէ որդի Գուշակտակին. Սեւադա որդի Փիլիպէի. Մենեքերիմ որդի Սեւադայի. Դրիգոր որդի Մենեքերիմայ, որ գնաց ելաւ կենդանի էր մինչեւ գրեաք զայս մատենագրութիւնս մեր։ Յայսմ ժամանակիս եղեւ ազգիս Հայոց վեց կաթողիկոս, երկու յունգիրոս, և չորս յամենայն աշխարհէ Հայոց, որպէս յառաջագոյն ասացաք (165)։ Իսկ նստաւ տէր Գէորգ կաթողիկոսն 'ի Սարաշ Հրամանեաւ Փիլարտոսին և ոչ հրամանաւն Աստուծոյ։

Իսկ արդ մեք դարձցուք 'ի Թուականն որ Թուզաք, զի զայս ասացաք վասն խառնակութեան որ եղեւ 'ի վերայ աշխարհիս Հայասանեայց։

ՃԻԵ. Իսկ յարժամ եղեւ Թուականութիւնս Հայոց ՇԼԴ. (1085—1086) գայր բազում զօրք սուլտանն Դամասկոսի՝ որ ասի Դգուշ, և յարուցանէր պատերազմ ընդ աւիրային Ինտիոքայ ընդ Սուլիման։ Արդ յայսմ ժամանակիս եղեւ պատերազմ սաստիկ յերկոցունց կողմանցն, և բախեին զմիմեանս զարմանալի պատերազմաւ ընդ մէջ Հալպայ և ընդ մէջ Ինտիոքայ. և էր երկու երեսք պատերազմայն թուրք, և յայնմ ան-

զ-ՍՉ անխնայ զմիմեանս սատակէին. և ի բազմանալ պատերազմացն՝ յաղթեաց զօրք սուլտանին զօրացն Սուլիմանայ և արարին զնա փախստական, և ապանաւ ամիրայն Ա-տիրքայ Սուլիման ի զօրաց սուլտանին Դոդուշին, և թաղեցաւ Սուլիման մօտ ի գերեզ-մանն Շէրէֆին—տօլայ՝ Կուրիշայ սրդեւոյն։ Եւ յայսմ ամի առաւ Ալնտիրք և ամենայն աշ-խարհն Նարա, և եղև Դոդուշին։ Այս Դոդուշս էր սրդի Աբասան սուլտանին և եղբայր Մե-լեք—շահ սուլտանին։ Եւ սորա վերայ ամօք յառաջ եկեալ բազում զօրօք և էառ զքա-զաքն Դմիշկ. և եապան զմեծ ամիրայն զԱմ-սիսն (166) զիշխանն Պարսից, որ տիրեալ էր Դմիշկայ և ամենայն ծովեզեր աշխարհացն։ Այս Ալոսիան թուրք էր. և էր այր քաջ և պատերազմող. սա յաղթեաց Մսրայ, և ծե-ծեալ զթագաւորն Եգիպտոսի զԱզիզն (167), և եհան զնա յայնմ գաւառէն, և սա էառ ի Մսրայ զսուրբ քաղաքն Երուսաղէմ, և ըզ Դմիշկ և զամենայն ծովեզերայ քաղաքանին։ Եւ սա զարհուրեցուցոյց զամենայն տունն Ամ-ուրայ, մինչեւ յարեաւ ընդդէմ նորա ծա-ռայն Ազիզին՝ թագաւորին Մսրայ, զորս բե-րին նմա զնա ծառայ ի Հայոց ազգէն. եւ նա անուանեաց զնա Ամր—ՃՕՀ (168)։ Սորա

վառեալ գուռնդ զօրաց ընդդէմ Լ՝խոխին ի Հայոց զօրականացն, և եկաց պատերազմաւ ընդդէմ նորա, և ապա եղեւ խաղաղութիւն տանն Սոպայ։

ՃԻԸ. Իսկ ի թուականութեանս Հայոց յամս ՇԼԵ (1086–1087), յարուցեալ անօրէն Փիլառատոն և գնաց յերկրպագութիւն Ալեքսահին՝ տիեզերակալ սուլտանին վասն խնդրելոյ ի նմանէ զքաղցրութիւն և զխաղաղութիւն ամենայն հաւատացելոց Քրիստոսի. և թողեալ ի քաղաք իւր փոխան զմեծ իշխան Հոռոմոց՝ որում անուն Պառակամանոս կոչէին, մարմնովն ներքինի, որ էր այր բարի և աստուածասէր. և տուեալ եղեւ Լուսահայ ի ձեռս նորա։ Իսկ առեալ Փիլառատոն բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ, և աղնիւ ձիս և ջորիս, և հանդերձս երեւելիս և պայծառս, և գնացեալ առ սուլտանն ի յաշխարհն Պարսից։ Իսկ յայնժամ մի ոմն յիշխանացն Փիլառատոսին Պարսամա անուն նորա, որոյ իւր չար խորհրդակիցս զայլ իշխանսն քաղաքին, և նոքաք կատարեաց զգործսն Կայենի և ըստ Յուդայի զաստուածասպանին. և չար խորհրդակիցքն իւրովք եղեալ Պարսամայ ի յաւուր կիւրակէի ի յաւագ կլայն, և մտաւ առ Պառակամանոսն։ Իսկ էր ժամ աղօթից

իւրոց, և կայր յաղօթս յեկեղեցին մեծ վկա-
յարանին սուրբ Թորոսի. և յայնժամ նոքա
որպէս գազանք յարձակեցան 'ի վերայ նորա
և սպանին զՊառակամանոսն մինչ կայր յա-
ղօթսն 'ի մէջ եկեղեցւոյն, զայր բարի և ո-
ղորմած սպանին չարաչար. և գրին քաղա-
քացիքն յաթոռ տուկութեանն Ուռհայոյ
սպանող նորա զՊարսամն։ Լու լուեալ զայս
ամենայն սուլտանին Մելիք-շահն 'ի Պարսի-
կէն, և զՓիլառատոսն ընկէց յերեսաց և 'ի փա-
ռաց իւրոց։ Լու յայնժամ Փիլառատոսն յամե-
նայն գիտնոց յուսահատեալ եղեւ, և 'ի նոյն
ժամայն յարուցեալ 'ի պատերազմ 'ի վերայ
քրիստոսական հաւատոց իւրոց, և եղեւ
ոչիրացող հաւատոցն Քրիստոսի զոր ունէր
աղտեղութեամբ, և կարծէր այնիւ փառա-
ւորիլ 'ի Պարսից, զոր ոչ փառաւորեցաւ.
զի՞ր (169), այն ինչ եղեւ նորա օգուտ՝ որ ըղ-
Քրիստոս ուրացաւ, և եղեւ նախատինք և
առելի Աստուծոյ և մարդկան։

ՃԻԹ. Յայսմ ամի շարժեալ ահագին բազ-
մութեամբ տիեզերակալ Մելիք-շահ սուլ-
տանն Պարսից՝ ասպանազանց ազգաւ և ան-
թիւ զօրականօք խաղայր գայր, և շրջեալ ե-
մուտ յարեւմուտս 'ի յաշխարհն Հոռոմոց
առ 'ի տիրանալ այնմ աշխարհին, և քաղքրու-

թեամբ և հեզութեամբ և ողորմութեամբ լցեալ էր սիրտ նորա ի վերայ քրիստոնէից ազգաց, և հայրասիրեամ գութ ցուցանէր աւ մենայն աշխարհի, և առանց պատերազմաց տիրեալ լինէր բազում քաղաքաց և գաւառաց։ Յետ յայսմ ամի տիրեաց սուլտանն աւ մենայն աշխարհին Հայոց և Հաւատոյց, եւ գայր հասանէր ի մեծ քաղաքն Նոխրոք, տիրանայր այն աշխարհին և Հայպայ, և տիրելով տիրեաց ի Հասպահանէն (170) մինչեւ ի Ամիսիանոս. և հաւանեցուցաց առ հաստատակամենայն թագաւորութիւնս իւրոյ ամենայն՝ որք յայսկոյս Ամիսիանոսի, և ոչ մնաց աշխարհ՝ որ ոչ հնազանդեցաւ նորա թագաւորութեանն. և եղեն հարկատուք եւ հնազանդեցան նմա երկրատատան ազգք թագաւորաց։ Յետ եղեւ յետ տիրանալոյ Նոխրոքայ. իջեալ յերդ Ամիսիանոս ծովուն՝ ի տեղի որ կոչի Սեւաստի (171). և տեսեալ սուլտանին զծովն մեծ՝ գոհանայր և օրհնէր զԱստուած որ մեծացոյց զթագաւորութիւնն առաւել քան զՀօր իւրոյ Հրամանայ։ Յետ ձիով իւրով մտեալ կոխէր զԱմիսիանոս. և եհան ընդ թուրն իւր, և երեք հաղ մխեաց ի Յամիսիանոսն զթուրն իւր և ասաց, եթէ «Հնա տիրել ինձ երեսս Հաստատուած ի ծովն Պարս

սից մինչեւ ի ծովս այս»։ և հանեալ զՀան-
դերձս տարածեաց ի վերայ գետանոյն, և և-
կաց յաղօթս առ տէր Աստուած, և օրհ-
նեաց զբարերար ողորմութիւնն Աստուծոյ,
և հրամայեաց ծառայիցն իւր աւազս բաս-
նալ ի ծովէն, և տարաւ զայն ի Պարսիկս,
և եարկ ի վերայ գերեզմանի հօրն իւրոյ
Աքասանայ՝ և ասէր. «Հայր իմ Աքասան,
ահա աւետիք քեզ, վասն զի տղայ սրդին
քո զոր թողեր, տիրեալով տիրեաց մինչեւ ի
ծագս աշխարհի»։ Եւ գներ սուլտանն Ամ-
տիոք զամիրայն որ ասի Աղսիան, այր չար
և շուն և խռովարար և գաղանաց միտ գը-
ներ, և ի Հալապ քաղաք զԱղ-Սընգոյր (172),
որ էր այր բարի և խաղաղարար և քաղցր ի
վերայ ամենայն ուրուք և շինող աշխարհի։

ՃԼ. Յայսմ ամի ամիրայ ոմն Պուզան
անուն, հրամանաւ Մելիք-շահ տիեզերաւ-
կալ սուլտանին գայր բազում զօրօք ի վե-
րայ քաղաքին Ուռհայայ, և իջեալ բանակ
հարկանէր ի գուռն քաղաքին, և զամիսս
երիս պատերազմեալ ի վերայ քաղաքին։ Եւ
եղեւ յաւուր միում գայր և ինքն սուլտանն
տակաւ զօրօք և անցանէր շուրջ զքաղաքաւն,
և գնաց անվնաս, վասն զի իջեալ էր անթիւ
զօրօք ի գաշտին Խառնայ, և անդուստ գը-

նաց խաղաղութեամբ ի Պարսիկս։

Իսկ Պուզան կայր մեծաւ պատերազմաւ ի վերայ Ռուհայ քաղաքին, և սովամեղէր զքաղաքն զբազում աւուրս. և ի վերայ այնքան բարկութեանն ոչ գոյր օգնական որ փրկէր զնա. անձարեալ լինէին յամենայն կողմանց։ Յայնժամ քաղաքն ամենայն արարին խուսայ ի վերայ տուկին իւրեանց Պարսամայ. և չարժեալ ամենայն բազմութիւն քաղաքին ի վերայ նորա, և նա առ վտանգին անձարեալ դէմս արար ի Պուզանն, և ընկէց զինքն ի պարսպէն ի վայր, և բեկաւ ոտն նորա, և եկեալ տարան զնա առ Պուզանն, և նա զինի աւուրց ինչ մեռանէր։ Յետ եղեալ իշխանքն քաղաքացեաց առ Պուզանն, և ետուն զՌուհայ ի ձեռս նորա. և էր օրն առաջին օր նաւասարդի, և թուականն Հայոց փոխեցաւ ի ՇԼԶ (1087–1088), և եղեւ խաղաղութիւն մեծ ի Ռուհայու և ամենայն սահմանաց նորա, և լցաւ ամենայն քաղաքն Ռուհայ ուրախութեամբ. և եղիր Պուզանն ի վերայ տեսուչ և պահապան քաղաքին Ռուհայոյ զսլար ոմն՝ որ ասէին Խասուլուս։ Յայնժամ մատեան աքք չարախօսեցին զՀայոց իշխանսն որ կային ի քաղաքն, և չարաչար մատնութեամբ մատնեցին զնո-

սա Աքբար անուն և այլք ոմանք. և եռուն
որով կորուսանել զիշխանան Հայոց՝ զոք
փոքրաւորք երկոտասան՝ մեծք և երեւելիք։
Հայոց Պուզանն ապաշաւեր զմահն նոցա,
փան զի երդուեալ էր յառաջագոյն, սա
կոյն յաղագս շարաչար մատնութեանս կո
րոյս զնոսա. և ինքն Պուզանն գնաց զօրքն
խրովք ի Պարսից աշխարհն։

ՃԼԱ. Հայսմ ամի գնաց սուլտանն բազ
մութեամբ զօրօք և բանակեցաւ ի վերայ
քաղաքին՝ որ կոչի Դանձակ, ի յաշխարհին
Հայոց. և արար սաստիկ պատերազմ ի վե
րայ Դանձակայ քաղաքին, և ժողովեաց զա
մենայն Պարսիկ ի վերայ Նորա, և սաստիկ
պատերազմաւ փորեալ ընկեցին բուրգն մի,
և այնպիսի պատերազմաւ առին զքաղաքն
Դանձակ, և արարին կոտորած զիրքը մասն
քաղաքին. և հրամայեաց Պուզանն և վերա
ցոյց զօրն և արար խաղաղութիւն։ Իւ ամ
Սամփանոս կոմեսն Աղուանից էր
յայնժամ ի քաղաքն, և զերծաւ խաղաղու
թեամբ օգնականութեամբն Աստուծոյ, վասն
զի պահեալ եղեւ ի Հայոց զօրացն որք էին
ընդ Պուզանին։

ՃԼԲ. Արդ ի յամն թագաւորութեան
Աղէքսին Յունաց աքբային եղեւ խռովու

թիւն յաշխարհն արեւմտից յայնկոյս մեծ գետոյն՝ որ ասի Պառատաւնայիս. (173) եղև պատերազմ սաստիկ յարգէն Պատրինկաց ընդ Թագաւորին Հոռոմոց Ալէքսին։ Իւր յայնժամ Թագաւորն Պատրինկաց յաղթեաց զբազայն Հոռոմոց, և սաստիկ կոտորածով վարէր զզօրսն Հոռոմոց, և անխնայ կոտորէին զնոսա։ Իսկ Թագաւորն Ալէքս սակաւ ապրեալք անկանէր ի Կոստանդինուպօլիս. եւ զկնի սակաւ աւուրց բանայր զդանձատունսն իւր, և հանեալ հրամարտակս ընդ ամենայն երկիր Թագաւորութեան իւրոյ, և արար ժողով մեծ և ահագին առաւել քան զառաջինն. և Թագաւորն Պատրինկաց գայր ամենայն զօրօք իւրովք և ազգաւ իւրով ի վերայ Կոստանդինուպօլսի. վասն զի առցէ իւր զԹագաւորութիւնն Յունաց. և գայր ընդդէմ նմա վառեալ զօրաց վեց հարիւր հազարաց և միահամուռն ազգաւ և որդւովք։ Իւր լուեալ զայս Ալէքսան, կացին յաղօթս առ Աստուած զաւուրս ութ ամենայն դասիւք հաւատացելովք, և էր ի թուականութեանս Հայոց ՇԼԸ(1089—1090). և յաւուրս այսոսիկ յարձակեցաւ Թագաւորն Ալէքսան զօրօք բազմօք ի վերայ զօրացն Պատրինկաց, երեք հարիւր հազարօք

Հռոմայ և Հռոմայեցւոց, Հայոց եւ Պուլղարաց զօրքն. և հանդիպեալ երկուց թագաւորութեանցն միմեանց, և յայնմ աւուր արարին ահաւոր և սաստիկ պատերազմ ընդ միմեանս։ Իսկ Պատինակքն առ հասարակ աղէնաւոր էին, և ի վերայ սալից պատերազմէին ահագին և զարմանալի կրովութեամբ. յայնժամ ձայն տուեալ թագաւորն Արէքսան, և կրակով փառեցին ըզսայլն և արարին հրաբորբոք ջնոտա. և այսու հնարաւորութեամբ յաղթեաց թագաւորն Արէքսան զօրացն Պատինակաց, և արարին զամենայն զօրան փոխստական և սրով և սաստիկ կոտորածով. և եսպան զթագաւորն Պատինակաց, և ընդեաց զամենայն զօրսն նոցա, և զորդիս նոցա և զկանայս նոցա կոտորեաց սրով, և բազում աւարաւ և գերութեամբ դարձաւ ի Կոստանդինուպոլիս։

ՃԼԳ. Յայսմ ժամանակիս երեւեցաւ ամն չար և պիղծ հերետիկոս ի Կոստանդինուպոլիս. աբեղայ մի ի Հռոմայ ազգէ, որ զատանայ իւր աստուած պաշտէր, և սեւ շուն շրջեցուցանէր զհետ իւր, և նորա մատուցանէր զաղօթս. և այսպիսի պիղծ աղանդով ապականեալ էր զբազում արս և զկանայս, և աստուածապաշտ քրիստոնէն ի

Կոստանդինու պօլսէ ապականեալ ի հաւատացեալսն իբրեւ զփոքր մման քաղաքին, և գլխովին իսկ զմայր Թագաւորին Աղեքսին։ Եւ այնչափ յանդգնեալ մայրն Թագաւորին, որ չար մոլորութեամբ իւրով առեալ մման ի սրբոյ Նշանէն Քրիստոսի և դնէ զայն ի կօշիկ Թագաւորին ծածկաբար ի ներքոյ գարշապարացն, զի լիցին այն կոխան Թագաւորին. զոր յայտնեաց Աստուած զպիղծ աղանդաւորն ի յիւրոյ հաւատակցացն, և ազդ արարեալ զայն Թագաւորին։ Որոց խմացեալ աստուածասէր Թագաւորն Աղեքսն, և զաղանդագլուխն հրով այրեաց, և զայլ բազումս արար խեղդամահ ի ծովն Ովկիանոս իբրեւ բիւր մի, և զիւր մայրն ընկէց ի պատուոյն և եհան յերեսաց, և եղեւ խաղաղութիւն։

ՃԼԴ. Դարձեալ ի Թուականութեանս Հայոց ի յամս ՇԼԹ (1090—1091), յարուցեալ հայրապետն Հայոց տէր Խարսեղ և գնացեալ առ տիեզերակալ սուլտանն Մելեք—շահն, զի տեսանէր որ նեղէին զհաւատացեալսն Քրիստոսի ի տեղիս տեղիս, եւ հարկս պահանջէին յեկեղեցեացն Աստուծոյ և յամենայն ժառանգաւորաց Նորա, և զվանորայսն և զեպիսկոպոսունսն հարկիս-

չարչարէին. և յայնժամ կամաւոր կամն տէր Խարսեղ սեսեալ զայս ամենայն նեղութիւնս, և խորհեցաւ գնալ առ բարի և քաջդ թագաւորին Պարսից և ամենայն հաւատացելոց Քրիստոսի, առ ի ծանուցանել նմա զայս ամենայն. և առեալ ընդ իւր նուէրս սուլտանին իբրեւ բիւրս ոսկւոյ և արծաթոյ եւ դիպակաց, և հանդերձ ազատաւոք և եպիսկոպոսաւոք և քահանայիւք՝ առեալ վարդապետ զՀետ իւր, և գնաց ի Պարսիկս առ սատուածատէր սուլտանն։ Յորմեսեալ սուլտանին զտէր Խարսեղ՝ յոյժ մեծարեաց զնա, և կատարեաց զամենայն խնդրուածս նորա. եւ արարեալ զամենայն կամս տէր Խարսղի, և ազատեաց զամենայն եկեղեցիս և զվանորայս և զքահանայս. եւ առեալ գիր ազատութեան, և հրովարտակք եւ մեծարանք արձակեաց զՀայրապետն Հայոց։ Յորմ ահա եղեալ գայր ազգուեանական հրամանաւք տէր Խարսեղ մեծաւ ուրախութեամբ, և ազգ փառաւորք ի սուլտանէն զՀետ իւր. և եկեալ հասանէր ի Ջահան գաւառին, յարեւաւ ի վերայ սեսառն Թէոդորոսի, որ հրամանաւ Փիլատոսին նրա տեալ էր կամաւորս ի Հունին. և տէր Խարսեղ ընկենայր յատառայն զտէր Թէոդոս

ոս, և առեալ ի նմանէ զբօղն և զգաւազանն, և զսուրբ Լաւանն տեառն Պետրոսի, եւ արար միահեծան զՀայրապետութիւնն իւր, և անտի եկն ի քաղաքն Լուսաւորչայ։ Եւ արդ այս ոչ է մեզադրելի գնալ Հայրապետի առ այլազգի թագաւորի, և առնել խաղաղութիւն սրբոյ եկեղեցւոյ. զի յաղագս խաղաղութեան սրբոյ եկեղեցւոյ գնայց սուրբն Բարսեղ առ անօրէն Յուլիանոս թագաւորն, և սուրբն Ներսէս առ ուրացողն Վաղէս թագաւորն Յունաց, և սուրբն Մարութա առ Յազկերտ Պարսից արքայն, և վարդապետն Լան առ թագաւորն Բաղդէացւոց, և Բրիսաոս եկեալ առ հրէական ազգն։ Իսկ յորժամ եկն տէր Բարսեղ Լուսաւորչայ, փոխեալ էր Թուականութիւնն Հայոց ՇԽ (1091—1092), և գնացեալ տէր Բարսեղ հասանէր մինչեւ ի մեծն Կեսարիա Պոմպայ, և դառնայր Անթիոք, և լինէր սուրախութիւն մեծ ամենայն աշխարհի որք տեսանէին զնա. և դարձեալ գայր Լուսաւորչայ։

ՃԼԵ. Յայսմ ամի շարժեալ եղեւ ընդ ամենայն երկիր յամսեանն սեպտեմբերի, և սաստկապէս երերալով դողայր ամենայն աշխարհք հանդերձ ամենայն արարածովքն որ ի նեղքոյ երկնից. և լինէր կործանումն մեծ

'ի քաղաքին Անտիոքայ, և բազում աշտա-
բակք հիմն 'ի վերս տապալեցան, և անկաւ
մեծ մասն պարսպին Անտիոքայ, և բազում
ազգ և կանայք մեռան 'ի նեղքոյ բնակու-
թեան իւրեանց։

ՃԼԶ. Դարձեալ 'ի թուականութեանս
Հայոց ՇԽԱ (1092—1093), անկաւ մահ սաստ-
տիկ ընդ ամենայն աշխարհս, որ և 'ի բազ-
մութենէ մեռելոցն ոչ կարէին ժամանել
քահանայք թաղել զմեռեալսն. և առ հա-
սարակ յամենայն տուն ձայն լալոյ և ողբ-
ումն արտասուաց եղանէր. եւ այնչափ
սաստկացաւ մահն, որ բազումք 'ի յահէ
մահուան երերալով դողային առաւել քան
զմեռեալսն, և անթիւ կոտորածս եղեւ աշ-
խարհի անձանցն։

ՃԼԷ. Յայսմ ամի Վարագայ սուրբ Նշա-
նին և պատկեր սրբոյ Աստուածածնին բերաւ
'ի քաղաքն Ուռհայ, և եղեւ ուրախութիւն
մեծ տանն Աբգարու. և դղրդեալ ամենայն
քաղաքն միահամուռ և երեալք մեծաւ ու-
րախութեամբ ընդ առաջ նորա, և ածին
զնա 'ի քաղաքն մեծաւ հանդիսիւ։ Յայն-
ժամ իշխան աշխարհին Ուռհայոյ արար պա-
տեհութիւն՝ որք եկին զհետ սրբոյ եպիսկո-
պոսին տէր Պօղոսին և այլոց հարանցն. եւ

եգեալ զսուրբ Նշանն յեկեղեցին հանդերձ փառաբանութեամբ. և գնեի ամենայ ինչ յաւիշատակեաց և խլեաց ի նոցանէ զսուրբն անիրաւաբար։

ՃԼԸ. Յայսմ ամի զօրաժողով արար Պուզանն զամենայն զօրսն Պարսից, եւ առեալ զՀետ իւր զմեծ ամիրայքն և զտէրն Ինտիքայն զՀաղպայ զԱզիսանն և զԱզ-Սին գայրն. և անթիւ զօրականօք խաղայր գԼենայր յաշխարհն Հոռոմոց. և իջեալ ի վերայ հռչակաւոր քաղաքին որ կոչի Նիկիա, և սենոտի խարհրդօք խելագարեալ խարհէր անցանել առնուլ զքաղաքն Կոստանդինուպօլիս, զոյն որ վերին պահպանութեամբն ամրացեալ կայ. և մոլորական բնութեամբ միտ եդեալ առնուլ զանմբառնելի քաղաքն. և կացեալ անդ զաւուրս ինչ, և ոչ կայր կարողութիւն առնել ինչ։

ՃԼԹ. Եւ յայսմ ամի մեռանէր մեծն և աշխարհակալ սուլտանն Մելէք-Շահն, որ էր հայր և ծնող ամենայն տիեզերաց, այր բարի և ողորմած և քաղցր ի վերայ ամենայն աշխարհի։ Սա մեռանէր ի Պաղտատ քաղաքի դաւով նենգութեամբ ի կնոջէ իւրմէ՝ որ էր դուստր սուլտանին Սամրինդայ, սա (174) դեղ մահու արբուցանէր բարի անձի-

նրն և լուծանէր զամենամեծ թագաւորն ի կենաց, և եղեւ սուգ մեծ և սաստիկ ի վերայ ամենայն տիեզերաց։ Եւ լուեալ Պասզանն զմահ սուլտանին՝ դարձաւ ի քաղաքն Ուռհայ, և Ազիանն գնաց Այնտիոք, և Ազիանդրին գնաց ի Հալապ քաղաք։ Եւ տէր Խարսեղ որ էր ի քաղաքն Ուռհայ, իբրեւ փախուստական անկանէր ի քաղաքն Նիզ, և նստաւ ի յաթոռ իւր։

Եւ յայսմ աւուրքս եղեւ սաստիկ կոտորած և արիւնհեղութիւն ի տանն Հայոց, քանզի յարձակուն մն արարին զօրքն Թուրքաց և բազմաց խաւար ածին. մեռաւ սուլտանն, և ազգն Թուրք զբազումս գերեցին, և տարան զսուլտանն Թաղեցին ի Սարանդ քաղաքի, մեռ ի գերեզման հօրն իւրոյ Ալբասլանայ. և մնաց իւր երկու որդի, աւագ որդին կոչեցաւ Պարկիարուխ, որ էր ծնեալ ի դստերէն Ալբուին մեծ ամիրային՝ որ էր ազգական Ալբասլանայ։ Իսկ միւս որդին (175) կոչէին Սաֆար, որ էր ի դստերէն Արմինդոյ սուլտանին, որ նստէր Այնզկան քաղաքի և ի Խզնէ։ Եւ գնեն զաւագ որդին զՊարկիարուխն յաթոռ հօր իւրոյ Սելեք-շահին. և կացուցանէին զնա սուլտան ամենայն Պարսից, և զամիր Խամայէլն զորդին Ալբուին (176) զքեռին

իւր դնեն իւր երեսաց փոխան ի վերայ ա-
մենայն աշխարհին Պարսից, զի էր այր բարի
և յոյժ ողորմած և շինող աշխարհի։ Այս Խ-
մայել տիրեալ էր իբրև զթագաւոր ի վերայ
ամենայն աշխարհին Հայոց, և սա արար սկիզ-
բըն շինման եամ աշխարհին Հայոց, և զամենայն
վանորայսն ազատ պահէ ի չարչարեացն Պարսից։

ՃԽ. Դարձեալ ի թուականութեանն
Հայոց ՇԽԲ (1093—1094) մեռաւ տէր Պօ-
ղոս, այն որ Փիլառտոն նստոյց յաթոռ կա-
թուղիկոսութեան Հայոց ի Սարաշ քաղա-
քի։ Այս եկեալ զկնի սրբոյ Դաւանին Երիս-
տոսի, և մեռանէր յայսմ ամի յԱռ հայ քա-
ղաքի, եւ թաղեցաւ մեծաւ հանդիսիւ ի
գաւառն եկեղեցւոյն սրբոյ՝ մերձ ի գերեզ-
ման վարդապետին։

ՃԽԱ. Դարձեալ յայսմ ամի մեռանէր
վարդապետն Հայոց Գէորգ՝ որ կոչեցաւ
Լուռճեցի, որ էր լուսաւորիչ տանն Հայ-
ոց և աղբիւր մշտնջենաւորութեան փառաց և
լեզու հրեղէն հրոմն ներկեալ։ Այս ուսմամբ
աստուածային վարդապետութեամբն զար-
դարեաց զարեւելից աշխարհն, զի լցեալ
էր աստուածային շնորհօք, և էր հաւասա-
րեալ գիտութեամբն իւրով առաջին աստ-
ուածախօս սուրբ վարդապետացն, ասեմ

Գրիգորի Աստուածաբանի և Յովհաննու Ոսկեբերանի, Բարսղի և այլոց Նմանեաց սոցա։ Սա սքանչելի վարուք կատարեաց զընթացս իւր, և էր ամաց հարիւրից, և թաղեցաւ ի մեծ յանապատն ի Կարմիլաձոր, մօտ ի գեր եզմանն Սամուէլի վարդապետին և Խաչկայ որ էր երաժիշտ ի վերայ ձայնաւոր եղանակաց. և եղեւ սուգ ամենայն երկիրս զաձաց Աստուծոյ, զի զրկեալ եղեն յայնպիսի լուսաւոր վարդապետէն։

ՃԻԲ. Յայսմ ամի զօրաժողով արաբ սուլտանն Դմիկայ որ ասի Դգուշ որդի Աբասլանայ և եղբայր Մելէք-շահին. և սա բազում զօրօք կամեցաւ եկանել յաշխարհն Պարսից ի յառնուլ զամրոց թագաւորութեանն եղբօր իւրոյ Մելէք-շահին. և եկեալ Ամնամիք քաղաք, և եկեալ ամիրայն յերկրպագութիւն սուլտանին, և անտի գայր անցանէր ի Հալապ, և ամիրայն Ալ-Սալեգայր եկանէր յերկրպագութիւն նմա, և անթիւ զօրք խաղայր և երթայր յաշխարհն Պարսից։

ՃԻԳ. Յայսմ ամի եղեւ ժողով ահագին բազմութեամբ տանն Աբրահամայ անթիւ զօրաց իբրեւ չորս հարիւր հազարաց, և ամենայն Իսրաելն գային ի Մօսլ (Մուսուլ) գաւառն, և էր թագաւորն զօրաց Աբրահամայ Աբ-

բէհիմն՝ (177) որդին Կուբիշայ և եղբայրն Շէ-
բէվին—սօլայ։ Յայնժամ սուլտանն Դուզ-
հասանէբ ի քաղաքն որ կոչի Կսեպին, և ա-
բար աւար զամենայն քաղաքն։ Իսկ զբոլն
Հայոց որ էին զհետս սուլտանին, արարին
կոտորածս զՏաճիկն իբրեւ բիւրս մի։ Ել-
բանակն Աբասկայ գայր խաղալոյ հասանէբ
ի սահմանն Մծբնայ, և ի Քէշալ ի տեղին որ
կոչի Հերմէղ, և յայնժամ առաքեաց սուլ-
տանն Յուռհայ և մեծաւ երդմամբ բերեալ
առ ինքն զամիրայն զՊուզանն բազում զորօք,
և յարուցեալ գնաց ի պատերազմ ի վերայ
Թագաւորին Տաճկաց։ Ել հանդիպեալ մի-
մեանց երկուց Թագաւորացն ի դաշտին
Մծբնայ, արարին բազում կոտորածս. եւ
սաստիկ պատերազմաւ դարձոյց սուլտանն
զզօրսն Աբասկայ. և արար փախստականս,
և սրով յարձակեցաւ զհետս նոցա, և կալաւ
զԱբրէհիմն զԹագաւորն Աբասկայ, եւ
նետալ հարեալ էին զնա ի գլուխն, պատա-
ռեալ էին զպղտղվատ սաղաւարտն նորա, և
անցեալ էր նետին զԹափ, որ և մեռաւ իսկ.
և արարին աւար զկանայս և զորդիս նոցա
և զՀօտան և զամենայն բազմաւթիւն երի-
վարաց նոցա։ Ել մեծաւ յաղթութեամբ
գնայր խաղալով սուլտան Դուզն յաշխար-

հէն Պարսից. և Թանձրացաւ բազմութիւն բանակի նոցա, և եղից զդաշտս և զլերս արեւելից։ Յե լուեալ զայս ամենայն սուլթանն Պարսկաց Պարկիարուխն եղբօրորդին Դիդուշին, յարուցեալ բազում զօրօք գայր ի պատերազմ ընդդէմ հօրեղբօր իւրոյ անթիւ բազմութեամբ։ Յե լուեալ Դիդուշն զգալն Պարկիարուխին՝ պատրաստեցաւ գընալ ընդդէմ նորա. յայնժամ Պուզանն և Աղ-Սլնգայն իւրեանց զօրօքն ի գիշերի ապըստամբեցին ի Դիդուշէն, և գնացին առ Պարկիարուխն։ Յե լուեալ Դիդուշն զնեն գաւորութիւն նոցա, ոչ համարձակեցաւ եղանել ի պատերազմ, այլ դարձաւ և գրնոց յաշխարհն իւր, և մտաւ ի քաղաքն իւր Դիմիշկ. և գնաց ի Տռապօլիս, և հաւանեցոյց զնա և զամենայն քաղաքսն ծովեզերայ, և կացեալ յայնմ աշխարհին զամիսս վեց։

ՃԽԴ. Իսկ ի թուականութեանն Հայոց ՇԽԳ (1094—1095), յաջողեալ լինէր թագաւորութիւն Պարկիարուխին. և կացուցանէր ի վերայ զօրացն Պարսից ասպարապետ զմեծագահ և զփառաւոր ամիրայն զԻսմայէլ զորդի Արկուին՝ զեղբայր մօր իւրոյ, վասն զի սա ամիրեալ էր ամենայն աշխարհին Հայոց։

Չեւ էր սա յամենայն կողմանց քաղցր և ողբ-
մած և շինող ամենայն աշխարհին Հայոց,
զարգարիչ վանորայց և մխիթարիչ կրօնաւո-
բաց, և աղաւ պահէր զհաւատացեալսն
յամենայն չարեաց Պարսից, և ամենայն ոք
սիրեալ էր հայրենեաց իւրոց յաւուրս նո-
բա, և ի ժամանակս սորա կայր ուրախու-
թեամբ լցեալ ամենայն Հայք։ Արդ զսա
կացուցանէր Պարկիարուխն տէր գրուց աշ-
խարհին, և ինքն նստէր յաթոռ թագաւո-
րութեանն իւրոյ խաղաղութեամբ։ Եւ ա-
հա գայր մեծ ամիրայն Խամայէլն, և բազում
զօրօք շրջէր ընդ ամենայն աշխարհն Պարսից,
և եղեւ Պուզանն և Աղ-Արնգայն զհետ նո-
բա, և եկեալ ի տեղին որ կոչի Ջաղցա-
ձոր ի յաշխարհն Պարսից, Պուզանն և Աղ-
Արնգայն սկսան գործել նենգութիւն մեծ
ամիրային Խամայէլին։ Եւ յաւուր միում ե-
լեալ ի բանակէն երեք արամբք, և տարեալ
զնա ի զատ զօրացն վասն զբուցս պատ-
ճառանաց և յարձակեցան ի վերայ Խամայէ-
լին, և ընկեցին զնա ի ձիոյն, և ձգեալ լար
ի պարանոցն Նորա և խեղդեցին զբարի թա-
գաւորն, և ինքեանք փախստական լինէին
ի սուլտանէն ի Պարկիարուխէն և գնացին
իւրաքանչիւր ի քաղաք, Պուզանն ի Յիւռ-

հայ և Աշ-Ալընգոյրն ի Հալապ։ Իսկ լը-
ւեալ սուլտանն զմեծին Խամայելի զմահն՝ և
ասասկապէս ապաշաւէր։

ՃԽԵ. Դարձեալ յայսմ ամի գայր խա-
ղայր բազում զօրօք սուլտանն Դուշ, և
անթիւ բազմութեամբ գայր ի վերայ Հալ-
պայ. և Աշ-Ալընգոյրն և Պուզանն արարին
ժողովս, և գնացին ընդդէմ սուլտանին ի
պատերազմ, և ի հանդիպել միմեանց եղեւ
սաստիկ պատերազմ, և յաղթեաց սուլտանն
զօրացն Աշ-Ալընգոյրին և Պուզանին, և ա-
բար զնոսա փախստականս։ Իսկ յայնմ աւուր
սպանաւ Աշ-Ալընգոյրն և Պուզանն, և ա-
ռաւ Հալապ, եւ զգլուխն մեծ ամիրային
Պուզանին ի ձող ցցեալ բերին ի Ալեռ-
հայ. (178) և կացուցանէր քաղաքապետ զիշ-
խանն Հռոմոց զԹորոս որ ասէին Հեթմայ
որդի։ Իսկ ինքն սուլտանն գնայ ի Պարսիկք
առ ի պատերազմել ընդ Պարկիարուխին։ Իսկ
զօրապետ զօրացն Դուշին, որ ասի Աղուս-
պան՝ տէրն Աղեղոքայ, բազում զօրօք ինքն
ի վերայ անուանի բերդին որ կոչի Օրբիլ
նակ, ի յաշխարհին Հայոց, և մեծաւ պա-
տերազմաւ էառ զնա, և արար անթիւ կո-
տորածս քրիստոնէից։ Իսկ յայսմ ժամուս հա-
սանէր թուղթ առ սուլտանն ի կնոջէ եղբ

բոր իւրոյ, զի գնասցէ շաւտով, զի արասցէ զնա իւր այր. և ի լսել զայս սուլտանին՝ հասանէր ի Պարսիկս եւ ի ջրեալ ի դաշտն Ասպահանայ, և Պարկիսարուխն աղաչանս առաքէր առ Դդուշն. «Տուր ինձ միայն ըզքաղաքն Ասպահան, եւ ամենայն արարածք քեզ եղիցի»։ Իւր նա ոչ լսէր աղաչանաց նորա. յայնժամ յարձակեցան երկոքեանն ընդ միմեանս ի պատերազմ անթիւ և անհամար բազմութեամբ յերկոցունց կողմանցն. և եղեւ յորժամ հանին յերեւան ըզնշանակն Մելեք–շահին և տեսին (զայն) զոքքն Պարսից, յայնժամ մեծ մասն զօրացն անցանէին ի Պարկիսարուխին դէհն, և եղեւ սաստիկ կոտորած։ Իսկ անօրէն Ազուսիանն բազում զօրօք ի քմին կայր, և առանց պատերազմի փախեաւ. և տեսեալ զայս ամենայն զոքքն Դդուշին՝ փախեան առ հասարակ։ Իւր էր օրն այն օր մեծ ի վերայ զօրացն Պարսից, վասն զի բիւրք և հազարք ի փախուստ լինէին ընդ ամենայն երեսս երկրի. և յայնժամ ի մէջ առեալ զԴդուշն խոցեցին ըզձին նորա, և ընկեցին զնա յերկիր, և կայր նատեալ ի մէջ զօրացն և ոչ զք իշխէր մերձենալ ի նա, վասն զի այր թագաւոր էր և էր եղբայր Մելեք–շահին։ Յայնժամ

ամիրայ ոմն ի զօրաց Պարկիարուխին եկեալ և սրով հատանէր զգլուխս նորա, և տարան Թաղեցին զնա առ գերեզման հօր իւրոյ։ Յայնժամ Ռատուան որդի Դդուշին և Աղուսիանն և այլ ամենայն փոխստականքն գային ի քաղաքն Ուռհայ։ Եւ Թորոս Կուրապաղատն որ էր Ուռհայ, էր այր Ճարտարասան և հնարաւոր յոյժ, արար ընդունելութիւն նոցա, և կամէր ձերբակալս առնել զնոսա, զի առցէ զկլայն քաղաքին Ուռհայայ, և ոչ հաւատացին այլ իշխանքն պատեհ, գնացին խաղաղութեամբ ի քաղաքն իւրեանց։ Յայնժամ Թորոս Կուրապաղատն բաղում հնարիւք ջանայր տիրանալ քաղաքին և փրկել զհաւատացեալսն յայլազգեաց. և ընդ կլայէն սկիզբն արար շինել պարիսպս, և զմէկ մասն քաղաքին ամրացոյց պարսպով, վասն զի կլայն Պարսից էր, և կային ի նմա Թուրք պահապանք, և կային ի նմա գունդ մի Հայոց զօրայն զորս կարգեալ էր զնոսա Դդուշն։ Յայնժամ տեսեալ սպասաւորքն որ կայր ի Մանիկայ կլայն, եթէ Կուրապաղատն ամրացոյց զքաղաքն և կարեաց զկլայն ի զատ քաղաքէն, գրեաց Թուղթ և ազդ արար ամենայն մեծատաւորս ամիրայեացն զոր արար Թորոս Կու-

բապտիստան, և ասայ թէ՝ 'ի ծովուն դրանէն մինչեւ 'ի սուրբ Թորոս (եկեղեցին) պարսպեայ գքաղաքն, կանգնեայ բուրգն քան և հինգ, և էառ զնեղբին կլայն, և տիրեայ ամենայն քաղաքին Լեռնահայոց։

ՃԽԶ. Իսկ եղև 'ի թուականութեն Հայոց 'ի յամի ՇԽԴ (1095—1096), արար Ժողով հեծելոց Սուգման որդի Աղուխին(179), և ամիրայն Սամոսատայ Պալտուին որդի Այիր-խապի, և յաւուրս հնձոյն գան 'ի վերայ Լեռնահայոց։ Եւ Թորոս Կուրապաղատն ոչ էր Լեռնահայոց եղև լցեալ ամենայն իմաստութեամբ, և յամենայն կողմանց սկսաւ ամրացուցանել զքաղաքն և կանգնեայ բաբանս և փիլիպանս, և անխնայ ծեծէին ըզպարիսպ կլային, և Թուրքն կացեալ յաւուրս բազումս անդադար պատերազմաւ՝ և ոչինչ կարայ առնել քաղաքին. և կացեալ զաւուրս վեթասուն և հինգ, և պատառեցին զպարիսպ քաղաքին յերկուս տեղիս, և մտեալ 'ի քաղաքն պատերազմէին. և այնու ոչ կարացին յաղթել քաղաքին։ Եւ 'ի նոյն աւուրս գայր սուլտանն Հալպայ, որ ասի Ռատուան որդի Դուշին, և Աղուսիանն տէրն Աղեսիքայ քառասուն հազարով(180), և իջանէր 'ի վերայ Լեռնահայոց։ Յայնմ

ժամ Սուգման և Պալտուին փախեան 'ի սուլտանէն, և քաղաքացեացն տեսեալ ըզ զօրս սուլտանին՝ զարհուրեցան յոյժ։ Իսկ Կուրապաղատն Թորոս առիւծաբար քաջալերեր զամենայն քաղաքն Լեռնայոյ, և անթիւ գանձս տայր 'ի պէտս քաղաքին, և զաւուրս բազումս արարին սաստիկ պատերազմ՝ 'ի վերայ քաղաքին, և օգնութեամբն Աստուծոյ ոչինչ կարացին առնել քանզի ամենեքեան քաղաքացիքն սիրոս առիւծոյ առին և կացին ընդդէմ տղազգեաց, և 'ի վերայ սաստիկ պատերազմացն անձարակեաղ զօրք այլազգեացն գնացին ամօթով։ Յետ յայնժամ ումն 'ի զօրացն սուլտանին, որոմ անուն ասէին Մխիթար, և էր այր քրիստոնեայ, խորհուրդ արար ընդ արսն իւր զի տացէ ըզկլայն 'ի Թորոս Կուրապաղատն։ Յետ յայնժամ Մխիթար պատրիկն երեսուն արամբ իւրով 'ի գիշերի արար հնարս, և տայր զաւագ կլայն Անիակայ 'ի ձեռս Թորոսի Կուրապաղատին, և եղեւ խաղաղութիւն քաղաքին Լեռնայ։ Յայնժամ զօրս առաքեաց Թորոս 'ի բերդն Լեռնայոյ՝ որ կոչի Թրսիճ, զի արասցէ զերկիրն իւր հնազանդ, և հաստատեալ Պալտուին ամիրայն Սամուսատայ, և ամենայն զօրք գաւառին ընդ նմա, և արարին

պատերազմ ի սահմանս բերդին Թորոսիայ, և եղեն փախստական զօրքն Լեռհայոց. և հասեալ նոցա ի գիւղն որ կոչի Անդռանոս, և կատարեցին անդ արս հարիւր և յիսուն, և զայլն արարին ձերբակալս։

ՃԽԵ. Յայսմ ամի բերաւ Աղիվլակ (181) սուլտանն յԼեռհայ հրամանաւ Թորոսի, որ էր յաղգէ Ղդլմէոյ, և տայր Թորոս զԼեռհայ ի ձեռս նորա, վասն զի առցէ վրէժս ի թշնամեաց իւրոց։ Իսկ Աղիվլակ խորհեցաւ սպանանել զնա և առնել ալոփ զամենայն քաղաքն. և գիտացեալ Կիւրտպաղատն Թորոս զայս ամենայն նենգութիւնս, արբուցանէր նմա գեղ մահու, և շուտով առաքեաց զնա ի բաղանիսն, և նայն ժամայն սատակեալ եղեւ. եւ լուեալ զայս ամենայն զօրքն նորա՝ փախեան։ Յետ դարձեալ Կիւրտպաղատն Թորոս տիրանայր Լեռհայոյ։ Յետ եղեւ իշխանութիւն Աղիվլակայ զոր եկաց ի յԼեռհայ՝ աւուրս երեսուն և երեք։

ՃԽԸ. Յայսմ ամի մեռաւ մեծ եպիսկոպոսն և սիւնն սրբոյ եկեղեցւոյ տէր Թորոս կաթուղիկոսն Հայոց, և թաղեցաւ ի Հոռնին մօտ ի տէր Սարգիս։

ՃԽԹ. Դարձեալ ի թուականութեանն Հայոց ՇԽԵ (1096—1097), զօրաժողով առ

բար սուրբանն արեւմտից որ ասի Խրիստ-Ոլ-լան, որդի Սուլիմանայ՝ որդւոյ Գիդէմշոյ, և գայր անթիւ բազմութեամբ ի վերայ Մելանեոյ քաղաքին, և ելից զօրք առհասարակ զամենայն դաշտան, և յարուցանէր սաստիկ պատերազմ ի վերայ քաղաքին Մելանեոյ. և եդեալ բարանս նեղէր զքաղաքն։ Իսկ իշխան քաղաքին որ ասէին Խաւրիլ (182), որ էր աներ Թէոդորոսին՝ Կուրապաղատին Ռառհայոյ։ Այս ամենայն քաջութեամբ կացեալ ընդդէմ սուրբանին, և յամենայն կողմանց ամրացուցանէր զքաղաքն։ Իշ կացեալ անդ սուրբանին զաւուրս բազումս և աշխէջ կարաց առնէր, դարձաւ ամօթով և գնաց յաշխարհն իւր։

ԺԴ. Յայսմ ժամանակիս կատարեցաւ մարգարէութիւն սրբոյն Երեսէի Հայոց հայրապետի, զոր վասն Հռոմայեցւոց ելից ցրն խօսեցաւ ընդ Նախարարսն և ընդ իշխանսն Հայոց աշխարհին. և զոր նա յառաջ խօսեցաւ, ահա յայսմ ժամանակիս տեսաք աչօք մերովք, զոյն որ ի ժամ մահուանն մարգարէացաւ սուրբ և սքանչելագործ այրն Աստուծոյ մեծն Երեսէս։ Իշ այս էր մարգարէութիւն սրբոյն Դանիէլի զոր տեսանէր ի Բաբելոն զկերպարանսն զայլ-

կերպ գաղանին, և յայտնապէս տեսեալ և
ցուցանէր ասելով զուտելն և զմանարելն և
զառատս հարկանելն զինապետսն։

Իսկ ի ժամանակիս եղեւ ելն Հռոմայե-
ցւոց, և բացաւ զուռն Լատինացւոց աղ-
գին, վասն զի սաքաք կամեցաւ Տէր պատե-
բազմել ընդ տուռն Պարսից։ Իւր գարձեալ
եղեւ Տէր ի բարկութենէն իւրմէ ըստ
բանի Դաւթի մարգարէին, ըստ այնմ զոր
ասաց՝ եթէ «Օրհնիր, ընդէր ննջես, Տէր.
արի և մի մերժեր զմեզ խպաս». և թէ՝
«Օրհնեաւ որպէս ի քնոյ Տէր, որպէս
հզօր զի թափեսցէ զգինի իւր. և եհար
յետս զթշնամիս իւր. նախատինս յաւիտե-
նից տարար զնոսա»։ Իւր ահա յայտմ ամի
շարժեալ եղեւ ամենայն Իտալիա և Սպա-
նիա մինչեւ Ամիրիկէա և խորին ազգն Յու-
ռանկաց, և գոռոհեալ անթիւ և անհամար
և անագին բազմութեամբ և անհամար
դասապետութեամբ որպէս զմարախ որ ոչ
թուի, և կամ որպէս զաւազ ծովու որ ոչ
քննի մտաց, և ահաւոր մեծութեամբ եւ
բարձրագահ իշխանութեամբ եղեալ գայ-
ին իշխանքն աշխարհին Յունկաց, և իւ-
րաքանչիւր զօրաք գային յօգնութիւն քրիս-
տոնէից և առ ի փրկել յայլազգեաց ըզ

սուրբ քաղաքն Հրուսաղէմ, և ազատել ի Տաճկաց զսուրբ գերեզմանն Աստուածընկալ, որք փառաւորք և թագաւորազունք, հաւատով և ամենայն աստուածպաշտութեամբ զարդարեալք, և էին սնեալք ի գործս բարութեան. որոց էին անուանքս այսոքիկ. Կոնդոփրէ, այր հզօր, որ էր յազգէ թագաւորացն Հռոմայեցւոց, և նորին եղբայրն Պաղտին։ Այս Կոնդոփրէ էր որ ունէր զհետ իւր զիմաքն և զիմուրն Վեսպիանի թագաւորին, որ կատարեաց նովաւ զՀրուսաղէմ։ Այր և մեծ կոմսն որ ասէին Պեմունդ, և Տանդրին քուրորդին նորա, և կոմսն որ ասի Ոնձիլ (185), այր ահարկու և փառաւոր, և Ռուպերթ Նորմանդայ կոմսն, և միւս այլ Պաղտինն գայր, և յեռոց կոմսն որ ասի Ռօսլին, այր քաջ հզօր։ Արդ այսքան որք հզօրք և պատերազմողք գային ազգա ահագին բազմութեամբ որպէս զասուրեղս երկնից. գային և զհետ սոցա բազմամ եպիսկոպոսունք, քահանայք և սարկաւագունք, և մեծաւ աշխատու թեամբ ճանապարհորդեալ ընդ հեռաձիգ աշխարհին Հռոմայեցւոց և չարաչար նեղութեամբ անցանէին ընդ աշխարհն Ունգրաց ընդ նեղ և դժար կապանսն լերանց նոցա,

և ժամանեալ հասանէին ընդ աշխարհին սահմանս Իուլղայ, որ էր ընդ իշխանութեամբ Աղբաին Յունաց թագաւորին. և այսպիսի ճանապարհորդութեամբ հասանէին ի մեծն Կոստանդինուպոլիս։

Իբ լուեալ զգալն նոցա թագաւորն Աղբան առաքէր զօրս ընդդէմ նոցա ի պատերազմ. և եղեւ ահագին կոտորածս յերկոցուանց կողմանց, եւ տարար Ֆռանկն փախստական զզօրսն Յունաց, եւ յայնմ աւուր եղեւ բազում արեանց հեղումն։ Իբ այսպիսի օրինակաւ ընդ որ անցանէին գային ամենայն աշխարհք ի վերայ նոցա ի պատերազմ, և նեղէին զնոսա բազում չարչարանօք։ Իբ լուեալ զայս ամենայն թագաւորն Աղբան, և վերացոյց զսուրն և աչեաս այլ պատերազմ ընդ նոսա։ Իբ ամենայն բանակն առհասարակ եկեալ ինքն ի դուռն Կոստանդինուպոլսի, և խնդրէին ընդ ծովն Ովկիանոս անցանել. և թագաւորն Աղբան տարար սէր և միաբանութիւն ընդ ամենայն իշխանսն Ֆռանկաց, եւ տարաւ զնոսա ի սուրբ Սոփի, և եւ նոցա բազում տուրս տուեալ և արծաթոյ. և նոքա երդուան նմա զի զամենայն գաւառսն որ յառաջ լեալ էր Հռոմոց՝ թափեն ի Պարսից և Աբբաս

կաց, եղբոյրն ապգին Հոռոմոց. և այսպիսի գաւանութեամբս խաչով և աւետարանով կապեցին զերդումն անբաժանելի կապանօք։ Յետ աւուրս զօրս և իշխանս ի Թագաւորէն և նաւէին ընդ մեծն Ալիքիանոս, և հաստատ բազմութեամբ բանակուն ի քաղաքն որ կոչի Ալիքիա, մօտ ի Ալիքիանէ ծովն։

Յետամենայն զօրքն Պարսից ժողովեցան ի վերայ Յունանկաց որ բանակեալ էին ի սահմանսն յայն, եւ արարին պատերազմ ընդ զօրսն Յունանկաց. եւ յայնժամ զօրքն Յունանկաց յաղթեցին զօրացն Պարսից և արարին ըն նոսա փախուստական, և յարձակեցան զՀետ նոցա սրով, և արեամբ լցին զերկիրն. և պատերազմեալ ի վերայ քաղաքին Ալիքիոյ և որ բով առին զքաղաքն, և կոտորեցին զամենայն անհաւատսն։ Յետ յայնժամ գնացին ճիշկան առ սուլտանն Խոսրով-Պարսն յոր ժամ պատերազմէր ի վերայ քաղաքին Աթենայոյ, և զայս ամենայն ազգ արարին նմա։ Յետ նորա արարեալ ժողովս անթիւ բազմութեամբ, և գայր ի վերայ Յունանկ զօրացն ի գաւառին Ալիքիոյ. և արարին սաստիկ կոտորածս յերկոցունց կողմանցն, և անխնայ քաջապէս յարձակեցան ի վերայ միմեանց, և գազանաբար բախէին զճակատ

պատերազմացն , և ի փայլատակմանէ սա-
զաւարտացն և ի շաչել զրնհայն և ի ճայթ-
մանէ աղեղանցն եղեն գուժարեալք ամե-
նայն զօրացն այլազգեաց , վասն զի ի սատ-
կուածենէ ձայնիցն դողայր երկիրն , և ի շա-
չել նետիցն երկարքն սարսեին : Իսկ որ ա-
բիսականքն ընտիրքն էին , քաջքն ընդ քաջք
ելանէին , և որպէս զկորիւնս առիւծոց ան-
խնայ կոխէին զմիմեանս : Այս էր օրն այն օր
մեծ և ահագին առաջին պատերազմին , վասն
զի վաթսուն բիւրով պատերազմէր սուլտա-
նն ընդ ազգն Յունկաց . և ի վերայ այս-
քան պատերազմաց յաղթեաց զօրքն Յունկ-
կաց զօրացն Պարսից , և արարին զնոսա փա-
խստականս ահաւոր և սաստիկ կոտորածով,
որ և ծածկեալ եղեւ դաշտն դիակամբ մե-
ռելոք . և առին բիւրս բիւրոց աւար և գե-
րութիւն , և թիւ ոչ գայր սակաւ և արծա-
թոյ զոր առին ի Պարսից : Այս զկնի երից ա-
ւուրց դարձեալ սուլտանն , և արար եր-
կրորդ ժողով եւ ահագին բազմութեամբ
գայր ի վերայ Յունկին զօրացն , և արա-
բին պատերազմ ահաւոր եւ սաստիկ քան
զառաջինն . և զօրքն Յունկաց զնոյն բար-
կութիւն արկանէին ի վերայ զօրացն Պար-
սից , և սաստիկ կոտորածով և գերութեամբ

եհան զնոսա յայնմ աշխարհէն. և եռուն զոքն Ֆրանկաց զԱնիկիա ի ձեռս Հոռոմոց թագաւորին Ալէքսին։

ՃԺԱ. Դարձեալ ի թուականութեանս Հայոց յամս ՇԽՀ (1097—1098), և յաւուրս հայրապետացն Հայոց տէր Վահրամայ եւ տէր Խաչատրի, և ի թագաւորութեան Յունաց Ալէքսին Հոռոմոց ազգայնին, շարժեալ բանակն Հռոմայեցւոց և անհամար բազմութեամբ իբրեւ զքիւրս յիսուն Օտար թղթով ազգ արարեալ իշխանին Ռուհայոց Թորոսի և մեծ իշխանին Հայոց Կոստանդնի որդի Ռուբենայ, որ ունէր զՏարոս լեառն ի յաշխարհին Կիլիկիոյ ի Մառապա, որ և բազում գաւառաց տիրեալ էր, և ի զորացն Դագկայ էր։ Եւ զոքն Ֆրանկաց էին հարիւր հազար հետեւակ և հարիւր հազար ձիաւոր ամենեքեան (184). և բազմութեամբ ճանապարհ արարեալ ընդ աշխարհն Իւիթանացւոց, եւ ընդարձակ բանակաւ անցանէր ընդ սահմանս Դամրաց, և հասանէին ի դժուար վայրս լերանց Տօրոսի. և խաղացեալ էանց բազմութիւն բանակին և ընդ նեղ կապանս նորա գնալով ընդ Կիլիկիա. և էանց ընդ Տրբոսվադա (185), որ է Ինաւարզայ, և հասանէր

Ինքաղաքն Անտիոքայ։ Եւ ահագին զօրութեամբ բանակեալ ի վերայ նորա, և լցեալ զայնաւտարած դաշտ նորա, եւ արգելեաց ի քաղաքն զզօրապետսն Պարսից հանդերձ զօրքն իւրովք զԱղուսիանն, եւ սաստիկ պատերազմաւ պաշարեաց զքաղաքն զամիսս տասն։ Եւ լուեալ զայս ամենայն շուրջանակայ իշխանքն Պարսից, և մեծաւ հանդիսիւք գային պատերազմաւ ի վերայ զօրացն Յունական։ Իսկ նոքա զամենայն թշնամին իւրեանց սամոթով դարձուցանէին։ Եւ յայսմ աւուրս եղև ժողով այլազգեացն։ Դամիշկ և ամենայն Ասիրիկացիքն հանդերձ ամենայն ծովեղերքն Հրուսաղէմ և ամենայն սահմանակիցք Աղբայ։ Հալապ և Հէմս, մինչեւ ի մեծ գետն Եփրատ, և խաղացին անթիւ և անհամար բազմութեամբ ի վերայ զօրացն Յունական։ Եւ յորժամ լուան զգալն այլազգեացն, վարեցին զզօրսն իւրեանց և եկան ընդդէմ նոցա։ Եւ Պեմուենդն էր այր քաջ և պատերազմող և Օնձիլն, և իբրեւ զառիւծ յարձակեցան տասն հազարով ի վերայ տասն բիւրուց ի սահմանս Անտիոքայ, և ահագին յաղթութեամբ դարձուցին ի փախուստ և արարին սաստիկ կոտորած զզօրսն Պարսից։

Դարձեալ ամիրայն Սուգման որդի Բրդուխին, այր քաջ և պատերազմող, և տէր Դըմէկայ (186), որք էին ամիրայք մեծամեծք և փառաւորք, արարին ժողովս թուրք զօրաց ի Մծբին և յամենայն աշխարհն Բաբէլացւոց իբրեւ բիւրս երիս, և գային ի վերայ Յռանկ բանակին։ Յայնժամ մեծ տուէն Կոնդոփրէ եւթն հազարով գնացին ընդդէմ այլազգեացն ի սահմանս Հալպայ, և արարին սաստիկ պատերազմ։ Իսկ որ ասի Տուզորիկին ամիրայն Դամէկայ, ի գիմի հարաւ Կոնդոփրէ առն քաջի, և թռչոյց զնա ի ձիոյն, բայց զզգեստն երկաթեղէն ոչ կարաց պատառել, և գնաց անվնաս։ Իւ յայնժամ զզօրսն այլազգեաց դարձուցին ի փախուստ, և ըզհետ մոռեալ զօրացն Յռանկաց, և սուր ի գործ արկեալ արարին զայլազգիսն փախուստականս, և զարձան մեծաւ յաղթութեամբ ի բանակն իւրեանց։ Իսկ ի բազմութենէ զօրացն վասնզ հասանէր զօրացն (187) Յռանկաց և նեղէին ի կերակրոյ, և յայնժամ իշխանքն որ կային բնակեալ ի Տօրաս լեառն, Կոստանդին որդին Ռուբինայ և երկրորդ իշխանն Բազուռնի, և երրորդ իշխանն Աշէին (188), սաստ զամենայն կարիս կերակրոյ առաքեն առ զօրսն Յռանկայ, նոյնպէս

և վանորայքն Սեաւ լերինն կերակրոջ օգնէին նոցա, և ամենայն ազգք հաւատացելոց բա-
ղեկամութիւն ցուցանէին նոցա։ Իւ յայն-
ժամ առ ի չգոյէ կերակրոյ՝ մահ և գաւ-
անկաւ ի բանակն Յուանկաց, որ ի հինգ
մասէն մի մասն պակասեալ լինէր, և այլք
ամենայն կային մեծաւ պանդխտութեամբ.
բայց ողորմութիւնն Աստուծոյ ոչ ի բացեալ
թողլոյր զնոսա, այլ հոսեալ էր հայրախնամ
սիրով որպէս զբանակ որդւոցն Իսրայէլ յա-
նապատին։

ՃԺԲ. Յայսմ ամի եղանէր ասաղ մի գի-
սաւոր յարեւմուտս կոյս ի յարեգ ամիս, և
ագի նորա նուազ ցուցանէր զլոյսն իւր. և
կացեալ նորա զաւուրս տասն և հինգ՝ և լի
նէր աներեւոյթ տեսողացն։

ՃԺԳ. Յայսմ ամի լինէր նշան ահաւոր
և զարմանալի յերկինս ի կողմն հիւսիսոյ,
որ ոչ աք երրէք եղեալ այնպիսի աքանչելի
նշան։ Իսկ ասեն մարդիկ բորբոքեցաւ ե-
ղեալք երկնից ի բաց հրոյ, և կարմրացաւ
սաստկապէս ի պարզոյ, և բլուր բլուր կա-
պեցաւ երկինքն, և բորբոքեալ լինէր ի գոյ-
նըս գոյնս, և սահեալ եղանէր դիմաք յարե-
ւելս, և գիպացաւ եղեւ մասն և ծածկեաց
զմեծ մասն երկնից՝ մի գունովն յոյժ կարմիր

և զարմանալի, և հասանէր ի կամարն երկնից։ Յե ծանուցեալ զայս իմաստանոց եւ հանճարեղաց, և ասէին թէ՝ այս նշան է արեան հեղութեան. որ և եղեւ այնպիսի չար կատարածք և արհաւիրք, զոր զատկաւն գրեցաք յայս մատենագրութեանս։

ՃԾԴ. Յե եղեւ ի թուականութեանն Հայոց ՇԽԷ (1098–1099), եկեալ կոմս մի անուն Պաղտին, և հարիւր ձիաւորով էառ զքաղաքն որ կոչի Թէլպաշար։ Յե լսեալ զայս իշխանն Հռոմոց Թորոս, որ էր ի քաղաքն Լուհայ, և լսեալ եղեւ մեծաւ ուրախութեամբ, և առաքեաց առ կոմն Ֆիրանկաց ի Թէլպաշար և կոչէր զնա առ ինքն յօգնութիւն իւր ընդդէմ թշնամեաց իւրոց՝ վասն նեղութեանցն որ ունէր ի մօտաւոր ամիրայեացն։ Յե եկեալ կոմն Պաղտին ի Լուհայ վաթսուն ձիաւորով, և եղեն բազմութիւն քաղաքին ընդդէմ նորա, և մեծաւ ուրախութեամբ արկանէին՝ զնա ի քաղաքն, և եղեւ ուրախութիւն ամենայն հաւատացելոց. և արար Կուրապաղատն Թորոս քաղաքէ սէր և տուրս կոմսին, և հաստատեաց միաբանութիւն ընդ նմա։ Յե եկեալ իշխանն Հայոց ի Կառկառայ, որ ասի Կոստանդին, և զկնի սակաւ աւուրց

հանել զնոսա Կուրապաղատն ի պատերազմ
ի վերայ Սամուսատայ ընդ Պաղտուխ ամի-
բային, և զոքք քաղաքին զհետ Յովանկին,
և ամենայն հետեւակ զոքք դաւառին գնա-
ցին ի Սամուսատ բազում զոքոք, և արարին
արտաքոյ զդրուց շէնն, և թուրքն ոչ համարձա-
կեցաւ եկանել ի պատերազմ։ Յայնժամ մի-
աբան յարտաքոյ մտեալ ամենայն զոքքն քրիստո-
նեից. և տեսեալ զոքացն թուրքաց՝ եկեալ
երեք հարիւր ձիաւոր ի վերայ նոցա և
յաղթեցին ամենայն զոքացն, և արարին զՅո-
վանկին փախստականս և զամենայն գա-
ւառացիքն. և ի Սամուսատայ մինչեւ ի
թիին եղեւ սատիկ կոտորածս՝ իբրեւ ա-
ռքս հաղար։ Իսկ Կոստանդին և կոմն հասան
ի քաղաքն Ուռհայ առ Թորոս Կուրապա-
ղատն, և այս եղեւ յերկրորդ շաբաթին
աղուհացիցն։ Իսկ յորժամ եկն կոմն Պաղ-
տինն ի Ուռհայ, յայնժամ յարեան ազգ
նենգաւորք և չարախորհուրդք, և արարին
միաբանութիւն ընդ կոմն, փասն զի սպան-
ցեն զԹորոս Կուրապաղատն, որ ոչ վայելէր
գործոց երախտեաց նորա, փասն զի ի ձե-
ռին հանձարեղ իմաստութեան նորա, և ար-
ութեստաւոր հնարաւորութեան նորա և բա-
ռին զօրութեամբ և եղեւ ազատեալ Ուռ-

հայ ի հարկատրութենէ և ի ծառայութենէ . . . . . դառնացեալ ապրին Տաճկաց։

Իսկ յայսմ աւուրքս քառասունք եղեն միաբանեալք ի խորհուրդն Յուդայի, և ի գիշերի գնացին առ կոմս Պապոնին, այն որ էր եղբայր Կոնդոմիրէի կոմսին, և միաբանեցին զնա ի չար խորհուրդս իւրեանց, և խոստացան տալ նմա զՄՀՌ հայ ի ձեռս։ Իսկ նա հաւանեցաւ չար խորհրդոց նոցա, եւ միաբանեցուցին զիշխանն Հայոց զՎասակն դին. և ի հինգերորդումն շաբաթու ապուհացեցին շարժեցին զսմենայն բազմութիւն բազաքին ի վերայ Սուրբապաղատին Թորոսի ի յաւուր կիւրակէի, և արար ալսի զամենայն տուն իշխանաց նորա, և առին զվերին կլայն։ Իսկ յաւուր երկուշաբաթուն ապարին ժողով ի ներքին կլային վերայ ուր ինքն էր. և սատակապէս պատերազմէին ի վերայ նորա. և նորա անձարեալ խնդրեաց երդումն ի նոցանէ զի մի մեղցեն նմա, և նա տացէ զկլայն և զքաղաքն ի նոցա, եւ ինքն և կին իւր գնասցեն ի քաղաքն Մելտենի։ Իսկ հանեալ առ նոսա զՎարագայ սուրբ Խաչն և զՄաքենեայն և նոքօք երդուաւ կոմսն ի մէջ սրբոյ եկեղեցւոյ սրբոյ Աստուածածնայն՝ ոչ մեղանչել նմա. երդուաւ

և ի հրեշտակապետն և ի հրեշտակսն եւ ի մարգարէս և ի նահապետս և ի սուրբ առաքեալսն և ի սուրբ հայրապետսն և ի դաստ ամենայն մարմրոսացն (կատարել) զոր թղթովք գրեալ էր ի Թորոսէ առ կոմսն։ Իւ նորա երդուեալ այս ամենայն սրբովքս։ Իւ յայնժամ Թորոս ասայր զկլայն ի Պալտինն, և այլ իշխանքն քաղաքին մնան ի կլայն. և յաւուր երեքշաբաթուն ի ոտնի սուրբ Յառաւանիցն արարին քաղաքացիքն սաստիկ ժողով ի վերայ, եւ սրոք և բրոք կանխեալ ընկեցին զնա ի պարապէն ի մէջ բազմամբոխ խուխային, եւ առհասարակ դիմեալ միաբան ի վերայ նորա և չարաչար մահուամբ եւ բազմախոց սուսերօք սպանանէին զնա և արարին մեղս մեծամեծս առաջի Աստուծոյ. և պարան կապեցին ի յոտս նորա, եւ խայտառականօք քարշէին զնա ընդ քաղաքամէջսն. և յայսմ աւուր ուրացան զերդումն զոր երդուան։ Յետ այսորիկ տան զՄեռհայ ի ձեռս Պալտին կոմսին։

ԾԴԵ. Յայսմ ամի գայր բազում զօրք ասպատարար Պարկիարուխին Պարսից սուլտանին, որ տսի Կերպուղա (189), գայր խաղայր ահագին բազմութեամբ յարուցանել պատերազմ ընդ զօրսն Յունական, և

եկեալ բանակեցաւ ի դուռն Ռուհայայ. և կացեալ բաղում զօրք մինչեւ ի յաւուրս հնձոցն, և կերեալ զամենայն արտօրայսն, և պատերազմ յարուցանէր ի վերայ քաղաքին, և եղեւ ժողով բազմութեան զօրացառ նա։ Եւ զկնի քառասուն աւուր գայր առ Կերպողա որդին Աղուսիանին Անտիոքայ ամիրային, և անկեալ ի յոտսն Կերպողայի, և աղաչէր դալ օգնել նոցա. և պատմեաց նմա վասն Ֆռանկ բանակին, եթէ սակաւ է և սովաբեկ։

Եւ ահա յայսմ ամի շարժեալ եղեւ ամենայն Խորասան յարեւելից մինչեւ ի Մուտս արեւուս, ի Մարայ (190) մինչեւ ի Բաբեբն, և Յունաց և արեւելից կողմն աշխարհին. Դմիշկք և ամենայն ծովեզերայքն և Այրուսաղէմայ մինչեւ յանապատն ժողովելով ժողովեցան բիւրս ութսուն. և հեծեալ զօրս բիւրս երեսուն. և գնայր խաղայր խրոխտալով, և ելեալ զդաշտս և ընդ բարձունս, և ահաւոր հպարտութեամբ հասանէր ի վերայ Ֆռանկ զօրացն ի դուռն Անտիոքայ։ Եւ Աստուած ոչ կամեցաւ կորուսանել զսակաւ զօրսն քրիստոնէից, այլ հովուեալ պահէր զնոսա որպէս զգանակ որ գաւոցն Իսրայէլի։ Արդ մինչդեռ ի բացեայ

էին զօրք այլազգեաց, մի ոմն յիշխանաց քա-
ղաքին Հանեալ ի գիշերի մարդ առ Պեմուն-
գլն և առ այլ իշխանսն Յռանկին, և խընդ-
դրեաց իւր հայրենիք. և առեալ ի նոցանէ
երդումն, և գաղտաբար ի գիշերի տայր
զԼ՚նտիոք քաղաքն ի ձեռն Պեմնդին. և բա-
ցեալ ի պարիսպն զկլայեաց (191) գուռն, և ա-
մենայն բանակն Յռանկաց մտանէր ի քաղա-
քըն Լ՚նտիոք. և ընդ առաւօտն միաբան
հնչեցուցին զփող եղջերացն ամենայն զօրքն։
Լ՚ւ լուեալ զայս այլազգիքն ամենայն՝ եղեն
գուամարեալք, և ոչ գիտէին փախչել ի յա-
հէն. և սուր ի գործ արկեալ զօրքն Յռան-
կաց արարին սաստիկ կոտորածս զնոսա. և
ամիրայն Լ՚զիւսիան փախեաւ ի քաղաքէն և
սպանաւ ի գեղացեացն՝ մանկաղաւ հա-
տեալ զգլուխ նորա։ Լ՚ւ արդ այսպիսի օրի-
նակաւ առաւ քաղաքն Լ՚նտիոք, զորս ի
Հայոց ազգէն առեալ եղեւ (192)։ Իսկ մնա-
ցեալ այլազգիքն Ժողովեցան ի կլայն, և տա-
յին պատերազմ ընդ զօրսն Յռանկաց։ Լ՚ւ
զկնի երեք աւուր հասանէր բանակն զօրաց
Պարսից, և ելից զբանակն Յռանկին եւ թ-
նապատիկ, և սրարեալ սաստիկ խառաւ ի վե-
բայ Յռանկին, և նեղէին զնոսա. և բազում
վտանգ հասանէր նոցա ի սովոյն, վասն զի

յառաջագոյն հատեալ էր հացն ի քաղաքէն. և անձարեալ առաւել քան զառաւել, և խորհեցան առնուլ երդումն ի Կերպոզայէն և տալ զքաղաքն ի ձեռս Նորա. և ինքեանք գնասցեն յաշխարհն Յռանկաց։ Եւ տեսեալ Աստուծոյ զմեծ վնասանէն որ կայր առ Նոսա, գթացաւ ի Նոսա և ազատեցաւ Նոցա. և երեւեցաւ ի գիշերին սուրբ առաքեալն Պետրոս Յռանկի միջ առաջնորդեալ պաշտի, և ասէր եթէ Ո՛վ ձախակողմ եկեղեցւոյդ կայ ի պահեստի զէնն որով Բրիստոս ի Հրէից էառ զնոցուն ի յանարատ կոյսն Իւր՝ ի յանեստուած ազգէն Հրէից, ահա կայ առաջի խորանին. հանեք անտի զնա, և նովաւ ելէք ի պատերազմ, և նովաւ յաղթէք թշնամեաց ձերոց, որպէս և Բրիստոս ասասանեցին»։ Եւ այսպիսի օրինակաւ երկրորդ և երրորդ (անգամ) երեւեալ նշանն, և պատեցին Կոնդոմերէին և Պեմնդին և ամենայն իշխանացն. և սկիզբն արարին ազօթից, և ի նշանեցեալ տեղին բացեալ գրատանէին զզէնն Բրիստոսի յեկեղեցին որ կայ սուրբ Պետրոս։

Եւ յայսմ ժամուս դայր պատգամաւորն ի բանակէն այլազգեաց և խնդրէին պատերազմ, և զօրքն Յռանկաց կային ի մեծ ուրա-

խուլթեան։ Յայնժամ պատասխանեաց (195)
Պեմուենդն և այլ իշխանքն Կերպոդայ, և
ասեն՝ եթէ ահա առ վաղիւն ելցուք ՚ի
պատերազմ ընդ ձեզ։ Եւ զօրքն Յոռանկաց
սակաւացեալ էր. և կազմեաց Պեմուենդն
զձախակոյս պատերազմին իւրեանց հնգետա-
սան հազար, և զհետեւակ զօրսն հնգետա-
սան բիւրս. և սաքաք ելեալ ՚ի պատերազմ՝
ունելով զդէնն Քրիստոսի առաջի իւրեանց
(զօր) բարձեալ տանէին։ Իսկ զօրքն այլազ-
գեացն առ հասարակ լցին զլայնատարած
դաշտն հնգետասան կորդով մի առ միով։
Եւ եկեալ Օ.ընձին և կանգնեաց զդէնն
Քրիստոսի ընդդէմ՝ նշանակացն Կերպոդայ.
և Կերպոդա կայր ընդդէմ նոցա գիզա-
ցեալ որպէս զլեառն անհամար զօրօք. և
զձախամեան առեալ ունէր առաւծադէմն
Տանգրի, և զաջմ թեան առեալ ունէր Նոր-
մնդայ կոմն Ռուպերթն, և Կոնդոմրի
և Պեմուենդն կային ընդդէմ անհամար զօ-
րացն Թուրքայ բանակին։ Եւ յայնժամ
զՍուրուած օգնական կարգային անձանց իւ-
րեանց, և միաբան որպէս հուր որ ցոլանայ
յերկնից և այրէ զլերինս, այսպիսի օրինա-
կաւ զօրքն քրիստոսականայ հեղան ՚ի վե-
րայ այլազգեացն, և առ հասարակ զամե-

նայն բանակն ի փախուստ դարձուցին։ Յեւ մեծաւ սրտմտութեամբ և սաստիկ կոտորածով վարեցան զհետ այլազգեացն զմեծ մասն աւուրն, և արբեցան սուրբ նոցա յարենէ այլազգեաց, և լցաւ ամենայն դաշտն դիակամբք։ Իսկ զաստուածասատոյ բարկութիւնն արկին ի վերայ հեթեւակ զօրացն, վասն զի հրով այրեցին զնոսա երեսուն բիւրըս, որ և հոտեցաւ ամենայն երկիրն։ Յեւ բազումաւարաւ և գերութեամբ և մեծաւ ուրախութեամբ դարձաւ զօրքն Յունականաց ի քաղաքն Անտիոք։ Յեւ էր օրն այն օր մեծ ուրախութեան հաւատացելոց Քրիստոսի։

ԾԾԶ. Յայսմ ամի դարձեալ երկրորդ նշան եղեւ յերկինս ի կողմն հիւսիսոյ, և զչորրորդ ժամ գիշերոյն հրով բորբոքեալ լինէր երկինքն առաւել քան զառաջինն. և եղեւ ի գոյն սաստիկ կարմրութեան յերեկորէն սկիզբն արարեալ մինչեւ ցչորրորդ ժամն գիշերոյն, որ ոչ ոք երբէք ետես այնպիսի նշան ահաւոր. և ծառացեալ բարձրանալով և երակ երակ ելից զերեսս հիւսիսոյ մինչև ի գագաթն երկնից, և ամենայն աստեղքն եղեն ի գոյն հրոյ։ Յեւ ահա նշանս այս նշան էր բարկութեան և կատարածի։

ՃԾԷ. Դարձեալ ՝ի Թուականութեանն Հայոց ՇԽԸ (1099–1100), եղեւ խաւարումն լուսնին ըստ գնացից սովորութեանն իւրոյ, և լինէր ՝ի գոյն արեան սաստիկ գունով յառաջին պահէն մինչեւ չորրորդ ժամն, և դարձեալ լինէր ՝ի գոյն սեւութեան, և երեւեալ լինէր տեսողացն թէ ՝ի գոյնս արեան իցէ. և ՝ի սաստկութենէ սեւութեանն մթանայր ամենայն արարածք. և զայս ասացին հանճարեղքն՝ եթէ լինելոց է արեան հեղութիւն ՝ի յազգէն Պարսից ըստ ցուցման լուսնին ՝ի վերայ նոցա՝ ըստ գրոյ աղգին իւրեանց.

Յայսմ ամի խաղայր գնայր բանակն Ֆրանկաց ՝ի վերայ սուրբ քաղաքին Երուսաղէմի, վասն զի կատարեսցի մարգարէութիւն Յերսեսի Հայոց հայրապետի որ ասաց՝ եթէ «Յազգէն Ֆրանկաց լիցի փրկութիւնն Երուսաղէմի, և դարձեալ վասն մեղաց անկցի ՝ի ձեռս այլազգեացն». Երբ եղեւ յորժամ եկան նոքա ՝ի Ճանապարհ, գային զօրքն այլազգեաց ՝ի վերայ նոցա ՝ի պատերազմ, որպէս գայր Ամաղէկ ընդ առաջ որդւոցն Իսրայէլի. Երբ յորժամ հասան ՝ի քաղաքն որ կոչի Արկա, եղեւ անդ սաստիկ պատերազմ այլազգեացն, և յաղթեաց

զբքն Յովանկայ Նոցա մեծաւ յաղթութեամբ։ Եւ գնաց խաղաղութեամբ բանակն Յովանկայ և հասաւ ի դուռն Երուսաղէմի, և արար բազում կոտորածս։ Եւ էր յայնժամ Երուսաղէմ հայրապետն Հայոց տէր Վահրամ, և զբքն այլազգեաց կամեցան սպանանել զնա, և Տէր փրկեաց զնա ի ձեռաց նոցա։ Իսկ յետ բազում պատերազմաց կանգնեցին փայտէ բերդս, և տաբան մօտ ի պարիսպ քաղաքին և ուժգին բռնութեամբ և սրով և զօրութեամբ առին զսուրբ քաղաքն Երուսաղէմ։ Եւ յայնժամ Կոնդոփրէ զիթուրն Վեսպիանոսի կայսերն առեալ՝ յարձակեցաւ ամենայն զօրութեամբ ի վերայ այլազգեաց, և կոտորեաց ի տաճարին աբս վաթսուն և հինգ հազար, և ի քաղաքն զայլ բնակիչն։ Եւ այսպիսի օրինակաւ առաւ սուրբ քաղաքն Երուսաղէմ, և ազատեցաւ գերեզմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի հարկատարութենէն Տաճկաց։

Եւ արդ ահա Վեսպիանոսի թուրն այս երեք հետ (անգամ) եղեալ սր կոտորեաց զՆերուսաղէմ զհետ խաչելութեան Տեառն։

ԾԴԸ. Յայսմ ամի եղեալ սաստիկ ժողով Անգիպտոսի մինչեւ ի Ակիւթ և ի Նուպիք

և մինչեւ ի սահմանս Հնդկաց (199), մինչեւ երեսուն բիւրս, և գան ամենայն պատրաստութեամբ ի վերայ Արուսաղէմի։ Եւ լքեալ զօրք Յուանկաց՝ սասանելով դողացան, և ոչ համարձակէին կալ ի քաղաքն, այլ յարուցեալ գնացին ընդդէմ նոցա ի պատերազմ. և զայս ունէին ի մտի, եթէ ոչ կարասցեն պատերազմել, դարձցին ի յաշխարհն իւրեանց. և մերձ ի համատարած ծով հանդիպեցան միմեանց։ Եւ թագաւորն Յգիպտոսի տեսեալ զկալ զօրացն Յուանկաց, և ձայն առեալ զօրաց իւրոց յարձակեցաւ ի պատերազմ։ Իսկ զօրքն Յուանկաց դիմեցին առ հասարակ ի պատերազմ և կանգնեցին զձակատ պատերազմին. և յարձակեալ զօրացն Յուանկաց ի վերայ զօրաց Յգիպտացւոցն, եւ առ հասարակ ի փախուստ դարձան. և ոչ եթէ նոքա էին որ պատերազմէին, այլ Աստուած էր որ փախանակ նոցա պատերազմէր ընդ Յգիպտացիսն, որպէս առ Փարաւոն առ Կարմիր ծովուն աւրար որդւոցն Իսրայէլի։ Իսկ ի սաստկանալ պատերազմին իբրեւ արս հարիւր հազարս արկին ի ծովն, և անդ սատակեցան, և զայլն կոտորելով արարին փախստականս. և դարձաւ զօրքն Յուանկաց մեծաւ յաղթութ-

թեամբ և բազում աւարաւ ի քաղաքն Հռոմայեցոց։

ՃԺԹ. Յայսմ ամի զօրաժողով սարար Գրիգոր Կուրապաղատն յարեւելս, եղբայր տեառն Խարսղի Հայոց կաթուղիկոսի։ Սորա գնացեալ ի վերայ Թուրք բանակին ի գաւառն Աշորնէք, վասն զի էր այր քաջ և հզօր և պատերազմող. գնացեալ զօրքն իւրովք ի գեղն որ ասի Կաղըզուան, և հասեալ ի վերայ Թուրքին, և պատերազմաւ հարեալ զնոսա և արար հալածականս, և ըզբազում ն ի նոցանէ սրով սատակեաց. և դարձաւ գնալով ի քաղաքն Անի։ Յայնժամ մի ոմն ի դարանի կայր ի Թուրք զօրացն ընդ ծառով միով, և գաղտ նետիւ հարեալ զնա ի բերանն, և ի սաստիկ խոցոյն յերկիր անկեալ և աւանդեաց զհոգին, և եղև սուգ մեծ Հիրակայ (195) և ամենայն տանն Հայոց։ Արդ այսպիսի օրինակաւ մեռաւ քաջ զօրականն և մեծ հաւատացեալն Աստուծոյ Գրիգոր որդի Վասակայ՝ որդւոյ Ապիրատմին՝ որդւոյ Հասանայ, ի յազգէ քաջաց և ի պատերազմող զօրականաց, յազգէ Պալ հաւունեաց։

ՃԿ. Յայսմ ամի դարձաւ Օրնձիլ կոմն և գնաց ի Ֆռանկ, և տարաւ զզէնն Քրիս-

տոսի զոր գտին Անտիոք, և ետ Աղեքսին Հռոմոց Թագաւորին, և ինքն գնաց 'ի Դանակ։

ՃԿԱ. Յայսմ ամի մեռաւ մեծ իշխանն Հայոց Կոստանդին որդին Ռուբենայ, և մնաց իւր երկու որդի Թորոս և Լեւոն։ Որ բա տիրեալ էր բազում քաղաքաց և գաւառաց, և ըմբռնեալ ունէր զմեծ մասն Տորոս լերինն, զոր քաջութեամբ իւրով առեալ էր 'ի ձեռաց Պարսից։ Սա էր 'ի ձեռացն Վռաստակայ Խաղբատուռնայ՝ որդւոյ Աշոտոյ։ Սա մեռանէր յայսմ ժամանակիս. և եղեւ այս ինչ նշան 'ի տան նորա՝ մահու նորա։ Յաւուր միում մինչ կենդանի էր, լինէր ցաղում հրբոյ կայծակաց. և 'ի բերդն որ ասի Վահկայ (196), հարեալ կայծակն 'ի սպասաւորաց տանն, զարկեալ զարծաթի սկուտեղն և զմի կողմ տարաւ 'ի ներքոյ եւթն սկուտեղն. և ամենայն իմաստունքն ասացին եթէ այս է վերջին տարին Կոստանդէի. և 'ի նմին ամին մեռանէր, և թաղեցաւ 'ի վանքն որ կոչի Կաստաղոն (197)։

ՃԿԲ. Յայսմ ամի դարձեալ եղեւ երրորդ նշան հրակերպ 'ի յերկինս 'ի գոյն տաստիկ կարմրութեան. և կացեալ զհինգ ժամ գիշերոյն 'ի հիւսիսային կողմանէն, գնաց

լով գնայր յարեւելս, և դարձաւ ի սեւութիւն. և ասացին զնշանս զայս՝ նշան է արեւանհեղութեան քրիստոնէից, որ և եղեւ իսկ։ Արդ ահա յօրէ յորմէ ելան աղքն Յունական, ոչ երբէք երեւեցաւ նշան բարւոք և կամ ուրախութեան, այլ բարկութեան և կատաղութեան և աւերման և քակտելոյ աշխարհին, մահու և կոտորածի, սովոյ և սաստկութեան։

ԺԿԳ. Յայսմ ամի եղեւ սով սաստիկ ընդ ամենայն աշխարհն Միջագետաց. և ի քաղաքն Լուսհայ եղեւ մեծ նեղութիւն, վասն զի տարին ողջոյն ոչ եկն անձրեւ ի վերայ անդաստանացն, և արգելաւ ցօղ յերկնից, և ցամաքեցաւ երկիր ի ջրոյ, չորացան ծառք և այգիք, խցան աղբեւրք ջրոց, և յերեսաց սովոյն մեռան բազումք ի քաղաքն Լուսհայ. և զոր լուաք ի Սամարիա յաւուրս մարգարէին Լիսայեայ, այնպէս եղեւ ի քաղաքն Լուսհայ։ Օ. ի կին (198) ոմն ի հաւատացելոյն Հռոմոց զողջոյն իւր եփեալ և կերաւ. նոյնպէս և այլազգի Տաճիկ ոմն առ վասանգի սովոյն եւ կեր զկին իւր, վասն զի զզօրութիւն հացին բեկեալ էր Աստուած, ուտէին և ոչ յագենային. և բազումք ասացին եթէ այս Աստուծոյ է դատաստանս վասն անիրաւ մահուն Թեոդոս Կուբապաղատին, որք խաչով

և Աբեսարանով երդուան նմա, և դարձեալ ուրացեալք լինէին, և սպանին զնա չարաչար, և զգլուխն ի ձող ցցեալ բազում հայհոյութեամբ, և ձգեալ զնա առաջի եկեղեցւոյն որ ասի Փրկիչ, զոր շինեաց սուրբ առաքեալն Թադէոս, և վասն այսորիկ էած տէր Աստուած զնեղութիւնս զայս ի վերայ տանն Աբգարու. և ամ յամէ ոչ դադարեցաւ բարկութիւնն Աստուծոյ ի քաղաքէն Ուռհայոյ։

ՃԿԴ. Իսկ ի բարձրանալ Թուականութեանս Հայոց յամս ՇԽԹ (1100—1101) և զեւ լիութիւն հացի ընդ ամենայն արարածս, և ի Յուռհայ անչափ առատութիւն ցորենոյ և գարւոյ, որ մուտացան զառաջին նեղութիւնն, վասն զի մի մեթն հարիւր մեթ արար և լցան, և ամենայն (ծառք եղեն) պտղաբերք, և աղբիւրք փորեցին զնուրս իւրեանց, և յագեցան մարդ և անասուն։ Յայսմ ամի մեռաւ Կոստանդին որդի Ռուբենայ (199)։

ՃԿԵ. Յայսմ ամի Կոնդսիրէ տուկն Ցիլռանկայ գնացեալ զորքն ի քաղաքն որ ասի Կեսարիա Փիլիպպեայ, որ է ի վերայ ծովուն Ովկիանոսի, և եկին առ նա իշխանքն Տաճկայց սիրոյ աղաչաւ, և բերին կերակուրս և արկին սեղանս առաջի նորա. և նա էառ

եկեր անպատրաստութեամբ, և կերակուրքն դեղած էր մահաբեր դեղոք. և զկնի սակաւ աւուրց մեռաւ տուկն Կոնդոփրէ և քառասուն այր ընդ նմա, և Թաղեցին զնա ի քաղաքն Երուսաղէմ առաջի սրբոյ Գողգոթային, վասն զի յայսմ աւուրքս անդ էր։ Եւ յայնժամ յուղարկեցին իբրն դրակ եղբօրն իւրոյ Պաղտնին՝ որ էր ի քաղաքն Ուռհայ, և բերեալ զնա՝ տան ըզսուրբ քաղաքն Երուսաղէմ Պաղտնոյն։ Եւ Տանդրի յարուցեալ գնաց ի քաղաքն Անտիոք առ կոմսն Ֆռանկաց Պեմունդն, վասն զի քեռի էր նմա։

ՃԿԶ. Յայսմ ժամանակիս էր զօրապետն Հռոմոյ իշխանաց իշխանն ի քաղաքն Մարաշ, ընդ ձեռամբ Յունաց Թագաւորին Աղեքսին, զոր եռուն յառաջին ամն իշխանքն Ֆռանկաց ի Աղեքսն, և ուրացեալ եղեն, և զոր խոստացան՝ ոչ արարին։ Եւ յարուցեալ մեծ կոմսն Ֆռանկաց Պեմունդն և Ռիջարդն քուրորդին նորա արար ժողով զզօրսն Ֆռանկաց և գային ի վերայ քաղաքին Մարաշայ, և պատերազմեալ ի վերայ իշխանաց իշխանին, որ ասէին նմա Թաթուլ. և խնդրէր ի նմանէ զքաղաքն Մարաշ, և բանակեալ քաղում պատերազմաւ

'ի վերայ Նորա։ Իսկ իշխանաց իշխանն առ
ոչինչ համարելով զամենայն պատերազմն նո-
բա, զի էր այր քաջ և պատերազմող, և էր
բազում ազատօքն 'ի քաղաքն Մարաշ, եւ
Պեմունդն կայր բանակեալ 'ի դաշտն Մա-
բաշայ և հաւանեցոյց զգաւառն իւր։

ՃԿԵ. Յայսմ ամի գայր բազում զօրօք ա-
միրայն Պարսից որ ասէին 'Դանիշմանն (200),
որ էր տէր Սեւաստու և ամենայն Հոռոմոց
աշխարհին. և խաղացեալ բազմութեամբ
զօրօք և եկեալ 'ի վերայ Մելտենոյ քաղաքին,
և տայր սաստիկ պատերազմ 'ի վերայ Նորա։
Եւ իշխան քաղաքին որ ասէին Խաւրիլ, յու-
զարկեալ առ Պեմունդն, և կոչեաց զնա յօգ-
նութիւն քաղաքին իւրոյ, և խոստացաւ տալ
զՄելտեն 'ի ձեռն Պեմունդին։ Եւ յայնժամ
Պեմունդն և Ռիչարդն յարուցեալ զօրօք գան
'ի վերայ 'Դանիշմանին. և լուաւ զայս 'Դա-
նիշմանն, և առաքեաց զօրս ընդդէմ Ֆը-
ռանկ զօրացն 'ի դաշտն Մելտենոյ. և կացու-
ցանէր քմինս 'ի բազում տեղիս, և ինքն ա-
ռեալ զօրս բազումս գնաց ընդ առաջ նոցա։
Եւ ահա գայր Պեմունդն և Ռիչարդն ան-
մտաբար, և ամենայն անպատրաստութեամբ
լցեալք էին, և զօրք իւրեանց դատարկ թա-
փուրք 'ի սարուց պատերազմէ, և գային

պաճուճեալք՝ որպէս և կանայք զհետ մե-
ռելոյ. վասն զի զսաթք պատերազմին պաշ-
տօնեայք նոցա ունէին, և պատերազմողք
ունայնացեալք կային որպէս զգերեալս. եւ
յանկարծակի հեղան զօրք Դանիշմանին ի
վերայ Յովանէ զօրացն, և եղեւ պատերազմ
սաստիկ յայնմ աւուր, և եղեւ կոտորումն
ամենայն զօրացն Յովանէսեայց և Հայոց. և
կալան զՊեմունդն և զՄիջարդն ծառայ. և
ապանան յայսմ պատերազմիս երկու եպիսկո-
պոսք ի Հայոց, Կիսրիանոս Աղուոնեաց և-
պիսկոպոսն և Գրիգորէս Մարաշայ եպիս-
կոպոսն որք էին զհետ Պեմունդին, զի յայժ
մեծարէր զնոսա. և լուեալ զհամբաւս այս՝
դողայ սասանեալ ամենայն տունն քրիստոս-
նէից, և ուրախացեալ ամենայն ազգն Պարս-
կաց, վասն զի զնա գիտէին յանուանէ Թա-
գաւոր Յովանէսեայց, և յանուանէ նորա դո-
զայր ամենայն տունն Խորասանայ։ Եւ լու-
եալ զայս Պազմնոյն կղզեան Լեռնհայոց և ամե-
նայն ազգն Յովանէսեայց որք Աղուանք, վարեցան
զհետ Դանիշմանին. և Դանիշմանն առեալ
զՊեմունդն և զՄիջարդն և երկաթի կա-
պանօք տարաւ ի Նիկիսարն։ Եւ լուեալ զայս
Պազմնոյն՝ դարձաւ Լեռնհայ, և տայր զԼեռ-
հայ միւս Պազմնոյն որ ասի Տպօրկ (Տիւ-

Պուրկ), որ էր յառաջագոյն Ճորտ Պեմնդին։ Եւ ինքն չարչարեալ զԱռհայ, և առեալ բաղուստ գանձս ոսկւոյ և արծաթոյ, և գնայ Այրուսազէմ յամենոր եղբօր իւրոյ Կոնդոմրէի, և թագաւորեայ ի վերայ Երուսաղէմի. և Տանգրի եկեալ Ամնոխոր որպէս ասացաք։ Արդ այս այսպէս գործեցաւ ընդ զօրսն Յոանկայ վասն գործոյ մեղայ, զի թողին զուղղիղ ճանապարհն Աստուծոյ, և սկսան գնալ ընդ ճանապարհն մեղայ զորս ոչ հրամայեաց նոցա Աստուած, և ամենայն անիրաւութեամբ և անառակ գնացիք մոռացան զպատուիրանս Տեառն, և զոր ոչ կամէր Աստուած՝ զայն կամեցան նոքա։ Իսկ Աստուած զառաջին օգնականութիւն և զյաջթութիւնն եբարձ ի նոցանէ, որպէս և բարձ ի բանակէն որդւոցն Իսրայէլի։ Եւ ահա այս առաջին կոտորուածն զօրացն Յոանկայ՝ որ եղեւ ասա։ Յառաջ միտ դիր և մի ձանձրանայք։

ՃԿԸ. Յայսմ ամի զօրաժողով արար ամիրայն Պարսից Սուգման՝ որդի Արդուխին, որ էր այր քաջ և արիւնարբու, և դայր բաղուստ զօրօք ի քաղաքն որ ասի Արուճ, և արար ասպատակ զամենայն երկիրն։ Եւ լուեալ զայս կման Պաղանոյն Տպօրկ և

կոմն Սրճոյ որ ասի Փուչէր (Ֆուլչեր), գնացին ի վերայ Թուրքին, և ի ձեռն անպատարաստութեան (201) իւրեանց եղեն պարտեալք. և սաստիկ պատերազմաւ յաղթեաց Թուրքն Ֆռանկին, և արարին սաստիկ կոտորածս զզօրսն Ֆռանկաց և Հայոց որք էին զհետ նոցա. և սպանաւ կոմն Սրճոյ Փուչէրն՝ այր քաջ և հզօր և սուրբ ի մեզոյս մարմնոյ, և կոմն Պաղտին երեք աբամրք անկանէր ի կլայն Ուռհայոյ, և կայր ալաղտին մարմնով։ Իսկ եկեալ իշխանք քաղաքին ելուցին զնա ի քաղաքն, և տարան զնա յատեան իւր։ Իսկ զկնի երեք աւուրց յարուցեալ գնաց Ալնախոք ի խնդիր զօրաց, և բանակն այլազգեաց պատերազմէր ի վերայ կլայնն Սրճոյ, վասն զի ամենայն քրիստոնեայքն որ անդ էին՝ ի կլայն ժողովեցան։ Իսկ անդ և Պասկոան (202) Ուռհայոյ. և քաղաքն Սրուճ եղեւ ընդ Թուրքն միաբան։ Իսկ զկնի քսան և հինգ աւուր պայր Պաղտին և վեց հարիւր ձիաւոր ընդ նմա և հետեւակս եւթն հարիւր, և արարին հալածականս զանօրէն բանակն Պարսից, և քաղաքն Սրուճ ոչ եկն ի հաւանութիւն։ Յայնժամ դարձաւ Ֆռանկն ի վերայ քաղաքին Սրճոյ, և զամենայն բազմութիւն քա-

զաքին կատարեաց սրով. և արարին ապա զամենայն քաղաքն առ հաստատակ, մանկունս և աղջկունս և զկանայս անհամար էարկ 'ի քաղաքն Ռուհայ, և լցաւ գերութեամբ Աղտոիոք և ամենայն տունն Ֆռանկաց, եւ լցաւ արեամբ ամենայն քաղաքն։

ՃԿԹ. Յայսմ ամի եղեւ չորրորդ նշան կարմրութեան 'ի հիւսիսային կողմանէ ա հաւար և հրաշալի առաւել քան զառաջինսն, 'ի գոյն արեան երեւեալ լինէր. եւ դարձեալ սեւացաւ։ Իւր այս չորրորդ նշանայն լուսնին փուլ հանդիպէր հանապազ. և այս նշանս նշան էր բարկութեան 'ի վերայ քրիստոնէից ըստ մարգարէին Յրեմիայի որ ասէր՝ եթէ "Յերեսաց հիւսիսոյ բորբոքեսցի բարկութիւնն". որ եղեւ իսկ անհաս բարկութիւնն։

ՃԿ. Դարձեալ 'ի թուականութեանն Հայոց յամի ՇԾ (1101—1102). եղեւ ահաւասր և հրաշալի նշան 'ի սուրբ քաղաքն Իրուսաղէմ. վասն զի սովորական էր վառման լուսոյ սուրբ գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ, արգելեալ եղեւ, ոչ վառեցաւ յաւուր շաբաթու, այլ միայնոյն կանթեղք առանց վառման. և կայեալ մինչեւ 'ի միաշաբաթին կիւրակէին, և ապա վառեալ

լինեալ յմիներորդ ժամուն, և եղեալ հիաց-
սումն ամենայն հաւատացելոց Քրիստոսի։
Եւ այս եղեալ զի ազգն Յունական խուռորե-
ցան ի Ճանապարհս ճախակողմեանս, եւ
թողին զբուն պողոտայն առ յաջակողմեան
Ճանապարհին զմի զայն Ճաշակելով զՃաշա-
կըն բաժակին որ ըստեալ խակ էր մերով գտա-
նուիթեան, նա եւս պաշտօնեայք սրբոյ Ե-
կեղեցւոյ ի տիզմն թաւալելով առանց յապ-
ման։ Եւ այսպիսի վարուքս ոչ գարշելին յա-
մենայն մեզայ. և ի վերայ այսր ամենայնի
զկանայս կացուցանէին սպասաւոր սրբոյ գե-
ղեցմանին Աստուծոյ, և ամենայն ուխտի-
ցըն (սուրբ տեղեաց) որ էին Հռոմայեցիք։
և էին այն ամենայն մեղք մեծամեծք առա-
ջի Աստուծոյ. զՀայ և զՀոգոմ, զԱրսրի և
զԱրացի մերժեցին յամենայն ուխտիցն (205)։
Եւ յորժամ տեսին զայս ահաւոր նը-
շանս յանդիմանութեան ազգն Յունական,
ի բաց մերժեցին զկանայս ի սպասաւորու-
թենէ սուրբ ուխտիցն որ Հռոմայեցիք,
և զամենայն ազգ կացուցանէին յիւր ու-
խտն։ Եւ սկսան յաղօթս կալ հինգ ազգ հա-
ւատացելոցն, և լուսաւորած աղօթիցս
նոցա, և վառեալ լինէր կանթեղն սուրբ
գերեզմանին Աստուծոյ ի յօրն կիւրակէին,

որ ոչ երբեք լեալ էր այնպէս, այլ սկիզբն վառման լուսոյ սուրբ Գերեզմանին միշտ և հանապազօր ի յաւուր շաբաթու լինէր ի մեռասան ժամն (204)։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՃԺԱ. Ի յամի հինգ հարիւրերորդի և յիսներորդի (205) Ի գիրս ասա ժողովեցաք ըստ գործ ժամանակաց հարիւր և յիսնից ամաց. և յայսմ տեղւոջ լռեալ դադարեցաք Ի յարուեստաւոր (206) քննութենէս մերմէ, վասն զի այլոց ոմանց թողաք զայս մարտ մտաց և պայքարութիւն խորհրդոց, և յետ մեր եղեալ նեղոյ տեղի տալով հանճարեղացն և խմաստուն արուեստաւոր քննողաց, ըստ բանի սրբոյն Լուսաբերչին Պօղոսի որ ասէ. «Լցեմք զ յատենի ելցէ, առաջինն լռեացէ»։ Լուսայս եղեւ Ի հայրապետութեանն Հայոց տանն տէր Գրիգորիսի և տեառն Խարսղի, յորժամ եղեւ առաջին սկիզբն երկրպագութեանս (207)։ Լուս Ի հայրապետութեանն Հռոմոց Ի Կոստանդինուպօլիս՝ Նիկոլայ.

և ի Անտիոքայ հայրապետութեանն Յով-
հաննու, և Հերուսաղէմայ հայրապետու-
թեանն Ամէնի, և ի Աղեքսանդրիոյ հայ-
րապետութեանն Յովհաննու, և ի Սսո-
ւոյ տանն հայրապետութեանն Աթանասի։
Եւ ի Դամոյ էին ամք վեց հաղար և վեց
հարիւր և տասն։ Եւ արդ զամս տասն ոչ
ինչ արարաք հոգս վասն այս ժամանակա-
գրութեանս, և թողեալ էաք ի բացեայ զա-
ւուրեստ գրչութեանցս, և տեսանելով մեր
հանապազօր զաստուածասաստ բարկու-
թիւնս հեղեալ ի վերայ քրիստոնէից, և
ամ յամէ անկեալ գլուխեալ լինէր զօրու-
թիւն զօրաց և հաւատացելոց, և տեսաք
զի ոչ ոք ունէր ի մտի զայս խնդրել, կամ
ի գիրս հաւաքել, զի ապագայիցն յիշատակ
լեցի այս կատարածս, և նեղութիւնս առ-
բարի ժամանակն, յորժամ տացէ Տէր Աս-
տուած զխոստացեալսն յետին ժամանակին,
յորժամ տացէ Աստուած հաւատացելոց
զժամանակն՝ որ լի իսկ իցէ ամենայն ու-
բախութեամբ։ Եւ ապա մեր յառաջ եկեալ
յայնժամ բազում ուրախութեամբ որպէս
թէ Աստուծոյ հրամայեցաւ (208) ինձ զայս
այսպէս ի գիր հաւաքեալ և ապագայիցն
թողուլ զայս յիշատակս։ Եւ թէպէտ ոչ է

սա հոգևոր հմտութեամբ զարդարեալ, կամ արուեստ հոգեւոր, կամ շառաւեղս առաքիւնութեանէ, այլ խրատ Ցեառն զոր վասն մեզոց աղգի յանցանոցք ի բարկութիւն շարժեցաք զՏէր Աստուած ի վերայ մեր, և ինքնանէ առաք զխրատս զայս գաւազանաւն նորա։

Եւ արդ պարտ և արժան է ոչ մոռանալ զսա որք կենդանիքս եմք ի ժամանակիս, այլ գրել յիշատակել զսա ծնանելոցն, եթէ այս է մեզոց պտուղն զոր ցանեցին հարքն մեր և եւթնապատիկ ժողովեցին։ Եւ վասն այսորիկ ես Մատթէոս՝ որ անարժան եմ, ողորմութեամբն Աստուծոյ զամս բազումս քաջաքան քննութեամբ կացի և արիաբար մտաք ի քաղաքս Մինջաղետաց Յուռհայ, ժողովեալ գրեցաք մինչեւ ցայս վայր, և զամսոց երեսնից դեռեւս առաջի կայ ի գրի հաւաքել։ Եւ արդ ահա այս վարդապետացս կորովն և գիտնականացս էր գործ, և ոչ մերում ակարութեանցս և կամ սակաւ գիտութեանցս։ Բայց այս սովորութիւն է Աստուծոյ, զի ի ակարաց և ի նուազից գործ ինչ պիտանացու պահանջէ. որպէս տեսանեմք զերամն մեղուացն և զարմանամք ընդ դաստապետութիւնսն նոցա, եթէ որպէս յոչինչ և ի թիւթեւ

մարմնոյն ամենայն մարդիկ յապեհան քաղ-
ցրութեամբ նոցա, և ի պէտս սրբոց մատ-
չին գործք նոցա, և առաջի թագաւորաց
փառաւոր։ Իսկ կամ մեռեալ որդն որ գայ
և կենդանանայ, և վաստակովք իւրովք ի
գոյնս գոյնս զարդարէ զթագաւորս և զիշ-
խանս, և ամենայն եկեղեցիք նոքաւ հարբ-
ատանան պէսպէս զարդարանօք։ Այսպէս
և տկարութիւնս մեր համարձակութիւն
էառ, և առաջի հաւատոցաց և խնամանոց
հզօրաց և խորին հանճարեղաց և քաջա-
կիրթ քննողաց խօսեցաք զայս, և յանձին
արարաք զմտաւեռագրութիւնս մեր նոցա,
վասն զի արկցեն ի բովս և ի քննութեան.
և մեք ոչ ընդդիմանամք, վասն զի մերս ընդ-
դէմ գիտնականաց ոչ ունի դիմագրութիւ-
նրս։ Որպէս և այն թեթեւ թռչունն, թէ-
պէտ և ձայնովն ընդդիմանայ բազմոց,
այլ մարմնովն տկարանայ, այն որ կոչի ծի-
ծառն. սակայն նա ունի զմեր նմանութիւ-
նրս առ զարմանալի գործ բնակութեան
իւրոյ, թէ զիարդ յոչինչոյ բնակութիւն
կազմէ և ի բարձունս առանց հիման կառու-
ցանէ, շաղախաբեր և շիղաբեր վաստակս
հնարով հնարէ, և ամրութիւնս պնդագոյ-
նրս հաստատէ, զի որդւոց իւրոյ զնա տա-

ցէ ժառանգութիւնս, զոր և այլ յաղթեանս դամ թողչոց անհնար է զայն գործել, արձուց ասեմ և նմանեաց նորա. վասն զի այլ քաջութիւնս մեծաւ կարողութեամբ առնեն հաւքն քաջաթռիչք, բայց զայն զոր գործեաց թեթեւ թռչունն՝ զայն ոչ կարեն առնել (209)։ Արդ այսպիսի օրինակաւքս հանձարեցք և գիտնականք զամենայն քնութիւնս հին և նոր կոտակարանացն Աստուծոյ կարող են առնել և ի յայտ բերել ահաւոր և լուսաւոր քնութեամբ, բայց զայս հաւաստապէս ասացից և առանց երկբայութեան (210), վասն այսորիկ ի մէնք քրնեալ գծագրեցաք, անհնար է եթէ այլ ոք կարող լինի զայս գտանել և կամ հաւաքումն առնել միահամուռն ազգաց և թագաւորաց, հայրապետաց և իշխանաց զամենայն ժամանակս թուականութեամբ ի գիրս հաւաքել, վասն զի վճարեալ հատան առաջինքն, որք ականատեսք էին ամենայն ժամանակացն։ Արդ զայս ոչ ոք է կարող առնել զոր ինչ մեք արարաք, զի զոր ինչ գրեցաք՝ գրեցաւ, զի զամս հնգետասան ունէաք զայս գործ քնութեանս, զոր ի մատենագրութիւնս ընթերցեալ գտանէաք զթուականութիւնս ժամանակացն ի յիշաւ

տակարանս գրոյն, և ընդ ծերսն ի քննութիւն մտեալ զեղերեալս անդադար քննութեամբ և հաւաքեալ գրեցաք ի գիրս զայս ինչ։

Եւ արդ ես Մատթէոս այսու եղէ ցանկասէր, և կամեցայ դառնալ ընդ նոյն բնաբան պողոտայն, զոր օրինակ ոք ի բազում ժամանակաց շրջեալ ի վերայ համառաբած մեծի ծովուն Միկիանոսի. և ցնորեալ բազում մեղութեամբ, և զինի ալեկոծութեան նոյն երթիցէ ի տուներն իւր խաղաղութեամբ և զմտաւ ածեալ յիշեսցէ զսէր բազում շահոյն, յայնժամ ոչինչ ի յանցեալ նեղութիւնսն մտաբերէ, և առ ոչինչ համարելով զամենայն ինչսն զոր ի ծովուն նաւակոծեցաւայլ փութով մեծաւ փափագանօք դառնալ ի նոյն ծովագնացութիւնս։ Այսպիսի օրինակաւս և մեք դարձցուք ի մեր թողեալ կէս գրոյն, և գտաք զինաբան զառաջինն զոր թողեալ էաք, յորժամ էր ի յամս ՇԾ (1101—1102)։ Եւ արդ սկսաք ասել այլ ևս ամաց քան և եօթանց (211), և երեսուն՝ լի՝ ցի վճարումն գրոցս, վասն զի ածեաց թուականութիւնս Հայոց բազմնեղութեամբ. և ի նոյն հայրապետութեան տեառն Գրիգորիսի և ի թագաւորութեանս Յունաց Ա-

լեքսին գարձաք յօժարական մտօք, և սկսա-
նիմք առ 'ի պատմել զկոտորածս և զնեղու-
թիւնս չար ժամանակիս այսորիկ։ Բայց ոչ պատ-
ցաք զսա 'ի պէտս մեղադրութեանց՝ որպէս
կարծել ոմանց, այլ 'ի յիշատակս և 'ի սաս-
տու�մն առ յապագայ ժամանակին. և ոչինչ ըն-
մտաւ ածի զոկարութիւն մտաց և զանկարողութիւն 'ի գիտութենէ հմտութեանց,
այլ որք կատարեալք են գիտութեամբ հին
և նոր կատարանացն Աստուծոյ, նոքա են
կարողք քերականական տրուեստիւք ըզ-
բանան սրբել, և զամենայն սխալանս իմոց
բանիցն պայծառացուցանել ըստ աստուա-
ծատուր շնորհացն որ տուաւ նոցա։ Իսկ մեք
ըստ տխմար մերոյ գիտութեանս զայս քրն-
նեալ մաքրութեամբ գրեցաք 'ի բազում մա-
տենագրութեանց (212) զորս գտաք վասն նե-
ղութեանց ժամանակացս այսոցիկ, զոր 'ի տե-
ղիս տեղիս գրեալ և թաղեալ էին զայն յիշ-
ութեանց յիշատակ. զոր և մեր ժողովեալ զայն
ամենայն բազում հոգեբարձութեամբ. և ը-
սեցաք յայլոց ոմանց պատուականաց որք հա-
սեալ էին ժամանակաց և նեղութեանց, և անսը-
զալ հասեալ էին 'ի վերայ ժամանակացն. և ընդ
ձերս ունէաք խօսակարգութիւնս և քրն-
նութիւնս որք տեղեակ էին անցեալ ամացն

ըստ բանի մարգարէին որ ասէ. «Հարցջիր զու ընդ հարսն՝ և ասասցեն քեզ, ընդ ծերսն՝ և պատմեսցեն քեզ»։ Արդ այսպիսի օրինակաւս անհանգիստ եղեալ մեր և զամենայն հոգս ղբաղանաց թողեալ էաք, և զամենայն ցանկութիւնս արհամարհեալ էաք, և միշտ և հանապազ զայս ունէաք պայքարութիւն մտաց, զոր դարձեալ սկսաք երկրպագութեանց՝ ըստ երանելի վարդապետին Գրիգորի Նիւսացւոյ, որ ասէր. «Դարձեալ ես ծերունիս յասպարիսի»։ Զ. Զբրս և մեր մնացեալ այլոց ոմանց զայս քննելոյ և ահա տեսանէաք զամենեսեան հրաժարեալ ի պատմագրութենէ ասսի. և տեսանէաք մեք զի ժամանակս գնալով գնայր, և հոսմունս և ծորմունս և զպակասութիւն մեզ ցուցանէին եւ զոչ կալ դադարման մարգկութեանս ի վերայ երկրի, այլ զփոփոխմունս ասասայս ի հանդերձեալսն ի յայտ բերէին. փոսն զի անցաւոր են ամբս և ժամանակ, այսպէս անցաւորք են ծնունդք նորա. և զոր օրինակ մշանջենաւորք են հանդերձեալքն, այսպէս և անկատարածք են ծնունդք նորա. և երանի որք հանդիպեսցին այնմ ուրախութեանց, և երանի որք կերկրեցեն ճաշ յարքայութեանն Աստուծոյ։

ՃԽԲ. Յայսմ ամի յորժամ էր Թուականն Հայոց ՇԾ (1101–1102) դարձաւ կոմն Ֆրանկաց որ ասի Օ.ընձիլ վասն զի յորժամ առին զսուրբ քաղաքն Երուսաղէմ առեալ զզէնն Քրիստոսի գնաց յաշխարհն Ֆրանկաց. և յորժամ լուան վասն նորա թէ զէնն Քրիստոսի ընդ նմա էր, դզրգեալ եղեն ամենայն արարածք ընդ նմա։ Եւ յայսմ ամի դարձեալ և գայր ի վերայ Տաճարին քաղաքին, և զօրք պատերազմողք ընդ նմա տան բիւր. և եկեալ ի Կոստանդինուպոլիս, և Թագաւորն Ալեքսան բազում ընծայս պարգեւէր նմա, և անցուցանէր զնոսա ընդ Ովկիանոս Բայց գործ Յուդայի գործեաց ընդ նոսա, զի զամենայն երկիրն առաջի նոցա այրեալ հրով հրամայեաց՝ ընդ որ անցանէին զօրքն Ֆրանկաց, և ընդ անմարդաբնակ վայրս տանէին զնոսա. և արգելեաց զհայն ի նոցանէ, և արար սովալուկ զնոսա, որ անձամբեալ զերիվարսն ուտէին։ Եւ առաքեաց ի զօրսն Թուրքաց, և արար ահագին ժողովս ի վերայ նոցա. և եկեալ սուլտանն Խլիճ-Արսլան և սատիկ պատերազմ յարոյց ի վերայ նոցա ի սահմանս քաղաքին Նիկիայու, և արար անթիւ կոտորածս զնոսա արս իբրև հարիւր հազար. և Օ.ընձիլն երեք հարիւր

արամբք եղեւ փախստական, և անկանէր Ա՛նտիոք քաղաք. և այլ ամենայն բազմութիւնք զօրացն Ֆռանկաց սրով անցան, եւ կանայք և որդիք նոցա գնացին ի Պոտիկս ի գերութիւն։ Այսպէս պատեցաւ վասն մեղաց, զի առ հասարակ սիրեցին զմեղաց ճանապարհն, և զԱստուծոյ ոչ ընկալան։ Իւ յայնժամ Տանգրի կոմսն Անտիոքայ բռնեաց զկոմսն Ֆռանկաց Օ՛ընճիլն, և երկաթի կապանօք յուզարկեաց զնա ի քաղաքն որ ասի Սարուանդաւլի (213). և զկնի աւուրց Ֆռանկաց պատրիարքն որ Ա՛նտիոք՝ և այլ քահանայք բարեխօսեցին առ Տանգրի, և արձակեաց զնա։ Իւ գնաց Օ՛ընճիլն և արար ժողով ի վերայ Տռապօլսոյ քաղաքին, և մեծաւ խստրով նստաւ ի վերայ նորա, և շինեաց քաղաք ի վերայ նորա։

Ի նոյն ժամանակին գայր բազում զօրք մեծ կոմսն Ֆռանկաց որ ասի Պեռեւին (214), և խաղայր գայր ընդ աշխարհն Հռոմայեցւոց և Յունաց երեսուն բիւր հեծելոց ընդ նմա, և հասանէր մեծաւ զօրութեամբ (215). և հպարտութեամբ խօսէր ընդ Թագաւորին Յունաց, և Լիպարքոս կոչէր զնա, և ոչ անուն թագաւորի ասէր նմա, մանաւուկ գոլով երբեւ ամաց քսանից։ Իսկ Թագաւորն

Աղեքսն և ամենայն տուն Յունաց ահա-
բեկ լինէին ի նմանէ։ Եւ յայնժամ Թա-
գաւորն Աղեքսն հանեալ առ կոմսն Պետե-
ւին զամենայն իշխանսն Յունաց, և մեծաս-
աղաչանօք էած զնա ի Կոստանդինուպօլիս,
և արար Թագաւորն նմա մեծ ընդունելու-
թիւն, և տուրս անչափ գանձուց պարգե-
ւէր նմա և պօտուոն (216) մեծամեծաթիք արար
առաջի նորա, և բազում ծախիւք անցու-
ցանէր զնա ընդ մեծն Ովկիանոս յաշխարհն
Գրամբաց, և տայր ի զօրացն Յունաց զկնի
նորա։ Եւ յայսմ վայրի սկիզբն արար նեն-
գութեան Թագաւորն Յունաց, և հրամայ-
եաց զօրապետաց իւրոց զի ընդ անմար-
դաբնակ տեղիս տարցեն զզօրսն Ֆռանկաց.
յանկարդի վայրս կացուցանէին զնոսա աւուր-
բս հնգետասան, և ոչինչ տեսանէին՝ բայց
միայն անապատ չոր և դժար վայրս լերանց.
և ջուր տեղեացն սպիտակ որպէս կրաջուր,
և էր աղի։ Եւ հրամայեաց Թագաւորն Ա-
լեքսն կիր խառնել ի հացն, և զայն տայր
ուտել նոցա, և լինէր այն մեղք մեծամեծք
առաջի Աստուծոյ. և այնպէս սովեալ և նը-
քոչեալ լինէին աւուրս բազումս, և անկա-
նէր հիւանդութիւն ի զօրսն Ֆռանկաց։
Այս այսպէս գործէր Թագաւորն Յունաց,

զի սիսայեալ էր ընդ նոսա վասն առաջին երդմանն ուրացութեան նոցա, զոր երդուան նմա և ոչ արարին։ Եւ այս Աստուծոյ եղեւ, վասն զի ի զրկանս և յանիրաւութիւնս և յաւերս անողորմապէս վարեցան (Յոյնք) ի վերայ քրիստոնէից, վասն այսորիկ թոյլ ետ Աստուած ազգաց անօրինացն գալ ի վերայ նոցա, և առնել պատուհասակոծ վասն մեղաց։

ՃԺԳ. Յայնժամ Սուլտանն արեւմտից Իսլամ-Սրանն լուեալ զգալ զօրացն Յունական կաց, գրեաց ի Նիկիաբան (217) յամիրայն Պանիշմանին և յայլ ամիրայսն, և ահագին բազմութեամբ գայր ի վերայ Յունական զօրացն և հանդիպեցան միմեանց ի դաշտն որ ասի Օլոսի (218), և արարին պատերազմ ահագին զմեծ ժամ աւուրն, և ըստ արեամբ դաշտն առհասարակ։ Եւ անճարեալ զօրքն Յունական ի յօտար աշխարհին, և ոչ գիտանէին եթէ իրացն, և գուսմարեալ դեգերէին որպէս զանասունք։ Եւ էր օրն այն օր մեծ և սոսկալի ի վերայ քրիստոնէից։ Եւ յայնժամ փախեաւ զօրավարն Յունաց։ Եւ տեսեալ Պետերինն զբեկուսն զօրացն իւրոց՝ ելեալ ի լեառն մի, և այլազգին պատեալ լինէր զստորոտ լերինն։ Եւ

ահա անդ էր տեսանել զՇայթիւնս ազգ-
զանց, և եռեսս Պեռեւինն, և զՊենդիւնս
երիվարացն և զդողումն լերանցն, և այնու
կոտորումն էր զորայ իւրոյ, լայր դառնա-
պէս. և ՚ի սաստկանալ պատերազմին անձա-
րեալ յամենայն կողմանց՝ փախեալ լինէր
չորս հարիւր ձիաւորով, և զայլ զօրսն առ
հասարակ կոտորեցին բիւրս երեսուն։ ԼՀ
հասանէր կտեն Ֆռանկաց Պեռեւինն ՚ի
քաղաքն Ինափք, անկանէր առ Տանդրի,
և անտի յարուցեալ գնաց ՚ի սուրբ քաղաքն
Յերուսաղէմ։ ԼՀ զնիկ ուսուցոյ ինչ դար-
ձաւ ՚ի յաշխարհն Ֆռանկաց ուստի եկն,
և՝ երդուեալ սաստկապէս զի դարձցի ՚ի վե-
րայ Պարսից և արասցէ նոցա վրէժխնդրու-
թիւնս, և թագաւորին Յունաց, վասն զի
լցաւ ամենայն Պարսիկք ՚ի գերութենէ զо-
բացն Պեռեւինին։

ՃԺԴ. Յայսմ ամի շարժեալ եղեւ ամե-
նայն Լգիպտոս, և զօրաժողով լեալ ահա-
գին բազմութեամբ և գան ՚ի վերայ սուրբ
քաղաքին Յերուսաղէմ։ Յայնժամ թագա-
ւորն Յերուսաղէմայ Պաղտինն ելեալ սակաւ
զօրօք ՚ի պատերազմ ընդդէմ նոցա, և արա-
բին փախստական զզօրսն Ֆռանկաց. փա-
խեաւ Պաղտինն և անկանէր Յերուսաղէմ։

Եւ յայնմ աւուր սպանաւ կոմն Տըլքոյ Կուլելմն Սանձաւէլ[219]. և Թագաւորն Պաղտին անկանէր ի Պալպաք քաղաք, և անտի գընաց Այշրուսազէմ։ Եւ այլազգիքն մեծաւ յաղթութեամբ դարձան ի քաղաքն իւրեանց Ասկալոն։

ՃԽԵ. Դարձեալ ի թուականութեանն Հայոց ՃԾԱ (1102—1103). եղեւ չիոմութիւն մեծ և սհաւոր խաւնակութիւն հաւատոց։ Վասն զի ի սուրբ Օտոկէն եղեն մարդիկ տասն ազգ հաւատացելոց, և Հայք և Ասորիք միայն մնացին հաստատեալք. իսկ Հոռոմք և Ֆռանկք եղեն հետեւողք չար սերմանցն զոր սերմանեաց պիղծ հերետիկոսն Իռիան որ արկանէր զտօմարն (զգաւռիին) ի յապրիլն հինգ, և պրու�մն լուսնին հանդիպեցուցանէր ի տօնն Պազարու և յաւուր շաբաթու, զոր Հայք և Ասորիք և Եբրայեցիք արկանէին ի յապրիլն վեց, հանդիպեցուցանէին տօնի Օտղկազարդին։ Այդ զայս տօմար պատճենիս կորեալ խափանեալ էր փիլիսոփայն Իռիան, որ էր այր Հռոմայեցի. վասն զի յորժամ շարագրեցին զտօմար պատճենիցն ինն և տասնեկի բոլորին, զնա ի մոռ ոչ կոչեցին այլ դասք իմաստասիրացն. և յաղագս այսորիկ մնասցեալ նորա յոյժ ընդ

նոսա, և եկեալ գազան առեալ զգրեանքն՝ և զվեցն հինգ արար, և զվերջինսն առաջինքս, որ հանապազ ածէ ի մաղրութիւն զասելոց յամենայն ինիսուն և հինգ ամ։ Իսարդ այսպիսի պատճառանօք Յոյնք և Հռոմայեցիք լինին մաղրեալք յամենայն ինիսուն և հինգ ամ։ Օ՝այս այսպէս կարդադրեաց Իսիսն՝ ի յապրին Հռոմայեցւոց. վասն այսր պատճառի մեծ մաքառումն եղեւ ընդ Յոյնք և ընդ Հայք. սակայն ապրն Ֆառանկաց ոչ ինչ ունէին հոգս շփոթմանալ ընդ Հայք. բայց միայն Յոյնք ունէին մեծ վէճ և մաքառումն ընդ Հայք վասն սուրբ Օ՝ատիին։ Իսարդ Պոտիք և ամենայն Վիւլիկէ և Լեռնհայ ունէին սաստիկ պատերազմ ընդ Յոյնք վասն հաւատոյ, զի ջանային դարձուցանել յիւրեանց անհաստատ տօմարն զՀայք, և այսպիսի ջանիւք և աշխատութեամբ (վիշտս) հատուցանէին ազգին Հայոց, և ոչ կարացին շարժել զնոսա։ Սակայն Պորիք որք Լեռնհայ էին, աւհաբեկ լինէին. դարձան ի կողմն Յունաց և ուրացան զդաշինսն զոր ունէին ընդ Հայք։

Իսարդ յառաջագոյն եղեւ այսպիսի մաղրութիւն Յունաց ի սուրբ Օ՝ատիին Աշրուսաղէմ, ոչ լինէր վառումն կանթեղաց. և յայնժամ այլազգին զամենայն հաւատա-

ցեալը աղօթականացն սրով կոտորեաց ՝ի յաւուրս Վասլին, և յամի ՆԾԵ (1006–1007) թուականին։ Յետ սոցա յայսմ ժամանակս թեառնս եղեւ երկրորդ մնջոյնն Յունաց։ Յայնժամ գաւաք քահանայիցն որք էին ՝ի քաղաքն Լուսոյ, ազգ արարին թղթով տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի որ բնակեալ էր ՝ի Սեւաւ լեառն, ՝ի յանուանի անապատն որ կոչի Արիգի. և նա գրով ձեռին իւրոյ հաստատեաց զնոսա անշարժ կալ ՝ի հաւատս ուղղափառութեանն։ Յետ էր պատճէն թղթոյն այսպէս՝ զոր գրեաց ՝ի Լուսոյ։

«Գրիգորոսի ճշմարիտ սիրտդացդ և դաւանողացդ սրբոյ Երրորդութեան, քահանայիցդ և իշխանացդ և այլ ամենայն հաւատացեալ ժողովրդոցդ՝ ողջոյն։ Յետ ամենայն արժանաւոր սիրոյ օրհնութիւն եկեսցէ ձեզ ՝ի Լուսաւորչի սուրբ Աթոռոյս։

«Յետ արդ զաստուածասիրութեան զգիրս ձեր ընթերցաք, և զենդրեալդ ձեր լուաք և զաւանդական հաստատեցաք զոր ինչ խորհուրդ կայր ՝ի գրեալն, զոր մեծապէս գոհութիւնս մանաւանդ մատուցաք Աստուծոյ առաքելական բանիւքն որ առ աշակերտեալն, եթէ «Յորժամ լեսցէ զաբեղաշտութեան

«հաւատս ձեր որ ի Տէր, խնդամբ գոհու-
«թեամբ ի վերայ ամենայնի»։ Որ և ինքն
բանն Աստուած, որ եկն ի հօրէ և հրաւի-
րեաց զմարդիկ ի փառս իւրոյ բարձրութեա-
նէն և աստուածութեան, որ և զմեզ զարդ-
կարացեալքս ընկալաւ գթութեամբն իւրով
և զօրութիւն շնորհեաց, որոց անզօր էին
մարդիկ ընդդիմանալ անհրեւոյթ սրկածից
փորձութեանցն։ Նա և ինքն Տէր Յիսուս
Քրիստոս օգնութիւնս և զօրութիւնս տա-
ցէ ձեզ ամենայնի, և իմաստութիւն պարգ-
եւեսցէ կալ առաջի իմաստնոց և հզօրաց
տալ զպատասխանիսն ըստ անսուտ իւրոյ
հրամանին, եթէ «Մի հոգայք թէ որպէս
«կամ զինչ խօսիցիք, զի տացէ ձեզ ի ժամուն
«յայնմիկ զինչ խօսեսջիք»։ Գիտէ ինքն ա-
մենագէտն ողորմութեամբն իւրով և ամե-
նաքնին զօրութեամբն իւրով, որ թէպէտ
և առ նա՝ որ ի գոյութիւն էած յանգոյու-
թենէ զմեզ, և ամենայն երախտեաց պատ-
ուեաց և բարձրացոյց որպէս ի հնումն գոյ-
բայէլ, և արդ ահա առ նա մեք հանապազ
մեղանչեմք ազգաց և ժողովրդականաց, խոր-
հրդովք և բանիւք, գիտութեամբ և անգի-
տութեամբ ի ժամանակեայ կենցաղումս
մեր։ Իւ արդ ահա հաւատովքս ես, և

հաւատքս իմ՝ ամենեքեան ոչ թագաւորին եմք մեղուցեալ և ոչ իշխանի, ոչ զօրաց և ոչ զօրապետաց, ոչ առաջնորդաց և ոչ հօտից իւրեանց. այլ ամենեցուն հնազանդեալ եմք և զանձինս ի ծառայութեան կացուցեալ, և ըստ առաքելական հրամանին իւրաքանչիւրոցն հատուցեալ որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն, և որում զպատիւ՝ զպատիւն. և զկայսերն կայսեր՝ և զԱստուծոյն Աստուծոյ շնորհեալ, և ոչ ումեք պարտականք մնացեալք և ոչ չարի չար հատուցեալ։ Եւ արդ ահա եթէ այսու արդարութեամբս ընդ անիրաւութեան դատիք յումեքէ իբրեւ զնաւազունք և զփոքունք, և ի վերայ ճշմարիտ օրինացն փոխանակ երախտեացն պատժոց արժանանամք, եւ արդ մի երկնչիք և մի զանգիւռեք, վասն զի ահա ժամանակս մերձեալ է փրկութեան, և գալուստ Տեառն մերձ է։ Եւ արդ բազում բանք մխիթարութեան ունիմք մարգարէիւք վասն հանդերձելոցն և զՏեառնէ Աստուծոյ մերոյ և զսրբոց նորա, և արդ ահա այսմ ամենայնի պարտ է կատարիլ և լինել, վասն զի երեւեսցին ճշմարտեալքն։ Եւ արդ թէպէտ և ես խրբարեսոյս տամ ձեզ և քաջալերեմ համբերել

ամենայն իմաստութեամբ, և ոչ իբրեւ վաստասրտեալ հովիւ սրտաքոյ մնամ կրիցն, այլ կամաւորութեամբ եւս մահակից ձեզ գըտանիցիմ յամենայն գործս և ի տեսակս տանջանաց։ Այլ ոչ օտարանամ, կամ յուրատոր կամ. եթէ բանիւք և կամ քննութեամբ էր մեզ նեզութիւնս, և կամ հարցափորձութեամբ, տէր պատարատ կամք յամենայն իւրս տալ պատասխանի զոր ինչ և հարցանիցեն, բայց ի պատեհ և ի դիպող ժամու. և եթէ տանջանօք է և կամ բռնութեամբ, և ոչ յայնմանէ յուրատոր կամք։ Այլ գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ, որ մինչև ցայժմ յանեատուած հեթանոսաց տերանցն (220) զանգիտէաք և դատէաք, և այժմ ի քրիստոնէիցդ այնպէս։ Բայց դուք մի վհատիք, կարող է Աստուած ընդ փորձութեանցն և զելն առնել՝ զի համբերել կարասցուք. սա կայն որչափ ի կարի մեր է, ամենեքեան որպէս զքաջ զինուորս Քրիստոսի մարտիք ըզբարիսք նահատակութիւնն Յիսուսի ի վերայ ճշմարտութեանն։ Վասն է ինձ Տէր Աստուած իմ որով կամք առաջի նորա, վասն զի չեմք ի սխալումն ինչ, և ոչ եմք ի թիւրութիւն հաւատոց, և կամ յանդգնաբար իրաւ զմեզ կարծեմք, վասն զի այդ

գործ անզգամաց է և անմտաց, այլ հնարհաս-
քին Աստուծոյ և սրբոց լուսաւորչացն մե-
ծաց առաքելոցդ զարքունականն և զնշխարիս
տրն ունիմք զճանապարհ որ ի Բրիտանան
Յիսուս, և ոչ յաջ խոտորելով զմեզ և ոչ
յահեակ, և ի պատուիրանացն Աստուծոյ
ոչ օտարացեալք. և ոչ յարուցեալ ընդ ա-
ռաւօտն և զհետ եղեալ մոլորութեանց (221),
և կամ բարձրագիմ երեսաք հպարտացեալ
և ամբարտաւանեցեալ իբրեւ զՀռոմ ազ-
գին և զայլ ոմանս, որոց և աւելորդ է յիշա-
տակել զանուանս նոցա։ Այլ արդ եթէ խաբ-
դախութեամբ ինչ ունիմք զթերութիւն հա-
ւատոց (222); վասն էր չարչարիմք իբրեւ ըզ-
պատժապարտս և ոչ ունիմք հանգիստ, այլ
տագնապաւ շրջիմք ընդ ծով և ընդ ցամաք,
որպէս և Պօղոս պատմէ զինքեանէ, ընդ որ ա-
սէր. “Ընդ էր հանապազ մեռանիմք, և ի
“բանտ և ի կապանս մտանեմք. և ի գազա-
“նամարտի լեալ էի, և յանդունդս տառա-
“պեցայց”. և եթէ անտի յուսով էր վասն
Բրիտանոսի. զնոյն և ես ասեմ, եթէ յայս
ամենայն շրջագայութիւնս և ի փախուստս
և ի նեղութիւնս և յանձուկս ինձ տարա-
պարտ է անցեալ, եթէ վասն պարսաւելի
հաւատոյս զայս գործեցի։ Այլ քառասուն

ամ կամ խնամ Հայրապետութեամբ (223), և զիմ Հայրենի տուն 'ի խաղաղութեան ժամանակին Թողի և յայս փոխեցայ, ապա ուրեմն խաբեալ ես միայն եղէ. բայց յուսացին Աստուծոյ եմ և վկայութեամբ տուրբ գրոցս, վասն զի ուղղափառ և զանթերի ունիմ ըգհաւատն։ Արդ ամենեքեան որ խնամ Հայրապետութեանս և հաւատոցս կցորդ էք, մի թուլութեամբ և աչառանօք պատկառէք և կամ երկնչիք, և զԱստուած վանձառէք վասն անուան կենդանոյս. վասն զի ահա այս է ժամանակ բնտիր լինելոյ, և առնուլ պտակ 'ի Քրիստոսէ. և երաշխաւոր ես եմ ձեզ առ Քրիստոս, վասն զի որ զսուրբ հարցն (224) ցանկն ոչ պատուէ, ընդ սուրբսն պտակեսցի. ապա եթէ որ զմարդկան փառսն առաւել սիրեսցէ քան զԱստուծոյ, 'ի դատաստանի որդւոյն Աստուծոյ ընդ ուրացողսն դասցի, որք զՔրիստոս Աստուած ոչ խոստովանեցան, 'ի մեր հաւատոցս և յօրհնութենէս անմնան եղցէ. իսկ հաւատացեալքն 'ի հաւատս մեր օրհնեալ լիցին յերկնաւորացն և յերկրաւորացս. Աստուծոյ և 'ի մէնջ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն »։

Իսկ յորժամ հասաւ թուղթս այս Մեսրոպայ, հաստատեցան 'ի վերայ ճշմարտաս-

թեանն։ Իսկ յորժամ եղեւ Օմտիին, Երուսաղէմացիքն կեղծաւորութեամբ վառեցին զլոյսն եւ ոչ ճշմարտութեամբ, և խաբեցին զազգն իւրեանց, և յօտար հրոյ վառեցին զստուածացին զկանթեղն. այլ ստուգապէս վառեցաւ ի Հայոց Օմտիին, որ և վիպեցին ամենայն հաւատացեալք որք էին ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. և յայնժամ եղեն ամօթալից ամենայն ազգն Յունաց, վասն զի կատարեցին զՕմտիին յաւուր Ծաղկազարդին։

ՃԽԶ. Յայսմ ամի գարձեալ ժողով արար Թագաւորն Եգիպտոսի և Դամիկայ, և գան ի վերայ սուրբ քաղաքին Երուսաղէմի անհամար բազմութեամբ։ Եւ Թագաւորն Երուսաղէմի Պաղտին (225), եղեալ գնայր ընդդէմ նոցա ի պատերազմ. և Եգիպտացիքն արարին զՖռանկն փախստականս ստուգապէս պատերազմաւ։ Եւ ի նոյն ժամուն եղանէր ի ծովէն բազում զօրք Ֆռանկաց, և յաղթեցին զօրացն Եգիպտացւոց, և արարին զնոսա հալածականս ստատիկ կոտորածով։ Եւ յայսմ ժամուս գայր Թագաւորն Երուսաղէմի Պաղտին ի քաղաքն իւր, և Տաճիկ ոմն Ամիրայ (226) Եթսիպացի՝ նեղաւեալ կայր գաղտագաբար ի գարանի ընդ թը-

փոյլ միոյլ, և հարեալ զլեռագաւառն Հրուսաղէմայ նիգակովն ի վերայ քովիցն, և յայնժամ Հեթանոսպայքն սպանեալ։ Բայց խոց մարմնոյն անբժշկելի մնաց մինչեւ յօր մահուան իւրոյ. և յայնժամ լցաւ Հրուսաղէմ ագոյլ և տրտմութեամբ ի վերայ թագաւորին իւրեանց։ Այս եղեւ վասն անիրաւ կատարման սուրբ Օտակին, վասն զի նոյն յանդգնութիւնն յանդգնեցան ազգն Յունաց յաւուրս Վասլի կայսեր, և ոչ վառեցաւ լցան, և այլազգին կոտորեաց զամենայն աղօթաւորսն ի մէջ սրբոյ Յարութեանն ի դուռն գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

ՃԺԲ. Դարձեալ ի բարձրանալ Հայոց թուականութեանս ՇԾԲ (1103–1104), եղեւ մեծատատաս բարկութիւն Աստուծոյ ի ձեռն սատանի՝ ի քաղաքն Ուռհայ յաւուրս հինգշաբաթի փոքրկանն։ Որպէս պատմէ վասն առաջին ջրհեղեղին, այնպիսի նեմանութեամբ տրտմեալ ժողովեցաւ օդն վերին և ամպախաղաց կայծակաշունչ ճայթմամբ շարժեալ գղրդմամբ երեսաք երկնից, որպէս կարծեալ ամենց եթէ ետաս օր կատարածի քաղաքիս։ Վասն զի հեղաւ յերկնից ահաւոր անձրեւ և կարկտախառն ի յառաւօտ

տու ժամուն. և ի ծագել արեգականն յա-
բեաւ և հեղեալն յարեւմտից կողմանէ եւ
գայր դարձ ի դար, և եհար զպարիսպ քա-
ղաքին և պատուեաց և ելից զմէջ քաղա-
քին, և արար աւեր զմնան քաղաքին. փոյց
բազում տունկ և սատակեաց բազում կեն-
դանիս, բայց մարդ ոչ անկաւ յորոգայթ,
փան զի լուսով եղեւ պատուհան, փա-
խեան ի չարէ։

ՃԺԸ. Յայսմ ամի գնեցին զկոման Ֆռան-
կաց Պեմունդն ի ձեռաց Դանիշմանին հա-
բիւր հազար դահեկան, միջնորդութեամբ
և օգնութեամբ մեծ իշխանին Հայոց որ
ասի Դաղ Վասիլ. և սորա տուեալ տան
հազար դահեկան ի գինն նորա։ Իսկ կոման
Անտիոքայ Տանդրի ոչ տայր ի գինս Պե-
մունդին և ոչ մի ինչ։ Այլ յայնժամ ժողովե-
ցան ամենայն գանձն առ Վասիլն, և մեծաւ
իշխանութեամբ ջան եդեալ և տայր բե-
բել զնա ի սահմանս աշխարհին իւրոյ, և
տայր զգանձն հարիւր հազար դահեկան. և
առեալ զՊեմունդն առ իւր, և եղանէր ընդ
առաջ նորա. և մեծաւ պատուով հանդու-
ցանէր զնա ի տան իւրում, և բազում ընդ-
ծայս տայր Պեմնդին և համբերարայն (227),
որ ընդ ամենայն լինէր քան հազար դահե-

կան։ Եւ զկնիկ աւուրցն գնացեալ Պեմունդն ի քաղաքն իւր Անտիոք, և մեծաւ երդմամբ եղև որդեգիր Պաղ Վասլին Հայոց իշխանին. և զՄիջարդն զբաւորոցին Պեմունդին երեսս (եւս) Դանիշմանն տուրս Ալէքսին՝ Յունաց թագաւորին ի ձեռն բաղում գանձուց։

ՃԽԹ. Յայսմ ամի զօրաժողով ապար կոմսն Ուռհայոյ Պաղտին և գնաց ի վերայ Թուրքին ի գաւառն Ցաճկաց ի սահմանս Սելջունայ (228), և արար կոտորած զնոսա, և կալաւ զամիրայն նոցա որ ասի Ուլլա-տալաբ, և զկանայս և զորդիս նոցա վարէր ի գերութիւն, և ած ի քաղաքն Ուռհայ և անհամար հօտս ոչխարաց ընդ նմա իբրեւ հազարաց, և զձիոց և զպարեաց և զուրուց, զամենայն միաբարձ արկին ի քաղաքն Ուռհայ։

ՃԶ. Յայսմ ամի իջեալ հայրապետն Հայոց տէր Բարսեղն ի քաղաքէն Անւոյ ամենայն պաշտօնեութիւնք իւրովք և ազատօք, եպիսկոպոսօք և քահանայիւք և գայր ի քաղաքն Ուռհայ. և կոմսն Ֆռանկաց Պաղտին նոյն մեծարեաց զնա մեծաւ պատուով որպէս վայել է հայրապետի. և գիւղս և տուրս պարգեւէր նմա, և յոյժ սիրեաց զհայրապետն Հայոց։

ՃՁԱ. Յայսմ ամի մեռաւ կաթուղիկոսն Աղուանից տէր Յովհաննէս, և կաթուղիկոսն Հայոց արար Ժողովս զեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին, և ձեռնադրեցին զեղբայրն տէր Յովհաննէսին յաթոռ տանն Աղուանից ի քաղաքն որ ասի Գանձակ. զոր և յետոյ անարժան գտին զնա աթոռոյ հայրապետութեանն, և ընդ բանադրօք փակեաց զնա տէր Խաչատուր կաթուղիկոսն Հայոց, և յաթոռոյ և ի պատուոյ հայրապետութեանն ընկիցին արտաքս զնա. զայս ամարին վասն խոտոր վարուց իւրոց։

ՃՁԲ. Ի թուականութեանս Հայոց ՇԾԳ (1104—1105) զօրաժողով արարին կոմսն Լուսաւոր Պաղտին և Զօղլին, և գնացին ի վերայ քաղաքին որ կոչի Խառան. և առաքեաց Ալ-Նտիոք և կոչեաց զմեծ կոմսն Յռանկաց զՊեմունդն և զՏանգրի, և զայլ ամենայն զօրսն Հայոց, և ժողովեցան առ նա ժողով մեծ, և իջան ի վերայ Խառնայ, և արարին սաստիկ խաչ, և նեղութիւն մեծ հասաւ քաղաքին ի հացէ։ Եւ ոմն ի Յռանկաց արար գործ՝ ընդ որ ոչ հաճեցաւ Աստուած. բացեալ զմէջ հացին և աղբեաց ի նմա, և տարեալ դնէր հանդէպ դրան քաղաքին. և տեսեալ քաղաքացեացն՝ առ վտանգին յար-

ձակեցաւ մի ամն և առ զնա զի կերիցէ. և տեսեալ զաղտեղի գործն զարմացաւ. և տա-
բեալ ցուցանէր քաղաքացեացն Եւ տեսեալ արանց խմաստնոց, ասէն թէ՝ «Ոչ հա մեծ
գործ որ ոչ համբերէ Աստուած այս գոր-
ծոյս. և ոչ տայ նոցա յաղթութիւն. վասն
զի հացս յոյս արար մեզս. զոր ոչ լուաք
այսպիսի մեղս յերկրի»։ Եւ յայնժամ զօրքն
Պարսից ահագին բազմութեամբ գային 'ի
վերայ նոցա, Ղնիրմիշ (229) ամիրայն Մօսլայ և
Սաբանն որդի Արդուխին։ Եւ լուեալ զայս
իշխանքն Ֆռանկաց և գնացին մեծաւ ու-
րախութեամբ 'ի վերայ Պարսից զօրացն, և
երկու օրապնացս հեռացեալ 'ի քաղաքէն
որ կոչի Աշչուտ (230)։ Եւ Ռուհայայ կոմսն
և Ղօսլինն հաստատացեալ ընդ միմոս իւ-
րեանց, և զՊեմոնդն և զՏանկրի հեռա-
գոյնս կացուցին 'ի զօրաց իւրեանց, և ասա-
ցին՝ եթէ մեք յառաջ դիպեսցուք և առ-
ցուք անուն յաղթութեան։ Եւ եղեւ 'ի
հանդիպել Պաղանին և Ղօսլնին զօրաց Թուրք-
քին, լինէր ահաւոր և սաստիկ պատերազմ
յօտար աշխարհին Տաճկաց. և յայնժամ
յաղթեաց զօրքն Պարսից զօրաց Ֆռանկաց,
և զաստուածասաստ բարկութիւնն ածին 'ի
վերայ քրիստոնէից. վասն զի լցաւ ամենայն

երկիր արեամբ և դիակամբք աւելի քան ե-
ւրիս բիւրս հաւատացելոց, և հատաւ մարդ
ի գաւառաց։ Իւր կալան զՄՈՒՌՀայոց կոմսն
զՊաղտին և զՊՕսլինն, և տարան զնոսա ի
գերութիւն, և ապէք կացին ամբողջ զօրաք իւ-
բեանց. զբռնաւորսն առին և անկանէ-
ին փոխստական ՅՈՒՌՀայ քաղաք։

Իւր էր սուգ մեծ կառարածի ի քաղաք-
քին ՈՒՌՀայոց. վասն զի Խառանեցիք կա-
լան զառաջն մնացեալ զօրացն, և փակեցին
զնեառն և զդաշտն, և զամենայն փոխստա-
կանսն սպանանէին առ հասարակ արս տասն
հազար. և ածին մեծ անցու�մն հաւատացե-
ցոցն Քրիստոսի առաւել քան զԹուրքն. և
բազում կսկիծ ըստ և աղէտ Թախճանաց
եղեւ ՅՈՒՌՀայ. որ և առհասարակ ողբու-
մին արտասուաց էր յաւուր յայնմիկ ի վե-
րայ քաղաքին ՈՒՌՀայոց, և ընդ ամենայն
աշխարհն քրիստոնէից էր մեծ սուգ։ Իւր
յայնժամ տարան զկոմսն զՊաղտինն ի ՄՕՍԼ
քաղաք Տաճկաց, և զՊՕսլինն տարան ի
Հանքեւ (251) առ ՍՈՒԳՄԱՆ որդի ԱՐԴՈՒ-
խին, և ՌՈՒԿՐՄԻՇն տարաւ զՊաղտինն։

Իսկ ՊԵՄՈՒՆԴՆ խորհեցաւ գնալ յաշ-
խարհն Յունանկաց ի խնդիր զօրաց, և տայր
զՈՒՌՀայ և զՆՇտիրք ի քուրորդին իւր Տան-

գրի։ Եւ յորժամ հասաւ Պեմուենդն ի յաշխարհն Դուանկայ, կին մն էր յոյժ մեծատուն, որ էր լեալ կին Սոնիսան Պինոլին (352) կոմսին Դուանկայ, և մեծազգի բնակալ։ Սորա բռնեալ զՊեմուենդն առ իւր և ասէր թէ՝ «Արա զիս քեզ կին, վասն զի այր իմ մեռաւ, և երկիրս և զօրք հեծելոց անտէր զոչին»։ Եւ Պեմուենդն ոչ առնոյր յանձն ասելով. «Եւ բաղում երդմամբ վասն զօրաց եկի այսրք, վասն զի շուտով երթիցուք յօգնութիւն մնացեալ զօրացն քրիստոնէից որք կան ի մէջ անօրինաց ազգացն Պարսից»։ Իսկ կինն հարկէր զնա մեծաւ ուժգնութեամբ, և նա ոչ լսէր նմա. յայնժամ երկաթի կապանօք արկանէր զնա ի բանտ. և կացեալ զաւուրս ինչ ի բանտի. հաւանեալ լինէր և էառ ըզնա իւր կին, և ծնաւ ի նմանէ երկու որդի. և զկնի հինգ ամի մեռանէր մեծ կոմսն Դուանկայ Պեմուենդն ի յաշխարհն իւր. և ոչ ժամանեաց ելանել յայսկոյս աշխարհի։

ՃՁԳ. Յայսմ ամի մեռաւ Դանիշմանն մեծ ամիրայն Հոռոմոց աշխարհին որ լեալ (էր) յազգէն Հայոց, այր բարի և շինող աշխարհի, և էր յոյժ ոլորմած ի վերայ հաւատացելոց Քրիստոսի, և եղեւ սուգ մեծ ի վերայ քրիստոնէից որք էին ընդ ձեռամբ

նորա։ Յե մնաց իւր երկոտասան որդի, և կալաւ զաշխարհն աւագ որդին որ ասի Խաղ, և զայլ եղբարսն իւր սպանանէր գաղտաբար։

ՃԶԴ. Յայսմ ամի մեռաւ Սուգման որդի Արդուխին, այն որ ունէր յտուաջագոյն զտուրբ քաղաքն Յերուսաղէմ. որ և յայտնի երեւի Նշան Արդուխին ի տուրբ Յարուն Թեանն Աստուծոյ, զի երեք նեռաք Տարեալ կայ նորա ի ձեղունն եկեղեցւոյն մինչեւ ցայսօր։ Մեռաւ և անդ թաղեցաւ Յերուսաղէմ ի ճանապարհի Սոզմանի տաճարին։ Իսկ որդի նորա Սուգմանն էր չար և ոբիւնահեղ գազան։ Որա ժողով աբարեալ ըզզօրսն Պարսից և գայ յօգնութիւն քաղաքին Տուտլոյ ի վերայ զօրայ Ֆռանկաց, և ի ճանապարհին մեռեալ լինէր, և զօրքն իւր դարձան փախստական և գնացին յաշխարհն իւրեանց։

ՃԶԵ. Յայսմ ամի մեռաւ Թագաւորն Պարսից Պարկիարուխն որդի Մելիք-շահին՝ որդւոյ Աբասլանայ, և նստաւ յաթոռ թագաւորութեանն Պարսից եղբայր նորա որ ասի Տափար ի Խիշաս կնոջէն, այն որ դեղեաց և եսպան զտիեզերակալ զՄելիք-շահն ի Պաղտատ քաղաք։

ՃԶԶ. Յայսմ ամի առաւ Մարաշ քաղաք ի Յունաց, և եղաւ իշխանաց իշխանն ի Նմանէ, և տայ զքաղաքն ի Հօսլենն, և ըզ պատկեր սրբոյ Աստուածածնին ծախեաց ընդ բազում դիւս ոսկւոյ մեծ իշխանին Հայոց Թորոսի՝ որդւոյ Կոստանդեայ՝ որդւոյ Ռուբէնեայ. և ինքն գնաց ի Կոստանդինուպոլիս։

ՃԶԲ. Դարձեալ ի թուականութեանէ Հայոց ՇԾԴ (1105—1106) լինէր փոխումն սուրբ հայրապետին տէր Գրիգորիսի Համնանուէ տէր Վահրամին՝ որդի Գրիգորոյ՝ որդւոյ Վասակայ, ի Գաղիտունեաց ազգէ։ Յայսմ ամի եղեւ անեկեալ սիւնն Հաւատոյ Հայաստանեայց և պարիսպ սրբոյ եկեղեցւոյ տանն արեւելից. փոխն զի սա եղեւ սքանչելագործ ի մէջ Հայաստանեայց և պայծառ առաքինութեամբ կայր յամենայն ճգնողական վարս, և էր ժուժկալ պահօք և աղօթիւք, և կայր ի պաշտօնն Աստուծոյ անդադար աղաղմսերգութեամբ։ Սա նորոգեաց զկարգ հաւատոյ Հայաստանեայց և անհանգիստ թարգմանութեան էր պարապեալ, և զամենայն պակասութիւն կատարեցեալն Աստուծոյ առ մեզ կարգաւ կատարեալ զարդարեաց ի Յունաց և Ասորւոց թարգմա-

նուիթենք. հոգս տարեալ անդադար խորհրդով, և ամենայն պայծառութեամբ սուրբ գրոց ելից զեկեղեցի Հայաստանեայցս։ Իսկ էր ինքն հեզ բարուք և խոնարհ սրտիւ. և ի վերայ այսր ամենայնի էր յոյժ աստուածասէր և պատուիրանապահ, և յամենայն կողմանց կարող էր օգնել հօտին Քրիստոսի. վասն զի էր բնեալ ի բուն կորովի գրոց Հնոցհայոց։ Իսկ էր սա նմանեալ առաքելի իմաստնոյ Հայոց՝ Սովսիսի ուսիմ ասել և Դաւթի, վասն զի ունէր գլուխս ամենայնի, և լեզուս հրեղէն ներկեալ, և գիւրաբարբառոյր զծածկոյս յերեսաց հին և նոր կտակարանացն Աստուծոյ, և բանայր զդուռն աստուածաբուխս աղբիւրացն և զհաստատումն սրբոյ Հոգւոյն զեղայր ի լսելիս հաւատացեալ ժողովրդոցն։ Սա եղեւ օրինակ դասուց կրօնաւորաց. ամենայն քաջակիրթ առաքինութեամբ յառաջացեալ էր։ Իսկ կացեալ սոքա յամենայն հայրապետութեան ամս քառասուն, և ի ժամանակի մահուանն հանդիպ պեցաւ առ մեծ իշխանին Հայոց՝ որ ասի Դաւ Վասիլ, որ էր այր հզօր և պատերազմող. վասն զի առ սա եղեւ ժողովեալ մնացեալ գունդն Հայոց։

Իսկ երեւեալ պատանի ոմն Գրիգորէս

անուն՝ (որ) քուրջ որդւոյ որդի էր տեա-
ւրն Վասիլ, զնա յատենի կացուցանէր
տէր Գրիգորէս և անուանէր զնա կաթու-
ղիկոս տանն Հայոց զկնի մահուան տեառն
Բարսղի. և միջնորդ կացուցանէր զիշխանն
Հայոց զՎասիլն՝ զտէրն Թենոյ, և զամե-
նայն աշխարհն Նորա։ Իսկ տէր Բարսեղ հը-
նազանդ լեալ ամենայն հրամանաց տէր
Գրիգորիսի, և յայնմ օրէ էառ առ ինքն
զանուանեալ կաթուղիկոսն զԳրիգորէս զորդի
Աղիրատին։ Իսկ եղեւ ի տրէ ամիս,
յառաջին շաբաթն ամռան աղուհացին,
յաւուր շաբաթու վախճանեցաւ սուրբ հայ-
րապետն տէր Գրիգորէս, և թաղեցաւ մե-
ծաւ հանդիսիւ ի Կարմիր վանքն մերձ ի
Թեսուն. և տէր Յոհաննես հայր վանացն
արար ժողով ի վերայ գերեզմանին Նորա,
կրօնաւորաց և քահանայից. և հայրապետա-
կան պատուով յուղարկեաց զնա ընդ սուրբ-
սին. և Իշխանն Հայոց Վասիլ և այլ ազա-
ռագունդք Հայոց արարին կոծ մեծ ի վե-
րայ Նորա, և դառնակոծ արտասուօք լացին
առհասարակ ի վերայ Նորա, վասն զի զոր-
կեալ եղեն յայնպիսի սուրբ հայրապետէն,
և Նովաւ յիշեալ լացին տուն Հայոց, և
լային զանտիրանալն իւրեանց ի յօտար աշ-

խարհն 'և զելանել 'ի հայրենի տանէն իւրեանց։

ՃԶԸ. Յայսմ ամի մեռաւ սքանչելագործն և մեծ ճգնաւոր Մարկոս միայնակեացն, որ զամս վեցիսուն և հինգ կայր 'ի խոտաճարակութեան վարս. վասն զի զհաց՝ և ոչինչ նման հացի ոչ ճաշակեաց 'ի կրօնաւորութեան իւրում. և սա իսկ ունէր ըղձս տեսողութեան հոգի սրբոց մարգարէիցն, և էր բաղմաց վկայեալ, վասն զի յամենայն աւուր տեսանէր նա զՀոգին սուրբ։ Էր էր բնակեալ 'ի յանջրդի լեառն մի 'ի Մոկաց գաւառին որ ասի Կոնգանակ, որ էր Սորի խորսինայքն՝ մերձ 'ի յաշխարհն Մարաշ քաղաքին։ Սա աղօթիւք իւրովք յերկուս տեղս ջուր ետան յայնմ սահմանին. սա իսկ մարգարէացաւ 'ի վերայ Յուանկաց յորժամ առին զսուրբ քաղաքն Երուսաղէմ, եթէ դարձեալ զօրանան աղգն Պարսից և գան սրով մինչեւ յեղը Ովկիանոս ծովուն. որ և տեսաք իսկ և ասացաք վասն քահանայից և վասն ժողովրդոց, եթէ Թուլանան 'ի հաւատոց, և բառնի աստուածապաշտութիւնն յաշխարհէ, նուազին հաւատք և փակին դրունք սուրբ եկեղեցւոյ, խաւարին 'ի գործոց բարեաց, մոռանան զպատուիրանս

սուրբ Աստուածածնին Քրիստոսի, Յովհաննէս մեղք և չարիք ի վերայ երկրի, և որդիք մարդկան իբրեւ ի Յով Յոբին ի մէջ մեղայ, մոռանան գործել զարդարութիւն ամենայն աղգք հաւատացելոց։ Այս սուրբ Ճգնաւորս մեռաւ յայսմ ամի և թաղեցաւ ի վանքն որ կոչի Կաստաղոն, մերձ ի յամուր բերդն որ ասի Պահկայ, ի Տօրոս լեառն։

ՃՁԹ. Յայսմ ամի Յոգով արարեալ Ն՝ Ը՝ կրօնիշ ամիրայն Մօսլայ և Մնձինայ, և գայր բաղուստ զօրաք և իջանէր ի դուռն քաղաքին Ուռհայոյ ի ժամանակս արտոցն։ Եւ էր զօրագլուխ զօրայ Ֆռանկացն՝ որ ասի Ոմէ Ջարդ, զոր էր կայսուցեալ պահապան քաղաքին Տանգրի, առեալ զզօրս քաղաքին, և անմտաբար հետեւակաք եղեալ ի պատերազմ ընդդէմ քաջ և պատերազմող զօրացն Պարսից։ Եւ տեսեալ նոցա զանպատրաստութիւն զօրացն Ֆռանկայ, բախեալ զնոսա և միաբան լցին ի խանդակ քաղաքին։ և միաբան ամենայն զօրքն Պարսից արարին կոտորածս արս իբրեւ չորս հարիւր և յիսուն։ և քերդեալ զամենեցուն զգլուխն և տայրան ի Պարսիկս։ և եղեւ սուգ մեծ յաւուրս յայնմիկ ի վերայ Ուռհայոյ, վասն զի յամենայն տուն սուգ և աղաղակ լալոյ կայր, և

արեամբ զարդարեալ էր ամենայն վայրք քա-
ղաքին Ուռհայոյ։ Եւ դարձեալ Ճգնիրմիշն
մեծաւ յաղթութեամբ յաշխարհն իւր։

ՃԶ. Յայսմ ամի մեռաւ կոմսն Ֆռանկաց
Օ՚ընճիլն, որ էր ի վերայ քաղաքին Տաա-
պօլայ, և տայր զարտաքին քաղաքն զոր շի-
նեաց և զզօրս իւր ի քաւորդին իւր ի
Պերթրանն (253), որ էր այր քաջ և պատե-
րազմող։ Այլ այս Օ՚ընճիլս (էր) որ առա-
ջաւ ետ զզէնն Բրիստասի Յուհնայ թագա-
ւորին Աղէքսին ի Կոստանդինուպօլիս։

ՃԶԱ. Յայսմ ամի ի քաղաքին որ կոչի
Պղատմա (Պլատիսմա) ի Ջ ահան գաւառի,
ահագին նեղութիւնս և վիշտս և վտանգս
կրեցին ի զօրացն Ֆռանկաց. և ի ատտիկ
բարկութենէ անտի խորհեցան չար հատու-
ցանել նոցա, և արարին զյոյսն իւրեանց
ի յայլազգին, և գաղտաբար հանեալ մարդ
և զդիմացի զհեծեալն ի նեբքս մոլորեալ
և առ իրար միաբանեցան ազգս Հայոց և
գնացին ի վերայ կլային, և ասէն ընդ զօ-
բագլուխն Ֆռանկաց, եթէ «Երի առ զաղ-
գրդ քո և գնա. Ասուած ընդ քեզ»։ Եւ
նորա լուեալ զայն սրամտեալ որպէս զչար
գազան, և եղեալ ի պատերազմ ի վերայ
քաղաքացեացն։ Յայնժամ քաղաքացիքն յաղ-

թեալ Նոցա և կոտորեցին զնոսա առ հասա-
րակ, որ ոչ մնաց 'ի Նոցանէ և ոչ մի. և Տէր
համարեցաւ Նոցա զայն արդարութիւն։ Եւ
յայնմ աւուր կոտորեցան իբրեւ ոգիք երեք
հարիւր վասն չարեացն զորս ածին 'ի վերայ
հաւատացելոցն. զի յաւեր դարձուցին զեր-
կիր և արարին անմարդաբնակ փշաբեր, և
խոպան եղեւ երկիր. առաջի Նոցա այգիք և
ծառք գօսացան, և երեսք դաշտաց տատասա-
կով լցեալ, և խցեալ յամաքեցան աղբիւրք։
Խարձին զսէր և զուրախութիւն 'ի սիրելեաց,
մատնութիւն և ատելութիւն տարածեցաւ
'ի վերայ երկրի։ Հատուցին զերթեւեկ ե-
կեղեցւոյ 'ի դառն չարեաց իւրեանց, և
փակեցան դրունք տաճարին Աստուծոյ. շի-
ջան կանթեղք 'ի լուսոյ, խափանեցան օրհ-
նութիւնք Աստուծոյ 'ի տաճարէն Տեառն։
Քահանայք մատնեցան 'ի չար ծառայութիւ-
նս, 'ի բանդս. սեղանք և աւազանք սուրբ
եկեղեցւոյ փլեալ կործանեցան, և ծած-
կեալ եղեն խորհուրդք խաչի, և բուրումն
խնկոց մոռացեալ եղեն, և ամենայն փառա-
բանութիւնք Աստուծոյ արգելեալ եղեն յա-
մենայն գաւառն Այպասթանն։ Եւ յայլ տե-
ղիս քակեցան ժամատեղք, պարհամարհեցան
քահանայքն։ Վերացաւ քենութիւն սուրբ

հաւատոց, հալածեցաւ Ճշմարտութիւնն, մերժեցաւ արդարութիւնն, որոշեցաւ աստուածպաշտութիւնն, և միաբան մոռացան զդատաստանն ահեղ ատենին Աստուծոյ։ Այս այսպէս գործեցաւ ի մոլի ազգէն Ցը-ռանկաց, վասն զի փառաւոր իշխանքն և գլխաւորքն նոցա հաստան, և իշխանութիւն նոցա յանարժան ձեռս անկաւ, եւ վասն այնորիկ յարուցին հալածանս և չարչարանս ի վերայ հաւատացելոց Քրիստոսի ի ձեռն սատանիկ արծաթասիրութեան իւրեանց։

ՃՂԲ. Յայսմ ամի փլաւ սուրբ Սոփի, որ էր ի քաղաքն Ուռհայ, ի յարեւմտից կողմանէն մեծ մասն եկեղեցւոյն ի վայր անկաւ։

ՃՂԳ. Յայսմ ամի երեւեալ ասաղ մի գիսաւոր՝ ահաւոր մեծ և զարմանալի, և սոսկալի երեւեալ տեսողացն՝ ի յարեւմտից կուսէն ի հարաւոյ կողմանէ, և գէսքն նորա ելից զմեծ մասն երկնից. և էր ի փետրվարի ամսոյ ժգ, և էր յերեկոյի Տեառնընդառաջին. և կացեալ զաւուրս յիսուն, և հիացումն գործէր տեսիլն նորա ամենայն արարածոց, վասն զի որպէս զգնացս գետոյ երեւեալ լինէր գէսք նորա։ Եւ ոչ զոք լուաւ զայսպիսի հրաշալի տեսիլ. և ասացին իմաս-

սուրնքն և հանճարեղքն՝ եթէ ոչ ստոյգ թագաւորի է, թագաւոր ծնանի յայսմ ամի, որ նա տիրէ ամենայն արարածոց, և հատանէ թագաւորութիւն նորա ի ծովէ մինչեւ ի ծով, որպէս զմեծն Աղէքսանդր Մակեդոնացին։

Յայսմ ամի եկին բազմութիւն զօրաց Մհրտպկաց աշխարհէն՝ տիրանալ Հայոց և ամենայն Տաճկաց աշխարհին. և էին իբրեւ քիւրս երեք։ Լոյս յայնժամ յարուցեալ քաջ զօրականն Պատուծայ Տանդրի կոմսն Պոսխուքայ, և գնացեալ ի վերայ նոցա և արար ըզնոսա փոխատակեալս, և անթիւ աւարաւ դարձաւ ի քաղաքն Պոսխք։

ՃԾԴ. Դարձեալ ի թուականութեանն Հայոց յամի ՃԾԵ (1106—1107), մեռաւ Ռշկիմիշ ամիրայն Մծղայ ի ձեռաց Ղ օրէ (254) ամիրային Պարսից. վասն զի եղեւ սատակիչ պատերազմ յերկոսանց կողմանց և յաղթեաց Ղ օրն զօրաց Ռշկիմիշին, և եհար ըզնա նեռաւ ի խոց մահու. և յետ սակաւ աւուրց սատակեալ լիներ չար գազանն այն, և զամենայն աշխարհն տայր ի ձեռն Խլիճ-Արսլան սուլտանին. տայր և զՊազտին ըզկոմսն ի ձեռն նորա՝ զկոմսն Ուռհայոյ, վասն զի նա ուներ զՊազտին իւր ծառայ։ Լոյս

արար ժողով զօրաց Իկոնիա–Սելան սուլտանն յարեւմտից և գնացեալ էառ զՍՕսլ և զՔղիբա և զամենայն աշխարհն Նորա։

ՃՂԵ. Յայսմ ամի յառաջ քան զայս գայր Իկոնիա–Սելանն բազում զօրօք ի վերայ քաղաքին Ուռհայայ, և կացեալ զաւուրս հինգ ի վերայ բազում պատերազմաւ, և ոչ հինգ կարաց առնել. յարուցեալ գնաց և էառ զՔղ քաղաքն որ կոչի Խատան, և արար զամենայն աշխարհն ընդ ձեռամբ իւրով, և դարձաւ յաշխարհն իւր։

ՃՂԶ. Իսկ ի թուականութեանն Հայոց յամի ՇԾԶ (1107–1108) եղեւ սաստիկ պատերազմ յաշխարհին Ֆռանգաց ի գաւառին ՍՕսլայ։ Իկոնիա–Սելան և Ջղլի ամիրայն բազում զօրօք հարան ընդ միմեանս, և եղեւ սաստիկ արեան հեղումն յերիկոյանց կողմանց. և յաղթեաց Ջղլի զօրացն սուլտանին, և մնացեալ զօրքն իւր փախստական գնացին ի քաղաքն Սալտենի։ Եւ սպանաւ ի մեծ պատերազմին սուլտանն Իկոնիա–Սելանն, և եղեւ մահ Նորա սուգ մեծ ի վերայ քրիստոնէից, զի էր այր բարի և քաղցր յամենայն կողմանց. և մնաց իւր չորս որդի, և տիրանային գաւառաց իւրոց։

ՃՂԷ. Յայսմ ամի զօրաժողով եղեալ աշ

գընն Պարսից երկոտասան հազար, և անցեալ ընդ Տօրոս լեառն որ կոչի Աշարգա (Ինազորբա), և արար աւար զամենայն երկիրն Թորոսի՝ որդւոյ Ռուբենայ, և գայր անցանէր ընդ դաշտն քաղաքին Մարաշայ. և անթիւ գերութեամբ հասանէր յերկիրն Դողվասլին, ի տեղն որ կոչի Խերդուս՝ ի սահմանս նուիրականն։ Եւ լուեալ զայս իշխանն Հայոց Վասիլն, զօրաժողով արարեալ զգունդն զօրացն Հայոց. և նոքա որպէս զարծիւս և կամ որպէս զկորիւն առիւծոյ հասանէին ի վերայ այլազգեացն. և արարին սաստիկ և սհաւոր պատերազմ, և մեծաւ յաղթութեամբ դարձուցին ըզթուրքն ի փախուստ, և միաբան սրով ըզհետ ընթացան և արարին անթիւ կոտորածս զնոսա, և կալան զքաղաքն ի նոցանէ և թափեցին զամենայն առ և զգերութիւնն։ Եւ դարձեալ իշխանն Հայոց Վասիլ, և զամենայն ազատագունդն Հայոց մեծաւ յաղթութեամբ և բազում ուրախութեամբ եկեալ ի քաղաքն իւր Ռեսուն, և տուեալ գոհութիւն Աստուծոյ որ ամօթ արար ըզթշնամին խաչին Քրիստոսի։

ՃՂԸ. Իսկ ի հասանել թուականութեանն Հայոց ՇԾԷ (1108–1109), դարձեալ

կրկնապատիկ ժողով արարին ազգն Պարսից և արս ընտիրս լինէին իբրեւ վեց հազար, և հանդերձ սուրբանոցն իւրեանց դային յաշխարհն Վասլին՝ Հայոց իշխանին, և քիչ նախնդիր լինէին վասն առաջին կոտորածին զոր կոտորեաց Վասիլ իշխանն ի Ներդուսն, և գաղանաբար հասանէին ի սահմանս քաղաքին որ կոչի Հասան-մսուր։ Լու էր ժամանակ հնձոցն արտեաց, և արարին կոտրած զվաստակաւորսն, և հանդերձ դերուն թեամբ դարձան և իջին առ բերդն որ ասի Հարթան։ Լու յորժամ լուաւ իշխանն Հայոց Գոռ Վասին զգալ այլազգեացն, հասանէր զորոք իւրովք ի վերայ նոցա հինգ հարիւր արամբք, և արարին սաստիկ պատերազմ քաջագունդն Հայոց, և ազատք ըզմիմեանս յորդորէին և յօժարարար քաջանային ընդդէմ թշուառքացն։ Ապաստաթ յաղատ ազգէ իւր զորոքն յարձակեալ ի վերայ այլազգեացն, և Պետրոս քեռին Գոռ Վասլին իւր աղատոքն արիանայր, և Վասիլ ոմն Տղայ անուն՝ մայրենեաց յաղատ ազգէ, և նա իւր զորոքն բեկանէր զԹեւս զորացն Պարսից. և Տիգրան այր հզօր և քաջ, որդի ազնուականի ի մեծամեծացն Հայոց, և արարին պատերազմ ահաւոր քա-

ջաղաքնդն Հայոց, և յաղթեցին զօրաց այ-
ազգեացն մեծաւ յաղթութեամբ, և արա-
բին սատիկ կոտորածս գնեսա, և կալան ըզ-
սուրսանն Հայոց (235) և զայլ բազում ի-
խանս Պարսից, և ի գերութիւն վարէր զնո-
սա առ ամենեսեսն։ Եւ դարձաւ իշխանն Հայոց
Վասին մեծաւ յաղթութեամբ և բազում
աւարաւ, և եկեալ ի քաղաքն իւր Ռեսուն,
և փրկեաց զամենայն գերութիւնն զոր ա-
ռին այլազգիքն. և եղեւ մեծ ուրախութիւն
հաւատացելոց։

ՃԺԹ. Յայսմ ամի Ղօսին գնեաց ի Ջ. ջլե
զկոմն Ռուհայոց զՊազոնին երեսուն հա-
զար դահեկան, և երեկ (եկն) առ իշխանն
Հայոց Վասին և արար մեծ ընդունելու-
թիւն նոցա, և երեւեցաւ սմա բազում տուբ։
Եւ գնաց Պազոնին և արար ժողովս հեծե-
ալոց ի Ռատանի ի քաղաք Վասին, և կամե-
ցաւ պատերազմել ընդ Տանդրի ընդ առն
աստուածապաշտի։ Եւ արարին Պազոնին և
Ղօսինն զայս ինչ գործ անօրէնութեան, որ
ոչ էր հաճելի Աստուծոյ. առաքեցին առ
ամիրայն Պարսից Ջ. ջլն, և բերին զնա իւ-
րեանց յօգնութիւն հինգ հազար ձիաւորով,
և յարուցին սատիկ պատերազմ ընդ Տան-
դրեի կոմսին Ենտրոքայ վասն գաւառաց

իւրեանց, զոր առեալ էր Տանդրի յորժամ էին ի գերութեան, և ոչ տայր զնոսա. և կամէր զնոսա Տանդրի իւր ի ծորութիւն ածել, և նոքա ոչ հաւանէին նմա։ Եւ ելեալ ժողովն Պաղին առ նոսա արս ութ հարիւր, և այլ զօրք Պանիկայ ի Հռոմոց թագաւորին զօրացն որք էին ի Սիս քաղաք. և եղեալ ժողովս բազում։ Եւ յայնժամ գայր զնոսն Թրիստոսի Տանդրի հաղար ձիաւորով և այլ հեռաւոր զօրս ընդ նմա. և ի տահմանան Թլրպաշրայ եղեալ սաստիկ պատերազմ Պաղանին և Տանդրի։ և մարտեան ընդ միմեանս ահագին և զարմանալի։ Իսկ զօրքն Պարսից՝ արարին սաստիկ կոտորածս զհեռաւոր զօրան ի Տանդրէի գնդէն. իսկ ի բազմանալ պատերազմին յաղթեաց Տանդրի զօրացն Պաղանին և արարին փախստական զնոսա։ Եւ յայնժամ դարձաւ մեծաւ պատմութեամբ ի վերայ Ջ օրեայ, և սուր ի գործ արկեալ էր և վարէր զնոսա սաստիկ կոտորածով. եւ մեռան յաւուր յայնմիկ ի դասուց քրիստոնէիցն ոգէք իբրև երկու հազար. և դարձաւ Տանդրի մեծաւ յաղթութեամբ և գնաց Անտիոք քաղաքն իւր։ Եւ Պաղանին լինէր փախստական և անկանէր ի բերդն որ ասի Արեւբնդան.

և Ն՛օսլինն մոտանէր ՝ի Թլպաշար ՝ի բերդն խուր և զերծաւ։

ԼՒ յորժամ լուան զայս ՝ի քաղաքն Ուռհայ, առ հասարակ ՝ի սուգ մտին և ՝ի տրտմութեան վասն Պաղտնէին, վասն զի մեռեալ գիտէին զնա. և արարին ժողով յեկեղեցին ՝ի սուրբ Յովհաննէս և առ Պապիսան Յռանկաց վասն միաբանութեան, զի երկնչէին թէ դարձեալ անկանի քաղաքն ՝ի Ցանգրի, և նա տայ ՝ի ձեռս Ուիջարդին. զի նա յորժամ ունէր զքաղաքն Ուռհայ, բազմոց աւեր արար։ Իսկ յորժամ եկին ՝ի մի վայր քաղաքացիքն Ուռհայոյ (236) բան խօսեցան ընդ Պապիսան և ասացին. «Զեր մարդ և մեր թող պահեն զկրայն քաղաքին. մինչեւ մեզ տէր յայտնէ»։ ԼՒ ըզկնի միոյ աւուր գային Ն՛օսլինն և Պաղտին և մտանէին ՝ի քաղաքն Ուռհայ. և արարին վասն այն խօսիցն քնեութիւնս, և համարեցան զայն բանն արատ և թիւրեցին զխօսքն ՝ի չար խորհուրդս և բազմաշատ աւեր ածին, և զայրոց անմեղաց զաչսն ՝ի լուսոյ խաւարեցուցին։ ԼՒ յաւուրն յայնմիկ արարին չարաչար խրատ քրիստոնէից. վասն զի ազգն Յռանկաց գիւրաւ ըմբռնին ամենայն չար մտանութեանն, և յոժարութեամբ հեղու-

մին արեան առնէին և արդար արանց և անմեղաց. և այնչափ յանդգնեցան՝ մինչեւ զարքեպիսկոպոսն Հայոց զտէր Ստեփանոսին զաչսն հանել ջանային, զոր գիտացեալ քաղաքացեացն զանմեղութիւն նորա՝ գնեցին զնա հազար դահեկան։

Մ. Յայսմ ժամանակիս եղեւ դառնաշունչ, և ի գաղան ձմերոցն և ի բարկութենէ օդոյն՝ հատան բազում վայրի անասունք, և թռչունք կորուստ եղեն ընդ ամենայն երկիր։ Այլ երեկ ի յաշխարհն Պարսից սեաւ ձիւն, և եղեւ այն ահաւոր նշան ի վերայ Պարսից ազգին, զոր ոչ կարացին իմաստունքն իւրեանց գիտենալ։

ՄԱ. Յայսմ ամի շարժեցաւ սաստիկ պատերազմ ի Աբբիա՝ որ ասի Բասրայ, որ է տուն Յոբայ. ժողովեցան ազգքն Աբասկաց և Թուրքաց, և արարին ահագին պատերազմ ընդ միմեանս։ Յայնժամ զոբքն Աբասկաց աբիւաբար և քաջապէս մարտեան ընդդէմ զոբացն Պարսից, և մեծաւ յաղթութեամբ հարին զնոսա, և կոտորելով արարին զնոսա փախստականս։ Դարձեալ արարին ժողովս զոբաց զոբագլուխն Թուրքաց և գային ի վերայ արապիկ զոբացն. և քաջացան պատերազմաւ և արարին զնոսա փախստականս. և

տրք յիսուն հազար ի զօրաց Աբասկաց եկին ի գաւառն Հաղայայ քաղաքին, և կամեցան լինել ընդ ձեռամբ Տանգրի Ինանչ-քայ կռուին. և կացեալ զաւուրս ինչ, եւ դարձան յաշխարհն իւրեանց։

ՄԲ. Իսկ ի թուականութեանն Հայոց յամի ՇԾԸ (1109—1110), զօրաժողով աբար կոմսն Ռուհայայ Պաղտինն և Ջոսլին կոմսն Թէլպաշրայ, և գնացին ի վերայ քաղաքին Խառնայ, վասն զի զարտերս նոցա կերիցեն։ Այս էր ընդ նոսա ազատ սին հայեցի ի զօրաց Վասլին, որդի Տաճատայ իշխանին Տարսնայ, որ անուանէր Սպլատաթ, և էր այր քաջ և ընտիր պատերազմող։ Սա ի Վասլէն խռովութեան ազդաւ եկեալ էր ի Ռուհայ. և յորժամ հասան ի գաւառն քաղաքին Խառնայ, յայնժամ Ռուհայեցիքն սկսան ազատ առնել զարտորայսն, և զօրքն Թուրքաց յանկարծակի հասանէին ի վերայ նոցա հազար և հինգ հարիւր ձիաւորով, և սպանանէին ի Ռուհայեցեացն մարդ հարիւր և յիսուն, և զօրքն Յունակաց սակաւ էր, կամէր փախչել ի Ռուհայ։ Յայնժամ Սպլատաթ որպէս զառիւծ գոչեաց, և ձայն տուեալ զօրաց իւրոց՝ և նոքաք բեկանէր ըզձակատ այլազգեաց զօրացն. և ապա դար-

ձաւ Ֆռանկն 'ի վերայ և յետս պահեցին զբրքն Թուրքաց. և դարձաւ Ֆռանկն 'ի Յերուսաղեմ, և Թուրքն պատերազմաւ զհետ երթայր, և անվնաս մնան 'ի քաղաքն Յերուսաղեմ։ Եւ Աղլասաթ ոչ հաճեալ 'ի գործ Ֆրռանկին, և դարձաւ առ Վասին. և էր խոցեալ 'ի բազուկն, բայց անվնաս մնաց 'ի մահուանէ, վասն զի երկաթն էառ զարկածն (257)։

Մ Գ. Յայսմ ամի տաւին զծովահայեաց քաղաքն որ անուանեալ կոչի Տռապօլիս, կապեալ 'ի խաւար զամն տասն և մի, և նեղեալ 'ի սատանիկ պատերազմացն և յարգելական ժամանակացն, վասն զի Թագաւորն Երուսաղէմի Պաղտին և Բերդրան ազգականն մեծ կամին Օրնճլին՝ ունէին զնոսա 'ի մեծ նեղութիւնս։ Յայնժամ Տռապօլսեցիք կոչեն զՏանգրի զկոմն Անտիոքայ եւ տան զՏռապօլիս 'ի ձեռս նորա։ Եւ յայնժամ Թագաւորն Երուսաղէմի և Բերդրանն յարուցին պատերազմ 'ի վերայ Տանգրի, վասն զի զքաղաքն նոքա ունէին 'ի խաւարի։ Յայնժամ պատրիարքն և եպիսկոպոսունքն իւրեանց մնան 'ի մէջ նոցա և արարին խաղաղութիւն երկոցունց կողմանց, և դարձաւ Տանգրի Անտիոք։ Իսկ Թագաւորն Եր-

րուսաղէմի արար ժողով 'ի վերայ Տաւսպօլ-
սոյ զամենայն զծովեցի զօրսն, և պատեալ
զքաղաքն զծով և զցամաք, և արարին 'ի
վերայ նորա ահագին պատերազմ, և սրով
վառեցաւ քաղաքն և առ հասարակ զամե-
նայն քաղաքն կոտորեաց սրով, և լցաւ քա-
ղաքն արեամբ. և տային զօրքն Ֆռանկաց
անթիւ գանձս ոսկւոյ և արծաթոյ և անհա-
մար ծառայս տանէին 'ի յաշխարհն Ֆռան-
կաց։

ՄԴ. Իսկ 'ի գալ հասանել Թուրկանու-
թեանն Հայոց յամն ՇԺԹ (1110—1111),
Ուռհայոց կոմն կամեցաւ երկրորդ պատե-
րազմ յարուցանել 'ի վերայ Տանդրէի։ Յայն-
ժամ Պաղտէնն և Ջ'օսլէնն առ յանդգնու-
թիւն սրտից իւրեանց խորհեցան զոր ոչ
վայելէ հաւատացելոց, և առաքեցին 'ի Մ'ա-
տուլ քաղաք և կոչեցին իւրեանց յօգնու-
թիւն զասպատարն Պարսից որ կոչի Մամ-
տուտ (238), այր գազան և հզօր պատերազ-
մող։ Եւ նորա լուեալ զայս և յօժարու-
թեամբ յանձին կալեալ, և արարեալ ժո-
ղով առ ինքն զամենայն տուն Թուրքաց,
և ահագին բազմութեամբ գայր հասանէր
'ի սահմանս քաղաքին Խառնայ. և արձա-
կեաց կոչեաց զկոմն Ուռհայոց, զի եկեսՀ

ցէ առ նա։ Եւ նորա զարհուրեալ ոչ իշ-
խեաց գնալ առ այլազգին. յայնժամ գիտա-
ցեալ Սամսոնն, եթէ խաբեցաւ ի նմա-
նէ, դարձաւ ի վերայ Լեռհայոյ ի պատե-
բազմն։ Եւ տեսեալ զայս Պաղանին, հանէր
զՊՕՇԼԻՆն ի խնդիր զօրայ և առաքէր առ
Թագաւորն Երուսաղէմ, զի հասանիցէ
յօգնութիւն քաղաքին Լեռհայոյ. և նա
կայր բանակեալ ամենայն զօրքն Փռանկաց
ի վերայ քաղաքին որ ասի Պերութ, ի վե-
րայ Ովիքանոս ծովուն։ Իսկ ի վերայ այսր
ամենայնի գայր հասանէր ամիրայն Սամսու-
տրն զօրօք անհամար բազմութեամբ և ե-
լից զայնատարած դաշտն Լեռհայոյ, և պա-
տեաց առ հասարակ զամենայն քաղաքն եւ
ծածկեաց զլեառն և զբլուրս։ Եւ ժողովե-
ցան առ նա ամենայն արեւելք, և փա-
խեաւ ամիրայն, գաւառն եղեւ անմարդ,
և սաստիկ պատերազմաւ ահաբեկեաց զա-
մենայն քաղաքն։ Եւ զաւուրս հարիւր կայր
Լեռհայ (239) ի մեծ նեղութեան, և տա-
բակուսեալ լինէին յամենայն կողմանց ձանձ-
բացեալք յանդադար պատերազմայն։ Եւ
սկսան ի հայել վտանգել, վասն զի մուտ և
ելն արգելեալ էր ի բազմութենէ զօրացն,
զի զոր ըմբռնէին սպանանէին, և լցան վայր-

քըն ի դիականց զորս կոտորեալ էին շուրջ զքաղաքաւն. և առ հասարակ այրեաց զամենայն գաւառն, և ոչ մի տեղ ոչ մնաց չէն։ Այս արար հրամանաւ Յուլիմանայ (240) ա-րեւելից ամիրային. և կոտորեաց առհասարակ զամենայն դրախտն որ կայր արտաքոյ քաղաքին, և հիմն ի վեր արար զամենայն վանորայս որք էին ի լերինն. և այսպիսի օրինակաւ կայր Լեռհայ ի մեծ նեղութեան։ Եւ զկնի այսր ամենայնի առաւ Պերուզ ի Տաճկաց օգնութեամբն Խոսրովայ, և առ հասարակ զամենայն քաղաքն սրով կոտորեաց, և ըստ զորք Յունակայն բազմութեամբ աւարաւ։ Եւ Ոսղին էր (անդ) ի յառնուլն քաղաքին Պերուզայ, և արար Ոսղին ահաւոր քաջութիւն։

Եւ զկնի այսր ամենայնի շարժէր զամենայն զորսն և գայր յօգնութիւն Լեռհայոյ. և Թագաւորն Երուսաղէմի գայր և Բերդբան կոմն Տռապօլսոյ գային ամենայն զորքն Ինոիոք քաղաք առ Տանգրի, և մեծաւ հառաչանօք հաւանեցուցանէին զնա հասանել յօգնութիւն քաղաքին Լեռհայոյ։ Եւ խաղացեալ ամենայն զորքքն Յունակայ եկին առ իշխանն Հայոց առ Վասիլն, և նա վառեաց զամենայն զորս իւր և հասանէր ի

Սամուսատ։ Գայլը և գինի նոցա իշխանն Հայոց Աղզարիպ զորոք իւրովք՝ որ նստէր ի քաղաքն անուանի որ կոչի Պիր. և յայնժամ քաղմութեամբ զորոք իւրեանց անցին ի սահմանս քաղաքին Լուսհայոց։ Եւ լուեալ զայս ասպատալարն Թուրքաց Սամոսատն, և շարժեալ զբանակն իւր և իջանէր ի քաղաքն (241) խառան. և հասան զորքն Յունակաց ի դուռն Լուսհայոց, և բանակս հարկանէին անդ։ Եւ ի լուսանալ միւս այլ աւուրն կազմեցան միաբան ի գործ պատերազմին, և հանեալ բարձրացուցին զվարագայ սուրբ Նշանն ի վերայ գեղարդան և տանէին առաջի զորացն։ Եւ Թուրքն գնայր հասանէր յայնկոյս քաղաքին Խառնայ, վասն զի նենգաւորութեամբն իւրեանց տարցեն ի յօտար երկիր. և կացուցանէին ի Խառան բազում զօրս ի քմին։ Իսկ զորագլուխքն Յունակաց խմացան զկեղծաւորութիւն զորացն Թուրքաց, դարձան բանակեցան ի վերայ ամուր բերդին՝ որ կոչի Շէնաւ, ի Տաճկաց սահմանին, և արարին ի վերայ նորա սաստիկ պատերազմ։ Եւ յայնժամ լսէ Տանդրէ չար հմբաւ վասն իւր ի յայլ զօրագլխացն, առեալ զզօրս իւր և հասանէր ի Սամուսատ, և իջեալ յեզր Եփրատայ. և

դարձաւ ամենայն Յունական զօրքն զհետ նորա։ Յայնժամ լուեալ քաղաքացիքն և գաւառացիքն որ ի քաղաքն Ուռհայ, ելին առ հաստատակ զհետ զօրացն Յունական մայր որ գուղք խրոցք։

Իսկ երկու Յունակ գործեցին գործ աներեւութեան, գնացին առ Մամուռան և ուրացան զքրիստոսական հաւատսն, և ասացին Մամուռային՝ եթէ ամենայն բանակն Յունական փախստական կան և երթան։ Եւ լուեալ զայս Մամուռան՝ դարձաւ զհետ զօրացն Յունական, և ի քաղաքին Ուռհայոյ դրանէն մինչեւ ի Եփրատ գետն ելից աբեամբ զերիկրն, (կոտորելով) զքաղաքացիքն և զգաւառացիքն, և հասաւ Մամուռան Եփրատայ և սրաբ անթիւ կոտորածս (242)։ Իսկ Յունակն առ հաստատակ անցեալ էին յայնկոյս գետոյն. և թուրքն զհաւատացեալսն որ բախողլոցս արարեալ, զի անդ բանակեալ կային որպէս զհօտ ոչխարաց. զաստուածատատ բարկութիւնն էած ի վերայ նոցա որ էին։ Եփրատ իսկ ի յարիւն դարձաւ. և շատ այն էին որ խեղդեցան ի ջուրն, ուր մտանէին լոզորդքն և ջանային անցուցանել և ոչ կարէին. և առաւել մտանէին ի նաւսն, և հինգ վեց նաւ ընկղմեցաւ լի մարդով, զի

ամենայն ոք ջանայր մնանել։ Եւ յայսմ աւուր եղեւ աւերեալ ամենայն գաւառն Լուռհայոց և եղեւ անմարդ։ Այս էր զոր գրեցին առաջին խմբասուն՝քն, եթէ «վայ տանն Աբգարու»։ Իսկ զորքն Ֆռանկաց որ էին յայնկոյս գետոյն Եփրատայ, տեսանէին զայս ամենայն անցս քրիստոնէից և ոչինչ կարէին օգնել նոցա, այլ լային դառնապէս։ Յայնժամ դարձաւ Մամուտն մեծաւ յաղթութեամբ և գնաց ի Խառան, և անտի յառաջեաց ի յաշխարհն իւր գերութեամբ և աւարաւ անթիւ։

Իսկ Սուլիման մեծ ամիրայն արեւելից կալեալ զՊալակ ամիրայն և կապեալ զնա երկաթի կապանօք և տարաւ եդ ի մզդան Ամիծեաց բերդն Տարօնոյ։ Իսկ զորքն Ֆռանկաց գնացին ամօթով յիւրաքանչիւր գաւառն, վասն զի փոխանակ փրկութեան՝ անցուցին աքարին հաւատացելոց։ Իսկ քաջ զինուորն Բրիստոսի Ցանգրի արարեալ ժողովս և գընաց ի յաշխարհն Հալպայ քաղաքին, և ի ջեալ ի վերայ քաղաքաբերդին որ ասի Թէլբեպ, և զբազում աւուրս կացեալ ի վերայ նորա, և սաստիկ պատերազմաւ էառ զնա և ոչինչ վնասեաց մարդոյ։

Մե։ Յայսմ ամի զօրաժողով աքարին զոր-

քըն Թուրքաց, և մտին ի յաշխարհն Աշնա-
ւարդայ. և արար աւար զամենայն երկիրն
և զԱարպայ։ Իսկ մեծ իշխանն Հայոց Թո-
ղոս որդի Կոստանդեայ՝ որդւոյ Ռուբենայ
ակն ածեալ ի բազմութենէ զօրացն Պարս-
կից, և ոչ համարձակեցաւ ելանել ի պա-
տերազմ։ Այլ դարձաւ զօրք Թուրքացն ան-
թիւ գերութեամբ և աւարաւ գնաց յաշ-
խարհն իւր։

Այլ յայսմ ամի (243) բազում աւեր եղեւ
յայնմ գաւառին ի յաւուրս ձմերայնոյ ժա-
մանակին. զի եղեւ յաւուր միւսմ նշան ա-
հաւոր և սոսկալի ի յաշխարհն Հայոց, ի
միւսմ մթան գիշերին. կարեալ եղեւ հուր
ի վերնական հաստատութենէ երկնից, և ի
բարձրութենէ անտի ցոլացեալ եղեւ, և
հարեալ զարկանէր զծովն Վանայ. և
սաստկապէս գոչեաց ծովն և ցոլացեալ
հարկանէր զցամաք, և դողայ ծով և ցա-
մաք ահաւոր դողմամբ, և փոխեաց զծովն ի
գոյն իւր արեան, և հուրն այն պատա-
ռեաց(244)զհաստատուն(երեսս)անդնդոց։ Իսկ
ի յառաւօտուն տեսանէին սատակեալ զբազ-
մութիւն ձկանց ծովուն և կային կուտեալ
ձկունք առ եզր ծովուն որպէս զփայտակոյ-
ցս մայրեաց, և հոտեալ եղեն վայրքն ի

սաստիկ բազմութենէն, և տեսանէին զցաւ մաքային վայրքն, զի պատառեալ հերձի ի բազում տեղիս ահաւոր խորութեամբ։

ՄԶ. Դարձեալ եղեւ ի թուականութեանն Հայոց ի յամի ՇԿ (1111–1112), գայր խաղայր Մամուռան բազմութեամբ զօրքն Թուրքաց, և հասանէր ի վերայ բերդին որ կոչի Թշկուբան. և արար պատերազմ ի վերայ նորա, և բերդացիքն ետուն առ վտանգին զբերդն ի ձեռս Մամուռանին. և կային ի բերդն քառասուն Ֆռանկ, առեալ զնոսա և կոտորեաց զամենայն սրով։ Լսաւ և զԼոտէթիին, և գայր ինքանէր ի Շէնաւ առ ամիրայն Արապկայ, որ ասէին Մանի (Մանէ). և յարուցեալ ինքանէր ի գաւառն Լեռհայոց ի բերդն որ կոչի Ջօլման. ժողովեցան առ նա ժողովք բազումք։ Յայնժամ գայր առ նա մեծ ամիրայն բազում զօրօք որ ասի Ահմատիլ. գայր և Սուլիման արեւելից ամիրայն, գայր և որդին Պուրսուխին և հասանէին միաբան ի վերայ Լեռհայոց. և կացեալ զսակաւ աւուրս և գնացին ի Սրուճ քաղաք և անցանէին ընդ մեծ գետն Եփրատ, և գային միաբան ի վերայ ամուր բերդին Թելպաշրայ։ Եւ լինէր յայնժամ ի բերդն կոմն Ֆռանկայ Ռօսլենն, որ էր այր

քաջ և հզօր պատերազմող. իսկ բազմութիւն զօրացին թուրքաց բազում վտանգս պատերազմաւ արկանէին ի վերայ քերդին և ոչ ինչ կարացին առնել։ Յայնժամ ամիրայն Պարսից Ահմատին լսեալ էր յաւելագոյն զքաջութիւն Ղօսնին, և արար սէր միաբանութիւն ընդ նմա և եղեն եղբայր միմեանց։ Եւ յաբուցեալ Սամսուան ամենայն զօրօքն Պարսից գնայր ի վերայ Աղուանից, և ինքանէր ի տեղին որ կոչի Շ.իզար։ Իսկ Տանգրի արաբեալ ժողով զամենայն ազգն Յունական, և Երուսաղէմի թագաւորն գայր Պաղտինն առ նա եւ Բերդրան կոմն Տուապօլոյ, գայր և Պաղտինն կոմն Ուռհայոյ, և ի Շ.իզարն ինքն։ Եւ երկոքեան բանակն հանդիպեցան միմեանց և ոչ արարին պատերազմ. դարձաւ Սամսուան և գաղտ գնաց յաշխարհն իւր, և զօրքն Յունական գնացին խաղաղութեամբ ի տունս իւրեանց։

Յայսմ ժամանակիս սատակեալ[245] լինէր Սուլիման ամիրայն արեւելից ի Ճանապարհին յանկարծամահ եղեալ արժանաւոր սատակմամբ ի Տեառնէ. վասն զի արաբ բազում աւեր և կոտորածս ի գաւառն Ուռհայոյ։

ՄԷ. Յայսմ ամի եղեւ վրէժխնդրութիւն

Աստուծոյ անմեղ արեան Գագկայ Շահն շահ՝ որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ, ի ձեռն առն հզօրի և մեծ իշխանին Հայոց Թորոսի որդւոյ Կոստանդեայ՝ որդւոյ Ռուբենայ։ Երդ ի յաւուրս Թորոսի էին սպանողքն Գագկայ արքային Հայոց ի բերդն որ անուանեալ կոչի Կնդռօսկաւիս, ահաւոր ամբոխութեամբ բարձրացեալ՝ անպարտելի յամենայն կողմանց. և որդիքն Մանդալէի դեռ եւս կենդանի էին երեք եղբարք, և մի ի նոցանէ ունէր ընդ Թորոսի միաբանութիւն վասն խնամութեան, և յաղագս այսորիկ խոստացեալ էին տալ զբերդն՝ Թորոսի, վասն զի սահմանակից էր գաւառի նորա մերձ ի յերկիրն որ կոչի Հինջուր, լեառնահայեաց Գամրաց աշխարհին (246)։ Յայսմ ամի յարուցեալ իշխանն Հայոց, և սակաւ ինչ զօրօք գնաց առ նոսա սիրով և ազգաւ, և իջեալ ի սահմանսն այն և յուզարկեաց զնոսա ծանուցումն (առնել) զգալն իւր։ Յայնժամ մի ոմն ի սպանողացն առեալ ընծայս եւ գայր առ Թորոս։ Լու նա մեծարեաց զնա, և նա հանեալ դանակ մի ծանրագին և հանդերձ մի գնէր առաջի Թորոսի, կերան եւ արբին։ Յայնժամ ասէր ցնա Թորոս՝ եթէ "Ա՛ռ ի՛ս խոստումն կայ

ձեր վասն բերդին, տուք ի յիս, և յամենայն գաւառս իմ առեք ձեզ տեղի զոր կամիք։ Եւ նոքա ասեալ զյառաջասացեալսն, և ասէր ցիշխանն Հայոց, եթէ «Ոչ կարեմք տալ զբերդն, վասն զի մեր հայրենիք է և ազգի տեղիք։ Եւ իբրեւ գիտաց Թորոս եթէ խաբեցաւ ի նոցանէ, տայր զբերեալ նուէրս յինքն, և սրտմտեալ ասէր. «Ելի և գնա ի տուն քո, և յայսմ հետէ պատրաստ եղերուք յինէն։ Եւ յարուցեալ աստուածասպանին դարձաւ ի տուն իւր. դարձաւ և Թորոս դիմաք ի տուն առաջի աչաց նորա։ Եւ իբրեւ գնաց սպանողն եղեւ անեբեւոյթ, դարձաւ Թորոս զօրօքն և ի գիշերին հասանէր ի վերայ բերդին, և դարանակալ առնէր զհետեւակ զօրսն, և ձիաւորսն հեռանայր յագարակսն. կամեցաւ ասպատակ առնել զերկիրն։ Իսկ ի լուսանալ առաւօտուն ելանէին ի բերդէ բերդացիքն, և հանդիպեցան ի վերայ քմնին, և յորժամ տեսին՝ եղեն փախստական։ Եւ յարուցեալ զօրացն Թորոսի ընթանային ընդ զառ ի վեր բերդին. և յորժամ տեսին բերդացիքն, փակեցաւ դուռն, և նոքա արտաքոյ կալան զդուռն, և սկսան պատերազմել, և կրակ հարկանէին ընդ ցուեաց

բերդին, և նա յոյժ բորբոքեցաւ։ Եւ յոր-
ժամ տեսին բնակիչքն՝ բացեալ ի յայլ կողմանէ դուռն, և ելեալ փախեան, և զօրքն Թորոսի առին զբերդն և կալան զփախըստականսն, և հասեալ պատմեցին Թորոսի։ և նա յոյժ հանայր, և գայր մեծաւ ուրախութեամբ ի բերդն ի Կանդռօսկաւխ։ Եւ յորժամ մտաւ ի բերդն, սկսաւ քննութիւն առնել դանձատան նոցա, վասն զի ամենայն դաւառին դանձ ոսկի և արծաթ անդ ի պահեստի էր ժողովեալ։ և ասէր Թորոս ցՄանդալէի որդիքն, եթէ «Ի՞ներքս առ իս զԴագկայ Թուրն, և զՀանդերձն Հայոց Թագաւորին»։ Եւ նոքա բերին։ և տեսեալ Թորոսի երայց դառնապէս, և ամենայն զօրքն լային։ Եւ յայնժամ հրամայեաց Թորոս ցուցանել զգանձս իւրեանց, և նոքա պնդեալ ոչ գային ի խոստ, և սկսան ի խոշտանգանս արկանել զնոսա։ Յայնժամ միւս եղբայրն աղաչէր զզօրականսն զի տարցեն զնա ի քարակոնուրն զի Ջուր հեղցէ։ և յորժամ տարան, ձգէր զինքն ի բարձրութենէ քարին ի վայր։ և անկեալ սատակեցաւ ջարաչար։ Իսկ զմիւս եղբայրն սկսաւ ի վտանգ արկանել Թորոս, և նա լքեալեր երեսաք ասէր ցԹորոս, եթէ «Դու Հայ

մարդ ես, և մեք Հռոմք իշխանք, զինչ կամիս պատասխանիս տալ Հռոմոց Թագաւորին, որ դատես զմեզ»։ Յայնժամ սրտմբտեալ Թորոս, և գոյն երեսաց այլագուներցաւ, և առեալ ի ձեռին իւրում բիր մի կռանի, և գաղանաբար յարձակեցաւ ի վերայ Նորա և ասէր, եթէ «Ո՞վ ելիք դուք որ զայր հզօր և զօծեալ Թագաւորն Հայոց ըստանիք, և կամ զինչ պատասխանի ետուք ազգին Հայոց»։ և թալխառն սկսաւ չարաչար հարկանել զնա՝ մինչեւ սատակեցաւ դառնահառաչ մահուամբ։ Իսկ յայնժամ գոհանայր զԱստուծոյ որ էառ զվրէժ արեան Գագկայ Հայոց աբքային, վասն զի հայր հօր Նորա Ռուբէն ի զաւակացն Գագկայ էր։ Իսկ միաբարձ արարեալ զամենայն տուներս նոցա բազում գանձս և դիսպակս և խաչս յոյժ մեծամեծս արծաթիս, և պատկեր ոսկեձոյլ և արծաթ առեալ գնայ ի Վահկայն, և զմիւս եղբայրն զկնի տանէր, և դընէր զզօրսն ի բերդն Պահապանս (247)։

ՄԸ. Ի թուականութեան Հայոց ՇԿԱ (1112—1113), դարձեալ ժողով արար չար և արիւնարբու գաղանն Ամիրուան, և գայր խաղայր ի վերայ քաղաքին Ուռհայոց. և էր յայնմ ժամուն անհոգացեալ քաղաքն ի

նմանէ. և նա յանկարծակի հասանէր ի վերայ քաղաքին զկնի Ոստակին՝ յաւուր մեռելոցին. և էր սահմի ամսոյ մուտ, և գայր ինքանէր ի Կուպրինն, և յարուցեալ ամենայն բազմութեամբ ի դուռն քաղաքին Ուռհայայ, և կացեալ զաւուրս ութ՝ փոխեցաւ ի Սամնցւոյն սայրն, և անտի գայր ինքանէր ի Սուրբ վկայքն մօտ ի պարիսպն։ Յայնժամ յաղթող զօրականն Բրիստոսի կոմսն Ռօսլին առեալ հարիւր ձիաւոր և հարիւր հետեւակ և գայ մնանէ ի Արուռ քաղաք. յայնժամ զօրքն Թուրքայ հաղար և հինգ հարիւր ձիաւոր արշաւեցին ի Արուռ Եղեսիայի շաբաթ օրն։ Եւ յարուցեալ Ռօսլինն անկանէր ի վերայ Թուրքին և սպանանէր զնոսա արս հարիւր և յիսուն. և կալաւ հինգ արս գլխաւորս, և էառ զամենայն ջնաներոցս նոցա. եւ մեացեալքն փոխատական գնացին առ Սամոուս ի քաղաքն Ուռհայ։ Եւ լուեալ Սամոուսն զայս ամենայն, և զօրօքն գնաց ի վերայ Ռօսլինն ի Արուռ քաղաք. և նոյն ժամայն Ռօսլինն դադարագնաց լեալ գայր Ուռհայ քաղաք մնանէր։ Եւ կացեալ Սամոուսն ի Արուռ քաղաք զաւուրս եւթն, և դարձաւ ի վերայ Ուռհայոյ. և արք ոմանք նենգաւորք գնացին ընդդէմ նորա, և ի

ճանապարհին տեսն ցեա. «Այսր մեզ սղոր-
մութիւն, և տացուք այսօր զՈւռհայ ի
ձեռս քո»։ Եւ նա բաղում ուրախութեամբ
արար զամենայն կամս նոցա, զի նեղեալ էին
ի բազմութենէ տվոյն, և առ վտանգին ոչ
գիտացին զինչ գործեցին. և բերեալ զՄամ-
տուան ի գիշերի, և արք հինգ տան զաղ-
մամբսն քաղաքն Ուռհայ ի ձեռս Թուրքին.
եւտուն բուրգն մի ի նոսա, որ բարձր էր
քան զամենայն քաղաքն ի յարեւելից կուսէ
քաղաքին, և արս հարիւր հանեալ կոցուցին
ի վերայ նորա. և առին երկու բուրգն այլ
և բազմացան։ Իսկ Աստուած որ ոչ կամի
զկորուստ հաւատացելոց, յառաջագոյն էր
բերեալ զկոմսն Ֆռանկաց զՈսլենն յօգ-
նականութիւն օրհնեալ քաղաքին Ուռհայոյ։
Եւ լուեալ զայս քաջ զօրականն Աստուծոյ
Ոսլենն, առեալ զկոմսն Ուռհայոյ զՊաղտի-
նն և զայլ զօրսն Ֆռանկաց, հասանէր ի
պարիսպն ի պատերազմ քեզ Թուրք զօրացն.
և այսպէս քաջագէս մարտ եդեալ արիաբար
ի վերայ բրգանն, մինչեւ ի սաստկութենէ
պատերազմին զամենայն բազմութիւն զօ-
ւրացն Թուրքաց ի վայր հեղլոր ի պարսպէն,
և տուողքն և առողքն ի միասին սատակե-
ցան. և յաւուրն յայնմիկ թափեալ եղև քա-

զաքն Ալուհայ 'ի Թուրքաց քաջութեամբ Ղօսլին և այլ զօրացն քաղաքացեաց։ Յայնժամ կոմն Ղօսլին առ բարկութեան սրտի իւրոյ և 'ի ձեռն չարախօս լեզուաց բա զում արիւն հեղին յանմեղ քաղաքացեացն՝ սպանմամբ և այրմամբ հրոյ. (եառն) և խրատս ցաւագինս, որ ոչ էր հաճելի Աստուծոյ։ Իսկ յայնժամ Մամուռան յարուցեալ գնաց էառ զԹվլմուզն և ամօթաղլից երեսօք գնաց 'ի Խորասան մեծաւ անարգանօք։

Մթ. Յայսմ ամի զօրաժողով արար կոմսն Աշոտիոքայ Տանգրի, և գնայր 'ի վերայ Վասլին՝ Հայոց իշխանին, և յարուցանէր պատերազմ 'ի վերայ Ասպնայ. և սաստիկ պատերազմաւ էառ զքաղաքն Ասպան 'ի Վասլէն. և գնաց զօրքք 'ի վերայ Գէորգոնց և ինքաւ 'ի գլուխ դաշտին Ներքեւ ակին (248) 'ի Թիլն։ Իսկ յայնժամ զօրաժողով արար Վասիլն ասս հինգհազար, և կացեալ զաւուրս ինչ և ոչ արարին պատերազմ, այլ հաստատեցին ընդ միմեանս սէր, և դարձեալ տայր զԱսպան 'ի Վասիլն (249), և տայր Վասիլն զգաւառն Հասան-Ալորայ և զԹորեր, և զԱրեմն 'ի Տանգրի. վասն զի Վասիլն 'ի Ֆրանկայ էր առեալ զգաւառս զայս զՀա-

սան—Մնուր և զԹորեր և զԼրեմն. և գարձոյց ի յազգն Յուանկաց. և գնաց Տանգրի խաղաղութեամբ ի քաղաքն իւր Ամտիոք։

ՄԺ. Յայսմ ամի յարեաց ամոյ քսան և չորս մեռանէր մեծ իշխանն Հայոց որ կոչեցաւ Պողոս Վասիլ. և եղեւ սուգ սաստիկ ամենայն տանն Հայոց. վասն զի առ նա էին ժողովեալ մնացեալ զօրքն Հայոց, և ամենայն զօրքն Բագրատունեաց և Պահլաւունեաց, և որդիք Թագաւորացն Հայոց Հանդերձ ազատազունդ զօրօքն առ նա կային Հանդուցեալ մեծաւ փառաւորութեամբ. և աԹոռ Հայրապետութեանն Հայոց աշխարհին ատա եդաւ, վասն զի տիրեալ էր բազում դաւառաց իւրով զօրութեամբն, և ամենայն երամք կրօնաւորաց, եպիսկոպոսաց, Հարց և վարդապետաց առ սա ժողովեցան և առ Հոստարակ կային մեծաւ ուրախութեամբ։ Մեռաւ իշխանն Հայոց և Թաղեցաւ ի Կարմիր վանքն. և էր Հոգեբարձու նորա և Հայր խոստովանութեան տէր Բարսեղ կաթուղիկոսն Հայոց. և տուաւ Հողադրամ Հազար դահեկան, և պատարագուց Հարիւր և յիսուն դահեկան աւելի և ոչ պակաս, և մատաղ անԹիւ։ Իսկ տարան Տանգրիի բազում տուրս ի տանէն Վասլին,

բազում գանձս և գիսպակս, ձիս և ջորիս, տարան և զթագն կնոջ Վասլին առ կին Տանգրէի, և այլ իշխանաց թագաւորացն տուաւ բազում ընծայս, և ազգաւոյց բազում ինչս։ Եւ տան զիշխանութիւն Վասլին՝ տղայ Վասլին, որ է մայրենեաք յազգէ կամսարականն, սնեալ և զարգացեալ ի տան Վասլին՝ որպէս զորդի ի ծոց հօր իւրոյ, գեղեցկատեսիլ և առիւծադէմ, յաջողական և սրագլուխ, այր քաջ և պատերազմող, ամաց քսանև հնգից։ Օրսա նստուցին յաթոռ մեծ իշխանին Վասլին, և նմա հնազանդեցան ամենայն զօրքն, վասն զի յոյժ առատաձեռն և մեծատուր եղեւ, սիրեցեալ յաչս ամենեցուն և զօրացն։ Եւ արար միաբան ժողով տէր Խարսեղ, և տայ զամենայն իշխանութիւնն ի տղայ Վասլին, և եղեւ ուրախութիւն ի վերայ տանն Հայոց։

ՄԺԱ. Յայսմ ամի ի մարերի ամսոյ ժբ, դեղեցին զմեծ հաւատացեալն քան զամենայն (250) Տանգրի և մեռանէր կամն Աստուածոյ, որ էր այր սուրբ և աստուածասէր, և էր քաղցր բնութեամբ և ողորմած, հայելով ի վերայ ամենայն հաւատացելոց Քրիստոսի. և յոյժ խոնարհ էր առ ամենայն որ և արդար ի դատաստանս և յիրաւունս Աստու-

ծոյ։ Սա մեռաւ ի Անտիոք քաղաք և թաղեցաւ ի սուրբ Պետրոս, ի մեծ եկեղեցին Անտիոքայ, զոր հիմնարկեցին սուրբ առաքեալքն Պետրոս և Պօղոս։ Եւ հրամանաւ Տանգրէի դնեն յաթոռ նորա զքուրորդին իւր որ կոչի Ռօճէր, այր քաջ և արիական պատերազմող։ Յայնժամ պատրիարքն և ամենայն իշխանքն Ֆռանկաց դնեն զՌօճէրն յաթոռն Տանգրէի, եւ տան զԱնտիոք ի ձեռս նորա։ Յայսմ ամի յառաջ սպանան երկու իշխանքն մեծք՝ Տիգրան և Պլատաթ ի թուրքք զօրացն ի յերկիրն Լեւոնի Ռուբինայ որդւոյն, որք էին ի զօրաց Պալին։

Մծբ. Դարձեալ եղեւ ի թուականութեանն Հայոց ՇԿԲ (1113—1114), անօրէն և արիւնարբու գազանն Մամուստ ամիրայն՝ ասպատակաւքն Պարսից գայր խաղայր անհամար զօրօք ի վերայ Ֆռանկաց, և հասանէր ի քաղաքն Տանկաց որ կոչի Խառան։ Եւ յայնժամ Պաղտին կոմսն Ուռհայոյ էր զօրօք ի քաղաքին Թէլպաշար. յայնժամ յազգէ Ֆռանկաց աբք չարաշունչք և դաւրն որոճողք, համբաւ չարութեան և մատնութեան հասուցանէին առ կոմսն և ասէին, եթէ «Խաղուամբ միաբանեալ են, և կամին զքաղաքն Ուռհայ ի թուրքն տալ»։

Իսկ նորա հաւատացեալ սուտ չարախօսու-
թեանն անօրէն և չար լեզուաց, և յայն
ժամ վճիռ չար եկանէր ի նմանէ, առա-
քեաց վաղվաղակի զկոմն Արծոյ զՊայէն,
և հրամայեաց զամենայն քաղաքն Ուռհայ
հանել ի քաղաքէն, որ ոչ մնաց ի քաղաքն
մի մարդ։ Ա.Յլ խորհուրդ արարին չարագէմ
աղգն և յաւուր յայնմիկ կամեցան սրով
յարձակել և կոտորել զամենայն քաղաքն
առհասարակ, և յաժարէին ի հեղուլ զա-
րիւն անպարտիցն և զանմեղաց, որ ոչինչ
էին գործեալ արատ յանցանաց. բայց ի
չարութենէ արտից ազգին իւրեանց զամե-
նայն օր չարաբարք կարծէին։

Իսկ ի յամենեանն սահմի ի յաւուր կիւ-
րակէի ճաշուն հասանէր ի վերայ Ուռհայոց
չար աղէտ դառնութեան, որ ուրացաւ
հայր զորդի, և որդի զհայր. վասն զի ըստ
և ողբ և աղաղակ էր առհասարակ յամե-
նայն քաղաքն, և արտասուք, սգով և տրտմ-
մութեամբ տուն առ տուն, վասն զի եհան
վարեաց ի տանէ զամենայն քաղաքն, և այ-
րել հրամայեցին զորս ի տան գտանէին։
Ոչ մնաց՝ և ոչ մի, բայց միայն այր ութ-
սուն, և զայն երիկուանն յեկեղեցին ի սուրբ
Թորոս ժողովէին ի կլայն զենուորօք և պա-

հեթին զնոսա։ Իսկ էր յառուսբ յայնմիկ սուգ մեծ ի վերայ Ուռհայոյ. և ամենայն ոք վըրկայ կարդային ի վերայ անձինն իւր, և ոչ մնայ ինչ չարութիւն (251), զոր ոչ ածին ի վերայ քաղաքին Ուռհայոյ յաղագէ Դաւանկայ։ Իսկ յայսմ վայրի լցան աստուծոյ բարձրին տեսողացն, որք տեսանէին՝ եթէ Ս Ա՛ՆՆ տանն Աբգարու։ Իսկ գնացին ամենայն որք քաղաքին ի Սամուսատ. և եղեւ մայրաքաղաքն Ուռհայ դատարկ, և նստաւ թագաւորն զկին մի այրի, այն որ մայր էր յառաջ ամենայն արարածոց, և առ ինքն ժողովէր զամենայն ցրուեալսն աշխարհի, և կամ այն որ յառաջագոյն եղանէին խաչօք ընդդէմ Դաւանկայ, յորժամ մուրանալով գային առ նոսա, և ահա փոխանակ բարեացն զայս այսպէս գործեցին ընդ նոսա, և չար հաստուցին ամենայն հաւատացելոց։

Մ Ա Ժ Գ. Յայնժամ զորքն թագաւորաց որք էին ի խառան, գնայր անցանէր ընդ Եփրատ գետն, և խաղայ ամենայն բազմութեամբ և գնայ ի սուրբ քաղաքն Հրաւաղէմ առ ի պատերազմել ընդ Թագաւորին Հրաւաղէմի, և ընդ ամենայն ազգն Դաւանկայ։ Իսկ յորժամ լուաւ զայս Պաղտինն. եթէ գնայ Սամուսատն և ինքն ի դուռն Հրաւաղէ-

մայ, ամենչեալ լինէր ընդ սատանայ թեամբ գոր-
ծելն իւր. առաքէր Թուղթ ի Մեսրոպայ
դարձուցանել զքաղաքացիսն. և զկնի երեք
աւուր դարձաւ ամենայն մարդ ի տուն իւր։

Յայնժամ զորքն այլազգեայ ի ջեալ քա-
նակեցան ի քաղաքն որ կոչի Տապար (Տիբե-
ռիա) մօտ ի ծովն Տիբերական։ Իսկ Թագա-
ւորն Հրուսաղէմայ առաքեաց Ամնոնիք և
զմեծ կոմսն Դուանկայ զՄօռէլն կոչեալ
առ ինքն, զամենայն զորքն Դուանկայ, և
զկոմսն Տաստոլայ զորդին Օ.ընճիլն (252),
և միաբան գնացին ի կոչն նորա։ Իսկ զորքն
Հրուսաղէմայ հպարտացեալ լինէին, յառա-
ջեցան և եկանէին ի վերայ զորացն Թուրքաց
ի պատերազմ, եթէ զի մի գայցեն Ամ-
նոնիքացիքն և առնուցուն անուն քաջու-
թեան։ Իսկ Աստուած ոչ հաճեցաւ ընդ
խորհուրդս հպարտութեան նոցա, և յա-
մենայն արար զամբարտաւանութիւնս նոցա.
վասն զի յորժամ յարձակեցան ընդ միմեա-
նս ի պատերազմ, յաղթեցին զորքն Թուրքաց
զորացն Դուանկայ, և դարձուցին զՊ-
նոցա ի փախուստ. և արս փառաւորս ըս-
պանին ի զորացն Դուանկայ, և զհետեւակ
զորսն ամենայն կոտորեցին. և մի ոմն այր
քաջ ի զորացն Թուրքաց հասեալ Թագաւ-

ՀՈՐԻՆ Աշուսաղէմի, և երկամիտ լախտումն
հարկանէր զԹիկուանս նորա։ Իսկ նորա օգ-
նական Ասուած եղեալ և փրկեաց զնա.
վասն զի նոյն ժամայն հասանէին զՕրքն Աշ-
տիքացւոց և Ցուսպոլոյ, և տեսեալ զայն
Ռօճէր կամն Աստիքայ՝ և գոչեաց որպէս
զառիւծ, և հասանէր վազվազակի անդր,
և դարձոյց ի փախուստ զզօրս Թուրքայ,
և փրկեաց զԹագաւորն և զամենայն զօրսն
Աշուսաղէմայ։ Յայնժամ բանակեցան զօրք
այլազգեացն ի մի կողմն լերինն, և այլ ոչ
արարին զատերազմ ընդ միմեանս։ Աշ-
կացեալ սակաւ առուրս և գարձաւ Սամսուռ-
տան և մնաւ ի Դմիշկ քաղաք, և զօրքն Ֆրն-
ռանկաց դարձան այր իւրաքանչիւր ի քա-
ղաք իւր։

Իսկ ամիրայն Սամսուռտ յորժամ մնաւ
ի Դմիշկ քաղաք, խորհեցաւ կորուսանել
զամիրայն Դմիշկայ զՏուղ-Տիկինն և առնուլ
զքաղաքն։ Աշ այս խորհուրդ նենգաւորեան
ազդ լինէր ամիրային. և յայնժամ Տուղ-Տի-
կինն հանեալ ի բանտէ իւրմէ այր մի մա-
հապարտ Պարսիկ մի, և ազատութիւն նը-
մա խոստացաւ և փառաւորութիւն, և տայր
նմա հինգ հարիւր դահեկան զի սպանցէ
զՍամսուռտան։ Աշ եղեալ յորժամ եկանէր

Մամու�ան ի տանէ աղօթիս իւրոց, և կայր կանգնեալ ի մէջ Ճեմարանին առ կարմիր սիւնովն, գայր Պարսիկն և յանկարծակի հարեալ կանէր դանակովն զձախոյ քովն նորա, և սատակեաց զանօրէնն և զչար գազանն ըզ-Մամուռան, և Պարսիկն ի նոյն տեղւոյն շաբաշաբ սատակեցաւ, և զօրքն Մամուռանին գնացին փախստական յաշխարհն Պարսից։

ՄԺԴ. Յայսմ ամի յամենայնն տրէ, յաւուր հինգերորդի մեռանէր Հայրապետն Հայոց տէր Խորենէ, այս ինչ պատահեալ նմա ի չարին ազգեցութենէ։ Վասն զի յաւուր միում եղանէր ի վերայ տանեացն ի գեօղն որ կոչի Վարդահերի, որ էր մերձ ի սահմանս (253) Պեհլևանու աշակերտօքն հանդերձ կայր յաղօթս քահանայիւք, եպիսկոպոսօք. և յանկարծակի անկաւ և կործանեցաւ տունն, և ոչ ումեք եղեւ վնաս՝ բայց միայն տեառն Խորսոյ, վասն զի հարաւ կողն ընդ պարխոպ տանն և բեկաւ. և տարեալ եղեւ զաւուրս երիս, և տայր տանել զինքն ի վանքն իւր որ կոչի Շուղր. և կենդանութեամբ իւրով տայր զաթոռս հայրապետութեան իւր և զքոյն ի Գրիգորէս որդի Աշիրատին, որ էր քուրորդի տէր Վահրամին։ Մեռաւ տէր Խորսեղ և թաղեցաւ

'ի Շուշն մեծաւ հանդիսիւ, և եդաւ 'ի հայրապետական գերեզմանի։

ՄԺԵ. Յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեանն Հայոց տէր Գրիգորիս որդի Ապիրատին, որ էր յազգէ Գրիգորայ Մագիստրոսին՝ որդւոյ Վասակայ Պալհաւունոյ։ Վասն զի զկնի մահուանն տէր Խարսղի եղեւ ժողով եպիսկոպոսաց և հարանց 'ի Կարմիր Վանքն մերձ 'ի Բեռուն գաւառ. և հրամանաւ Հոգւոյն ձեռնադրեցին զԳրիգորիս եպիսկոպոս 'ի վերայ ամենայն տանն Հայոց. և 'ի նմին աւուր սան զձեռնադրութիւն կաթուղիկոսութեանն 'ի վերայ աթոռոյ սրբոյն Գրիգորի։ Իսկ նստաւ 'ի հայրապետական աթոռն մինչ էր 'ի տղայութեան հասակին. վասն զի չէր եւս լեալ էր սկիզբն մօրուացն, և էր բարձրահասակ և գեղեցկատեսիլ և բարուքն խոնարհ։

ՄԺԶ. Իսկ թուականութեանն Հայոց ՇԿԳ (1114—1115), զորաժողով արար սուլտանն Պարսից Տսփարն որդի Մելիք-Շահին, և կացուցանէր 'ի վերայ զօրացն ասպասալար զմեծ ամիրայն որ ասի Խուրսուխ. և առեալ զհետ իւր զորդի սուլտանին տղայ գոլով, և գայր խաղաղ բազմութեամբ զօրաք, և հասանէր 'ի վերայ քաղաքին Լուռհայոց։ Իսկ 'ի

տահմի ամոյ իմ յաւուր ուրբաթու ինչ-
նէր ի դուռն քաղաքին Լուսհայոյ. և կա-
ցեալ զաւուրս երեսուն մեծաւ պատերազ-
մաւ, և դարձեալ գնայր ինչանէր ի վերայ
Նիփրատ գետոյ, և աւերեաց զամենայն գա-
ւառն առ եզր գետոյն. և գայր ինչանէր ի
վերայ քաղաքին որ կոչի Պիր. յեզր Նիփրատ
գետոյ. և ժողովեցան ամենայն զօրքն Յոյ-
ռանկաց ի յայնկոյս Նիփրատ գետոյն, և ոչ
համարձակեցան անցանել յիրար։ Դարձաւ
Ռուբսուխն ի քաղաքն Լուսհայ, և անտի
գնաց ի Մծբին քաղաք Տաճկաց։ Նոր ժո-
ղով արար ամիրայն Խաղի և Պալակն, և մե-
ծաւ պատերազմաւ յաղթեցին Ռուբսու-
խին, և արարին զնա փախստական. և կա-
լան զորդի սուլտանին, և յետոյ ի բաց թող-
ին զնա։

Մայիս. Յայտմ ամի եղեւ աստուածատատ
բարիութիւն ի վերայ արարածոցս. վասն
զի ինքն տէր Աստուած ամենակալ զօրու-
թեամբն իւրով և մեծաւ սրտմտութեամբն
իւրով հայեցաւ յարարածս իւր. զի որդիք
մարդկան առհասարակ եղեն մոլորեալ յար-
դարութեան Ճանապարհէն անտի ըստ մար-
գարէին բանի որ ասէր, եթէ «Ոչ գոյ ի ժա-
մանակի այսմիկ իշխան, մարգարէ և առաջ-

նորդ. և ոչ ոք է որ առնէ զբարի, և ոչ ոք է
և ոչ մի »։ Այսպիսի օրինակաւս ամենեքեան
սիրեցին զանօրէնութեան ճանապարհն մե-
ղաց, և առեցին զամենայն պատուիրանս և
զիրաւունս Աստուծոյ. վասն զի ոչ իշխանք և
ոչ զօրականք և ոչ ժողովրդականք և ոչ առաջ-
նորդք. քահանայք և կրօնաւորք, ոչ մնացին
և ոչ կացին ի գործն Աստուծոյ ուղղակի, այլ
ընթացան զհետ ցանկութեան մարմնոյ, և
զոր սիրէ աշխարհս. և զայս ամենայն հա-
մարեցաւ Աստուած ի գործ կատարման մե-
ղաց. և ահա եղեւ ըստ բանի մարգարէին
որ ասէր. « Ո՞հ հայի յերկիր, և տայ դողալ
սմա »։ Այլ արդ՝ զի հայեցաւ տէր Աստուած
յարարածս բարկութեամբ, և արարածք
յանձն առին կործանել յահէ զօրութեանց
Տեառն։ Այլ եղեւ այսպէս. վասն զի ահա
յամենեանն մարերի յերկոտասան աւուրն,
յաւուր կիւրակէին ոտնի Խաչ գիւտին ե-
զեւ մեծասաստ արհաւիրք ի վերայ ամենե-
բաց, որ ոչ լուաք այսպիսի բարկութեան
կատարած, ոչ յառաջ և ոչ այժմ, և ոչ ի
պատուիրանաց գրոց սրբոց։ Այլ արդ ահա
մինչդեռ էաք յափշտակեալ ի խոր քնոյ,
եղեւ յանկարծակի ճայթումն և թնդումն
ահաւոր. եւ գոռայր առ հասարակ ա-

մենայն արարածք . եւ եղեւ դղրդումն սատկապէս , և ահագին թնդմամբ շարժեցաւ երկիր և լերինք , և պատառեցան ապառաժ վէմք , և հեղձան բլուրք . և Յիսուսկուրթենէ ահաւոր բարկութեանն հնչէին լերինք և բլուրք . և իբրեւ կենդանի անսուտնք սասանեալ գոչէին (254) , որ և լսելի իսկ լինէր բարբառ լերանցն , և գայր իբրեւ ըզգոչիւնս բազմութեան բանակաց : Յս այսպիսի օրինակաւս իբրեւ զծով ծփեալ երերեալ դողայր արարածք յահէ զօրութեան Տեառն Յ՚ոտուծոյ : Վասն զի առ հասարակ իբրեւ զպղինձ հնչեաց ամենայն դաշտք և լերինք և որպէս զծառս հողմակոծեալս երերայր , դողայր , սասանէր , և գայր թնդիւն և հեծութիւն յարարածոցս որպէս զբազմերեայ հիւանդին , և մեծաւ երկիւղիս զկործանումն յուղէր . և երկիր յուսահատեալ լինէր իբրեւ զփախստական և սարսափմամբ զարհուրեր , և իբրեւ մեղապարտ զբ ձայն ողբոց և լալումն արտասուաց հանէր , և լսելի լինէր ձայնն զկնի շարժմանն իբրեւ զմի ժամ գիշերին : Յս յահէ բարբառոց բարկութեանն ամենայն զբ յուսահատեցաւ ի կենացս , և ասացին՝ եթէ եհաս օր կատարածի և դատաստանի մերում , զի զայն ա-

հուր զպատկերն ունէր։ Օրն էր կիւրա-
կէի, և ձայնն ի վառի ձայն էր, և լուսինն
փոխել էր, և զամենայն պատճառ զվերջին ա-
հուրն ունէր. և ահա կային ահաբեկեալ
իբրեւ զմեռեալս յուսահատեալք։ Եւ յայ-
սմմ գիշերիս կործանեցան բազու�քաղա-
քաց և գաւառաց. և ամենայն որ կործա-
նեցան՝ էին գաւառք Ֆռանկաց, և այլ գա-
ւառաց կամ այլազգեաց ոչ եղեւ վնաս
և ոչ ինչ։ Եւ յայսմ գիշերի կործանեցաւ
Սամուսատ քաղաք և Հասան-Սնուբ, Գե-
սուն և Ռապան, և Մարաշ քաղաք ահա-
գոր և կործանեցան ոգիք իբրեւ քառա-
սուն հազար, զի էր բազմամբոխ քաղաք,
և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի։ Եւ այսպէս
ի Սիս քաղաք կործանեցաւ անեթիւ (բազ-
մութիւն) արանց և կանանց, և այլ բա-
զում գեղք և վանորայք, և անհամար աղբ
և կանայք հաղարս հաղարաց և բիւրս բիւ-
րոց կործանեցան։ Եւ եղեւ ի Սեաւ լեա-
ռն անուանի, յանապատն որ կոչի Բար-
սեղեանց էին ժողովեալ յեկեղեցւոջն հնէք
սրբանեալ կրօնաւորք և վարդապետք Հայ-
ոց, և կային ի պաշտօն Աստուծոյ, անկաւ
եկեղեցին ի վերայ նոցա, և երեսուն կրօ-
նաւորք և երկու վարդապետք կատարեցան

ի ներքոյ նորա, որ կան մինչեւ յայսօր։ Այնպէս եղեւ մերձ ի Մարաշ ի մեծ անապատին որ ասի Յեռուանց, անկաւ և կործանեցաւ վանքն և ամենայն դասք կրօնաւորացն. և յորժամ դադարեաց շարժն, ըստ կրսաւ ձիւն գալ, և զամենայն աշխարհս ի ներքոյ կոտորեաց։ Մեծ և փառաւոր վարդապետն Հայոց Գրիգոր, որ ասի Մաշիւոր, ի նմին տեղւոջ կատարեցաւ. և այս պիսի օրինակաւ բազում անցուցմն և բարկութեամբ կատարած եղեւ հաւատացելոց ազգացս։ Այս այսպէս գործեցաւ վասն մեղաց, զի այր խրատանչիւր թողին զբուն պոռնոտայն պատուիրանացն Աստուծոյ, և զՀետ բորբոքեցան մեղրական Ճանապարհին, և եղին ի գրոց պատուիրանաց, և կան յիմարեալք. որպէս յաւուրսն Նոյի ուտէին ըմպէին մինչեւ կորեան ըստ գործոց իւրեանց, այսպէս և սոքա կային ի գործս ուրախութեան՝ մինչեւ եհաս բարկութիւն ի Տեառնէ Աստուծոյ, և սատակեաց զդործողսն չարեաց, վասն զի գնային մեծամեծ յանցանօք։

ՄԺԸ. Յայսմ ամի մեռաւ սուրբ վարդապետն Հայոց որ անուանեալ կոչեցաւ Անդրիկ, որ էր այր հրաշալի և սքանչելի

ձգնաւոր, և զամենայն ժամանակս կենաց իւրոց անցուցեալ էր միայնակեցութեան կարգաւք զամս յիսուն, և վախճանեցաւ ամաց եօթանասնից ամենայն ժուժկալ և ճգնաւոր հանդիսիւք, և չորսհազակ գոլով յամենայն կեանս իւրում, և հաւատարեալ էր ամենայն կարգաւք և կրօնիւք առաջին սրբոց, և զամենայն ժամանակս կենաց իւրոց գկիւրակէին ոտանաւոր արթնութեամբ անցուցանէր. և էր ինքն 'ի Հայոց աշխարհէն՝ 'ի Վասպուրական գաւառէ, 'ի գեղջէ որ Անալիւր կոչի, և է մեծ (255): Սա կրօնաւորեալ լինէր 'ի տղայութեան հրաշակաւոր անուամբ և վարս սքանչելի ըստացեալ, և օրինակ բազմաց եղեալ, և հայր խոստովանութեան լինէր ամենայն Հայաստանեայց, և գարձուցանէր զամենեսեան 'ի ճանապարհս լուսոյ, և 'ի ձեռն ապաշխարութեան յորդեգրութիւն Հօրն երկնաւորին ընծայեցուցանէր զամենեսեան: Սա մեռանէր բարի խոստովանութեամբ 'ի Երիսատոս, և թաղեցաւ 'ի գաւառն Անաւարզայ, 'ի մեծ անապատն որ Դրաշարկ կոչի, զոր նորոգեաց մեծ իշխանն Հայոց Թորոս:

ՄԺԹ. Դարձեալ 'ի թուականին Հայոց ՇԿԴ (1115–1116) եղև ահաւոր հրաշալի նը-

շան 'ի քաղաքն Տաճկաց, որ կոչի Յամիթ. զի վասն բազմանալոյ անօրէնութեանց չար և պիղծ գործոց ազգին իւրեանց, յանկարծակի անկաւ հուր յերկնից 'ի մէջ գիշերի 'ի վերայ աւագ ճեմարանին իւրեանց, և սասակացեալ հուր յերկնից և բորբոքեալ մեծաւ բարկութեամբ և իբրեւ գազանաշունչ քնութեամբ զքարինս պարսպին որպէս զփայտս այրէր։ Եւ եղեն բախեալ առհասարակ ամենայն արք քաղաքին 'ի վերայ նորա, և ոչ կարացին անցուցանել զանշինջանելի հուրն, այլ դիզանայր բարձրանայր հուրն և եբանէր մինչեւ յերկինս, և ապականեալ այրեաց զաղօթից ժողովարանն և . . . . . զհանդիսարանն։ Այս եղեւ Յամիթ քաղաքն, զոր շինեաց Տիգրան արքայ Հայոց։

ՄԻ. Յայսմ ամի դարձեալ ժողով արար ասպատալարն Պարսից ամիրայն Խուրսուխ, և գայր խաղայր և հասանէր 'ի դուռն Ուռհայոյ. և կացեալ սակաւ աւուրս՝ անցանէր ընդ Եփրատ գետ, և գնաց 'ի Հալապ քաղաք, և անտի անցեալ էառ զՇիզարն զՏաճկաց քաղաքն, և կամեցաւ ասպատակ առնել զԹէլպաշար և զամենայն գաւառն Անտիոքայ։ Եւ յայնժամ ժողովեցան ամենայն ազգն Յունական Անտիոք առ կոմ

օրն Լիոնէրն, և գայր Թագաւորն Հրուսաղէմայ, և Պաղտին կոմն Ռուհայոյ, և միաբանեցան ի գաւառն Շիղարուն։ Յայն ժամ գայր ի բանակն Ֆռանկայ մեծ ամիրայն Պարսից Խազլ (Իլխազլ), որ կոչի սրդի Աբդուլխին, բազում զօրօք գայր առ Լիոնէրն, վասն զի յոյժ թշնամի էր Ռուբասուխին. գայր առ նոսա և ամիրայն Դամշկայ որ ասի Տուղ-տիկին, և եղեն միաբանեալ ընդ ազգն Ֆրռանկայ, և արարին ընդ միմեանս դաշինս և սէր հանդերձ մեծամեծ երդմամբ՝ Խազլ և Տուղ-տիկինն. նոյնպէս և Հալպայ ամիրայն եղև միաբանեալ ընդ զօրսն Ֆրռանկայ։ Իսկ կային հանդէպ միմեանց զօրքքն այլազգեաց և Ֆռանկայ զամիս չորս. իսկ զօրքն Թուրքայ ոչ համարձակեցան եբանել ի պատերազմ. և գաղտնաբար դարձաւ Ռուբասուխին խաբ տալով զօրացն Ֆրռանկայ։ Իսկ գիտացեալ եմիէ փախեաւ Ռուբասուխին. գնաց Թագաւորն Հրուսաղէմայ և Տռատոյայ, դարձան ամիրայքն Խազլ և Տուղ-տիկին և Հալպայն, գնացին ի գաւառս իւրեանց. և զայն գիտացեալ Ռուբասուխին զդնալ զօրացն Ֆռանկայ, դարձաւ Ամնտիոք և կամէր աւար հարկանել զգաւառն։ Իսկ լսեալ զայս կոմն Ռուհայոյ,

դարձաւ Յ[Ն]նտիոք ։ և առեալ զՊՕՃԷրն
եօթն հարիւր ձիաւորովն , և հասանէր ՝ի
վերայ Իւրսուխին ՝ի Հալապ գաւառին ։ և
գտեալ անպատրաստ զնա , յարձակեցաւ
՝ի վերայ նորա , և մեծաւ զօրութեամբ յաղ-
թեցին նոցա , և արարին զնոսա փախստա-
կանս ։ կալան արս փառաւորս , և առին բա-
զում աւարս , և առ հասարակ զամենայն բա-
նակին աւար հարկանէին , և մնացեալքն գը-
նացին ամօթով ։

ՄԻԱ ։ Յայսմ ամի կոմսն Լեւոն հայոց Պաղ-
տինն պատերազմ յարուցանէր ՝ի վերայ
Վասլին Հայոց իշխանին մեծի ։

ՄԻԲ ։ Յայսմ աւուրս գնաց Պաղտինն զօ-
րաք ՝ի վերայ ամուր քաղաքաբերդին Ռապ-
նայ, և բազում աւուրս պատերազմեալ ՝ի վե-
րայ՝ ոչինչ կարաց առնել , խաբեալ ուներ
զնա ՝ի պահեստի ։

ՄԻԳ ։ Յորժամ Վասիլն գնաց առ մեծ
իշխանն Հայոց , որ կոչէր Լեւոն որդի Կոս-
տանդեայ՝ որդւոյ Ռուբենեայ՝ եղբայր Թո-
ւրոսի և կին առեալ զդուստրն նորա ։ յայն-
ժամ Թորոս եղբայր Լեւոնի կոչեաց զաղայ
Վասիլն և նենգութեամբ կալաւ զնա , և
տայր ՝ի Լեւոնայ Պաղտինն կոմսն ։ Լը-
նա գաղանաբար ՝ի խոշտանգանս արկանէր

զայր քաջ և հզօր պատերազմող, և բռնու-
թեամբ առեալ ի նմանէ զամենայն գաւա-
ռըն և խափանեաց զնշխանութիւն Հայոց
ի յայնմ աշխարհէ։ Եւ Վասիլ գնաց առ
Լեոն անեարն իւր, և անտի յարուցեալ գը-
նաց ի Կոստանդինուպօլիս, և արար նմա
Թագաւորն Հռոմոց մեծ ընդունելու-
թիւն և ամենայն զօրաց իւրոց։

ՄԻԴ. Դարձեալ ի թուականութեանն
Հայոց ՇԿԶ (1117—1118), զօրաժողով արար
կոմսն Լեոն Հայոց Պաղտինն, և կայր կոմսն
Սրճոյ, և գնացին ի վերայ Հայոց իշխանին՝
որում անուն կոչէր Ապղղարիպ, որ էր եղբ-
բայր Լիկոսին և որդիք Վասակայ, արքքաջք
և պատերազմողք, որ բռնակալեալ էին զե-
պիսկոպոսն առաջին տէր Թլղպաշրայ (256), ի
Պարսից առեալ էին բազում տեղիս քաջու-
թեամբ իւրեանց. և ուժգին զօրութեամբ
առին զքաղաքն զՎիրն, և շինեցին իւրեանց
բնակարան, վասն զի էին քաջք և անուա-
նի պատերազմողք, ունէին զօրականս իւ-
րեանց արս հազար։ Եւ յորժամ տեսա-
նէր կոմսն զգաւառն նոցա, կարի յոյժ մա-
խայր ի սիրտն, և ոչ կարաց ծածկել զնա-
խանձ ջարին, զօրաժողով արար և գնաց ի
վերայ Վիրին, և ի հոգս առեալ զքրիստոս

նեայքն առաւել քան զԹուրքն, և զտարի մի ի խսար արկեալ զիշխանն Հայոց զԱրշեղ զարիպն չարաչար և աղգի աղգի նեղութեամբ. և յայնժամ առ վասանգին և առ վշտացն անճարեալ լինէր Արշաղարիպն, և տայր զՊիրն և զամենայն գաւառն ի Պաղտին, և ինքն գնայր առ իշխանն Հայոց առ Թորոս և Ռուբենայ որդին՝ Լինաւարզա։ Եւ կոմն տայր զՊիրն և զամենայն գաւառն ի Պաղերան (257) իշխանն Յունաց կայ ահաւոր. մի առ մի կարգեայ, քակեայ զամենայն իշխանան Հայոց առաւել նեղութեամբ քան զառուն Պարսից. և այսպիսի օրինակաւ հարածական արար զիշխանան Հայոց, զայնոսիկ որ մնացեալ էին ի . . . . . աղգէն Թուրքայ։ Այս մեծաւ նեղութեամբ տարաբերեր արար զամենեսեան, և քակեայ զամենայն իշխանութիւն Պոլ Վատին, և փախստական արար զամենայն դաս ազատացն Նորա ի Կոստանդինուպոլիս։ Աւարեայ և զմիւս իշխանն Հայոց զԴադրատ զայր քաջ, և յամիշտակեայ զամենայն գաւառն Նորա որ բնակեալ էր Ա՛բեւընդան (258) մերձ ի Կուրիս։ Ինչայց և զկոստանդին տէրն Կառկրառայ, որ և ի կապանս մեռանէր չարաչար նեղութեամբ ի բերդն Յամուսատ, և ի գի-

շերի շարժին գտին զնա յեզը Լիփրատ գետոյն, վերուստ'ի վայր հոսեալ'ի խոզակ Անջնկին(259) կայր բեւեռեալ (որպէս) 'ի բանտի, և այնիւ եկն 'ի վայր, և այնպէս մեռաւ։ Այնպէս և Պեմուենդն 'ի բաց վարեաց զմեծ իշխանն Հռոմոյ՝ զիշխանաց իշխանն որ բնակեալ էր 'ի Աթաշ քաղաք. նա և այլ բազում և գեղեցիկ իշխանք 'ի բանտ և 'ի չարչարանս և 'ի կապանս մեռանէին. և բազումք այն էին՝ որոց զաչս խաւարեցուցեալ էին, ըզ ձեռս կտրեալ և զուռնչան հատեալ. հատանէին և զարականս և 'ի փայտ հանեալ ըստանանէին. զոգայսն անմեղս վասն ծնօղաց իրատեալ հրամայէին(260)։ Այլ այսպիսի գործս անթուելի և անպատմելի (գործէին). զի հանապազ վասն դանձի նոցա անիրաւաբար չարչարանօք յաւերբ և յապականութիւն գարձուցին զերկիրն. և յամենայն ժամ պարարեալ կային, և այլ ոչինչ առնէին, բայց միայն նստեալ խորհէին զչարութիւն, զհիլա (զնենգութիւն), և զամենայն ճանապարհս չարեաց սիրէին. բարեաց և ամենայն երախտեաց մոռացողք։ Զ բազում անիրաւութիւնս նոցա կամի գրել, բայց ոչ համարձակեցայ, զի ընդ երկայնութեամբ նոցա էաք։

ՄԻԵ. Իսկ ի Թուականութեանս Հայոց ՇԿԷ (1118–1119). յարուցեալ Պաղտին Լուսհայոց կոմսն, և գնաց յաղթական ի սուրբ քաղաքն Երուսաղէմ։ Եւ մինչ լինէր աւուրք սուրբ աղուհացին, զօրաժողով արարեալ Թագաւորն Երուսաղէմայ Պաղտինն եղբայրն Կոդոֆրեայ, և գնացեալ ի կողմանս աշխարհին Եգիպտացւոց, կամեցաւ ածել իւր ի հնազանդութիւն զսդգն բարբարոսայ, և գտանէր զամենայն աշխարհն փախուցեալ ի մարդոյ. դարձեալ գիմաք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ։ Եւ ի գալն ցաւ հասանէր նմա, որ և ի ճանապարհին մեռանէր։ Եւ մինչդեռ կենդանի էր՝ պատուէր տայր ասելով. «Ուսարեցէք Լուսհայ և բերէք զկոմսն զՊաղտինն և կացուցէք զնոսն Երուսաղէմ տեղապահ, մինչեւ ի Դուանկայ դայցէ իմ եղբայրն. և զնա դիք ձեզ Թագաւոր Երուսաղէմ։» Եւ յայնժամ բերին դագաղաք զթագաւորն Երուսաղէմ, և Թաղեցին զնա առաջի սրբոյ Գողգոթային, դայր բարի և զարքասէր և խոնարհ սրտիւ։ Իսկ իբրեւ գտան զՊաղտինն Երուսաղէմ, հիացան յոյժ, և դարձեալ ուրախ լինէին. և համարեցան եթէ Աստուծոյ եղեւ կամն այն. և որպէս անձ

դարձ արարեալ էր Թագաւորն, տան զտեղ զապահովութիւնն Յերուսաղէմայ ի Պաղեստին։ Յե նա ոչ առնոյր յանձն, այլ զամենայն թագաւորութեան խնդրէր. և պայման արարեալ զամ մի ոչ գնել Թագ ի գլուխն, և եթէ ոչ գայցէ եղբայր Թագաւորին՝ գիցէ զԹագն։ Յե հաճեցան ամենայն տունն Ռուանկայ զբան նորա, և յաւուր Օտպիտալարդի տարան զկոմն Լուհայոյ ի տաճարն Սղոմոնի և գնեցին զնա յաթոռ Թագաւորութեան Յերուսաղէմի, և ի կատարման տարին զբանն զԹագն ի գլուխս Պաղտնին։ Յե այս Պաղտինս էր ի մեծամեծայ Ռուանկայ, այր քաջ և պատերազմող, մարմնով սրբատէր և մեղայ ատեցող, և բարուքն հեզ և ցած. այլ յաւելեր ճարտար, և յափշտակել անյագուրդ, գանձուց և արծաթոյ անկուշտ և ի տուրս ընչից նուաղ, և հաւատոմն յոյժ ուղղափառ և բարուքն եւ բնութեամբն յոյժ հաստատուն։ Յե արդ ահա երկու Թագաւորք որ ելին ի Լուհայոյ, և երկուքն զմի անուն ունէին Պաղտին կոչելով։

ՄԻՋ. Յայսմ ամի մեռանէր Տափար սուլտանն Պարսից որդին Մելիք-շահին, այր գազանատիպ յոյժ։ Արդ սա ի ժամ մահուան իւրում գործեաց գործ զարմանալի,

որ անլսելի էր լսելեաց. վասն զի յորժամ գիտաց եթէ մեռանելոց էր, յաղագս որ գեացն արար զայս։ Ուռաքեաց և կոչեաց ի պաղատան զկինն իւր զՈսհար խաթուն՝ զդուստրն ամիր Խամայելին, և գաղտ ի զօրացն հրամայեաց զնեել զնա առաջի իւր զի մի արասցէ իւր այր, և հանցէ զորդիքս իմ ի յաթոռոյ հայրենեաց իմոց. վասն զի էր մեծազգի, և քաջուն զօրաց տէր, և նա յամենայն ազգաց գեղեցիկ աղջկունս էր ժողովեալ՝ կուսանս չորս հարիւր, որ կային յոսն առաջի նորա զարդարեալ գեղեցիկ զարմանալեօք, յականց և ի մարգարտաց՝ հանդերձ արաբացի ոսկւով. և թագ ի գլուխն, և հիւսակ գլխոյն զարդարեալ ոսկւով և ամենայն պանչելի զարդարանօք ի գոյնս փայլէին առաջի նորա։ Իսկ նորա զայն զմեծ թագաւորին առաջի իւր սպանանէր, զի մի առցէ իւր այր զեղջայրն իւր, զայն որ նստեալ էր սուլտան ի խարին աշխարհն Պարսից, ի Ա՛ՀՒՀան քաղաք և ի Խոյն, որ էր երեք ամսոյ գնաց ի խոր քան զԱ՛սպահան։ Ուր զկնի այսորիկ գնէր Տաճարն յաթոռ թագաւորութեան իւրոյ զաւագ որդին իւր զՄ՛ահմուտան, և տայր զամենայն Պարսիկս ի ձեռս նորա. և զկրտսեր որդին զՄ՛ելեքն (Տուղրիլ)

դնէր սուլտան ի Պանձակ քաղաք Հայոց, և տայր զամենայն արեւելք ի ձեռս նորա։ Եւ կայր նորա այլ եւս երկու որդիք. բայց Պոհար խաթունին ոչ գոյր որդիք։

Յայսմ ամի մեռանէր Պարսից Խալիֆայն, այն որ նստէր յաթոռն Մահմետի ի Պաղտատ քաղաք (261)։

Մի. Յայսմ ամի զօրաժողով արարեալ մեծ կոմն Յոռանկաց Լոծէր, տէրն Ընտիոքայ քաղաքին, և գնայ ի վերայ քաղաքին Տաճկաց որ կոչի Զազ, մերձ ի Հալապ քաղաք։ Դայր առ նա իշխանն Հայոց Լեւոն որդի Կոստանդեայ՝ որդի Լուբենայ, գայր զօրօք իւրովք ի վերայ այլազգեացն։ Եւ արար Լոծէր պատերազմ ի վերայ Զազուն զաւուրս երեսուն, և ոչ կարէին զօրս քաղաքին ի ներս ածել. և զկնի այսորիկ տայր զպատերազմն Լոծէր Հայոց զօրայ, կոչեաց զ Լեւոն և ասէր, եթէ «Վաղիւն քո ելցես զօրօքդ ի պատերազմ», փոքձելով իմն զզօրսն Հայոց։ Յայնժամ ձայն տուեալ մեծ իշխանն Հայոց ամենայն զօրացն Հայոց որ էին ի բանակին, և ժողովեցան ամենայն զօրքն Հայոց առ քաջ զօրականն Քրիստոսի Լեւոն, և նա յորդորէր զամենեսեան մի առ մի։ Եւ առ վաղիւն ելանէին զօրք այլ

ազգեաց ընդդէմ զօրացն Ֆռանկաց. և իշ-
խանն Հայոց | եւն վառեալ ունէր զզօրսն
Հայոց ընդդէմ զօրացն Ֆռանկաց. և ձայն
ասայր զօրաց, և ի գիմի հարան զօրացն այլազ-
գեաց. և գոչեաց ուժգին որպէս զառիւծ, և
հանդերձ զօրքն բախեցաւ ի վերայ նոցա և
դարձոյց զնոսա ի փախուստ, և սրով (անկաւ)
ի հետ մինչեւ ի դուռն քաղաքին կոտորեաց
զնոսա, և արար զնոսա արգելականս, որ այլ
ոչ ելին ընդ դուռն քաղաքին ի պատերազմ։
Իսկ էառ իշխանն Հայոց | եւն քաջութեան
անուն յաւուր յայնմիկ, և գովեցաւ ի մէջ
զօրացն Ֆռանկաց. և յայնմ օրէ սիրեաց
Ռոմէր զզօրսն Հայոց։ Իսկ այսպիսի պատերազ-
մաւ նեղէր զքաղաքն Աղաղ, և ասատիկ պա-
տերազմաւ հաւանեցուցանէր զնոսա, և էառ
խաղաղութեամբ, և մարդոյ ոչինչ մեղուցաւ,
այլ արձակեաց զենակիչսն խաղաղութեամբ։
Իսկ յայնժամ եղեւ մեծ հակառակութիւն
ընդ խաղն ամիրայն և ընդ Ռոմէրն, վասն
զի յառաջն էին յոյժ սիրելիք և բարեկամք
միմեանց, և յայսմ ժամուն եղեն թշնամիք,
վասն զի Հալապն և Աղաղն խաղեալ էին
ամիրային Թուրքաց՝ որդւոյ Արդուխին, և
մնային խաղն ի սրտի իւրում։

ՄԻԸ. Իսկ ի հասանել Թուականութեա-

նքն Հայոց յամս ՇԿԸ (1117–1118). զորա-
ժողով արար ամիրայն խաղի որդի Աբդու-
խին ահագին բազմութեամբ. վասն զի (էր)
որպէս գնահապետ ի վերայ Տաճկաց զօրաց
իւրով ազգին, և վասն այսորիկ ժողովե-
ցան ի կոչ նորա։ Եւ յայսմ ամի խաղաց
բազում զորօք ի վերայ Լոռէրին և Անախ-
քայ կոմսին, և գայր ի վերայ ազգին Վրաց
ահագին ուժեամբ հազարով. և այսպիսի
բազմութեամբ հասանէր ի դուռն Լոռհայոց
քաղաքին, և զաւուրս չորս կացեալ և ոչինչ
արարեալ վնաս՝ և տեղանէր ընդ Երիրատ
գետն, և յընթացս ընթանէր իբրեւ զձի հառա-
չակուլ ի բազում ընթացից. և խաւար (262)
հասուցանէր բազում տեղեաց, վասն զի ան-
հոգացեալ կային ամենայն գաւառք Վրաց
կաց. առեալ բերդս և ագարակս և վանս
բայս, և կոտորեաց առ հասարակ զամենե-
սեան գներս և զաղայս։ Եւ եկեալ ի Պղա-
հրն և անդ բանակ հարկանէր։ Իսկ Լոռէրի
կոմսն Անախքայ էր այր մեծ և հպարտա-
ցեալ. վասն այսորիկ ոչ յառաջապատրաստ
եղեալ պանծացեալ ի զօրութիւն իւր. եւ
յիշեաց նա զամբարտաւանութիւն ազգին
իւրոյ. և առ ոչինչ համարեալ նա զզօրսն
Թուրքաց, զպատրաստութիւն և զհնարս

ոչ խորհեցաւ, և զզօրսն ոչ ժողովեաց մի-
աբան, և յայլ զօրացն Ֆռանկաց ոչ կոչեաց
իւր ի Թիկուն, և անմոռաբար գնաց ի
պատերազմ ի վերայ զօրացն Թուրքաց։
Կային Ֆռանկ հարիւր (263) ձիաւոր, և Հայն
հինգ հարիւր ձիաւոր, և հետեւակ չորս հա-
րիւր, և իբրեւ զիւր մի այլ խառնաշախ։
Իսկ զօրքն Թուրքաց ամենայն հնարաւորու-
թեամբ պատրաստեալ զինքեանս, ի բա-
զում տեղիս դարանակալս կացուցին ի քը-
միս։ Այս եղեւ ի սահմանս քաղաքին որ
կոչի Թերեպ, արարին սահաւոր և սաստիկ
պատերազմ։ Իսկ յայնժամ ի բազմութենէ
զօրացն Պարսից փակեցան ամենայն զօրք քը-
րիստոնէից ի մէջ զօրացն Թուրքաց, և ոչ
գտանէին ճարակ փախստեան. և առ հասա-
րակ խողխողեալ լինէին ի կեր սրոյ ամե-
նայն ազգն հաւատացելոց. և մեծ կոմսն
Ֆռանկաց Ռօճէր սպանաւ հանդերձ զօ-
րօքն, և սակաւ ինչ էր որ փրկեցաւ։ Իսկ
յայնժամ ի Այփրատ գետոյն մինչեւ ի Ամ-
կիանոս ծովն ասպատակ արարեալ զամենայն
աշխարհն, ելից արեամբ և գերութեամբ
զամենայն գաւառսն, և ամենայն բանակն
անկաւ սրով և անցան։ Այս եղև յամսեանն
քաղոցի վեց, բարեկենդանի շաբաթ օրն,

վ արդավանն հասաւ ի քաղաքն Անտիոք. Թագաւորն Հրուսաղէմայ Պաղտին, և արա-
բեալ ժողով զմեսացեալ զօրսն Յռանկաց և գնաց ի վերայ Թուրքն զօրացն արաց ամսոյ
քսան և հինգ, և օգնատոսի վերջատասն. և եղեւ ի խմբել պատերազմին ի նոյն տեղին,
և բազումս կոտորեաց ի զօրացն Թուրքաց, և երկու կողմանքն դարձան ի փախուստ.
և ոչ ոք էր որ յաղթահարեաց և կամ յաղ-
թեցաւ, վասն զի զօրքն յերկոցունց կողմանց
պակասեցան, բայց յայլազգ ազգն պակասեաց
յայնմ աւուր հինգ հազար այր, ոչ թէ մի-
այն սրով, այլ ի տօթոյն հարկանելով՝ ի
թագաւորէն Յռանկաց։ Իսկ ամենայն զօրքն
Յռանկաց գնացին յաշխարհն իւրեանց.
գնաց և Թագաւորն Պաղտին ի քաղաքն
իւր Հրուսաղէմ։

Յայսմ ամի մեռանէր Թագաւորն Հո-
ռոմոց Ալէքսն, այր բարի և իմաստուն և
հզօր ընդդէմ պատերազմաց, և յոյժ ողոր-
մած ի վերայ հաւատացելոց Քրիստոսի.
բայց ի վերայ ազգիս Հայոց յոյժ ատեցող
երեւեալ։ Սա գործեաց գործ որ ոչ էր ըստ
կամացն Աստուծոյ. հրամայեաց երկրորդ մը-
կրտութիւն առնել, և անարգեաց զնիկիա-
կան մկրտութիւնն, և զԲասղեդոնի կար-

գլն հաստատեաց, և անամաչ զամենայն ազգ գլն Հայոց մկրտէր. և ոչ զարհուրէր ի Հոգւոյն սրբոյ, որ լուսաւորեաց զսուրբ մկրտութիւնն. ոչ յիշեաց զհրամանս սուրբ առաքելոյն Պետրոսի որ ասէր, եթէ «Որ ըզմի անգամ մկրտեալն մկրտեն, կրկնակի զոր-դին Աստուծոյ ի խաչ հանիցեն, սկսեալ ի մեռելոտի գործոց անտի»։ Արդ սա մեռա-նէր յայսմ ամի, և նստաւ յաթոռ Թագաւորութեան որդի նորա որ ասի Պերիսերոժէն, այր քաջ և պատերազմող, և բարուք հեզ և քաղցր։ Սա եղեալ ընդունող ազգին Հայոց. և վերացոյց զցասումն անարժան մկրտութեանն, որ մկրտութիւնն և զհոգեւորն ի բաց տայր մերկանալ, և զթերակատարն հաստատեաց (264)։

ՄԻԹ. Յայսմ ամի Թագաւորն Իրուսաղէմայ Պաղտին տայր զԼուսիայ և զԹղպաշար ի կոմն Ռօսլին, և դարձոյց զնա ի քաղաքն Լուսիայ, զոր ի ժամ մահուան Ֆանգրէի եհան զնա ի տանէ և ի գաւառէ իւրմէ, և յապիշտակեաց ի Ռօսլէն զամենայն երկիրն զոր ունէր՝ անիրաւաբար. և բանտարգել արար զայր քաջ և զհզօր, և սովալլուկ ունէր ընդ նա ի բանտի. և բռնութեամբ և ուժեղ զօրութեամբ եհան զնա իբրեւ զարատա-

ւոր, և արար զնա հաստատական՝ ծառայել օտար աշխարհաց. զոր առաջին թագաւորն Հրուսաղէմայ կոչեաց զնա և մեծաւ պատուով տայր զքաղաքն Տապարի ի Ճօսլենն, և կացոյց զնա յայնմ գաւառին տէր. Հր նա մեծաւ յաղթութեամբ կայր ընդդէմ թշնամեաց խաչին Քրիստոսի։ Վասն զի յորժամ մեռաւ Պաղտին, և թագաւորեաց միւս Պաղտին Տրպուրին, և դարձոյց զՃօսլենն ի Լեռնայ, և կացուցանէր զնա ընդդէմ Պարսից պատերազմաց. զի էր այր քաջ հզօր և պատերազմող և անուանի յամենայն տունն Յունական, և ի քաջութենէ նորա դողայր ամենայն տունն Պարսից. և դարձաւ ի գութ ողորմութեանն ի վերայ Լեռնայոյ, թողեալ զգազանական ըզբարսն զոր ունէր յառաջագոյն։ Հր թագաւորեաց Պաղտին ի վերայ Անտիոքայ և ամենայն աշխարհին Կիւլիկեցւոց, Հրուսաղէմայ, և ամենայն աշխարհի նորա մինչեւ Հրգիպտոս։

Մ. Իսկ ի գալ հասանել թուականութեանն Հայոց ՇԿԹ (1120—1121), դարձեալ ժողով արարեալ խաղն ամիրայն և կազմեալ զգունդ զօրաց իւրոց հարիւր եւ լեռուն հազար, և գայր ի վերայ աղգին

Յովանկոց. արագապէս հասանէր ի գուռն Ուռհայոց քաղաքին, և ելից զօրաք առ հասարակ զամենայն դաշտն։ Եւ կացեալ զաւուրս չորս, ապականեաց զամենայն արտաքսայն ի ձեռն անթիւ զօրացն, և յարուցեալ անցանէր ի Սրուճ քաղաք, և գաղտաբար անցուցանէր զմեծ մասն զօրացն ընդ Եփրատ գետն, և ի Թլպաշրայ մինչեւ ի Ռեսուն առ հասարակ գերի վարեաց զաղքս և զկանայս. և կոտորեցին անողորմ սրբով, և զտղայսն զամենայն կրակով այրեալ խորտակեին անողորմ անթիւ բազմութիւն։ Եւ յայնժամ խաղի հանդերձ բազմութեամբ անցանէր ընդ Եփրատ, և բազում գեղս մատնեցին ի ձեռն սրոյ, և քահանայք և կրօնաւորք սրով և հրով կատարեցան։ Եւ յայսմ ժամու կոմսն Ռօսլին էր ի սահմանս քաղաքարերդին Ռասպնայ, եկեալ ի Ռեսուն և ի Պեհեսնի, զօրաժողով արարեալ զզօրսն, և ի գալն առաւօտուն զհետ գնաց Թուրքին, և անկանէր ի վերայ նոցա, և կոտորեաց ի նոցանէ հազար այր. և դարձաւ խաղն ամիրայն զօրքն և իջաւ մերձ ի Ամ՝զաղն։ Յայնժամ Թադաւորն Լրուսաղէմայ հանդերձ ամենայն զօրքն Յովանկոց յարձակէր (265) ի Ամ՝զաղ առ ի պատերազմիլ ընդ

զօրսն Թուրքաց. և գնաց Ռօսլինն՝ զօրք իւրովք Ամնտիոք, և հասանէր առ Թագաւորն։ Իւ զօրք Թուրքաց և Յունակաց կային ընդդէմ միմեանց զբաղում աւուրս և ոչ արարին պատերազմ. յայնժամ դարձաւ խազի զօրքն և գնաց յաշխարհն Մելտնոյ որ կոչի Կարմիան. և Թագաւորն դարձաւ Հռուսաղէմ, և Ռօսլինն ի քաղաքն իւր Ռուհայ։

ՄԼԱ. Դարձեալ ի Թուականութեանն Հայոց ՇՀ (1121—1122), ամիրայ ոմն ի յաշխարհէն Գանձակայ՝ խազի անուն, այր արիւնահեղ, լերբ, չար և հարամի, և էր սահմանակից աշխարհին Վրաց, և կայր սիրով ի հնազանդութեան Վրաց Թագաւորին։ Իւ յայսմ ամի խորհեցաւ չար խորհուրդ, և առեալ խազի երիս բիւրս Թուրք զօրաց՝ և մտանէր յաշխարհն Վրաց. և մաս մի գերի վարեաց և եհան յաշխարհէն Վրաց, և գնացեալ բանակ հարկանէր ի տեղի իւր։ Իւ լուեալ զայս Դաւիթ Թագաւորն Վրաց, առաքեաց զզօրս Վրաց աշխարհին, և եկեալ գաղտաբար անկանէին ի վերայ Թուրք զօրացն, և կոտորեաց ի նոցանէ արս երեսուն հազար, և զամենայն կանայս նոցա և զորդիս նոցա և զհօտս ան-

թիւ ոչխարաց նոցա վարէին 'ի գերու-
թիւն, հանդերձ բաղում և անհամար ա-
ւարաւ տարան յաշխարհն Վրաց։ Յայն-
ժամ մնացեալքն 'ի զօրաց առ սաստիկ վը-
տանգին պատառեցին զհանդերձս իւրեանց,
և հող արկանէին 'ի վերայ գլխոց իւրեանց,
և սեւազգեստիւք և բացագլխաք ճիչիւ-
նըս առնէին առ 'ի Գանձակ քաղաքն իւ-
րեանց սուլտանին, առ Սելիքն որդի Տա-
փարին, և բոլոր բարձեալ լալով առաջի նո-

տերազմոլ, և սա գերի վարեաց զՊաղտատ
քաղաք, և երեք պատերազմ վանեաց սա
ընդ Տաճարին Պարսից սուլտանին, որ և
յաղթեցաւ։ Իւ էր սա ազգաւ Ռավատի
և յոյժ հայհոյիչ Մահմետի և ամենայն կար-
գաց նորա (267)։ Նա բանակեցաւ վրանաքն
ընդ մէջ Իթովպայ և ընդ Հնդիկս. և յայ-
սմ ժամանակիս գայր փեսայանայր Խազի
ամիրային Պարսից։ Իւ յայսմ ամի խաղաց
խազի հանդերձ բազմութեամբ զօրաքն և
հասանէր յաշխարհն Դանձակայ՝ գնալով ի
վերայ աշխարհին Վրաց։

ՄԼԲ. Յայնժամ գայր Սելեք սուլտանն
Դանձակայ չորս հարիւր հազար ձիաւորով
արանց քաջաց, և խազայր ահագին բազ-
մութեամբ և մտանէին ի յաշխարհն Վրաց
ի կողմն Տփխեաց քաղաքին ի լեառն որ
Դեկոր կոչի. Իւ լուեալ զայս Դաւիթ Վր-
բաց թագաւորն որդի Գագրատայ՝ որդւոյ
Գորգոյ և հասանէր ընդդէմ թուրք զօրա-
ցին քառասուն հազարով կորովեաց և ա-
բանց քաջաց և կիրթ պատերազմողաց. ու-
նէր և այլ զօրս ի խփչաղեաց թագաւորէն՝
տասն և հինգ հազար քաջս և ընտիրս, և
յաղթէ Սլանայ արս հինգ հարիւր, և Ծը-
ռանէ՝ հարիւր։ Իւ էր օգոստոս ամսոյ ժԵ,

և պահոց Աստուածածնի հինգշաբաթի օրն, եղեւ սաստիկ պատերազմ 'ի մէջ երկուց լերանց, որ և յահագին ճայթմանէ զօրացն գոչէին լերինքն. և յայնժամ օգնութիւն հասանէր յԱստուծոյ 'ի վերայ Վրաց զօրացն. և 'ի խմբել պատերազմին զամենայն զօրսն Թուրքաց դարձուցին 'ի փախուստ։ Այս յայնմ աւուր եղեւ սաստիկ և ահաւոր կոտորած զօրացն Թուրքաց, և լցան դիակամբք գետք և ձորք լերանց, և ամենայն քարափունք լերանց ծածկեցան։ Այս եղեւ համար կոտորածոյ զօրացն Թուրքաց քառասուն բիւր. և ձերբակալս արարին արս երեսուն հազար, և յերիվարացն և 'ի զինուցն անկելոց ծածկեցաւ ամենայն երեսք դաշտացն. և զաւուրս ութ զհետ փարեցան զօրք խփչաց և Վրաց մինչեւ 'ի սահմանս քաղաքին Անւոյ։ Այս սուլտանն Պարսից Անելքն և խազի դարձան բազում ամօթով յաշխարհն իւրեանց մաղապուրծ փախստեամբ, քսան հազար չէր մնացեալ։

Յայսմ ամի էառ Դաւիթ Թագաւորն Վրաց զքաղաքն Տփխիս 'ի Պարսից, և արար սաստիկ կոտորած զքաղաքն, և արս հինգ հարիւր սրահանգս 'ի փայտն հանեալ սաստակէր չարաչար։

ՄԼԳ. Յայսմ ամի յամենայն օգոստոսի անկեալ եղեւ կրակ յերկնից և այրեաց զաւագ ճեմարանն որ կայր ի քաղաքն Պաղտատ։ Այս ճեմարանս կանգնեալ էր Տուղրիլ սուլտանն Պարսից՝ եղբայրն Ալբասլանայ, և շինեալ էր զնա զարմանալի և հրաշալի գործարանօք. զի յորժամ էառ նա զաշխարհն Պարսից, զամս քան մեծ պատերազմ վանեաց ընդ ազգն Պարսից, և ապա հաւանեցուցանէր զնոսա, և տիրեաց ամենայն աշխարհին Պարսից, և յայնժամ գայր ի Պաղտատ քաղաք, և հրամայեաց զայն աղօթից տուն կանգնել ազգին Թուրքաց, զի մի մոցեն ազգն Թուրքաց ի յաղօթից տունն Ալբասկայ. և ի յայսմ ամի անկաւ կրակ և այրեաց զճեմարանն Թուրքաց . . . . . ժողովարանն նոցա։

ՄԼԴ. Դարձեալ ի Թուականութեանն Հայոց ՇԺԱ (1122–1123), զօրաժողով արար Խազի ասպատալարն Պարսից և գնաց ի վերայ զօրացն Յունակաց, և իջանէր ի վերայ Հալապ քաղաքի, և անտի գնայր բանակ հարկանէր ի Շիղարն ի Տաճկաց քաղաքն։ Եւ յայնժամ գայր Պաղտին Թագաւորն Լիրուստաղէմայ, և գայր հասանէր առ նա կոմսն Լուսայոց Ռօսլինն, և միաբան գային իջա-

նէին հանդէպ զօրացն Թուրքաց, և զամենայն աւուրսն ամառնային ոչ արարին պատերազմ, լուռ ընդդէմ իրերաց կային։ Յամենայն սեպ տեմբերի առանց պատերազմաց քակեցան երբ կոքին կողմանքն, և դարձան իւրաքանչիւր ի քաղաք իւր. և ամիրայն Խազի մնաւ ի Հաղ լատ, և Պալակ ամիրայն՝ որ էր քուրդի Խազիի և էր այր քաջ և ժիր պատերազմող, դարձաւ դաղտաբար և գնայր ի դաւառ իւր Հանձիթ։ Յայնժամ Ղօսլին և Պալէրանն լը ւեալ զայս՝ և ընթանային զհետս զօրացն Պալակին, և հասին նմա ի դաւառն Ուռհայոյ ի գեղն որ կոչի Տափիթիլ, հարիւր ձիաւորով հասաւ ի վերայ նորա. և Պալակն իջեալ կայր ուրթ հարիւր ձիաւորովն ի տեղի մի գետա գնաց և մօրուտ յոյժ շուրջն, և զօրաք իւրովք ամրացեալ կայր ի նմա. և զօրքն Ֆռանկաց անմտաբար խելագարեալ լինէին, յարձակեցան ի վերայ, և ընդ խորափիսն ոչ կարէին անցանել։ Եւ Պալակն ամենայն զօրքն կայր ընդդէմ նոցա և նետիւք խոցոտեալ զամենայն երիսնաբս նոցա, և արարին հալածականս զամենայն զօրսն Ֆռանկաց, և արարին ձերբակալ զերկու կոմսն Ֆռանկաց զՂՕսլին և զՊալէրան. և կտորեցին զամենայն Ֆռանկն, և զՂՕսլին և զՊալէրանն երբ

կաթի կապանօք տարան ի Խարբերդ, և ե-
գին ի բանտի անդ, և զքսան և հինգ Ֆը-
ռանկն տարան ի Հալաբ։ Իսկ լինէր այս ա-
մենայն սուգ մեծ ամենայն հաւատացելոց,
և կային ահաբեկեալ մեծաւ սասանու-
թեամբ։ Այս եղև ի սեպտեմբերի ամսոյ ԺԳ։

Յայսմ աւուրս մեռանէր մեծ ամիրայն
Խազլ որդի Արդուխին, և տայր զամենայն
աշխարհն իւր ի քուրորդին իւր ի Պալակ ա-
միրայն, և յանձն արարեալ զտուն և զորդիսն
իւր ի Պալակն զՄուլեմանն, զՏուտրաշն, և
բերին դագաղաւքն զԽազլ ի Հալպայ ի Խա-
ռան, և անտի տարան Թաղեցին զնա ի Մու-
ֆարկին ի քաղաքն իւր։ Իսկ Պալակ ամիրայն
տիրեաց բազում գաւառաց։

ՄԼԵ. Դարձեալ ի թուականութեան Հա-
յոց ի յամի ՇԿԲ (1123—1124), զօրաժողով
արարեալ Թագաւորն Հրուսաղէմի Պաղտի-
նէն, և յուզէր պատերազմ ընդ Պալակայ ամի-
րային վասն երկու իշխանացն զոր արկեալ էր ի
բանդի, զՆՕսլին և զՊալէրան։ Իսկ հասանէր
Թագաւորն ամենայն զօրաբն Ֆռանկաց ի
Ասպան քաղաք, և Պալակն յառաջագոյն ե-
կեալ էր մերձ այնմ գաւառին, զի զերկիրն
արասցէ աւար և գերութիւն. և զմիմեանց
ոչ գիտելով երկոցունց կողմանցն, և եկեալ

թագաւորն սակաւ զօրքն ի Հնդեայ կան-
դարայն (268), և անցեալ գետովն ի վեր կա-
մէր եւանել ի տեղին որ ասի Հնդիկ. և Պա-
լակն բազում զօրք կայր մերձ ի քմին յոր-
ժամ հարին զվրան թագաւորին. և թագա-
ւորն կամէր որսալ բաղէովն, և Պալակն յան-
կարծակի յարձակեցաւ ի վերայ իւր ամենայն
զօրքն, և արար կոտորածս սաստիկ հզօր.
և կալաւ զթագաւորն Իրուսաղէմի և զքուր
որդին թագաւորին. այս եղեւ յամսեանն
հոռի, զկնի չորս աւուր անցանելոյ սուրբ
Օ՛ատկին։ Իսկ տարաւ Պալակն զթագաւորն
ի գուռն Կառկառայ, և նա տայր զկառ-
կառ ի ձեռս Պալակին. և տարան զթագա-
ւորն և զքուրորդին ի Խարբերդ, և երկա-
թի կապանօք եդին ի խոր բանտին, ուր
եղեալ կայր Ռ՛օսլին և Դարէրանն։

ՄԼԶ. Յայսմ ամի զկնի հինգ ամսոց որ
այս գործեցաւ՝ եղեւ զարմանալի ինչ. վասն
զի յաղագս այսորիկ եղեւ կատարած կորըս-
տեան։ Յարուցեալ միաբանեցան աբք հնդ-
գետասանք ի յամուր բերդէն Պեհեսնու,
և խորհեցան խորհուրդս քաջայ և կատա-
րեցին զգործս անմահելոյ։ Յարուցեալ արան-
ցըս այսոցիկ գնան ի Հանձիթ գաւառն.
և յաշու ունէին զամուր բերդն Խարբերդ

գոյ, ուր կայր յարգելանոցի Թագաւորն Յուանկայ և Ղօսլինն և Գալէբանն. և տե-սին զպահապան բերդին սակաւս, և կային անհոգս. գնացին ի դուռն գծուծ կերպա-բանօք և իբրեւ զդատաւորաւորք. կայր և այլ ոք բանտու ի ներքս ի բերդն. և զկնի սակաւ մի ժամու դիմեցին և մտին ի բերդն, և քաջապէս ջանացան ի բանտն, և զոր ի դուռն գտին՝ սպանին, և փակեցին զդուռն. մեծաւ աղաղակաւ հասանէին ի բերդն ուր էր Թագաւորն արգելած և Ղօս-լինն և Գալէբանն և այլ իշխանքն, եւ հանին զնոսա ի բանտէն մեծաւ ուրախու-թեամբ. և զայլս ոմանս զօրս բաղուս հա-նին ի կապանաց արք և կանայք. և ոմանք ի տեղացեացն մտին ի բանտն վասն փրկու-թեան Թագաւորին եւ Ղօսլինն և այլոց կալանաւորացն։ Յե եղեալ Թագաւորն և ամենայն բանտարկեալք, և առին զբերդն և տիրեցին ամենայն տանն Գալակին։ Յե իբրեւ լուան զայս զօրք այլազգեացն որք էին ի գաւառին, փախեան ի յայլ աշխարհ. և զմիւս այլ գիւղերին չորեքշաբաթ լուսա-նալն՝ եղեալ Ղօսլինն և հետուեակ մի ընդ նմա, և գաղտաբար գնացին ի Գեսուն, և անտի գնացին Ա՛նտիոք զի զօրաժողով ա-

բասցէ և գայցէ յօգնութիւն Թագաւորին
և այլոց կալանաւորացն։ Իսկ էր յայսմ ժա-
մու զօրապետն Յունանկաց զօրաց կոմն
Ռօփրէ (269), որ էր այր քաջ և հզօր, և
հաւատովն հաւատացեալ առաւելքան զա-
ռաւել, և սա մեծաջան աշխատութեամբ
պահէր ի Թուրքաց զամենայն գաւառն
Յունանկաց, զՀրուսաղէմ և զՆտիոք եւ
զՄառհայ, և ամենայն հնարաւորութեամբ
արիաբար կացեալ։ Իսկ յորժամ այս գոր-
ծեցաւ, էր ամիրայն Թուրքաց Պալակն ի Հա-
լապ քաղաք, և յորժամ լուաւ զայս ամենայն
եթէ հնարաւորութեամբ առին զԽարբերդ,
յարուցեալ որպէս զարծուի, և յաւուրս
հնգետասան հասանէր անդր և յարուցա-
նէր սաստիկ պատերազմ ի վերայ բերդին.
և կանգնեալ մքնայ (մեքենայ) և փորեալ
ընկեցին զբուրգն մեծ ամիրային, և այնու
ահաբեկեաց զնոսա. և ահիւ մեծաւ ելեալ
կոմն Գալէրան առ Պալակն, և տայր ըզ-
Խարբերդ ի ձեռս նորա։ Իսկ յայնմ աւուր
կոտորեաց Պալակն զամենայն կալանաւորսն
ոգիք իբրեւ վաթսուն և հինգ, և կանայս
ութսուն գեղեցիկս ձգեալ ընդ բարձրու-
թեան բերդն ի վայր, և դարձեալ մեծաւ
սրտմտութեամբ երկաթի կապանօք դնէր

զԹագաւորն 'ի բանտի, և զՎալերիանն և զքուրորդին Թագաւորին. Եւ Ղօսլենն գայր զօրօք Ֆռանկաց 'ի յօգնութիւն. և յորժամ լուեալ զայս Ղօսլենն և Ղօտրբ, վերաւորեալ լինէին յոյժ, դարձան լի տրտմութիւն և գնացին 'ի գաւառն իւրեանց, և Թագաւորն և Վալերիանն և քուրորդին Թագաւորին մնացին 'ի բանտին։

ՄԼԷ. Յայսմ ամի եղեւ պատերազմ Թրքաշնոց 'ի գաւառն Մելոտենոյ. ժողովեցան ազգիկք և կռուինկք և արօսք և կռուեցան ընդ միմեանս. և կռուեցին յաղթեաց զարագիլն, որ քնաջինք արար զնոսա, և ուր ուրեք մնացին։

ՄԼԸ. Յայսմ ամի մեռաւ մեծ խմաստասէրն Հայոց Պօղոս վարդապետն։ Սա երեւեալ այր հրաշալի, տեղեակ հին և նոր կրօտակարանացն Աստուծոյ. սա հասեալ հնորհացն առաջին սուրբ վարդապետացն և երկրորդ լուսաւորիչ երեւեալ տանս Հայոց, և վէմ ադամանդեայ ընդդէմ հերձուածողաց, և յոյժ ախոյեան լեալ ուղղափառաց և անպատկառելի վարուք 'ի կեանս իւր կացեալ ընդդէմ հերետիկոսացն. և էր սա 'ի Տարօն գաւառէն, յայսմ ամի մեռաւ, և Թաղեցաւ 'ի վանս Վազարու մերձ 'ի Սասուն։

ՄԼԹ. Յայսմ ամի Դաւիթ վրայ թագաւորն կոտորեաց ի զօրացն Պարսից վեց բիւրս. վասն զի եկեալ սուլտանն Դանձակայ բազում զօրօք, ի վերայ Կուռ գետոյ կարմուռնջ կապեաց Նաւերայնով (Նաւաք) և աբրս վաթսուն հազար անցուցանէր յերկիրն Աղիսղայ։ Եւ լուեալ Թագաւորն Վրաց, առաքեաց զզօրս և զկարմուռնջն փրկեց, և զամենայն զօրսն որ անցան՝ առ հասարակ կոտորեաց, և գնաց սուլտանն փախստական ի Պարսիկս. և մնաւ ի Ամէղկան քաղաք առ հօրեղբայրն իւր։

Իսկ էր այս թագաւորն Դաւիթ այրքաջ և հզօր ընդդէմ Պարսից պատերազմաց։ Սա բազում անգամ յաղթեաց զօրացն այլազգեաց, և բեկեաց զամենայն զօրութիւնս նոցա. և բազում անուանի գաւառս էառ ի Պարսից սրով և բռնութեամբ. էառ զՏփխիս և զԴմանիս քաղաք և զԸրուանն և զՇաքի և զՇամքոր, էառ և այլ բազում գաւառս։ Եւ էր Դաւիթ արքայ այր սուրբ և առաքինի, զարդարեալ ամենայն աստուածպաշտութեամբ և բարի արդարութեամբ, և սա երեւեցաւ ընդունող և սիրող ազգին Հայոց։ Զսա ժողովեցան մնացեալ զօրքն Հայոց. և սա շինեաց քաղաք Հայոց ի յաշ

խարհն Վրաց, և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բաղումս, և անուանեաց զանուն քաղաքին Դաւռայ, և ունէր մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ զամենայն ազգն Հայոց։ Կայր և հարազատ որդի մի Թագաւորին, որում անուն ասէին Դեմետրէ՝ ի Հայ կնոջէ, և եղբօր Թագաւորին ասէին Թոսաորմէ։

Մ Խ. Դարձեալ՝ ի Թուականութեանն Հայոց ՇԺԳ (1124—1125) զօրաժողով ա-բարեալ Պալակ ամիրայն և գնաց՝ ի վերայ զօրացն Ֆռանկաց, և հասանէր՝ ի Հալապ քաղաք. և զկնի սակաւ աւուրց՝ ի պատե-րազմ գայր՝ ի վերայ քաղաքին Տաճկաց, որ ասի Մնբէճ. և կանգնեալ բաբանս՝ ի վե-րայ կլային, և սաստիկ պատերազմաւ հար-կանէր զընակիչսն՝ ի մեծ նեղութիւն։ Այլ յայնժամ ամիրայն որ՝ ի կլայն կայր, և նա օգնականի հասուցանէր (270) առ կոմսն Ֆռանկաց Ռօսլինն և Ռօփրէ. և՝ ի հա-սանել իւր յօգնականութիւն՝ խոստանայր տալ զքաղաքն՝ ի Ռօսլինն։ Այլ նորա ժողո-վեալ զմնացեալ զօրսն Ֆռանկաց, հասա-նէին առ նա երկու կոմսն։ Գայր և Մահի կոմսն Տէքոյ, Ընթափայ և Ռասպանայ. և ըն-դեալ զայս Պալակն, յարձակեցաւ ընդդէմ

նոցա ի պատերազմ մուտ ի Մնբէճ քաղաք։ Եւ եղեւ սաստիկ պատերազմ, զի զոքք այ-լազգեացն բազում էին և Ֆռանկացն սա-կաւ էին. բայց յաղթեաց Ֆռանկաց զոքքն Թուրքաց, և զմի կողմն ի փախուստ դար-ձուցին, և Ռօսլինն կոտորելով տանէր ըզ-միւս կողմն Թուրք զօրացն. և միւս այլ կողմն (Թուրքաց) փակեաց զկոմսն Մարաշայ, և զայլ բազում արս քաջս և զհեծել աւագն զՌօսլինն (271) կոտորեցին սրով մարտիրոսա-կան հանդիսիւ։ Եւ յորժամ լուաւ զայս Ռօսլինն, դարձաւ փախստական և յաղթե-ցաւ ի տեղի պատերազմին, և վաղիւն ե-մուտ ի Թլպաշար քաղաքն իւր։ Եւ յայ-սմ աւուրքս կոտորեցան բազում իշխանք յազգէն Ֆռանկաց. և էր օրն այն ահեղ և մեծ ի վերայ հաւատացելոց. այս եղեւ յամսեանն սահմի տասն, և ի մայիս ամսոյ չորս։ Յայնժամ դարձաւ Պալակն մեծաւ յաղթութեամբ և ինքն ի վերայ քաղաքին Մնբէճայ. և ձայն պատերազմի տուեալ զօրացն, և ի բազում ուրախութենէն ի բաց հանէր զերկաթապատ զզգեստն իւր։ Եւ յայնժամ ի կլայէն արեւապաշտ (աբեւորդի) ոմն արձակեաց զնետ իւր, եւ հարկանէր զնա ի հեծուկն ի խոց մահու.

և նա ձայն տուեալ Ցումր–Տաշին, որդւոյ Խաղէի, և զամենայն իշխանութիւնն եւ զամենայն գաւառն իւր նմա յանձն արարեալ, և ինքն ի նոյն ժամայն սատակեալ լինէր։ Եւ լուեալ զայս ցրուեցան զօրք նորա, և եղեւ ուրախութիւն ամենայն աշխարհին Յունկաց կորուսան նորա. բայց հուր գաւառացն ահեղ սուգ և տրտմութիւն եղեւ և կորուստ առ հասարակ, վասն զի ողորմած էր ի վերայ ազգին Հայոց, որք էին ընդ ձեռամբ նորա։

ՄԽԱ. Յայսմ աւուրս էր Թագաւորն և քուրորդին և Գալէրանն ի Հալապ քաղաք. յայնժամ կոմսն Ռօսլենն և Թագուհին արարին դաշինս ընդ Ցումր–Տաշն գնել ընդ Թագաւորն, և տան պատանդ զդուստր Թագաւորին և զորդին Ռօսլենին, և այլ տասնև հինգ պատանդ ընդ հարիւր հազար դահեկան։ Եւ յամենեանն սեպտեմբերի ելեալ Թագաւորն Պաղտին ի ծառայութենէն այլազգեաց, և եկեալ Անտիոք քաղաք. և եղեւ ուրախութիւն յաւուրս յայնմիկ ամենայն հաւատացելոց Քրիստոսի։ Իսկ կոմսն Գալէրանն, և քուրորդին Թագաւորին մնացին առ Ցումր–Տաշն և անդ սպանան։ Եւ արդ այս երկրորդ գերութիւնս՝ որ աշխա-

տուԹեամբ Հօսլնին, ելեալ եղեւ Պաղտինն
'ի գերուԹենէն։

ՄԽԲ. Յայսմ ամի օգնականուԹեամբ Աս-
տուծոյ առաւ Կառկառ 'ի Թուրքաց. վասն
զի Միխայլ իշխանն տէրն Կառկառայ՝ որդի
Կոստանդնայ, ժողովեաց արս յիսուն, և կա-
ցեալ 'ի վերայ մեծաւ աշխատուԹեամբ՝ և
նեղեաց զԹուրքն որ 'ի բերդն էր, և ոչ
գտաւ ոք օգնական բերդին, անճարեալ
գային 'ի հաւանուԹիւն, և տան զԿառկառ
'ի Միխայլն. և այսպիսի օրինակաւս և հնա-
բաւորուԹեամբ առին զՊեպուայ բերդն 'ի
Թուրքաց, և եղեւ ուրախուԹիւն հաւա-
տացելոց Քրիստոսի։

ՄԽԳ. Յայսմ ամի Թագաւորն Դաւիթ
Վրաց արար զարձեալ սաստիկ կոտորած
զզօրսն Պարսից իբրեւ երկու բիւրս, և ե-
առ զԹագաւորաբնակ քաղաքն Հայոց Անի,
և զորդիսն Մանուչէի հանեալ 'ի Անւոյ և
տարաւ 'ի Տփխիս. և ապստեցաւ Թագա-
ւորաբնակ քաղաքն Անի, որ կացեալ էր 'ի
ծառայուԹիւն զամս վաԹսուն. և զհրաշա-
փառ և զմեծ եկեղեցին Անւոյ զսուրբ կա-
Թուղիկէն, զոր մաքիԹ էին արարեալ, ժո-
ղովեաց զեպիսկոպոսունսն և զքահանայս և
զկրօնաւորս Հայոց աշխարհին, և օրհնեաց

զսուրբ կաթուղիկէն մեծաւ հանդիսիւ, և եղեւ ուրախութիւն ամենայն տանն Հայոց, զի տեսին աղաւոեալ ի ծառայութենէ ըզսուրբ կաթուղիկէն։

ՄԽԴ. Յայսմ ամի գայր տուկ մի (272) բազում զօրօք ի Յունակաց, և իջեալ բանակաւ ի վերայ քաղաքին որ կոչի Սուր (Տիւրոս) յեղը Ավկիանոս ծովուն, և կացեալ ի վերայ Նորա զբազում աւուրս, և սաստիկ պատերազմաւ ինեղ արկանէր զքաղաքն Սուր, և նաւօք պատեաց զծովն շուրջանակաւ, և բազում զօրօք զցամաքն կալեալ ունէր, և փակեալ էր յամենայն կողմանց։ Այս կանգնեաց փայտէ բերդս ընդդէմ քաղաքին, և բաբանս և փիլիսպանս եդեալ կայր ընդդէմ պարսպին. և այսպիսի օրինակաւս վտանգեաց զքաղաքն բազում աւուրս. սովով և պատերազմաւ նեղեաց զքաղաքն զՍուր։ Այս յայնժամ անճարեալ լինէին քաղաքացիքն և գային ի հաւանութիւն. և երդուին ազատեալ ի զօրագլխէն Յունակաց, տան զքաղաքն Սուր ի տուկն, և քաղաքացիքն ելեալ գնացին ի Դամիշկ, և զկնի սակաւ աւուրց տան զքաղաքն Սուր, գերեզմանն Քրիստոսի, և դարձաւ տուկն զօրօք իւրովք յաշխարհն Յունակաց։

Մխե. Յայսմ ամի զօրաժողով արար Թագաւորն Երուսաղէմի Պաղտին և Ռ՝օսլինն զամենայն զօրս Յունակաց, և գան ի վերայ քաղաքին Հալպայ։ Դայր յայնժամ առ Ռ՝օսլին Թագաւորն Արաբակաց Սալէ որդին Տուպայսին, որ փեսայացաւ Խաղէի. կապեայց սէր ընդ Ռ՝օսլինն, և միաբանեցաւ ընդ նմա, և զօրաք իւրովք գայր յօգնութիւն Ռ՝օսլնին։ Եկն առ Ռ՝օսլինն Թուն Դգուշ սուլտանին, և սուլտանն Մելտինայ որդին Խլիճ-Արսլանին, և եղեւ մեծ հանդէս ի վերայ քաղաքին Հալպայ. և արկին զքաղաքն ի մեծ նեղութիւն սովով և պատերազմաւ զբազում աւուրս։ Յայնժամ քաղաքացիքն հասուցանէին առ սպասալարն Խուրսուխն ի Մ՝օսլ քաղաք՝ գալ օգնել նոցա։ Եւ նա ժողով արարեալ բազում զօրսց, և զկնի վեց ամսոյ հասանէր ի Հալպայ քաղաք, և ի բաց վարեաց զզօրսն Յունակաց, և զերծաւ Հալպայ. և գնացին զօրք Յունակաց իւրաքանչիւր ի տուն անվնաս։ Եւ Թագաւորն Արաբակաց գնաց և արար ասպատակ զՄ՝օսլ և զամենայն երկիր Խուրսուխին. և Խուրսուխ կացեալ ի Հալպայ սակաւ աւուրս և գնաց ի Դամիշկ, և արար միաբանութիւն ընդ Տուղ-Տիկին ամիրային Դամշկայ։

ՄԽԶ. Յայսմ ամի գայր 'ի վերայ Սելջուկեանոց խաղն ամիրայն Սեւասատոյ՝ որդի Դաշնիշմանին. սաստիկ պատերազմաւ խարեաց զքաղաքն մեծ նեղութեամբ, և կացեալ 'ի վերայ քաղաքին զամիս մի, մինչև 'ի սաստիկ սովոյն նեղեցաւ քաղաքն. և 'ի բազմանալ սովոյն բաղուամբ մեռանն, զի վարէին զաշխարհն զքաղաքացիքն 'ի դուրս 'ի բանակաւ 'ի չգոյէ կերակրոյ. և անճարեալ քաղաքն 'ի մեծ վտանգէն՝ տան զքաղաքն 'ի խաղն. և կինն Խլիճ-Արսլանայ տէրն քաղաքիս ելեալ գնաց 'ի Աշարն.

ՄԽԷ. Իսկ 'ի թուականութեանն Հայոց ՇՀԴ (1125—1126), գայր բազում զօրք ասպատարն Պարսից Մուսուլն և Տուղ-Տիկ կին և քառասուն հազար այր զօրաց ընդ նոսա, որք ընտրեալք էին ընդ ամենայն տանն Պարսից, և գայր մեծաւ զօրութեամբ և իջանէր 'ի վերայ ամուր բերդին Ֆռանկաց՝ որ կոչի Աշազ. և արար սաստիկ պատերազմ 'ի վերայ նորա, և ամենայն զօրութեամբ խլրտիստանայր առնուլ զնա, և կոխեաց արհամարհելով զզօրութիւն Ֆռանկաց, եւ կանգնեաց երկոտասան բաբանս ընդդէմ նորա, և փորեալ ընկեցին զերկու պարիսպ նորա. եւ կայր Աշազն 'ի մեծ վտանգի, և

եղէն յուսահատեալք պահապանք որ կային ի նմա։ Իսկ յորժամ լուաւ զայս Թագաւորն Հրուսաղէմայ՝ թէ դարձաւ Խուրսուխլն ի Հալապ, յարուցեալ վազվազակի և գայր Անտիոք. և ձայն տուեալ զօրացն Ֆռանկաց, գնաց կոմն Ռօսլին մեծաւ յօժարութեամբ առ Թագաւորն. գայր և կոմն Տրապօլայ որդին Ջընձլին, և Ամանի կոմն Տէքոյ, և եղեւ հանդէս զօրացն Ֆռանկաց հազար և երեք հարիւր ձիաւորաց, կայր և ի Հայոցն հինգ հարիւր, եւ հետեւակ զօրս չորս հազար. և գայր Թագաւորն Հրուսաղէմայ ի Կուրիս։ Եւ լուեալ զայս ասպասալարն Պարսից, խլեցաւ զօրաքն և իջաւ մերձ ի Հալապն։ Յայնժամ զօրքն Ֆռանկաց Թողին զամենայն զծանրոցն իւրեանց ի Կուրիս, և ամենայն պատրաստութեամբ գնացին Ամրզաղն, և տեսին ի հիմանց փլեալ և աւերեալ Ամրզաղն, և մերձ էին ի յառնուլ ընա. յայնժամ դարձան զօրքն Պարսից ի վերայ զօրացն Ֆռանկաց, և զաւուրս երիս պատեալ ընոսա՝ մեծաւ նեղութեամբ կային ի մեծ վտանգի և տագնապի ոչինչ ճաշակելով նոցա. և ի սաստիկ նեղութենէն զյոյս իւրեանց ի մահ եդին, և առհասարակ յուսահատեցան ի կենաց։

և զօրքն Թուրքաց գոռային խրոխտանալով
'ի վերայ նոցա և շրջապատեալ զնոսա, եւ
բարձրաձայն աղաղակաւ որպէս զարձիւ որ
յերամս աղաւնեաց խոյանայ, այնպէս զօրք
այլազգեացն դիմէին առ հասարակ 'ի վերայ
Ֆռանկ զօրացն. և յամենայն կողմանց կայ-
ին անճարեալ զօրքն քրիստոնէից, և ահա-
բեկեալ մահու ցանկանային, և մինչեւ 'ի
վերջին շունչն հասեալ ժամանէին։ Այլ մինչ
դեռ յայս տարակուսանս կային, խորհուրդ
ինն բարւոյ խորհեցաւ Թագաւորն, և ասէր
ցիշխանն զօրաց իւրոց. "Այկայք դարձցուք
դիմաք 'ի Թերեպն, կարծիս տացուք Թուրքաց
զօրացն եթէ 'ի փախուստ դարձաք, զի որք
'ի դարանի կան՝ յարուցեալ լցին զհետս մեր,
և մեք յայնժամ դարձցուք 'ի վերայ նոցա 'ի
պատերազմ, և տեսցուք եթէ զինչ արասցէ
ընդ մեզ Քրիստոս։ Այլ նոցա պատուէր տայր
որոց էին 'ի բերդն Այազ՝ և ասէր թէ "Յոր-
ժամ միաբանին զհետս մեր, դուք մեզ նշան
մեծ արարէք 'ի վերայ բերդիդ". և Թագա-
ւորն խլեցաւ ամենայն զօրքն 'ի Թերեպն։
Այլ գիտացեալ Ռուբուս առպատալարն եւ
թէ փախստական գնայ, ձայն տուեալ ամե-
նայն զօրացն միաբան, և զհետս ընթացեալք
գային որպէս գայլն զհետս օշխարաց. և դի-

մէին 'ի վերայ մեծաւ աղաղակաւ, և ահա-
գին հանդիսիւ և գոչմամբ ձայնիւ զհետ
Յուանկայ զօրացն վարէին։ Եւ իբրեւ գնա-
ցին մղոնս երկուս, միաբանեցան զօրքն այլ-
ազգեաց զհետ զօրացն քրիստոնէից. և յայն-
ժամ արարին Ազգն զնչան մխոյն, և տե-
սեալ Թագաւորն Հրուստաղէմայ և ամենայն
զօրագլուխքն, ձայն օգնականութեան առ
Աստուած աղաղակեցին՝ լալով և ողբալով ըզ-
կսկիծ հարեալ 'ի վերայերկինս առ Աստուած
աղաչանս առաքէին, զի հասցէ յօգնութիւն
առ սակաւ հօտին իւրոյ։ Յայնժամ հրամայ-
եաց Թագաւորն հնչեցուցանել զփող պա-
տերազմին, և միաբան զօրքն քրիստոնէից
դիմեցին 'ի վերայ այլազգեացն, և զԱստուած
օգնական կալեալ քաջանան եղեալ[275]։ Եւ
լուաւ տէր աղօթից, նոցա և մեծաւ սրտմը-
տութեամբ դարձուցին զթշուառքն 'ի փա-
խուստ. և յայնժամ սուր 'ի գործ արկեալ
զօրք հաւատացելոց, և ընդ ամենայն երեսս
դաշտաց ցիր և ցան հանին զնոսա. և կոմսն
Ճօսլինն մեծաւ զայրացմամբ գազանաբար
իբրեւ զառիւծ որ մանչէ զհետ եղանց, այս-
պէս և սա վարէր զհետ զօրաց այլազգեացն.
և յագեցաւ արեամբ անհաւատիցն։ Այն-
պէս և Թագաւորն և ամենայն զօրքն Ֆրիս-

տոսի վարեցան զՀետ զօրայն . . . . . և կոտորեցին անխնայ մինչեւ ՝ի Հալստպ քաղաք, և եղեւ Համար կոտորածոյն հինգ Հազար։ Եւ գնայ տապաստարն Պարսից և Տաղ–Տիկինն լի ամօթիւ, վասն զի հնգետասան ամիրայք ՝ի պատերազմին կոտորեալ եղեն. և դարձան զօրքն քրիստոնէից մեծաւ ուրախութեամբ և անՀամար աւարաւ. և եղեւ օրն այն օր ուրախութեան ամենայն Հաւատացելոցն Քրիստոսի. և այս եղեւ յամ սեանն տրէի քսան և չորս, և յաւուր հինգշաբաթի։ Եւ գինի աւուրց ինչ առեալ Խուրսուին զդուստր Թագաւորին և զորդին Ղօսնին, և տարաւ եդ (274) ՝ի Խլադ–Ղաղար և ինքն գնայ ՝ի Ղօսլ. և յետ տարեւոյ միոյ յաղգէն իւրմէ որք ասին Հաճիաղօթաւոր կերպիւ լեալ մտանէին ՝ի նորա տունն, և դանակով սպանանէին զնա. յայնժամ պաշտօնեայքն նորա սատակեցին զնոսա, և այլ եւս ՝ի քաղաքէն զորս գտին այնպիսի կերպիւ արս ուԹսուն սատակեցին։

ՄԻՐ. Յայսմ ամի զօրաժողով տարաւ զօրագլուխն Պարսից անԹիւ բազմութիւնս, ամիրայն արեւելից, որ ասի Ալբրէիմ որդի Սուլիմանայ. և ամիրայն Հանձիայ՝ որ ասի ՏաւուԹ որդի Սուգմանայ՝ որդւոյ Ալբուխին,

և այլ բազում ամիրայք խաղացին բազում զօրօք և գնացին յաշխարհն Վրաց։ Իսկ հասեալ ի վերայ Նոցա Վրաց արքային, և սաստիկ կոտորածով դարձուցանէր զնոսա ի փախուստ, և կոտորեաց զնոսա առաւել քան զառաջինն. և զաւուրս հինգ զհետ վարեալ և արեամբ երկոյ զդաշտս, և ի դիականց անկելոց հոտեցաւ ամենայն երկիր։

Մխթ. Յայսմ ամի մեռանէր սուրբ և բարեպաշտ Թագաւորն Վրաց աշխարհին Դաւիթ, և նստուցանեն յաթոռ նորա զորդի իւր զՎեմեարէ, զայր քաջ և առատաձեռն, նմանեալ հօրն իւրոյ Դաւթի ամենայն գործովք բարեաց։ Այս դարձոյց զորդիսն Անուշէի ի քաղաքն Անի, և բազում երդմամբ արարեալ զնոսա իւր ծառայս և հնազանդ զամենայն առուրս կենաց իւրեանց, և տայր զԱնի ի նոսա, զի բազում նեղութիւն կրեաց Անի ի զօրացն Պարսից յորժամ մեռաւ Դաւիթ։ Իսկ այլ հոգս պատերազմաց և գաւառաց անկաւ ի վերայ Վեմեարէի Վրաց արքային, որ էր ի Հայ կնոջէն։ Իսկ որդիքն Անուշէի արարին սաստիկ երդումն, վասն զի սուրբ կաթուղիկէն որ էր յԱնի, հանապազ Հայոց կայցէ, և մի մոցէ ի նա Տաճիկ և ոչ Ասուրման ազգ։

Մ.Դ. Դարձեալ 'ի թուականութեան Հայոց ՇՀԵ (1126—1127), գայր 'ի Յռանկաց որդին Պեմունդին՝ որդւոյ Լուսերթայ, որ զանուն հօրն ունէր Պեմունդ. յայսմամի գայր զորոք 'ի քաղաքն Անտիոք, և առնու իւր կին զդուստր Թագաւորին Երուսաղէմայ, և խոստանայր Թագաւորն զԹագաւորական աթոռն տալ նմա զկնի մահուան իւրոյ. տայր Թագաւորն և զԱնտիոք 'ի Պեմունդն և զամենայն աշխարհն Կիլիկեցւոց։ Իւ յայնժամ Պեմունդն որդի Պեմնդին բռնութեամբ և ուժգին զօրութեամբ արար իւր հաւան և հընազանգ զամենայն ազգն Յռանկաց, զկոմսն Լուսհայոյ զՕսլին արար հաւան և հնազանդ, նոյնպէս և զորդի Օ.ընձլին։ Իւ ինքն էր մանուկ մարմնով ամաց քսանից առանց մորուս, այր քաջ, հզօր և պատերազմող բարձրահայեաց և առիւծադէմ, և սոսկ խորտէշ. և բազում հօր որդիք և մեծազգիք եկին ըզհետ նորա 'ի Հռովմայ։

Մ.Ա. Իսկ 'ի թուականութեանն Հայոց ՇՀԶ (1127—1128), մեռանէր սուրբ վարդապետն Հայոց Կուրոս, նմանեալ առաջին սրբոցն, ուսեալ զամենայն կտակագիրս Աստուծոյ, և ամենայն խորին քննութեան հասու եղեալ, լիապէս հասեալ 'ի վերայ հին և նոր

կտակարանացն Աստուծոյ, ընկերակից Դէ-
որգայ վարդապետին որ ասի Մեղրիկ։ Մե-
ռաւ սա և Թաղեցաւ ի վանքն որ կոչի
Դրազարկ, և կոչեցաւ վանքն այն գերեզմանա-
տուն սուրբ վարդապետացն. վասն զի անդ Թա-
ղեցաւ սուրբ վարդապետն Հայոց որ ասի
Մեղրիկ, որ ժողովեաց անդ զամենայն դասս
ճգնաւորացն Եւրիստոսի, և հաստատեաց անդ
կարգ և կրօնք զառաջին սրբոց Հարցն։

ՄԾԲ. Դարձեալ ի Թուականութեանն
Հայոց յամի ՇՀԷ (1128—1129), գայր ամի-
բայն տապասալարն Պարսից, որ ասի Զանգի
որդի Աղ-Մենգուրին, այն որ յառաջ ուներ զք-
Հալապ քաղաք։ Սա գայ ի ջանէ զօրաք ի
սահմանս Լեռնայոց. և հաստատեաց սեր
ընդ կոմն Ֆռանկաց ընդ Ռօսլինն, և անվա-
նաս գնաց ի Հալապ քաղաք, և խնդրէր սեր
և խաղաղութիւն առնել ընդ մեծ կոմն Ֆը-
ռանկաց ընդ Պեմունդն տէրն Անտիոքայ,
և միջնորդս կացուցանել զՌօսլինն. և կա-
ցեալ զաւուրս ինչ, գնաց ամենայն զօրաքն
ի Դամիշկ, զի մեռեալ էր ամիրայն Դամիշկայ
որ ասի Տուղ-Տիկին և ունէր զքաղաքն որ-
դին նորա։

Յայսմ ամի մեռաւ Պարսից սուլտանն
որ կոչէր Մահմուտ որդի Տավարին, և նըս-

տաւ յաթոռ նորա եղբայրն նորա որ կոչէր Մեղէք, այն որ յառաջ նստեալ էր ի Պանձակ, զոր կոտորեաց Դաւիթ Վրաց թագաւորն, և արար զնա փախստական ի Պարսիկս։

ՄԾԳ. Յայսմ շրջագայութեան տօմարիս Հայոց ՇՁԵ (1136—1137), եկն Մահմետ սուլտանն, որդի Մէր-Խաղէի որդւոյ Դանիշմանին։ Այս եկեալ բազում զօրօք յաշխարհն Մարաշայ, և եկեալ ինքեան ի վերայ Բեռուն քաղաքին, և այրեաց զշէնս գեղջոյն և վանս-ըէիցն ի ժամանակի կիթոց այրեստանեացն. և նստեալ զաւուրս վեց ի վերայ քաղաքին, ոչ պատնէշ կանգնեալ և մեքենայս, և ոչ նետաձիգ եղեալ, այլ լռելով նստեալ, հաստանելով զջուր գետոյն և կոտորելով զուրբաստանն, այսր և անդր ասպատակելով, և զառ զկապուտ յինքեանս կուտելով։ Իսկ որ ի ներքս քաղաքին էին, օր յաւուր ակն ունէին խռովութեանց և արեան հեղման և առման քաղաքին, և այնպէս սրտաթափ եղեալ, մինչեւ ի միւսմ գիշերի թողուլ զարտաքին պարիսպն։ Այսպէս քաջալերեալ զմարդիկ քաղաքին առաջնորդք և քահանայք իւրեանց, յորդորելով պաշտպանօք առ Տէր կարդային եւ զմեռանելն խնդրէին՝ քան թէ մատնիլ ի ձեռս անօրինացն, և ծաղր

և ծանակ լինել հեթանոսաց, անձամբ և ընտանեօք խաչիւք վառելովք, բազկատարած աղօթիւք զպաշտօնն բարձրացուցանէին ըզցայգն ի ցորեկ հատուցանելով։ Իսկ որ աստուած ոչ կամեցաւ վասն մի գայց մերոց մատնել ի ձեռս թշնամեաց, այլ գթացեալ ի գինս արեան որդւոյ իւրոյ սիրելւոյ՝ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ոչ ետ հրաման պատերազմաւ պատել զքաղաքն՝ զօրացն։ Այլ արդ՝ ի յաւուր ուրբաթոյ, որ է օր շարաբաթոյ Փրկչին մերոյ, եղեւ ազատութիւն քաղաքին Քեսնու։ Այլ այրեաց զկարմիր վանքն՝ զտունն աղօթից, զկարմիրս միանձանց, զնշանս մանրեալ տերունական փայտից և քարանց, գերի վարեալ, և զերկաթեղէնս և զպղնձեղէնս յերկիր կործանեալ, զսեղանսն սրբութեան հայի փշրեալ, և զդուռն գեղեցկահիւս յօրինուածոյ և զայն ընդ ինքն բարձեալ տանելով յաշխարհն իւրեանց ի տեսս հարձից և ռամկաց, իբրեւ զԱբելացին զայն։ Այլ սա կատարեցաւ թէ «Լքեալ թողի զդուստր Սիոնի իբրեւ զտաղաւար յայգւոջ, և կամ իբրեւ զՀովանի մրգատպահաց»։ Եւ որպէս տատրակ սգալից միայն մնացեալ ի զուգակցէ, կամ որպէս զագռաւ

զազրատեսակ նստեալ ի վերայ կոտողց։ Եւ Մահմուտն գնաց փուրթանակի յաւուր ուրբաթու՝ որպէս ասացաք, քանզի համբաւ եհաս ի լսելիս նորա յաղագս Թագաւորին Հռոմոց, թէ գիմեալ գայ յօգնութիւն պաշարեալ քաղաքին Բեռնոյ, և մերոյ իշխանին Պաղտին կոչեցելոյ, մաղթելով առ ոտս նորա։ Զի յաւուրսն յայնոսիկ մերձ էր Թագաւորն Յունաց Մանուիլ աւերելով ըզ Տաճկաստան, և բարձեալ էր զիշխանութիւն մերոյ իշխանին Լեւոն կոչեցելոյ, և զքաղաքս և զբերդս ամուրս յինքն գրաւեալ, և զնա առեալ տանէր յաշխարհն Յունաց յայնկոյս Ծովուն ի սահմանս Ասիացւոց աշխարհին։

ՇԱՐԱՑԱՐՈՒԹԻՒՆ

Ի ԳՐԻԳՈՐ ԵՐԻՑՈՒԷ

ՄԴԴ. Վանդի ի բարձրանալ Թուականութեանն Հայոց յամս ՇՁԶ (1137–1138), նոյն Թագաւորն Հռոմոց որդի Ալէքսին, որում անուն էր Պեռպեռօժէն, եկն մեծ խռովութեամբ ի մեծ քաղաքն Կոնաւարզա։ Եւ էր յաւուրսն ամառնային յամին յուլիսոյ, և խաբեաց զքաղաքն աւուրս երեսուն և եօթն, և նեղեաց բաբնոյն. և նոքա առ փոխանդին ետուն զքաղաքն ցԹագաւորն Պեռպեռօժէնն, և նա էառ զամենեսեան և զ|Եւոն իշխանն Հայոց և զորդիքն և ըզկիրն, էառ և զսուրբ պատկերն Աստուածածնին և տարաւ ի Կոստանդինու պօլիս։ Եւ անդ մեռաւ մեծ իշխանն Հայոց |Եւոն որդի Կոստանդնայ որդւոյ Ռուբենայ։ Եւ ինքն Թագաւորն Պեռպեռօժէնն եկն ի

բերդն Պղահն, և կառ բռնութեամբ։ Եւ տարան զնա խաբելով ազգն Ֆռանկաց ՝ի քաղաքն որ կոչի Շեզար, և անտի եկն Յունոտիոք։ Եւ գնաց Մելիք Մահմատս այս ՝ի բերդն Շուպլաս, բազում մարտիւք մարտուցեալ, և նեռս անթիւս հեղեալ՝ ոչինչ կարաց առնել բերդին, և այնպէս գնալով ընդ կատարս լերանցն որ Կուլլա կոչին, գԼնաց յաշխարհն իւր, և մեք գոհացաք ըզ Տեառնէ որ փրկեաց զմեզ ՝ի հրոյ պաշարմանէ, և ազատեաց ՝ի թշնամեացն։ Եւ ՝ի յանցանել ձմեռանն, յորժամ մեր թագաւորն ՝ի վերայ բերդին Պղահայ գնաց՝ Տաճկաց բերդին, զկնի սուրբ Օտոիին, տէրն քաղաքին Ռեմնոյ Պաղտինն զօրօք և հեծելովք խրոմք և բնակիչք քաղաքիս եւս գնացին, և թափուր մնաց քաղաքս ՝ի յաւրանց. երկեան և ելին ՝ի քաղաքէս տուն նորդք, և գնացին ոմանք ՝ի Պերհեանի և ոմանք ՝ի Պասպան, ոմանք ՝ի Հռոմկլայն, և մնաց Ռեսուն անմարդ, սակաւ իշխանք մնացին՝ տեղեպահն հետեւակք, եւ տուկ քաղաքիս որոյ Վահրամ կոչիւր անուն։ Եւ ես նրւաստ Գրիգոր երէցս սրտապնդեալ զնոսա ժիրանալ ՝ի պահպանութիւն քաղաքիս, զի մի գուցէ եկեալ այրեսցեն զքաղաք մեր,

որ և եղեւ իսկ։ Օ՛ի ի դառնալ Թագաւորին Յունաց, որդի ՏաւուԹին, որոյ անուն ԽարՒլան (275) կոչի, դարձեալ ի Տաճկաստանէ բազում զօրօք և եկեալ ի Թագաւորէն իբրեւ զփախստական, եկն ի քաղաքն Ռասան։ Իսկ արքն ոչք էին ի քաղաքն Ռեսուն, զարհուրեալք կարծէին եԹէ Մելէք Մահմատն իցէ, Թողին զքաղաքն և ելան երեկոյէն։ Իսկ վաղիւն եկեալ սակաւ Թուրքաց անցանէին ընդ լեառնակողմն և ըմբռնեցին զայր ոմն, և տեղեկացան ի նմանէ եԹէ ոչ ոք կայ ի քաղաքին. ապա եկեալ արանց իբրեւ երեսնից՝ մտին և այրեցին զքաղաքն Ռեսուն և զդրուն քաղաքին։ Եւ զաբձրայարկ ապարանսն զոր շինեալ էր մեծ իշխանն Հայոց Դոզ Վասիլն և զայլ շէնսն բարձրագոյն տեսին, և ինքեանք գնացին փախստական՝ հասին այլոց ընկերացն իւրեանց։ Իսկ մարդիկ քաղաքին դարձան ի միւս օրն իւրաքանչիւր ի տունս իւրեանց։

Եւ էր ի Թուին ՇՀԹ (1140—1141), ոմն զօրականաց յազգէ Սիրիմահէ (276) խէԹ կալեալ ի սրտի իւրում, որոյ անուն էր Սիմոն, դողացաւ զՆԹափ ի կոմսէն Ուռհայոյ. և կալեալ ընդ ձեռամբ ամ մի, և ապա

միջնորդութեամբ բրընձին Ընտիրքայ դարձոյց զԸնթափ ի կոմն։

ՄԾԵ. ՅԻ ԹՈՒԻՆ ՇՂԱ (1142—1143) երեկ Թագաւորն Յունաց Պեռպեռաժէնն և ջանայ որ գնով առնոյր զԸնտիրք ի բրընձէն Ընտիրքու, և ապա էառ ի նմանէ գանձ և գիսպակ, և լուր մտաւ ի քաղաքն։

ՄԾԶ. Ի ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՇՂԲ (1143—1144) փոխեցաւ ի կենցաղոյս Թագաւորն Յունաց Պեռպեռաժէնն որդի Ալէքսին ի զատկին ի մուտն ապրիլի ամսոյ, և զորդին իւր հաստատեաց յաթոռ իւրոյ Թագաւորութեան զկիւռ Մանիլն (Մանուէլ)։ ՅԹագաւորն Երուսաղէմայ փոխեցաւ. և մեծ զարմանք են մահս այս երկուց Թագաւորացն՝ Ֆռանկաց և Յունաց. զի Յունացն մեռանէր յորսն և խոզն վայրի լեալ պատճառ մահու նորա. և Ֆռանկ Թագաւորին ի նմին ամի յորսի հանդիպեալ, և նապաստակն եղեւ նմա առիթ մահուանն. և նստոյց զորդին իւր յաթոռ իւր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, որ ասէր Պաղտին։ Ի նմին ամի Մահմատ Մելէքն որդի Մէմ-Խազի մեռանէր։ ՅԻ յայսմ ամի նշանս երեւեցաւ յերկինս ի կողմն հիւսիսոյ, և իբրեւ զսիւն լուսոյ յաւագ հինգշաբաթի աւուրն. և

ուԹ օր միապէս երեւեալ, և զկնի այսր երեք Թագաւորք փոխեցան։ Եւ ի տարեպաւտն ի դեկտեմբերի ամսոյ քսան և երեք օրն, և օրն էր շաբաԹ ի տօնի սրբոյն Ստեփանոսի Նախավկային, առաւ Ուռհայ ի Օ՛ան գեայ որ էր որդի Ա՛զ-Մնդուրին, և կատարեցին անխնայ վասն հաւատոցն որ ի Բրիստոս, զոր պատկեցէ զնոսա ընդ սուրբսն իւր, ամէն։

ՄԾԷ. Իսկ ի վերանալ Թուականութեանն Հայոց ՇՂԴ (1144–1145), ի տէրութեանն Ինտիքու որդւոյ Պեռեւենին, որ էր ի տիս մանկութեան՝ սկսյաղօր և ուժեղ, այլ ոչ խելանի յիմաստասիրութեան (277) իշխանութեան Պաղտնին, որ էր տէր Բեռանոյ և Մարաշայ և գաւառաց նոցա, ի փնոռէն Մելտենոյ մինչեւ ի դուռն Ինտիքու, որ էր տղայ տիօք և ծեր մտօք, աստուածահաճոյ յամենայն ի գործս արդարութեան. ի կոմսութեան Հ՛օսլնին՝ փոքու որդւոյ մեծի քաջ զօրականին Հ՛օսլնին. ի հայրապետութեանն Հայոց տէր Գրիգորիսի տանն Թորգոմայ. յաւուրս սորա և յառաջասացեալ Թաւաբերութեանս, ի տօնի սրբոյն Նախավկային Ստեփաննոսի, անտես եղեալ քաղաքն Ուռհայ ի քաղքր կատաց Ա՛ղարչին, որ և

առաւ բռնութեամբ յորդւոց Հագարու, ո-
րոյ անուն գլխաւորին Ցանգի յորջորջէր, զոր
բազում և անխնայ արիւն ետ հեղուլ, ոչ
խնայելով ի պատուական ծերան, և ոչ ողոր-
մելով գառնանման տղայոցն, որ և յահէ սը-
բոյն զարհուրեալ քաղաքացեացն փախուս-
տեամբ դիմեալ յապաւէն իւրեանց զոր Կը-
լայ Մանիակայ ասէին։ Ոչ եղայր զեղբայր
հոգայր, և ոչ հայր զորդին, ոչ մայր ի դուստր
գթայր, և ոչ մերձաւոր բարեկամ ի սիրելիս
իւր նայելով, յաղագս դառն և ծանր լուսոյն
այնորիկ ոչ ժամանեալ փախուցելոցն մնանել
յամուրն իւրեանց, խեղդամահ եղեալ ի
դուռն ամրոցին և մեռան ոգիք իրրեւ եր-
կու հազարք, որ և Պապիան Յովանկայ հեղ-
ձաւ յամբոխամիջի անդ։ Այսոսիկ տեսեալ
բռնաւորին՝ զղջացաւ ի միտս իւր, և հրա-
մայեաց վերացուցանել զսուրն որ անխնայ
և անողորմ կոտորէին զմարդիկն ի փողոցա-
միջի անդ իրրեւ զանասունս։ Եւ զաղջն
Յովանկայ զոր ըմբռնեցին, հրամայեաց ա-
ռաջի իւր սրախողխող առնել, և կին և զոր-
դիս ի գերութիւն վարել. և որք փախուս-
ցեալ քրիստոնեայքն էին, որք ժամանեցին
մնանել յամրոցն, ոչ բաւեցին աւուրս բա-
զում, քանզի ջուր ոչ ունէին. առին և

զայս եւս սիրով և երդմամբ (278)։ Այլ ամ-
բարտաւանն այն կամեցաւ խաղաղեցուցա-
նել զքաղաքն, և հրամայեաց քարոզել մի
ամենեւին այլ զԺուար առնել քրիստոնէից,
քանզի յապէցան ամենեքեան տրեամբ և
գանձիւ։ Դարձեալ խրոխտացաւ ի միտս
իւր՝ որպէս և կատարեաց զյաղթութիւնն
մեծ, զոր ի բազում ժամանակաց ոչ ոք ի
մեծամեծաց և ի վեհագունից կարող եղեւ
տիրել բռնութեամբ քաղաքին օրհնելոյ ի
Տեառնէ, զոր անտուտ բերանովն հրամա-
յեաց ի մարդեղութեանն իւրում՝ զոր գը-
բեաց ի Թղթին իւրում առ Աբգար Թագա-
ւորն, թէ "Սով և սուր ոչ մոցէ ի քաղաքս քո
ի ժամանակի Թագաւորութեան (279) քո։
Թէ կայցեն ի հրաման պատուիրանի իմոյ"։
Զոր և մոռացեալ նոցա յետ ժամանակաց ըղ-
պատուէր Աբարշին՝ նմանեալ Խարայէլացւոց
ցին, (որք) յետ քաղաքն երանելոյն զոր ընդ-
դունէին Աստուծոյ, դարձեալ փութանա-
կի մոռանային զաստուածատուր և զանչան
բարիսն, զսոխն և զսխտորն Եգիպտացւոց
և զդառն ծառայութիւնն յոգւոց հանելոյ
յիշէին, մինչեւ զանբարկանալն Աստուած ի
ցասումն սրտմտութեան բորբոքէին՝ ոչ տալ
տեսանել նոցա զերկիրն խոստացեալ։ Այն-

պէս և քաղաքացիքն զայս խոստումն Աստուծոյ մոռացեալ էին, և գործէին զանարժանս հակառակ կամաց ողորմածին Քրիստոսի, որ և զփոխարէնն առին ըստ անիմաստ մտաց իւրեանց։

Յետ այսորիկ արիւնահեղն Օսանգի զօրաժողով արարեալ եկն ի Խլաթ—Ճապար, և ի նեղ արկեալ զոր ի նեղքս էին և ի կորձէն իւրմէ սպանեալ եղեւ ի գիշերի յետ ամի միոյ, և ոչ եղեւ արժանի մեծ անուն վայելել. և անփոխան (280) քաղաքն Լուսահայ, որ եղև առումն Նորա յաւուրս փոքր Ծսլինին, որ մինչ տակաւին ի կամս Աստուծոյ էր, մեծ և յաղթող էր ի վերայ ատելեացն Քրիստոսի որպէս զհայրն իւր, որ յաւուրս իշխանութեան իւրում փառաւորեցաւ Աստուծոյ և ի մարդկանէ և ոչ ետ հրաման հատանել յաղգս քրիստոնէից։

ԾԾԸ. Դարձեալ յետ երկրորդ ամաց անցելոց Ծսլինն, որ էր քաղաքին Լուսահայոյ կամն Յուանկաց, զօրաժողով արարեալ և առեալ ընդ իւր զմեծ իշխանն Պաղտին որ էր (տէր) երկուց աշխարհաց Վերմանիկեցւոց և Բեսուանի, և եկեալ ի քաղաքն Լուսահայոյ հնարիւք ի գիշերի և գողացան զքաղաքն։ Օ ի թէպէտ և յաջողեցաւ գործն, այլ ոչ էլ

գլուխ ՝ի բարին . քանզի ժողովեալ . . . . . .յետ հինգ աւուր , և բռնութեամբ առին . և բազում քաջութիւն ցուցեալ մեծ և յաղթող զօրականն Քրիստոսի Պաղտինն , անկաւ ՝ի պատերազմին սուգ մեծ թողեալ իւրոց աշխարհի , զի առաւել սիրէր զազգն Հայոց քան զՅոռանկաց , զոր և սուրբ Հայրապետն Բարսեղ որ էր երջանիկ և հայր խոստովանութեան Պաղտնին , ասաուածաշնորհ և բանական յոյժ , երկիւղած Աստուծոյ և առաքինի ՝ի պահս և յաղօթս , հմուտ հին և նոր կտակարանաց Աստուծոյ , բարեխօս և օգնական ամենայն զրկելոց , զայս ողբերգական բանքս գրեաց վասն մահու նորա առ ՝ի խրատ ամենայն ընթերցողաց և յիշատակ ազգաց յապագս ։

Բարսեղ (281) , նուաստ ծառայ , գրեմ մեծակական ողբով և բազմահառաչ արտասուօք համբրէն հաւատացելոց Քրիստոսի , մանաւանդ մերձակայից մերոց՝ Բեսնոյ , Պեհեսնոյ , Ռասպնայ , Դերմանիկոյ , և որք ընդ սոքօք գեօղսվանք և կրօնաստանք ի ցեն յիւրաքանչիւր ազգս և լեզուս , վասն անգիւտ կորուսելոյ իշխանին և անտէր մեռանելոյն Պաղտնին . զոր առակ նշանակի և

ցոյց խրատու արար զնա ամենազօր արա-
բիչն Աստուած՝ ամենայն տիեզերաց, մա-
նաւանդ անզէղջ, սէգ (282) և անիրաւ իշ-
խանաց զօրաց Հռովմայեցւոց, յայտ առ-
նելով ամենեցուն՝ եթէ ակնարկելոյ կամաց
Աբարչին սպասեալ մնան տարերքք և արա-
բածք ամենայն, որ եթէ խեթիւ (283) հայեսցի՝
ոչ տանին զնա տիեզերքք ամենայն։ Զի
ծով աղաղակէ՝ թէ ոչ է ասա (Պաղտին),
և երկիր գոչէ՝ թէ ոչ ծածկեցաւ հողով զի
ծոց իմ. օդ և ջուր վկայեն հրային մասամ-
բքն՝ եթէ ոչ մեք համարձակեցաք բառնալ,
կամ յայտնել ումեք զառ զի խրատ պատուս-
հասեաք թագուցեալն Աստուծոյ մահ։ Զս-
գերեղմանք բոզքքն՝ թէ մեք ոչ ընթռնե-
ցաք եւ ոչ տեսաք իջեալ զի կարդս մե-
ռելոց. եւ զի մէջ կենդանեաց ոչ ուրեք ե-
բեւի. ըստ որում սիրելին իմ իշխան, հէքն
այն մանուկ, խիզախն զի մարտի, յաղթող և
քաջասիրտն զի պատերազմունս բարբարո-
սաց, մեծազօր ընթիչն և անթաքչելի սպա-
ռազէն զօրականն քրիստոնէից, սիրեցեալ
անուն իմ Պաղտին։ Որ ձեռն կոփեաց ըզ-
հաստատեղջ պնդութիւնն, կարձեաց զձեռն
հզօրին (284)։ Կամ որ բազուկ տկար խոնար-
հեցոյց զանվնասելի բազուկս անուանի քա-

ջին. կամ ո՞ր առն 'ի զօրականաց Թլփատե-
ալոյն զօրութիւն զօրեաց խորտակել (285), ի
ջուցանել յերկիր գայղձանգամն զայն, ըզ-
բուռն ասկերաց, զբարձր հասակն, զսկայա-
զօրն մարմին։ Այլ ո՞ր կատաղեցելոյ գազանի
սիրտ ոչ խանդաղատեցաւ գեղեցկութեամբ
նորա, և ոչ ամաչեաց 'ի գիմաց նորա, ոչ
գթացաւ 'ի գեղեցկութիւն նորա, և ոչ
ողորմեցաւ մանկական տիոց վայելչութեան
նորա, խնայելով 'ի հասակ տղայութեան
նորա։ Այլ հիմ ոչ ձայնեաց առ նա. Օ՞մի ոք
իցես դու, կամ ուստի, հարցանելով զբան,
թերեւս մեղկեալ զիջանէր կատաղութիւն
գազանութեանն ընդ համեստ, հանձարեղ
և ընդ իմաստուն պատասխանիս նորա։ Այլ
սայթաքելի լեզուաւ 'ի հայերէն լեզու բար-
բառէր, և առ (286) 'ի բազմաց ծանուցեալն
յիմաստութիւն 'ի զօրութիւն և 'ի հասակ,
'ի տեսակ, 'ի քաջամարտիկ յաղթութիւն և
յամենայն կիրս անցաւոր կենցաղոյս, ուստի
ճանաչի մեծանձնութիւն գոմսութեան իշ-
խանացն։

Աւելորդ վարկանիմ երկայնել զբանս,
զի մի՛ սաղտանիցիմ 'ի պարսաւադէտ ատ-
զաց նորա։ Այլ աւաղ ասեմ անբախտ կո-
ղոտեան նորա և անաջողակ ճանապարհին,

զոր բաղում անգամ զեկուցաք ոչ գնալ զան-
դառնալի զՀանապարհն զայն, և ոչ անտաց
բանից մերոց, զորոյ առեալ էր զփորձ։ Այլ
ոչ յայլ ինչ պարապէաք խօսել ընդ նմա,
բայց զօգտակարն անձին նորա և զփրկու-
թիւն և զկենդանութիւն տառապելոց քրիստո-
նէից, որում անդուր գտաւ յայսմ ամենայ-
նի (287)։ Լուստի և մեք իսկ գուշակեցաք ըզ-
կորուստ առաջի նորա բաղում անգամ. թէ-
պէտ և ցաւ էր մեզ, և դժուարին էր զայն
ասել նմա, այլ ոչ ոք իշխէր, սակայն հնա-
րեաք զայն թերեւս զարհուրեալ երկիցէ և
փոխեսցի ի յանցաւոր բարուց ի խոնար-
հութիւն (288) ողորմութեան, և յանոխակա-
լութիւն քաղցրութեան։ Այլ ոչ անգիտա-
նայր զայն, թէ անողորմ դատաստան լինելոց
է յարդար դատաւորէն Աստուծոյ ամենայն
անողորմ սրտից և ասա և ի հանդերձելու-
մըն. և ամբարտաւանից հակառակ ոչ մարդ
ոք է ի մարդկանէ, կամ հրեշտակ յերկնա-
ւորաց, այլ Աստուած ինքնին գլխովին որ
տէրն է հրեշտակաց և մարդկան։ Այլ յան-
ցանք մեզինացն բնութեամբ ընդ մեղաւ-
որս դատեն զմարդիկ, և ընդ սոքօք ածեն
ի դատաստան, ուր և բաղում անգամ ըն-
դունին ողորմութիւն ի Տեառնէ, որ սի-

բողջ է մեղաւորաց, եւ վասն մեղաւորաց խոնարհեցոյց զերկինս և եկն 'ի խնդիր կո-
ծուսեալ պատկերին, մոլորեալ ոչխարին, դարձուցանել զմեղաւորն յապաշխարու-
թիւն։ Իսկ հպարտութեամբ, ամբարտա-
ւանութեամբ եւ ապառուծն կարծուս-
թեամբ խստութեան սրտի և անողորմու-
թեամբ՝ զրկանօք հանդերձ տանին յանցան-
քին ('ի դժոխս), և զոր ըմբռնեն (289) 'ի հո-
ղեղինացս աստի, զեւս 'ի մարդկանէ դարձեն,
և դատաստան ընդ սատանայի և դիւաց նո-
քա ընդունելոց են 'ի սոսկալի աւուր անա-
ջառ եւ արդար դատաստանին Աստուծոյ։
Այլ և ոչ սաստէն (290) այնպիսի խստացե-
լոց արդարադատն Աստուած, մանաւանդ
եւ զարժանաւորսն բժշկէ՝ որք ըստ մասին
և 'ի պատճառէ և փոքր ժամանակաւ եւ
ապաշաւանօք ունիցին զատանայական զայս
չարիս յանձին, որք տաղտկան սատէն եւ
խոստովանութեամբ խայտառակեն և հնա-
բեն զերծանել 'ի դիւական մեղաց աստի 'ի
դէպ ժամանակի։ Այլ զի ոչ փութան եւ
ոչ շտապին 'ի բաց ընկենուլ, այլ օր ըստ օ-
րէ 'ի նոյն յաւելուն աճեցուցանել զմեղսն
և ժամէ 'ի ժամ և տարւոյ 'ի տարի անցու-
ցանեն ապաշաւանօք (291), խաբեալ կարծե-

լով զանխաբելին Աստուած, որոց ներբ Ա-
բարիչն։ Այլ նախ խրատել պատուհասով
միանգամ և երկիցս, և իսկ որոց բազում
անգամ, և ապա յաւելուն ի խստութիւն
սրտից իւրեանց ընդդէմ խրատուն, կորու-
սանել խոպառ և բառնայ ի կենաց աստի զնա
մի աճեցեալ բազմացի չարն ի կորուստ նո-
ցին։ Զոր վասն սոցին խրաց վկայութիւնք լի
են յամենայն աստուածացին գիրս, ի հին և
ի նոր կտակարանս, որք կամիցին ուսանել։
Յայտնի է զղջացելոցն և խոպառ կորուսելո-
ցըն օրինակ, զոր տարադէպ և աւելորդ
համարեցաք արկանել ընդ գրով. քանզի
զիմոյ զանխրատ հոգւոյն զանտէր մեռելոյն
եւ զանգնելի գերւոյն, զանգիւտ կորու-
սելոյն, զվայելուչ մանկանն, զյաղթող և
զօրաւոր քաջին, զհանճարեղ զիմաստուն և
զսեղջ իշխանին զկարճօրեայ կենացն, զնա-
զելի և զգեղեցիկ և զմարմնաւոր անուան,
զՄերի (292) Պաղտնիս ախորժեմ պատմել ըզ-
կորուստն, և հրապարակագոյժ առնել խոս-
տովանութեամբ զյանցումն, ոչ զի խայտա-
ռակեսցի. այլ զի կատարելապէս թողու-
թիւն ընկալցի յԱստուծոյ, գիտելով զայս՝
զի ով որ ծածկեալ թագուցանէն ատ ըզ-
յանցանս իւրեանց, և զգաղտնիս ամօթոյ

վասն ամաչելոյ, յիմար են այնպիսիք առաջի հրեշտակաց և մարդկան, արդարոց և մեղաւորաց, որք Ադամայ մինչև ցայսօր յաւուցեալ կան սարսափելի ահիւ և զարհուրելի դիմաք, կորուս գլխաք, դողալով առաջի ահաւոր և սոսկալի բեմին և հրապարակաժողով առենին, առաջի Հօրն բոլորեցուն և միածնի Նորա Յանին, և Հոգւոյն սրբոյ Նորոգողին զարարածս. ուր ոչ բան և ոչ գործ, և ոչ մի մտածութիւն գործոց թագուցեալ ծածկեսցի յամենատես գիտութենէ Աբարչին մերոյ, այն է եղկելի և արտասուաց արժանի և յաւիտեանս անբաժշկելի։ Յանցի և զրաւ լինել սոսկալի եւ ահաւոր դատաստանին, այնու ամօթով ընդունեալ մեղաւորաց ոգիք, կան և մնան յամաչանս խայտառակութեան մինչեւ յաներգը և յանսպառ եւ յանբաւ յաւիտեանս ըստ բանի հրեշտակապետին մեծի յորժամ խօսէր ընդ Դանիէլ մարգարէին, յայտնի արար յասել իւրում այսպէս. «Յարիցեն ոմանք ի կեանս և ոմանք յամօթն յաւիտենից»։

Իսկ որք կան ասա խայտառակեալ հրապարակեմք խոստովանութեամբ առանց ամօթոյ և կեղծաւորութեամբ թագուցանե-

լոյ և պատճառանօք զամօթ բժշկելոյ, որ է ճշմարիտ և կատարեալ խոստովանութիւն և հաւասար որքոյ սուաղանին հնորհէ մեզ թողութիւն մեղաց, եթէ արժանաւորապէս ապաշխարիցեմք, անդ ամենեւին յայտնեալ կորնչին ի մէնջ. ջնջին, մաքրին և ոչ ևս ուրեք գտանին ամենայն յանցանքն. քանզի անտես առնէ, ներբ և թողու զամենայն անոխակալ և ողորմածն Աստուած, որք ի մատուութեամբ ըստ այնմ օրինակի կամաւորապէս խոստովանին զմեզ իւրեանց յայսրմ աշխարհիս։

Այդ զայս ամենայն զմտաւ ածեալ իմ, գիտելով զոկարութիւն սիրեցեալ իշխանին՝ հրապարակեմ ի լուր հանուրց և արձանայուցանեմ այսու գրով զխոստանս նորա՝ անձին իմոյ վարկանելով զնորայն։ Քանզի որք այսպէս սիրեսցեն զսիրելիս իւրեանց, զկնի մահուանն մոռանալով կամ թագուցանելով զյանցանս նոցա կամ զերախտիս սիրոյ, հնչաւորք են յանբանից եւ մարմնոյն միայն սիրելիք։ Այդ զի մեք ըստ հոգւոյ հոգեւորապէս յոգի նորա պահեալ ունիցաք զնմամ սիրոյ, յորում եթէ փոքր մի անաչեալ էր նորա մեզ, կենդանի էր այժմ հոգւով և մարմնով, զի խստացաւ սրտիւ,

կորեաւ երկոքու�քք անգտանելի. վասն ո
րոյ ձայնեմ ողբալից ողբերգական ձայնիւ.
Լուարուք ազգք և ազինք և լեզուք ամե-
նայն, մանաւանդ թագաւորք, իշխանք և
ամենայն դատաւորք երկրի և որք ի մե-
ծութեան ըմբռնեալ էք, և ի վերակացու-
թեան, կամ ի ցնորս ինչ կենցաղոյս առաջ-
նորդութեան. լուարուք և ի միտ առէք
զաղաչանս յանցանաց սիրելւոյ և փառաւոր
իշխանին, զոր մեք ի դիմաց նորա և բե-
բանով իբր նա՝ այսպէս առաջի անկեալ ար-
տասուք։ — Նախ Աստուծոյ դիտողին զմեղ
իմ, և ապա ձեզ ամենեցուն, ով իշխանք
և իշխանակիցք ընկերք իմ և եղբարք, զորք
ամենայն հեծելովք և հետեւակաց, որոց
և բազում պակասութիւն անիրաւութեան
առ ձեզ արարի, և ռամիկ ժողովուրդք ա-
մենայն որք հակառակաց ընդ հնազանդու-
թեամբ անկեալ էիք կարկամեալ մեղօք ան-
արժան ձեռաց իմոց, ուստի անթիւ անհա-
շիւ անվճար անողորմ զրկանաց ձերոց և անի-
ծից (պտՃռ) զկեանս իմ տարարեալ կորուսի,
կորուստ՝ որ բազում ողբոց և արտասուաց
է արժանի։ Զի ոչ երբէք զմոտաւ ածի զաս-
տուածային բանս զոր հանապազ բողոքէին
հնչելով յանլուր և ի խցեալ մեղօք լսելիս

իմ, զայսոսիկ առ իս ասելով. «Մի՛ տացես ումեք ի կեանս քս ամիսել զքեզ, զի որ ըստեղծ զնա Աստուած՝ ըստ հեծութեան սրբոյ նորա»։ Եւ դարձեալ՝ զմիւս եւս պատուիրանն զոր վասն նենգութեան եւ վասն չցանկանալոյ իրաց և ընչից ընկերին, գեօղից ագարակաց և տահմանաց, և վասն ամենայն ցեղ զրկանաց, և վասն ի սրտէ հնազանդութեան քան զմեզ վերհագոյն իշխանաց՝ որպէս Աստուծոյ մատերմութեամբ և ոչ որպէս մարդոյ. և վասն չանիրաւելոյ զաք, զորբս և զայրիս և զճանապարհորդս չկողոպտելոյ, վասն անիրաւութեան և ի զրկանաց և յափշտակութենէ չմեծանալոյ, և ի շինուածս մեծամեծս չինելոյ և կամ պարիսպս քաղաքին կանգնելոյ յօտար արտաստուաց որբոց և այրեաց հարկատու չինական մարդկան լարագին հառաչանաց։ Եւ վասն չպարսաւելոյ զընկերսն բամբասանօք և նախատելի բանիւք ազարտելոյ. և վասն չպարծելոյ յանձին զօրութիւն ի մեծութիւն և յիմաստութիւն. և վասն չդատելոյ զօտարաց փոքրագոյն շիւղս անուանեալ յանցանս, և զանձին մեծագոյն գերանն անտես առնելով. և վասն չարհամարհելոյ զորէնս Աբարչին և զարս սուրբս և զառաջնորդս

եկեղեցւոյ, և ոչ դատաւոր դատաւորացն մեզ Աստուծոյ նստեալ անդդամութեամբ, և ոչ վասն ի ցաւս ցանկութեան ըմբռնելոյ մտաւք և ի հեշտախտութիւնս աղտեղանալ մեղայ շաղախութեամբ, և վասն զոր կատարածին իմոյ զմտաւ ածելոյ հանապազ, և հնարել զելանել յաշխարհէ աստի. եւ վասն զուխտեալն իմ Աստուծոյ բաղդատմանգամ՝ կատարելոյ. Այսոցիկ ամենից սխալանաց զյանդիմանութեան բանս որ գրեալ կայ յաստուածային գիրս, այնքան յաճախապէս լուայ ի քարոզչաց սմանց, մինչ զի զամենայն ի բերան առեալ՝ այլոց նստեալ վարդապետէի կրկին լեզուաւք, զոր անհաստակատոր, անտայթաքեալն և յարմարական միշտ բարբառէ. զոր և ասեմ իսկ ի կարգի զնորագիտութիւն մտաց իմոց ի հանդիսաւոր խոստովանութեանս իմ Աստուծոյ և ձեր առաջի, զի գիտասջիք և դուք՝ թէ յիրաւի բարկացաւ ինձ Աստուած աններելի։ Այ գիտէի թէ որ անողորմ սպանանէ զոք, և ի վճարել պատերազմին և ի խաղաղանալ զօրացն, այլ եւս սպանութիւն ստիպէ ունել ծարաւութիւն (293) ոտից և ձեռաց. և որք նենգութեամբ գնան առ ընկերս և առ զօրաւորս, և նենգաւոր լեզուաւք

խօսին, կամ գործեն զանօրէնութիւնս, ա-
սացաւ Յիսուսէն՝ թէ «Ի հեղուս զարիւն
մարդոյ, փոխանակ հեղջի արիւն նորա». և
«Ամբ արիւնահեղք և նենգաւորք մի հա-
սարակեսցեն զաւուրս իւրեանց». և զարս
արիւնահեղս եւ նենգաւորս ընդ պիղծս
համարի, և կորուսանէ Տէր։ Դիտէի զի
գրեալ է. «Մի ցանկանայցես իրաց ընկերին
քո, և մի յանիրաւութենէ մեծանայցես.
զի մի ի կէս աւուրց թողցես զնոսա»։ Իւ-
զայն եւս գիտէի, եթէ ապարանքն մեծա-
մեծք և գեղեցիկ շինուածքն և քաղաքքն
յանիրաւութենէ և ի զլկանաց կորեան,
և այլք ի հառաչանաց և յարտասուաց ըս-
կըսան շինիլ, ոչ եւս են բնակելոց ի նոսա։
Դիտէի և զասացեալն ի Պաւղոսէ անհնա-
զանդելոց իշխանաց իւրեանց կամ հակա-
ռակ եղելոց կամաց նոցա, զի ոչ մարդոյ՝
այլ Աստուծոյ հրամանին հակառակ կան.
վասն որոյ և դատաստան ընդունելոց են ի
Տեառնէ աններելի աստ և ի կատարածի։
Դիտէի, զի ոչ է պարտ պարսաւել դատել
կամ բամբասել զոք, և ոչ պարծանս տա
անձին մեծութեամբ կամ իմաստութեամբ
զասացեալն ի Տեառնէ. «Մի դատիք՝ զի
մի դատիցիք». և եթէ «Կեղծաւոր, հան

նախ զգերանն յականէ քու�մէ», և որ ըզ-
հետ գայ այսոցիկ բանս։

Այլ զի մի մի ի կարգ անկեալ թուիցեմ
զամենայն յանցանաց յանդիմանութիւնս
որ գրեալ կայ յաստուածային գիրս, զոր
ես զամենայն գիտէի, և գիտութեամբ և
օրինաք եմ մեղուցեալ Աստուծոյ. վասն ո-
րոյ անկանիմ առաջի Աստուծոյ և խոստո-
վանիմ զամենայն զմեղս իմ, մանաւանդ զամ-
բարտաւանութեանն զստութեանն և զան-
ողորմութեանն զրկանաք հանդերձ։ Անկու-
թիւն, իշխանութիւն եւ պատրանք անտի
կենցաղոյս խաբեցին զիս։ Ոչ անյուսու-
թեամբ ունէի զաղաչանս, կամ ի նոսին
հաստատեալ անողջանալի (294) զմիտս. այլ
ի բաց լքանել թողուլ զամենայն պատրա-
նքս խաբէութեան կենցաղոյս կամէի, սա-
կայն ոչ փութացայ մինչև զվերջին կորստական
գայս խրատ պատուհասի ընկալայ ի Տեառ-
նէ։ Արտաքինաբար յառաջագոյն զվարատ քաղ-
ցրութեանն ոչ համարեցայ բժշկութիւն,
և արդ դատախազեմ ինձէն լինիցիմ դա-
տապարտ անձին իմոյ. և արդարացուցանեմ
զԱստարիչն, զի թէ փոքրագունիւքն զոր ած
ի վերայ իմ հարուածս վիրայ մարմնոյ, եւ
տարաժամ մահու բարձումն կենակից կնաջ

ծննդովք՝ իւրովք, և որ սոցին նմանս յօ-
տարաց մարմնոս խրատեալ էր իմ, փոխա-
դրելով ի բարիս՝ ոչ հասանէի յանձնարելի
չարիս. այլ զի գանեցայ և ոչ խրատեցայ, հա-
բայ և ոչ բժշկեցայ, խոտացուցանելով զա-
պաւումն կարծրութիւն անբարտաւանու-
թեան սրտիս, անգիտանալով թէ քաղցրու-
թիւն Աստուծոյ յապաշխարութիւն զիս կո-
չէ՝ ողորմութեամբ ներելով անզգամութեան
իմոյ։ Ես յիշեցի, ոչ զմտաւ ածի մինչև ըզ-
քաղցրութիւն ողորմութեան Արարչին ի
ցաստումն բարկութեան անձին իմոյ դարձ-
ուցի։ Այլ արդ գիտեմ զայս թշուառա-
կանս, զի ոչ որպէս մեռեալ ի մահու
յիշատակիցիմ, և ոչ որպէս կենդանի ի
կեանս երեւելով, որքան Տէրն կենաց եւ
մահու բարկացեալէ ինձ. ուստի և հրեշ-
տակք յերկինս դարձուցին զերեսս իւրեանց
յինէն ի բառնալ յինէն օգնութեան եւ
ողորմութեան Արարչին. և մարդիկ ամենե-
քեան խսպառ ատեցին զիս, հայր իմ և մայր
իմ մահուամբ թողին զիս. և որդիք մարմնոյ
կենակից ընկերք և զոքք ամենայն անողորմք
եղեն ի վերայ իմ. մերձաւորք բարեկամք
և անդեան ծանօթք և որդիք մերժեցան և
օտարացան ի սիրոյ իմոյ. և ոչ ամենե-

ւ-ին (295) յիշէն զնս. որպէս յայլազգւոյ գաղ-
ջեցան և հեռացան ամենեքեան յինէն, և
ԼՔեալ Թողին զնս անյիշատակ մեռեալ և
անգնեալ գերի ի մէջ այլազգեաց։ Այլ մե-
ռացեալ եղէ ես որպէս մեռեալ ի սրտէ
ամենեցուն, և ընկղմեալ խորտակեցայ որ-
պէս խեցեղէն անօթ կորուսեալ։ Այլ արդ
մեր է յոյսն իմ, և կամ զի՞նչ վճար յանբե-
րելի տառապանաց ատամ. և ա՞չ ոք ինչ որ
ողորմեսցի ի թշուառացեալ հոգիս՝ զի երե-
ւեցցայ ընդ կենդանիս և կամ մեռեալս
յիշատակեցցայ ի մարդկանէ։ Այլ ոչ ոք է-
զեւ. ամենեքեան ատեցին զնս խոպառ. քան-
զի ահա խոտովան եղէ հանուրց եղբարց
և տիեզերաց հրապարակատես հանդիսիւ
և անպատկառելի համարձակութեամբ ըզ-
վերս անէ՛ն իմոյ՝ և ոչ բժշկեցայ, ոչ ազա-
տեցայ. վասն որոյ դարձուցանեմ զբանս ա-
ղերսալից խոստովանութեան իմոյ առ տէրն
իմ արարիչ և առ անոխակալ հայրն ամենե-
ցուն և Նոտուած, և ըստ նմանութեան ա-
նառակ և արբշիռ մանկան անկեալ առաջի
ողորմած մարդասիրին գոչեմ ասելով. Հայր
երկնաւոր, մեղայ յերկինս և առաջի քո,
մատանաւոյ, կօշկաց և անճառ պատմուճանի,
այլ ամենայն հոգեղինաց մի զատեր որդ-

շեր զիս, մի կորուսաներ. եթէ կենդանի իցեմ յայտնեա և հան զիս ի կորստենէ, զի խորք անդնդոց յայտնի են առաջի քո, և ի մեռելոց կարող ես յարուցանել Տէր, զի երթեալ ապաշխարեցից մինչեւ ի լուսն կենաց մեղաշնչոյս (296)։ Օ՛ի այժմ ծանեայ ճշմարտապէս և գիտացի զանհանդուրժական ցասումն բարկութեան արարչի, և զի ահ մեծ է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ։ Իսկ եթէ մեռեալ իցեմ մեղքք և վճարեցայ ի կենաց մարմնոյ, շատ լիցի, ով անոխակալ Աստուած, այրքան ժամանակս աւուրց մեղուցեալ հոգւոյ իմոյ մնալ ի տագնապի և ի տանջանս անչիշատակ և անՆուէր. յայտնեսցես զիս ողորմութեամբ, թերեւս լիցի յիշատակ կամ ողորմութիւն ողորմելի հոգւոյս. և մի նորօրինակ տանջանօք տանջեր զիս ի մէջ մեռելոց և կենդանեաց, զի տէր ես մահու և կենաց, և ակնարկելոց հրամանին քո սպասեալ մընայ մահ և կեանք յայտնել կամ թագուցանել զիս։ Գիտեմ, Տէր, զի անչափ և անՆերելի բարկացուցի զքեզ մեղքք իմովք յաստուածայինս և ի մարդկայինս, կամայ և ակամայ, խորհրդով, բանիւ, գործովք, հոգւով, շնչով մարմնոյ և մտօք և ամենայն

զգայութեամբ (297), վարակեալ կապեցայ ի տոռուններս մեղաց և զամենայն աւուրս կենաց իմոց։ Այսն որոյ դարձեալ անկանիմ առաջի քո, ով ողորմած անոխակալ և մարդասէր Աստուած, գթա յիս անտէր մեռեալս և խնայեա ի ստեղծուածս ձեռաց քոց, և մի վատահանար զկորուսեալ ծառայս քո ի մարդկան ողորմութիւն. զի ցամաքեցաւ սէրն իմ յամենայն սրտէ, և շիջաւ գութ իմ յամենայն մտաց, և բարձաւ անուն իմ ի մարդկանէ, և կորեաւ յիշատակ իմ յերկրէն կենդանեաց։ Որոյ գաստուցեալ ընդ իս՝ ոչ այլ ոք ողորմի ինձ, քանզի քեզ սպասեալ մնան արարածք ամենայն Ճրշմարիտ ողորմածիդ և անչիշաչար մարդասիրիդ։ Յո՛ վստահանամ զիս. հայր իմ և մայր իմ թողին զիս, և եղբայր իմ մոռացաւ զգութ սիրոյ զոր դառնացուցի, այլ հարազատն եղբայրութեան մերոյ զբաղեալ կապեցաւ ի ցնորս աշխարհիս և ի հոգս երկրաւորս՝ հետեւելով յիմարինակ յընդարձակ անզգուշական և սայթաքելի ճանապարհն, որ ոչ ժամանէ թէ կամիցի՝ զանձն իւր հոգալ կամ յիշել. թող թէ զանգինս դերել և զանգիւտ կորուսեալս (գտանել)։

Երդ մի մերժեր խոպառ, և մի անտես

առներ և մի թողուր զիս կորստեան, Աստուած Աստուած իմ, և մի դարձուցաներ զերեսս քո յինէն. մի սրտմտութեամբ խրատեր և մի բարկութեամբ յանդիմաներ. մի մոռաներ ի դատաստան ընդ դատապարտեալ ծառայիս, և մի թողուր զիս աներեւոյթ տանջանօք յօրինակ տիեզերաց։ Վկայութիւն գնեմ, վկայութիւն երկնի և երկրի. հրեշտակաց և մարդկան՝ այլ ոչ եւս գնալ զանառակ կորստեան ճանապարհն, և ոչ եւս անցանել զպատուիրանաւ քո, եթէ զայս անգամ ողորմեացիս և թողցես զանչափ անիրաւութիւն երկրորդ անառակիս, եթէ հասցէ ինձ միւսանգամ լինել ընդ կենդանիս։ Այլ թէ իսկապէս մեռեալ դատապարտեցայ, և այն քեզ ողորմել պարտ է, մարդասէր և միշտ ողորմած Աստուած. զի ի դժոխս ոչ ոք խոստովան լինի առ քեզ, և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ։ Ցոյց զիս արդարոց, և յայտնեա արժանաւոր ծառայից քոց զանարժան ոգիս՝ որով գտից մաղթանօք զողորմութիւն. քանզի գիտեմ զի այժմ ոչ ոք ամենեւին յիշէ զանչիշատակս ի բարիս քո։ Տէր տրտում գոլով ընդ իս և երեսս դարձուցանելով բարկութեամբ, բարկացան երկինք և երկիր, հրեշտակք և

մարդիկ 'ի վերայ իմ, և ամենայն արարածք խեթիւ և խաժուռ դիմաք հային ընդ իս. զի թէ մահ փախեաւ յինէն և կեանք հեռացաւ, երկիր զարհուրեալ յահաւոր քո հրամանացդ՝ ոչ ընկալաւ զիս 'ի ծոց իւր, և ոչ ետ տեղի գերեզմանի զի կարդասցեն զանուն կորուսելոյս 'ի հողս ուրեք։ Արդ եթէ անդդայ և անբան տարերքս այսքան գարշելեան մերժելեան և 'ի բաց ընկենցին զիս յարարածոց ատի, ոմ այլ աք 'ի մարդկանէ իցէ որ ողորմեսցի ինձ։ Արդ դարձիր Տէր 'ի բարկութենէ, և դարձո զերեսս քո 'ի մեզայ իմոց, հաշտ ակամբք և քաղցրութեամբ հայեսցիս ընդ իս։ Այս տէր, այս տէր, Հայր սուրբ, այս Փրկիչ աշխարհի, այս ողորմած և մարդասէր Հոգի սուրբ, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի և աղաչանօք առաքելոց և մարգարէից և համօրէն սրբոց սրբ 'ի սկզբանէ աշխարհի հաճոյ եղեն քեզ, գթա յիս և վերաբերեալ յայտնեա զկորուսեալս, կենդանի կամ մեռեալ, մեռելոց և կենդանեաց Աստուած, և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Արդ զայս ազերբայլի խոստովանութեան և մաղթանաց բանս կերպարանեալ գրեցաք 'ի դիմաց անտէր գերեզմն և անյիշատակ մե-

ռելոյն, սիրելւոյ իշխանին Սիրի Պաղտնին, և ոչ դադարեմք նովին ձայնիւ բողոքել գո-
չելով առ սուրբ Աստուած և առ սուրբս նորա մինչեւ գթացեալ ողորմեսցի և բժշկեսցէ զվշտագնեալ միտս մեր որ պատուհաս եհար զնա վասն մեղաց նորա և մեր։ Ալ և դուք որ լսէք զայս ամենայն զամբարտաւանութեան բանս զոր ի գէմս նորա և վասն նորա գրեցաք, հրապարակեցէք (298) անպատկառելի և հանդիսաւոր խոստովանութեամբ որպէս օրէն է ճշմարիտ խոստովանողաց ըստ պատուիրանաց Աբարչին, այսպէս սաստկացուցանել զյանցանս խոստովանութեամբ առաջի դիտողին զկորհուրդս և զդործս ամենայն մարդկան, մինչեւ քաղցրացեալ Թողչէ զամենայն։

Սակայն դուք մի յուրաստ կայք և անհոգս լինիք, ով իշխանք, իշխեցեալք և զօրք ամենայն, եթէ ձեզ ներեսցէ անքուն ակն Աստուծոյ դատաստանացն, ինորայն հայեցեալ պատուհաս կորստեան, զմտաւ ածէք զատուածասաստ բարկութիւնն։ Ողբասցէ, ասէ, սոՀին, զի անկաւ մայրն։ Լուարուք և ի Տեառնէ զսոցին նման բանս, զոր առ անխրատն և առ անլուրն (298) Իսրայէլ բարբառեցաւ ասել զայս. “Համարիք թէ

այս Գալիլիացիք եղեն մեղաւորք քան զամենայն Գալիլեացիս, որոց զարիւնն Պիղատոս խառնեաց ընդ զոհս նոցա։ Կամ նոքա ուխտաւորանքն՝ զոր աշտարակն սպան, համարիք եթէ նոքա պարտապա՞նք եղեն քան զամենայն մարդիկ որ բնակեալ են Յերուսաղէմ. ոչ, ասեմ ձեզ, այլ եթէ ոչ ապաշխարիցէք, ամենեքեան նոյնպէս կորնչիջիք»։

Եւ արդ գիտելով զայս ամենայն զգուշացարուք անձանց ձերոց, ով բռնաւորք և իշխանք, զի բռնաւորաց՝ բռնաւորագոյն և անաչառ դատաստան լինելոց է աստ և ի կատարածին։ Դուք ոչ գրոց լսել կամիք, և ոչ այնպէս հրապարակեմք զյանցանս ձեր խոստովանութեամբ. քանզի այս բանք նմա ի պարծանս և ի բժշկութիւն գրեցաւ, և կենդանեաց յօրինակ զգուշութեան և ի յանդիմանութիւն, և նորայն Թողան յանցանքն ամենայն, և բժշկեցաւ հանապազորդ խոստովանութեամբ և յետոյ արեամբ ի մեծ պատերազմին։ Ամբարտաւանութիւն և ստութիւն նորա բժշկեցաւ յայն օր անչափ և սաստիկ խոնարհութեամբ, որով զկնէր առ ամենեսին, առ զօրս հեծելոց և հետեւակաց, քաղցրագոյնս և ախորժականս և ողորմագին բանս բարբառելով. որդիս Աստուծոյ և եղ

բարս հարազատս զամենեսեան անուանէր, իշխանս և տէրս և քաջազունս յանուանէ կոչէր։ Մարդէր զօրսն ամենայն, յորդորէր, սրտապնդէր. քաջալերէր իբրեւ ըմբիշ և զքաջ նահատակ, շուրջանակի զօրացն անցանէր, ուժգին և ահագին ձայնիւ ամրացուցանէր զօրսն ամենայն։ Զայնէր առ ամենեսեան յանուանէ զանուն քաջութեան. «Վա՛չ, ով քաջք, վա՛չ բաղդին և աւուրս շնորհի, որ ասա նահատակի փաքր մի և յաղթէ (299)։ Մի զանգիտէք ի նոցանէ. ահա օր հանգիսի և մահ երանելի վասն Քրիստոսի ի վերայ քրիստոնէից մեռանելոյ»։ Եւ իբրեւ այսպէս զօրացուցանէր հաստատէր զարտաքոյ կողմանս բանակին, դարձեալ ի միջոց անդ զօրացն մտանէր, զլքեալսն երկիւղիւ և զխուսափեալսն Թագստեամբ (299) յառաջ քարշէր, և զքաջասիրտսն գովէր, զի բաց ընկեցեալ զէնս անարի արանցն, կամ որք ուշնէին կարկամեալ ցամաքեալ ձեռս, յափշտակէր կորզէր և արիացելոցն մատուցանէր ի ձեռին. ոմանց տայր, յոմանց առնոյր։ Եւ դարձեալ առիւծաբար խրոխտանօք յայլ վայրս հասանէր ահաւոր դոչմամբ և բարձրաձիչ աղաղակաւ, զգիշերն ողջոյն և զտիւն ամենայն ընոյր զմիջոց բանակին, զն

ոչ ունէին պարապէր զայլ ուրուք լսել զձայն քաջութեան, կամ ակնն՝ տեսանել զարագ-ընթացս սլացումն հաւատար և նման Սիրի Պաղանին, մինչեւ պակասեալ հատաւ 'ի ձայնէ, և 'ի բանակին (դառնայր) ուժոյն զորութեամբ հանդերձ երիվարաւն, և ժանգանալ կարմրութեամբ գոլորշեաց՝ սրտին 'ի սանձապատ զրահէն բերանոյ նորա, որպէս ասի յոմանց։ Այդ խոտութիւն հպարտութեան նորա այսու օրինակաւ ընջեալ մաքրեցաւ

Իսկ անողորմութիւն սրտին յայնմ աւուր ողորմութեամբ գթովք (500) ապէխարշեալ խորովէր 'ի վերայ տառապելոյն կրստեան. ուստի և գեղերելով ընդ նոսա՝ ինքն կորուսեալ եղեւ և զրկանաց անցումն, որով զամենեսեան զրկէր առանց ողորմութեան, և ինքն զրկեալ գտանէր յայն օր 'ի մարտի անդ յամենայն օգնականաց իւրոց։ Վասնզի լքեալ թողին զնա ընկերակից իշխանք և զօրք ամենայն 'ի մէջ մեծ պատերազմին, և ելին 'ի մարտէ անտի, և ոչ ոք ողորմեցաւ նմա դառնալ գիտել թէ ուր իցէ գլխաւոր իշխանն մեծ զօրականն մեր։ Այս յայտ անտի է՝ զի ոչ ոք այլ 'ի զօրացն նորա կրեաւ կամ ըմբռնեցաւ ընդ նմա, և ոչ ամենեւին ե-

տես ոք զնա, և ոչ ի վատութենէ զօրացն ունիմ ասել զայս, կամ կամաւ զկորուստս նոցա, այլ զի հարկ էր այնպէս բազմաժամանակեայ զրկանացն և անիրաւութեան որ առնայ՝ յայնմ աւուր զրկանօք ի զօրացն գտանել և բժշկութիւն (301), որպէս վերագոյն ասացաք։

Իսկ բազմաց արիւն որ հեղաւ յաւուրս նորա ի գալ յայս երկիր վատշուէր և սուտ նենգաւորին Վասլին միով արեամբն իւրոյ անձինն, զոր յօժարութեամբ սրտի ետ հեղուլ ի վերայ քրիստոնէից, որք ելին և ազատեցան ի պատերազմէ անտի, զոր և ինքեանք յայտնապէս խոստովանին զերծեալքն ամենայն, Յ՝ստուծոյ ունելով նախ շնորհս և երկրորդ ի մարդկանէ Սիրի Պաղանին՝ զազատութեան իւրեանց։ Յաւ արդ եթէ կապարեցաւ մահուամբ ի պատերազմի անդ, Թողութիւն ընկալաւ ի Տեառնէ ամենայն յանցանաց իւրոց, և ի սոսկալի աւուր դատաստանին ի հատուցումն ամենայն արդար գործոց (302) ընդ բարեպաշտ իշխանան և ընդ քաջ նահատակն պսակելոց է Յ՝ստուծոյ. զի այսպէս գիտեմք և հաւատամք զպատերազմողաց մահ որ անօրինաց սրով մեռանին ի քրիստոնէից։ Յաւ եթէ կենդանի իցէ՝ և յայտնեսցի քաջութիւն նորա. տարածեցաւ՝ և տա-

բանի օր ըստ օրէ ընդ տիեզերս ամենայն մինչեւ ի կատարած աշխարհի։

Յետ արդ զայս ամենայն երկարապատում բանս զոր գրեցաք վասն Նորա, մի ոք ի պարսաւագէտ ատողաց Նորա և յօտարասերս մախոզաց ստգտանիցէ զմեզ բամբասել. զի այս մարտաց է և հայկատակաց։ Յետ որք առ կենդանութեան խօսեսցին կամ գրեսցեն զայսպիսի բանս, և ոչ ոք վասն անտէր մեռելոյն և անգիւտ կորուսելոյն խօսեսցի. զի որքան ի կեանս էր, ոչ երբեք լուաւ նա զբանս քաղցրութեան կամ գովեստ ի մէնջ, այլ պատուհասի և յանդիմանութեան, ոչ բով կսկծեցուցանէաք (503) հանապազորդ զմիտս Նորա։ Յետ թէ պատահէր և յառնէր նա ի մեռելոց, կամ էր յայտնել կենդանի, ոչ ունէր տեսանել նա զայս գիր և զվասն պատերազմին և կորստեան Նորա զոր (503) գրեցաք, ոչ ի տասանց և ոչ ի քսանից, այլ յամենեցուն միապէս զայն լուաք, մանաւանդ յատողաց Նորա, և ի նոցին իսկ ի զօրացն Հռովմայեցւոց։ Այլ այն ինչ է յայտնի պատճառ բանից մերոց երկարութեան, (զի) սիրէաք զնա հոգեւորական սիրով որպէս օրէն է ծառայից Աստուծոյ, ըստ որում և նա զմեզ. եւ զկնի մահուան նո-

բա հարկ էր մեզ փոխանակ անչափ սիրոյ նորա հատուցանել սէր կորուսանելոյն ի կենաց աստի։ Որ Այնոքիսացւոց քաղաքէն մինչեւ ի սահմանս Անլտենոյ ձգէր իշխանութիւն նորա, և տեղի ոչ ուրեք երեւեցաւ գերեզմանի նորա. այնքան զօրաց և աշխարհաց տէր և անուանի երեւելի իշխան, և այժմ ի մեռեալս ոչ յիշատակի, ոչ ի կենդանիս երեւի, ոչ զանդակ նմա (504) հնչեցոյց, և ոչ ուրեք եկեղեցի զանուն նորա յիշեցոյց, և ոչ նուէր պատարագի եւ կամ մասն յիշատակի ողորմութեան ելնմա յերկրէ աստի. ուլ մի կամ դանգ ինչ ոչ կարի (505) աղքատագունիցն հասանել։ Այլ զոք է որ յիշէ զնա, և ոչ զոք որ ողորմի նմա. ի կենդանութեան իւրում ոչ հանդեաւ, ոչ վայելեաց ի սմա, այլ ի տղայական տիսցն սկսեալ ի տագնապի, ի ցնորս և ի տառապանս անցոյց զժամանակս մանկութեան իւրոյ, ի դիւաց ի թշնամեաց և ի խստերախս մարմնական տեարանց և ի դաւաճանող ընկերակից իշխանաց. և այժմ ի կատարածի կենաց իւրոց կորեաւ անյիշատակ, ջնջեցաւ բարձաւ անուն նորա, և սէր յաւմենայն աշխարհէ և ի սրտէ ընտանեաց և օտարաց։

Զայս ամենայն գառն և անհնարին կո-
րուստ յորժամ տեսանեմ հասեալ ՝ի վերայ
նորա , հեղձամղձուկ եղեալ ցնդիմ յար-
տասուս և ոչ գիտեմ զինչ արարից , և կամ
որպէս օգնեցից ձեռն կարիտաւելով. ցաւա-
կից մեզ յայսոսիկ Յ՚ստուած ապաւինեալ
վստահացայ , որ միայն է անոխակալ և մար-
դասէր , որ ոչ կամի զմահ մեղաւորի , և ոչ
խնդայ ընդ կորուստ ուրուք : Այլ գրեցաք
զայս գիր խստասիրտութեան և աղերսի ՝ի
գիմաց նորա և մեր , և ոչ դադարեմք յա-
րտաժամ գոչել այսու յամենայն տեղիս առա-
ջի ողորմած հզօրին , որ բարկացաւ նմա և
մեզ , հաշտեսցի ողորմութեամբն իւրով , և
յայտնեսցէ զնա մեռեալ կամ կենդանի :
Յ՚այլ և զձեզ զամենեսեան աղաչեմ , ով
մարդիկ , որ լսէք զողբերգական բանս զայ-
սոսիկ , մի լքեալ ձանձրանայք և տաղտկա-
ցեալ հրաժարեք անտես առնելով զպաղա-
տանս մեր որ վասն նորա՝ առ ծուլութեան
կամ ատելութեան նորա , այլ սրտի մտօք
թողութիւն արարէք նմա . և մի ընդ կորու-
սեալսն ոխս (306) բերեալ պահէք , այլ և ա-
ղօթս արարէք առ հատարակաց դատաւորն
և արարիչն Յ՚ստուած , զի ողորմեսցի նմա և
թողցէ զամենայն յանցանս նորա զոր առ

Աստուած կամ առ մարդիկ մեղուցեալ իցէ. և ամենազօր արարիչն Աստուած բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին և աղաչանաք ամենայն սրբոց ողորմացի նմա և թողութիւն արասցէ ամենայն յանցանաց նորա մեծամեծաց և փոքրունց. և զձեզ օրհնեսցէ հոգւով և մարմնով, և երկնից արքայութեանն արժանի արասցէ ընդ ամենայն սուրբս ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, զոր ամ փառք յաւիտեանս. ամէն.

ԾԴԹ. Իսկ ի թուականութեանն Հայոց ՇՂԸ (1149—1150), սպանեալ եղեւ տէրն Աշոտոյ Երինձն, և անդրանիկ եղբայր Պաղանին՝ ըստ ամբարտաւանութեան իւրեանց, որք անձնահաճութեամբ կամեցան պատերազմել ընդ թշնամեացն և ոչ հաւանեցան միաբանել ընդ զօրս քրիստոնէից որք էին յաւուրս յայսոսիկ, որ ոչ միայն ինքեանք կորեան և բարձան ի միջոց, այլ և (307) գլխաւորք և բազումք ի քրիստոնէից.

Յայնմ աւուր նոցն որդին Օանգեայ՝ որոց անուն Լուբէտասին կոչէին ազգութիւն, այսինքն ըստ առասպելաց իւրեանց՝ Պահաւառոյ զամանս արախաղնոյ արարին և զամանս (308) ի գերութիւն մատնեցին, զնախիկասուն իշխանս

յարիւնաշէն քաղաքն Հալապ։ Եւ ի սոյն ամի
յորում՝ ոչ էր փայլեր գլուխ քրիստոնէից,
բայց միայն կոմսն Ռօսլին յիշխանութեան նո-
բա, դարձեալ տատակացաւ ահ դառնութեան
. . . ի վերայ սրբոյ եկեղեցւոյ, և եկն Թա-
գաւոր Խամայէլացւոց որում անուն էր Մա-
սուտ (310), բազում զօրօք հեթանոսաց. էր թը-
ւականն ՇՂԸ ամին ի սեպտեմբերի ամսոյ, ի
ոմն սրբոյ Խաչին, և ոչ երկարեալ ի վերայ քա-
ղաքին Մարաշայ՝ էառ զնա, քանզի ոչ գոյին
զօրք ի բերդին. և ասպատակ արարեալ յեր-
կիրն որ կոչի Թիլ Եւեռեաց, որ այժմ ասի
Թլպաշար, և զամենայն սահմանս նորա սրոյ
Ճարակ արարեալ՝ զրոս եգիտ յաշխարհին. և
բազում այն էր որ խաբէութեամբ երդնու-
ին յանուն մեծին Աստուծոյ և իշխացանէին
յամրոցաց զքրիստոնեայսն՝ գերի վարեալ
զամենեսեան։ Իր և տէր երկրին Ռօսլինն հան-
դիպեցաւ ի քաղաքին Թլպաշրայ, և (Մասուտ)
ոչ կարացեալ զդէմ ունել նորա, դարձոյց ան-
դրէն զերեսս իւր տանելով զառեալ գերեալ
սրն յաշխարհն իւր։ Դարձեալ կոմսին մնա-
ցեալ՝ յանհոգս եղեալ ի թշնամեաց, ոչ հո-
գալս տարեալ հեծելոց, և կամ թէ յաղթեաց
ոք իւր, առաքէ զմնացեալ զօրսն իւր հետ
բարի և մեծահաւատ իշխանին Վասլին, որ էր

եղբայր Կաթողիկոսին և տէր Կառկառայ, հաց տանելով ընդ իւրեանս զի ածցեն ի նեբբա։ Յե յառաջիմաց եղեալ ազգն Իսմայէլացւոց, որոյ գլխաւորին Խարա—Ալբսլան (311) կոչիւր, որ էր (տէր) աշխարհին Հանձթայ և այլ բազում դաւառաց, ի վերայ անկեալ զորացն քրիստոնէից, և ձերբակալս արարեալ զամենեսեան իբրեւ ոգիս չորս հարիւր, եմ բռնեալ և զԱ՝սիլն եղբայր Կաթողիկոսին, և տարեալ առաջի մեծի դղեկին Կառկառայ, քանզի անդ էին կինն և որդիք Ա՝սլին. և առեալ երդումն հաւատարիմ յամիրայէն վասն կալեալ քրիստոնէից զորայ զոր եմ բռնեցին, զի տարցեն զնոսա խաղաղութեամբ յերկիրն իւրեանց առանց դաւ ինչ գործելոյ նոցա։ Որ բռնաւորն յաղագս սիրոյ մեծի աւանին ոչինչ յապաղեաց նմա, և երդմամբ զամենեսեան ի ձեռն հաւատարիմ զորայ իւրոյ առաքեաց մինչեւ ի Սամուսատ։ Յե զիշխանն զԱ՝սիլ ընդ իւր տարեալ յերկիր իւր մեծաւ փառաւորութեամբ և տուեալ երկիր որպէս սիրելի եղբօր իւր։ Յետ այսորիկ եկն ցրուեալ և վատնեալ զորքն ի Սամուսատ քաղաքէն ի Ռեսուն քաղաք, և ահա եհաս ի լսելիս ամենեցուն։ Քանզի կոմսն Ռօսլին, որ էր յա-

ւ ուբան յայնոսիկ գլուխ քրիստոնէից, գլ-
նալով Ամենիք յաղագս խորհելոյ ինչ, թե-
բեւս կարասցէ ուստեք օգնականութիւն
գտանել, մատնեցաւ յաստուածասաստ բար-
կութենէն, ինքն միայն 'ի զօրաց իւրոց՝ 'ի գե-
րութիւն (312). որպէս 'ի հնումն որդին Դաւ-
թի փախուցեալ 'ի հօրէն յաղագս չար
կամաց իւրոց. զոր առեալ սատ հրամանին
Աստուծոյ զհերաց գլխոյ նորա վրէժխնդիր
լինելով աստուածահաճոյ առն Դաւթի,
ձեղք ծառոյն կախեալ պահէր զկիրեաւ,
մինչեւ 'ի հետ մտեալ թշնամեացն հասեալ
և սուսերաւ կտրեալ զգլուխն անհնազանդ
որդւոյն։ Այսպէս գիպեցաւ այսմիկ կոմսին
արտաքոյ գոռեալ կամաց Աստուծոյ, գե-
բեալ եղեւ յայլադէմ և 'ի . . . . . .
. . . . Քրիստոսի. և տարեալ 'ի քաղաքն
Հալապ, և Ցաճկաց ազգն անպատմելի խրն-
դութեամբ լցան՝ հեռաւորքն և մերձաւոր-
քին. և յոյժ յոգիս խոցեալ կործանեցան եր-
կիրս քրիստոնէից, վասն զի ոչ ունէին գլուխ
որ մնացեալ զօրքն ժողովէին (ընդ առաջնորդ-
թեամբ) նորին։

Մ Կ. Լ։ յառաջ քան զայս ամ մի (313),
յամենեանն յունվարի երեսուն, 'ի լուսանալ
երկուշաբաթի, եղեւ յերկնուստ ահաւոր

սրտամուն եւ հրաձգութիւնք. եւ փոխեալ տարերաց զբնական բնութիւնն իւրեանց. եղեւ խոչն առատաւաժընկալ հրացեալ իբրեւ լոյս, զոր մեծ եւ անյաղթելի ախոյեանն Քրիստոսի սեւեռատոս Վասիլն կանգնեալ (314) էր յիշխանութեան իւրում ի գումբէթ սրբոյ Յարութեանն ի Կարմիր վանքն. եւ այս նշանս հինգերորդ եղեւ ի խաչս այս մեծատիաւ, զոր ոչ թուէր իմաստուն մնաց բարի, այլ արհաւիրս յաւերումն քրիստոնէից՝ որպէս եղեւ իսկ.

ՍԿԱ. Դարձեալ ի սոյն ամի յաւուր մեծի Պենտեկոստէին, յորժամ ամենայն ոք աւկին ունէր գալատեան Հոգւոյն Աստուծոյ, եկն յառաքաստացեալ սուրբանն Աստուտ անուն անհնարին բաղմութեամբ. եւ ի ձայնէ հնչման զանգակացն եւ ի հրաձգութենէ առաւերացն, եւ ի ճօճել բաղմախուռն նիզակացն զմեզ զամենեսեան զուռսոզ որք էաք ի քաղաքն Բեռնոյ՝ առհասարակ դողացայք. որ ահաբեկ եղեալ առաժամայն եռուն ըզ քաղաքն Բեռուն՝ երդումն առեալ ի նը մանէ և յորդւոյ նորա: Իւ յետ ուրեմն աւուր զանմատոյցն և զանառիկն զՊեհեանի, և զկնիք չարբարդում աւուր զերեւելին Ասպան. և ապա գնաց յերկիրն Թլպաշար,

զոր յանցեալ ամին քակեալ և աւերեալ էր. և անդ կացեալ զաւուրս բազումս ոչինչ կարաց յաղթել նոցա. քանզի որդի կոմսին ի քաղաքին էր՝ զինեալ ունելով զզօրսն հօր իւրոյ. և ընակիչք տեղւոյն միաբանեալ ընդ նմա՝ սրատապեալ մեծապէս քաջացան ի վերայ հաւատոյն իւրեանց. Թէպէտ և այլազգիքն պէսպէս հնարիւք կռիւս մեքենայիւք յօրինէին։ Դարձեալ յետ այնորիկ ակաթացեալ և տխրեալ էր, գնաց յերկիր իւր և ոչ կարաց առնուլ զքաղաքն, և զառեալ երկիրս ի քրիստոնէից ետ որդւոյ իւրոյ, որ էր աթոռակալ սուլտանութեան իւրոյ, անուն նորա Խլիճ-Արսլան։

ՄԿԲ. Իսկ ի թուականութեանս Հայոց Ո (1151—1152), եկն ի յերկիրն Յունաց ձիւն կարմիր, ի նաւատարդի ամսոյ քսան երեք. և ի նմին աւուր յորժամ անդ կարմիր ձիւն եբեկ, յերկիրս քրիստոնէից եբեկ ձիւն սպիտակ և մանրախառն որպէս յանցեալ ամին։

ՄԿԴ. Դարձեալ յետ այսր ամի զօրքն և քաղաքացիքն որ ի Թէղպաշար էին, զտարի մի և կէս համբերութեամբ տարեալ քաղցրութեամբ զնեղութիւնն զոր կրէին։ Յայս իմացեալ որդւոյն Յանգեայ, որ էր տէր Հալապայ, եկն զօրօք ի վերայ նոցա. և վասն

զի ոչ ունէին օգնականութիւն իւրեանց ուստեք, երդումն հաստատութեան առեալ եւ ոչ ունէին կամք իւրեանց զերդն թողլաշար, և զքրիստոնեայսն որ ի Յունանեաց կամ ի Հայոց որ անդ էին, կամեսցին գնալ յԱնտիոք կամ յայլ տեղիս, տարցին անվնաս հրամանաւ Նուրէտտինին, զոր և արար իսկ նոյնպէս և Սասուտ սուլտանն և Մելէք որդի իւր. այսպէս արարին վասն սիրոյ աշխարհացս, որ դիւրաւ առաւ ի քրիստոնէիցս, և ոչ եթէ ի հաւատոց իւրեանց կամ ի սիրոյ զոր ունէին առ քրիստոնեայքս։

Եւ եղև յաւուր փոքր Հօսանին, երևեցաւ ոմն պատանի Թէոդորոս անուն, օգնական և ոչ ուստեք ունելով, բայց զօրութիւն բարեխնամ Աստուծոյն ողորմութեամբ մատակարարէր ի դարս դարս յաղագս մարդկան ի ժամանակս ամաց իւրոց ըստ առաքելական ձայնին, «Ում կամի՝ ողորմի, ում կամի՝ խստանայ». որպէս և առ երանելին Պօղոս արար յերկնուստ ձգելով ի կամս և ի գործս սպասաւորութեան իւրոյ. նոյնպէս և առ այրս արար։ Ի յոյս և ի ջանս սորա նայեցեալ կամք անենաքանձին, որ և ոչ մի ումեք զանայ տալ ըզպարգեւս ողորմութեան իւրոյ, քանզի առ փոքր մի և ոչ ի յերկար ժամանակս տիրեայ

հայրենեաց իւրոց։ Այս էր որդի Լևոնին սե-
ւասաոսի՝ մեծի և հանճարեղի որդւոյ Կոս-
տանդեայ՝ որդւոյ Ռուբենի։ Այս կորովի և
արիական գոլով՝ ի պատերազմունս, ոչ մի-
այն զՀայրենիս իւր գրաւեաց՝ ի յինքեան,
այլ առաւել ևս տիրեաց բերդաց և քաղա-
քաց՝ քան զնախնիսն իւր։ Այսոսիկ սե-
սեալ Ինդրոնիկէ ոմն անուն, ազգաւ Հո-
ռոմ, ի չար նախանձ մտեալ՝ ոչ կամեցաւ
լսել զանուն հայ իշխանին։ Եւ էր սա ա-
ռաքեալ՝ ի Թագաւորէն Յունաց Կիւռ Մա-
նիլէն, իբրեւ իշխան Սրոյ և Սեբաստիոյ։
Եւ այնուհետեւ ոչ դադարէր խիթալ և
մաքառել ընդ Հայերուն, որ եղեալ ժողո-
վեցան՝ ի միասին առ առնս այս Թորոս՝ ի
Նախախնամութենէն Աստուծոյ. որ և պա-
տերազմաւ դիմեալ՝ ի վերայ նոցա՝ նեղէր
զնոսա. և նոքա առ սէր և ահի մեծի Թա-
գաւորին Յունաց ոչ համարձակէին տալ
ընդ նմա պատերազմ, այլ հանապազ սիրոյ
յաղագս աղաչէին մեալ նմա՝ ի հնազանդու-
թեան. և նա ոչ լսէր, այլ եկեալ ամբար-
տաւանութեամբ ի՛ջաւ՝ ի վերայ քաղաքին Սե-
սիսայ։ Իսկ Թորոս բազում աղաչանօք աղաչէր
զնա, թէ «Ծորտ եմ՝ Թագաւորին և քո. մի
բարկանարդ։ Իսկ նոքա ձայնէին՝ ի ներքս՝ ի

քաղաքն, թէ «Օ՛ երկամէն որով դքո հայրն տարաք, ի հետ ունիմք, որով զքեզ կապեալ տարցուք»։ Իրրեւ ոչ կարաց տանել կորովն այրս այս ամբարտաւանութեան և խրոխտ կամայ նորա, ապա վստահացեալ ի զօրութիւնն Քրիստոսի որ բարձրացոյց զնա ի չգոյէ և ի գոյ ածեալ պատառեալ զպարիսպ քաղաքին Սմիւռայ ի գիշերի. և ի ծագեալ արեգականն առեալ զզօրս իւր եկն դէմ նորա ի պատերազմ, և հարեալ զնոսա յաղթեաց և արար վախստական զամենեսեան՝ արս երկոտասան հազար. և վատնէր զնոսա և ի սուր սուսերի մնաչէր, ի մի ակամ քթթելն տապաստ արկանէր զամենեսեան. ընդ որս և ի մեծ պատերազմին ըմբռնեցին զՕշինն որ էր տէր Լամբրոնին, և զԱսին որ էր տէր Խարձրբերդոյ և եղբայր Տիգրանայ. և այլ բազում զօրս կալեալ մերկացուցանէին և թողուին զթուլամորթ Հոռոմանին. աւաղ, ասեմ զօրայ։ Իբ բազում արիւն հեղաւ ի պատերազմին, և տիրեաց (Թորոս) անհոգութիւն քաղաքին Սմիւռայ, առեալ բռնութեամբ ի նմանէ իրրև ի կանայսն՝ խնդրելով զվրէժ հօրն իւրոյ, զոր հանեալ էր ի հայրենեաց իւրոց տարագիր աբարեալ տամբք և որդւովք մինչև յարեւմուտ

տալս։ Բայց այրս այս նենգաժետ ոչ կարա-
ցեալ տանել վշտի նախատանացն զոր կրեաց
և զփոքր առ, զկորուստ իշխանացն մեծաց
և զայլ զօրացն, գնացեալ փախստական առ
Թագաւորն Յունաց բազոք մեծապէս ու-
նելով յաղագս զօրացն Հայոց, զոր կրեաց
յանմտութենէ իւրմէ։ Իսկ մեծն Թէոդո-
բոս առեալ զկալեալ իշխանսն և զայլ կալա-
նաւորսն, եմուտ խաղաղութեամբ ի բա-
զաքն իւր անթիւ ոսկւով և բազում ար-
ծաթով և այլ ազգի ազգի ստացուածով, և
սարքք պատերազմին զոր առեալ ի զօրաց
Յունաց և բազում ձիս և ջորիս։

ՄԿԴ. Յետ այսր մեծի յաղթութեանս
և հարստանալոյ՝ սկսանէր բանսարկուն սա-
տանայ շարժել զմեծամեծս ի վերայ զօրացն
Հայոց. քանզի Յոյնք ոչ պարապէին խնդ-
դրել զվրէժ անձին կեսարսին իւրեանց, և
գանձս բազումս առաքեցին Մասուտ սուլ-
տանին, որ էր գլուխ ամենայն Մուսրմա-
նաց։ Որոյ պարտեալ ի բազում (315) Յու-
նաց ընծայիցն, և գայր անհուն բազմու-
թեամբ զօրաք՝ զառաջինն ընդ երկիր իւր,
ահ արկանելով նոցա. սակայն զօրացան շն-
նորհիւն Քրիստոսի զօրքն Հայոց, և եկին
ի լեառն ընդ մէջ Նոքա յայնկոյս լերինն ընդ

սահմանս իւրեանց, և սոքա յայսկոյս լերինն ընդ երկիրս իւրեանց՝ անհոգութեամբ ոչինչ համարելով զքաղմութիւն այլազգեացն։ Իսկ նոցա տեսեալ զհամարձակութիւն ազգին քրիստոնէից գնդին, զարմացեալք ասէին. «Ո՞ՐՆՉ ԵՆ ՆՈՔԱ ԱՆՁՆ Ի մահ եղեալ, որ գան ընդդէմ մեր իբրեւ թէ պատերազմել ընդ մեզ»։ Եւ մինչդեռ նոքա յայս մտաց խորհրդի էին, յանկարծակի շարժեալ Ի վերին խնամոյն սուլտանն Թուրքաց, պատգամաւորս առաքէր առ զօրավարն Հայոց Թորոս և ասէր. «Ոչ թէ յաւերումն եկեալ եմք յերկիրս ձեր, այլ եկ մեզ Ի հընազանդութիւն. և զառեալ երկիրն զոր առեր բռնութեամբ, դարձո անդրէն առ Թագաւորն Յունաց, և լեր մեր որդի և սիրելի»։ Եւ լուեալ զայսոսիկ մեծաւ ուրախութեամբ ըստեալք, և Մէնատեառն փառս մատուցանէին, որ այսպէս խստերախս և զամբարտաւան բարս նոցա կակղայոյց իբրեւ ընդ վեհագոյն ընկերի դաշինս սիրոյ խնդրելով Ի զօրացն Հայոց. և արգել զնորա պատգամաբերսն յաւուրս բազումս։ Այսպէս դեսպան գնի նոցա առաքէին ասելով այսպէս. «Կամք մեր յանձն առնուք մեք, հնազանդիմք ձեզ իբրեւ Թագաւորի. քանզի ոչինչ

նախանձեալ քո ընդ յառաջանալս մեր, և կամ աւեր ինչ առնել յերկրի մերում, այլ եկիր դարձուցանել զմեզն ի Հռոմն. ան-հնարէ»։ Օ՛այս լուեալ սուլտանին, ոչ նե-ղեաց զնա, այլ դաշինս սիրոյ խաղաղութեան երդմամբ գրեալ ետ տանել առ զօրսն Հա-յոց ի ձեռն դեսպանի իւրոյ, ծաղր արա-րեալ Յունաց թագաւորին և զգանձս նո-րա. և ինքն դարձաւ յերկիր իւր ոչինչ վը-նասեալ ումեք։ Լ՚ս այս եղեւ ի թուականին Հայոց ՈՌ (1153—1154)։

ՄԿԵ. Յետ այսորիկ փոխեալ ամբ երեք՝ այլ բազմապատիկ ընծայս ոսկւոյ և արծա-թոյ յղեալ թագաւորն սուլտանին առա-ւել քան զառաջինն ասելով այսպէս. եթէ «Հանգո զարտմտութիւն զայրացման սրը-տի իմ յազգն Հայոց, և տապալելով զա-մուրս նոցա եւ զեկեղեցիս նոցա հրձիգք առնելով և հրոյ ճարակ զամենեսեան հր-բամայեա առնել, զի դադարեսցէ զայրա-ցումն սրտի իմոյ»։ Լ՚ս առեալ զգանձն բազմութեան՝ դարձեալ խաղայր գայր ան-հուն բազմութեամբ քան զառաջինն, դի-մեալ եկն ի Սեբաս, և անտի Ամնաւարզա. եւ ոչ կարացեալ անդ առնել ըստ կամաց իւրոց, գայ ի Թիլն զոր Համանոյ կոչեն, և

կացեալ զաւուրս բաղումս ոչինչ կարաց վնասել նոցա։ Այս զմի ոմն ի մեծամեծաց սրդեսայ իւրոյ Անէլբին, որոյ անուն Այաղուպ ասէին, այր ժանդ և ջարասէր, բաղմութեամբ զօրօք իբրև երեք հազար՝ առ պատակաւ յերկիրն Անտիոքու առաքեր։ Իբրեւ անցին ընդ տեղին այն զոր Դուռն կոչեն, յանկարծակի իբրեւ յերկնուստ առաքեալ ի քրիստոսասէր զօրաց փրերաց (316), և եղբայրն առպարապետին (Թորոսի) Սահակ անէ յանկարծակի ի վերայ անկեալ՝ առ հասարակ զամենեսեան սատակեցին, և զգլխաւորսն իւրեանց Այաղուպն նիզակաւ ընդ լերդն անցուցեալ, և դառնապոչ ձայնիւ ելհան զդառնացեալ ոգին։ Այլ ըստեալ զայս բանակն՝ զարհուրեցան յոյժ, և ի զօրութենէ վերնոյն եկն ցաւ ի վերայ երիվարաց նոցա, զոր ինքեանք փապաղ ասէին, յորոց յոլովք սատակեցան քան թէ մնացին. և զայն տեսեալ մեծամեծացն Թուրքաց՝ ամենեքեան առ հասարակ ի փախուստ դարձան, ոչ զբ ուրեք մնացեալ ընկերի, կամ եղբայր եղբօր. և բաղումք ի նոցանէ զձիս երիվարացն եւ զնրուցն հատանէին՝ ընկենլով զդէնս իւրեանց ի փախստականն, և ինքեանք ընդ մացառուտ ձաղս և ընդ դժնեայ վայրս հա-

տեալ անցեալ գնային մոլար ճանապարհաւ։ Մեծամեծ հեծուպք և բազում սպարանի հետիոտս ընթանային ի յահէ Խարձրելոյն. քանզի ոչ գոյին նոցա երկիւղ ի մարդկանէ, զի զոքին Հայոց ասպատակաւ երթեալ էին յերկիր այլազգեացն, և դարձան բազում աւարաւ յաշխարհն իւրեանց։ Եւ իբրեւ եկին՝ տեսին զանկարծելի բարին զոր ահ հզօրին Աստուծոյ փախստական արարեալ ընդ կրունկն կոր ի կոր ամօթալից պարտեալ ամաչեցեալ իբրեւ զաղուէս տրկար ի թագաւորական առիւծէ, այնպէս սարսեալ դողալով ընթանային՝ կարծելով թէ բազում զօրք հեծելոց զհետ մոռեալ (էին) նոցա՝ բազում արեան ճապաղիս հանելով, այնպէս իմն թուէր փախուցելոցն։ Եւ զորօրինակ առ Մծբին քաղաքն եղեւ, Կաւատ թոռն Յակոբոսի Պարսից արքայի մոռացեալ զդաշինս սիրոյ նախնեացն իւրոց զոր ունէր առ քրիստոնեայսն, և եկն սրտմտութեամբ զօրօքն Պարսից յաւարի առնուլ զերկիրն զայն, և բազում աւուրս աբարեալ մեքենայեալ հնարիւք խարխալեաց (317) զամուրս պարսպին Մծբնայ։ Եւ իբրեւ կամեցան զօրքն մտանել ի ներքս, և ահա յանկարծակի տեսին զսուրբ հայրապե-

տրն Յակոբ, զի զՔրիստոս ի վերայ պարսպի քաղաքին իբրեւ զԹագաւոր աք ծիրանազգեստ շուրջ և մերձ ունելով զզօրս երկնայինս, և դնելով ի վերայ գլխոյ իւրոյ զտախտակն նոյեան տապանի՝ զոր ետ նմա հրեշտակն յաղագս աշխատութեան իւրոյ զոր կրեաց ի ճանապարհին ելանելով ի լեառն տեսանել զտապանն, որում՝ ոչ ետ հրաման հրեշտակն, այլ դարձոյց խաղաղութեամբ զսուրբն Աստուծոյ յերկիր իւր՝ տալով նմա նշան սիրոյ զտախտակն։ Զոր տեսեալ զօրքն Պարսից՝ ահաբեկեալ ոչ եւս իշխեցին մերձենալ ի պարիսպ քաղաքին զոր կործանեցին, այլ և պատուհաս եկն ի վերայ նորա պիծակ գոռեալ և ճանճ, և առհասարակ երիվարքն նոցա պախուցեալ ի վեր ելանելով. յիւրաքանչիւր արգելմանէ, և ոչ աք կարէր ի բաղմութենէն ըմբռնել զերիվարս իւրեանց. և այնպէս շտապ տագնապի հասուցանէր նոցա զոյն պատուհաս արկեալ ի վերուստ, որպէս ի հնումն առ Խորայելացեաքն զԱգիպտոս հարկանէր աչ հզօրին Աստուծոյ։ Եւ այսպէս ամօթալից պարտեալ թագաւորն Պարսից դառնայր յաղագմանէն Քրիստոսի և յաղօթից սրբոյ հայրապետին Յակոբայ, քանզի զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր։

Եւ այս ոչ ընդհատ յայնմանէ որ այժմ գործեցաւ, զոր տեսաք աչօք մերովք, երկիցս անգամ շարժեալ թուրքաստանն ամենայն ի վերայ թորոսի և զօրաց իւրոց, և ոչինչ կարացեալ առնել եկեղեցեացն՝ զոր բազում պատուէր առեալ էին ի թագաւորէն Յունաց յամենայն գաւառս ցանել, և զխաչն և զեկեղեցի այսն կատարանաց արարեալ։ Եւ թէ ոչ էր յօգնութիւն հասեալ բազուկն այն որ պարզեցաւ ի վերայ խաչին, ուրեմն կատարել կամէին զպատուիրան հերձուածողացն, տապալելով զեկեղեցիսն սուրբ և զերկիրն հիմն ի վեր առնելով։ Արդ սոցա մնալով ի խաղաղութեան, և նոքա գնացին փախստեամբ և մեծաւ ամօթով որպէս յաւաջն ասացաք։

ԳԼ. Յետ այսորիկ երբեւ ոչ կատարեցաւ խորհուրդ չարութեան իւրեանց, ապա ի հնարս սիրոյ մտանէին (միջնորդութեամբ) Խլիճ-Արսլանայ, որ էր ի մեծ սուլտանէն հօրէն իւրմէ հաստատեալ յաթոռ մեղքութեան։ Եւ այսպէս առ ժամանակ մի կացեալ անհոգութեամբ ուրախութեամբ, փառաւորէին զամենասուրբ զԱրրորդութիւնն հանդերձ ճգնաւորական մտքուր եպիսկոպոսաք և սուրբ քահանայիւք և միշտ

բազկատարած միանձնացելոց դասուք։ Յե-
իսկզբան դալոց ատելեացն Պրիսատոսի յեր-
կիրն Թրակոսի, ի հաւաքելն իւ բեանց ի վե-
բայ Թիլլին ի արեւ ամսոյ ժգ, եղեւ հոլմ
սաստիկ ահաւոր ձայնիւ, և բազում ծառք
յարմատոյ հատան, և եկն կարկուտ ի տե-
ղիս տեղիս և ետար ղղորեան և զայգիս։ Յե-
դարձեալ ի նոյն ամիս տրեւ իւ, այլ սաստիկ
և ծանր արհաւիրք եղեն յամենայն երկիր
ղերիս գիշերս ըստ նմանութեան Վինուէ-
ացւոց, սկսեալ յառաջին պահու գիշերոյն
մինչեւ ի լոյս առաւօտին։ Ոստ ոչ սովորական
բնութեանց տարւոյն եղեւ խաւար անճա-
նաչ ըստ օրինակի Ճ18) նեմանդեալ խաւարին
որ Այգիպտոս. և յամենայն բախմանէ ընդ ի-
բարս որոտալով որպէս լերինք կարծր և
անդամանդեայք բախեալով զմիմեանս, և հր-
բաձգութիւնք կայծականց ուներ զձիր եր-
կնից, ոչ գոլով տեղի յերկինս՝ որ ոչ ուներ
զփայլատակունս հոլմախառն։ Յե ոմ էր
բաւական հայել աչօք իւրովք յահաւոր
դղրդմունն որ լինէին անդադար։ Յե այն
պէս ահաբեկ եղեն մարդիկ ի տեսլենէն
այն ղերիս գիշերս, և ամենեքեան աքք եւ
կանայք, ծերք և տղայք ի տունս Աստու-
ծոյ ընթացեալք լինէին, բազում ահիւ և

դառն արտասուօք և մեծաւ հառաչանօք բարեխօս ունելով զՏիրամայրն և զսուրբս նորա։ Այս գթացեալ ողորմածն Աստուած յարարածս իւր, դադարեցոյց զպատնեալս կորստեան անդարձիցն ի մեղաց և նեամա-յեալ անհաւատիցն։ Իւր յարժամ եղեւ աբ-հաւիրքս, էր Հայոց թուականն ՈԴ (1154—1155)։ Մինչեւ ցայս վայր խօսեցաք զոր լաւաք և տեսաք աչօք մերովք։

ՄԿԵ. Յետ այսորիկ իբրեւ դարձաւ ա-մօթով սուլտանն Թուրքաց յերկիր իւր, ապրեալ լինէր ամիսս տասն։ Պանդն բոլոր անմեղ սպանելոցն անդարձ գերեցան եհաս յսկանչս Տեառն զօրութեանց։ Իւր եղեւ նմա հիւանդանալ, կոչեալ զորդին իւր զա-նուանեալ Խլիճ-Արսլան, և յարուցեալ տէր յաթոռոյ իւրոյ երկիր եպագ որդւոյ իւրոյ առաջի մեծամեծաց իւրոց. և եդ զթագ իւր ի գլուխ նորա, և ինքն վճարեաց ի կեն-ցաղոյս, թողեալ զամենայն մեծութիւն որդ-ւոյ իւրոյ. և թուականն էր Հայոց ՈԴ (1155—1156)։ Ի մին և այլ սրդիք նորա երկուս, մին էր առաստաձեռն առ ամենեսեան և զուարթ դիմօք քան զեղբայրն իւր որ եղեւ սուլ-տան, զոր կարծիս բերէր թէ գուցէ ոչ հա-ւանի, երկնչէր ի նմանէ. և էր մարմնովն

ամբողջ քան զնա. Ի սադրելն ոմանց Ի ժամ գինարբուքեանն և Ի խրախուքեաւ նըն իւրեանց՝ Ի գիշերի խեղդամահ արարեալ սպանաւ յեղբօրէն։ Իսկ կրսեր եղբայրն առ անգամ մի հնազանդեալ նմա իբրեւ որդի սիրելի. բայց յերկիւղէ նորա փախըստական եղեւ յամուր աւանն իւր Ի Գանգոն (319) և Ինկիւրիա, և այլ ոչ եւս եռեւս զնա. զի ոչ միայն զեղբարս եսպան, այլ և զայլ մեծամեծս իւր և զամիրայսն և զմեծ իշխանն հօր իւրոյ՝ որուն անուն էր Պաղատային, և զխատին (320) իւրոյ հօրն։ Իբրեւ եռեւս զայս մեծ ամիրայն Չաղուդ-Սպան, որ էր որդի ամիր Խաղեայ և ազգ Սելջուկեանց և աշխարհին Գամրաց, ոչ հաւանեալ նմա՝ զօրաժողով արարեալ զբաղմութիւն հեծելոց, եկն յերկիրն Իսպանդանին, և տարեալ զքրիստոնեայս (321) յերկիր իւր. և զամուրն Խառիս և զայն եւս էառ։ Օշյոսոսիկ գործեաց վասն եղբօրորդւոյ իւրոյ՝ որ ունէր թշնամութիւն ընդ նմա։ Իբրեւ ծանուցաւ Խլեճ-Սպանայ, ժողովեալ զզօրս հօր իւրոյ և այլ բազմութիւն զօրաց հեծելոց, և եկն ընդդէմ նորա՝ և Ճակատեցան ընդդէմ իրերաց, և բազում ժամանակս միջնորդ մնալ . . . կուռայիցն իւրեանց, ոչ ե-

տուն պատերազմել ընդ միմեանս. Ի վերին երեսս խաղաղութիւն արարեալ առ ժամանակ մի, և դարձան յաշխարհն իւրեանց։ Յետ այս եղեալ երկու ամիս, ոչ խաղաղութեամբ դաշնաւորեալ և ոչ պատերազմաւ վճարեալ։ Այսպէս յետ այսորիկ շարժեալ Յաղուպ-Այսլանն, եկն գաղտագողի յերկիրն Ղ.ահնայ Ի մայրաքաղաքն Ասպասթա. և որպէս միտք մարդոյ հաստատեալ է Ի խնամս չարեաց Ի մանկութենէ, մոռացեալ (էր) զգութ հայրենի տիրութեան սուլտանին։ Ղ.այս լուեալ սուլտանին՝ յօժարութեամբ և խրոխտալով գայ Ի խնդիր վրիժուց անդեան երկրին իւրոյ։ Յետ Յաղուպ-Այսլան խմացեալ զգալուստ նորա, առեալ զերկիրն ամենայն ոգիս իբրև եօթանասուն հազար, տարեալ յերկիր ոչ գերութեամբ։ Յետ սուլտանն ոչ ժամանեալ նմա յերկիր իւրքանզի ընդ մոլար ճանապարհն գընացեալ տանելով զբրիստոնեայսն, և սուլտանն մտեալ յերկիրն Իկանդոնին. և նոքա ճանաչեալ յահաւորն և Ի մեծ դժարէ նորա ելին յօժարութեամբ զհետս սուլտանին՝ երդմամբ ընկալեալ զնոսա ոչ տանելով յետս զոր գընացին զհետ նորա։ Յետ Յաղուպ-Այսլան ամբարձուցեալ զտարեալսն յերկիր իւր. եկն բանակեցաւ ընդդէմ սուլտանին ճակատ առ

ճակատ. և առաջնորդք նոցա ընդ մէջ անցեալ ոչ տային պատերազմել։ Այլ յետ սուրբց բազմաց սրամտեալ սուրբսանն՝ մեծաւ զօրութեամբ եկին ի վերայ նորա, և դարձեալ առաջնորդքն անկանէին յոտս սուրբսանին՝ աղաչէին ասելով։ «Մի անայր առներ զտուն Սուրմանայա։ Յս խոնարհեալ ի պաղատանս նոցա՝ սէր առնելով գլուխ առ գլուխ, և ոչ դարձուցանելով զտարեալ քրիստոնեայսն։ Այսու պատճառանօք հաւանեալ սուրբսանին, քանզի յարուցեալ ոմն Պետրանէ անուն, եղբայր Թոսրսսի սեւաստոսի, որ շարժեալ եղեւ յանհաւատարիմ և ի քսումարդոց, և այս ոչ կամաւ Տեառն յաղագս առնելոյ զերկիրս քրիստոնէից յայլազգեաց և ոչ օգնելով իւր եղբօր, վասն զի յոլովս քրիստոնեայս սրսխասղաղ առնելով և յընչից և ի ստացուածոց մերկ և կոզոպուտ առնէին զազգս իւրեանց, ոչ նմանելով անքրիստոնեանցն (325), խնամառնելով առ իրարս որպէս վարժեալ ի գրոց։ Յաղագս այսորիկ հարկ եղեւ սուրբսանին գալ յերկիրս Կիսանի (Բեսնոյ) զոր Թափեալ էր հօր իւրոյ։ Յս անօգնական քրիստոնէիցն լուեալ զգալ նորա, փախստական եղեալ՝ ուստի ոչ էին ժողովեալ։ Յս նորա եկեալ դարձեալ նուաճեաց զերկիրս

խաղաղութեամբ ի հնազանդութիւն հրամանի իւրոյ, սէր առնելով ընդ Թագաւորն Հրուսաղէմի և ընդ սէրն Ինոխքու և ընդ Թորոս յաղթողն. և ինքն դարձաւ յաթոռ իւր խաղաղութեամբ։ Հ։ եղեւ այս ի Թուականութեան Հայոց ՌԶ (1157—1158) և ի յամիսն օգոստոսի։ Հոգժամ եկն ի Խերդուսն զոր էր առեալ Ստեփանեայ բռնութիւն նենգեալ եղբօր իւրոյ Թորոսի, և սիրոյ աղաչաւ տուեալ ի սուլտանն առանց կամելոյ եղբօր իւրոյ. և զոսս ի նեղքս ի բերդին էին մարդիկ հեծեալ և հետեւակ՝ զամենայն ազատ արարեալ (սուլտանին) վասն Թորոսի հնազանդութեն և տալոյ զբերդն։

Հ։ Նախ քան զայս, մինչ Թուականն էր Հայոց ՌԵ (1156—1157), և ի հոկտեմբերի ամսոյ իջ, սկսաւ շարժ լինել յամենայն երկիր, և բազում քաղաքք Տաճկաց ի սահմանս Արաբիայ (324) որ է Հալաշ՝ կործանեցան ի հիմանց, և զազգս քրիստոնէից պահեաց Տէր մինչեւ ցայժմ, և անդադար լինէր շարժն մինչեւ ի փոխել Թուականիս, որ ոչ կայր համար կամ Թիւ շարժմանն զամիսս չորեքտասան։

ՄԿԸ. Այս ի Թուականիս Հայոց ՌԶ (1157—1158) ի հոկտեմբերի է, եղեւ հոգմ սաստիկ

անձրեւախառն, և զկնի անձրեւին կարկուտ հեղեալ խառն, և բազում ինչս արար յայգիս և ի տարածոցս խաղողոյ ի տեղիս ուր և հանդիպեցաւ։

Իսկ զմեծի աւանին և զանառիկ (բերդին) Պերեանոյ ասացիս սուղ ինչ։ Քանզի ի գալն Յոհփանեայ ի յերկիրս Բերանոյ անօգուտ զօրօք և ոչ կամաւ եղբօրն իւրոյ, եւ նոքա մնա արս ոմանս զոր ինքեանք Բարմուտ ասէին, և խրատ տուեալ սեւաստոսին՝ մի տանել ի գլուխս զառուծն բերդին, և զայս ոչ գիտացեալ մեր եթէ ի խնամոցն Աստուծոյ եղեւ՝ կամ թէ ի նախանձուէ եղբօրն։ Այլ վասն զի դժնեայն այն և անբարհաւաճ բռնաւորն որ էր տէր բերդին, զորոյ զանուանն (անուատեն) վարկայ ընդ գրով արկանել, եղեալ ի խրատուէ սուլտանին իւրոյ որ վասն քաղցր կամաց նայելոյ ի քրիստոնեայս, նա առաւել եղեւ ի պատուհաս արկանել նախ զպատուական քահանայս և սարկաւագունս և զպիտանի տանուտեարս, և զայլ հասարակաց քրիստոնեայս միապէս ջարդարէր, և ծանրացուցանէր զհարկակիր բնակչաց անուանին Պերեանոյ։ Արդ մի ոք մեզադրեսցէ նոցա, քանզի յաղագս ջար բռնաւորին զանձինս ի մահ եղեալ կոչեցին

զՄոտփանէ՝ Թերեւս կարասցէն դաւ գործել զարայուշ բռնաւորին. և ոչ կարացեալ զբարի խորհելն տանել ի գլուխ, զի մի ոմն նենգեալ ՝ի քրիստոնէից ստեաց երդման ուխտին զոր ուղղին առ իրարս, երթեալ զգուշացոյց զանիրաւն այն մի եղանել երթալով ՝ի բազանիսն՝ ուր մահն պատրաստ էր։ Իսկ նորա հաւատացեալ խրատուն իւրոց որ զայս բարեսէր կենաս ընձեռեաց (525) նմա, ոչ եղ արտաքս. և մնմնեալ իբրեւ զարբեալ արեամբ անմեղացն որ մերձ հանդիպեցան, հրամայեաց կապել ոտիւք եւ ձեռիւք և ՝ի բարձր բարձն ՝ի վայր տայր ձրգել։ Զայս ջար գործոյ իւրոց զաջողութիւն տեսեալ քրիստոնեայքն, յիշելով զմեծ արհաւիրքն Ռոմայ քաղաքին, դիմեալ առ և կեալ օգնականն որ էր ընդդէմ բերդին զօրք՝ միտ եդեալ տեսանէր զկատարածն, զոր ոչ ելին ՝ի վերայ (526)։ Ապա առեալ զօրավարքն զամենեսեան զարս և զկանայս, զծերս և զտղայս, թողլով իւրեանց յօժարութեամբ զինչս և զստացուածս հայրենի ժառանգութեանս յոր ՝ի հին և յերկար (527) ժամանակաց ծնեալ և սնեալ էին և ՝ի բարեպաշտ իշխանաց պահեալ իբրեւ որդի սիրելի, տարեալ զՀոլանուՆդ և զփափկասէր

արս յանախորժ և յանհանգիստ երկրի բնակեցուցանէր. մինչեւ զմտաւ ածեալ սուրբ տանին զաւերումն աստուածապահ բերդին Պերիանոյ, զտառապանս քրիստոնէից, բան խնամատարութեան իւրոյ հնարիւք զաւերումն ի աւանէն (328), ապա սկսան մի ըստ միոջէ գալ բնակիչք տեղւոյն ի քաղցրութենէ սուրբ տանին, և լցաւ քաղաքն ամենայն՝ (որ) թափուր և ունայն (էր) ի գոյից իւրոց։

Այլ զինչ եւս առացից յաղագս քաղաքիս Վրանի որ Թարգմանի վայելուչ։ Բանդն տեր քաղաքիս կարգեալ յարքայէն տեսուչ և կողմնապահ՝ ոչ կարաց ելանել և հաստատել զեկեղեցան ի վերայ հիմանց։ Այսոսիկ խորհելով հնեքն և իւրքն ամենայն չարին խորհրդով, հանեալ ի քաղաքէն զպատուական քահանայս զփառաւոր և զպիտանի տանուտէրս և զամենայն մարդիկն՝ զամենեսեան առ հասարակ, մինչեւ ոչ մի այր մնացեալ ի նեքսն՝ բայց միայն զկանայս և զտղայս թողլով ի քաղաքն։ Այլ այս միայն բարի գտեալ առ իշխանն, (զի) սրբութեամբ և առաց կարծեաց եւ պահել զընտանիս ելելոյն ի քաղաքէն. և զոսս հանին արտաքոյ՝ եղեւ բնակութիւն փոխանակ բարձրայարկ ապարանից և տանց իւրեանց՝ գեղք և վանորայք. և որք ոչ կա-

բող էին հեռանալ, ի հովանի ծառոց և ի պատից նստեալ գեգերէին, անբան և անգործ՝ ակն ունելով սրոյ և գերութեան. և յայսմ երկիւղէ մոռանային զպանդխոտութիւն և զանհանգիստ կեանս իւրեանց։ Այս եղեալ երկարաւմն այս մեծի տառապանացս սկսեալ ի մարերի ամոյ մինչեւ ի յուլիս ամիս. և ի գալ մեծի սուլտանին մինչեւ ի Ներդուան, ապա խաղաղացաւ երկիր բնակելով մարդկան ի տունս իւրեանց. և հրաժանեալ մեծին Թորոսի տուեալ եղեւ Ներդուան ի սուլտանն սիրոյ աղաչաւ առանց կամաց Սոնփանէի, զոր էր առեալ բռնութեամբ ի Թուքէն՝ որ էր այր ժանդ և առեցող քրիստոնէից, որ և սպանեալ ի Սոնփանեայ։

ՄԿԹ. Յետ այսր ամենայնի գնաց սուլտանն յսահմանս իւր խորհելով ընդ մեծամեծս դրան իւրոյ յաղագս հաստատելոյ սէր՝ զոր ունէր ընդ Թուանկայ և ընդ Հայերն։ Այնուհետեւ հաւանեալ սուլտանին դարձեալ առաքեաց զհաւատարիմս իւր Այրուսաղէմ Այնտոք և առ Թորոս,անխատիան ունելով զդաշինս սիրոյ զոր կամեցան երկոքեան կողմանքն։ Այս ոչ եմէջ ի բռնութենէ սրտի իւրոյ սուլտանին եղև, քանզի զինչ հաղոր-

դութիւն է Պրիտասի և Խելիսայ, այլ այս էր պատճառ՝ (զի) որդին Օնանդեայ (Լուբ-էատին) որ էր տէր Հաղբայ և փեսայ սուլտանին, Խլեճ-Արսլանի քոյր, յետ մահուան Մահսուտ սուլտանին արհամարհեաց զորդի իւր զոր ետ յաթոռ Թագաւորութեան իւրոյ և բռնացաւ ի վերայ երկրին քրիստոնէից, և անց զսահմանն պատուիրանի Մահսուտ սուլտանին. և էառ զոր կարաց զանառիկն Անթափ և զՓարզման և զգեղս ամենայն։ Յետ սուլտանին Խլեճ-Արսլան բազում անգամ գրեաց առ փեսայն, «Մի առներ անիրաւութիւն. դարձո, ասէր, զերկիրն իմ՝ զոր հայրն իմ սահման եդ ընդ իս և ընդ քեզ»։ Յետ նա ոչ կամեցաւ լսել, և գոռայր խրոխտալով ընդ ազգն արիական առաւել քան ընդ արքային Պարսից։ Յետ միջոցեւոյ այսր մեծի տարակուսի էին Թագաւորն Հրուսաղէմայ, տերն Անտիոքու Ռուգնաղն (529), այլ Ամն որոյ կարողութիւն զօրութիւնն բարձր է քան զերկիրս և ոչ իսպառ անտես առնելով Թոզուզգաւաղանն մեղաւորաց ի վիճակս արդարոց ըստ անուսութեան մերոյ, ասա յանկարծակի ամենամաքուր արդար իրաւանցն Աստուծոյ ել հրաման պատուհասի, և եհար զնա սաստիկ և դառն ցաւօք, ուստի և յամե-

նայն ազգաց իմաստասէրք բժիշկ ժողովեալ
ոչ կարացին հնարս գտանել պատուհասի
նորա, այլ օր քան զօր առաւել սաստկանայր
բարկութիւն Աստուծոյ ի վերայ նորա։ Օր
էր դաշամբք և մեծապէս երդմամբ ուխտ
եդեալ սրտի մտօք ընդ Հօսլին կոմին, թէ
որպէս գործեաց առ նա անողորմ և անմար-
դի բարուք, զոր ոչ ոք լուաւ ի մարդկանէ
յաղագս և ի դարս ժամանակաց, եթէ ոք կա-
լեալ զարիւրի յայլոց դաւերոյ և ոչ առ ին-
քեանցն պատերազմաւ, ինեամեայ ժամանա-
կաք կապեալ ի շղթայս, յետոյ խուսաբեցոյց
զաչս այնպիսի առն մեծի և յաղթողի բա-
զում պատերազմաց, որ էր տէր աշխարհաց։
Օրհնութիւն և գոհութիւն բարեբանու-
թիւն ամենատուրբ դատաստանացն Աստու-
ծոյ յամենայն բերանոյ։

Մէջ. Պատնամբ յետ զոր մուռացաք։ Ի թը-
ւականութեանն Հայոց ՈՌ (1153—1154) թագ-
աւորնատէր Յիշրուսաղէմ ամաց ութ և տա-
սանց (350), որդի Կոնրատ—Ընժու թագաւորին
Ֆրանկաց, զոր ի ձեռն առեալ զնա մեծին
Աստուծոյ, ետ նմա յաղթութիւն մեծ՝ տի-
րել անսահիկ անմատոյց անքրիստոս (351) ա-
ւանին Ասկալոնի. զոր բազում աշխատու-
թեանց համբերեալ արիական ազգն Ֆրան-

կաց հանդերձ բարի և սուրբ թագաւորաւն զտարի մի, և յոլով ի նոցանէ արժանի եղեն մարտիրոսական պսակին և ի փրեբացն ոչ սակաւք։ Այսպա յետ այսոցիկ տառապանաց բարեխօս և յոյս քրիստոնէից Տիրամայրն աղաչելով զտէրն մեր Յիսուս Քրիստոս՝ զի տարեալ լիցի յաղթութիւնն ի գլուխ յաղագս համբերելոյ նեղութեանն, և տուեալ եղև քաղաքն ի ձեռս թագաւորին և փրեբացն յաւուր Փոխման ոմնի սրբոյ Ստուռածածնին և նորին բարեխօսութեամբ։

ՄՀԱ. Յետ այսորիկ նենգութիւն գրտեալ յանատուած ազգացն Ակիւթացւոց, մինչեւ հարկեալ մարդասէր թագաւորն անհամարս ի նոցանէ սրոյ ճարակ արարեալ զլցեալսն արեամբ քրիստոնէիցն, և զայլսն հանեալ արտաքոյ քաղաքին բնակեցուցանէր. և փոխանակ անքրիստոս ձայնիցն՝ ձայն կենսարեր Աւետարանին (532) լսելի լինէր յամենայն տեղիս, կանգնեցին զնաւն փրկչական յամենայն բարձր ապարանս ժանդացեալ նոսեմացեալ եղեռնաթիւր ազգացն յամօթ և ի կորստեան իւրեանց, իսկ մեզ հաւատացելոցս ի պարծանս և ի յուրախութիւն։ Այսպա յետ այսր մեծի և սքանչելի յաղթութեանս սակաւ մի դադարեալ հան-

գստեամբ, սկիզբն և հնար առնէին քաղաքին Դամասկոսի։ Բանդի ի փոխել Թուականին ՈԴ (1154—1155) եկն որդին Օսանգեայ, որ էր տէր Հալպայ, և որպէս խաբէութեամբ տիրել կամեցաւ Դամշկայ, թէ պէտ և քաղաքացիքն ոչ կամեցան յաղագս երկիւղի որդւոյ իւրեանց՝ զոր պատանդ եդեալ էին Այրուսաղէմ յաղագս հաւանելոյ կամաց Թագաւորին. և նա խաբէութեամբ մտեալ ի քաղաքն տիրեաց Դամշկայ։

ՄԷՌ. Լոյս ի վերանալ Թուականին ՈԴ (1155—1156), տուեալ գանձս բազումս Թագաւորին Այրուսաղէմի և տեառն Ասնոտրու, հաւանեալ չար կամաց նորա՝ սէր արարին, Թոյլ տուեալ նմա գալ յերկիրս քրիստոնէից, զոր յառաջն Յովանկիք ունէին։ Լոյս նորա եկեալ բազմութեամբ զօրքք յանուանին մեծն Աղեթափ, ոչ յամենալով ի վերայ նորա, բրելով փլուցին զպարիսպն, և մտեալ ի նեբբս սրով սպանին զյոլովս յայրազգեացն, և բազումս ի քրիստոնէիցն (Է) զոր գերեցին և (Է) զոր սպանին։ Յետ այսորիկ յղեալ պատգամս բազումս ի կողմնապահ երկրին Ասպնայ և Վիանի խնդրել սիրով ի նոցանէ զերբ-

կիրն, զոր նոցա ոչ հաւանեալ յաղագս երկիւղի սուրբանին։ Յետ այսորիկ համբաւ հասանէր առ նա, եթէ Թագաւորն Լրուսաղէմի և տէրն Անտիոքու զուխտ դաշանցն զոր եդին ընդ քեզ սիրոյ աղաչաւ, Թողին և ապաստակելով աւերեցին վերկիրն. և փութանակի գնաց ի Հալապ և ի Դամասկոս. և այս երկար խուսափելիս վասն այնորիկ երկարաձգէր, զի դէմ յանդիման ոչ զօրէր պատերազմիլ ընդ Յովանէն, և Յովանէն ապաստակելով ոչ կարէր տիրել քաղաքին Դմշկայ։

ՄՀԳ. Այս խորհուրդ առեալ Թագաւորն Լրուսաղէմի փեսայանալ Թագաւորին Յունաց՝ որում անուն էր Մանիլ։ Լր նոցա յօժարութեամբ կամեցեալ, և զդուստր հօր եղբօր իւրոյ առաքէ ի ձեռն հաւատարմաց իւրոց հեծելագունդ զօրօք՝ բազում ոսկւով եւ արծաթով ի քաղաքն Լրուսաղէմ. և այլ եւս խոստմանայր նմա իսկ Թագաւորն Հոռոմոց գալ անձամբ օգնական լինել Լրուսաղէմի քաղաքին և ամենայն քրիստոնէից։ Լր ոչ յաջմեաց, այլ վաղվաղակի ի սոյն ամի, մինչդեռ Թուականն Հայոց ՈԸ (1159–1160) էր. եկն Թագաւորն Յունաց յաշխարհն

թոտրոսի, զոր բռնութեամբ առեալ էր ի կողմնապահէն Հռոմոյ՝ ի Անթիոք, ուր նեալ ընդ իւր զօրաց բիւրս յիսուն։ Եւ թոտրոս խմացեալ զգալուստ աբքային, փա խստեամբ գայ ընդ երկիր իւր՝ ուներով զկին իւր և զմեծութիւն գանձուց իւրոց, և զիշխանս իւր և զսրդիս և զստացուա ծս նոցա։ Եւ եկեալ մնանէ ի քարն զոր Ցանիկ կոչեն, որում ի հին ժամանակս ոչ ոք յիշէր զտեղին մարդաբնակ կամ ամուր ապաստանի, մուտացեալ զկրատ ի մատականին որ ասէ. «Ինդ վեհս քան զՔ քեզ մի հակառակիր»։ Եւ ինքն հեծեալ գուռեդ զօրաք իւրովք ոչ դադարէր ի տե ղի ուրեք, այլ ի վայրս դժնեայս եւ մա յատուս շրջէր ակն ունելով ողբմու թեան Աստուծոյն, և ի թագաւորին Հրու սաղէմի՝ թերեւս միջնորդեսցէ (553) առ թա գաւորն Յունաց վասն նորա և վասն տեա ռին Ամենեքեան, որ տեղապահ էր կար գեալ (554)։ Ուստեալ եւս յայսմ մեծ պատ ճառէ երկնչէին և պատկառէին ի Յու նաց, վասն զի նախ քան զայս երթեալ Ար բինձն ի սաղրեալ թոտրոսի զհետ երթա լով զօրաք ի կղզին Կիպրոսի նաւաք, և գը նացեալ գտին անհոգս և անպատրաստ, և

իբրեւ այլազգեաց տիրելով՝ այնպէս աւե-
լեցին զքաղաքն, և զգեօղս Թախուբ և
ունայն առնելով ի տանց և ի ստացուա-
ծոց, խրատելով զյոլովս յեկեղեցականացն
Յունաց, զուռնչս և զսականչս կտրելով։ Որ
իբրեւ լուաւ Թագաւորն և մեծամեծքն
իւր, մեծապէս տրտմեալ յաղագս այս գոր-
ծելոց, և առ ժամայն ոչինչ կարացեալ առ-
նել։ Եւ ի գալ Թագաւորին ի Անխս և
յերկիրն ամենայն՝ մուտ էր նոյեմբերի ամ-
սոյ, ոչինչ վնասեալ ումեք ի բնակչաց եր-
կրին։ Անայր և Թագաւորին Հրուսաղէմի
գալոյ և ի միասին խորհելոյ զարժանն յա-
ղագս յաղԹելոյ անքրիստոս ազգացն, եւ
ազատելոյ զեկեղեցիս զոր չունէր բնաւ ի
միտս իւր փրկել զգերեալսն։

Մ։Դ։ Յետ այսորիկ եկին Թագաւորն
Հրուսաղէմի և զօրականքն Քրիստոսի Փրեր-
քին, և տէրն Ասխոքայ յառաջագոյն էր ե-
կեալ առ նա անմեղուԹեամբ յաղագաւ վա-
սին (ի վերայ) Կիպրոսի արշաւելոյն։ Այս ժո-
ղովեալ ըստ նախասացելոցս դասք քրիստո-
նէից առ Թագաւորն Յունաց, բազում
Թախանձեալ զնա մեծաւ աղաչանօք յաղա-
գաս Թորոսի քաղցրանալ նմա. և ըստ ատե-
լուԹեան՝ զոր ունէին առ Հայս, անմեղս

'ի վերին երեսս յանձն առ (կայսրն) Միջնորդ և երաշխաւոր առնելով զԹագաւորն Հրոմայ զէմի և զՓրերբն։ Յետ իբրև եկն Թորոս առ Թագաւորն Յունաց դատարկ 'ի սեղանոյ զառաջինն (535), ըստ նախախնամութեանն Աստուծոյ հեշտ և բաղձալի Թուեցաւ տեռ նորա Թագաւորին, և յոլով մեղադրանս մատուցանէր ջարախօսացն վասն նորա. և սակաւ աւուրս կացեալ առ նա, կամեցաւ գնալ 'ի տուն իւր, և Թագաւորին հրաման տուեալ գնալ և փութանակի դառնալ 'ի բանակին։ Յետ նորա ըստ խմաստութեան իւրոյ գիտացեալ՝ զկնոս զօրացն առեալ ընդ իւր 'ի դարձն բազում ոչխարս, արջառս, գոմէշս և ձիս տաճիկ. և եկն դարձեալ առ Թագաւորն առաջի անցուցանելով զգեղեալ ընծայս 'ի դիպող ժամու։ Յետ նորա մեծապէս զարմացեալ ընդ բազմութիւն սեղանոյն, և գովէր զիմաստութիւն կորովի բանակին առաջի մեծամեծացն Հոռոմոց եւ ասելեացն Թորոսի։ Յետ տուեալ նմա գանձս ոսկւոյ և արծաթոյ և զգեստս որպէս վայելէ Թագաւորին, Թողութիւն աբարեալ 'ի սրտէ ամենայն անհնազանդութեան և հակառակ կալոյ Թագաւորաց. և խոստանայր նմա բաղում համարձակու-

թեամբ հրու և հպատակ կալ հրամանաց թագաւորին, որպէս և արար իսկ։

Մ։Հե։ Յետ այսորիկ խորհուրդ բարի ա-բարեալ ի մէջ թագաւորին և անցաղթելի զօրք Փրերացոյն, ուր Ա՛նտիոքու և Թորոս, միահամուռ ամենայն ազգ քրիստոնէիցն հաւատովք և ջերմեռանդ սրտիւ միաբա-նեալ կամ մեռանել և կամ փրկել զանդեր-ծանելի գերեալսն քաղուս մ ժամանակաց յա-րիւնաշէն քաղաքէն Հալպայ և Ամէնից։ Ու ջուռալ ամենայն բազմութեամբն եկն Ա՛նտիոք, և մտեալ ի քաղաքն իբրեւ ի տուն իւր, որ ոչ ունէր կարծիս թէ այս-պէս փութանակի հաւանին Յունաց թա-գաւորին։ Ու թագաւորն խնդրեալ ի քա-ղաքացեացն գրաւական զորդիս մեծամե-ծացն. և նոքա զամենայն զինչ և խնդրեաց՝ յօժարութեամբ տուեալ հնազանդեցան, թերեւս ոչ փոխեսցի ի ծառայութենէն զոր գերեզմանին Փրկագործոյն և թագա-ւորին Ուրուսաղէմի խոստացեալ էին յա-զագս փեսայանալոյ նմա։ Ու եղեալ անհաւն բազմութեամբ զօրաց մեմեալք ի սիրտս իւրեանց որպէս զառիւծուն զմիմեամբք երանելով և որպէս զարծիւ սլացեալ ի յե-բոտն կաքաւաց, այնպէս քաջասիրտք փու-

թանեային սրշաւել սապատակաւ յաշխարհն Սկիւթացւոց. և եկեալ ի տեղին որ կոչի Պալանէ, մերձ ի սահմանս Հալպայ՝ տ-ւուր միոյ ճանապարհ. և էր ամենայն աղ-գքն քրիստոնէից ի մեծ խնդութիւն՝ մեր-ձաւորք և հեռաւորք. զոր լսէին զմիսրա-նութիւն հաւատացելոց յապագս այլազ-գեաց կործանման, և աղաւորեալ ի քար և ի ծանր ծառայութենէն զեկեղեցին Քրիս-տոսի զոր գնեաց սուրբ և պատուական արեամբն իւրով։ Լոյս լուեալ զհամբաւս զայս և զգալ մերձ ի սահմանս Ցաճկաս-տանի, առհասարակ ամենեքեան սհաբեկ եղեալ և կործանեալ յերկիւղէ Թագաւո-րացն, յղեաց Լուբ-Լուտոմին որ էր տէր Հալպայ և Ամիկայ՝ գէսպանս առ Թագա-ւորն, և խոստացաւ տալ ծառայս ի գերե-լոց քրիստոնէից զոր անողոքմ քարշարէին՝ տան հաղար. ընդ որ և յառաջ քան զայս գգե-ցուցեալ և լուացեալ յաղտոց քարշարանաց զծառայսն ընդդէմ յուզարկել Թագաւորա-ցին կամէր՝ ազաչեալ նուաճիլ ընդ ձեռամբ նոցա իբրեւ զմի ի ծառայից։ Լոյս նոցա ոչ առեալ յանձն, և ասէին պատասխանի պատ-գամաւորին՝ կամ եղանել յաշխարհէն և գը-նալ կամաւ իւրեանց, և կամ թէ յանդգնին՝

որոց ճարակ առնել զամենեսեան մինչեւ 'ի սոնդի։ Ա յսպիսի խրոխտալով և ուրախութեամբ էին զօրք հաւատացելոցն իբրեւ յաւուրս հարսանեաց։ Այլ մինչդեռ յայսմ մեծի խորհրդի էին, յանկարծակի յաղդմանէ ջարին հրամարտակ եհատ 'ի Թագաւորական քաղաքէն շփոթ լինելոյ ամենոցն, և կամ այլ կախարդասար դիպուածոց, զոր ասուգիւ ոչ կարացաք 'ի վերայ հասանել պատճառին որպէս եղեւ գործ սատանայի, բայց ասուգիւ այս էր պատճառն՝ որ լուրս (այս) զԿրենէն (336) հաւանեցոյց և զԹորոսի խլած երկիրն դարձոյց, և զայն բաւական համարեցաւ իւր յաղթութիւն։ Կանգնի յառաջ ժամանակաց գիտեմք և 'ի ժամանակագիր պատմագրաց, որ Յունաց Թագաւորքն ոչինչ փրկութիւն չէն գործեալ քրիստոնէից, այլ մանաւանդ խլումն և առումն քաղաքաց և գաւառաց. և նոցա հնորհիւ եղեն Հայք յերկրէն իւրեանց, և այլազգիք զօրացան և եկեալ տիրեցին ամենայնի, և առին առաջին զԱրծն քաղաք, զՄելտենի և զՄեւաստ և զՆի Թագաւորաքնակ օտաղաքն, և մինչեւ 'ի քաղաքն Կոստանդինուպոլիս քաղաքի, և զամենայն ազգն . . . Թուրքաց բռնացեալ ունէին. և ազգն արիա

կան որ են Յունակք, երրորդ անգամ ելին ի փրկութիւն քրիստոնէից, և դաւաճանութեամբ և նենգութեամբ թագաւորին Յունաց կործանեալ և յաղթեալ եղեն ի Թուրքաց, զոր մեք տեսաք աչօք մերովք. զի թէ վասն քրիստոնէից էր եկեալ, եօթնամսեան ժամանակաւ ոչ էր ի Պոլիս յամեալ. նոյնպէս և հայրն իւր արար, որ (557) զպարսն Լեւոն տարաւ և զայլ հայերն։ Լու այս բաւական է որ միտս ունին՝ առնելիք թագաւորայն հոռոմոց. և այնչափ ատելութիւնն զոր ունին առ ազգս հայոց՝ այս էր զոր ասացաք։ Այսպա ի խորհուրդ մտեալ թուլամորթ և կանացի ազգն հոռոմոց ասելով ընդ թագաւորն իւրեանց. «Մի լսեր հայոց և Յունակաց. փութացիր երթալ յաթոռն քո, և դարձեալ եկեսցես»։

ՄՀԶ. Այս լուեալ ուղղափառացն, և փոխանակ ուրախութեանն զոր կարծէին յանմխիթար սուգ մտեալ յաղագս գնալոյ նոցա, զոր բաղում անգամ աղաչեալ զթագաւորն ոչ կարացին դարձուցանել յերթալոյն, աղաչէին և զայս եւս երիս աւուրս միայն լինել ի վերայ հալպայ։ Իսկ նա ոչ կամեցաւ լսել բարի խնդրոյն, յղեալ դեսպանս առ տէրն հալպայ. որոյ յահէն լուեալ

այրէին ՝ի տապ բոցոյ յերկիւղէ նոցա, դա-
շինս սիրոյ խաղաղութեան առնել։ Օրը լը-
ւեալ՝ ՝ի բաղում խնդութիւնէն յապուշ
կրթեցան, ոչ կարէին զնմանն պատասխանի
առնել, կարծէին լուտեսի աղագաւ եկեալ
են. ապա սուրգեալ յեկեղեցի, խոստանայ-
ին առնել զհրամանս Թագաւորին, ըստ որ-
ատածին երդմանցն իւրեանց յղեալ ծառայս
յիսուն ՝ի պատուական Վռանկացն զոր
խնդրեաց անբարի Թագաւորն վասն մար-
գահաճութեան, Թողեալ զանհամարսն զոր
տարեալ էր Քրիստոս ՝ի ձեռս նոցա, զոր ին-
քեանք Թերի պաշտեն, և զմեզ զրպարտելով
դատին ըստ նախանձու և չար կամաց իւ-
րեանց։ Այլ Մուրմանք նենգեալ մահուամբ։
Վարձան անհամար բաղմութեամբն փոխա-
նակ զօրեղ առիւծոյ՝ իբրև զաղուէս տկար, և
որպէս զփախստականք դայլն հասանէին յեր-
կիրն Խղճ—Մյսն սուլտանին, որ Թէպէտ և
ոչ ըստ (538) Քրիստոսի վրէժխնդիր եղեալ
սոցա, սակայն ըստ անիծից և հայհոյութեան
Հռոմոց զոր բարձին ուղղափառաց դատուց՝
ոչ օգնեալ եկեղեցւոյ և գերելոցն, ելեալ
գնի նոցա իբրեւ փախստականից վատ և անե-
բեւակ աղգն Թուրքմանաց, և կոտորեցին ՝ի
Հռոմոց արս երկուտասան հազար, սպանեալ

և զաներ թագաւորին, առեալ ձիս և ջրիս քան հազար. վասն որոյ յոլով խռովութիւն եղեւ ընդ թագաւորին Յունաց և ընդ սուլտանն Իսլիճ-Արսլան։

ՄԷԺ. Արդ այսպէս թուի տկար և անզօր մնաց իմոց, ոչ այլ ինչ կարծել զեկեալ հասեալ փրկութիւնս դարձուցանել. եթէ ոչ առեղութիւնն որ առ մեզ, և մարգարէութիւն սրբոյ առն Աստուծոյ մեծին Եփրեսեմի մերոյ լուսաւորչին, որ հոգւոյ ակամբ գրեաց ի մաքուր պատմութեան իւրում յազգեցութենէ Վերնոյն յաղագս թագաւորացն Յունաց, սակաւ ակեաց լինելով ոչ զպատերազմաց հոգալոյ, այլ զհարկաց և զհաւատոց քննութեանց (539)։

Արդ այսոցիկ այսպէս եղելոց գնաց սա յանվայելն իւր, մնացեալ Պանսեւատիոսն (540) Թորոսի յերկիր հայրենի իւր՝ հրամմնաւ և սիրով թագաւորին խաղաղութեամբ յանհոգս։ Իսկ ակերն Հալպայ, որ եղեւ լոյս ազգին, զերծեալ յերկիւղալիր խռովութեանց ազգեցութեամբ չարին յեղբօրէ և ի հաւատակցէ իւրմէ յազգէն Յունաց, յղեաց առ թագաւորն Շրուսաղէմի և խնդրեաց ի նմանէ դաշինս սիրոյ պայմանի ամոց չորից։ Յուեալ (541) նմա գանձս և

պատրեալ զնա որպէս զարծաթասէր և պա-
բբասպեալ յամենայն կողմանց, եկն ի Խա-
ռան, զոր յառաջ տուեալ էր եղբօր իւրում
Միրանայ։ Եկին յետոյ չարախօս եղեն զնը-
մանէ՝ թէ ի հիւանդութեան քում կորու-
սանելոց էր զքեզ։ Եւ նորա հաւատացեալ
դաւողացն՝ գնաց բազմութեամբ ի Խառան,
և կացեալ ամիսս երկուս, էառ զնա բռնու-
թեամբ և զայլ սահմանս դրացեաց իւրոց
զՈակա, զՈւռհայ ընդ բռամբ էած զա-
մենեսեան, որ յառաջագոյն ընդվզեալ էին
ի նմանէ. եկն յերկիրն Ասպնոյ որ այժմ
(է) սուլտանին, և էառ բռնութեամբ, և
գնաց ի Մարաշ և զայն եւս առձեռնեաց։
Գիտացեալ ամիրայն որ էր տէր Ռեմնոյ՝
զյաղթութիւն բռնաւորին, երկուցեալ
վասն առնլոյ քաղաքին իւրոյ, դարձոյց
երեսս ի սուլտանէն. և նուաստեալ նմա ի
ծառայութիւն՝ գնաց առ նա մինչդեռ ի
Ասպան էր, դարձեալ միաբան եկին ի
վերայ Մարաշայ և Պեհեսնոյ. և նոքա ա-
հաբեկեալ՝ ոչ ունելով օգնական, էառ և
զայն խաբեսպարելով պարսպին։ Այս եղեւ
պատճառ սուերման գաւառացս այսոցիկ,
որ սէր արար ընդ թագաւորին Հրուսաղէ-
մի, պատրեալ զնա իբրև զողայ։ Եւ մինչ

դեռ ՝ի Պեհեմնի էր , ձայն գուժի եհաս առ նա ՝ի Դամշկայ, գրելով՝ ՝ի վճարել սիրոյ պայմանին եհաս Յովանկ ՝ի զօրացն Փրբերայ՝ առևրել զերկիրս ։ ԼՀ Նորա գնացեալ ՝ի Հալապ և ՝ի Դամշկ , և զօրաժողով արար բազմութիւն յոյժ , կամէին պատերազմիլ ընդ Թագաւորին Լրուսաղէմի ։

ՄՀԸ. Այս ՝ի վերանալ Թուականին Հայոց յամս ՈԹ (1160—1161), ժողովեցան ամենայն ազգ Թուրքաց առ որդին Օանգեայ ՝ի Դամշկ, և ազգն Յովանկայ առ Թագաւորն Լրուսաղէմ , դիպել միմեանց պատերազմաւ ։ ԼՀ այսպէս կացեալ մինչև ՝ի մուտ ձմերայնոյ առանց պատերազմի . ապա սէր արարեալ երկու տարւոյ , ցրուեցան և գնացին յիւրաքանչիւր տեղս ։ Լոյնպէս և Խլեմ—Լսլան և Լաղուպ—Լսլան արարին սէր ընդ միմեանս, տալով ՝ի ձեռս Նորա զԼպասմԹ քաղաք և զգաւառս Նորա , որ իւր էր և հօր իւրոյ յառաջագոյն , զի զայն ուզէր ՝ի շմորևլն իւրեանց ։ Իսկ ՝ի Նոյն Թուականիս գերեցին զորդիս կոմսին և տարան ՝ի Հալապ ։

ՄՀԹ. Ի Նոյն Թուականիս յամսեանն Հոկտեմբերի, ամիրայ ումն անուն ամիր Աիրան, որդի ամիր Աբրեհէմին , որդի Սուբմանին , որ էր տէր բազում քաղաքաց և գաւառաց

Խլաթայ, Ամրձիշայ, Աշայ, Տօղատափայ և Մանծկերտայ, առաքեայ զաներ իւր, որում անուն էր Սորատին, բաղում զօրօք յերկիր բրն Վրայ։ Իսկ զօրքն Վրայ Թագաւորին Գորգեայ և Նոքա իւրեանց կամէին գալ ասպատակ առնել զերկիրն Թուրքայ, և ընդդէմ դիպան իրերայ ի գաւառն որ կոչի Խլթիս։ Լուեալ սաստիկ պատերազմ ի մէջ Նոցա։ յաղթեցին Վրացիքն և արարին զնոսա փախստական, և կոտորեցին զբազումս և ձերբակալս արարին արս երեք հարիւր ի Թուրքէն ըդգլխաւորս։ Իսկ Նոքա հարին զհեծելաւորն Վրայ Նեռին ի ձեռն, և իջեալ ի ձիոյն նստէր, և գեղ դնէին խոցոյն (342)։ Լու ի յետեւէն մնացեալ ի զօրայն Թուրքայ որդիք Անուրմանայ (343), որ էին ի Վրայ տանէն՝ եկեալ առ Թուրքն զկնի Վրայ առակայ ուրացելոյ Վրայ, որք էին առաջնորդեալ Թուրք զօրայն։ Նոքա եկեալ յանկասկած գտին զնա յիջման, կալան և տարան առ ամիրայն որ Շահի-Արմէնն կոչէն. զնա միայն կալան, որոյ անուն Կաղ (344) ասէին, կալեալ գլխաւորին Վրացեայ։

ՄԶ. Ի Թուականութեանն Հայոց ՈԺ (1161—1162) Թագաւորն Վրայ Գուրգէն որդի Դեմետրի՝ որդւոյ Դաւթի, եկն ի վերայ

թագաւորաբնակ մեծի քաղաքին Նինուայ յաւուրս ամարայնոյ, յաւուր երկուշաբաթի, և մի օր արարեալ ի վերայ քաղաքին, և վաղիւն բռնութեամբ առեալ զքաղաքն, և սպան մարդ հազար ընդ բրիստոնեայս և ընդ այլազգիս։ Նոյնպէս եղեալ պահապան քաղաքին աւրն ընթերս երկու հազար, և ինքն դարձաւ մեծաւ յաղթութեամբ գնայ ի թագաւորութիւնն իւր։ Իսկ տէրն Խղաթայ որ Շահ-Ամէնն կոչեն, ժողով արարեալ արս ութսուն հազար, եկն պաշարեալ զքաղաքն Նինէ. և լսեալ զայն թագաւորն Ասորոց, եկն ի վերայ նոցա և կոտորեալ զնոսա, և արար զնոսա փախստական զամենեսեան. և սպանան յայնմ աւուր արք եօթն հազար, և առին ծառայս երկու հազար, և վերջ գլխաւորս՝ որ էին ի նոցանէ. հարիւր յիսուն ամիրայք մեծամեծք. և ձիս, ջուրիս, ուղտս անհամարս, և վրան և զոչան, և այլ սպեհ որ ոչ գոյ թիւ, և աշխարհ բազում. և լցան քաղաքն Նինէի ամենայն հարստութեամբ, զոր յաւուրսն Ասորոյն էին կորուսեալ՝ կրկնապատիկ շահեցան, մինչ զինուորքն ճոչանն երկու դանակ ծախէին։ Նոյնպէս զինի բազում աւուրց գնացին մարդիկ քաղաքին Նինուայ ի տեղն պատերազմին և

գտանէին զբահս բաղու�մն ի մէջ խոտին և բերէին։ Յետ Թագաւորն զայս բարու-թիւնս արար քաղաքին Նուոյ. յորժամ է-առ զնա՝ երեսս քառասուն հազար դահեկան և գնեաց ի հեծելէն զգերեալ ծա-ռայսն Նուոյ՝ զբրիտոնեայս և զայլազգիս։ Այս եղեւ ի պահն սուրբ Գրիգորի, միջին-քին ամռան աղուհացիցն՝ յորժամառաւ Ա-նի, և յամենեանն օգոստոսի կոտորեցին զամիր Մշրան որ էր Շահ-Արմէն։ Յետ զկնի երեք աւուր եղեւ խաւարումն լուսնի, որ և յարիւն դարձաւ մինչեւ ի հասարակ գի-շերուն, սկսեալ յերեկորէն՝ որ է օր լուա-նին չորեքտասան։

ՄՁԱ. Յայսմ ամի տէրն Ինոխոքու, որ և Երինձ կոչի և անուն նորա Սիր Ալընաղտ, եկն յաւուրս աշնանային և յանհոգս եղեալ ի ջանէր Ալէքսայ երկիրն. և ի բերդն կաթո-ղիկոսի որ կոչի Օռով, ասպատակս սփռէր ի շուրջակայ երկիրն, աւար առնելով և գե-րելով զԹուրքմանսն զոր գտանէր ի սահ-մանսն՝ ուներով ընդ իւր մարդս հազար ընդ ձիաւոր, ընդ ծուրուկ, ընդ խարուանդա, ընդ հետեւակ։ Իսկ Ամիրն 545 որ էր երբ-կրորդ Նուր-Դտանին. յառաջագոյն ժողո-վեալ արս տասն հազար, ի քմին դրեալ

յառաջն, և պատրաստութեամբ եկեալ ի վերայ նոցա՝ գերեցին և սպանին զամենեսեան, և կալան զ բինձն ոսկի Նոխբու, և ձիաւորս երիսուն. և սպանան յայնմ աւուր արք չորեքհարիւր։ Իսկ ինքն դարձաւ մեծաւ ուրախութեամբ և խնդութեամբ մնաս ի Հալապ, տանելով ընդ իւր զկալանսն, և զ Ինձն էած ի Հալապ բազում նախատանօք և հայհոյութեամբ. և առաքեաց աւետաւորս առ Նուր-Խոտին, զի էր նա ի Ամիշի յաւուրսն յայնոսիկ ժողովեալ բազում հեծելօք ընդդէմ Թագաւորին Շրուսաղէմի. որ իբրև լուաւ՝ դարձաւ աւարեաց և գերի էառ զամենայն գաւառն մինչեւ ի Ցռապօլիս, և երեք ի Հալապ։ Իսկ դարձեալ գնաց ի վերայ Հերմին (346), և չկարացեալ հաստատուն (կալ) ի բաղմութենէ անձրեւին, նաեւ յերկիւղէ Թագաւորին Շրուսաղէմի, զի յաւուրսն յայնոսիկ եկեալ էր Ինոխբ ինքն և Թորոս որդին Ռուբենայ և այլ զօրք Հոռոմին։ Իսկ իբրեւ գնաց Թագաւորն Յերուսաղէմ եւ ամենեքեան յիւրաքանչիւր տեղիս, գնաց Նուր-Խոտին էառ զանազիկ բերդն Արծխան Երդմամբ, քակեաց և աւերեաց, էառ գերի զայլ մնացեալքիս

տանեցան և եբեր ի Հալապ քաղաք։

ՄՁԲ. Յայսմ ամի գնաց առ լուսն Խլիճ-Ա-լան առ Թագաւորն Յունաց Կիւռ-Մանիլն, տանելով ընդ իւր զ՝Միր Սիրան զեղբայր Նուր-Ատանին, և դարձաւ անտի բազում ընծայիւք, եղեալ առ իրար դաշինս երդմամբ՝ կալ ի հնազանդութիւն Թագաւորին մինչեւ յօր մահուն իւրոյ. առեալ ի նմանէ գանձս ոսկւոյ և արծաթոյ, և եկեալ ի քաղաքն իւր։

Իսկ ի փոխել Թուսկանիս ՈՅԱ (1162—1163), մեռաւ ամենապատիւն Խաչատուր վարդապետն և Թաղեցուս ի փանքն Կրտաշարկի, ուր են գերեզմանք առաքելոցն Նեմանեաց իւրոց։ Այս եղեւ աւարտումն բանից և սկիզբն Թուսկանիս։

ՄՁԳ. Յայսմ ամի սպանաւ Սանփանէ եղբայր Թորոսի սեւաստի մեծի որդի Լեւոնի Նենեգութեամբ և գաւազ տուկին աՆՕրնինի (547), խնդրամահ արարին զայնպիսի քաջ և երեւելի զօրականն քրիստոնէից։ Իսկ եղբարց իւրոց առեալ զվրէժ արեան նորա հազարապատիկ յաղագէն Յունաց, ուրոց պարտական եղեալ սպանող տուկին այն առաջի Աստուծոյ։

ՄՁԴ. Յայսմ ամի առաւ մեծանուն

քաղաքն Դուբին ի Թագաւորէն Վրաց Դորգեայ. բռնութեամբ ի ներքս մտեալ գինի փախստական զօրաց այլազգեաց՝ որք եղեալ էին ի քաղաքէն ընդդէմ նորա ի պատերազմ՝, և նա ի փախուստ դարձուցեալ կոտորեաց զնոսա. և մնացեալքն դէմս ի քաղաքն արարեալ, եւ (Վ.իրք) մոբան մտեալ ընդ դուռն քաղաքին եւ կոտորեցին զամենեսեան անխնայ, գերեցին և այրեցին զընակութիւնս նոցա, և ինքեանք դարձան մեծաւ առաւաւ և գերութեամբ յաշխարհն իւրեանց։ Եւ Պրիատոսի մարդասիրին փառք յաւիտեանս անպրաւ յաւիտենից օրհնեալն. ամէն։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

---

1. Ադընթեր Հայ թուականիս յաւելաբ և զհամապատասխանիչ նոցին զԹիւս Փրկչական կրկին ամաց. քանզի թուականն Հայոց ՆԱ սկսանի ի 2 ապրիլ ամաց 551 Փրկչական թուոյն, մինչև ի 1 ապրիլի յետագայ 552 ամին։

2. Ազգային պատմագիրքք միմիմն դարու Հռոմ կամ Հռոմայ անուամբ նշանակեն զՅոյնս կայսրութեան Բիւզանդիոյ, այնու զի Կոստանդիանոս Մեծն ի փոխադրել զաթոռն Հռովմայ ի Կոստանդինուպոլիս, նորոգեալ և ընդարձակեալ զայն՝ կոչեաց Դոր Հռոմ. և զի, որպէս ասէ Միքայել պատմիչ Ասորի, "խառն էին ընդ միմեանս ի զուաւ և գրով ո բուն Հռովմայեցիք և Յոյնք։

3. Պատմանոս է աղուանդեան յաւելաբէն բառիս թարգմանեալ, որ էր անուն պաշտօնեին այնմ որ առընթեր ննիկէր կայսեր առ ի զգուշութիւն անձին նորա։

4. Ամն է ըստ յաւելական ձայնին՝ Ռոմանոս Բ. որդի Կոստանդնի Պորփիւրածնի։

5. Եթէ ասա հնդնական Արաբին ասելով խմանայ զազգն Արաբացւոց, սիրելի ընդդէմ կարգի ժամանակագրութեան։ Քանզի ի այն յայտ ժամանակի ոչ Արաբացիք՝ այլ Յոյնք առին ի ձեռաց Սկիթի—Եստոլայի զԱնարզաբա և զՀալպայ ընդ զօրավարութեամբ Վիկի փոքայ։ Կէդրենոս։ Զնաբա եւ այլք։ Իսկ արդ արաբացուցանել կամելով զպատմին մեր։ մարթի է եւս ենթադրել։ եթէ ունէր թերեւս կայսրն ի ծառայութեան իւրում արաբացի զօրավար ոմոց յանձնեալ էր զանակ իւր։ քանզի մնասամբ իւիք կարէ ճշմարտել զկարծիսն մեր կոստոյնն զոր եւ առաւել քրիստոնէից՝ քան եթէ մահմետականաց արաբացւոց իւրաքանչիւրն դաւանակցայ։

6. Նա ինքն է որդին Գէորգեայ Գոռ, յաղագէ Մարգ պետուհեաց, զոր կայուցեալ էր Աշոտ սպարապետ 'ի վերայ զօրաց իւրոց։ Մ. Չամչեան. պատմ. Հայոց. հատ. Բ. յեր. 837։

7. Աբանդ սանդ զարդ. իմա՝ արա ընտիրս իբրև զարդ սրբութենական բանակին։

8. Աշոտ Գ. Ողորմածն կոչեցեալ, էր որդի Աբասայ և հայր Սմբատայ, Գագկայ եւ Գուրգենի։ Իսկ յասելն Մատթէոսի՝ Աշոտ Գագիկ, իբրեւ երկրորդական անուն իմանալի է զԳագիկն, որպէս փոքր մի յետոյ այսու անուամբս յորմոլորվի զնա։

9. Երկոքին օրինակքն եւս ունին արքանասոյ գէրեզմանի։

10. Եդեալ. իմա՝ տուեալ զԱշոտ։

11. Սաղուսարտին։

12. Գաղղ. թարգմանութիւնն ընթեռնու. Qui stipulait qu'Aschod serait roi des contrées voisines du district de Schirag, et commanderait hors de cette province à tout le reste de l'Arménie. "Պայմանաւ հաստատէին զի Աշոտ թագաւորեսցէ մերձակայ կողմանց երկրին Շիրակայ, և հրամայեսցէ արտաքոյ այսր գաւառի ամենայն մնացեալ աշխարհին Հայոց»։ Եւ յասելն Մատթէոսի դրոյ աշխարհին, ի մանամբ իբր դռոյի աշխարհի. արտաքոյ քան զգաւառն Շիրակայ, որ էր վերապահեալ Յովհաննէսի եղբօր իւրոյ։

13. Գաղղիերէնն յաւելու. La province et les dignité dont avait joui Abirad. "Զգաւառն և զիշխանութիւնս զոր ունէր Ապիրատ»։

14. Յօրինական՝ էրգս։

15. Դիմելիս է աղաւաղեալն յունական բառիս Տոմեդիոս. զոյս անուն տային զօրավարին արևելեան բանակաց առ ստորին կայսերութեամբ։

16. Յօրինական վերապակաւ գրին ՅՅ։

17. Լեւոն իմաստասէր է Ղեւոնդ վարդապետն որ Բաբունապետ կոչեցաւ 'ի կայսերէն՝ 'ի պատիւ երէցոց իւրոց։ որպէս և Սմբատ կոչեցաւ Մագիստրոս և Գուստոսպատեր։

18. Կամուրջ։ Իսկ զԴիզաք որ է գետն Տիգրիս, երկոքին

օրինակքն ունէին Ադամապէ։ բան որում եղաք և մեք։

19. Մինչեր որպէսի։ Մինչեր է բան Աբրահամոց։ որոյ հաբտասա հնչումն է Մաղբրդ կամ Մաղբրդ։ և նշանակէ կամ արևմուտք կամ արևմտեան. և խօսի ասա պատմիչն զարաբացի ժողովրդոց երկրին Մարգայ և Ավիվիկ։

20. Յօրինակեան՝ ասէր առաւ։ զոր փոխեցաք ըստ իմաստիցն։

21. Յօրինակեան Հնաս, որ և ասի Եմեռ, և այժմ՝ Հանոռ։

22. Յօրինակեան վերպակաւ գրի զանխնդաց։ այն է Պասալպէք և բան հայումն Արեգ քաղաք կոչեցեալ։ որպէս եւ վերագոյն բացատրի։ Աւերակք այսր քաղաքի նշանաւորք են առ հնախոյզս։

23. Յերկոսին ձեռագիրսն եւս յայտնի սխալեալ էին դնելով Ձև ի Ձկամբ։ ընդդէմ պատմութեան չարչեցուց իսկ աւետարանչաց։ որք երկոս յիշոն առն՝ ի միում նուագին։ և յերկրորդումն՝ ասեալ յիշոն։ առանց զմիւսն որոշելոյ։

24. Իմա. Ե՝ ի գեղեա ոսկեա յոյլեն կամ գոգանիցն ճշմարիտ պատգիրոցն։

25. Յօրինակեան՝ արանց . . . գան անկոփան։

26. Յայտնի վերպակք են գրչաց։ փոխանակ գրելոյ Աբքեա։ որ է Ծովահայեաց քաղաք Պաղեստինացւոց։ և այժմ կոչի Աքքա։

27. Աբելբրդ է ասա շաղկապս էին։

28. Սոսնէրի։ զոր ընթերցանեն Դոսնէրի։ յորմէ հետևեցուցանեն եթէ իցէ Դասրը անուն բան Աբրահամոց։ որ եր իշխան զօրու խալդիացոյն։

29. Թուի լինել Բիրլոս կամ Պիբլոս քաղաքն Փիւնիկեայ։

30. Իմա՝ մինչև Ի յոգոյս խորհանիցս։

31. Զթիմանդիան և զՏաշխամատացիս համարի Ե. Դիւրարիկ ծագեալ ի յունական բառէ։ առաջինն ի ԲԷՆՈ բառէ՝ որով նշանակէին բաժանմունք երկրի յունական կայսրութեան։ երկրորդն ի Խոգասէն կամ Խոգասիան բառէ որ նշանակի պահապան զօրք։ Եւ թէ այսու անուամբքս

Նշանակիցին գաւառապահ զօրքն, որոց յանձնեալ էր մասն ինչ Եկեղեաց կայսերութեան առ ի պահպանութիւն սահմանացս։

32. Մի օրի. ընծայէն որ բաֆրատան Խուէին։

33. Վաղանէայն քաղաք հանգի թե իցէ Բազանէն առ Ծովափամին Սիւրիոյ. իսկ Սեհուանն է քաղաք փոքրիկ ամուր պարսպաւ յերկրին Աղտիսթայ։

34. Մի օրի. ունէր առաքին, և թողեալ գաւառակ միջոց միոյ բաւի. իսկ միւսն ուռքինա ասէ. ուզղեցաք քան իմաստիցն։

35. Յորինակին վերադրեալն, զոր պարտ էր գրել վերոյլուսն։ Իսկ ուղղն է սեռականն ուղղս բաւին որ նշանակէ գանկ. սուակ։

36. Դեւանդ վարդապետն է նայն զոր յեր. 21 կոչեաց Լեւոն. որ ընդ Թոպտաի Թառնեցւոյ իշխանին առաքեցաւ հրեշտակութեամբ առ կայսրն Զիմիսկէ ի կոստանդ Աղատոյ պրպտի հաշտութեան ազգաւ։ Ցեսս ի վերջ համար 17։

37. Բաւս Սէնէն. որ յորինակն մեր գնի երբեւ յատուկ անուն առանձին ասէ զս. ի գաղղիերէնն թարգմանի տնինաց երբ մանգիր քաղաքին Երուսաղէմի։

38. Օրինակքն մեր երկրին փոխանակ գրելոյ Դոնինքս և Սէքաթ Բռանէ. ունէին վերպակաւ անհմուտ գրչի Դոռ և Էս սա ամուռ Իլին։

39. Ղշնպէս և սատ բառքս Խուէնէալ անուն. յորում թուի եմեկ մուտացեալ իցէ անունն ասէզս բանային. ոչդրեալ էն ի բնագրին. գաղղիերէնն ունի ի բանալսեալն յոսամ Խլին

40. Աղրհանի էր ամիրայ Հերայ և Զաբեւանդայ։

41. Ճէռաւ. որս ուզղեսանն է Ճիռ. զոր բառս որսանն հայկական մի գնէ՝ սակր. որ է գալիս կամ սալիր. իսկ գաղղիերէնն թարգմանի massue, այն է լաթաս. Բիֆուռ։

42. Վահան ոչ ի Ղեւէ (976—977) թուականաւ յաթառն. այլ ի Ղեռ (965—966) բան Ա. Զամչեանի։

43. Աղգիեա է գիւղաքաղաք ի գաւառին Շիրակայ. մերձ ԱՆՒ յեղբ Ախուրեան գետոյ. ուր էր սիրոս կամեղիկսութեան և շիրմեանք նոցա առ թագաւորութեամբ Բագրատունեաց։

44. Բարգաս կոչէր սա, որ էր յերեւելի տանէ Սկեւռա-սաց, զորոյ ի բոյսն սա Շմշկիկ իւր կնութեան։ Սա սաղմոսամբեաց ընդդէմ Վասպի և կոստանդնի, և ի պատերազմն զոր ընդ նոսա վարեաց՝ է զի յաղթեաց և է զի յաղթեցաւ։ Այլ իսպառ պարտեցաւ ի Բարգասայ փոկասայ, ընդ որում թեւակից էր և Դաւիթ կիւրապաղատ ի Տայոց հանդերձ հայեցի և վրացի զօրօքն և փախստեայ ի Բազդատ անկեալ ապաւինէր. ուր ձերբակալեալ արկաւ ի բանտ։ Այլ յետ սակաւուց բանտարկեալ լեալ շրջաւ առ փոկաս որ ընդվզեալն էր ընդդէմ տերութեան. միաձայն ընդ նմա։ Իսկ նա կալեալ զՍկեւռաս եդ յամրոցին Իւրատպեայ։ Եւ իբրն մեռաւ փոկաս, կին նորա արձակեաց զնա և երթեալ հնազանդեցաւ Վասպի կայսերի և թոզութեան առ ի նմանէ հանդիպեալ ընկալաւ զիշխանութիւն կիւրապաղատութեան։ Տես ի Դանիէլեանն Ե. Դիւրբրեայ. էջ. 1։

45. Գազգիերէնն ունի որդոյ Աշոյ։ որդոյ Դէրէնիան. իսկ բան պատմչաց մերոց. որպէս գրեմ և Շամչեան. հատ. Բ. յեր. 1042։ Աշոյ Դերեսիկ էր մի անձն երկանուն. և ոչ այլ և այլք։

46. Յօրինեսկսն Մոռոյ կամ Մոնոյ։ Էր իշխան կամ ամիրայ Ատրպատականի։

47. Մի օրի. Վարդ. իսկ միւսն՝ Վարդան։

48. Յօրինեսկսն Իջայ։

49. Մի օրի. Ամիտի. Վարդանայ։

50. Յօրինեսկսն. անուն էր։

51. Մոռոյ Վարդ որ սա։ գաբանի Սեաւ վարդ, նա ինքն է որ և Բարգաս փոկաս կոչէր։

52. Յօրինեսկսն այլայլութեամբ գնի Աւէ ասան. Սրմ բառ գնի Աւրեան։ իսկ մեք պատենցաք զհարազատ հնչումն յաւանանին։ Բառ Ե. Դիւրբրեայ Ալիւսիանոս ոչ եւ յաթեռն Բաւղարիոյ։ այլ եղբայր նորա Վարդանայ Յովհաննէս։

53. Տես ի վերս Ծանոթ. 5։ Իսկ ի նոյն էջ. տող 14 զբառն ոչ ի գոնէ ամենայն գրչագիրք մեր ունէին ոչ գոնի։

որպէս գնի և 'ի գաղղիերէնին, մեք եդաք ըստ Սմբատայ պատմագրի։

54. Օրինակքն մեր ուշէին պէտքովք իրով։

55. Ա յն է Իշխան Եղէց գրան Յուստինիանոսի Ա. կայսեր Յունաց, որ 'ի մէջ շրջրոդգ գրաւ արաբ ազգութիւնս յանական տումարին, որք ցայժամ վարէին ըստ տումարին Անգրէի բիւրանդացւոյ. վասն որոյ և 'ի ժամանակէ անտի ծագեցաւ անհամաձայնութիւն 'ի զատկական ուսոնս Յունաց և Հայոց, որ կոչի Դ. ազատարկ։

56. Գտանին ցարդ յարեւմուտս քաղաքին Երուսաղէմի արտաքոյ, անդր քան զգերեզմանատունն Ցաճկաց՝ այրք եւ խուռաշք ստուերկրեալք քարաշէնք և գմբեթաւորք լի ոսկերոտեօք մարդկան, բայց յայնցանէ յոյս թաղէն զօտարակաւոր անտեսուն։

57. Վանքն Ընծայուց, որ և Հնձուց ասի, է 'ի Կարնոյ գաւառին հիմեալ 'ի Սարգսէ ուռմեկ վարդապետէ, որ մի էր յայնցանէ որք 'ի բաժնին Յունաց լեալ զառաջինն և վասն Քաղկեդոնական գաւանութեան անհանգիստ լեալ 'ի Յունաց, եկին 'ի Հայս և կանգնեցին իւրաքանչիւր վանս. յոյս ծաղկեցան յետ ժամանակաց բազում հարք սուրբք գիտութեամբք և վարուք մաքրութեան պայծառացեալ։ Երբեւիցէ էր յառաջնորդս Ընծայուց վանացն յ'շատակի ոմն Մատթէոսի Յովսէփ վարդապետ, զորմէ գովութեամբ խօսի և Առուղիկ։

58. Մի օրի. Գ. Ի. Ի. ։

59. Օրինակք մեր յաւելուին զոչոչան կամ ասպարացն յառաջին խմբոնն. զորով զանց արարաք վասն մշուութեանն։ և ըստ Սմբատայ պատմագրի եդաք ըստ առաջին խմբատանցն։

60. Սմբատ պատմագիր, որ հանուսուիչ է գրոց պատմութեան Ռուբէնեանց, գնեալ զերեւուն ատենն 'ի Ն.Դ.Է թուին Հայոց։

61. Յօրինական՝ հաղորդ. իսկ Սմբատ գնէ 'ի Գնատուն վարդապետական։

62. Հապուհ էր զօրավար 'ի բանակին Սենեքերիմայ արքայի, որ նստէր յայնժամ Յաստան, և կամ ըստ Յայամ

առուրց՝ 'ի Վան քաղաք։

63. Մեծն Ղեբսէս Պարթեւ։

64. Ըստ Յունական հնչման գիրք—Զոյգ։ Տիկին Զոյգ։

65 Կոչէս բերդաքաղաք է Ասորիս 'ի հիւսիսոյ Հալէպոս՝ 'ի լեռնամէջս մերձ յսահմանն Աբգարեանց, և այժմ կոչի Խոջոյ։

66. Մի օրի. զարմանալ. իսկ միւսն՝ լարմանալ։

67. Հէպղ. կամ Խան—Հէպղ էր 'ի ցեղէ Արաբացն գիրք բարեխոսաց. յոյժ ծագեցաւ հարստութիւնն Մարտաչիտաց. որք զկնի Համուռնեաց տիրեցին Հալէպոս։ Բառայր էր 'ի ցեղէն Պենի—Ղամայիրաց. իսկ Ղաբը—տալ 'ի Մրաւանեանց հարստութենէ։

68. Մուփարկին (Մհամբարէբին) է Ղիրկիբա. որ կոչի 'ի մեզ և Մարտիրոսաց քաղաք զոր ընդ այլոց քաղաքաց հանին Մրաւանեանք 'ի Համուռնեաց։

69. Պալ 'ի լեզու Ասորւոց և Բրգաց նշանակէ գլուխ. նոյնպէս և բառս ասի կամ ասէին Արաբաց լեզու ասասնոյդ կամ պնասալ ըմբ։

70. Արզան՝ ըստ Ասորւոց. իսկ ըստ հայուսմն Արզն է քաղաք Ազձենեաց գաւառին։

71. Մի օրի Ահվազիա 'ի բոնն. իսկ միւսն Ահվազիա 'ի զբանն։

72. Յորինական՝ գիտանիին։

73. Սեւաւերակ այն է քաղաքն Սեւերեկ 'ի Միջագետս Հայոց. 'ի հիւսիսոյ Աբգարեանց Հայոց։ Իսկ Ասար Թուի լինել 'ի մերձակայս նորին։

74. Թուի ասել 'ի գիդիս գիդիս գիդանիին Ճմանիա ճանանայ։

75. Ա Դարդութիւն խմասաց նշանարին 'ի բանիս։ Թուի թէ ասիցէ. և ճաց Տաճապ գեր հայրենեաց իւրոց։ որ էր ոգիի Գանիի։

76. Յորինական գրակարգ մանրայս ոչ։

77. Յորինական՝ Ե զիմանց մանանլուն. որ ոչինչ ընծայէ իմաստ։

78. Թերութիւն բառից նշանարին 'ի բանիս Գաղդիլերին թարգմանութիւնն ունի։ որ չանայ հնգիանէ Բրիոսոսի՝ առ մեղանիին։

79. Էր անուն պարաձանի առ կայսրութեամբ Յունաց

80։ Մի օրի։ ։ խիստ։ ։ Գաղղիկ։ էնն ունի։ խոսա։ իսկ բռնաբիամբ։ De gré ou de force.

81։ Դա է Վ։ Լուսա Սուրգիս։ մասնիրն հայրենանց։

82։ Սիսակ Ը։ ռ։ հայոց։ յաղագս արանութեան։ Գագկայ։ Գեղեղի այս Գագիկ Բ։ էր սրդի Աշոտայ քաջի։ որդւոյ Գագկայ Ա։ որդւոյ Աշոտայ Գ։ զորմանցի։ որդւոյ Աբասայ։ որ էր եղբայր Աշոտայ Երկաթի։

83։ Անուն Մարդն ենթէ չիցէ վերապակ։ է նա ինքն Գրիգոր մանկաստրս պահանուն։ եղբօրորդի Վահրամայ սպարապետի Տերունոյ։

84։ Թէրեւս ասիցէ՝ Ոչ։ ընդ Ոչ։ Դուանէր։

85։ Այսպէս ունին երկոքին։ գրչագիրք։ իսկ խաչիկ էր ըստ Միքայէլի Զամչեան։ յաղագ Աբծրուանեայ։ և կոչէր Առաբ։ խաչիկ հաւ։ (Հատ։ Բ։ էր։ 993։)

86։ Պառակամանագ տես։ ի Տանեոմաւրեան Ց։ Իսկ զոբատարն առաքեալ։ ի Մանասայ կաստրէ՝ կոչէր Վիկոլայոս։ որ ըստ Կեդրենոսի չոգաւ յօդնութիւն Միքայէլի Խոսրդայոյ վերակացուն Իբերիոյ։ որ նախ գնացեալ։ ի վերայ Անուոյ անկարացաւ տիրել։ զայնմ։ Եւ էր ասէ Մատթէոս Պառակամանաս այս՝ նեղբինի։ զոր կուրդ եւ այր—կին անուանէ։

86։ Կապարանէ բառ։ յուռնարէն։ և Դշանակէ իրր վերազոր իշխան և ամենազօրս Սոյն անուն գտանի և։ ի պատմութեան Վարդանայ։ յորում՝ ասէ։ եթէ իրրև զուսամբ ած կայսրն երդմամբ զԳագիկ։ փոխանակ նորա եդ կատարան։ ի վերայ քաղաքին Անւոյ։

87։ Փոխանակ գրելոյ Ֆէլիսի։ որպէս ունի։ ի տարբև։ Է անուն պաշտօնեասարի առ Յոյնս որ հրամայէր միոյ գընդի կամ լեգէոնի զորայ։

88։ Այսպէս յօրինեալն։ իսկ գաղղ։ թարգմանութիւնքն ունի։ Լ։ պիսիալ մինչ ցմեծ մասն սուտ։ և անգտանեն ուրեմբ ծանիլ։ ան։

89։ Անկեալ թուին ասա բառք յանդգոյշ գրչաց։ Հաւմառ։ օտիշն Մատթէոսի՝ Ամբառ պատմիչ ունի այսպէս։ Ալբ

անդ քոր եպիսկոպոս մի Դաւիթ անուն. առին զգանձս նորա Բարձին քառասուն ըզտու. և հարիւր վեցկի եղանց ելանէր ի տանէն ն։ Իսկ գաղղ. թարգմանութիւնն ունի՝ . . . Դաւիթուկ զորոյ երարձ Աբրեհեմ զգանձն՝ քառասուն ըզտու. և ութ հարիւր վեցկի (sixains) եղանց ելին ի գոմոց նորա։ Կարապետ վարդ. Շահնազարեանց զքառն վեցկի. զոր օրինակքն մեր ունէին ՁԷ ՁԿ կամ ՁԷ ՁԿ. ասէ նշանակել գործի վարելոյ զերկիր ըստ օրինակի ՁՈՒԱԾ որ ձգի ասէ յեւթն լուծ եղանց կամ գոմշոց։ Իսկ ՁԷՁԿ յերկց ԸԾոց այսինքն ի վեց եղանց, յորմէ և զանունն ընկալեալ։

90. Ա յայտս կոչի և ի գիրս Սմբատայ, և է ազատազեան յունական բառիս փոփոխեալ. այլ է այլեցեալ. և էր մակդիր Կատակազն զօրավարին Յունաց։ Իսկ Գրիգոր որդին Վասակայ է Պահլաւունին Մագիստրոս. որպէս յայտնի ցուցանի առ Սմբատայ։ Լիպարիտ՝ առ Կեդրենոսի որդի ասի լեալ Ռատի. զոր տառադրութեամբ Որագիոս անուանէ. իսկ ըստ Վարդանայ՝ իշխան էր Վրաց. որ գերի ածեալ առ Տաղիպ—բէկ. քաղաքաց պատասխանեաւ իբրեւ պարգեւաց տրեալ ակեցաւ՝ ի նմանէ։

91. Ի միում օրինակի յետոյ յաւելեալ է Թուանշան տարբս ի. որով լինի քսան հազար։

92. Սենգերսն էր անուն պատուոյ առ Յոյնս զոր ընծայէին այնմ որ աշակից գասանէր պատրիարքի և տահմանեալ էր յաջորդել նմա։

93. Ասն Վասակ կոչեցեալ՝ էր ըստ Կեդրենոսի Բուլղար ազգաւ. որդի Վլադոսիլաւայ եւ եղբայր Պրուսիանոսի և Իբացէսի. և էր կառավարիչ Վասպուրականի գաւառին ի կողմանէ կայսերի։

94. Յորինակին մեր՝ Ջերդ։

95. Օրինակքն՝ ունէին Ի՝ Ի՝ Ի՝ Ի՝. որ է յայտնի վերոյգրեալ. մարմն է ընթեռնուլ Ի՝ Ի՝ Ի՝ Ի՝ ՅԳԵՐՔ կամ տրէն։

96. Վասիլ էր հայրենեաց հայազգի. իսկ մարն էր ի Վրաց, և կարգեալ ի Մանազկերտ վերակացու և կուսակալ

Աղտահանեաց գաւառին։

97. Օրինակքն ունէին ասելի. զոր ուղղեցաք ըստ Սը-մբատայ։ Իսկ գաղղ. թարգմանութիւնն ունի. յալոփ տա-ղոպան Հէրայ՝ անառար և ալիմանալի։

98. Elector.

99. Խաբուսապէս, որ է Սկուսաբ։

100. Օրինակք մեր ունէին յայսմի վրիպակաւ՝ ղԻաՓա-ղոսԻիանն, զոր ուղղեցաք 'ի վերայ գաղղ. թարգմանութեանն։

101. Նոյն է զոր փոքր մի յետոյ գրէ Ճէրճէրի։

102. Գրչագիրք մեր, որպէս եւ Սմբատ պատմիչ գնեն 505 (չԷ) թուին։ Հայոց թուագրութեան է. Կոմնենոսի վՏուկիծ, նոյնպէս և զվախճան Գիտոս կոմիս ազգի գնեն 'ի այն ամի։

103. Գրչագիրք մեր ունէին ղնուագս։

104. Հեռագոյ հատուած պակասէ 'ի գաղղերէն թարգ-մանութեան. Եւ եղէս առաջնորդ ոստրայն անդրէնոյ ուրդին Լիզոր-դին, ֆաշանալ ընդ նոսա. և նէր յատուրս յիշեալոյ 'ի մոտաս յիանալին յորմամ պապէսոյ ոստրան Մէլլենի։

105. Մեծուխիւն է 'ի բանիս. Թերեւս ընթեռնլի է այն-լաֆ ֆանայան։ Գաղղ. թարգմանութիւնն ունի. ալ ասի հան-ֆիսա ֆնալ զղարիսոյ ամրանիլան գանս Հայոց տանալ խորհանելն. ղանալն արիսան որդոյ իւրոյ։

106. Թուի թէ իցէ աղճատեալն յունարէն բառ ի-ֆաֆելլոս, և հայերէն ֆանիլն, որ է ծաձկոյ գլխոյ։

107. Կամի ասել հանապազ գկորուստ խորհին քաջաց և մանկահասակ պատանեաց կրթելոց 'ի զինուորութիւն, այն է 'ի յունականն Բալիֆարի։

108. Օրինակքն ունէին Ալաբիսան, զոր 'ի սասրեւ ուղ-ղագոյն ունի ալաբ խորասան, որ նշանակէ սալաբ կամ զբարվաբ խորասանու։

109. Ֆանդապոլ. կամ ըստ ուղղագոյն առուգանու-թեան՝ Ֆրանդորուլ, մականուանէր Հերքէ կամ Հերքվվի-ան նորմանտացի ազգաւ, որ կայր 'ի ծառայութեան կայ-սեր Յունաց, ըստ Կեդրենոսի։

110. Կոչի և Հասան—Մահասուբ, որ է ազատ ազգեալն աբարայի կոչմանն Հին—Մանասուբ, որ նշանակի Պոքիսոյ—Մանասուբայ, շինեալ ՝ի Համանաձն առնէ առ Ժամանակագիր Մբրմանայ վերջին խալիֆայի Ամիրեան։

111. Կամառ է՝ զամն երկարանեան, զոր վարեն Պարսիկք և ահմանակից ազգքն։

112. Երկարին գրչագիրք մեր ունեին Տաճանէին. իսկ նստարագիր օրինակն յետոյ յայլմէ ուղղեալ ընթեռնողք ըստ որում էգտաք։

113. Զաւաղ կամ Զաւաղ և կամ՝ Քաւաղք, է գաւառ յարևմտեան Գուգարաց ըստ Մ՝. Զամբեանի։ Իսկ Ավալ է Ավրլբեկեին։

114. Սմբատ պատմիչ ասէ՝ եթէ բաց ՝ի Ծամբնգաւայ էառ Գագկայ և գկնարիա և գխաւատանէք։

115. Յօրինական՝ գրոյն։

116. Ամեն խաչատուր իշխանն անեցի՝ վեռատ կոչեցեալ, որ կայգեցաւ ՝ի կայսերէն գուքս Անտիոքայ վասն անպարտելի քաջութեանն։

117. Ես ՝ի Ջերդն էնեան այլ ամրոնիան, այսպէս ունին գրեալքք՝ անիմանալի. իսկ գաղղիերէնն այսպէս պարզէ, Դուլեայ յօգնութիւնն իւր գաւառն ամրոնիան։

118. Յօրինական՝ խանիլ. կամ թէ իցէ թերեւս ընդ որոնիանն ՝ի խանիլ։

119. Իսկ՝ անբիրան, անպարպան։

120. Ամ՝ է առաջն Յովհաննէս Ոսկեբերան։

121. Յօրինական՝ ընդանարանն։

122. Յօրինական՝ ՝ի՝ՐՐՐ . . . գարարանն։

123. Օրինակքն ունեին՝ անդանելի ՝ի առաջն, զոր ուղղեցաք ըստ մտացն։

124. Յերկուս օրինական եւս ունէր ՝ի՝ խանիլայն։

125. Զատրբեան թիւնս և զմեանս բանիցն Գրիգորի Դիւսապէտ, յորոց ՝ի Բնութիւն գրոցն առնու փախ, անփոխելի պահեալ, զուռն իսկ զենագրին առեալ ՝ի նոցանէ գրոց գնեմք ասասն ըստ ձեռագրաց առ յանգիմանութիւն

տարբերութիւնն եւ նորին ուղղութիւն։ Ի ձեռագիրս Գ. է գլուխս եւ ոչ Զ. ըստ Թարգմանչաց գրելոյն։

՝Քանզի պատշաճիւր արդեւք այսպէս մնաքաւ բանս, եւ մանաւանդ առ մարդկութիւնս միաւորութեանն Աստուածն Բանին։ ըստ որում՝ միաւորեալ մնայ անշփոթ եւ անապատարելի ոչ ըստ անձին յիւրմանէ. քանզի նա՝ ի բազմացելոցն գոլով՝ թուի եւ անհատական լինել վասն իւրութեանն մարմնոյն։ Է երբեք զի եւ ընդունել ի ընդունիլ։ Իսկ Աստուածն բան ոչինչ՝ ինքն՝ ի կցորդութիւնէն որ առ մարմինն եւ առ անձնն՝ այլայլեալ, եւ ոչ ընդունակ եղեալ նոցա տկարութեանն։ այլ հաղորդեցուցեալ զնոսա իւրմէ Աստուածութեան՝ լի ի նոքօք մինչեւ մնացեալ (1) մի՝ որ ինչ է։ Եւ նոքա ըստ զմիաւորիլն Նորին։ է յիւրմանէ այս խառնմանս եւ միաւորութեան։ եւ խառնելի եւ մնայ յանմնայնի ամենայնիս անխառն եւ անշփոթ եւ առնառական եւ անխախտարելի։ ոչ ախտակից եղեալ։ այլ գործակից մնայն։ ոչ ապականակից եւ այլայլակից։ այլ ի միասին անձեցեալ նոցա։ նա՝ ոչ նուազեալ՝ ի նոցանէ՝ առ ի մնայոյ անխախտելի եւ անշփոթելի։ վասնզի եւ մարքարէս ամենայն այլայլութեան անընդունակ է։ Վասն այսոցիկ Գրիգորիոս հայրապետ Գրիգորեան շարժելոյ զեւրն ասելոյ։ զի հոգոյ են թշնամեացն վասն մեր վիրաւորիչք։ եւ ոչ մի ընդդիմանալ նոցա թիւն ընդունելով։ Ա յս Գրիգորիոս յերկրորդ բանին շարախառնիցին խնդրելեացն գրէ այսպէս։ "Ոչ է ասել թէ անհնար է եւութեան իրիք առնել լինել ի լրումն այլ եւութեան, եւ լինել մասն եւութեան։ մնայով ըստ իւրոյն բնութեան մի։ Յետ ընդունելոյ զմիսն եւութիւն ընդ այլում՝ լինելով, եւ զիւրն ամբողջ պահելով։ եւ զմեծագունութիւնն իւր ոչ փոխելով։ այլ փոխելով զնոսա յոր լինիցին յիւրն ներգործութիւնն մերթ առաւելութեամբն։ Եւ ասի զայս յայսպիսի միաւորութեան անձին եւ մարմնոյ։ իսկ եթէ՝ ի վերայ անձին Ճշմարիտ է բանս վասն անմարմնութեանն։ որչափ եւ առաւել՝ ի վերայ Բանին Աստուծոյ յաւէտ անբաղդատա-

(1) Մի՝ օրի. չունի Դ։

բար և քան ճշմարտութեան անմարմնոյն Որ հակառակ իմաս զբերանս ձեռաստիկոսին բամբասել զԱստուծոյ բանին մի. աւորութիւն առ մոգդուութիւն։ Քանզի այս հեթանոսացն է սրբ բազմաստիպ ելս առնեն ասելով եթէ անկաթ է և անմայելուչ և անհասանելի ։ անխմաստ լինել (1) մահկա. նացութեան ատուածայնոյն քան խառնման եւ փառաւորութեան ։

126 · Յօրինեսկն՝ դոպոպարքէ · · · այլ էոխուէլ · · մարդն ճշմարտալ ընդքեմ նէն էրդոր։ ոնիւեան։

127 · Յօրինեսկն՝ ենոէի ։

128 · Յօրինեսկն՝ անոպոմանիանն ։

129 · Բնագիրն մեկնութեան Որոկերբանին ոյսպէս ունի, գիրք· Գ· Ճառ· Խթ· " Չի և զմիս չար հերձուածն ասմատաքի խլեսցէ· զի են ամենք որ 'ի խորհուրդն ջուր 'ի կիր արկանեն։ ցուցանեմ՝ թէ յոբժամ զիս զիսուրդն աւանդեաց։ զինուով աւանդեաց։ և յոբժամ յարեաւն՝ առանց խորհրդոյ 'ի լոկ սեղանն զգինին 'ի կիր արկ· 'ի ծննդենէ արիոյ ասէ· և արիոն գինի և ոչ ջուր ծնանի ։

130 · Գլ· իգ · Յ։ · վկայութիւնքն բերեալ 'ի գրոց Դեւասացւոց ոչ հաւասարին ընդ Հայ բնագրին։

131 · Օրինակքն ունէին 'ի գոռ ։

132 · Եթէ չիցէն յաւելուածք գրչի բառքս գոռ Ե Մէ ինդոնէ՝ էրի · պարտի ընթեռնուլ գոռ Ե Մէ կամ գոռ Ե էրէ ինէրեանի ։ Քանզի քան և երբէն այն ամոյ համապատասխանէ վիցերորդ աւուրն յաւելուածի։

133 · Յօրինեսկն՝ ինչիրն ։

134 · Յօրինեսկն՝ գուէոմ · · · պահոյն ։

135 · Ա յոպէս բարմարեցու զաք զանիմաստ բառքս Բանոյ գործել։ որպէս ունէին երկոքին գրչագիրք մեր ։

136 · Յօրինեսկն՝ յաոոբն ։

137 · Ի հայ բնագիրս Ե · Դիւրթեայ յանդգուշանեն մառացեալ գալով մակրայս ոչ հակառակ իմաստ ընծայեն ։

---

(1) Մի օրի · ընդ մահիանոցսի ։

զրպէս Երեւի 'ի թարգմանու թիւնն։

158. Գոմ՝ կամ Գիմիոս գէլիի։ Իսկ հնչմ և յոյնականն հնչմոց է, անուն պաշտօնի յարգուներն Արաբացւոց։

159. Օրինակքն ուներին՝ Ինչել առ Բագաւորութիւնն։

140. Մի օրին։ Խալիֆն։

141. Յօրինական՝ առանձինս։

142. Տարեանիման։ բուռ յանական հնչման Դարեանիոգլու կամ Դարեանիոգլու։ և բառ թուրքաց՝ Դարեան կոչեցեալ, որով նշանակէր այրն ազատ։ որ ոչ հարկս հարկանէր թագաւորին և ոչ հանէր նոնս մնան յամենայն առաւարայն զոր ժողովէր 'ի պատերազմի։ Ըստ Նիկիփորայ յոյն պատմագրի՝ Տարեանիման Բուռ հայկազունց կոչէր Յովսէփ։ և ունէր ըղպատիւ մագիստրոսութիւն։ և էր մի 'ի հրամանատարացն Ուղայ 'ի բանակին Ռոմանոսի Դիոգենի։ որոյ հրամանաւ առ աթեցաւ 'ի վերայ Խլաթայ։

143. Յօրինական՝ ղարաջն Ենղիկեանց։ . . . Եղեն պոռնկաց։

144. Թուի թէ ասիցի հնչմ։ զորմի տէս 'ի վերս 138։

145. Յօրինական յայտնի վերստին դնին առաքեալ։

146. Ոչմարադ թուի թէ էր զօրաւոր 'ի բանակին Փիլատարոսի։ Եւ զայդ թարգմանութիւնն 'ի նոյն էջն յետ բանիցն Փիլատարոսի ոմն հարիւր արամբք։ յաւելու՝ որոմ հրամայեր Ինոմբաղդ։ Դարձեալ անդ փոխանակ ոմն հարիւրոյ՝ դնի ոմն հազար։ և փոխանակ երիւ հարիւրոյ՝ դնի երիւ հազար։

147. Մի օրի։ հառանիր։

148. Մարիամ թագուհի էին Միքայելի կայսերի Պորապինակայ ուշնը յիշատակի առ պատմագիրս Յունաց ունել վարս անպարկեշտս։ այլ 'ի բառնութիւնց Նիկիփորիկայ ներբնեաց Լակոմենի ստիպանոյ նշանացին ընդդեմ Մարիամայի։ և զՆիկիփոր Վասանիատ անուանեցին իւրեանց կայսր։

149. Մարիամ՝՝ որ և Մարիա կոչէր բառ ոմանց։ էր գուստր Բագարատայ Դ և քոյր Գէորգայ Բ թագաւորացն Քարթլայ և Աբխազայ։

150. Հաստատ է բառ Լատինական Hastatus, որ առ Հռոմայեցիս էր գունդ հեծեալ զօրաց։ և զնոյն անուանեն

կոչուեցին պահեցին յետուստ և առ կայսերութեամբ թիւ-
ղանդ իշ։

151. Էդիէոն նոյն է զոր ի հաճարն ԳԱ կոչեաց Պէիո-
սրպան և ի սաղմոս կոչի Պիէոս։

152. Դիկիփոր Մելիսանէսն՝ որք Եւդոքիայ երկրորդ
քան Ալէքսի կայսեր Կոմնենոսի, յամի 1081 ի հրամանաբեր
Վասանիսասայ յանձնուցն սպասաւորեցաւ ընդ Ալէքսի ընդ-
դեմ անլուսեանն, այլ ոչ բաւականացաւ ի գահն, որում տի-
բեաց Ալէքս, և Մելիսանէս ընկալաւ զպատիս սեբաստա-
սութեան։

153. Յօրինական սիրելեաւքն գնին ՀԵՂԷ ՀԻՐԷՆՆ։ Մի
օրի. Բանաստեղծ։

154. Գագիկ Բ վերջին թագաւոր Բագրատունի, էր
որդի Աշոտոյ քաջի որդւոյ Գագկայ, որդւոյ Աշոտոյ Ողոր-
մածի, որդւոյ Աբասայ։ Որդի այսոր Գագկայ Դաւիթ անուն
առեալ էր կնութեան զդուստրն Աղվանաբիսայ իշխանին
Տարանի։

155. Դաւիթ Անհողնին է որդի Գուրգենայ Բ որդւոյ
Աշոտայ Ողորմածի։

156. Մի օրի. յաւելու՝ Նախ։

157. Այն է Հէրեքի-Իստաղլա Ապուլ Վերեքէ կոչ-
եցեալ՝ ի հարստութենէ Օքայիլեանց որք տիրեին ի Մուսուլ
Ռէնէբատ ընդ ձեռամբ իւրով և զԲենիրա քաղաքն այն է Հալէպ։

158. Գէնէիէ։ կամ՝ ըստ Արաբացւոց հնչման՝ Գէնէիէ-
սատ գաբանի բնիկ քաղաքացի։ երկրացի։ Եբրայ։ Ա յապէս
կոչեին բուն ժողովուրդք Անախարայ։ յորոց մեծ մասն էին
Ամորուոյ դարձուցեալ Յուն ց ի կրօնս իւրեանց։ որոց
խապան ի հաւատացն Եւ ի բարեպաշտութենէ մերկացեալ
չար Եւս քան զանհաւատսն էին։ և թշնամիք եկեղեցւոյն
Հայոց հանդերձ կրօնամոլ կղերօքն իւրեանց։

159. Երկրորդն օրի. ունէին Քարտիէն։

160. Այն է Ամիր—Սարեգ՝ ի հարստութենէ Մարգա-
շիտաց կամ՝ Քելարիգաց։ յետ անկանելոյ սորա յիշխանութ-
թենէն՝ ապրեր թոշակով զոր առատաձեռնեալ նմա Շէքեբ

—Լուսալա։ Տկինեը. պոմ. Հանայ. հա. Ա. յերես 561։

161. Յորինակին՝ սուտ. . բան։

162. Յորինակին. Բռանան։ Ի սոյն ելջ երկրորդ և երրորդ տողքն ազաւաղեալ երևին՝ եթէ չիցէ ընթեռնոցի. Ն հանդէս բարիոնինան. թողուցմ սրբագրել ուղղագոյն օրինակաց։ Երրորդ օրինակս որ եհատ ի ձեռաս մեր մերձ ի վախճան տպագրութեանս. ի լուսանցս գնի զտառս հ, և ուղի հանդէս բարիոնինանց։

163. Զաշխարհագրական սխալանան զոր գտցէ ասա Ռուհայեցի, տես ի Պատմ. Ս. Շամչեանի. հա. բ. յերես 1044. ի ծանօթութիւնան։

164. Երկրքին օրինակքն մեր ունին գուլգգպ։ կամ գուլգպ։ զոր և մեք թողաք նոյնպէս։ Մի. Շամչեան գրէ գուլգպ։ (հա. բ. յեր. 1045.) գաղղ. թարգմ. գուլգ։ իսկ ի վերս գլ գնէ գուլգգ։

165. Վերագոյն ի գլ. ՃԻգ բաժանեաց ի չորս աթոռս կաթողիկոսաց, իսկ ասա հակասութեամբ ասէ վեց լեալ։

166. Ասխան զոր յիշատակէ՝ կոչէր առ արաբացիս Ասվեղ—խան—Ասբ—խան—էլ—խասարեզմի. և էր կաւավարիչ Դամասկոսի կարգեալ ի կողմանէ Մելիք—շահ սուլտանին Պարսից։ Մինչդեռ Դ.դուշ զպաշարմամբ գոյր Հալպայ՝ որ էր Ֆաթիմեանց, Ասվեղ ինեղ անկեալ ի քաղաքին յերեսաց բռնութեան Վեսար—էլ—ՃԷմալի. որ էր զորավար խալիֆային Մոնդանսէր—պիլլահի. կարգաց զԴ.դուշ յօգն իւր։ Որ երբեմն մնաց եղեւ. Եգիպտացիքն բարձեալ զբանակ իւրեանց խաչս եառուն։ Եւ Դ.դուշ որ խորհէր ի մոռ տիրել Դամասկոսի. կարաւ զԱղվեղ և ի մահ մատնեաց յանցաւոր դատելով զնա զի ոչ փութացաւ գալ ի շնորհակալութիւն նորին։—Ջրկիներ. պոմ. Հանայ հա. Գ. յեր. 215 և այլն. և Քադրմեր. յորոց քաղէ և թարգմանիչն գաղղերեկանին ի ծանօթութիւնան իւր յեր. 425։

167. Ռուհայեցին չփոթէ ասատանոր զանուանս խալիֆայիցն. քանզի Ասվեղ կոչէ եւ զՄոնդանսէր—պիլլահ ամիրայն Եգիպտոսի։ Ասվեղ (Ասխան) մատալ էր յերկիրն Ե-

գիպատուց, մինչեւ յանգիսանն լինել Նոյա Գահիրէի, յոլուտ Ժամանակի Մոնոգանաէր գիշերատուն փախուցեալ զերծանէր. իսկ բնակիչք ընդ Արաբացն մնացեալ զին ի վեր կալան, յարձակեցան ի վերայ զօրաւորին Մելիք—շահի և ի փախուստ դնեն խուճապելոյն Դարձեալ Ազիզ ի Դամասկոս անցեալ ընդ Ռամլայ և ընդ Երուսաղէմ. զրան և յաւարս արար։ Անդ յերեւս 425։

168. Էմիր—Էլ—Ճէյիւշ նշանակէ հրամանատար զօրաց. այսպէս կոչէր առաջին պաշտօնեայն խալիֆայիցն Ֆաթիմիանց։ Թարգմանիչն գաղղիականին հմտարի զուս թնել հաւատաւոր ի Հայոց. և էր, ասէ, նոյն ինքն Պէտրոս—Էլ—Ճէմալի զօրապետն Մոնոգանաէր—Պիլաշայ։ Եւ կոչեցաւ Ճէմալի գոլով յատաջագոյն ի ծառայութեան Ճէմալ—էտտուլլայ—խանն—Ալմոնտայ. իսկ զՊէտրն հաւանացոյն կարծէաք առէ լինել կրճատեալն հայերի անուանն Պետրոս։ Պէտր էլ ճշմալ նշանակէ գերեզկացոյն քան զգերեցիկս կամ գերեցկութիւն գերեցկութեանց։ Երեւելի հանդիսացաւ Ամրձաշ ութիւ յաղթութեամբք եւ ութիւ խնամութեամբ խրատ։ Սորա որդի էր և հետեւող քաջ նահատակութեանցն Էմիրէլ—էլ—Ալիդալ. զորոց տես ի Քագրէրէ. Յիշատակութիւնք ի Էնրոյ Եպիսկոպոսի. հատ. բ. յորմէ առնեալ և թարգմանիչն գաղղերէնին յեր. 425։

169. Մի օրի. ԼՈՐ։

170. Կոստանդիանոս. կամի ասել ի կոստանդիան ծովէն մինչ Յովկիմեանս տիրեաց։

171. Սելեւկիա քաղաք ծովի զերեսաց. եօթն մղոնաւ հեռի Անտիոքայ. յարեւմտակողմն հարաւոյ։

172. Ապա—Սոյիա Աբ—Սանքար—խան—Ապտալահ. մեկանուանեալ Քասիմ—էտտուլա. ազգաւ Թուրք. և էր ի ծառայութեան Մելիք—շահի. Սորա որդի էր Էմատ—էտտին Զանկի ամիրայ՝ ոմն Թուրէկ Մուսուլ քաղաքի. որ սա զԷդեսիա և հին ի վեր կործանեաց։

173. Դեսն մեծ՝ Դամասք. կամ Ցօնտրա։ Յօրինական մեր սուս զՊաժինակն զնեմ Պաժինակ. կամ Պաժինակաց։

174. Ամենայն գրչագիրք մեր ունեին ասա։

175. Յօրինական ոգեաց . . . Ի խղճի։

176. Արիոնն գնի երբեմն մանաւանդ ի սեռականն ոչխարն և ոչխարին. ի միում եւեթ տեղւոջ եգեալ կայր ասոխարն. ուստի գիրեալ ունէր զ տառն։

177. Խաղահիմն Ղասրը—Հատուցաւ կռէցեալ. ի հարբուսաւեթնակ Օգբայիլեանց Մուսալ քաղաքի. էր սրդի և ուշ եղբայր Հէրիթ—Հատուցեալ։

178. Գազդ. Թարգմանութիւնն յաւելու ասոտ. . "Եւ սիրեաց Գդուշ (Ռուհայուս). և զամենայն երկիրն թշնամեաց իւրոց արար ընդ իւրով իշխանութեամբ։ Եւ գնացեալ Յուհայ կացուցանէր. . . "։

179. Սուգման սրդի Ամրուխայ. Թուրքման ազգաւ. յաղթեցաց զհայր իւր ընդ եղբօր իւրոյ Ղեշմ—Հատոնն էլ—Ղալիի յիշխանութեան սրբոյ քաղաքին և յամի 1096 Էլմէլիք—էլ—Ասիգալ սրդի Պեսար—էլ—Ճէմալիի, (տես ի մեր ծան. 168) զօրաւոր խալիֆային Եգիպտոսի Մուսդալի—պիլլահայ հան ի ձեռաց նոցա զիշխանութիւնն Երուսաղէմի. սրդ գնացեալ տուանձեցաւն մերձ Յուհա քաղաք. և Սուգման հիմն էդ յամի 1101 թուին փոքրիկ իշխանութեան մեջ. որ ի ժամանակս յաղթեցաց նորին եղեալ զարգացաւ. այնչ իշխանութիւնն Ուրդսիանց. որ թուի անուանեալ յանուն Ամրուխայ հօր Սուգմանայ։

180. Գազդ. Թարգմանութիւնն ասէ. եթէ թուրք 40.000 աւ մտին ի քաղաքն և պատերազմէին. իսկ զմիւս քառասնից հարբացն որ ընդ Ռատուանայ և Ազուս խոխանի և կեալ ոչինչ յիշատակէ։

181. Դնի անտարբեր և Լաէիան կամ Աւէիրայ։ Նոյնպէս և Գէրմէն գնի և Դէրմէն. և ի սեռական հոլովն Դէրմայ 2է-փոխելով ընդ Դէրայ։

182. Է պայծառութիւն Գաբրիել անուան ըստ ազգաւ. հնչման Յունաց։ Գաբրիելմա տիրացի որպէս և Ամրուք ֆարաճ անուանեն զնա Գաբրիել. զոմանք ասէ Գաբրիէլ մա՝ եթէ Հայ էր ազգաւ. իսկ կրօնիւք յանեանգաւանս։ այլ

է Հայ—հուռոմ։ Սա եւ զգուստոր իւր Մարֆիթ՝ Բոդուէնի Տրբուրդ (Պաղտին Տրպօրկ) կոմին Ռուհայոյ։ որ յետոյ թագաւորեաց Յերուսաղէմ։ եւ եղեն ի նմանէ դստերք երեք։ Մելիսանդէ։ Ալիս։ Ռոսիարդէ կամ Հոդիլինը եւ ժուտա կամ Ժէրպէյտա (1)։

183։ Ալին է կոմն Սէն—Ժիլի (le comte de Saint Gilles)։ Իսկ Ռուսկերին Ղորմնդաց՝ է Ռոբերդ կոմն Ղորմանդիոյ։ Աշիսարին Ռուանդաց՝ է Հունդարիան կամ Մաճառաստան։

184։ Ի Գաղղիական թարգմանութեան պակասին բառքս էին հարիւր հազար հեթեւոյ եւ հարիւր հազար յիսուր ոմն հեթէնք։

185։ Տրուշդա կամ Ղոր Տրուշդա կոչեցաւ քաղաքն Ասուարդա որ եւ Ասադարբա։ կամ Ասարդարբա յաղագս անուանիկ պարապային որով ամրացեալ էր։ եւ էր մեղրաբազուկ Սիկիլիոյ առ Ժամանակաւ խաչակրաց։

186։ Ալին է Դահիր—Հուսին—Ապու—Մանսուր Դողդէքին։ որ էր Մամլուք սուլթան՝ ի Տաճարութեան Դոդղդատա էգն։ գլխաւոր պարշանեալ որդւոյ Նորին Տրբաքայ։ որ յետ մահու հօրն տիրեաց Դամասկոսի։ Իսկ զկնի Ժամանակաց Դողդէքին արկ զքաղաքն զայն ընդ իւրով իշխանութեամբ յափշտակեալ՝ ի ձեռաց որդւոյն Տրբաքայ։

187։ Օրինակքն մեր ունին զքրն Հայոց որ թուի յայանի տալ վենել փոխանակ գրելոյ Ֆռանկոյ։ զպակս ունի և գաղղիականն։ զոր և հատուտակ հետագայ բանքն թէ՝ առեն (Ակերաւոր) առ զքրն Ֆռանկոյ։

188։ Բաղուէնի էր իշխան Տարանտի և Օշին ասպետ իշխան Լամբրանի։ կացուցեալ՝ ի կողմանէ կայսերէ Յունաց։ եւ Նիկակիցք Կոստանդիայ Հայոց իշխանի։ Օշին՝ զոր Անոնա կոչեն՝ ի գիրսն իւր կոչեցեալ Ալէքսիոս՝ անուանեալ Աբրիգեանցամի 1081 գտաւ ընդ բանակին Ալէքսի յարշաւելն Նարա

(1) Տես՝ ի պատմութեան մերում տարբ Երուսաղէմի՝ ի Դանիելեանթիւնդ։

Ասիերիա ընդդէմ Ռոբերդայ Գիսկարդի։ Պանծանաք յիշատակ զնանել Անոնց ի մէջ բերեալ զարիսպանծ գործս քաջութեան զոր Եղբայր՝ սատակելով զսկայաձեւ մարտիին գաղղիացի ի թշնամեաց բանակէն որում էրեւելի հանդիսացաւ։ Յետ ժամանակաց ի յանկարծահաս աւրաւանէն Ջանդրեանայ պարտեալ և վատթարեալ՝ առաւ ի ձեռաց նորա Կիլիկիա զբոլոր դիրամանատարութիւն վարէր Օշին ի կողմանէ կայսերս։ առնուանեալ Սարասապէ գաղրոս կամ ըստ Շահէնանի Սէբաստաս։ Առ. Դիւրբերայ գլ. ՃԾԵ. Ժանդրոնիկեան 7։

189. Ի բնագիրսն մեր գտնին կուրաստաղաս։ որ հատարի սխալ անհմանա գրչաց։ Քանզի զարամարն Պարկիարուխի կոչէր Կերասաս։ բառ սրուտ և Գուլիլմոս Տիւրացի փարեալ իւիր տարարութեամբ կոչ Կարպագաղ կամ Կարպագաղ։ (Corbagath, Corbagaz)։

190. Յարիանան՝ Մարա։

191. Ա յապէս յարիանան։ իմա։ Սէբաց զգուանն պարարպոլին՝ զոյն որ ի բերդն հանէր։

192. Ա յապէս յարիանան։ թերեւս անկարգի յառնուլ նոյա ի քրիստոնէից Սիւլէյմանայ սրդէայ Դգիլիշոյ զարմի տեսս մի բարդն ի ձիգ։

193. Ի միում օրի։ պակասն պարապանայ։ իսկ միւսն գնի պարարիրայ։ Նայնպէս երկու օրի։ եւս ունէին ի Կարարազայ։ փոխանակ Կերարազի։

194. Հնդիկք կոչէին առ Նախնիս երկիրն Եթիոպացոց

195. Ի գաղղ։ բնագրին պակասն բառս Հիրայ։

196. Յարիանան սխալմամբ գնի Հայայ։ եւ է սիրոց ի սարասաս Տորս լերանց յերկրին Կիլիկիոյ։

197. Յարիանան՝ Ասարան կամ Ասարդ։

198. Յարիանան՝ Զնի։ . . . աս Ջանգ՝ սովոր . . . զրոնիեան։

199. Ի գաղղիականն պակասն վերջին պարբերութիւնն՝ Յայսմ ամ Ֆեռա Կարարդին զրդի Ռոբինայ։

200. Դանիշման Նշանակ գիտուն կամ վարդապետ։ պարպէս կոչեցաւ Գիւմիշ—գէրին՝ որդին Թէիլուի։ որ կոչի Ի. Մարհամիկատ—պէն—էր—Դանիշման։ Քանզի հայր նո-

բա թեՀիլա վարժապետ էր ասման։ Եւ եղեւ Դանիշման առաջին էմիրայն կամ ամիրայիցն Կապպադովկիոյ։

201. Յորինեսկան՝ Ն՝ ի յեռն անապարասարնիանէ, զոր պարտ է ընթերնուլ անպարասարնիան ըստ սրատմ եղաբ։ և կամ՝ ի բաց յապաւել զնախագրութիւնս՝ ի յեռն։

202. Պարտաւ իբր պարտ կամ խոնարհ որպէս անուանեն ցարդ Յոյնք զհոգեւոր առաջնորդս եւ զքահանայս իբրեանց որ նշանակէ հայր։

203. Զայսմանէ յիշատակեն և ակնարանս վիպագրն Ֆուլշեր Տը շարդրը (Foulcher de Chartère) և Կաֆֆարոյ (Caffaro) հետաքրքրական իմն անմոլ. յորոց առնու և խմբագիրն խաչակրաց պատմութեան Միշաւ. հատ. Ա. յեր. 290—291. տպեալ՝ ի Փարիզ 1856։

204. Թարգմանիչ գրոցս պարան Ե. Դիւլորիէ. զսուրբ տեղեան թարգմանեալ Վանս. Ղենապան (Couvent, monastère) որով հանարի՝ ի վանաց իւրեանց տարաբերժեալ լինել միւս ազգացն՝ ի կրօնաւոր բռնութենէ Լատինացն թէ ոչ գամ մի ձեռնամուխ լեալ իցէ զնոցանով սուրբ Տեղեացս. բարեւ մնգամ անկանի յայս սեպհականս. որով չիսոյնէ նա զազգական սեփականութիւնն ընդ հանուցական (Compossessif) իրաւունս յոր վայելին իւրաքանչիւր քրիստոնեայ հասարակութիւնք կամ միաբանական ուխտք սրբոյ երկրիս։ Բանի այլ է իւրաքանչիւր սուրբք ազգի վանք. որք իբր՝ ի բազմամ չեն սուրբ տեղիք. այլ պարզապէս բնակարանք եւ մենաստանք. և այլ են սուրբ Տեղիք՝ որով խնամամբ հասարակաց՝ զանոնսիկ վայրս յորս գործեցան անօրէնութիւնք Քրիստոսի Աստուծոյ մերոյ և ոչ կացուցանեն երբեք վաղարս. յորոց կարգի է տաճարն սրբոյ գերեզմանին Քրիստոսի. յորում՝ և Գողգոթայն եւ տեղի գիւաոյ սրբոյ Խաչին (Գիւտ—խաչ. մնաուռն սրբոյ լերինն Ձայթարձանն սուրբ Աստին ծնեցեան Քրիստոսի, եւ և և կեկեղեցին գերեզմանի Աստուածածնայն որ՝ ի ձորն Գեթսեմանեայ. և այլն։ Արդ յասելն Մատթէոսի՝ մերժեցին զՀայ և զՀաւատ զԱսորի և զՎրացի յանիրաւ ուրախեալ խնամամբ՝ ի վարելոյ զպաշտօնն աս-

տուածային և զուտքը խարհուրդ պատարագին ի տաճարի տուքը Յաստուծեան, տուքը Ծննդեան և այլն, յորս ամենայն ազգք քրիստոնէից ունին իրաւունս կատարելոյ անխափան զգոյշ հոգեւոր ծառայութեան իւրեանց, որպէս և անանել և ցարդ։ Ապա ուրեմն Լատինք առ թագաւորութեամբ խաչակրաց ոչ մերժեցին երբեք զայլ քրիստոնեայս ի սեփական վանուց իւրանց, և ոչ կանայք նոցա զքրաւեցին զամենայն վանս սրբոյ քաղաքիս, այլ կացուցան եւթ սպասաւորել եկեղեցեաց իբր ջանքնակալ լուսաբար, աւելացուս և այլն, զոր ազգերուն կանոնք եկեղեցոյ։

205. Երկոքին գրչագիրք եւս ունին ի յամ դշ երրորդի և ի երրորդի, այն է 450, որ է յայտնի սիոյ օրինակագրոյ, փոխանակ գնելոյ ՇԺ. այսինքն 550։

206. Ի գրչագիրսն մեր թերեւս սխալմամբ գնի հաշուոյ յերկոսին տեղս։

207. Երկու օրինակքն թերեւս և ունին երկրորդութիւնս բան սրամ եղաբ, այլ մեր հաւանիմք սա աւել ընթերնուլ երկոսիրաւթեանս։ Քանզի շուտեի ինչ յարմարութիւն ասա ի յառաջաբանական խօսան զերկրպագութիւնն խօսել, կամ սրպէս կամի խմանալ Ե. Դիւրորիկ գնաստատութիւնն զաշխարհ կամ պաշտաման լուսոյ սրբոյ Գերեզմանին։ Իբրեւ այն թէ զայնս ժամանակաս սկիզբն տուեալ իցէ լուսաւորութեան հանդիսին։ թերեւս յեկեղեցականացն Լատինաց։ Արդ զի զերկրաբերութիւնն պատմութեան իւրոյ խօսի, յայտ է ի հետեւեալ բանիցն զոր ասէ. Ի նոյն հայրապետութեան տէրտն Գրիգորիի . . . գաղտնս յոյժ պատան մեծ սանիմ՝ առ ի պարիզ, յորմէ խմանամք եթէ ի նորին ժամանակս եւս զառաջին սկիզբն գրելոյ զպատմութիւնս, և ոչ եթէ զերկրպագութիւնն ինչ ասէ, կամ դնաստատութիւնն լուսոյ տուրբ Գերեզմանին։

208. Յերկոսին օրինակսն՝ գրեալս ԲԼ՝ ասպարեցոյ սոյն հանրագրոյ։

209. Յօրինակսն՝ ասեալ զայն։

210. Ի գաղղիական թարգմանութեան յաւելու ասասփասս Գրիգորի յաբեանս. ասին։

211. Ի Թուականս Թիւնս ամացն Նշանագրին վերադարձ մուծեալ ՝ի գրչաց կամ՝ ի նոցանէ իսկ հեղինակին անդգուշութենէն։ Բանզի ՝ի յառաջաբանին Երկրորդի մասին խոստացաւ պատմել յառաջիկայս զանցս ուրեմնից ամաց։ այն է ՝ի ՇԲ Թուականէն Հայոց մինչև ՝ի ՇՁԲ։ իսկ զերկրորդ մասն իւր հասուցեալ մինչև ց ՇԴ։ լինի պատմեալ զանցս 48 ից ամաց։ ուշ քան և եօթանց զոր սխալմամբ դնէն գրչագիրք մեր։ թէպէտ զի Թուականն ընթանալ է խ։ ընդ որ յաւելեալ և զամն երեսուն անցեալն որ առաջի կայ պատմել յերրորդում մասին յայտիւ։ լինին ամբ ուրեմնս։ այն է ցմուա կանն Հայոց ՇՁ։ թէպէտ և ինքն հեղինակն հասուցանէ զպատմութիւն իւր մինչև ցամն ՇՁԲ։

212. Յօրինեսցեն՝ ոչ ազատամ հանգիսանաբրինանս։

213. Ի միում գրչագիրս օրինակի պրոցն Վատրաս Վեհարեալ ասէ Ե։ Դիւրերիկ։ գրի Սարանդոս։ թէպէտ և այս շինածագիր ինչ զարշելի է թէ զմեզ քարոզեալ կամիցի ասել։ Հանդերձ ինքն Ե։ Դիւրերիկ հաւանեսցի ինն կարծեաց։ եթէ կամի նշանակել զամսոյն Սարանդիսոս կոչեցեալ։ և ՝ի լեզու ՑաՀնկայ Սեր Ինդիանոս։ միով աւ ուրբ հեռի Ամարդրաց՝ ՝ի հարաւոյ արեւմտից նոցա։ շինեալ ՝ի գարամեան ժողովի մեջ։ ոչ հեռի անտի հասեալ ընթանալ գեան Ջանան ՝ի հարաւոյ կուսէ։ Ցեռ և ՝ի հնարաս։ ինչ Հիմնեանի լեր։ 366։

Իսկ բազաքն զորմէ խօսի շինեալ Ալեմանաց որ Սեն—Ժիլիս։ և բերդն Պէլերին կոչեցեալ։ զոր հասուցն ՝ի վերայ բլրոյ միոյ մերձ ՝ի Ցրաղօրիս յամի 1105։ զոր և Ռաբարբ կոչին Հիսն—Սրնեմիլ։

214. Guillaume IX comte de Poitiers։

215. Գաղղ։ բնագիրն յաւելուս՝ առաջի կոսանդնոպոլիս։

216. Գեղեռն։ Զայս բառս մեծին զոր ոչ կարացաք բառագիտել։ Ե։ Դիւրերիկ թարգմանեն։ Lui donna de splendides festins. «և ուրաբ Ն մա ինչոյս մեծ ուռ ամբաս»։

217. Գրչագիրք ունին՝ Ի Նիսա։

218. Օլոս Ասնոտ։ և բառս յաւելական և հոլիստ թարգմանիս

219. Բառագ Սանձաւել ծագկ. ասկ Ե. Դիւբրիկ. յերկուց հնագոյն բառից գաղղեացւոց Սանզ—ավեոր կամ Սանզ—ավեր (Senz avehor) կամ (Sans aveir). Յայս անուն կոչէին նոքա որք չուներին ինքեանց առանձին աւառս (fief) կամ վիճակս կալուածական. յորոց համարի էր Վիլհելմ կոմսն Դրլուքայ (Guillaume, comte de Delouk).

220. Ի բնագրի գաղղիականին պակասեն բառքս ղԱՀ-պանցայ յանինան ֆամ. որ մինչև չայնմ յանապատաց հիմնանասց։ Ըստ մեր մեր ամբողջապէս ի մէջ բերել և Եղսայի վարդապետ նշեցի ի գիրսն իւր զոյն թուղթ Գրի. վկայութիւն։ (Տես ի գրչագիրս Թանգ. սուրբ Աթոռոյս. Համար 999. Ֆ։

221. Երկրորդն օրինակքն եւս յաւելուն ասս զանազանական բառս։

222. Յօրինակն՝ հաստատելոյ. եդաք ըստ ի մէջ բերելոյ նշեցուցն։

223. Ի գիրս նշեցուցն գնի՝ լիով մէմարդոնենամբ. . . ոչ է ֆամանակ ընդունելոյ։

224. Գաղղ. թարգմանիչն ընթեռնու ասս որ դառնանն չանիլ ալ ոչ ոք. (Qui n'entoure pas comme d'un mur le pain sacré.) որ չընծայէ ինչ իմաստ։

225. Ի բնագիրսն գնի յանմոս գոգոյն թէ ի սեռական և թէ յաղգական հոլովմն։

226. Երկրորդն օրինակք եւս ունին պանիլ արայ ասն. և եդաք ըստ բնագրին Ե. Դիւբրեայ։

227. Ա յոգես յօրինակն մեր. թերեւս ընթեռնի է՝ ոմինայն ընդոգոյն. քանզի և գաղղ. թարգմանու թիւնն ունի. " Տայր նոսա և ամենեցուն որք բերին զկոմն »։

228. Օրինակքն՝ Արլիպնայ։

229. Ա յին է Հէմս—Կոստոյա ՇԿրմիշ ամիրայն ՇԷզիրեի խան—Օմարայ. որ յամի հիճրէթին 495 յաջորդեաց զԿերպոգաս յիշխանութեան Սուսուլայ։

230. Գաղղիերէնն ունի Ա-ղոնա զոր համարի նշանակեալ սասպա։

231. Հանիլ։ զոր Գաղղիականն ունի Հանիլ։ տուս.

գաբանի Հիսաբ—Քէնիթայ։ և է աւան յարեւելեան կողմ Տիգրիս գետոյ։ Ի հարաւոյ Ամիդայ։

232. Պէտք թուի սխալ գրչի փոխանակ գրելոյ Պոլկամ Փոլ։

233. Պէլիթան որդի էր Ռեմմնդայ որ Սէն—Ժիլ։ եւ ոչ քեռորդի։

234. Ջաւալի—Սաքաուա որ եկաց նախ կուսակալիչ Մուսուլայ։ ապա փոխարքայ Ֆարս գաւառին Պարսից երբ խնամակալ (ատաբէկ) երկամեայ մանկանն Ճակիրայ որդւոյ սուլտան Մահմատի։ Առ Ե։ Դիւլքրնայ։

235. Յերկրորդին օրի։ եւս գնի Հայոցայ։ Ըստ կարծեաց Ե։ Դիւլքրնայ է Սուգման Էլքօճայի։ իշխանն Խլաթայ։ որ երբ Մամլուք ի ծառայութեան ելաւ նախ Քօճայ—եւ տին—Խանդելի Սելճուկեան իշխանին Ատրպատականի։ ապա տիրացաւ Խլաթայ և մերձակայ քաղաքաց։ և կոչեցաւ Շահ—Ամէն։ և այս անուն տուաւ և իւրոցն սերնդոյ։ Առաւելութեամբ առ Ե։ Դիւլքրնայ։ Ի Ժանոթութիւնսն յեր։ 448։

236. Յօրինական՝ Ամոյ։

237. Իմն՝ երեկ զզօրութիւն հարուածոցն։

238. Ի գրչագիրս գնի անխտիր Մամուռա և Մամուռն։ Էր սա ազարապետ Մահմատի Դամասայ։ և կոչի Ի գիրս Արաբացւոց Հէրէֆ—Կտուօղա Մամուռա։ որդի Ալդուն—Դէքրնի կամ Ալդուն—Դաշի։

239. Երկոքին գրչագիրքն ունին՝ Ի Վէրայ մեծ Նեղուինն։

240. Գաղղիական թարգմանութիւնն ուր երկոքին գրչագիրքք մեր ունին Սուլիման ալ-Նէլէյ ասիս։ Նա ընթեռնու սուրբն ալ-Նէլէյ ասիս։ և ասէ Ի 3 ծանօթութեանն եթէ իցէ սուլտանն Մահմատ Դամասայ։ Իսկ յ7 ծանօթութեան ասէ լինել իշխանն Խլաթայ Սուգման—Էլ—Քօճայի։ Ո որ և իցէ զմիոյ և եթէ մարդոյ խօսի Մամէ սա յասելն Սուլիման ալ-Նէլիից ասիրայն։ Իսկ քանզի Ի մեր օրինակս փոխանակ սուլտանի կամ Սուգմանի ունի յամենայն ան զիս Սուլիման։ թերեւս ակնարկիցէ և Ի Սուլիման ասիրայն Հայպայ։

241. Մի օրի։ յաւելու՝ Ի փոքրն իր Ի խառան։

242. Գէշապիրք մեր ազաւաղեալ ունին սատ սրպէս և ի հետագայ քանի մը տարս. ուր ընթեռնու հանդերձ յաւելմամբ՝ խոգորածս և կոնդոյտս եղաս ինուս։ . . . Ի Բարբ հոսոպոնալ տրմոռշիոզ արարեալ՝ ի ամէն էր Բանալիս Լոյր տրեր ընդ . . . որ Մանիին ընդդրդ։

243. Յառնէն յոյսմ ամ՝ խմանի թիւն Հայոց 559 (ՇԹ) իսկ Սմբատ պատմագիր յեր. 88. առ լեալ ըստիւբ ամաբ յարամանգոյն. այն է ի թառ թն 559 բուս ապագաբանեան Հանդարձեանի։

244. Թարգմանիչն գաղղիականին ընթեռնու սատ և հոսրն այն պարբոյ ղերբեսս անդնդոց. et la flamme enveloppa toute la surface de l'abîme. իսկ ի բնագիրս մեր գրատն հոսոպոսն մարմ է ընթեռնուլ և. ղնասոպոռնիան անդնդոց։

245. Մատթէոս Ուռհայեցի որ սնաչառապես և խիստ բանիբ վարի ընդդէմ Յունաց քրիստոնէից. զորս և հերետիկոսս կոչէ. ոչ նուազ և ընդդէմ խրատանցն նոսին Դանիէլ բառապէս վարի։ Ա. Ո՛ նկատելի է զի ոչ երբէք ընդդէմ խրատանեան կրօնին յարձակի. այլ անձանց ոմանց՝ ի նոյն կրօնէ եղելոց զրբ ապօրինաւոր դնացիբ և դժնդակ վարուբն առան հարին զօրէնս մարդկութեան. այնպէս և սատ զանհաւանի Սուլէյմանայ կամ զՍուգմանայ անարգանաբ խօսի, վասն լինելոյ նորա պատճառ մեծամեծ աւերանաց և կոտորածոց քրիստոնէից։

246. Սմբատ պատմիչ գնե՝ ի Գանչոյ ալիսբին։

247. Սմբատ պատմիչ յաւելու. "Եւ զբնակիչսն բերդին բնակեցոյց առ ամն գեղացն Գառատեսոյ. որ այժմ Կարակիա կոչի անուն տեղացն"։

248. Դերբէնտ ամին. զոր մեր խմանամբ ուղղագոյն է ասել մուտք ի նէրոյ ամին այսրնքն է աղբեր ջրոյ. գաղղ. թարգմանութիւնն գնե իբրեւ անուն տեղւոյ՝ Դերբենտ կոչելով գնա

249. Մարգարէ Համշեան հատ. ՁԳ. յեր. 32. 33. որպէս և Ե. Դիւլորիէ խմանան սատ ԵԹԷ Վասիլ զՌապանն՝ ի Ֆռանկաց գալով առեալ. յետ գարձուցանելոյ զայն Տանգբրեայ առ Վասիլ. միւսանդամ նոնա պարգեւէ Վասիլ. Իսկ

Օրինակքն մեր գՀասամնուբ։ զԹՕրեք ։ և զՊՐԵՔԻՆ ասեն գաթՀուցանել Վասլի առ Ֆանակն յորոց առէաքն էր։ և ոչ միանգամայն զՊՐԱՔԱՆ։

250 ։ Յօրինակն վերիպակաւ ունէր՝ ՄԷՆ ՀՈՒԱՓՇԼԱՆ ՈՐԴԻԱՆ։

251 ։ Յօրինակն՝ ԼՈՐՈՒԻՆ ԳԻՆՈՒ։

252 ։ Կոմին Տրապոլսոյ զորմէ խօսի Մատթէոս ։ և Պանա (Pons) որդի Բերդրանոյ և Թառն Ռեմանդայ որ Սկն—Ժիլի։ և ոչ որդի Նարա։

253 ։ Յօրինակն ունէր՝ յանՁանՀ՝ Ի ուսմանս ։ Թերեւս իր բեւ մանկիր եղեալ։

254 ։ Մի օրի ։ ԷՒԷԻՆ ։ իսկ Մ ։ ԶամՀէան ։ գնեն ՂԷԻՆ։

255 ։ Օրինակքն մեր ունէին՝ Ի ՁԷՂՔԷՆ որ Ի ԼՈՒՆ ՁԷՂՔ Իր ԻՒԼԻ ։ Ի՝ ՄԷՆ ։ որ Թուի զերիպակ զրշաց։

256 ։ Ի գաղղիերէնն չէր ։ ոչ ԹՈՒՆ Ի ՊՈՊԷՐՔՈՒՆԻՆ ՈՐ ԲԸՆԻՆԼԻԷՆ ԸՆԴԻՐԻՈՒՆ ՍՈՒՆԻԻՆ ՊԷՐ ԹԱԳՈՐԻՈՅ։

257 ։ Կոչի և Վասլիան ։ զոր ամենայն օրինակք մեր գՀեն Գաղասան ։ էր Հօրն զՕՐՈՐԴԻ ՁՕՍԻՆԻ և ԿԱԲՐՈՆԷՆ։

258 ։ Գաղղիերէնն ընթեռնու յաչնանպան ։ իսկ Արեւբնասան է ամոյ յերկրին Եփրատայոց։

259 ։ Ա յայտ ։ յօրինակն ։ Թերեւս ԻՆՉ ԻՆՐՀԷՆ։

260 ։ Ա յայտ ։ յօրինակն ։ իսկ գաղղիերէնն ունի ։ «խոտանային և ընդդէմ ազայոց անմեղաց Ի նախատինս ՁՆՈՂԱՅՆ»։

261 ։ Հեղինակս տեսէ ասա ։ խալիՁայն Պարսից ասէ ։ փոխանակ ասէլ Արաբաց ։ քանզի դիտէաք Ի պատմութեանց զի յայնժամ Պաղդատ էր Ի ՁԵՌՍ սուլտանացն ՍելՁուկեանց։ և խալիՁայն զորմէ խօսի Մատթէոս էր ՄՕՍգատՀիլ—ՊԻԼԱՀ։ Իսկ գերագոյն իշխանութիւնն կրօնական զոր կրէին սուլտանքն Պաղդատայ Ի վերայ խալիՁութեանս էր անուանական եւ էթ։

262 ։ Ե ։ ԴԻՒՐԻՔ ԸՆԹԵՌՆՈՒ՝ ասա ։ և թարգմանեսցուք արկիներք զանհամար տեղս։

263 ։ Գաղղիերէնն գնե 600 ։ Համեմատ միւսմ բնագրի

խ. բուժ. զի միւսն ունի. ասէ. բուս մի բոցս 100։

264. Ե. Տիւրբիկ գլխոցին զհակառակն ընթեռնու-
ասս. իբրու եթէ Պերիւրժէն զնոցն ընթացս կալաս ընդ-
գէմ Հայոց զոր ունէր հայր նորա Ալէքս. քանզի ասէ.
"Եղոյց նոցնպէս (Պերիւրժէն) զանձն իւր հակառակ
Հայոց. և իսկոյն ասաց խոսիս. եւ քան զհայրն զիրկնակի մը-
կրաւորթիւնն. հիւրքիւլ զհոգեւոր մկրաւորթիւնն առ 'ի
հառաստակրց ընդ նորա զիերակառարն"։ Լսէ զմեռորթիւնն
որ նշանագրի 'ի մերսումն 'ի վերջին տարին. այսպէս բացատ-
բելոյ. Ս կրաւորթիւնն երկրորդ զոր հաստատեաց Ալէքս 'ի
բաց տայր մերկանալ և զհոգեւորն և հառաստակր զիերա-
կառարն Ապա թէ ոչ չարամարին վերջին հառատաքն առաս-
ջին բանիցն. որոյ ցուցանէ եթէ Պերիւրժէն վերոյգրեալ
զցաւանն հոր իւրոյ զոր ցուցանէր ընդդէմ Հայոց յանարա-
ժան մկրաւորթիւնն զնոսա սարսիցուլ։

265. Երիւրբին օրինակ բն մեր ունին հարանել։

266. Ե. Դիւ ըրիւ 'ի պատմութիւնս Աբարացւոց ա-
ռաջ համարի ասա սխալեալ հեղինակն մեր. քանզի ասէ՝
ոչ Սաղա կամ ղղագոյն եւս Սագաբա որդի էր Տուտպոյ-
սին. այլ Տուտպոյս (Ատուլ—Ադղ Տուտպոյս) որդի էր
Սագաբայ. և էր յարաբացի Տոհմին Գինի—Բասասց եւ
վերհասեալ Հիլանհայ 'ի վերայ Եփրատ գետոյ։ Սմանյայ-
թիալ (1125 խալիֆայն Մահարշէտ փախուցեալ մահապարբ
առ Աբարացիսն կիսամեռ անկանի՝ յորոց ոչ գտեալ ընդունե-
լութիւն. չոգաւ անտի առ Մոնդաքիքեանս. և եկն ընդ
նոսա առաստակեալ զԲասրա քաղաք. անց անտի 'ի Սիւրիա
առ Ֆուանկս և հասուցաց զնոսա տիրել Հալպայ։ Յամի
1129 երկրորդ անգամ աւարեաց զԲասրա։ Ապա յամի 1135
հրամանաւ Մասուտ սուլտանին բարձաւ 'ի կենաց մերձ 'ի
խոյ քաղաք ձեռամբ Ծռաայի ուրուն Հայոյ։ Զմանապէս
սխալէ և 'ի տարին 'ի գլուխն մեր։

267. Ռավանի կամ Ռաֆիսի (Հերեսիկոս) կոչին առ
Մահմետականս նոքա որ ոչ ընդունին զԱբուբեքիր։ զՕ-
մար և զՕթման. և ոչ ընծայեն նոցա զիսալիֆայութիւն կամ

զան զապահանթիւն։ Մէկ հէմմեսայ, այլ զՆաւի եւ զնաբին յայնպէսդեն ասեն լինել Ճշմարիտ և միակ փոխանորդ մարգարէին իւրանց։ Յայսմ ազանգոյն են Շիի կոչեցեալ մահմեդականքն։ Զարանասանին Նեմանակա յայսմ ազանգոյ Ծագեցան Բաբէնիներեր։ Լատակ լոցիք կամ Ցեղասպակրն անուանիք։ որոց գլխաւոր առ պատմագիրս կոչի Ծէրոնին Լէրին։ զորոց անուիք ի պատմութիւնս (1) մերում սուրբ Երուսաղէմ։ ի յաւէլուածս։ Ի համարն մեր հանի անուանեալ զարքունական տարս ի ձեռն որոց սպանեալ Բաբասան զօրավարքն Զարասի ի մէջ ազգի Թարանին ի Մուսուլ քաղաքի։

268. Շնչէ կամ Սինջա կոչի ի լեզու Ալարաց Նահր էլ ազաբ։ որ նշանակի կապոյտ գետ։ որ գնայ ընդ հարաւակողմն Սամսատայ և թափի Եփրատ յարեւմտից կուսէ։ Կամ բիլն կամ կանգ ազան է կատուցեալ հռոմկական ճարտարութեամբ ըստ Դիւլորեայ։ և երեւելի է յոյժ։

269. Ալն է Ժէոֆրէ (Jeoffroy)։ Ալյան անուամբ անձինքն հինգ գասն յայլ և այլ ժամանակս եկեալ ի Զաղեռատն և պատերազմեալ ընդ մահմեդականսն։ սակայն ոչ ոք ի նոցանէ վարեաց զիշխանութիւն տերազահի ի ժամանակս բանտարկութեանն Զաղանին։ այլ եթէ Եւստաքէս Գրբնեի տէրն Սիդոնի և Կեսարիոյ։ և յետ նորա Գուլիէլմոս որ Բիւրիեռ կոչ ասիրեցին զտեսչութիւնն Երուսաղէմ։

270. Յօրինակն օգնականի հասուցանէր յորում կոյ այլայլութիւն բանից։ որոյ հարազատ իմաստն է այս։ առաքեաց ոգնականութիւնս հայցել առ կոմսն Ֆռանսկաց։

271. Օրինակքն մեր ունին ղՀՅՈՒՆ։

272. Ալն է դուքսն Վենետկոյ Դոմինիկոս Միշիէլի (le doge de Venise Dominique Michieli)։

273. Թէրեւս իցէ՝ ՀՈՒՐԻՆՔՆ ՔԱՆ ԷՆԷԼ։ և կամ ՀՈՒՐՔԱՆ ԷՆԷԼ։

274. Ե. Դիւլորեի ընթերցումս Խալա—Ճապար (Kala'

---

(1) Յիշեալ պատմութիւնն է Տ. Հ. Թ. Սուրբեանանցի չեռ եւս ի լոյս ընծայեալ, այլ ի մօտս հրատարակեցի

Dja'bar), և տասնգաբանք ամոց Ճապարայ, զորմի ասի լինել յերկրին Միջագետայ 'ի վերայ Եփրատ գետայ, ոչ հեռի 'ի Հռաքայայ։

275. Փայր—Կատին խարա—Աբրզան, իշխան Հինա—Քեշիթայ 'ի Միջագետս, էր որդի Թաքն—Կատաղայ Տաւուղայ և Թոռնորդի Սաղմանայ որդւոյ Աբդուլայ։

276. Ե. Դիւլբրիթ իրրս ուղղելով ենն զենագիրքն իւր որք ունին Սրիսան, խարգմանեն Սուրի կամ Ասորի, տակայն ոչ անգէպ վարկանի ընթերնուլ և արիլայ։

277. Մի գրչագրայ ունի, այլ ոչ Իելան յինարարութիւն Իլիանութիւն. իսկ միւսն՝ այլ ոչ Իելան յինարարութիւն Իլիանութիւն։ Գաղղիերէնն գնեմ. այլ ոչ Հանաարիր Պաղանին արարութամբ և Իլիանութամբն։

Իսկ Պաղանին կոչեն Քենանայ և Մարաշայ, զոր Գուլիելմոս Տիւրացի (Ժդ. 14 և 17.) կոչէ Պալատինուս որ Մարկս, էր ըստ Գրիգորի Երիցու՝ եղբայր Ռեմանդայ Պուատիերի (Raymond de Poitiers) իշխանին Ակուիտանայ և որդի Գուլիելմոսի Թ. գրսին Աքուիտանայ (duc d'Aquitaine)։ Ի պատմութիւնս Քառանկայ ոչ ուրեք յիշատակեալ է ունել Գուլիելմոսի գրսին բայ յերեցունդ որդւոյ իւրոյ և դշխրորդս զայս զՊաղանին, որպ անուան Գրիգոր Երէց գտանի միակ յիշատակիչ։ Սորա խոստովանահայրն էր Բարսեղ վարդապետն Հայոց որ արար զաղերգական Ճառսն 'ի վերայ մահուան նորին, զոր 'ի մէջ բերի Գրիգոր Երէց։

278. Անձնատուր եղեն գաւառքք՝ 'ի վերայ հաւատոյն Երգուեալ նոցա չէին ասել կենայ նոցին։

279. Ամենայն գրչագիրք ունին՝ 'ի ժամանակի Աբեփարս-Էին խոյնն։

280. Թուի բառ անկեալ յանդգուշութենէ օրինակողին, քանզի Գաղղիերէնն ունի "Եւ քաղաքս այս տասաւ. Նրմա իրր վարձ վաղանցուկ փառաց". Illustration éphémère.

281. Մին յերկուց գրչագրացս միայն ունէր զաղերգական Ճառսն Բարսղի, և ոչ յերրորդ օրինակին որ 'ի սկիզբն 30գ տեսրին ատացաք 'ի Տիգրանակերտ, գտաւ

յիշեալ Հաւատ եւ քանզի երկքին գլուխգիրք եւս սխալագիրք են, վասն որոյ սրբչափ և մարմնացաք՝ ի բազում տեղիս ըստ իմաստիցն ուղղեցաք զվերոգրեալս անհմտուտ գրչին. իսկ զամենս թողաք ըստ բնագրին. շատ համարելով ծանուցանել զնոսին ի կարգի ծանօթութեանցս. հանդերձ ուղղեցեալքն. զանց արարեալ եւեթ զվրիպումքն։

282 · Օրինակին ուշեր՝ անդիրն էի և անիրաւ։

283 · Մնանպարեւ . . . որ և հնիւիս։

284 · Որ յեռաբ խոնեոյ ընտասնեղոց ոնդոնիան. խրծեոյ ի յեռաց հոգրին։

285 · Զօրսն խորաքիլ։

286 · Իցէ արդեօք գրելի՝ յառաջիր։

287 · Յայսմ ամ դայն։

288 · Դեռեւս . . . ի յանդ (զոր մարմն է ընթեռնուլ և ի յայնդ) բարոյ խանարհութիւն։

289 · Ամբարտաւանութիւն և սպառաց խրծրութիւն խարսիւն արքի և անազարմանութիւն ազիանօք հանդերձի փանիին . . . ընդանիին։

290 · Ասիին։

291 · Ասրանօք։

292 · Սիրի կամ Սիրս է բառ Ազգական և Նշանակէ պէրս

293 · Դարաւորութիւն։

294 · Ու անուսութեամբ . . . զգեանալի զմիտ։

295 · Ամենիւին։

296 · Իցէ թերեւս ընթեռնելի՝ մեղաւոր ելոյս։

297 · Սփոփութեամբ։

298 · Հրաղարանիցդոյդ . . . անդարանին։

299 · Յաղրիցդոյ . . . խոտանան։

300 · Սրուէ։

301 · Գո

305. Յօրինակին՝ Խրէ։

306. Յոտն Բէրէսալ։

307. Ա Յոգիւ։

308. Երկոքին գրչագիրք յայտնի սխալմամբ ունէին՝ որոյ անուն նոցա ասին. որպէս և յերկս 306 ունին՝ նաստաւանին ... այսինքն ուռուզելոյ Խրոյ ... ոչ գրեալոց արարին և ոչինչ։

310. Մասուռ կը որդի Ղլիճ—Ալասանայ Ա Իշխանին Խմնիոյ, և թագաւորեաց՝ յամէ 1119—1155։ Գրչագիրք գնեն յաճախ և Մազասուռ։

311. Մի օրինակն ունի Խրասան, միւսն Խրասան։ Իսկ Մ. Չամչեան գնե Խորասն։

312. Յօրի. Գերոնիմոն. իսկ գաղղիարէն թարգմանութիւնն պարզաբանեալ ունի սատ մասնիցս ... Ինն միայն բաց ի ոչոյ Խրոյ ի յինս Բենիամոյ։ Որպէս և փոքր մի ի սոսրև զաւան սատ գաղղ. ունի bras, որ է գաստակ կամ բազուկ։

313. Յօր. ամ միոյ։

314. Ուղղելով եգաք գյուանական բառս Սեւասատս որ և Սեբաստաս, զոր երկոքին գրչագիրք մեր ունէին Սեաստոնոյ։ Իսկ Վասիլն է երեւելի հայ իշխանն Գոգ Վասիլ կոչեցեալ։

314. Ամենայն օրինակք զսեռականն Մոխս բառիս ունին Մոսոյ, և յաճախ՝ Մոսոյ կամ Մոսոյ։

315. Գրչագիրք մեր յաւելուն ասատ զբառս ոչոյ. յայտնի սխալելով։

316. Փէրոն են եղբարքն կարգին Ցամաքականաց, եւ այս կարգ ոչ եմէ եկեղեցական եր, այլ զինուորական, կարգեալ ի պաշտպանութիւն քրիստոնէութեան սուրբ երկրին առ թագաւորութեամբ Պաղտնի Ա, եղբօր Գոդֆրիայ թագաւորին Երուսաղէմի, որոց էր և առանձին տաճար, յորմէ և զանուն ընկալան։ Ցեւեաց կարգս ամս իբրեւ 200 մինչեւ ցկղեմէս Ե պապ, որ ի խնդրոյ Փիլիպպոսի թագաւորին Գաղղիոյ երդն զնա և խափանեաց, եւ կամ լաւ եւս ասել՝ կոծանեաց, քանզի եղծեալ զեղծեալ եին անօրէնութեամբք և վարս ստացեալ գայթակղելիս։

Տես զմանեն 'ի պատմութիւն իմում առ բր Նրուսաղէմի, 'ի Դանիսմանդիւնան։

317. Յօրինական. Խաբ ելէց։ Թուխ ելթէ և բնագիրքն գաղղ. Թարգմանութեան ունէին զբայս զայս այլայլեալ. զի այլազգ մեկնեմ առերով, « և տիրել ամենայց քաղաքին »։

318. Մի օրի. Խաբար անճանաչելի գեղջիկանի։

319. Գանգան է Գանգրի քաղաք ասիմանակից Ընկիւրիոյ, այժմ կոչի Ճանդրը։ Իսկ Լիկանն է (Lycanitis) գաւառ յերկրին Կապադովկիոյ։

320. Մի օրինակն գնեմ նախագին. զոր ընթերցողն է կամ բան մեր օրինակին խոգին, այն է գաղտուստ օրինաց կամ վճռատուս. և կամ նախիր։ Ե. Գիւրորիկ հանարի աղաւաղեալն՝ գիրքիդ բառ ին և Թարգմանեմ առնեղագիր secretaire։

321. Օրինակքն յաւելուն ասա զանեղանական բառն պիրոյ կամ պիոյ երկիր։

322. Յօրինակին՝ յարելոյ. իսկ գաղղիերէնն յաւելու ասա զբառս՝ առանց ուրիշոյ գնուս յապաղումինն։

323. Գաղղիերէնն գնեմ՝ այնոյիկ գրիչքանէիդ։ Մեք անփոփոխ եղաք բան բնագրացն անբրիսանանաց որով մարթ է իմանալ զայլ ազգս կամ զիսլամն որ չեն քրիստոնեայք. այլ 'ի գրոց հաբանց ուսեալք են իմամ ունել միմանց. վասնորոյ չասեմ 'ի սարբ գրոց. որպէս գնեմ գաղղիերէնն այլ լուկ 'ի գրոց։

324. Ա յայսմ ունին օրինակքն ելթէ չկրկ ընթերցողն Բերիոյ կամ Բերիայ։ Գաղղիերէնն գնեմ Ասարիոյ 'ի Լոլանի Հալլոյ։

325. Օրինակքն ունեին՝ Խ Ա որ . . . ընդ ինքոյ։

326. Ա յայսմանութիւն է 'ի բանիս. կամի ասել՝ որ էին 'ի Էրոյ։ իմն ազգասալ կատարած իրին։ և կամ որպէս ունի գաղղիերէնն՝ զոր ոչ իրոյ արգելու։

327. Զոր 'ի հին Եբրայեան։

328. Ա յայսմութիւն թուխ 'ի բառս. Թերեւս կամիցի ասել 'ի յանձին որով իմանի այլն գրքատանեայ մատնիչ որ ելիւ պատճառ այնչափ աւելանաց և մահուան հաւատացելոց։

329. Ա յն է Renaud de Chatillon։

330. Ա յն է Պալտին կամ Պուռաբին Գ. որդի Փուլ-

կեաց կամն ի՝ Ընժու (comte d'Anjou) անուանեալ։ զոր բնագիրք մեր գնեն խանիանաց։

351. Անդիպոս կոչէ զԱկազան, զի էր ի ձեռս անբրիստոնեայ ազգի։

352. Բառս աւետարան զոր գրչագիրքն անին պատուագրեալ ասին։ Ե. Դիւրբիկ ընթերցուս անուան։

353. Ընթերցիր՝ Նէլ Խաչարն ... ՀԻՆՈՐԴԵՆՆԵ։

354. Ի գաղղ. Թարգմանութեանն պակասեն բառքս՝ որ պեղծած էր Լորդելլ։

355. Ե. Դիւրբիկ այլազգ իմանայ սատ զբանս գոպոլ ի սեղանոյ պատաղնն, և Թարգմանեն, il fut d'abord exclus de sa table. "Մի բժեցաւ զառաջինն ի սեղանոյ նորա։ Իսկ Գրիգոր երեց կամի ասել՝ եթէ յառաջնուս դարձեան ոչ երբեր առ կայսրն պաշարս սեղանոյ կամ կերակրոյ, այլ դատարկաձեռն եկն առ նա։ Իսկ յերկրորդումն տարաւ ընդ իւր զպէտս զօրացն ուխտաւ և ասէր։

356. Զբրինձն սատ եմեկ չիցէ վերոյպակ գրչի։ պարտիմ խմանալ զկայսրն Յուանոց և ոչ զիշխանն Անտիոքայ։

357. Յօրինակին՝ ՐՐ։

358. Յօրինակին Թուի բառ անկեալ սատ։ փոխանակ ասելոյ ըստ ալանիրոյ կամ պաշտօնեից քրիստոսի։ որպէս ուրեմն գազղիերէն Թարգմանութիւնն։

359. Մեծարեալ երեց այսպէս խօսի։ "Ի մերձենալ այնմ ժամանակի Թագաւորքն Յունաց սակաւակեացք եղեցին, և զպատերազմն ոչ հոգացին։ այլ ի փոխելոյ զամանս ի կարգ ուղղափառաց և զամանս ի հաւատոց։

340. Պանիսատոս նշանակ ամենազոտատիպլ։ զոյս պատուանուն ընկալաւ Թէոս ըստ հաստատեալ կարծեաց։ յետ հաշտելոյ ընդ Նմա կայ։ քանզի նախ քան զայս կոչէր նա Սեբաստոս կամ Սեբաստոս։

341. Յօրինակին առեալ ... ՀԷՐԹԼԻՍԹԷՆ պարտելոյ։

342. Ե. Դիւրբիկ Թարգմանեն. Les ennemis empoisonnèrent sa blessure. "Թշնամիք գեղեցին զկոյս նորա", որ յայտնի տեսանի ընդգէմ մեծաց բնագրին։

343. Յօրինակն՝ Մրոթանայ։ Կամի ասել. "Եւ նոքա ոչք էին կրօնիւք խալամ և ազգաւ Վրացի՝ ի մէջ յեսաւ մեաց բանակին Թուրքաց, և հետաւէին սրացող Թրքին՝ որ էր Վասակն Վրաց, առաջնորդէին Թուրք զօրացն։

344. Յօրինակն մեր խոչ, ուղղեցաք ըստ գաղղիականին։

345. Մնմոնին է՝ Մէնա—էտոին իսն Ցայիէ, մի՝ ի գլխաւոր ամիրայից որ կային՝ ի Ծառայութեան Ղուբ—էտանի, և էր կառավարիչ Հալէպու։

346. Հէրիմ որ և Հարիմ, էր ամրոց յիշեալ Թեան Անտիոքայ՝ ի հարաւոյ արեւելից և մեր աւուր Ճանապարհաւ հեռի՝ քաղաքէն։

347. Ցուին անօրէն, զորմէ խօսի սուտ Գրիգոր Երէց, է ամենայն հաւանութեամբ Անդրոնիկոս Կոմնենոս զօրապետն զօրաց Մանուէլի կայսեր, որ կացուցաւ ապա կառավարիչ Տարսոնի և Մսիսայ, և էր թշնամացեալ ընդ Հայս վասն պարտութեանցն զոր կրեաց՝ ի Թարսէ և՝ ի Սոեփանեայ, վասնորոյ հրաւիրեալ զնա յաւուր միում՝ ի Ճաշ, գտաւ գիտապատ անկեալ և անշնչացեալ առ գրան քաղաքին Տարսոնի, զորմէ ասէ Սմբատ Համաձայն վ՝ ահրաման՝ եթէ կալեալ արկին զնա՝ ի պղնձեն յեռանդեան։ Իսկ եղբարք նորա Թորոս և Մլէհ որ կենդանի էին, լուծին զվերկէժ արեան հարպատին իւրեանց՝ սպանեալ՝ ի Ցունաց արս տասն հազար, մինչեւ թագաւորն Երուսաղէմի ընդ մէջ մնալով հաշտեցոյց զԹորոս ընդ Ցոյնս, այսպէս Ապուլ Ֆարաճ։

ՅԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Ա.բրաս թգ. կարուց 11·20։
Ա.բաստան 173· 224· 232· 245։
Ա.բրեկամ զօրավար· 120։
Ա.բրեկամ սրգի կուրիշայ· 297· 565։
Ա.գրամելէք· 9։
Ա.զապ. 64· 428· 435· 454—457։
Ա.զիզ թգ. Եգիպտոսի· 280· 565։
Ա.ամնք· 458։
Ա.ապր քգ· 74։
Ա.ելու լեառն· 250։
Ա.էքս Ա· 260· 286· 309· 548· 550· 432։
Ա.ելեսանոս 48· 551։
Ա.փիլակ սուլտ· 305։
Ա.խալ քգ· 175։
Ա.խուրեան գեղ· 11· 122· 177։
Ա.խախ ամիրա· 280· 565։
Ա.կոզուեթ· 96։
Ա.հմատիկ ամիրա քուրդ· 395։
Ա.զուանից աշխ· 174։
Ա.ղ—Սընգոյր ամիրա· 284· 293· 298· 300· 564։
Ա.ղսիան 284· 293· 300· 313։
Ամիթ քգ· 17· 22· 167· 419։
Ամին—Սաբեգ· 274· 562։
Ամիրելմուսիկ 24· 28։
Ամիր Սայիա 170։
Ամր—Ճօշ· 280· 564։
Ամր—Քաֆիր· 159· 251։
Ա.ծեաց բերդ· 21· 558· 393։
Անաղուղի զօր· 115։
Անալեր գղ· 418։
Անանէ հաղբատացի· 215։
Անանէ Դարեկացի· 215։
Անանէ քեռ.սրդի Պետրոս Ա Կաթուղիկոսի· 125· 125։
Անանիա կթ· 3· 40։
Անաւարզա քգ· 3· 6· 312· 465· 566։
Անդռանաս գղ· 305։
Անդրեաս տոմարագէտ· 52։
Անդրեան բդ· 257։
Անդրոնիկէ իշխան Սրոյ եւ Մոսիսայ· 507։
Անթափ քգ· 526· 529։
Անի քգ· 4· 9· 89· 98· 111· 176· 266· 451· 556· 543։
Անկիւրիա քգ· 518։
Անտիոք քգ· 25· 32· 135·

256 · 269 · 279 · 283 · 320 · 534 ։
Անտոն վդ · 216 ։
Աշմուշատ քղ · 250 · 251 ։
Աշոտ Գագիկ Յ ։
Աշոտ Գ · 3—4 · 549 ։
Աշոտ Դ · 8—12 · 20 · 23 · 72 · 91 ։
Աշոտնեք գռ · 328 ։
Ապրլհաճա · 38 · 551 ։
Ապիրատ սր · Հասանայ · 12 ։
Ապատաթ · 381 · 386 · 406 ։
Ապատիթա քղ · 375 · 519 · 544 ։
Ապղարիպ զօր · Դեբենկայ · 37—40 ։
Ապղարիպ սր · Հասանայ · 263 ։
Ապղարիպ սր · Վասակայ · 391 · 422 ։
Ապղահապ սր · Ապիրատի 13 ։
Ապղահապ սր · Վասակայ · 266 ։
Ապուսահլ թգ · Արծրունի · 9 · 42 ։
Ապուսահլ Սենեքերիմեան · 61 · 96 · 160 · 165 · 192 · 238 ։
Ապուսուար ամիրա · 92 ։
Ապուսուար ամիրա Դիվայ · 12 · 92 · 236 ։
Ապուքապտ · 64 · 73 ։
Առաժան գաշտ · 263 ։
Առիւակ իշխան · 269 ։
Առիքթանք · 269 ։
Առան վեստ · 125 · 556 ։
Ասկարան քղ · 527 ։
Ասպահան քղ · 501 ։
Ասորեստան · 31 ։
Ասորիք · 69 · 136 ։
Ատանա քղ · 6 · 243 ։
Ատամ անձաւայի · 215 ։
Ատամ Սենեքերիմեան · 61 · 74 · 96 · 160 · 165 · 192 · 234 ։
Ատրատին անեք Միրմանայ · 542 ։
Ատրբէջ · 296 · 385 · 548 ։
Աքգինիա քղ · 40 · 551 ։
Աքեան գետ · 115 ։
Աքեգ քղ · 25 ։
Աքեւլենդան բգ · 383 ։
Աքրլուն քղ · 70 · 554 ։
Աքրիգի վանք · 355 ։
Աքիսա · 200 ։
Արծխան բգ · 545 ։
Արծն բգ · 120 ։
Արկա քղ · 325 ։
Արեն բգ · 130 ։
Արիւ ամիրա · 294 · 565 ։
Արմէշ քղ · 140 · 542 ։
Արուանդանոս · 225 ։
Արքիմիա · 125 ։
Արզկան քղ · 294 · 427 · 447 ։
Արդբ · 278 ։
Արդիկ քղ · 113 ։
Արշէն ամիրա · 222 ։
Արշուա քղ · 366 ։
Աֆխազք · 4 ։

Ափրիկեցիք · 24 · 28 ·
Ա.քբա · տես Պաղտմայիս.
Բաբելոն · 31 ·
Բագպատա թգ · Վ.բաց սր. դի Գորգեայ · 62 ·
Բագարատ իշխան Աբեւբնեգանայ · 4 3 ·
Բազուենի իշխան · 314 · 566:
Բալու քղ · 442 ·
Բակ գիւղ · 40 ·
Բանիկ · 265 ·
Բասրա քղ · 385 ·
Բարսեղ Ա կթ · 253 · 265 · 289 · 364 · 372 · 411 ·
Բարսեղ Բաշխատացի · 125:
Բարսեղ եղբայր Եղիշեայ · 125 ·
Բարսեղ վգ · խոստովանաւոր Պաղտնի · 473 · 546:
Բարսեղեանց անապատ. 416:
Բերգուս · 380 · 521 · 525 ·
Բերգան · 387 ·
Բերիա · տես Հալապ ·
Բերկրի քղ · 86 · 140 ·
Բիբազոն բգ · 29 · 550 ·
Բջնի քղ · 13 · 102 ·
Բուլսար վգ · Հայոց · 125 ·
Բուլսարիս (Ադ—Սենգայ) · 412 · 419 · 455—458 ·
Գաբաւոն · 31 ·
Գագիկ Աբրահամ · 180 · 186 · 220 ·
Գագիկ սր. Գուրգենայ. 247:
Գագիկ Ա · 4 · 8 ·
Գագիկ Բ Շաղնշահ · 91 · 100 · 109 · 195 · 216 · 238 · 265 · 397—400 · 562:
Գալերան (Վալերան) · 425 · 441—446 · 450 · 574 ·
Գանգան քղ · 518 ·
Գանձակ քղ · 278 · 286 · 428:
Գանձի իշխան · 86 ·
Գուռայ քղ · 448 ·
Գենեսաբեթ · 27 ·
Գէորգ Գ կթ · 229 · 247:
Գէորգ գպրապետ Թամանեցի · 216 ·
Գէորգ կթ. Ադաւանից · 278:
Գէորգ Ուռծեցի · 215 ·
Գէորգ Ուռանեցի · 295 ·
Գէորգ Ջուլֆահ—ձագ ·
Գէորգ վգ · Մեզբինի · 417 · 461 ·
Գէորգ Քարտեզեցի · 125 ·
Գիլիքիա գօրավար · 120 ·
Գիսանեցի · 159 ·
Գնդայ աշխարհ · 105 · 118 · 257 ·
Գոհար խաթուն · 427 ·
Գողգոթա լեռան · 352 · 425:
Գամէշ—տիկին · տես Դանիշման ·
Գուշագրակ թգ · Կարանայ · 1:
Գոռ գրաբապետ սր · Գէորգեայ · 3 · 549 ·
Գորգ Շիրակացի · 272 ·
Գորգէ Գ թգ · Վ.բաց · 542 · 547 ·

Գուշագրակ որդի Վաչակա-
նայ. 279։
Գուրգի Ա թգ. Վրաց. 62։
Գուրգէն թգ. Աղուանից.
12. 20։
Գուրգէն թգ. Անձևաց-
ցեաց. 9. 20։
Գրիգոր Գ կթ. Պահլա-
ւունի. 371. 412։
Գրիգոր Եպէց. 466։
Գրիգոր Կիւրապաղատ Եղ-
բայր Բարդղ կթ. 328։
Գրիգոր Մագիստրոս. 76.
102. 122. 125. 220. 556։
Գրիգոր Դարեկացի. 215։
Գրիգոր Նիւսացի. 201. 347.
558։
Գրիգոր վգ. Մաշկևսոր. 417։
Գրիգոր որդի Բակուրանի.
177։
Գրիգոր որդի Սենեքերիմայ
թգ. Կապանի. 279։
Գրիգոր Սքանչելագործ. 201։
Գրիգոր Վկայասէր. 185.
229. 247. 252. 326։
Գրիգոր քեռորդ Վկայասէրի.
254։
Գրիգորէս Եպ. Մաբաշոյ.
334։
Գոտեւսոր սուրբ Գէորգ (Ա-
կեղցի). 268։
Գոտեթիլ. 395։
Դանիշման. 224. 333. 365.
368. 561. 567։
Դաբրանեղ գռ. 278։
Դաւաստանոս. 170։
Դաւթուկ քորեպ. 121. 556։
Դաւիթ Անհաղին. 92. 98.
103. 562։
Դաւիթ Իշխան սր. Հաբե-
լի. 129։
Դաւիթ Կիւրապաղատ. 45—
46։
Դաւիթ Սենեքերիմեան. 58.
74։
Դաւիթ Բ թգ. Վրաց.
456. 458. 447. 451. 459։
Դգզաս գա. 17. 22. 549։
Դգուշ. 233. 279. 296.
300։
Դեբուտիք. 13։
Դեկիոս լա. 458։
Դեմետրիոս զօրավ. տես
Մրեհ։
Դեմետրէ որդի Դաւթի.
459։
Դեմնաձոր. 72։
Դեբենիկ. 9. 27։
Դեսակորոս հերձ. 200։
Դեսակորոս վանահայր. 88.
89. 215։
Դինար ամիրա. 153։
Դմանիս քղ. 447։
Դմէկ (Դամասկոս) քղ. 24.
280. 534. 541։
Դոմինիկոս Միշիելի. տես
Վենեսկոյ. 452. 576։
Դաւին քղ. 115. 117. 547.

Դրազարկ · 461 · 546 ։
Եագուպ Արսլան · 518· 519· 541 ։
Եագուպ զօրավ. Խլիճ—Արսլանայ Բ · 512 ։
Եգիպտոս · 326 · 352 ։
Եղիմնացիք · 133 ։
Եղնէ վդ · 123· 124 · 165։
Եմրան · 326 · 352 ։
Երուսաղէմ· 23 · 28 · 52 · 84 · 280 · 308 · 325 · 337 · 369 · 408 · 425 ։
Երգոքիա · 228 ։
Երուքէս հերձ · 200 ։
Եփրատ գտ · 267· 392· 413։
Զանգի ամիրա · 461 · 469· 472 ։
Զբենիլ կամ · 308 · 313 · 328 · 348 · 375 · 566 ։
Զշյատ եղ · Լիպարտի· 128։
Զուրշաւ քդ · 30 ։
Զօրինակ բդ · 300 ։
Զօրվոի—Կոզեռն բդ · 248։
Ընծայուց վանք · 54 · 553 ։
Թագեոս առաքեալ · 5 ։
Թագեոս վդ · գրիչ · 123 ։
Թաթուլ իշխան Մարաշոյ · 332 ։
Թաբլաբ · 165 ։
Թափօրական լա · 27 ։
Թէրեպ քդ · 393 · 431 ։
Թեոդորոս կթ · Ավիսոսիկ · 259· 275· 290· 305 ։
Թեոդորոս պտ· Յունաց· 47։
Թիլ· 317 · 403 · 511 · 515։
Թիմոցիք · 29 · 550 ։
Թլակ տեղի · 190 ։
Թէթուխ բդ · 224 ։
Թէմովաւ բդ · 234 ։
Թէկուբան բդ · 395 ։
Թմուզ քդ· 403 ։
Թմուխ գա · 116· 130· 166· 186· 224 · 233 ։
Թլպաղդ բդ · 150 ։
Թլպաշար բդ · 382· 395 · 419 · 501 · 504 ։
Թոռեւան գա · 105 · 106 ։
Թոռիճ բդ · 188 ։
Թոռնիկ Մուշեղեան · 155 · 248 · 251 ։
Թոռնիկ պասքիկ · 118 · 119 ։
Թորեր քդ· 403 ։
Թորոս Ա որդի Կոստանդեայ · 394 · 397—400 ։
Թորոս կիւրապաղատ · 300 · 302· 303· 305· 312· 316· 330 ։
Թորոս որդի Լեւոնի · 306—309 · 531—536· 539 · 545 ։
Թորոսակ · 130 ։
Թուլքմանք · 544 ։
Թրոիճ բդ · 304 ։
Թոքտուիկ եղբայր Իշխանի · 269 ։
Իսրբիան եպ· վրաց· 46· 47։
Իշխան Եգեսացի · 269 ։

Իշխան կթ՞ } Խաչիկեան · 105·
Իշխանիկ }
Խպրահիմ սր · Սիւլէյմանեայ · 458 ·
Խ բան · 353 · 555 ·
Խմայել սր · Արկուբ · 294 · 298 ·
Խուլվ · 165 ·
Լաւխս բգ · 518 ·
Լեսուն լա · 240 ·
Լեւոն Ա սրդի Կոստանդեայ · 329 · 421 · 428 · 465 · 536 ·
Լեւոն իշխան սր. Հաթգլի · 129 ·
Լեւոն իշխան Ցուռնայուռ · 260 ·
Լեւոն սր եւ Ղեւոնդ վգ · 21 · 33 · 549 · 551 ·
Լիրանան լա · 51 ·
Լիկոնդոն գռ · 518 ·
Լիկոս սր · Վասակայ · 422 ·
Լիպարիտ իշխան վրայ · 122 · 125 · 556 ·
Լտար բգ · 72 · 267 ·
Լօռի քղ · 174 · 265 · 278 ·
Խալի ամիրա Գանձակայ · 456 ·
Խալի ամիրա սրդի Աբգուսխայ · 413 · 420 · 429 · 434 · 440 · 442 ·
Խալի սրդի Դանիշմանդայ · 369 · 454 ·
Խաղգ (Հաղէգ) · 472 ·
Խաշատուր դպրապետ · 123 ·
Խաշատուր վեստ · 188 · 257 · 558 ·
Խաչիկ կթ · 47 · 49 ·
Խաչիկ Բ կթ · 122 · 132 · 165 · 185 ·
Խաչիկ իշխան Առաքելցեան · 105 · 555 ·
Խաչիկ վգ · Երաժիշտ · 296 ·
Խառան քղ · 365 · 386 · 391 · 540 ·
Խատաղ իշխան Հայ · 241 ·
Խարա—Ալտալան սր · Տաւուրթի · 467 · 502 ·
Խարբերդ քղ · 445 · 443 ·
Խարտեշք · 128 ·
Խարսինա քղ · 575 ·
Խաւատանէք բգ · 160 ·
Խաբրիկ (Գարբրիէլ) · 306 · 555 · 565 ·
Խլնէ քղ · 294 · 427 ·
Խլաթ քղ · 542 ·
Խլաթ—Ճապարտ · 472 · 576 ·
Խլիճ—ալալան Ա · սր · Սալէյմանայ · 306 · 310 · 348 · 351 · 579 ·
Խլիճ—ալալան Բ · (Մելիք) սր · Մասուտի · 305—306 · 312 · 315 · 317 · 541 · 546 ·
Խոզրով ամիրա · 267 ·
Խրասան քղ · 320 ·
Խուրեշ ամիրա · 237 ·
Խուրեշ ամիրա Մուսուլայ · 70 · 116 ·
Խուսպլիա (Սկուտարի) · 147 · 157 ·
Խորիկ ամիրա · 86 ·

Խիշաղք • 438 •
Դամնգաւ • 181 •
Դաւիթ բգ • 544 •
Դաւման բգ • 189 •
Դուռապատիկ Տերտուռագէմ • 52 • 555 •
Կաղշ—պիղտաս • 111 • 195 •
Կապրսան • 528 •
Կամէն զօրավ • 122 • 125 •
Կապան գռ • 278 •
Կապուռտառ բգ • 125 •
Կառկառ բգ • 445 • 451 •
Կատարեալն վանք • 529 • 574 •
Կատապան • տես Սահմանի կատապան •
Կատրամիտ • 10 •
Կարմիր գռ • 456 • 457 •
Կարմիր վանք • 404 • 412 • 465 • 504 •
Կարմիջաձոր • 296 •
Կարմրակել • 44 •
Կաւատ • 515 •
Կեսարիա Փիլիպպէոս • քղ • 28 • 332 •
Կերպղոս • 319 • 567 •
Կիղեստաւ բգ • 265 •
Կիպրիանոս եպ • Անտիոքայ • 554 •
Կիպրոս կղզի • 551 •
Կիւրա—թիսաոր • 146 •
Կիւրիկէ թգ • Աղուանից • 174 •
Կնգռասկաւիա բգ • 597—599 •
Կոմնաս Գասակիկեցոր • 447 •
Կոնդանակ լռ • 575 •
Կոնդարիկ • 508 • 514 • 552 •
Կոպիտառա • 512 •
Կոստանդին իշխան որ • Հաբելի • 129 •
Կոստանդին կայսր • 62 • 65 •
Կոստանդին որ • Դուքենայ • 512 • 514 • 529 • 551 •
Կոստանդին Սենեքերիմեան • 61 •
Կոստանդին տէր Կոռկոռայ • 516 • 425 •
Կոստանդինուպոլիս • 118 • 147 •
Կորիւէ որ • Անհոդինի • 266 •
Կուզման • 189 •
Կուլիերմոս կոմս Տրլբոյ • 355 •
Կուռլա լռ • 466 •
Կուպին տեղի • 191 • 401 •
Կուտան ամիրա • 70 •
Կուր գտ • 447 •
Կուրա—Զոյի • 65 • 104 •
Կուրխ քղ • 65 • 425 • 425 • 554 •
Կուրոս փղ • 60 •
Կռիա (Կրետէ) • 5 •
Կարիճ ամիրա • 252 • 258 •
Հալապ քղ • 5 • 239 • 455 • 521 • 554 •
Հանռուն ամիրա • 5 • 22 •
Հանձիթ գռ • 8 • 445 •
Հասան Խաչիկեան • 105 •
Հասան—մուռ • 170 • 225 • 405 • 416 • 558 •

Հասնեքեռ քղ. 567. 571.
Հաստատաք. 256. 561.
Հարթման բգ. 581.
Հարպիկ իշխան որ. Հարեկ-լի. 129. 146.
Հարքայ գռ. 20.
Հեր-քղ. 58. 105.
Հերիմ բգ. 545.
Հեմն քղ. 25.
Հոնի քղ. 255. 259.
Հուաբեին ամիրա. 70.
Հուբատան գտ. 102.
Հրեայք. 52.
Ձկնորս. 397.
Ձորոց վանք. 87.
Ղազարու վանք 'ի Սասուն. 446.
Մախր արաբիկք. 44. 50. 550.
Մահի կամ՝ Տրդատ. 448. 455.
Մահմուտ որ. Ամիր—խաղբայ. 462.
Մահմուտ որ. Տարաբոյ. 427. 461.
Մամլան ամիրա. 42. 44. 552.
Մամռուտ ամիրա Մուսուլայ. 588. 595. 400. 406. 572.
Մանի հերձ. 199.
Մանիակ Գորգ. 68. 71. 108.
Մանիակայ կլայ. 502. 470.
Մանիքեցիք. 205.
Մանծկերտ քղ. 141. 145. 252. 259. 542.
Մանուել կայսր. 550. 546.
Մանուչէ. 451. 459.
Մանտալ. 265. 597.
Մուռապտ. 512. 594.
Մասուտ ամիրա. 501. 504. 504. 509.
Մատթէոս Բուռհայեցի. 154. 155. 542. 545. 575.
Մատթէոս Հաղբատացի. 125.
Մարաշ քղ. 65. 552. 570 416. 501. 540.
Մարիամ կին Միխայելի կայսեր. 255. 561.
Մարկիան հերձ. 199.
Մարկոս կթ. Աղուանից. 278.
Մարկոս մեսրապպետ. 216.
Մարկոս մոյնեակեաց. 575.
Մարուքա էպ. 591.
Մարձէն (՞). 101.
Մաւրոյ վարդ. 48. 552.
Մաքենեաց սուրբ Նշան. 318.
Մելեսիանոս (Դիկիմոս). 258. 260. 562.
Մելիքշահ որ. Աբասանայ. 246. 282. 289. 295.
Մելիսանոս. 146.
Մելրենի. 17. 155. 506. 555. 446. 556.
Մերտին քղ. 564.
Միխայել կայսր. 79. 80.

105 · 147 ։
Միխայէլ Է կայսր · 227 · 245 · 254 ։
Միխայէլ տեր Կառկառայ · 451 ։
Միրան եղբայր Դաւթանի 540 · 546 ։
Միրան սր · Սուգմանի · 541 ։
Մլեհ զօրավ · 17 · 549 ։
Մխիթար պատրիկ · 504 ։
Մխիթար Գնայեցի · 125 ։
Մխիթարիկ վդ · 125 ։
Մծբին քղ · 224 · 297 · 513 ։
Մինիկ տեղի · 27 ։
ՄՀՄՏ · 165 ։
ՄՀմնին · 544 ։
ՄՆի ամիրա Հեղեռայ · 595 ։
ՄՆպէՀ քղ · 251 · 448 ։
Մշար տեղի · 248 · 454 ։
Մանդանաս հերձ · 199 ։
Մանանաս · 108 · 112 · 117 · 122 · 145 ։
Մարթիա դուստր Գաբրիել իշխանի · 566 ։
Մուշ քղ · 21 · 542 ։
Մուսի վդ · Հրեից · 55 ։
Մուսուլ քղ · 579 · 455 ։
Մուտառասուն · 247 ։
Մուտեպէր քղ · 267 ։
Մուփարիին (Ղիրկերբա) քղ 62 · 442 · 554 ։
Մոխ քղ · 6 · 585 · 507 · 511 · 551 ։
Յակոբ (Պ) Մծբնայ հայր · 24 · 514 ։
Յակոբ Քաբահառայ տղի · 216 ։
Յակոբ Քաբամենցի · սր և Սանահնեցի · 194 · 275 ։
Յեհնուկ · 172 ։
Յեսուանց անուսպատ · 417 ։
Յովհան Ոսկիբերան · 207 ։
Յովհաննէս Աստուածաբան · 198 ։
Յովհաննէս տղքեպ · սուրբ Աստուածածնի սատկեբին · 275 ։
Յովհաննէս կԹ · Աղուանից · 5 · 5 · 40 · 278 ։
Յովհաննէս Կոբուն · 54 · 76 · 216 · 277 ։
Յովհաննէս Շահնշահ · 54 ։
Յովհաննէս սր · Գագկայ · 8 · 15 · 265 ։
Յովհաննէս Սմբատ թգ · Հայոց · 54 · 76 · 95 · 97 ։
Յովհաննէս կայսր Պոլսիբուժին · 455 · 465 · 468 ։
Յովհաննէս Քաղեղեցի · 125 ։
Յովսէփ կԹ · Աղուանից · 89 · 278 ։
Յովսէփ հայր Ընծայուց վանաց · 54 · 215 ։
Յովսէփ վդ · 216 ։
Ղազարեթ քղ · 27 ։
Ղան վդ · 291 ։
Ղաւատիոս հերձ · 199 ։
Ղեսատիաս · 200 ։

Ներսէս Բագրեւանդացի. 221։
Ներսէս մեծն. 506. 559։
Նիզ. 15։
Նիկեփոր. 5. 49։
Նիկիա. 510. 548։
Նիկիոսար. 554. 554։
Նշենիկ քգ. 488. 489։
Նուռպա. 526։
Նուրեստան օր. Զանգեայ. 500. 503. 526. 529. 555. 559. 541. 545։
Նոբոտլ. 66. 458։
Նսեպին, տես Մծբին։
Շահի—սրմին. 542—545։
Շահվար ամիրա. 70։
Շամ, տես Դամշկ։
Շամքար քգ. 447։
Շապուհ զօրավ. 58. 9[illegible]. 553։
Շաբի քգ. 447։
Շէնաւ. քգ. 591. 595։
Էպլ ամիրա. 63. 69. 554։
Իրպար տեղի մօտ ՅԱնահոք. 596. 419. 440։
Խոլիպ. 72։
Ընջկ քգ. 445. 576։
Ընջրիկ տեղի. 445։
Ուղղ վանք. 444։
Ուռպաս. 466։
Ուրհա հեծմ օր. Կուբիշայ, այն է Հերեփոլ—տօլ. 267. 274. 562։
Հրան քգ. 447։
Ոսկիծամ տուրան. 442։
Ոդք. 428. 482. 242։
Ուրհա—տարար. 564։
Ունգուսց աշխարհ. 508։
Ուռհա քգ. 224. 254. 284. 505. 550. 555. 562. 574. 584. 590. 406. 440։
Ուգարտ ամիրա. 65։
Փրեմն քգ. 45։
Փիրան. 44։
Զմշկածակք քգ. 25։
Զմշկիկ. 6. 24. 25. 55։
Զորտուանել Գոգգ. 44։
Զորտուանել քեռօր. Խիպարտի. 426։
Պասպագ քգ. 555։
Պաշակ ամիրա. 595. 415. 444. 42. 448։
Պարանի տեղի. 555։
Պաղել ռաշիտ. 66. 554։
Պաղտուխ օր. Ամր—խաղեայ. 505. 517։
Պատենիկք. 428. 449. 242. 287. 585։
Պաղեստին. 51։
Պաղին գռ. 429. 406։
Պաղտոյին. 548։
Պաղտատ քգ. 44։
Պաղտին Ա. 508. 546. 548. 552. 554. 552. 564. 587. 420. 425։
Պաղտին Բ. 508. 55[illegible]—55[illegible]. 564. 565. 582. 586. 588.

468· 421· 422· 425· 432· 433· 440· 442· 450· 455· 455· 468·
Պաղտին Գ. · 468 · 527 · 530—541 ·
Պաղտին կամ Գեանոյ եւ Մարաշոյ · 472 ·
Պայէն կամ Սրճոյ · 407 ·
Պապ Բագրատունի · 53 ·
Պապիտա · 556 · 584 · 470 · 668 ·
Պառակտմանաց զօր · յոյն · 2 · 112 · 281 · 548 · 555·
Պառատունեաց (Ցմնաւոր) գտ · 287 ·
Պարկիսատեր օր · Մելիք—Շահի · 294 · 298 · 569·
Պարկնակ · 246 ·
Պարսամա Իշխան · 281 ·
Պարսեր · 72 ·
Պարսատ քղ · 278 ·
Պաւզի զօր · 445 ·
Պէլեսիկք · 274 · 562 ·
Պեխտ կամ Էպիխտ · տես Խաչատուր վեստ ·
Պեհլեանի քղ · 445 · 504 · 522 · 540 ·
Պամբնտ Ա · 508 · 513 · 532 · 533 · 565 · 565—568 · 424 ·
Պեմբնտ Բ · 460 ·
Պենիոգա (Դենկազոլիս) քղ · 27 ·
Պեղու բդ · 454 ·
Պեռոս զօր · 429 · 446 ·
Պետեւնի կամ · 549 · 554 ·
Պետրոս կթ · Ա · 41 · 72 · 76 · 87 · 422 · 452 ·
Պետրոս (Սուրբ), եկեղեցի · 457 ·
Պետրոս Կնատիեցի · 200 ·
Պետրոս քեռաբ · գող Վասլի · 584 ·
Պերիթրան · 575 · 572 ·
Պերուիթ քղ · 28 · 589 ·
Պղահ բդ · 274 · 450 · 466·
Պիզանիոս կառավարիչ Ուռհայոյ · 449 ·
Պիզու քղ · 411 · 221 · 265 ·
Պիզանիա · 488 ·
Պիր քղ · 591 · 445 · 422 ·
Պչարա · 474 ·
Պոնտ կամ Տրապիզոնայ · 409· 574 ·
Պուզանդ · 284—286 · 295 · 297 · 500 ·
Պուլղարք · 48· 52· 56· 90·
Պուկիի զօր · 445 ·
Պուզբանա · 488 · 260 ·
Պաղանայիս քղ · 27 · 561 ·
Պոլատճի ամիրա · 275 ·
Պոզոս կթ · 275 · 279 · 295·
Պոզոս Սամոստացի · 200 ·
Ջաղաց գտ · 490 ·
Ջահան գտ · 259· 275· 505·
Ջահան կամ Ջահանն գտ · 85 · 245 ·
Ջաղգաձոր ամրոց · 299 ·

Ջաւալիս գռ. 475. 558.
Ջօլի ամիրա. 578—579. 582. 672.
Ջղման բդ. 395.
Ռաֆա քղ. 540.
Ռամանապոլիս. 71.
Ռամանոս Բ. 4. 5. 548.
Ռամանոս Գ. 65. 72. 73.
Ռամանոս Դ. 228.
Ռամլէ. 27. 30.
Ռապան քղ. 382. 405. 415. 421. 442. 504. 529. 540.
Ռատեզբայր Լիպարիտ. 422.
Ռավատիք. 458. 575.
Ռատուան որ. Դգուշի. 502—503.
Ռափսակ թգ. 44.
Ռեմոնտ տը Փոատիէ իշխան Անտիոքայ. 469. 500.
Ռընալտ իշխան Անտիոքայ. 526. 531. 544.
Ռիչարդ. 552. 553. 365. 574.
Ռիսն տօմարագէտ. 52.
Ռմբադդ. 250. 561.
Ռնապոլիս քղ. 259.
Ռոշեր քեռորդ. Տանգրեայ. 406. 409. 420. 428. 430.
Սաբէլիոս հերձուածող. 499.
Սալամասա քղ. 405.
Սալէհ ամիրա. 70.
Սալման. 66. 74.
Սահակ մարզպան Վարաժ-նունեաց. 54.
Սղաղ որ. Տուզպիսի. 457. 455. 575.
Սամուէլ վդ. 47. 54. 296.
Սամուխ. 459.
Սամոսատ քղ. 2. 547. 591. 416.
Սարդան (Լասոիվերցի). 214.
Սանահին վանք. 88.
Սանձաւէլ. տես Կուլիելմոս կոմս Տրէքայ.
Սանցաոյ սարբ մօտ յՈւռհա. 401.
Սարգիս կթ. Ա. 49.
Սարգիս կթ. առանձին. 252. 259.
Սարգիս իշխան. 215.
Սարգիս հերձուածող. 200.
Սարգիս Սեւանեցի. 215.
Սարգիս (Սբ). Եկեղեցի. 256.
Սարգիս (Սբ). Սարատեան. 215.
Սարգիս վեստ. 76. 98. 401. 409. 555.
Սարի ղոր. 42.
Սարուանդաւի քղ. 549. 670.
Սափար որ. Սելէք—Շահի. 294.
Սեբաստիա քղ. 459. 461. 257.
Սեաւ լեառն. 225. 315. 355. 416.

Սենեքերիմ. 9. 20. 44. 58. 62.
Սենեքերիմ որ. Սեւադայի. 279.
Սերկեւել լռ. 16.
Սեւադա որ. Փիլիպպէի. 279.
Սեւասա քղ. 536.
Սեւաւերակքղ 74. 188. 554.
Սեւասի տեղի. 285.
Սիհոն քղ. 30. 531.
Սիմէոն պտ. Երուսաղէմի. 341.
Սիմէոն. 467.
Սինգերս. 125. 556.
Սիս քղ. 416.
Սիփար քղ. 225.
Սլար—խորասան. 165. 167. 187. 190.
Սկիւտաս իշխան. 41. 552.
Սմբատ Թոռնեցի. 21. 53.
Սմբատ իշխան Անեայ և Ռուսհայոց. 268.
Սմբոնդ. 245.
Սուգման որդի Աղգուսիի. 505. 514. 555. 566. 569. 565.
Սուլէյման որ. Խալիֆայ. 442.
Սուլէյման որ. Գազնէյոյ. 269. 274. 279.
Սուլտան շահ Թոռն Դգուշի. 455.
Սուր քղ. (Տիւրոս). 452.
Սոֆիա (Սֆ), եկեղեցի. 48. 104. 125. 195. 220. 309.
Սոդոմիկ. 8. 55.
Ստեփաննոս Գ. կթ. 41. 47.
Ստեփան կթ. Աղուանից. 266. 278. 286. 565.
Ստեփան կատարան. 116. 555.
Ստեփան Պինոլ. 568. 572.
Ստեփանէ որ. Լեւոնի Ա. 542. 520—525. 546.
Սրուճ քղ. 555. 595. 404.
Վահան կթ. 21. 40.
Վահկոյ բդ. 574. 400.
Վահրամ, տես Գրիգոր վկայասէր.
Վահրամ Պահլաւունի զօր. 99. 115.
Վահրամ կոմս Գեւոնոյ. 466.
Վաղանեւոյ քղ. 30.
Վաղինտիանոս հերձուածող. 199.
Վաչագան թգ. Կապանայ. 4. 279.
Վաչէ. 44.
Վասակ Աղիբատեան հայր Բարսղի. 15—17. 255. 266.
Վասակ որ. Մագիստրոսի. 256.
Վասակաւան. 8. 35.
Վասիլ (Գող). 365. 372. 380. 405. 404. 467.

Վասիլ Եղբայր Գրիգորի Գ. • կիր. և տէր Կառկառայ. 301։
Վասիլ Իշխան Ռուհայոյ. 234։
Վասիլ որդի Աղուքասայ. 142. 182. 259. 268. 556։
Վասիլ՝ որ. Ռոմանոսի. 8. 35. 48. 52. 56. 61։
Վասիլ տէր Բաթբերդայ. 508։
Վասիլ Տղայ. 381. 405. 421։
Վասիլակ Իշխան. 241։
Վատոլիէք քղ. 25։
Վարագ. 9. 58. 292. 318։
Վարդահերի գղ. 411։
Վարդան Սանահնեցի. 123։
Վարիոս հերձուածող. 200։
Վատնիատ. 255. 258. 561։
Տաճատ որ. Գանձի. 86։
Տաճիկ՝ անուն ժայռի. 531։
Տանգրի քեռորդի Փեմուն-դայ. 308. 332. 349. 363. 378. 382. 387. 391. 393. 403. 405։
Տաշխամատայիք. 29. 550։
Տարխանիատ. 241. 561։
Տարսոն (Տարսիան). 6։
Տարսն գռ. 21։
աւուրթ որ. Սուդմանայ. 458։
Տափար որդի Մելիք—Շահի. 369. 412. 426։
Տարիմիլ գղ. 441։
Տելիարիս զօր. 117. 555։
Տեւդատ. 44։
Տեպ բգ. 190։
Տիբերիական ծով. 26։
Տիբերիա. 409. 454։
Տիգրան Ա. 1. 419։
Տիգրան ազնուական Հայ. 381. 406։
Տիգրանակերտ, տես Ամիդ։
Տիմոթէոս վդ. 216։
Տիրան Կապանեցի. 215։
Տիրան կամ Տիրանուն Կապանեցի. 125. 215։
Տիօժէն. 231. 237։
Տրուք քղ. 261։
Տոզոտամ՝ տեղի. 242. 342։
Տարսս լա. 312. 329։
Տուկիծ կայսր. 151. 164. 191. 214։
Տուքմատաշ որ. Խաղբայ. 442. 450։
Տուզամիկին տէր Դամասկոսի. 314. 410. 420. 454. 566։
Տուզրիլ Սուլտան. 72. 120. 127. 140։
Տուզրիլ (Մելիք) որդի Տարսայ. 427. 437—439. 462։
Տրապոլիս քղ. 29. 30. 369. 387. 545։
Տրոմագա, տես Անաւարզա։
Տրիպոլ քղ. 447։
Տոնուխ գետ. 149. 182։

Փարպեմն քղ. 526։
Փիրամաս. 247. 252. 256. 259. 264. 269. 275. 281։
Փիլիպպոս Իշխան Հայ. 14։
Փիլիպպոս թագ. Կապանի և Փարիսատայ. 4. 5. 20. 279։
Փուկեր կոմս. 536։
Փրկչք. 532. 534։
Քարագլաբ. 141։
Քարեբեռ կիրճ ի Լիբանան. 29։
Քարանուտ. 522։
Քեսուն քղ. 405. 416. 444. 462. 467. 504. 520. 524։
Քուաբ տեղի. 190։
Քրիստափոր քահանայ. 167։
Օլասի գաշտ. 351։
Օխթիս գա. 542։
Օշին Ա. 314. 566։
Օշին Բ. 508։
Օշին բգ. 227։
Ֆռանգապղ. 169. 172. 557։
Ֆռանկք. 83. 307։